



Удмурт





HAGOPIAN J.

7 Bd GUIZEL - LA VISTE

13015 MARSEILLE

Tél. 60.07.61

Ա Ի Օ


Ն Ժ Դ Ե Հ

ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ն Շ Խ Ա Ր Ն Ե Ր

Վ Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր





ՁՕՆ

ԱՅՍ ԳԻՐՔԸ ԿԸ ՁՕՆԵՄ ՀՕՐՄ՝ ՄԱՐԳԱՐ
ԹՈՒՄՈՅԵԱՆԻ, ՈՐՈՒՆ ԳԵՂՋԿԱԿԱՆ ԱՅԼ ՀԱ-
ՐԱԶԱՏ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՇՈՒՆՁԻՆ ՇՆՈՐՀԻԻ
ՍԻՐԵՅԻ ԵՒ ՓԱՐԵՑԱՅ ՄԵՐ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ
ՇԱՐԺՄԱՆ ԵՒ ԱՆՈՐ ՄԱՐՏԻԿՆԵՐՈՒՆ:

Ե Ր Կ Ո Ւ Խ Խ Օ Ս Փ



Բարեբախտ գուգադիպութեամբ մը այս հատորը լոյս կը տեսնէ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան Յիսնամեակի տարին: Նրժդեհ եւս եղած է այդ շրջանի օրհասական նակատամարտներուն մասնակից հերոսներէն մէկը:

Մեր յեղափոխական գործունէութեան, ինչպէս նաեւ Հայաստանի վերակենդանացման մարտընչումներու դեկավար դէմքերն ու մարտիկները անհրաժեշտ չափով չեն ծանօթացուած նոր սերունդներուն, դժբախտաբար:

Այս հատորը՝ իր կարելի չափով ամբողջական տարողութեամբ, կը ձգտի այդ նպատակին.— Նժդեհը՝ ոչ այնքան ծանօթ այս հերոսը ծանօթացրնել երիտասարդ սերունդին, միաժամանակ փոշոտ անկիւններէ դուրս բերելով, կորուստէ փրկելով պատմական իրողութիւններ:

Հայոց պատմութեան վերջին եօթանասնամեակը հարուստ է սքանչելի դէմքերով, որոնք գաղափարականօրէն եւ յեղափոխական գիւնական գործունէութեամբ դարբնեցին հայութեան քաղաքական-յեղափոխական գարթօնքը, ի վերջոյ յանգելու համար փառաւոր թուականի մը՝ Հայաստանի անկախութեան հռչակման:

Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան յիսնամեակի այս տարին, մեր սրտաբուխ մաղթանքն է, որ այսպիսի հրատարակութիւններով ներկայ եւ գալիք սերունդներուն ներկայացուին այդ հերոսները, իրենց ամբողջական դիմագրծով ու գործունէութեամբ:

Եւ կ'ունենանք առանձին գրադարան մը:



Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Բուն անունով Գարեգին Տէր Յարութիւնեան, Նժդեհ եղած է մեր յեղափոխական-գինուորական բազմահազար անձնագոհներէն մէկը, փարոս ունենալով Հ. Յ. Դաշնակցութիւնը, որուն շունչով եւ գաղափարախօսութեամբ թրծուած է, փոքր տարիքէն:

Ուսանողական նստարաններէն իսկ խանդավառուած է հայ յեղափոխական շարժումով, որուն փարած է ամբողջ սրտով եւ վերջնականօրէն:

Յեղափոխական - գինուորական գործունէութեան իր մկրտութիւնը կը ստանայ պարսկական յեղափոխութեան ընթացքին, մասնակցելով անոր կազմակերպչական աշխատանքներուն: Նոյն աշխատանքներուն հետեւանալով կը ձերբակալուի: Մկրտութիւնը լրիւ կ'ըլլայ:

Յետագային կը հետեւի գինուորական ուսման եւ իր կեանքը կը նուիրաբերէ իր ազգին, լծուելով գինուորական գործունէութեան. — կը մասնակցի Պալքանեան պատերազմին, Անդրանիկի կողմին դեկավարելով հայկական կամաւորական գունդը, որուն պաշտօնական պատասխանատուն կը նկատուի պուլկար կառավարութեան կողմէ. հայկական

կամաւորական գունդերուն մէջ, Ա. աշխարհամարտի ընթացքին, կը գործէ Դրոյի հրամանատարութեան տակ, որպէս մարզիչ. Հայաստանի Հանրապետութեան օրհասական մարտնչումներու ընթացքին ինք եւս կ'ունենայ գործօն դեր ռազմականատին վրայ, մասնաւորաբար Ղարաֆիլիսէի մէջ: Ուշաբքը երկար է նման թուումներու:

Այդ բոլորին մէջ, սակայն, հսկայական, կոթողային երկու հիմնական իրականացումներ վեր կը մնան միւսներէն, իրենց գլուխները բարձր կը պահեն, արժեւորելով ան՝ որ անսակարկ գոհողութեամբ եւ նուիրումով հեղինակը եղաւ անոնց:

Մեծ մարդոց մեծութիւնը կը հիմնաւորուի, կը յիշատակուի առաւելաբար հիմնական իրագործումներով: Յանախ՝ միակ իրագործումով մը, որ կ'ըլլայ կոթողային: Կ'անմահանան շնորհիւ անոր: Կը մոռցուին կողմնակի այլ յաջողութիւններ, երբեմն թերեւս նոյնիսկ յիշատակելի:

Նժդեհի սարագային, կրնանք անվարան յիշատակել գրեթէ հաւասար տարողութեամբ երկու իրականացումներ, որոնք կ'ամփոփուին բանի մը բառով.— ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏ եւ ՅԵՂԱԿՐՕՆ ՈՒԽՏԵՐ:

Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմէ մասնաւոր պաշտօնով Զանգեզուրի շրջանը դրկուելով, Նժդեհ գիտցաւ արագօրէն ստանձնել շրջանին ղեկավարութիւնը, գիտակցելով տեղւոյն հայութեան սպառնացող վտանգին: Արդարեւ, թուրք-թաթար-ատրպէյնական մութ ուժեր ծրագրեալ ձևով կը ջանային ջարդել հայութիւնը: Այս ծրագրին լաւագոյնս հակազդել գիտցաւ Նժդեհ, կազմակերպուած բանակի բացակայութիւնը դարձանեց կազմակերպելով ժողովրդային զինեալ գունդեր, իւրաքանչիւր գիւղի ինքզինք

պաշտպանելու պարտականութիւն տալով: Աւելին՝
 ուղղակի իրեն ենթակայ գունդերով օգնութեան
 փութաց այս կամ այն յարձակման ենթարկուած
 կամ վտանգուած շրջանին: Չմնաց միայն պաշտ-
 պանողական, կրաւորական դիրքի վրայ, այլ ան-
 ցաւ բուն յարձակողականի, հայկական այդ շրք-
 ջանք մաքրագործելով թաթարներէ, դարձնելով
 հայ մեծամասնութեամբ հողամաս մը: Անշուշտ,
 այս պատասխանատու գործին մէջ Նժդեհ ունեցաւ
 օգնականներ, որոնք գիտցան թե ու թիկունք
 կանգնիլ իրեն, ձեռներէցութեամբ վարել եւ յաջո-
 դութեամբ պսակել գանազան ձեռնարկներ: Աւելի
 ետք, նոյնիան նախանձախնդրութեամբ, Նժդեհ եւ
 իր գիւնուորները պայքարեցան, նակատեցան բոլշե-
 շիկեան դաւադիր ներխուժող հորդաներուն դէմ,
 բազմիցս պարտութեան մատնելով թուապէս եւ
 զինապէս գերադաս ուժեր: Զանգեզուրը, Նրժ-
 դեհի ղեկավարութեամբ, կրցաւ դիմադրել երկու
 վատթար ուժերու: Եւ այս բոլորը յանգեցան մէկ
 իրողութեան. — ԶԱՆԳԵԶՈՒՐԸ ՀԱՅԿԱԿԱՆԱՅԱԻ,
 ԿՅՈՒԵՅԱԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ՄԻՆՉԵՒ ԱՅՍՕՐ
 ԿԸ ՄՆԱՅ ԱՅԴՊԷՍ:

Նժդեհի երկրորդ մեծ իրագործումը կը հան-
 դիսանայ Մ. Նահանգներու մէջ Յեղակրօն Ուխտե-
 րու յղացումն ու կազմութիւնը: Արտասահմանի,
 մասնաւորաբար Մ. Նահանգներու մէջ հայ երի-
 տասարդութիւնը հակամէտ էր հեռանալու հայու-
 թենէ, պայմաններու բերումով: Յեղակրօն Ուխտե-
 րու նպատակն էր ձուլման ենթակայ այդ երիտա-
 սարդութեան ներշնչել ազգային հպարտութիւն,
 ազգային գիտակցութիւն: Մանաւանդ նկատի
 պէտք էր ունենալ նաեւ բոլշեւիկեան վտանգը, որ
 կ'ապագգայնացնէ, կ'անբարոյացնէ մարդկութիւ-
 նը:

Ու կարելի է ըսել, որ Նժդեհի յաջողեցաւ իր նպատակին մէջ:

Ամերիկահայ երիտասարդութիւնը խանդավառութեամբ փարեցաւ այդ շարժումին: Բազմահազար երիտասարդ-երիտասարդուհիներ սկսան ոչ միայն ամօք չզգալ իրենց հայութեան համար, այլ՝ հպարտութիւն, արդա՛ր հպարտութիւն:

Այդ սերունդը, որ պաշտամունքի հասնող յարգանք ունի Յեղակոսն Ուխտերու հիմնադիր Նժդեհի հանդէպ, անոր կիսանդրին կանգնեցուց ամերիկեան օտար ափերու վրայ:

Մենք կը հաւատանք, որ օր մը ոչ թէ կիսանդրի, այլ Նժդեհի արձանը պիտի կանգնեցուի Զանգեզուրի իսկ մէջ եւ հուստուպի բարձունքէն վեհ ու խրոխտ պիտի դիտէ իրեն այնքան սիրելի շրջանը, յիշեցնելով թէ գոհողութիւնները ապարդիւն չեն մնար երբեք:

∴

Տարիներէ ի վեր ճեռնարկուած էր այս գործի պատրաստութեան, որուն համար անհրաժեշտ էր ի մի բերել պատմական իրողութիւններ, գործակիցներու եւ ականատեսի վկայութիւններ, փաստաթուղթեր եւ նկարներ:

Այս գիրքը կը բաղկանայ երեք մասերէ.

Ա.— ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՆԻԹԻԻՆԸ

Այս մասին մէջ, մեր տրամադրութեան տակ գտնուող վկայութիւններու եւ փաստաթուղթերու լոյսին տակ, կարելիութեան սահմանին մէջ, գրեթէ սպառիչ կերպով ներկայացուած է Նժդեհի կեանքը, կարելի մանրամասնութեամբ: Նոյնքան բծախնդրութեամբ եւ անշահախնդրօրէն տրուած է իր գործունէութիւնը, անշուշտ մասնաւորաբար

ծանրանալով այդ գործունէութեան հիմնաքարերը կազմող կէտերուն վրայ, Զանգեզուրէն մինչեւ Պուլկարիա, մինչեւ Մ. Նահանգներ:

Բ.— ՆՇԽԱՐՆԵՐ

Նժդեհի հիմնականօրէն զինուորական էր, խառնրւածքով եւ ասպարէզով: Սակայն, նաե՛ւ հարտասան էր եւ իր ըմբռնած ձեւով գաղափարախօս, յօդուածագիր: Գրած է քանի մը գիրքեր եւ ունի բազմաթիւ յօդուածներ, քերթերու մէջ: Այդ գրութիւններէն նմոյշներ տրուած են երկրորդ մասին մէջ, որպէսզի կարելի ըլլայ գաղափար մը կազմել իր մտածելակերպին, գաղափարականին եւ գրելաձեւին մասին:

Գ.— ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայաստանի քէ արտասահմանի մէջ, Նժդեհի ունեցած է բազմաթիւ գործակիցներ, ինչպէս նաև առաւել կամ նուազ չափով զինք հանչցողներ: Այս մասին մէջ տրուած են կարգ մը անձերու վկայութիւններն ու կարծիքը՝ Նժդեհի անձին եւ գործունէութեան մասին: Ծանօթութիւններ ալ տրուած են յօդուածագիրներու մասին:

Անտեղի չէ նաեւ քանի մը խօսք ալ ըսել նկարներու մասին: Արդարեւ, այս գիրքը հոխ կերպով պատկերագարդուած է, մեծ մասամբ անտիպ նրկարներով, որոնք մոռացութենէ կը փրկեն բազմաթիւ անձեր:

Վերոյիշեալ երեք մասերով մեր կարելին ըրած ենք, որպէսզի հարազատօրէն ներկայացուին Նժդեհի դէմքը, նկարագիրը, գործունէութիւնը: Առ այդ, մասնաւորաբար յենած ենք դէպքերու եւ վրկայութիւններու, որոնց լոյսին տակ ջանացած ենք պարզաբանել իրադարձութիւնները:

Կատարեալ գործ մը ըրած ըլլալու յառակնու-
թիւնը չունինք երբեք: Սակայն ունինք գոհունա-
կութիւնը խղճի պարտք մը կատարած ըլլալու: Ո-
րովհետեւ Նժդեհ մէկն է այն բազմաթիւներէն, ո-
րոնք արժանի են այսպիսի տուրքերու, անմահա-
ցընելու համար իրենց անունը, վերջին կէս դարու
տակաւին չգրուած Հայոց պատմութեան էջերուն
վրայ:

Կը յուսանք, որ առիթը կ'ունենանք նաեւ իրա-
գործելու մեր այն միւս ծրագիրը, որ կը նպատա-
կադրէ հրատարակել Նժդեհի ամբողջական գործե-
րը, զանոնք ամփոփելով մէկ հատորի մէջ:

Այս հատորին մէջ, կրնայ ըլլալ, որ սայրգած
ըլլան անձնանուններու կամ տեղանուններու սխալ-
ներ կամ վրիպումներ, որոնց համար կ'ապաւինինք
ընթերցողներու ներողամտութեան:

Այստեղ պարտք կը զգանք մեր շնորհակալու-
թիւնները յայտնել բոլոր անոնց, որոնք օժանդա-
կեցին այս հատորի պատրաստութեան, սիրայօժար
տրամադրելով նկարներ, գրութիւններ եւ վկայու-
թիւններ, ի խնդիր Նժդեհի անուան անմահացման:

Առաջին մաս

ԿԵԱՆՔՆ ՈՒ

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ



«ՍԻՐՈՒՄ ԵՄ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ ԳՐԶԻԴ, ԽՕՍԻԻԴ ՈՒ ՍՈՒՐԻԴ: ՄԵՐ ՕՐԵՐԻՆ ՊԱՇՏՊԱՆ ՄԱՐԿՆ ԵՍ ԵՒ ԻՆՉ ԻՆՉ ՄԵԾ ԱՌԱՒԵԼՈՒԹԵԱՄԲ ԻՆՉ ՎՐԱՅ»:

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ՆԱՄԱԿԻՆ՝ ՆԺԴԵ ՀԻՆ:

ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

Նժդեհ, բուն անունով Գարեգին Տ. Յարութիւնեան, ծնած է 1 Յունուարի 1886ին, Հին Նախիջևեանի Կղնութ գիւղը, որուն քահանային զաւակն էր: Կղնութ կը գտնուի քաղաքին արեւելեան կողմը, տասը քլմ. հեռաւորութեան վրայ:

Նախնական կրթութիւնը կը ստանայ Նախիջևեան՝ քաղաքային ուսական դպրոցին մէջ. ապա կ'անցնի Թիֆլիս եւ կը մտնէ տեղւոյն ուսական միջնակարգ դպրոցը:

Պատանի Գարեգին, Թիֆլիսի մէջ ուսանողութեան շրջանին կը խանդավառուի հայ ազատագրական պայքարով, եւ կը մտնէ Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական դրօշին ներքեւ:

Միջնակարգ վարժարանի դասընթացքը աւարտելով կը մեկնի Փեթերսպուրկ, ուր կը յաճախէ ուսական համալսարանի իրաւաբանական բաժինը:

Այդ օրերուն, Գարեգին որպէս ջանասէր եւ ընթերցասէր՝ աչքի կը զարնէ եւ կը սիրուի բոլորէն, թէ՛ դասատուներէն, թէ՛ ընկերներէն:

Պարապոյ ժամերուն կը կարդայ Ռաֆֆիի գործերը՝ «Կայծեր», «Սամուէլ», «Խենթը» եւ այլ ազգային գրքեր:

Փեթերսպուրկի մէջ երկու տարի ուսանելէ ետք, կը թողու համալսարանը եւ Հ. Յ. Դ. Մարմիններու կարգադրութեամբ 1904ին կը ղրկուի Սալմաստ՝ իրրեւ կուսակցական քարոզիչ, Սամսոն Թագէտսեանի(*) արամադրութեան տակ: Յատկապէս Փետայական դիցազնամարտերը կ'ոգեւորեն զինքը, արթնցնելով իր մէջ բուն սէր մը՝ դէպի զինուորական ասպարէզը:

Սալմաստը Երկրի (Վասպուրական, Տարօն, Սասուն) նախադուռը եղած է. եւ դեռ աւելին՝ նոյնիսկ Երկիրն ու արտասահմանը շաղկապող օղակ մը:

Մեր յեղափոխական ամբողջ պատմութիւնը բնականօրէն սկըսած է Սալմաստով եւ այդ իսկ պատճառով, Երկրի գրեթէ յեղա-

(*) Տես «Յեղափոխական Ալպով», Ա. հատոր, էջ 338:




ՍԱՄՍՈՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ

փոխական բոլոր գործիչները՝ սահմանի երկու կողմերն ալ գործունէութիւն ունեցած են : Ու այս՝ ոչ միայն Դաշնակցականներու այլեւ Հնչակեաններու եւ Արմենականներու պարագային :

1903—1904ին Սալմաստ եղաւ գրեթէ ամենազլխաւոր կապ պահողը Երկրին հետ : Զինատար խումբերն ու սուրհանդակները մեծ մասամբ ա՛յդ տեղէն Երկիր կ'անցնէին :

Նոյն թուին Նժդեհ կը մասնակցի Վրէժի շրջանային ժողովին :

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ




Ռ Ռ Ս Տ Ո Մ

1905ին Պուլկարիոյ մէջ, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիր Ռոստոմի ջանքերով, Հ. Յ. Դ. Բիւրօն, Պալքանեան Կեդրոնական Կոմիտէին հետ համախորհուրդ, համաձայնած էր Մակեդոնական Յեղափոխական Կազմակերպութեան հետ եւ Պուլկար կառավարու-

Թեան ալ գաղտնի հաւանութեամբ որոշած՝ զինուորական ընդունակութեան տէր հայ երիտասարդները մտցնել Պահեստի Սպայից Քննաժեռոյի (Սոֆիա) վարժարանը: Հ. Յ. Դ. Ամերիկայի Կ. Կոմիտէի նիւթական աջակցութեան շնորհիւ կարելի կ'ըլլայ այդ դպրոցը սասանելու զրկել չորս հայ երիտասարդներ, որոնցմէ մէկն էր Նժդէհ:

Նժդէհ Պարսկաստանէն անմիջապէս կը մեկնի Սոֆիա եւ կ'ընդունուի յիշեալ վարժարանը, որուն ղեկավարը՝ իրենց զիւղի երկրորդ քահանայի որդին էր՝ Իշխանը:



Հ. Յ. Դաշնակցութեան զինուորական վարժարանի ուսանողները: Թիւ 1 — Ռատիօ Տիմիթրի (ոուս գորավար):

Նժդէհի եւ Իշխանի յարաբերութիւնները կը լարուին: Նժդէհ կը հարկադրուի լքել կուսակցական-զինուորական դպրոցը, եւ Ռոստոմի համաձայնութեամբ ու աջակցութեամբ՝ կը մտնէ Սոֆիայի Ֆերտինանտ Թագաւորի անուան զինուորական Պահեստի Սպայից վարժարանը, որուն գասախօսները ահանաւոր ոուս դորավարներ էին, ինչպէս Ռատիօ Տիմիթրին եւ ուրիշներ:

Նժդէհ յաջողութեամբ կ'աւարտէ զինուորական ուսման ընթացքը, 1907ին:

Կարճ ժամանակ մը մնալէ ետք Պուլկարիա, կը վերադառնայ Կովկաս: Այս շրջանին, Պարսկաստանի մէջ արդէն սկսած էին յեղափոխական խմորումներ, որոնց մէջ այնքա՛ն ճակատագրական դեր պիտի կատարէր Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը կարելի բոլոր միջոցները կը գործադրէր օգտակար ըլլալու համար Թրքահայաստանի ժողովուրդին, եւ կ'ուղարկէր մարտիկներ, զինուորական կարողութեր ու զինամթերք, որոնց միակ ճամբան Պարսկաստանն էր: Այն ժամանակ Երկիր տանող բոլոր շրջաններուն վրայ կ'իշխէր մեծ բռնապետ Շահ Մէհմէտ Ալի, որ իր հօրը մահէն ետք ոտնակոխեց սահմանադրութիւնը, դրժեց իր երզումը, ընդվզեցնելով ազատատենչ տարրերն ու ժողովրդային զանգուածները: Պէտք էր սահմանադրութիւնը հիմնաւորել, ամրապնդել եւ վերջ տալ բռնապետի կամայականութիւններուն:

Պարսիկ ազատականները սակայն, անփորձ էին հասարակական եւ յեղափոխական շարժումներու գործին մէջ, թոյլ էին մարտական ու զինական տեսակէտներէ, ուստի կարիք ունէին փորձառու խորհրդատուներու եւ մարտական կազմակերպութիւններու աջակցութեան: Շահ Մէհմէտ Ալիի մահավճիռներուն եւ բռնութեանց հետեւանքով Ատրպատականի մայրաքաղաք Թաւրիզը պարզեց ապրտամբութեան դրօշը: Հայ տարրի խորունկ համակրանքը ամէնուրեք ապստամբներու կողմն էր, ընդդէմ ուխտադրուժ վեհապետին ու անոր արքանեակներուն:

«Բայց այդ համակրանքը բաւական ատեն կը մնար մունջ, պղատոնական. հայ ժողովուրդի յեղափոխական առաջնորդները կը վարանէին կողմ բռնելու ընդհանուր արիւնոտ իրարանցումին մէջ: Վարանոտ էին նաեւ կովկասեան մարմինները: Սակայն, օր աւուր, անցքերու գահավէժ ընթացքին մէջ, աւելի եւ աւելի կը պարզուէր, որ չէզոքութիւնը հայոց համար անիրագործելի պատրանք մըն էր համատարած քառսին մէջ, ուր նոյնինքն միապետական բանակը հայ յեղափոխական իր արշաւներու ընթացքին անխնայ թալանի կուտար հայ գիւղերը, կ'աւերէր ու կ'ահաբեկէր հայ բնակչութիւնը, որ հակառակ սանձարձակ կեղեքումներու, բարեկեցիկ վիճակ մը ստեղծեր էր Ատրպատականի եւ ամբողջ երկրին մէջ» (*):

Հազիւ տասը միլիոնի կը հասնէր ամբողջ Պարսկաստանի ժողովուրդը, որուն հետ կ'ապրէին շուրջ 70,000 հայեր, ցրուած երկրի գրեթէ բոլոր նահանգներուն մէջ: Ամենէն խիտ հայ բնակչութիւնը կը գտնուէր Ատրպատականի եւ Սպահանի նահանգներուն մէջ: Ապա, յաջորդաբար կու գային Թեհրան, Ռաշտ, Ղազուին, Շիրազ, Համատան, իսկ միւս շրջանները ամէնուրեք՝ խառն էին:

«Համիտեան կառավարութիւնը, «Հուրիէթ»ի նախօրեակին, մտածեց ուրիշ տեղ ուղղել իր ժողովուրդի ուշադրութիւնը, որ բռնուած էր յեղափոխական խմորով: Պարսկաստանի թուլութենէն

(*) Մ. Վարանդեան «Հ. Յ. Դ. պատմութիւն» Բ. հատոր, էջ 61:

օգտուելով, որոշեց լայնցնել թուրք կայսրութեան սահմանները եւ տաճիկ զօրքը արշաւեց դէպի Սալմաստ: Պիտի գրաւէր, անտարակոյս, սահմանամերձ շրջանները, ուր կար ստուար հայ բնակչութիւն եւ ուրիշ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը 17 տարիէ ի վեր իր ուժերը կը թափէր դէպի Վասպուրական ու Տարօն:



Ս. Վ. ՌԱՄԵԱՆ

«Թուրքերու այդ զօրաշարժը, որ ոտքի հաներ էր քրտութեան աւազակաբարոյ տարրերը հայոց դէմ, նոր ճգնաժամ կը ստեղծէր հայութեան համար: Հարկ էր կազմակերպել վտանգուած վայրերու ինքնապաշտպանութիւնը: Հարկ էր նաեւ ուժ տալ պարսից ազատագրական շարժումին, որուն յաղթանակէն կախուած էր օսմանեան դաւերու վիժումը եւ Հայ Դատի ապահովութիւնն ու յառաջ-

գիմութիւնը : Ազատ Պարսկաստանը ոչ միայն բարիք մըն էր պարսկահայոց համար, այլ եւ կռուան մը թրքահայ եւ կովկասահայ ժողովուրդի դատին համար...» (*):

Այսպէս կը տրամաբանէին Հայ Յեղափոխական Դաշնակցութեան պարսկահայ կազմակերպութիւնները, մասնաւորաբար Ատրրպատականի կեդր. կոմիտէն, որ արդէն իսկ գաղտնօրէն յարաբերութեան մէջ մտած էր պարսիկ ազատականներուն հետ, պատասխանելով անոնց իսկ գիմուաներուն ու յորդորներուն :

Կովկասի մարմինները եւս շարք մը ժողովներ կը գումարեն Պարսկաստանի շարժումներու մասին, որոշելու համար, թէ պէ՞տք է մասնակցիլ այդ ապստամբական շարժման : Նուրբ, ծանրակշիռ, պատասխանատու խնդիր : Կը գումարուի կովկասի Շրջանային ժողով Թիֆլիսի մէջ, ուր ներկայ կ'ըլլան Վաամեանի ու Ատրպատականի պատգամաւորին հետ՝ Ս. Զաւարեան, Հայր Աբրահամ, Համօ Օհանջանեան, Զաւախեան եւ ուրիշներ : Բիւրոյի կողմէ կը դեկուցէ Հայր Աբրահամ : Խօսելով թուրք-պարսկական ընդհարումի, հայ-պարսկական ընդհարումի եւ հայ-պարսիկ յարաբերութիւններու շուրջ, իբրեւ եզրակացութիւն, կ'առաջարկէ Վարիչ Մարմնի տեսակէտը .

— «Մէկ բան պարզ է, չեմք կարող թողնել մեր ժողովուրդը անտէր, անգէն, անպաշտպան վիճակում» :


ՍՍ.ԼՄՍՍ

Պարսկական ազատագրական շարժման գործունէութեան համար գինուորական կարող ու երիտասարդ սպաներու կարիքը կար : Նժդէ՛հ կ'ուղարկուի Թաւրիզի ու Սալմաստի շրջանը, իբր կազմակերպող եւ կռուող ուժ : 1907ի Նոյեմբերին կը հասնի Թաւրիզ ու կը սկսի կռուակցական աշխատանքներու եւ խումբերու կազմակերպութեան : Այն ժամանակ Թաւրիզ էին, Բալաջանը — Սաեփան Սաեփանեան — Մարզպետը, Սերաստացի Մուրաաը, Եփրեմ Խանը, Սամսոն Թաղէոսեանը եւ այլ ուրիշ ընկերներ՝ որոնք կը գնահատէին Նժդէհի գործունէութիւնը :

1907ի Դեկտեմբերի վերջերը Ռոստոմ կը հասնի Թեհրան, ազ-

(*) Մ. Վարանդեան՝ «Հ. Յ. Գ. պատմութիւն» Բ. հատոր, էջ 62 :

դեցիկ շրջանակներու տրամադրութիւնները շօշափելու եւ բանակ-
ցելու նպատակով: Իրեն կ'ընկերանայ Յովսէփ Միրզայեան, որ քաջ
ծանօթ էր երկրի պայմաններուն ու պարսիկներու հոգեբանութեան:
Իւրաքանչիւր ժողովէ կամ հանդիպումէ ետք՝ կը խորհրդակցէին Է-
րեք ուրիշ տեղացի ընկերներու հետ, որոնցմէ մէկն էր Տոքթ. Յ.
Ստեփանեան(*):



ԲՓ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Հինգ նիստերու ընթացքին կը քննուին կարելոր հարցեր:
Պարսիկները կ'ուզէին, որ Դաշնակցութիւնը տրամադրէ ո՛չ միայն
ձեռնհաս սպաներ այլեւ քանի մը մասնազէտներ, պայթուցիկ գոր-
ծիքներ գործածելու համար պատերազմի պարագային:

(*) Տես «Յեղափոխական Ալպով», Զ. հատոր, էջ 163:

Երևասարգ պարսիկները յանձնառու կ'ըլլան ընդարձակել հայոց ազգային իրաւունքները, որոնք մինչ այդ գոյութիւն ունէին հին բռնապետական վարչաձեւին տակ:

Ռուստոմ կ'անցնի Թաւրիզ: Իրեն կը վիճակուի առաջնակարգ գեր մը խաղալ պարսիկ ապստամբական երկարատեւ գործողութիւններու ընթացքին, Սաթթար Սանի հետ:

Տեղի կ'ունենան հայ-պարսկական շարք մը կարեւոր խորհրդակցութիւններ: Հարկ էր կազմակերպել ըմբոստներու խառնիճազանձ դանդուածը: Ներդաշնակութիւն չկար: Սմբապետներ ու հը-



1.- Գարեգին Նժդէի, 2.- Եփրեմ Խան, 3.- Սեբաստացի Մուրատ, 4.- Բալաջան (Ստեփան Ստեփանեան), 5.- Մարգպետ, 6.- Հայրապետ Պանիրեան, 7.- Սամսոն Թադէոսեան (նկարուած Թաւրիզ):

րամանատարներ կը գործէին ինքնազլուխ, եւ գործը ատկէ սաստիկ կը տուժէր: Պէտք էր ապստամբական շարժման ալիքը տարածել նաեւ գաւառներուն մէջ, որոնք անշարժ կը մնային: Առանց գաւառի աջակցութեան՝ կորսուած էր ազատութեան դատը...:

Այդ օրերուն Արեւելեան Բիւրոյի կողմէ Թաւրիզ կու գան երկու ղեկավար ընկերներ — Վահագ (Վոսամեան *) եւ Սեպուհ, որոնք տեղւոյն գործերուն ծանօթանալէ ետք, պիտի անցնէին թըր-

(*) Տես «Յեղափոխական Ալպոմ», Ե. հատոր, էջ 269:

քահայադատան: Ասոնց մասնակցութեամբ Ատրպատականի ընկերները հանդամանորէն կը մշակեն գործունէութեան ծրագիր մը: Մարտական գործի նկատմամբ՝ Սեպուհ կու տայ շարք մը հրահանգներ, որոնք բարերար հետեւանք կ'ունենան խառնակ, անկաղմակերայ կռուող պարսիկ զանգուածին համար:

Կովկասի ընկերները կ'ուզեն օգնական ուժեր զրկել Սալմաստի շրջանը. բայց այդ գործողութիւնը շատ դժուար էր այն օրերուն, որովհետեւ ցարական կայսրութեան մէջ սկսած՝ ստոլիպինեան համատարած յետադիմականութիւնը մասնաւոր կատաղու-



Մէջտեղը նստած ներմակ փափախով՝ ՍԱՄՍՈՆ ԹԱԴԵՈՍԵԱՆ, անոր աջ կողմը՝ ՍԱՐԳԻՍ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ (Սալմաստեցի), անոր կողքին՝ ԶԻԲՕ ՎԱՐԳԱՆԵԱՆ (Սալմաստեցի):

Սամսոնի ձախ կողմը՝ ՍՈՂՈՄՈՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ (Սալմաստեցի), անոր կողքին՝ ՍԱԼԴԱԹ ՍՏԵՓԱՆ (Գանձակեցի), անոր կողքին՝ ՄԿՐՏԻՉ (քրքահայ):

Վերի շարք դէպի ձախ ԳՐԷ (քրքահայ), մասնակցած Խանասորի արշաւանքին, ԶԱԲՕ (Աղբակցի), ԶՕՀՐԱՊ (Կովկասցի), ՍԸՄԲԱՏ դրօշակիր (Սալմաստցի), ՀԱՅՐԻԿ Պուլկարցի, ՍԻԼԷՅՄԱՆ, ասոր (Սալմաստեցի), ՄԿՐՕ (քրքահայ):

Վարի շարք, նստած՝ ձախէն աջ՝ ՄՆԱՅԱԿԱՆ (Սալմաստէն, Ասլանիկցի), ԿԱՐՕ ԳՐԻԳՈՐԵԱՆ — ԴԱԻԻԹ ԵՆ ՏԻԳՐԱՆ (Սալմաստցիներ):

Նկարուած 1 նոյեմբեր 1908 թ. Սալմաստ, Դիլման կեդրոնական ֆաղաքը գրաւած շրջանին:

Թեամբ մը հալածանքի կը սկսէր Հայ Յեղափոխական Դաշնակցութեան դէմ: Ամենէն առաջ հարկ էր Սալմաստ զրկել խմբապետներու փաղանդէն ռազմիկ-հրամանատար մը, որ կարենար իր անձնական հմայքի ուժով իր շուրջը համախմբել հայոց կռուող տարրերը Ատրպատականի մէջ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Արեւելեան Բիւրոյի որոշումներու համաձայն, Պարսկաստան կը մեկնին Զօր. Սմբատ, որ



Զ Ո Ւ Լ Ո Ւ Մ Ա Թ

կը գործէ Ուրմիոյ շրջանին մէջ. Զուլումաթ(*), որ կը գործէ Սոյի շրջանին մէջ, իսկ Սալմաստի շրջանին համար, Սամսոնի օգնական կը նշանակուի երիտասարդ Գարեգին Նժդէհ:

Այլեւս Թաւրիզը մինակ չէր: Գաւառներու մէջ Դաշնակցութեան ուժերը կը հասնէին իրենց առաջադրած երկու նպատակներուն. 1. Կը պաշտպանէին հայ ժողովուրդը քրտական յարածուն աւան-թաւանէն եւ, 2. Կը ստիպէին տեղական իշխանութիւնները՝ վերահաստատելու սահմանադրական կարգերը:

(*) Տես «Յեղափոխական Ալպոմ», Ա. հատոր, էջ 371:

Աւելորդ է ըսել, որ այդ շրջանի հայ գիւղերը, բոլորովին անպաշտպան, մատնուած էին աւարառու հորդաներու քմահաճոյքներուն եւ կ'ապրէին սարսափի օրեր:

Այդպիսի տագնապալի օրեր էին երբ Հ. Յ. Դաշնակցութիւնը կը պարզէ ապստամբութեան դրօշը, համապատասխան շրջաններուն մէջ:

Սամսոն եւ իր օգնականը Նժդեհ, մօտ 60 հոգինոց խումբով կը յաջողին թշնամին հեռացնել իրենց վիճակուած վայրերէն:

Քրտական ասպատակութիւններն ու զինեալ ընդհարումները կը շարունակուէին Խոյի, Ուրմիոյ եւ Սալմաստի շրջաններուն մէջ: Կռուի ծանրութիւնը ամէնուրեք հայ յեղափոխականներուն վրայ էր: Գրեթէ միշտ յաղթական կ'ելլէին կռիւներէն եւ սակայն միշտ ալ՝ թանկապին զոհերով: Սոփիանի բուն ընդհարումներուն մէջ զոհ կու տան 13 մարտիկներ, որոնք կը կռուին մինչեւ վերջին փամփուշտը (Սեւ Գէորդի խումբը): 17 Յունուար 1909ին, Բեղղաւարի կռուին, Աւարայրի սլաւմական դաշտին վրայ անոնք դարձեալ առանձին էին եւ զոհ կու տան 9 հոգի, — Զուլումաքը, Մամիկոնը, Պետրովիչը, Յարութիւնը, Բաջ Օղլի Տիգրանը, Փանոսը, Աբրահամը եւ Արսէնը: Խոյի մէջ կը դարնուի Շամիլը: Գրեթէ ո՛չ մէկ զոհ Ուրմիոյ եւ Սալմաստի շրջաններուն մէջ, որոնք կը դիմադրեն արիաբար եւ ազատ կը պահեն ժողովուրդը քրտական խժդժութիւններէն:

Մինչ Թաւրիզ կը շարունակէր դիմադրութիւնը, չարաչար տառապելով օր աւուր սաստկացող պաշարումէն և կենսական միջերջներու պակասէն, անդին՝ պարսից Զուլֆայի մէջ, խմբապետ Սարհատ (Մկրտիչ Աղամալեան) 50 հոգինոց արշաւախումբով մը, եւ իր հետ ունենալով օգնական՝ Արտիւշ խան Շահրիար, միապետականներու դէմ կռուելով կ'առաջանայ դէպի Խոյ եւ Սալմաստ: Զիւլումներու առաջին տասնապետն էր Ղազար Քոչարեան, երկրորդը՝ Հրրայր (փառակացի), Սարհատի հետ էին Կոստիա Աթայեան (ղարաբաղցի), իր թիկնապահները՝ բաշգեառնեցի Մարտիրոս Աբրահամեան եւ Խոսրով Եղիազարեան:

Կռիւները տակաւ կը սաստկանան. Սամսոն եւ Նժդեհ խորհրդակցելով կը հաստատեն, որ զէնքի ու փամփուշտի պակաս պիտի ունենան: Կ'որոշուի որ Նժդեհը անցնի Կովկաս, զէնք եւ ռազմամթերք բերելու համար:

ՉԵՐՔԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Նժդեհ Պարսկաստանէն կը մեկնի Կովկաս, այնպիսի ժամանակ մը, երբ ցարական Ռուսիոյ կառավարութիւնը կախաղաններով ու զանգուածային բանտարկութիւններով անդթօրէն կը խեղդէր Ռուսաստանի ազատազրական շարժումները եւ ուշի ուշով կը հետեւէր Ատրպատականի պայքարի ելեւէջներուն: Ռուսաստան պատեհ առիթը կը փնտռէր միջամտելու եւ իր բռունցքը ցոյց տալու պարսիկ ու հայ ըմբոստներուն, մարելու համար յեղափոխական հնոցը սահմանակից երկրին մէջ եւ թերեւս նոյնիսկ վերջնականապէս հաստատուելու համար հիւսիսային Պարսկաստան:

Այս շրջանին ցարական կառավարութիւնը սկսած էր արդէն իր վայրագ հայաճանքը՝ Հ. Յ. Դաշնակցութեան դէմ:

Արդարեւ, 1908ին, երբ Ռուսաստանի առաջին յեղափոխութիւնը արդէն պարտութեան մատնուած էր ցարական կառավարութեան կողմէ, Կովկասի եւ Ռուսաստանի զանազան վայրերուն մէջ ծայր տուին դաշնակցականներու զանգուածային ձերբակալութիւններ:

Ցարական կառավարութիւնը կ'ուզէր արժատախիլ ընել Հ. Յ. Դաշնակցութիւնը: Բանտ նետուեցան հարիւրաւոր անուանի հայ մըտաւորականներ ու մարտիկներ, որոնց մէջ Ա. Ահարոնեան, Յովհ. Թումանեան, Ա. Իսահակեան, Գ. Պաժակ, Ա. Սահակեան (Հայր Աբրահամ), Բժ. Հ. Օհանջանեան, Ս. Մանասեան, Կորիւն եւ Չաւէն վարդապետներ, Համազասպ Սրուանձտեան եւ շատ ուրիշներ: Անոնցմէ մաս մը հետազային ազատ արձակուեցան դրամական երաշխաւորութեամբ եւ ոմանք արտասահման մեկնեցան, ինչպէս Ա. Լետիս Ահարոնեան, Ա. Իսահակեան, Գ. Պաժակ, իսկ մեծ մասը չորս տարի՝ մինչեւ նախնական քննութեան աւարտումը, պահուեցան բանտերու մէջ:

Հայաստանի դաշնակցական ղեկավարներու եւ այլոց ձերբակալութիւնը ցարական կառավարութեան կողմէ, մեծ ընդվզում առաջացուց արտասահմանի մէջ:

Միացեալ Նահանգներու եւ Գանատայի 35 քաղաքներու մէջ տեղի ունեցան միթիւնկներ ի նպաստ Կովկասահայ քաղաքական բանտարկեալներուն: 15 քաղաքներու մէջ — Նիւ Եորք, Ֆիլատելֆիա,

Շիրազի, Պոսթըն, Փրովիտէնա, Ուստըր, Տրոյ, Ուեսթ Հոքսհըն, Նիւ Հէյվըն, Սան Ֆրանչիսքօ, Լոս Անձելըս, Ֆրեզնօ, Փրանզիսկոս և Համիլթըն —, բողոքի բանաձեւեր քուէարկուեցան եւ զրկուեցան ֆոնկրէսի անդամներուն, կարգ մը օտար դեսպաններու եւ մասնաւորապէս՝ Ռուսիոյ դեսպանին:

Որոշումներէն օրինակներ յանձնուեցան տեղական թերթերուն:

Ստորեւ՝ այդ հանրապրութիւններէն մէկը, որ սլաւոքապաշտութեան Պոսթընի մէջ. —

«Հրապարակային միթինկ մը տեղի ունեցաւ 1911 Յունուար 8ի իրիկունը, Պէյն Մեմօրիըլ Հոլի մէջ, Պոսթըն: Աւելի քան հազար



Է. Ա. Կ. Ն. Ո. Ի. Ն. Ի.

հայեր ներկայ էին, որոնք որոշումներ անցուցին բողոքելու համար բանտարկութեանը դէմ իրենց ականաւոր ազգակիցներուն՝ թիւով 500 հոգի, որոնք կը մաշին Ռուսիոյ բանտերուն մէջ:

Ժողովին կը նախագահէր Տաքթ. Վ. Գազանձեան: Խօսեցաւ ի միջի այլոց է. Ա. Կնունի(*), Կ. Պոլսէն:

Հանգանակութիւն մը տեղի ունեցաւ ի նպատակ բանտարկեալներուն եւ հետեւեալ որոշումները քուէարկուեցան. —

Նկատելով, որ Ռուսիոյ ներկայ կառավարութիւնը դիտումնաւոր կերպով սկսած է մասնաւոր հալածանք մը կովկասահայութեան դէմ.

Նկատելով, որ հինգ հարիւր հայեր — զրազէտներ, զիտուններ, վաճառականներ եւ այլն. — ուղղակի զոհերն են վերոյիշեալ հա-

(*) Տես «Յեղափոխական Ալպով», Գ. հատոր, էջ 194:

լածանքին, առանց ոեւէ օրինական եւ բարոյական արդարացումի, որոշուեցաւ.

1.— Բողոքել Ռուսական Կառավարութեան այդ քաղաքականութեան դէմ, որ հակառակ է Սահմանադրութեան ոգիին, ինչպէս նաեւ քաղաքակրթութեան պահանջներուն:

2.— Պահանջել անմիջական դատավարութիւն արդար ատեանի մը առջեւ, հաստատելու իրենց իրաւունքները իբրեւ հաւատարիմ քաղաքացիներ:

3.— Ղրկել սոյն որոշումներէն մէյմէկ օրինակ Միացեալ Նահանգներու Արտաքին Գործերու Նախարարութեան, Ուաշինկթընի Ռուսական դեսպանին, ինչպէս նաեւ օտար տէրութիւններու բոլոր ներկայացուցիչներուն:

4.— Դիմել Միացեալ Նահանգներու հանրային կարծիքին, ըստեղծելու համար համակրական շարժում մը ի նպաստ Կովկասահայ քաղաքական բանտարկեալներու, որոնց միակ պահանջն է վայելել Սահմանադրութեան բարիքները և այլ տարրական իրաւունքներ՝ զորս կը վայելէ ոեւէ քաղաքակրթուած հասարակութիւն:

Դատավարութիւնը, որ յայտնի է Հ. Յ. Դաշնակցութեան Մեծ Դատ անունով, տեղի ունեցաւ 1912ին Փեթերսպուրկ, Մերակոյտի յատուկ բաժնին մէջ, ծերակուտական Քլիվցովի ատենապետութեամբ եւ Ռուսաստանի հռչակաւոր փաստաբաններու մասնակցութեամբ, որոնց մէջ էր նաեւ հետադային ժամանակաւոր Կառավարութեան վարչապետ Ալ. Բելենսկի:

Դատի ժամանակ սլարդուեցաւ, որ քննիչ Լըժինը՝ որուն ձեռքը կը գտնուէր դատական նիւթի պատրաստութեան գործը, շատ մը զեղծումներ կատարած էր. շինած էր կեղծ վաւերացումներ եւ մաս մը վաւերացումներ ալ եղծանած, որով ամբողջ դատը վարկաբեկուեցաւ յաշս հանրային կարծիքին: Փաստօրէն դատավարութիւնը դարձաւ ոչ թէ Հ. Յ. Դաշնակցութեան դատ, այլ ամբաստանութիւն՝ ցարական զեղծարար իշխանութեան դէմ:

Դատավարութեան արդիւնքը կ'ըլլայ ա'յն, որ ամբաստանեալներուն մեծ մասը ազատ կ'արձակուի եւ մնացեալներուն պատիժն ալ կ'ըլլայ ակնկալուածէն մեղմ: Դատարանը կը սահմանէ հետեւեալ պատիժները.— 4 հոգիի տաժանակիր աշխատանք, 26 հոգիի՝ բերդարդելութիւն, 21 հոգիի՝ աքսոր, մէկ հոգիի՝ բանտարդելութիւն եւ 96 հոգի ալ անպարտ կ'արձակուին:

Չորս տաժանակիր աշխատանքի դատապարտուածներու մէջն էին՝ Բժ. Հ. Յանջանեան(*) եւ Խրիմեան Հայրիկի Դիւանապետ Կորիւն Վարդապետը, որոնք շղթայակապ Միպերիա կը զրկուին եւ հոն կը մնան մինչեւ առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը:

(*) Տես «Յեղափոխական Ալպում», Ա. հատոր, էջ 119:

Այս դատավարութեամբ՝ ցարական կառավարութիւնը կը յուսար մահացու հարուած մը տալ Հ. Յ. Դաշնակցութեան. սակայն հազիւ երկու տարի անցած, համաշխարհային առաջին սլատերագմի ընթացքին, Հ. Յ. Դաշնակցութիւնը կովկասի մէջ կը հանդիսանայ հայութեան զեկավար ուժը, իսկ չորս տարի ետք, 1918ին՝ Հայաստանի Հանրապետութեան ստեղծման ու կազմակերպութեան գլխաւոր ազդակը:

Ուրեմն, վերոյիշեալ Մեծ Դատի նախորդող շրջանին, երբ Նժդէհ Սարմատունէն կ'անցնի Արաքսի կողմը, հոն կազմակերպչական աշխատանքներ տանելու, Նոր Զուգայի մօտ կը ձերբակալուի ու կը բանտարկուի Հին Նախիջևանի մէջ, ուր քանի մը ամիս մնալէ ետք՝ կը փոխադրուի Երեւանի բանտը:

Նիկոլա Մանասերեան(*) մեզի ուղղած գրութեամբ մը հետեւեալը կը պատմէ Նժդէհի ձերբակալութեան եւ բանտարկութեան մասին. —

«Գիտեմ, որ 1909 թուին Նժդէհը վերադարձաւ Պարսկաստանից, ուր գնացել էր մասնակցելու Պարսկաստանի սահմանադրական շարժումներին: Կրում էր ուսանողական գլխարկ: Ոստիկանութեան կողմից կանչուեց հարցաքննութեան: Ըստ երեւոյթին, ցարական ոստիկանութիւնը որոշ տեղեկութիւններ ունէր իր մասին:

«Նրան հարցաքննում է զաւառապետ Սարսկին, որ հայատեաց մէկն էր:

«Հարցաքննութեան ժամանակ, Սարսկին ասում է, որ ինք եւ ռուս կառավարութիւնը ազատութեան ջատագոյններ են, հետեւաբար ի՞նչ կարիք կայ յեղափոխական դործողութիւնների: Նժդէհը՝ ցոյց տալով պատից կախուած կայսեր նկարը, ասում է. — Այո, ոչ միայն մենք, այլեւ դուք չէք պաշտում նման կուռքերի:

«Այդ պատասխանի վրայ էլ (զուցէ նաեւ այլ տուեալների հիման վրայ) բանտարկում են նրան:

«Բանտումն էր նաեւ, նոյնպէս Կզնութ գիւղացի յայտնի Ռաշիտը, որ Նժդէհի ժամանակ եղել էր Պուլկարիա եւ սովորել Հ. Յ. Դաշնակցութեան զինուորական զպրոցում: Թէ ի՞նչ տարակարծութիւն են ունեցել նրանք անցեալում, չգիտեմ. բայց բանտում եւս նրանք շարունակ վիճում էին եւ այնքան սաստիկ, որ բանտային վարչութիւնը նրանց առանձնացրեց եւ տեղաւորեց տարբեր սենեակներում:

«Ես մի քանի անգամ նրան այցելել եմ բանտում: Նրան գտել եմ մի՛շտ խանդավառ, մի՛շտ հաւատացեալ՝ հանդէպ հայ դատի արդարութեան» . . . :

(*) Ողջ՝ Թեհրան:

Իսկ Գասպար Գասպարեան(*), նոյն հարցի մասին կը գրէ .—

«1909 թուականի Մայիսին Գ. Նժդեհը նոր բերած էին Նախիջևանի բանտը եւ զինք դրած յատուկ սենեակի մը մէջ: Օրական միայն մէկ ժամ ազատ կը ձգէին զինքը: Ծանօթ էի իրեն: Նոյն ամսուն ես մահուան դատապարտուած էի: Իմ փաստարաններս էին Հասան Զալալեան եւ Լ. Մուշեղեան: Ձեռքերս եւ ոտքերս շղթայուած էին ու փրկութեան յոյս չունէի:

«Օր մը առիթ ունեցայ Նժդեհի հետ խօսելու: Յայտնեցի Գարեգինին՝ թէ քովս թոյն ունիմ եւ երբ զիս տանին սպաննելու կամ կախազան հանելու՝ պիտի խմեմ դայն: Ան յանդիմանական ձեւով ըսաւ. «Գասպա՛ր, չըլլայ որ այդ քայլը առնես, դուն դեռ փոքր ես, տակաւին քսան տարեկան իսկ չես, կրնայ ըլլալ, որ քու մահուան պատիժը բանտարկութեան փոխուի: Այդ դորձը միայն թուլամորթները կը կատարեն. պէտք չէ հողեպէս ընկճուիս: Մօտ է այն օրը, որ ցարը կը տապալի եւ դուն ալ կ'ազատիս»:

Նժդեհի այս խօսքերը ողբերգիին եւ յուսադրեցին զիս...»:

1909ին Նժդեհի ձերբակալութեան առթիւ, իրեն ձօնած էին հետեւեալ երգը .—

Արագի ափին ծնած ընկեր,
 Էն Արագին մենք մատաղ,
 Մութ բանտերում տանջուած ընկեր,
 Սուրբ տանջանքիդ մենք մատաղ:
 Հուռո՛ւ, հուռո՛ւ, հուռո՛ւ,
 Քաջ Նժդեհի սուրբ շողշողայ:

Յար վախեցաւ քեզ ախարեց,
 Իր աշխարհէն շատ հեռու,
 Մեզ մօտ եկար, բարով եկար
 Նոր իտէպներ մեզ բերիր:
 Հուռո՛ւ, հուռո՛ւ, հուռո՛ւ,
 Քաջ Նժդեհի սուրբ շողշողայ:

Արեան դաշտում, կոուի դաշտում,
 Սուրդ շողայ, քա՛ջ Նժդեհ,
 Հուռո՛ւ յառաջ, դու գոռացիր,
 Կուրծքդ խաչով զարդարեցիր:
 Հուռո՛ւ, հուռո՛ւ, հուռո՛ւ,
 Քաջ Նժդեհի սուրբ շողշողայ:

(*) Ներկայիս կ'ապրի Լոս Անճելըսի մէջ (Մ. Ն.):

Մենք չենք մոռնար Հայկայ սարը,
 Ուր մենք տուինք ութը գոհ,
 Չենք մոռանայ, հրամանատար,
 Պիտի յիշենք դարէ դար:
 Հուռուա՛, հուռուա՛, հուռուա՛,
 Բայ Նժդեհի սուրը շողշողայ:

ՊԱԼՔԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Նժդեհն ուսական բանտերու մէջ ձերբակալուած կը մնայ մինչեւ 1911: Ազատ արձակուելէ ետք, կ'անցնի Պուլկարիա, ուր կը մտնէ պուլկարական բանակին մէջ ծառայութեան, իբրեւ սպայ, տեղակալի աստիճանով: Այդ պաշտօնով կը մնայ մինչեւ Պալքանեան պատերազմը՝ 1912:

Այս շրջանին Պուլկարիա կը դառնուէր նաեւ Զօր. Անդրանիկ:

1912ի աշնան, Պալքանեան պատերազմի նախօրեակին, Հ. Յ. Դ. ը կազմեց կամաւորական շարժում մը՝ Պուլկար բանակի կողքին: Այս երկրին դռները միշտ բաց եղած են հալածուած հայութեան առջեւ եւ զանազան ժամանակներու ընթացքին 40 հազարի հասնող հայեր ընդունուած եւ պատասպարուած են:

Կամաւորական խումբ մը կազմելու առաջին խորհրդակցութիւնը տեղի կ'ունենայ Ֆիլիպէի մէջ, Պալք-Փաղար, Գարա-Աղածլըին խանութը:


Անկէ ետք, կը սկսին դիմումներ կատարուիլ՝ Հ. Յ. Դ աշնակցութեան: Նոյնիսկ, դիմումներ կ'ըլլան կարգ մը մարդոց կողմէ, որոնք միշտ հակառակ եղած էին Դաշնակցութեան, վերջինիս հակաթուրք ձեռնարկներուն եւ քաղաքականութեան համար: Այժմ, երբ Պուլկարները սկսած էին պատերազմիլ Թուրքիոյ դէմ, նոյն այդ «թրքասէրներն» ու «խոհեմները» Դաշնակցութեան դուռը զարնելով, մաս կը կազմէին կամաւորական զուգերուն:

Ֆիլիպէէն զատ՝ կամաւորական արձանադրութիւնները սկսած էին նաեւ մայրօրաղաքի թէ շրջաններուն մէջ, որոնց միջեւ միշտ կապ կը պահէին տեղւոյն ընկերները:

Հայ կամաւորներու խումբը՝ մօտ 300 հոգի, պատրաստ էր

արդէն Սոֆիայի մէջ՝ ղեկավարութեամբ Անդրանիկի եւ Գ. Նժդեհի :
Հոկտեմբերի վերջը Հայ կամաւորական խումբը կը հասնի Ֆի-
լիպէ՝ իր սեփական դրօշակով, պուլկար կամաւորներու հետ : Ամ-
բողջ ժողովուրդը կը ծափահարէ անոնք, որոնք կը մեկնէին պատե-
րազմի :

Մեկնումէն օր մը առաջ, կամաւորական գունդերու սպաները
Ֆիլիպէ եկած էին, իրենց գլխաւոր հրամանատարին՝ Զօր. Փրոթա-
կերովի հետ : Այս առթիւ՝ Ֆիլիպէի Մեքրովիոյ պանդոկի ճաշարա-
նին մէջ տեղի կ'ունենայ հանդիպում մը, ուր ներկայ էին Անդրանիկ,
Նժդեհ, Ղուկաս Մինասեան եւ Ասատուր Պետիկեան :



Հայ կամաւորներու խումբը, Զօր. Անդրանիկի եւ Զօր. Նժդեհի
հրամանատարութեան տակ : Նկարուած՝ 23 Հոկտ. 1912-ին, Սոֆիա :

Հանդիպումէն ետք, Հայ կամաւորներու խումբը կը նկարուի
Սոֆիայի մէջ, 23 Հոկտ. 1912ին, նախաձեռնութեամբ Հ. Յ. Դաշ-
նակցութեան եւ Կարմիր Խաչի Տիկնանց Վարչութեան :

Պալքանեան պատերազմին, Հայկական Վաչտի մղած կռիւնե-
րու մասին համայնավար նշանաւոր ղեկավար Լ. Թրոցքին(*) գրած

(*) Լ. Թրոցքի՝ Պոլշեիկեան Յեղափոխութեան սկզբնական շրջանին Ռու-
սաստանի մարտական ուժի առաջնորդը, ինչպէս կը տեսնուի, մեծ գովեստով եւ
հիացումով կը ներկայացնէ Անդրանիկն ու Նժդեհը, որոնց Հայրենիքին դէմ յետա-
գային կռուելով, անոր կործանումին պատեառ հանդիսացաւ : Զուր անցաւ Անդրա-
նիկի 1918ին, նախիջեւանէն հո'յն Թրոցքիին ուղղած հեռագիրը : Թրոցքի ո'չ միայն
Հայաստանի գերագոյն սգնաժամին անտարբեր մնաց Անդրանիկի կոչին հանդէպ,
այլեւ երկու տարի յետոյ քանակներ դրկեց Նժդեհի դէմ :

Այս եղաւ կարմիր իշխողներու բարոյականը :

է յօդուած մը, ուր մեծ գովեստով կը խօսի Անդրանիկի եւ Նժդէհի մասին: Ստորեւ կու տանք այդ դրութենէն մաս մը:

«Գաղափարականութեան այն ոգին, որ զգացուած էր Պուլկար ժողովրդական զանգուածներու տրամադրութեան մէջ՝ կռուի առաջին շրջանին, իւր ամենավառ արտայայտութիւնը գտաւ Հայկական զօրամասի մէջ: Տարբեր ազգութեան, տարբեր լեզուի եւ տարբեր աւանդութիւններու մարդիկ հաւաքուած էին պուլկարական ռազմական դրօշի տակ, որ դարձեր էր անոնց համար օտարի ազատագրութեան դրօշը՝ թէեւ իրօք ընդհանուր թշնամիի դէմ էր պարզած:

«Հոկտեմբերի կիսուն, ես ճանապարհ դրի Սոֆիայից, Հայկական Կամաւորական Վաշտին, որ Մակեդոնական լեզէոնի մը մաս կը կազմէր: Այդ լեզէոնը շուտով հռչակուեց իր դաժանութիւններով:

«Պալքանեան աշնան գեղեցիկ օր մըն էր: Երբ արեգակը պայծառ կը փայլէր ու քաղաքը տակաւին քիչ վիրաւորներ կային եւ պատերազմը դեռ ցնծութեան տեսք ունէր, կամաւորները դուրս եկան աղջկանց Գիմնազիոնի շէնքէն, ուր կ'ապրէին եւ կը սորվէին զինուորական գիտելիքներ:

«Անոնք 230 հոգի էին, թխադէմ, մազմզոտ մարդիկ, 19էն մինչեւ 45 տարեկան, զանազան անցեալի տէր մարդիկ:

«Կամաւորներու հագուստը իրենց սեփականն էր. քաղաքացիական զգեստ. միայն թէ զինուորական զգեստի տեսք էր տրուած: Շատերը ոտքերնին ունէին սեղմ փաթաթներ եւ մինչեւ արմուկները հմուտ կերպով ձգած թոկեր: Մէջքերնին կախել էին քաթանէ պայուսակ, կը կրէին գլխանոց (բաշլիկ). կապել էին փամփշտակալներ եւ շատեր ունէին սեփական ատրճանակ: Ամէնքը զարդարուած էին ծաղիկներով: Ունէին մորթէ բարձրադիր զգակներ, իսկ օձիքի եւ գօտիի շուրջը դրած՝ ծաղիկներ: Եւ այդ բոլորը միասին՝ գառնուկի մորթէ գլխարկները, սեղմ գօտիները, մաքուր պայուսակները, ծաղիկները, զօրամասին տուած էին ո՛չ միայն մարտական, այլեւ տօնական տպաւորութիւն:

«Վաշտի հրամանատարն էր սպայական համազգեստով հայ մը, զոր ուղղակի կը կոչէին «Ընկեր Գարեգին»: Գարեգինը Փեթերսպուրկի համալսարանի նախկին ուսանող էր, որ Դաշնակցութեան յայտնի «Լըժինիա» գործով ձերբակալուեցաւ եւ վերջը արդարացաւ երեք տարուան բանտարկութենէ ետք: Ան Սոֆիայի մէջ սորվեցաւ զինուորական դպրոցի դասընթացքը եւ մինչեւ Պալքանեան պատերազմի սկիզբը կը նկատուէր Պուլկարական բանակի պահեստի փոխ տեղակալ:

«Գարեգին (Նժդեհի մասին է խօսքը) բանաստեղծ էր, ճառախօս, զինուորական: Ան համակ կրակ էր դարձել իրեն վիճակուած

առաքելութեան կարեւորութենէն զրդուած :

«Գարեգին՝ տասը օր շարունակ, օրական տաս ժամ, անոնց կը սորվեցնէր շարքային արուեստի գաղտնիքները: Շատ հրաման տալով եւ ճառեր խօսելով ձայնը խղուած էր: Ունէր ջերմ ու տենդով վարակուածի կերպարանք, եւ իր սեւ-կապոյտ մազերը մըրկածուփ ալիքներով դուրս էին ցցուած սպայական գլխարկի տակէն»:

Պուլկարական բանակի կողքին պատերազմելով, հայ կամաւորական զունդը ցոյց տուաւ մեծ քաջութիւն:

Հայկական կամաւորական զունդեր կազմելու որոշումը տրուած էր Հ. Յ. Գաշնակցութեան Պալքանեան (Պուլկարիոյ) կեդրոնական կոմիտէին կողմէ եւ նախաձեռնութիւնը վստահուած էր ազգային հերոս Անդրանիկին ու այնտեղ իր զինուորական ուսումը ստացած՝ Գ. Նժդեհին:

Նժդեհ անմիջապէս կ'այցելէ պուլկարահայ գլխաւոր կեդրոնները՝ Վաննա, Ռուսճուք, Ֆիլիպէ, Պուլկազ, Սլիվէն, Շումէն եւ այլն եւ կը ձեռնարկէ կամաւորներու արձանագրութեան: Սոֆիայի մէջ կը կազմուի Հայուհիներէ բաղկացած կարմիր Սաչ մը, որ կը սկսի նուիրահաւաքութեան, կամաւորներու համար անհրաժեշտ իրեղէններու հայթայթման համար:

3 Հոկտ. 1912ին հայ կամաւորական զօրամասի ղեկավարութիւնը կը ստանայ Մակեդոն - Օտրինիան(*) Երկրապահ զօրքի Հրամանատարութեան հետեւեալ հրամանագիրը. —

Սոֆիա, 3 Հոկտ. 1912

Իրրել կամաւոր ներկայացած, ռուսահպատակ եւ պուլկար պահեստի սպաներու վարժարանէն պահեստի փոխ-տեղակալ Գարեգին Նժդեհին կը հրամայեմ ինֆզինֆը հաշուել Երկրապահ Զօրքի շարքերուն մէջ սոյն բուսականի Սեպտեմբեր 23էն սկսեալ եւ միեւնոյնին կը հրամայեմ կազմակերպել հայ կամաւորներէ բաղկացած հայկական զօրամաս մը:

Երկրապահ Զօրքի Հրաման. կեներալ — Մայոր կեն եւ Սպայկ. պետ՝ Գլխաւոր Սպայակոյտէն՝ Մայոր Տարվինֆով

Այս հրամանագիրը ստացուելուն պէս կը հրահանգուի գաւառներու կամաւորներուն հաւաքուիլ Սոֆիա. ինչ որ կը կատարուի քանի մը օրերու ընթացքին: Բոլորը կը ստանան զէնքեր զինուորական մթերանոցներէն: Հոկտեմբեր Տին վաչտը կազմուած է արդէն: Այս

(*) Օտրին՝ Էտիրնէի պուլկարերէնն է:

պարագան կը հաղորդուի Երկրապահ Զօրքի հրամանատարին, Գ. Նժդեհի հետեւեալ գրութեամբ.

Սոփիա, 8 Հոկտմ. 1912

Երկրապահ Զօրքի Հրամանատարին

Աստ

Կը հաղորդեմ ձեզի, Պարոն Զօրավար, թէ արդէն կազմակերպած եմ հայկական զօրամասը հետեւեալ կազմով.— Մէկ սպայ եւ 230 հրացանակիրներ:

Զօրամասի հրամանատար՝ փոխ-տեղակալ

Գ. Նժդեհ

Նոյն օրը, Սոփիայի հայ եկեղեցիին մէջ կը կատարուի կամաւորական վաշտին նուիրուած ազգային եւ յեղափոխական երկու դրօշակներու օծումն ու օրհնութիւնը, հայ եւ պուլկար խումն բազմութեան մը ներկայութեան: Գ. Նժդեհ կը խօսի կրակոտ ճառ մը եւ կ'ըսէ ի միջի այլոց.

«... Գրօշակներու օծումը կատարուեց այսօր հոս, կրօնական արարողութիւնով, իսկ երկրորդ ու ճշմարիտ օծումը կատարուելու է պատերազմի դաշտում, թնդանօթների եւ հրացանների սրտին տակ...»:

Հոկտմ. 16ին, վաշտը մաս կը կազմէ նորակազմ 12րդ Լոզենկրատիան Գումարտակին, որուն հրամանատարը, իր կարգին, հետեւեալ հրամանագիրը կ'ուղղէ Գ. Նժդեհին.—

Հրաման՝ 12րդ Լոզենկրատիան

Տրուծիմայէն — Թիւ 1

Սոփիա, 16 Հոկտմ. 1912

Հայկական վաշտի հրամանատար կը նշանակեմ փոխ-տեղակալ Գարեգին Նժդեհը:

Տրուծիմայի հրամանատար՝

ՄԱՅՈՐ ԿՈՒՆԵԻ

Կամաւորական վաշտին գլուխը կը գտնուէր Անդրանիկ, որ սակայն գինուորական պաշտօնական աստիճան չունենալուն համար չէր յիշատակուեր բանակային հրամանագրերու մէջ: Զինուորական իշխանութիւնները կը ճանչնային զայն որպէս Վոյվոտա, իբրեւ հայ-գուկներու պետ: Ամիսներ ետք իր քաջագործութիւններուն համար տուին փոխ-տեղակալի աստիճան:

Հոկտեմբեր 23ին հայկական վաշտը ճամբայ ելաւ դէպի ոսգմաճախատ : Նախքան մեկնումը ամբողջ վաշտը ուխտի գնաց Քրիստափորի գերեզմանին, ուր Գարեգին Նժդէհ խօսեցաւ իր կրակոտ ճառերէն մէկը եւ ըսաւ ի միջի այլոց .

«... Դո՛ւք, պարտականութեան ազատատենչ ասպետներ, թշնամիին վրայ նետուելէ առաջ կամեցաք ձեր դրօշակներով ծնել ձեր հպարտ գլուխները գերեզմանին առջեւ Քրիստափորին, որ ազա-



Քրիստափորի Յուշարձանը

տութեան ծարաւի ձեր հոգիներուն մէջ դրաւ վրէժխնդրութեան սրբազան կրակը : Երդուինք մեծ յեղափոխականի գերեզմանին առաջ, երդուինք, թէ պատերազմի դաշտին վրայ պիտի չանարգենք հերոսական անունը հայ մարտիկին : Երդուինք, թէ թշնամին երբեք պիտի չտեսնի մեր թիկունքը...» :

Հայկական վաշտը, կառախումբով, Սոֆիա - Ֆիլիպէ - Խաս-

քովօ դժով փոխադրուեցաւ ռազմաճակատ, ուր հետիոտն անցաւ արդէն իսկ դրաւուած Քրրճալը քաղաքը եւ ունեցաւ վառօդի եւ արեան առաջին մկրտութիւնը Նոյ. Աին, Ռոտտիի լեռնաչղթային վրայ, Մասթանլըրի բարձունքը, դրոհ տալով թրքական ուժերուն դէմ ու քշելով զանոնք աշնտեղէն: Ու այսպէս արագօրէն մինչեւ Թրակիոյ Կիւմիւլճինա քաղաքը, ուր հայկական վաչտը մտաւ Նոյեմ. Ցին:

«Երեկոյեան ժամը 6 էր: Սկսած էր պուլկարական, յունական եւ հայկական եկեղեցիներու զանգակներուն զօղանջը: Դուրս թափած էր բոլոր ժողովուրդը եւ «հուռա»ներով կը դիմաւորէր ազատաբարները:

Զինուորները նախ այցելեցին պուլկարական եկեղեցին, ուր ներկայ գտնուեցան զոհարանական մաղթանքի մը: Յետոյ գացին յունական եկեղեցին, ուր նմանապէս դիմաւորուեցան պատիւներով: Ի վերջոյ հասան Հայոց եկեղեցիին առջեւ:

Հաղարապետն ու իր օղնականները ձիերէն իջան եւ մտան լուսադարձուած Հայոց եկեղեցին: Վառեցին մէյմէկ մոմ, պնակներուն մէջ դրամ ալ ձգեցին եւ աղօթք մը լսելէ եւ աղօթելէ ետք՝ բակ ելան: Հոն՝ մեծ անակնկալը: Դառնալով խոնուած Հայերուն, պուլկար հաղարապետը քսաւ.

«Շատ բարի լուր մը ձեզի, սիրելի՛ Հայեր (կը խօսէր պուլկարերէնով, որ կը թարգմանուէր թրքերէնի), մեզի հետ կը գտնուին ձեր հերոս վոյվոտա Անդրանիկը եւ Գարեգին Նժդեհը, 270ի շափ կամաւորներով, որոնք մեր բանակին հետ կը կռուին հասարակաց թշնամիին դէմ: Այս քաղաքի դրաւումն ալ անոնց կը պարտինք մեծ մասով: Վաղը անոնք ձեր մէջ պիտի ըլլան»: Ապա, հոն խոնուած Հայերու զզրզողին ծափերուն եւ հուռա՛ներուն տակ մեկնեցաւ իր զինուորներուն հետ:

«Անդրանիկը մեր մէջ... Այսպէս ալ անակնկալ»... Ուրախութեան արցունքներով կը թրջէին մեր աչքերը եւ սրտատրոփ կը սպասէինք յաջորդ օրուան:

Նոյն գիշեր քաղաք հասաւ կամաւորներէն էտիրնեցի Կարապետ Պարոնեանը: Անդրանիկն էր զրկողը, որպէսզի կամաւորներու բնակութեան համար պատրաստութիւններ տեսնուէին քաղաքին մէջ: Կամաւորական վաչտը գիշերը պիտի անցընէր մերձակայ Քոզլու Քէպիր գիւղին մէջ եւ յաջորդ օրը, կէսօրէ ետք պիտի հասնէր քաղաք:

Յաջորդ օրը Նոյեմբեր 9ին, տեսնուեցան անհրաժեշտ պատրաստութիւնները: Յարգարուեցան ազգային վարժարանին սրահն ու սենեակները եւ քանի մը այլ անհատական տուներու մէջ ալ սաեղծուեցան յարմարութիւններ: Եւ կէսօրէ ետք, խումբ մը երիտասարդներով, բարձրացանք դէպի խճուղին, ուրկէ պիտի անցնէին զօ-

բամասերը՝ դիմաւորելու համար հայկական վաշտը :

Ու ահա վաշտը երեւցաւ : Առջեւէն, ձիերու վրայ, Անդրանիկը, Գարեգին Նժդեհը, վաշտին բժիշկը՝ Թիֆլիսցի Արշակ Մնացականեանը եւ Սոֆիարնակ Ղուկաս Մինասեանը : Ետեւէն՝ կամաւորներու բազմութիւնը :

Անդրանիկ եւ Գարեգին Նժդեհ, զոյգ հայկական դրօշակներու առաջնորդութեամբ, ուղղուեցան դէպի Հայոց եկեղեցին :

— Քայլ առաջ, մա՛րջ . . .

Ու օդը թնդաց մարտական քայլերով .

Հայ եղբայրներ, դէ՛հ, գունդ ի գունդ
Արեան դաշտը մենի նետուինի . . .
Սուրբ ձեռին, հուրը կրծքին,
Սառած սրտեր բորբոքին . . .

Վաշտը ողողեց եկեղեցւոյ բակը, որ արդէն լեցուած է տեղացի հայերով : Ներկայ երիտասարդները թնդացուցին Անդրանիկի երգը :

Դաշնակցական խումբ, գնանի մենի Սասուն
Մեր հայ եղբայրներ մեզ են սպասում,
Անդրանիկը քաջ իր ընկերներով,
Կ'ուզէ պատերազմ, կը սպասէ գարնան . . .

Ժողովուրդի աչքերը կեդրոնացած էին առասպելական մեծ հերոսին՝ Անդրանիկին եւ սեւ ու դանդուր մազերով Գարեգին Նժդեհին վրայ : Ծափեր ու կեցցէներ կը ճեղքէին օդը : Եւ ահա, Նժդեհն է, տապանաքարի մը վրայ բարձրացած եւ մեծապէս յուզուած, կը խօսի բոցաշունչ ճառ մը :

«Շատ ուրախ ենք ձեզ տեսնելով այսպէս խանդավառ, շատ ուրախ էք ե՛ւ դուք մեզ տեսնելով այսօր ձեր մէջ, մեր սիրելի՛ ազգակիցներ : Եկել ենք ու ողջունում ենք ձեզ, որպէս մէկ փոքր մասնիկը մեր արի ժողովուրդին, որ դարերով տառապել ու տառապում է մեր անարգ թշնամու՝ թուրքի բռնապետութեան ներքեւ : Մենք ճանապարհ ենք ընկել վրէժը մեր սրտերում ջախջախելու այդ բռնատիրութիւնը : Մեր բռունցքն է ուժեղ եւ մեր սուրը հատու : Այս վերջին օրերում թուրքն զգաց արդէն այդ բռունցքի ծանրութիւնը : Ու պիտի զգայ վաղն էլ եւ յառաջիկայ օրերում : Նա կը նահանջի խայտառակ փախուստով եւ չի համարձակուիր նայել մեր ցասկոտ աչքերին : Պուլկարական փառապանծ բանակի կողքին հայ կամաւորական ուժերն էլ ցոյց տուեցին, թէ կարող են կռուել քաջութեամբ եւ հարուածել նամարդ թշնամուն : Օրհնեցէք յիշատակը այս վերջին



Զ Օ Ր . Ա Ն Դ Ր Ա Ն Ի Կ
Պուլկար սպայի տարազով, նկարուած 1912-ին, Սոփիա:

օրերում հերոսաբար ընկած մեր ընկերներին եւ հաւատացէք, որ
ապրողները լուծելու են նաեւ նրանց վրէժը: Կեցցե՛ն Պուլիար եւ
Հայ ազատատենչ ժողովուրդները, իրենց հարուածող ուժերով...
Կորչի թշնամին...»:

— Ուռուա՛... . . .

Եկեղեցւոյ բակը թնդաց նորէն կամաւորներու եւ տեղացի ե-
րիտասարդներու ծափերով ու բացազանչութիւններով:

«Երբեք չեմ կրնար մոռնալ այդ ընդհանուր ոգեւորութիւնը, որ
կը տիրէր կամաւորներուն մօտ: Քոլորն ալ աշխոյժ ու խանդավառ՝
վրէժի զգացումը կ'եռար իրենց սրտերուն մէջ: Ուրախ էին: Ուրախ
էին մանաւանդ այն իրողութեամբ, որ յաղթական դուրս եկած էին
թշնամին հետ իրենց առաջին ընդհարումներուն մէջ: Ճիշդ է, տը-
ւած էին զոհեր իրենց թանկագին ընկերներէն, բայց գիտէին, որ այլ
կերպ չէր կրնար ըլլալ: Պատերազմ էր եւ իրենք ալ կը գտնուէին
կռուի առաջին գծերուն վրայ: Ու բնականաբար կար պատուոյ դաշ-
տին վրայ հերոսաբար զոհուելու հաւանականութիւնը: Ընկերներուն
նահատակութիւնն ալ, այսուհանգերձ, յաւելեալ խթան մը կ'ըլլար՝
աներկիւղ կատարելու իրենց պարտականութիւնները:

Շէնչող խօսակցութիւններ, կատակներ, դուարթ բացազան-
չութիւններ կը թնդացնէին հայկական թաղը: Ու երգե՛ր, երգե՛ր,
հոս-հոն հաւաքուած խումբերու մէջ: Երգեր՝ Անդրանիկին ձօնուած:

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք երկիր տենչավառ.
Սուրբ անունդ պիտի յիշուի դարէ դար,
Հսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանիկ:

Ու երգը՝ Գարեգին Նժդեհին ձօնուած.

Արագի ափին ծնած դու ընկեր,
էն Արագին մենք մատաղ,
Մութ բանտերում տանջուած ընկեր,
Սուրբ տանջանքիդ մենք մատաղ:
Հուռուա՛, հուռուա՛, հուռուա՛,
Քաջ Նժդեհի սուրը շողշողայ...:

Մինչեւ անգամ, իրենք իրենց յօրինած բառերով երգ մը կ'եր-
գէին, «Մեր հայրենիք»ի եղանակով:

Դու Գարեգին Երեւանցի
Հայկական գունդ կազմեցիր,
Սոփիայից դուրս բերեցիր,
Հայոց դրօշակ պարգեցիր:

Կիւմիւլճինայի փոքրաթիւ, մեծ մասով թրքախօս եւ տառապանքը իրենց մորթին վրայ չզգացած համայնքին համար օրհնութիւն մը եղաւ ներկայութիւնը հայ կամաւորներուն, որոնք իրենց մարզանքներով եւ հայրենասիրական արտայայտութիւններով կըրցան տաք մթնոլորտ մը ստեղծել» : (*)

Նոյեմբեր 12ին վաշտը ճամբայ ելաւ գէպի Մէրհամլի դաշտային շրջանը, ուր հասաւ 15 Նոյեմբերին : Անկէ անցան Ռոտոսթոյ, ուր Մալկարացիները եւ Ռոտոսթոյիները գրկաբաց ընդունեցին իրենց հարազատ եղբայրները եւ արտայայտեցին իրենց խանդավառութիւնը իրերայաջորդ հանդէսներով, ընդունելութիւններով եւ հիւրասիրութիւններով, թէ՛ հանրային սրահներու մէջ եւ թէ՛ ընտանեկան յարկերու տակ : Թրքական լուծէն փրկուած ըլլալու զգացումը միայն կը բաւէր, որ չափ ու սահման չճանչնար իրենց ոգեւորութիւնը :

1913 Մայիսի 28-ին Քոչանէի մէջ լուծուեցաւ հայկական վաշտը եւ Գարեգին Նժդէհ վերադարձաւ Սոֆիա :

Պուլկարական բանակին անունով, Մակեդոն – Օտրինիան երկրապահ զօրքի սպայակոյտը, պատմական փաստաթուղթ մը եւ վկայական մը յանձնեց հայկական վաշտի հրամանատարութեան, բանակի ընդհանուր զօրացրումէն ետք, 31 Օգոստոս 1913ին :

Ահա այդ փաստաթուղթը՝ պուլկարերէնէն եւ թարգմանաբար նկատի ունենալով, որ ան միաժամանակ կը պատկերացնէ Նժդէհի գործունէութիւնը :

ՍՊԱՅԱԿՈՅՏ

Մակեդոն – Օտրինիան

Երկրապահ Չօրքի

Թիւ 3483

31 Օգոստոս 1913

Սոֆիա

ՎԿԱՅԱԿԱՆ

Մակեդոն – Օտրինիան երկրապահ զօրամասերու կազմութեան ժամանակ նկատի առնելով Հայոց համակրանքը Պուլկարիոյ հանդէպ, անոնց անցեալը եւ կարեւորութիւնը իրենց դիմումին՝ պատերազմին մասնակցիլ իրենց առանձին զօրամասով, թոյլատրուեցաւ կազմութիւնը հայկական զօրամասի մը, հայկական ազգային դրօշակով, հայ սպաներով եւ հայ խմբապետներով : (Հրամանագիր Մակեդոն – Օտրինիան Երկրապահ Չօրքի հրամանատարութեան,

(*) «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳԻՐՔԸ», Կարօ Գէորգեան, 1962, էջ 151 :

Թիւ 2 (Յօդուած 8), 3 Հոկտ. 1912) : Հայկական զօրամասը վերջնական կերպով կազմակերպուեցաւ 8 Հոկտ. 1912-ին եւ նոյն ամսուան 16-ին առնուեցաւ 12-րդ Լոզենկրատեան Գումարտակին մէջ :

Զօրամասին սկզբնական կազմն էր — 1 սպայ՝ փոխ-տեղակալ Գարեգին Նժդեհ, 1 վոյվոտա՝ Անդրանիկ Օզանեան եւ 229 զինուորներ :

Դէպի Թրակիա արշաւելու ժամանակ զօրամասին միացան 42 կամաւորներ եւս, որով կազմը հասաւ 273-ի :

Քրքճալեան զօրարածնին միացած՝ յիշեալ զօրամասը, պատերազմի առաջին շրջանին մասնակցեցաւ հետեւեալ արշաւանքներուն. — Սոֆիա, Սամաքով, Քոստէնէյ Պանիա, Փրովաիվ, Թրնովօ Սէյմէն — Սասքովօ, Քրքճալը, Մասթանլը, Կիւմիւլճինա, Ֆէրէ, Սոֆլու, Տէմոթիքա, Ուզուն Քէօփրիւ, Քէչան, Մալկարա, Ռոսսոթօ ու մասնակցեցաւ հետեւեալ կռիւներուն .

1. — Մասթանլրի մօտ՝ 4 Նոյեմբեր 1912-ին :

2. — Ուզուն Համիտլէր՝ 5 Նոյեմբեր 1912-ին :

3. — Պալքան Թորէսի՝ 6 Նոյեմբեր 1912-ին :

4. — Մէրկամլը՝ 15 Նոյեմբեր 1912-ին, ուր գերի ինկաւ Եսովեր Փաշայի բանակը :

Երկրապահ զօրքի ամբողջական կազմին մէջ, պալքանեան պատերազմի երկրորդ շրջանին, դործնապէս մասնակցեցաւ հետեւեալ կռիւներուն .

1. — Միւրէֆթի քաղաքի գրաւման, 22 Յունուար 1913-ին :

2. — Շարքոյի գրաւման, 26, 27 եւ 28 Յունուար 1913-ին :

Ու վերադարձը՝ Շարքէոյ, Մալկարա, Քէչան, Իփսալա, Ֆէրէ, Տէտէաղաճ, Կիւմիւլճինա, Տէմիրհիսար, Փեթրիճ, Սթրումիցա, Ռատովիչ, Շիֆլպ, Քոչանէ, Սոֆիա :

Հայկական զօրամասը պաշտպանեց Մարմարայի ծովեզերքը 16 Դեկտ. 1912-էն մինչեւ 20 Յունուար 1913. ապա, 29 Յունուարէն մինչեւ 22 Մարտ նախանձախնդրութեամբ կատարեց հսկողութեան իր ծառայութիւնը :

Բարւոք ծառայութեան համար աստիճանի բարձրացում ունեցան մէկ անձ՝ Անդրանիկ Օզանեան, իբրեւ փոխ-տեղակալ, 8 ենթասպաներ եւ 16 տասնապետներ :

Պատուանշաններ ստացան — 1 Սպայական Սաչ՝ փոխ-տեղակալ Գարեգին Նժդեհ, 1 զինուորական խաչ Ա. աստիճանի՝ Անդրանիկ Օզանեան, 1 զինուորական խաչ՝ Բ. աստիճանի, 23 զինուորական խաչ Գ. աստիճանի, որոնցմէ մէկը տրուեցաւ ազդային զրօշակին եւ 10 ուրիշ շքանշաններ :

Զօրամասը արձակուեցաւ 28 Մայիս 1913-ին Քոզանէ քաղաքին մէջ, Թուրքիոյ հետ խաղաղութեան կնքումէն յետոյ :

Шабъ
на
Макед.-Одрин. Опълчение
часть стрелва
№ 3483
31 августъ 1913 год.
Ст. София

Свидѣтелство

При формирането на Македоно-Одринското Опълчение, взето предъ видъ симпатията на Арменците къмъ Българя, миналото на сжидитѣ и важноста тѣ да се явятъ въ Войната съ своята отдѣлна часть, разрѣши се формирането на една арменска рота съ арменско национално знаме и съ арменски офицери и войводи. (Заповѣдъ на Македоно-Одринското Опълчение, № 2, § 8, отъ 3-й октомври 1912 г.)

Арменска рота е окончателно формирана на 8-й октомври 1912 г., а на 16-й сжщій причислена къмъ XIII Лозенградска дружина.

Първоначалния съставъ на ротата бѣше: 1 офицеръ командиръ на ротата подпоучикъ **Гарегинъ Нъжде**, 1 войвода **Антраникъ Теръ Узунянъ** и 229 опълченци. Прѣзъ време на походитѣ въ рация къмъ ротата се присъединиха още 42 доброволци, съ които състава на ротата възлѣ на 273 человека.

Въ състава на Кждражалскиятъ отрядъ въ първия периодъ на войната съ Турция, тази рота взе участие въ походитѣ отъ София Самоковъ Костенецъ баня Пловдивъ Търново-Сейменъ Хасково Кждражали Мастанлъ Гюмюрджина Фере Софлу Димотика Узунъ-Кюпри Кешанъ Малгара Родосто и въ боеветѣ:

- 1) При Мастанлъ на 4 Ноември 1912 год.
- 2) „ Узунъ Хамидъ-теръ на 6 Ноември 1912 г.
- 3) „ Балханъ Тореси на 7 Ноември 1912 г.
- 4) „ с. Мерхамлъ на 15 Ноември 1912 г.

(Изпълняването корпусо на Ноември 1912 г.)

Въ съставъ на цѣлото Опълчение, прѣзъ втория периодъ на войната съ Турция, взе активно участие въ боеветѣ:

- 1) При завладѣването на гр. Мерфете 22 януари 1913 год.
- 2) При завладѣването на гр. Шаръ-къой 23 януари 1913 год.
- 3) Отблъсването десанта при Шаръ-къой, 26, 27, 28 Януари 1913 год., и въ походитѣ:

Шаръ-къой Малгара Кешанъ Ибсала Фере Деде-Агачъ Гюмюрджина Демиръ-Хисаръ Петричъ Струмина Радовишъ Шипъ Кочане София.

Арменската рота е охранявала брѣга на Мраморното море отъ 16-й декември 1912 год. до 20-й януари 1913 г. и отъ 29-й януари до 22 мартъ с. г. Изпълнявала е равностно патрулна служба.

„За отлична служба, изъ срѣдата на ротата сж произведени: 1 (единъ) въ чинъ Подпоручикъ — Антраникъ Теръ Узунянъ, 8 (осемъ) младши подофицери и 16 (шестнадесетъ) ефрейтори.

Получила е награди: 1 офицерски кръсть за храбрость (подпор. Гарегинъ Нъжде), 1 войнишки II степенъ (Антраникъ Теръ Узунянъ), 1-III степенъ и 23 — IV степенъ, отъ които единъ е окаченъ на националното знаме и 10 — за военна заслуга.

Ротата е разпусната на 28 май 1913 г. слѣдъ сключването на мира съ Турция, въ гр. Кочане.

Изобщо, Армистската рота, върѣки липса на дрѣхи и силень многочисленъ кадъръ — е била винаги **силна съ своята износливость, дисциплина и твърдость, извънредно храбра въ боеветѣ**

Всички участвуващи въ тази рота могатъ да бждатъ горди съ своитѣ храбри дѣла. А Армения трѣбва да бжде утѣрена, че съ такива синове, способни да умиратъ иначе за една чужда кауза ще достигне въ недалечно бждаше щастлива и трайна свобода.

(подп.) Началникъ на Опълчението,

Генералъ-майоръ: **Геневъ**

(подп.) Началникъ на Шаба,

отъ Генералния шабъ, Майоръ: **Дървинговъ**

Адютантъ,

Капитанъ: **Николовъ**

Պուլկար Կառապարտընէն տրուած պատմական փաստաթուղթը՝
պուլկարերէն լեզուով:



Զօր. Գարեգին Նժդեհի
Պուշկար սպայի արտագով

Հայկական զորամասը ընդհանրապէս եւ հակառակ զօրաւոր դասակարգումի չդոյութեան, միշտ ալ հանդիսացաւ ուժեղ՝ իր շարքաչութեամբ, կարգապահութեամբ, տոկունութեամբ եւ եղաւ արտակարգօրէն քաջ՝ կռիւներու մէջ:

Այս զորամասին բոլոր մասնակցողները կրնան հպարտանալ իրենց արի դործերով. իսկ Հայաստան պէտք է վստահ ըլլայ, որ այսպիսի դաւակներով, որոնք ընդունակ են մեռնելու օտար դատի մը համար, մօտ ապագային ձեռք պիտի բերէ երջանիկ ու տեւական ապատութիւն:

Երկրապահ Չօրքի Հրամանատար
ԿԵՆԵՐԱԼ ՄԱՅՈՐ ԿԷՆ Եւ

Սպայակոյտի պետ՝ Գլխաւոր Սպայակոյտէն
ՄԱՅՈՐ ՏԱՐՎԻՆՔՈՎ

Թիկնապահ՝ ՔԱՓԻԹԱՆ ՆԻՔՈԼՈՎ

Պուլիար հրամանատարութեան կողմէ տրուած այս շատ պատուարեր վկայականը լաւագոյն հաստատումը եղաւ հայ կամաւորներու բերած ծառայութեան՝ պուլիար բանակին մէջ:

Նոյն օրերուն, Սոֆիայի մէջ դումարուեցաւ Հ. Յ. Գաշնակցութեան Պուլիարիոյ կողմին Շրջանային Ժողովը: Բացումը կատարուեցաւ 29 Հոկտ. 1913-ին եւ ժողովը իր 5-րդ նիստին անդրադառնալով հայոց մասնակցութեան պալքանեան պատերազմին, քուէարկեց հետեւեալ բանաձեւը. (քաղուած՝ Շրջանային Ժողովի արձանագրութիւններէն)

«Շրջանային Ժողովը՝ Կեդր. Կոմիտէի ընկեր ներկայացուցիչէն տեղեկանալով պալքանեան պատերազմին մասնակցող հայ կամաւորներու կազմուելուն շարժառիթները,

«Նկատի ունենալով որ կամաւորներու կազմութեան քայլը ըստ ինքեան վայլուն ապացոյց մըն է հայ ժողովուրդի ազատասէր ճշդտումներուն, ինչ որ ուրախալի է,

«Նկատի ունենալով որ կամաւորական գունդով մը պալքանեան պատերազմին մասնակցելով երախտագիտութեան պարտք մը հատուցինք Պուլիար Կառավարութեան եւ ժողովուրդին՝ որոնք ԳՏ-ի կոտորածներէն անմիջապէս յետոյ իրենց խրկիրը դիմող հայ գաղթականութեան այնքան վէճ ասպնջականութիւն մը ցոյց տուած էին,

«Նկատի ունենալով որ հայ կամաւորներու գունդը հայութեան պատիւ բերող մասնակցութիւն մը ունեցած է պատերազմի ընթացքին, ինչ որ գոհունակութեան արժանի է,

«Նկատի ունենալով որ հայ կամաւորներու այս անձնագոհումը

մեր եւ պուլկար ժողովրդեան ունեցած բարեկամական յարաբերութեանց ամրապնդուելուն զօրաւոր ազդակ մը եղած է,

«Ժողովրդ ուրախութեամբ արձանագրելով այս պարագաները, հանդիսաւորապէս զոհունակութիւն կը յայտնէ ընկեր Անդրանիկի, Նժդէհի եւ բոլոր կամաւոր զինուորներուն — դաշնակցական կամ չէզոք — որոնք յանուն զազափարի ամբողջ ամիսներ արիարար ճակատեցան մեր դարաւոր թշնամուոյն դէմ»:

Այնուհետեւ Շրջանային Ժողովին կարգադրութեամբ, Հ. Յ. Դ. Պալքանեան կեդր. կոմիտէն, իբրեւ վերազնահատում հայ կամաւորներու զոհաբերութեան, հրատարակեց հետեւեալ թուուցիկը.

Վ Ե Ր Ա Գ Ն Ա Հ Ա Տ Ա Կ Ա Ն

Պալքանեան ազատարար կռուի միջոցին Հայ կամաւորներու գունդին կատարած մեծ ու վսեմ աքթը, որքան որ ալ շունենայ կուսակցական եւ կադմակերպական բնոյթ, այնու ամենայնիւ իբր հայկական իրականութիւն եւ ժամանակի ծնունդ՝ մենք պարտաւոր ենք շահագրգռուիլ անով եւ տալ մեր յարգանքի ու դնահատման պարտքը:

Ո՛վ դո՛ւք, եաթաղանի՛, սուրի՛ ու տապարի՛ հալածական սերունդ, դուք կատարեցիք պատմական մի մեծ յիշատակելի գործ՝ ցոյց տուիք արար աշխարհի, որ Ձեր մէջ կ'ապրի առաքինի մարդը: Ձեր մորթաղերձ հօր, առեւանդուած քրոջ եւ յօշոտուած մօր հողիները մարմին առին Ձեր կամքերուն մէջ եւ տիեզերական հատուցման Օրէնքը իր Անիւը առաջ շարժեց Ազատարար Բանակներուն եւ Ձեր ճիգերովը:

Մակեդոնիոյ ազատագրութեան կռուին մէջ դուք ցոյց տուիք, որ մարտիրոս ժողովուրդներուն Դաար՝ նոյնքան Ձեզ համար Սուրբ է, որքան Ձեր Ազգային Դաար: «Չզատութեան» եւ «խոհեմութեան» յորդոր օրօրները Ձեր ազատատենչ թեւերուն թափը չկասեցուցին: Եւ դուք Պուլկարիոյ ամէն անկիւններէն վաղեցիք ու բոլորուեցաք երկու աննման անուններու շուրջ՝ ԱՆԴՐԱՆԻԿԻ եւ ԳԱՐԵԳԻՆԻ:

Այն ասպնջականութիւնը դոր դուք վայելեցիք այս երկրին մէջ արիւնի ու սուրի տարիներուն, արժանաւորապէս հատուցիք, տալով ձեր շարքերէն թանկագին Չոհեր:

Հայրենակից կամաւոր զինուորներ, կու դայ մի գեղեցիկ օր, երբ հայրենի հորիզոններէն կը փարատին խաւարն ու ազջամուղջը, կը վերնայ ամէն տեսակի բռնութիւն ու կը ծաղկի նոր կեանքի Լուսապայծառ Արեւը, այն ատեն Հայ Ազգը կ'ողեկոչէ Մակեդոնիոյ մէջ ինկող իր զուակները եւ անոնց հողիները կը միացնէ բոլոր անոնց հողիներուն հետ, որոնք նոր օրուան մեծ Առաւօտը կերտեցին: Եւ

այն ատենուայ Հայ Պատմագիրը, ազատ բռնակալական ամէն ճըն-
չումներէ, կու տայ ձեզ փառաւոր տեղ մը՝ Հայ Ազգի Ազատագրա-
կան կռիւներու սլաոմութեան մէջ:

Մինչ այդ զեղեցիկ օրը, պահեցէք բարձր ու մաքուր ձեր դա-
ղափարական Դրօշակը եւ եղէք սպարաճանաչ ձեր անունին ու կո-
չումին:

Կեցցեն Մակեդոնիոյ Ազատագրութեան կռուին մասնակցող
Հայ կամաւոր զինուորները:

Կեցցեն Հայ զնդի հրամանատարներ Անդրանիկ ու Գարեգին:

Յարգա՛նք Ազատարար կռուին մէջ ինկող կամաւոր զինուոր-
ներու անիւններուն:

Հ. Յ. Դ. ՊԱԼՔ. Կ. ԿՈՄԻՏԷ

8 Նոյեմբեր 1913

Պալքանեան պատերազմը, ուրեմն, առիթ մը կ'ըլլայ, որ Գա-
րեգին Նժդեհ իր զինուորական գործունէութեան մկրտութիւնն ու
փորձառութիւնը ստանայ դարաւոր ոսոխի, թրքական ճակատին վը-
րայ:

Եւ, երկու տարի ետք, Գ. Նժդեհ կրկին սուրը պատեանէն
կը հանէ, այս անգամ Կովկասի ճակատին վրայ, երբ կը սկսի հա-
մաշխարհային Ա. պատերազմը:

ԿԱՄԱԻՈՐԱԿԱՆ ՇԱՐՃՈՒՄ

1914 թուի Յուլիսին ծայր տուաւ համաշխարհային Ա. պա-
տերազմը:

Պատերազմը անաւոր փորձութիւնն եղաւ համայն աշխարհի,
բայց մանաւանդ՝ հայ ժողովուրդին համար: Ան բռնկեցաւ այն սլա-
հուն, երբ հայ-թրքական յարաբերութիւնները ծայրայեղ աստիճա-
նի լարուած էին, երբ Հայը թուրքիոյ մէջ նորէն դարձեր էր «խա-
յին» ազգ:

Նոր էր ստորագրուած բարենորոգումներու ծրագիրը: Օս-
մանեան սահմանադրութեան յաջորդող հայ-թրքական համերաշ-
խութեան մեղրամիտը կարճ տեւեց: Կիլիկիոյ ջարդը, ներքին ճըն-
չումները, կառավարութեան կասկածոտ վերաբերումը դէպի հայ
տարրը, հողային հայակործան քաղաքականութիւնը Արեւելեան վի-

լայկեթներու մէջ, թուրք ազգայնամոլութեան յարածուն զարգացումը Իթթիհատի ծոցին մէջ — այս եւ ուրիշ բազմաթիւ պատճառներ համոզեցին հայերը, որ առանց արտաքին օգնութեան, միա՛յն թրքական միջոցներով անկարելի է ձեռք բերել կեանքի բարելաւում: Կրկին բոլորին հայեացքը ուղղուեցաւ դէպի «Մարդասէր Եւրոպան»:

Համաձայնականները թուրքիոյ խոստացած էին պահել իր հողային ամբողջականութիւնը, եթէ չէզոք մնար:

Բայց Գերմանիա, որ աշխարհապահական դիրքովը ստիպուած էր տարրեր ծրագիրներ հետապնդել, չընկրկեցաւ ոչ մէկ միջոցի առջեւ, իր հետ պատերազմի մասնակցիլ տալու համար թուրքիան, որ պիտի ըլլար իր կապը Ասիոյ հետ, նախնական նիւթերու այդ շտեմարանը:

Թուրքիոյ պատերազմին մասնակցութեամբը բացառիկ կացութիւն կը ստեղծուէր հայ ժողովուրդին համար:

Անոր մեծադոշն մէկ մասը՝ ուսաստանայութիւնը, կը դանուէր թշնամի երկիրներէն մէկուն մէջ, իսկ միւս մասը, թրքահայութիւնը՝ միւս թշնամի պետութեան իշխանութեան տակ:

Գրիգոր Ամիրեան եւ Հարի Քարեան



Ի՞նչ դերք պէտք էր բռնել:

Մէկը՝ Թուրքիան, կը խորհրդանշէր դարաւոր արիւնաշաղախ բռնապետութիւնը, միւսը՝ Ռուսը, ժողովրդային աւանդութեան մէջ պատկերացուած էր իբրեւ դարաւոր բարեկամը, ա՛յն ազգը, որ կոչուած էր ազատագրելու Արեւելքի ճնշուած փոքր ժողովուրդները:

Ընտրութիւնը դժուար էր:

Ամէն պարագայի տակ, ան հետեւեցաւ իր բնազդին եւ կանգնեցաւ Ռուսիոյ կողքին, իր բախտը կապելով անոր:

Հայութիւնը զէնք վերցուց, երթալ ազատելու համար հայրենիքին ա՛յն մասը, ուր անարդարութիւն ու բռնութիւն, ջարդ ու թալան կը տիրապետէին:

1914ի Հոկտեմբերի ընթացքին Անդրանիկ, Գարեգին Նժդեհ, Գրիգոր Ամիրեան(*), եւ այլ բազմաթիւ կամաւորներ Ռուսճուբ—Քոնսթանդա—Պաթում գիծով մեկնեցան եւ հասան Թիֆլիս, իրենց



ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԳՈՒՆԴԵՐՈՒ ՊԱՀԵՍՏԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ս. Վրացեան, 2. Սպայ Միհրան, 3. Մկրտիչ Ասլանեան,
4. Ստեփան Մազմանեան, 5. Յովակիմ Յովակիմեան,
6. Մեսրոպ Մարգպանեան, 7. Սպայ Գիւլնազարեան:

մասնակցութիւնը բերելու համար Հայ կամաւորական շարժման:

Երբ սկսաւ կամաւորական շարժումը, թէ՛ կովկասի եւ թէ՛ արտասահմանի զանազան կողմերէն հազարաւոր հայ երիտասարդներ փութացին դէպի Թիֆլիս, ուր հաստատուած էր հայ կամաւորներու կեդրոնական մարմինը՝ Ազգային Պիւրոն:

(*) Տես «Յեղափոխական Ալպում», 5-րդ Տարի, էջ 327:

Բացի այդ կամաւորներէն, արդէն տասնեակ հազարաւոր հայեր իրենց պարտականութիւնը կը կատարէին ուսական բանակին մէջ, իբրեւ քաղաքացիներ:

Թիֆլիս հասնելով, Նժդեհ, Անգրանիկ ու Ամիրեան կը ներկայանան Ազգային Պիւրոյին:

Կովկասի փոխարքայ Կոմս Վորոնցով Տաշքով հրամայած էր, որ թրքո—ուս պատերազմի յայտարարութենէն երեք շաբաթ ետք, հայ կամաւորական զուեղերը սրատրաստ ըլլան ռազմաճակատ մեկնելու:

Կամաւորներուն ղէնքերը պիտի հայթայթուէին ուս կառավարութեան կողմէ, որ ամէն մէկ զինուորի պիտի տար նաեւ պարենազին մը. բայց անոնց բոլոր միւս ծախսերը պիտի հոգար Ազգային Պիւրոն:



ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ

- 1.— Նժդեհ, 2.— Համագասպ, 3.— Իշխան Արզուրեան, 4.— Միշա Արզումանեան, 5.— Սաքենիկ Արզուրեան, 6.— Գնդ. Եգոր Տէր Աւետիքեան, 7.— Գերասիմ Բալայեան, 8.— Մ. Վարանդեան, 9.— Ստեփան Տէր Մկրտիչեան, 10.— Ս. Վրացեան, 11.— Քեոի, 12.— Անդրանիկ, 13.— Նիկոլայեւ, 14.— Վարդան, 15.— Յակոբ Յարութիւնեան, 16.— Լեւոն Մուշեղեան, 17.— Համապիւռ (Սպայ), 18.— Եղիւկ Տէր Սարգիսեան:

Այդ կամաւորական գունդերը պիտի բաղկանային ճիւղեր եւ հետեւակ զինուորներէ, հայ ժողովրդական մարտիկներու հրամանատարութեան տակ, բայց պիտի ենթարկուէին ռուսական վերին հրամանատարութեան, իբրեւ հետազօտիչ գունդեր, որոնք ծանօթ էին երկրի լեզուին, բարձրուն, սովորութիւններուն եւ տեղագրութեան:

Կամաւորներու հաւաքման եւ գունդերու կազմակերպման գործը ստանձնած էր Ազգային Պիւրոն:

Շուտով ասպարէզ կու գան Հ. Յ. Դաշնակցութեան հին հայ-գուկներէն՝ Անդրանիկը, Վարդանը, Քեռին, Համազասպը, Դաշնակցական Սեչոն, Դրօն, Իշխան Արղութեանը, Արմէն Գարօն, Գնդ. Զանփոյրատեանը, Գրիգոր Աւչարեանը, Պանդուխտը եւ ուրիշներ:

Երբ կը սկսին կազմակերպել կամաւորական գունդերը, Նժդէհ կը նշանակուի Դրոյի օգնական: Կ'անցնի Երեւան, իր Պուլկար Սպայի տարազով. անկից ալ Նորք, նոր արձանագրուող կամաւորները մարզելու համար(*): Այդ պաշտօնը քանի մը ամիս վարելէ ետք, կը մեկնի Իգտիր միանալու Դրոյի գունդին:

Հայ կամաւորական շարժումի ժամանակ Նժդէհ կը գործէր Զօր. Անդրանիկի, Քեռիի, Լեւոն Մուշեղեանի, Սմբ. Վարդանի, Եղոր Տէր Աւետիքեանի, Համազասպի, Միշա Արղումանեանի, Ս. Վրացեանի եւ շարք մը ուրիշներու հետ: Ան շուտով կ'արժանանայ բոլորի համակրանքին եւ կը սիրուի բոլորէն, որովհետեւ լաւ զինուորական էր, ինչպէս նաեւ գործնական զաղափարներ կը յղանար կամաւորական շարժման գործունէութեան համար: Թիֆլիսի մէջ, Պուլկարիայէն եւ Ռումանիայէն եկած կամաւորներ կ'ուզէին գործել Նժդէհի հետ, որուն հետ եղած էին նախապէս:

Հայ կամաւորական խումբերը կը բարձրանային եօթի.—

Ա.— Անդրանիկ՝ հրամանատար Ա. Գումարտակին, որ մեկնեցաւ Զուլֆայի ճակատը, 3 Նոյեմբեր 1914-ին:

Բ.— Դրօ՝ հրամանատար Բ. Գումարտակին, որ մեկնեցաւ Իգտիրէն առաջանալով Վանի ուղղութեամբ, 24 Հոկտեմբեր 1914ին:

Այս գունդին փոխ-հրամանատար կը նշանակուի Գարեգին Նժդէհ:(**)

Գ.— Համազասպ՝ հրամանատար Գ. Գումարտակին, որ մեկնեցաւ Սարըզամիչ, 1 Նոյեմբեր 1914-ին:


Դ.— Քեռի՝ հրամանատար Դ. Գումարտակին, որ մեկնեցաւ Թորթումի ճակատը, 6 Նոյեմբեր 1914-ին:

(*) Տես յետագայ էջերու մէջ Ա. Ամուրեանի գրութիւնը:
 (***) Տես յետագայ էջերուն մէջ Աշոտ Արծրունիի գրութիւնը:

Ե.— Վարդան՝ հրամանատար Ե. Գումարտակին, որ մեկնեցաւ Վանի ուղղութեամբ:

Զ.— Զանիտրատեան եւ Պանդուխտ՝ հրամանատար Զ. Գումարտակին, որ երկու տարի յաջորդաբար զործեց Կարին—Երիզա ուղղութեամբ:

Է.— Իշխան Յովսէփ Արղութեան՝ հրամանատար Է. Գումարտակին, որ Բ. տարին Պարսկաստանի ուղղութեամբ մինչեւ Ռըվանտուղ հասաւ:



Պ Ի Օ

Այսպիսով հայ կամաւորական զուեղերը իբրեւ յառաջագահ եւ թուրք հողին ծանօթ՝ ճակատ բռնեցին Կարինէն մինչեւ Զուլֆա: Այս շարժման նպատակն էր թուրքիոյ գէժ պատերազմելով, արագացնել թրքահայերու ազատագրումը. միւս կողմէ՛ պինուած ուժեր ունենալով ռազմաճակատի առաջաւոր մասերուն մէջ, նպատակ աշնտեղի հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան զործին:

Ռուսական զօրքերու ճակատը այդ միջոցին տարածուած էր

Պաթումէն մինչեւ Պարսկաստան : Կամաւորական դունդերն ալ բըն-
նած էին էրզրումէն մինչեւ Դիլիման : Պատերազմի ժամանակ շատ
մը առիթներու մէջ կամաւորները արդարացուցին իրենց վրայ դըր-
ուած յոյսերը, նեղ գրութենէ ազատելով ուստական բանակները, ո-
րոնց մէջ վազը թիւ մը չէին կազմեր դերմանացիներուն կողմէ կա-
շառուած սպաներ, նոյնիսկ զօրավարներ : Օրինակի համար, Կով-
կասեան ուս բանակի սպայակոյտի պետը դերման մըն էր, որ յե-
տոյ կախուեցաւ Սարըզամիշի մէջ, որովհետեւ երեւան ելած էին իր
կարգ մը դաւաճանական արարքները :

Հայ կամաւորներու ճակատ մեկնելէն առաջ, ուս Չօրավար
Չերնազուպոֆ արտասանեց ճառ մը, ուր ի միջի այլոց ըսաւ. —

«Նրջանիկ եմ, որ հայ ժողովուրդը, ուս բանակին հետ ոտ-
քի կը կանգնի մղելու համար ննչուած Հայաստանի ազատութեան
կռիւր : Զինուոր մըն եմ ես եւ չեմ գիտեր, քէ ի՞նչ պիտի ըլլայ հա-
յերու նակատագիրը, ասիկա դիւանագէտներէն կախում ունի, բայց
կը կարծեմ, քէ նո՛ր արշալոյս մը կը ծագի հայ երկնակամարին
վրայ : Իբրեւ քրիստոնեայ, կը փափաքիմ աղօթել Աստուծոյ՝ կամա-
ւորներուն հետ, որպէսզի ձեզի շնորհէ լիակատար յաղթանակ» :

Նժդեհ Իգաիր հասնելով, Հոկտեմբեր 24-ին մեկնեցաւ վանի
ուզղութեամբ : Սկզբնական կռիւները տեղի ունեցան քիւրտերու
դէմ : Թուրք սպայակոյտը թուրք սպաներու ղեկավարութեան տակ
կազմակերպած էր քրտական անկանոն խումբեր, որոնք անակնկալ
կերպով կը յարձակէին ուս բանակի թիկունքին վրայ, կը սպան-
նէին, կը թալանէին ու կը հեռանային, մեծապէս արդելք ըլլալով
ռազմական գործողութիւններու զարգացման : Ռուս զօրավարները
հակառակ իրենց զինուորական փորձառութիւններուն ու միջոցնե-
րուն, մեծապէս կը նեղուէին քրտական խումբերէն :

Ըստ ուստական զօրավարներու, անոնց դէմ սլայքարիլ կրնա-
յին միայն Հայ կամաւորներու դունդերը. եւ այդ տեսակէտէն աչքի
կը զարնէին մասնաւորաբար Դրօն ու իր օգնականը՝ Գարեգին Նըթ-
դեհը : Ռուսական վերին հրամանատարութեան կողմէ եկած հրամա-
նի մը վրայ, ուսերը փոխեցին իրենց ուզղութիւնը, առանց լուր
տալու Դրոյին : Արդեօք ուս սպայակոյտին մէջ կայի՞ն դաւաճան-
ներ, որոնք կ'ուզէին Դրոյի դունդը անակնկալի բերելով թուրքերու
կողմէ բնաջինջ ընել տալ, թէ ոչ ռազմական անհրաժեշտութիւն մըն
էր : Այս կէտը անհրաժեշտ շախով լուսարանուած չէ :

Դրոյի դունդը առանձին մնալով պաշարուեցաւ 2000-ի մօտ
քիւրտերու եւ թուրքերու կողմէ :

Գունդը պաշարուած էր եւ վտանգի ենթակայ : Դրօն վիրա-
ւորուած ըլլալով չէր կրնար շարունակել հրամանատարութիւնը :
Այն ատեն ձիաւոր դումարտակի հրամանատար Սեջօ ստանձնեց ղե-
կավարութիւնը, իսկ Նժդեհ՝ հետիտան խումբին սլատասխանատը-



ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ՄՈՒՏՔԸ՝ ՎԱՆ

1. Արամ Մանուկեան, 2. Զօր. Նիկոլայեւ, 3. Խմբ. Վարդան (Խա-
նասորի Վարդան), 4. Զօր. Դրօ, 5. Պարոյր Լեւոնեան, 6. Դաշ-
նակցական Խէչօ, 7. Կոստի Համբարձումեան, 8. Գ. Նժդեհ, 9.
Գնդ. Տիգրան Բաղդասարեան:



Վանի թուրքերէն գրաւուած թնդանօթներ

ւութիւնը եւ անհաւասար հերոսական կռիւ մը մղելով, կրցան ազատիլ գերի իյնալէ :

Տէրիքի մէջ կազակ զինուորներու հետ եւս յանդուզն կռիւէ մը ետք, ահագին վնասներ հասցուցին թուրքերուն :

1915ի սկիզբի ամիսներուն էր, որ ոռւս բանակը սկսաւ շարժիլ դէպի Վան : Այդ բանակը կ'առաջնորդէր Դրոյի խումբը : Անիկա էր, որ քրտական խումբերը կը ցրուէր եւ կ'ապահովէր ոռւս բանակին յառաջխաղացումը :

Վանի ուղղութեամբ յառաջացող բանակին կ'օժանդակէր նաև Համազասպի դունդը : Ապրիլին կամաւորական դունդը կը մտնէր Վան : Նժդէհ աշտեղ ալ ցոյց կու տար իր քաջագործութիւնները եւ ոռւսական զօրավարներու զնահատանքին կ'արժանանար :

Կամաւորական շարժման անդրադառնալով, Խորէն Մուրատեան(*) «Ամերիկահայ Կամաւորի Մը Յուշերը» խորագրին տակ, ի միջի ալոց կը գրէ հետեւեալը («Հայրենիք» ամսագիր, 1966 թիւ 12, էջ 28) .—

«Ապրիլ 29-ին (1916) տեղափոխուեցինք Ալպերդ գիւղը, ուր ոչ մի ուտելիք չկար :

«Մինչև Մայիս 17ը կերակրուեցինք միայն կրիայի միսով : Մայիս 20ին մեզ մօտ հասաւ սուազցի Մուրատը(**) եւ որոշ ժամանակ կառավարեց մեր գումարտակը, որովհետեւ Սմբատը կարեւոր յանձնարարութեամբ Մուշ էր գնացել : Մուրատը մի քանի յաջող կըռիւներ ունեցաւ :

«Ամսի 20ին մեզ մօտ եկան Սեպուհը եւ Կայծակ Առաքելը : Երբ Սմբատը Մուշից վերադարձաւ, Մուրատն ու Սեպուհը գնացին

(*) Խորէն Մուրատեան ծնած է 1889ի Դեկտ. 3-16ին, Սեբաստիոյ Քոթնի գիւղը : Փոքր տարիքին ծնողքը զինք կ'ուղարկէ Սեբաստիոյ Ս. Նշան վանքը ուսանելու, հոն Պետրոս վարդապետէն կը լսէ 1896ի հայկական կոտորածներու եւ իրենց գիւղի վրայ յարձակելու պատմութիւնը :

1909 քուին երբ Սեբաստացի Մուրատ կու գայ իրենց գիւղը, անոր միջոցաւ Խորէն կը մտնէ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը :

1911-ին կ'անցնի Պուլիս, Պուլկարիա, ապա Միացեալ Նահանգներ : Առաջին Համաշխարհային Պատերազմին, երբ կը լսէ հայ կամաւորներու շարժման լուրը, արձանագրուողներու առաջիններէն կ'ըլլայ ան, և 1915 Օգոստոսին, խումբ մը կամաւորներու հետ կը մեկնի Հայաստան : (Այդ խումբը կը բաղկանար 320 հոգիէ, որոնց մէջ կային, 45 վերակազմեալ Հնչակեաններ, 14 Սոցիալ - Դեմոկրատ Հրնչակեաններ, 1 Ռամկավար, իսկ մնացածները Դաշնակցական էին) : Այս խումբը Հայաստան կը հասնի 14 Սեպտեմբերին :

(**) Մուրատի մասին տես «Յեղափոխական Ալպում», Ա. հատոր (թիւ 11), էջ 327 :

Պիթլիս եւ գրազուեցին Հայերին ազատելու գործով՝ «մի հայ, մի սակի» նշանաբանով :

«Այդ օրերին մեր բանակն եկաւ նաեւ Նժդեհը մարդելու մեզ :

«Ամէն օր մենք գնում էինք հետախուզութեան, խմբերով՝ 12 ուսու դինուոր եւ երեք հայ կամաւոր : Մի օր էլ, ես երկու ընկերների եւ ուսու դինուորների հետ գնացինք հետախուզութեան : Ռուսների պետք մի փորձուած դինուոր էր, սրը եղել էր նաեւ ճափոնական ճակատում : Յանկարծ սկսուեց ուժեղ կռիւ : Ռուսական ճրգ գունդը սկսեց նահանջել, իսկ մենք մնացինք երկու կրակի մէջ : Ռուս հրամանատարը մեզ առաջարկեց անձնատուր լինել, բայց մենք աւացինք, որ կամաւորներն անձնատուր չեն լինում եւ սկսեցինք կրակել :

«Կուուելով եւ նահանջելով՝ մեծ դժուարութեամբ հասանք մեր գումարտակին : Այնտեղ գտնուում էին Համազասպը, խմբապետ Աւօն, իսկ յետոյ օգնութեան հասաւ Սմբատը :

«Կռիւներն աչգպէս շարունակուեցին մինչեւ Յունիս Տը : Գին լսեցինք, որ մի գումարտակ ուսու գործից, որ կադմուած էր գերմանացիներէ, իր ղէնքերով անցել էր թշնամու կողմը : Իսկ Մի քանի հոգով դասալիք լինելն արդէն տարածուել էր ուսու բանակում :

«Յունիս 20ին թշնամին սմբողջ ճակատով անցաւ յարձակման եւ սկսեց նեղել մեզ : Վանի մեր կապը կարուեց :

«Զօր. Նազարբէկովը յամառօրէն պաշտպանում էր Պիթլիսի ճակատը եւ ուժեղ հարուածներ տալիս թշնամուն : Մենք կուուելով՝ քայլ առ քայլ նահանջում էինք, որովհետեւ մեր ուժերը անբաւարար էին, օգնական սյժ էլ չէինք ստանում :

«Յունիս 22ին մի քրդի ղիւղում էինք, երբ թշնամին յարձակուեց : Մեծ խուճապ ընկաւ մեր մէջ : Ռուսները նոյնիսկ չկարողացան թնդանօթները փախցնել եւ թաքցրին խոտի ղէզերի մէջ : Մեծ վրնասներով սկսեցինք նահանջել ղէպի Դատուան : Առանց Զօր. Նազարբէկովի կարգադրութեան, ուսուները հրդեհել էին բոլոր պահեստները, որոնց ծուխը բռնել էր երկինքը, կարծէք սարքովի բան էր դիտումնաւոր :

«Երբ Զօր. Նազարբէկովը Մուրատի եւ Սեպուհի հետ Պիթլիսը մաքրելով՝ հասաւ Դատուան, անմիջապէս բանտարկել տուեց Դատուանի ուսու կոմէնդանտին, որի հրամանով էին վառել պահեստները : Իսկ խոտերի մէջ մնացած թնդանօթներն ազատելու համար, Սմբատի կարգադրութեամբ, Նժդեհը մի խումբ ձիաւորներով եւ երկու գումարտակ ուսու դինուորներով գնացինք ղէպի Կիւղէլգարէ եւ, թշնամու հետ կռիւ ունենալով, չորս թնդանօթներն էլ ազատեցինք ու մեծ դժուարութեամբ հասանք կամուրջ, որտեղ Համազասպն էր :

«Այստեղ իմացան, որ կամուրջի կոմէնդանտը ուսական դրօշն

իջեցրել էր եւ նահանջի հրաման էր տուել: Զօր. Նազարբէկովը նը-
րան էլ բանտարկել տուեց:

«Յունիս 25ին Զօր. Նազարբէկովը(*) յաջողեց մի լաւ քարդ
տալ թշնամուն եւ ցրուել նրա ուժերը: Իսկ Վանից եկած երկու նա-
ւակներ իրենց թնդանօթներով դործում էին սուրբի վրայ»:

Էրզրումի գրաւումով ոուս բանակը տէր կը դառնար հայկա-
կան բարձրաւանդակի մեծ մասին. իր դերքը կը զօրանար Հայաս-
տանի մէջ, հետեւաբար Հայկական դունդերու առանձին գոյութիւ-
նը այլեւս անհրաժեշտութիւն մը չէր:

Այս նկատումով, օր մըն ալ հայ ժողովուրդը գտնուեցաւ տը-
խուր իրողութեան մը առջեւ: Ռուս վերին հրամանատարութիւնը
գրչի մէկ հարուածով կը լուծէր կամաւորական դունդերը եւ դանոնք
կը վերածէր ոուս բանակի մէկ մասին, կոչելով «Հայ Նշանաճիգ
Վաչտ», ոուս սպաներու հրամանատարութեան տակ: Այդ հրամանով
կամաւորներէն անոնք, որ չէին ուզեր մաս կադմել նորակադմ վաչ-
տերուն, իրաւունք ունէին հեռանալու:

Հրամանագրի այդ տրամադրութենէն օգտուելով, ծառայու-
թենէ հրաժարեցան բոլոր թրքահայ կամաւորները եւ իրենց հրամա-
նատարները:

Այս շրջանին էր, որ Կովկասի փոխարքայ մեծ դուքս Նիկոլա
Նիկոլայեւիչը կը յայտարարէր Գէօրգ Ե. Կաթողիկոսին. «Ինչպէս
որ Ռուսաստանի մէջ չկայ Եազութներու հարց, այնպէս ալ չկայ
հայկական հարց մը(**)»:

Այս կոպիտ յայտարարութեան ի պատասխան Կաթողիկոսը
պատասխանեց, — բայց՝ կայ Հայկական Հարց մը, Թուրքիոյ մէջ:
Մեծ դուքսը նախ չպատասխանեց, բայց քիչ յետոյ յարեց. «Մեծ ու
փայլուն ապագայ մը կը սպասէ հայերուն, քաղաքացիները կը վե-
րադառնան իրենց քաղաքները»:

Հայկական հարցին փայլուն լուծումն էր անիկա անշուշտ,
Մեծ դուքսին կարծիքով:

Թուրք բանակին մէջ ծառայող բազմաթիւ հայ զինուորներ,
անմիջապէս որ յարմար առիթը գտնէին, կը փախչէին ուսական
գիծերը եւ անձնատուր կ'ըլլային:

Այդ հայերը ազատելու համար թրքական զինուորագրութե-
նէն, կու գային անձնատուր ըլլալու, բայց այստեղ ալ անոնց կը
սպասէր անհանդուրժելի ճակատագիր մը, որովհետեւ Թուրք գերի
զինուորներու պէս կը դրկուէին Սիպերիա կամ ուրիշ զինուորական
կեդրոններ, ուր անոնցի կեանք մը կը սպասէր իրենց: Անոնցմէ շա-

(*) Տես «Յեղափոխական Ալպում», Դ. հատոր, Թիւ 3, էջ 67:

(**) Եազութները Սիպերիոյ մէջ, Սառուցեալ ովկէանոսին եզերքը գտնուող
եւ ստորին աստիճանի քափառաշրջիկ ցեղ մըն են:

տեր մեռան, անիծելով ուսան ալ, եւրոպացին ալ, որ միշտ խաբեր էր Հայ ազգը:

Շատեր նոյնիսկ իրենց տեղերը չէին հասնիր, որովհետեւ անոնք գտնուելով յաճախ թուրք զինուորներու հետ նոյն վակոններուն մէջ, դուրս կը նետուէին: Իսկ ներկայութեան քննութեան ատեն կ'ամբաստանուէին, թէ հայերը փախած են:

Այսպէս ուրեմն, թրքահայը՝ բոլոր զոհողութիւններով հանդերձ, կը նկատուէր թշնամիի հպատակ եւ կ'ենթարկուէր ճակատադրի մը, որ ո՛չ միայն Փիղիքապէս անտանելի, այլեւ բարոյապէս ալ ընդվիցուցիչ էր, քանի որ ոչինչի կը վերածուէին այնքա՛ն զոհողութիւն եւ անձնուիրութիւն:

* * *

Գարեգին Նժդեհ իր զինակիցներով կը թողու կամաւորական գունդերը, կ'անցնի Երեւան եւ անկից Ալեքսանդրապոլ ու շրջակայքը:

Կամաւորական գունդերու ցրուումով, բազմահազար դաղթականութիւն մը կը լեցուէր Կոփասահայաստանի սահմաններէն ներս: Հայկական նահանգները ամայացած էին իրենց հայ բնակչութենէն, որ իր հողեւորքը կ'ապրէր անաստաններուն մէջ, ճամբաներու վրայ, դահիճներու ետեւաններուն տակ:

Բազմաթիւ թշնամիներ կը նիւթէին հայ ժողովուրդի կորուստը, -- թուրքը, թաթարը, քիւրտը, ուսը եւ եւրոպացին:

Յուսահատական էր կացութիւնը. բայց հայ ժողովուրդը, որ նոյնքան սոսկալի ուրիշ սեւ օրեր ալ անցուցած էր, կրնար եւ կըրցաւ այդ բոլոր դժուարութիւններուն յաղթել:

Հակառակ այդ ամէն նեղութիւններուն, փախստական ժողովուրդը հեռզհեռէ սկսաւ կազմակերպուիլ տնտեսապէս եւ հողեպէս: Բացուեցան դաղթականական դպրոցներ եւ սրբանոցներ, ուր հազարաւոր որբեր ու փոքրիկներ գացին ուսում ստանալու եւ ազատելու այլասերումէ:

Այն ժամանակուան աննպաստ պայմաններուն մէջ իսկ, հայ ժողովուրդը չյուսահատեցաւ, ստրագային հանդէպ վառ պահեց իր հաւատքը՝ դարձանելով իր վէրքերը, լաւագոյն օրերու ակնկալութեամբ:

Պիտի դային այդ օրերը եւ եկա՛ն:

Սկսաւ Ռուսական յեղափոխութիւնը, որ սակայն յոյսի ու լոյսի հետ բերաւ նոր պայքարներ, նոր դժբախտութիւններ եւ նոր յաղթանակներ:

Ռուսական յեղափոխութիւնը եկաւ խորտակել այն թումբերը,

որոնք արգելք կ'ըլլային հայութեան ազատօրէն արտայայտուելու :

Այդ պատմական մեծ թուականէն յետոյ էր, որ հայութիւնը կամաց-կամաց սկսու կազմակերպուիլ, նաեւ իրրեւ քաղաքական միութիւն մը ու ձեռք տոնել իր ճակատադիրը վարելու դործը :

Պատերազմի երկրորդ տարին արդէն Ռուսիա տնտեսապէս քայքայուած էր, իսկ զօրքը յոգնած ու յուսալքուած :

1917-ի Փետրուարին կը հրաժարեցնէին ցարը, դահաժառանգը, եւ կը կազմակերպուէր Ժամանակաւոր կառավարութիւն մը, հրաւիրելու համար Ռուսաստանի օրէնսդիր Ժողով, ուր պիտի որոշուէր Ռուսաստանի ապագայ կառավարական ձեւը :

Յեղափոխութեան ալիքները շուտով տարածուեցան Ռուսաստանի բոլոր կողմերը, առանց արիւնահեղութեան :

Կովկասի մէջ ալ շուտով արձագանգ դտաւ անիկա եւ մեծ խանդավառութեամբ ընդունուեցաւ տեղացի Ժողովուրդներէն, որովհետեւ վերջ կը գտնէր բռնատիրական վարչաձեւը :

Մասնաւորաբար հայ Ժողովուրդը մեծ յոյսեր դրած էր այդ յեղափոխութեան վրայ, որովհետեւ ան կու դար քանդել հայ Ժողովուրդի հանդէպ ցարերու վարած դաւադիր քաղաքականութիւնը եւ ազատ զարգացման նոր կարելիութիւններ կը ստեղծէր :

Այս լուրը երբ Կովկաս կը հասնէր, անմիջապէս հայութեան պաշտօնական մարմինները հեռադրով կը յայտնէին, թէ հայ Ժողովուրդը օգտուելով յեղափոխութենէն, անջատողական որեւէ ձգտում չի սնուցաներ, այլ իր բոլոր կորովը կը տրամադրէ ամրացնելու յեղափոխութեան նուաճումները, մինչեւ որ ռուսական հիմնադիր Ժողովը զայ վերջնականապէս լուծելու ազգային հարցերը :

Ժամանակաւոր կառավարութիւնը իր Մարտ 21-ի որոշումով ջնջեց ազգային ու կրօնական սահմանափակումները եւ հաւասար հռչակեց Ռուսաստանի բոլոր քաղաքացիները :

Յարիզմի տառալումէն քանի մը ամիս ետք, Ժամանակաւոր կառավարութեան եւ բանուորա-գինուորական խորհուրդներու հակամարտութիւնը տակաւ կը շեշտուէր :

Ժամանակաւոր կառավարութիւնը տեղի տալով յեղափոխութեան պահանջներուն, Մելուիքովի կամ Կերենսքիի բերնով կը յայտարարէր, թէ Ռուսաստան որեւէ նուաճողական նպատակ չունի պատերազմելու, բայց կռիւր պիտի շարունակէ մինչեւ վերջնական յաղթանակ :

Փոխարէն՝ բանուորա-գինուորական խորհուրդները կը պահանջէին անմիջական հաշտութիւն բոլոր կռուողներուն միջեւ :


Բնական է կեղբոնի այս խառնակ վիճակը կ'անդրադառնար ծայրագաւառներուն, մասնաւորաբար Կովկասի, ուր ազգային կիրքերը այնքան բորբոքած էին պատերազմի պատճառով :

Ու ծայր տուին սպանութիւններ, թալան, աւեր. իսկ կովկասեան իշխանութիւնները անկարող էին որեւէ բան ընելու: Տեղ-տեղ հայ-թաթար ընդհարումներ սկսած էին թէեւ, բայց տակաւին ընդհանուր բնոյթ չունէին:

Կեդրոնի իշխանութեան շուրջ մղուող կռիւը վերջացաւ յաղթանակովը բանուորութեան, որ իր զօրքի առաջնորդութեամբ՝ գլխաւեց մայրաքաղաքը եւ յայտարարեց պրոլետարիատի իշխանութիւն, կազմելով ժողովրդական կոմիտարներու խորհուրդ:

Ամբողջ զօրքը, որ բուլղերիկեան ուժեղ քարոզչութեան ազդեցութեան տակ կը դառնուէր, անմիջապէս յարեցաւ այդ շարժումին, մանաւանդ որ բուլղերիկները խոստացած էին անմիջապէս վերջ տալ պատերազմին:

Զրկուած, հաշտուած եւ մահուան սպառնալիքի տակ դառնուող ոուս զինուորը շատ բնականօրէն պիտի երթար անոնց ետեւէն, որոնք կը խոստանային վերջ տալ իրեն սարսաղրուած պատերազմին:



Երեւանի կամաւորական շտաբը: Աջիւն նստած՝ Նիկոլ Աղբալեան

Այսպէս ուրեմն, հայկական ռազմաճակատին վրայ կը ստեղծուէր բացառիկ կացութիւն մը: Ռուս զինուորը ուշ կամ կանուխ պիտի հեռանար դիրքերէն եւ հայութիւնը առանձին պիտի մնար թշնամիին դիմաց:

Շատ չանցած ծայր տուաւ ոուս բանակի նահանջը. թողուլ դիրքերը եւ հեռանալ ռազմաճակատէն:

Անոնք իրենց հետ կը տանէին իրենց զէնքերը, եւ յաճախ կրակի կու տային զէնքերու, հազուստի եւ ուտելիքի մթերանոցները:

ՂԱՐԱՔԻԼԻՍԷԻ ՀԱԿԱՏԱՄԱՐՏԸ

28 Փետր. 1917-ի Ռուսական Յեղափոխութեան հետեւանքով համայնավարները կ'անցնին իշխանութեան գլուխ: Լենինի առաջին քայլը կ'ըլլայ դադրեցնել պատերազմական գործողութիւնները եւ կոչ ուղղել զինուորներուն, որ լքեն ճակատը եւ տուն վերադառնան: «Դէպի տուն» նշանարանին տակ ուս զինուորները կը լքեն Կովկասեան ճակատը եւ կը պարպեն հայկական գրաւուած վիլայէթները: Ամբողջ ռազմաճակատի պաշտպանութիւնը կը մնայ հայ զինուորներուն վրայ:

Կովկաս կ'անջատուի Ռուսիայէն եւ կը կազմուի Կովկասեան Սէյմը: Վրացիները դաւաճանօրէն Կարսը կը յանձնեն թուրքերուն: Հայերը կը նահանջեն դէպի Ալեքսանդրապոլ:

Այդ տազնապալի օրերուն Զօր. Գարեգին Նժդեհ իր առանձին խումբով կը գտնուէր Ալեքսանդրապոլի մօտերը, ուր կռուի կը բռնուի թուրք զօրքերու դէմ, սակայն ի վերջոյ նահանջող ուս բանակին միանալով կը քալեն Ղարաքիլիսէի ուղղութեամբ:

Թշնամին վերջնազիր էր տուած Ալեքսանդրապոլը պարպելու: Սակայն, առանց պատասխանի սպասելու, մտեր եւ զրաւեր էր քաղաքը: Բազմահազար Ալեքսանդրապոլցիներ խուճապի մատնուած, լքելով տուն տեղ, հաւաքուած էին Ղարաքիլիսէ: Զիերու, էչերու եւ եղներու վրայ իրենց ամենէն անհրաժեշտ իրեղէնները բեռցուցած, մտեր էին Փամբակի ձորը: Նոյնիսկ Ղարաքիլիսէի ժողովուրդը խուճապի մատնուած էր, որովհետեւ ոչ թէ օրէ օր, այլ՝ ժամէ ժամ վրտանդը կը սաստկանար: Բոլորը յուսալքուած եւ ընկճուած՝ ամէն ինչ վերջացած կը համարէին:

Ահա այդ խուճապային եւ տազնապալից կացութեան միջոցին էր, որ յանկարծ ծովածաւալ բազմութեան ուշադրութիւնը կը գրաւէ հուժկու, դուռ եւ ռազմաչունչ ձայն մը: Զօր. Նժդեհն էր այդ առնական ձայնը արձակողը, որ բարձր տեղ մը կանգնած՝ իր պատմական, նշանաւոր եւ բովանդակալից ճառը կը խօսէր: Հրաբխային ժայթք մըն էր այդ ճառը, որ պահ մը կը ցնցէ այդ անպաշտպան ժողովուրդը, որ յանկարծակիի եկած իրարանցում ստեղծած էր՝

կարենալ աւելի մօտենալու համար Զօրավարին, որպէսզի կարենայ աւելի լաւ լսել օրուան պատգամախօսը :

Պօսքը տանք գլխապետ Արտաւազդ Յարութիւնեանի .

«Նժդեհը շատ անգամ ոգեշունչ խօսք ուղղած էր բազմութեան, ի մասնաւորի՝ մարտական ուժերուն : Բայց Ղարաքիլիսէի ճակատամարտի նախօրէին արտասանած ճառով՝ ինքնիրեն դերազանցեց :

«Մովածաւալ բազմութիւնը, որ յուսալքուած, ընկճուած, հոգեկան ծանր տաղնապի էր մատնուած, մէկէն փոխուեցաւ հմայուած ու հիպնոսացած Նժդեհի հրաշունչ խօսքերէն : Ելեկտրականացած ամբոխը ռազմական բարձր տրամադրութիւն ցոյց տուաւ ու սկսաւ զոչել միաբերան՝ «Կեցցէ՛ Նժդեհը», «Մա՛հ կամ Աղատութի՛ւն» . . .

«— Դէպի՛ ճակատ, այնտե՛ղ է մեր փրկութիւնը, — կը հնչէր Նժդեհի հուժկու, վճռական եւ ինքնավստահ ձայնը :

«Պէտք էր տեսնել, թէ Նժդեհի ճառէն ետք, ինչպէս պահ մը լքուած, ու այժմ դօտեպնդուած այդ բազմութեան մէջէն մարտական ուժերը համախմբուեցան զինուորականներու շուրջ, եւ՝ ամբոխային վիճակէն դուրս եկած, կարդապահութեամբ ենթարկուեցան հրահանգներու՝ կազմելով վաշտեր եւ գումարտակներ : Այսպիսով



Զօր. Դանիէլ Բէգ Փիրումեան

Ղարաքիլիսէի ճակատը, որ բաց էր մնացեր եւ թշնամին պիտի կարողանար լիկուխտացիայի ենթարկել Արարատի եւ Սարտարապատի ռազմաճակատները, ապահովուեցաւ ու գոցուեցաւ բաց աչքերով դէպի մահ դացող զօրամասերով : Եւ այդ բոլորը՝ շնորհիւ Նժդեհին :

«Պէտք է ըսել, որ ամենէն ուժեղ կռիւնները տեղի ունեցան Սարտարապատի եւ Ղարաքիլիսէի ճակատներուն մէջ : Առաջինին հրամանատարն էր Զօր. Բէգ Փիրումեան, եւ երկրորդինը՝ Զօր. Բէգ Մամիկոնեան : Ղարա-

քիլիսէի ճակատը մեր զօրքերը յարձակման դիմեցին եւ թշնամիին մեծ կորուստ պատճառեցին» :

Այս ճակատամարտը, Սարտարապատի կռիւններուն հետ մնաց հայ ժողովուրդի դերազոյն ճիգերէն մէկը : Մահուան ուրուականը իր աչքին առջեւ պարզուած ժողովուրդի մը օրհասական կռիւն էր ան :

Մահ կամ Ազատութիւն խօսքը կարծես ըսուած է՝ այդ պահը բնորոշելու համար :

Ամբողջ Հայաստանը իր երկու բաժիններով՝ թրքական եւ ռուսական, արիւնաթաթախ ինկած էր թուրք վայրագ բարբարոսութեան ձեռքը : Միայն մնացած էր վերջին ապաւէնը հայ ժողովուրդին՝ հողի շերտ մը, ուր լեցուած էր անոր վերապրող մասը :


Եթէ այդ հայրենի հողաշերտերն ալ իյնային թշնամիին ձեռքը, այլեւս բնաջնջուած կարելի էր համարել հայ ժողովուրդը՝ սուրէն եւ սովէն :

Ղարաքիլիսէն Վրաստանի սահմանին վրայ հայկական քաղաք մըն է՝ երկաթուղագծին վրայ : Անկէ անդին կը սկսի Պօրղալուի թաթարական մասը եւ յետոյ կը տարածուին Վրաստանի հողերը :

Հայ բանակին բեկորները, ինչպէս նաեւ ժողովուրդը չունէին ճամբայ մը, որ զիրենք վրկութեան տանէր, այլ՝ պարտադրուած էին միայն կռուիլ եւ ի հարկին տեղւոյն վրայ մեռնիլ :

Թուրքերը կը յառաջանային. եթէ զրուէին Ղարաքիլիսէն, ամբողջ երկաթուղագիծը ձեռք անցուցած կ'ըլլային : Եւ հակառակ անոր, որ իբր թէ Ալեքսանտրապօլէն անդին չանցնիլ կը խոստանային, անոնք սկսան քալել Ղարաքիլիսէի վրայ :

Դեռ արեւը մայր չմտած, սպառազէն ձիաւորներու ստուար խումբ մը՝ Նժդեհի առաջնորդութեամբ, բռնեց Ղարաքիլիսէ տանող ճանապարհը : Հազարաւոր մարզիկ՝ հուռո՛ւ կ'աղաղակէին, շատերը



Ղարաքիլիսէ եւ իր շրջակաները,
ուր մղուեցաւ 1918 Մայիսի հերոսամարտը

իրենց զլիսարկները օդը նետելով: Մայրերը՝ բերկրանքի արցունքներով, մարտի դաշտ կը դրկէին իրենց աղիզ զաւակները:

Ոմանք կ'արտասուէին, ուրիշներ՝ «հրաշք է, հրաշք» կը մըրմընջէին: Քահանաներ, ալեւոր ծեր գիւղացիներ ու սպատանիներ՝ հրացան առած կ'երթային շարքերը բազմացնելու: Խուճըր տակաւ կը կրկնասպասուէր...

Մէկուկէս օր տեւող փութկոտ առաջխաղացումէն ետք, կէսօրէ վերջ ժամը 4-ի մօտերը կը լսուի թնդանօթներու խուլ ու հեռաւոր գղրղիւնը... Լեռները արձագանգ կու տային...

Նժդեհի դոռ ձայնը կը լսուի: Ամբողջ գունդը կազմ ու պատրաստ կը սկսի շարժիլ, ընդհանուր աղմուկի մէջ մերթ ընդ մերթ կը լսուի հրացաններու ու գնդացիներու հեռաւոր ճարձատիւնը:


Մեռելային լռութիւն կը տիրէ... Բոլորին դէմքերը խստացած էին անդառնալի վճռականութեամբ:

— Աջ թեւն առաջ, քայլի՛ր — նորէն կ'որոտայ Նժդեհի ուժեղ ձայնը եւ գունդը կը սկսի շարժիլ:

Բազմահազար ժողովուրդը լեցուցած է մայթերն ու տանիքները: Փողոցին անկիւնը, ուր ճամբան կը շեղի դէպի Ղչլարի ուղղութեամբ բազմաթիւ ժողովուրդ խանդավառ աղաղակներով բարի երթ կը մաղթէ:

Կը լսուի «Մեր Հայրենիք»ը եւ խուճըրը արագացուցած քայլերը, աղաղակներու տարափի տակ, ժիր ու կայտառ, դուրս կու գայ աւանէն:

Թնդանօթներու գղրղիւնը կը սաստկանայ եւ կը մօտենայ:



Ղարաֆիլիսէի կայարանը, ուր մղուեցաւ 1918 Մայիսի հերոսամարտը:

Գուենդը թափով առաջ կ'ընթանայ: Գիւղին մօտեցած էին. գուենդը՝ մէկ մարդու պէս, աւելի կ'արագացնէ իր քալուածքը: Թրքական բանակը ցրուած էր Ղարաքիլիսէի անտառներուն ու ձորերուն մէջ եւ հայ բանակը Մայիս 21էն մինչեւ 25 անընդհատ կը ճակատի, վճռական օրեր ապրելով: Դրութիւնը անորոշ էր, բայց յուսահատական ալ չէր: Նախորդ օրը գուենդը բաւական առաջացած էր ու բռնած կարեւոր դիրքեր: Մայիս 26ին, նոր յաջողութիւններ կ'արձանագրուին, մեծ վնասներ պատճառելով թշնամիին:

Թնդանօթաձողութիւնը աւելի կը սաստկանայ: Հրետանիի մաս մը կը ուժեղանայ Հաճի Ղարայի սրածայր գագաթն ու ստորոտը:

Մայիս 27ին միայն մերիները կը յաջողին տէր դառնալ այդ դիրքերուն... Լերան գագաթէն կը տեսնուէր, թէ ինչ փութկոտութեամբ փախուտի կը դիմէին թշնամի հրետանին ու հետեւահագորդը: Յիրուցան եղած հետեւակն էր, որ խայտառակ փախուտի մէջ կը փնտռէր իր փրկութիւնը:

Հայկական ուժերը յաղթական էին:

27 Մայիսին, հայկական բանակի սպայակոյտը կը հրատարակէ հետեւեալ զեկոյցը.—

27 Մայիս, դիշերուան ժամը 2.

«Երջանիկ եմ հաղորդելով մեր զօրքերու յաղթութիւնը Ղչլաղի մօտ: Անոնք վանեցին ուխտադրութ թշնամիին յարձակումը, որ դերիներու ցուցմունքին համաձայն՝ կ'առաջանար Ղարաքիլիսէն գրաւելու համար: Մեր դինուորները ոգևորուած այդ յաջողութենէն, դիմեցին յարձակման, բռնելով անոնց աջ թեւը: Յարձակումը վերջացաւ փայլուն յաջողութեամբ: Մենք դուրս վանեցինք հակառակորդը Աղլեսի — Ղարա գիւղէն եւ անոր արեւելեան կողմը գտնուող 1010 թիւ բարձունքէն: Միաժամանակ, ճակատէն յարձակման դիմեցին մեր զօրամասերը եւ ուժեղ հարուածով տիրեցին 750 թիւ բարձունքի շրջանը գտնուող միւս բարձունքներուն:

Թշնամին փախաւ՝ հետապնդուելով մեր քաջերէն: Ան հսկայական կորուստներ ունեցաւ՝ գլխաւորապէս թնդանօթային կրակէն ու հեծելազնդի հարուածներէն»:

Մայիս 28ին՝ Թիֆլիսի մէջ նստող Ազգային Խորհուրդը, բաժնուած տեսնելով Վրաստանն ու Ատրպէյճանը Կովկասեան Միութենէն (Սէյմ), անկախ հռչակեց Հայաստանը, երբ արդէն Սարտարապատի, Բաշ-Աբարանի եւ Ղարաքիլիսէի արիւնոտ ճակատամարտներուն մէջ անկախութեան դրօշը բարձրացած էր:

Պատերազմը վերջացած էր թէեւ, սակայն հայերուն համար նոր պատերազմներ կը սկսէին եւ ան ալ շատ մը ճակատներու վրայ:


Այդ կռիւներու ընթացքին էր, որ Զօր. Գ. Նժդեհ պատմական դէմք մը պիտի դառնար:



Մայիս 28. Հայաստանի Հանրապետութեան ծնունդը



Զօր. Սիլիկեան



Զօր. Արարատեան

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի Հանրապետութիւնը հիմնադրուեցաւ 28 Մայիսի 1918ին : Այդ թուականէն ետք, Նժդէհ զբաղեցաւ հայկական բանակի կազմակերպման աշխատանքներով : Սակայն նորաստեղծ պետութիւնը տակաւին կազմակերպուած չէր և նոյնիսկ՝ արտաքին ու ներքին վտանգներու ենթակայ : Մեծ աշխատանքի մէջ էր նորաստեղծ հայկական կառավարութիւնը :

1918 Դեկտեմբեր 6ին թուրքերը պիտի լքէին Կովկասեան Հայաստանի հողամասերը ու հեռանային անոր սահմաններէն :

Դատարկուած շրջաններու պաշտպանութեան համար, Հ. Հ. Կառավարութիւնը պատրաստութիւններ կը տեսնէր, կազմակերպելով զօրամասեր, միլիցիոններն եւ քաղաքացիական պաշտօնեաներ :

Նոյեմբերին, Հ. Հ. Կառավարութեան կողմէ Գ. Նժդէհ կը նշանակուի Նախիջևեանի դաւառապետ, իրեն օգնական՝ Վ. Վրթանէսեանը, քաղաքի միլիցիապետ՝ Հ. Ամիրխանեանը, որուն օգնական՝ Քաչալ Ղազարը :

Նժդէհ առաջին ժողովը կը դուժարէ Երեւան, իր սենեակին մէջ եւ կը խօսի իրենց վստահուած աշխատանքներու մասին :

Կառավարութեան հրահանգին համաձայն, Նժդէհ կը մեկնի շրջանները : Մինչեւ 25 Նոյեմբեր՝ պէտք էր ներկայացնել միլիցիոններն երու անուանացանկը, ներքին գործոց նախարարութեան :


Նժդէհ կ'անցնի Բաշղեառնիի շրջանը եւ կը սկսի զբաղիլ ձիաւոր թէ հետեւակ միլիցիոններն երու վաշտերը, ինչպէս նաեւ կոմիտարական կազմը կազմակերպելու աշխատանքով, զոր կ'աւարտէ քանի մը օրէն :

Նախիջևեան երթալու համար նշանակուած էր 4-րդ դունդը, որ Դեկտեմբեր 6-ին կը շարժի զնդապետ Պ. Դուրխանեանի հրամանատարութեամբ :

Դեկտեմբեր 5-ին քաղաքացիական վարչութիւնը իր պաշտօնեաներով, հետեւակ թէ ձիաւոր միլիցիոններն երով, բոլորն ալ վառվրուով, հայրենասէր ու առողջ երիտասարդներ, կազմ ու պատրաստ հրամանի կը սպասէին՝ զէպի Նախիջևեան շարժելու համար : Կէս զիջերին մեկնելու հրաման կը ստանան, ուրախութեան չափ ու սահ-

ման չկար. Մեր Հայրենիք երգելով դիւղէն դուրս կու գան: Բաշղեառ-
նիէն մինչեւ Ղաթարլու 30 - 35 քլմ. է: Ճամբու վրայ առաջին դիւղը
Ջանաթլուն էր (թրքական): Ոչ ոք կար հոն:

Այդ օրերուն Նժդէհ կը հիւանդանայ թիֆոյիտէ վարակուե-



Ք Ա Չ Ա Լ Ղ Ա Ջ Ա Ր
(Ղազար Քոչարեան)
Նկարուած Ջանգեզուր

լով եւ խումբը ստիպուած կը մնայ իր տեղը: Ձիերը կերակրելու համար մեծ դժուարութիւններու կը հանդիպին: Խոտ, յարդ ու դարի չկային: Կը հարկադրուին անցնիլ Օվչար գիւղը, որ կը գտնուի Գաւալուէն դէպի Ղամարլու տանող ճամբուն վրայ:

Յունուար 25-ին գաւառապետ Նժդեհ առողջացած՝ Երեւանէն կու գայ Օվչար գիւղը:

Նախիջեւանի միլիցիոներներն ու պաշտօնեաները, շէնքերու անյարմարութեան պատճառով, անջատ տուներու մէջ կ'ապրէին, ճանապարհի երկայնքին, աջ ու ձախ:

Շրջակայ հայ գիւղերէն՝ Կախանովէն, Գաւալուէն, Ռեհանլուէն եւ Ղամարլուէն տեղահանուած, թալանուած ժողովուրդը նոր վերադարձած էր ու կը նորոգէր աւերակ դարձած գիւղերը: Այս կիսաքաղց ու թալանուած մարդիկը ամէն օր կը թափառէին գիւղէ գիւղ, թաթարական շէն աւանի մէջ, պատառ մը հաց գնելու եւ երախաներն ու ընտանիքները սովէն փրկելու համար: Բայց անիծուած թաթարները կը զլանային նոյնիսկ դրամով հաց ծախել: Դուրս կը վռնտէին գիւղէն կամ դուռը կը գոցէին հայերու երեսին:

Այս բոլորը կը կատարուէին թուրքերու դրդումով:

Թուրքերը օրէ օր կը չափազանցեն իրենց նենգութիւններն ու խառնակիչ աշխատանքը: Ի վերջոյ, նոյնիսկ կը համարձակին գինուորներուն պարէն շտալ:

Գ. Նժդեհ, Ղազար Քոչարեանի հետ խորհրդակցաբար պահակներու թիւը կը կրկնապատկէ, զգուշանալով անակնկալ գործողութիւններէ եւ յարձակումներէ: Բայց թուրքերը շրջակայ գիւղերէն կը հաւաքուին Օվչար եւ կը պահուին տուներու մէջ, անակնկալ յարձակում գործելու համար հայ զինուորներուն վրայ: Գիւղին մէջ, տուներու ընդմէջէն անցքեր կը բանան: Որոշ տեղեր ալ գիրքեր ու պատնէշներ կը պատրաստեն: Այսպէս՝ տուներու եւ ախոռներու պատերը ծակելով, գրեթէ կը հասնին հոն, ուր Նժդեհ կայք հաստատած էր:

Գիւղի հարաւային կողմէն, Խալիսա գիւղի ուղղութեամբ, այգիներու մէջէն քանի մը անգամ համազարկերու ձայներ իսկ կը լսուին:

Գ. Նժդեհի հրամանով, հետեւակ միլիցիապետը իր միլիցիոներներուն հետ կ'երթայ դէպի գիւղի հարաւային կողմը՝ Խալիսա գիւղի ուղղութեամբ՝ ստուգելու համար անցուղարձերը:

Երբ թուրքերը կը նկատեն հայ զինուորները, անմիջապէս կը կրակեն տղոց վրայ:

Նժդեհ իր մօտ եղած միլիցիոներներով կը սկսի դիմադրել: Երեկոյեան դէմ, կռիւր կը շարունակուի աւելի ուժեղ թափով, թըշնամին՝ գիւղէն, իսկ տղաքը՝ դուրսէն:

Հայկական ուժերը այգիներու պատերուն մէջ դիրք գրաւած

անդադար կը կրակեն: Թշնամիին ուժերը հետզհետէ կը խտանան, անոնց օգնութեան կու գան խումբերով՝ Խալիսայէն, Շղիէն, Ալիմամադէն եւ այլ տեղերէ:

Նժդեհ եւ Քաշալ Ղազար միասին կը ծրագրեն, լուսարացին գիւղը գրաւել եւ դաս մը տալ թուրք-թաթարներուն:

Նախ կ'որոշեն,

Ա.— Լոյսը չբացուած՝ յարձակումով մը վերագրաւել գիւղը:
Գ. Նժդեհը պիտի երթար Դաւալու, այնտեղէն Ղազարի մօտ զրկելու համար հետեւակ միլիցիան:

Բ.— Նժդեհ թնդանօթներով միասին պիտի երթար այնտեղ, ուրկէ կարելի էր ուժակոծել Օվչար գիւղը եւ իր շրջակաները: Պիտի ուժակոծէր նոյնիսկ գիշեր ժամանակ, քանի որ արձակուած ուժերը նպատակին պիտի ծառայէին, այսինքն՝ սարսափեցնել թշնամին:

Գ.— Կրակ բանալ խճուղիի եւ երկաթուղիի երկարութեամբ դէպի աջ ու ձախ:

Դ.— Ղազար պէտք է պատրաստ սպասէ, առաջին գնդակի պայթելուն, որմէ ետք գրոհ պիտի տայ գիւղին վրայ՝ երեք կողմերէ:

Երկու ժամ ետք հետեւակ միլիցիան կու գայ: Զինուորներու ընդհանուր թիւը՝ հետեւակ եւ ձիաւոր, կ'ըլլայ 140—150, որոնք երեք խումբի բաժնուելով գիւղը կը գրաւեն երկաթուղագծի երկարութեան: Գիւղը գրեթէ ամբողջութեամբ կ'առնեն շղթայի մէջ:

Գիւղին մէջ իրարանցում էր, երբեմն հրացանի ձայներ կը լսուէին, բայց գնդակները զանազան ուղղութեամբ օդը ձեղքելով աննպատակ կը սուրային:

Արշալոյսը մօտ էր... Անհամբեր կը սպասէին ազգանշանի, այսինքն՝ թնդանօթի առաջին հարուածին: Յանկարծ, Նժդեհի գունդին կողմէ արձակուած թնդանօթի առաջին ուժերը գիւղէն դուրս ճանապարհին վրայ կը պայթի:

Նժդեհի առաջին եւ երկրորդ շղթաները աջ եւ ձախ կողմէն կը շարժին՝ իսկ երրորդ շղթան, որ Ղազարի հրամանատարութեան տակ էր, անդադար կրակելով կը յառաջանայ դէպի գիւղը «հուռոս» աղաղակելով:

Թնդանօթի երկրորդ, երրորդ եւ չորրորդ ուժերը կը պայթին աջ ու ձախ, այն ուղղութեան վրայ, ուրկէ թշնամին դուրս պիտի գար գիւղէն:

Թուրքերը քիչ մը դիմադրելէ ետք, կը լքեն գիւղը եւ կը փախան: Լոյսը գեռ չբացուած, գիւղը կ'իյնայ հայոց ձեռքը: Թշնամին կը փախի դէպի Խալիսա գիւղը:

Նժդեհ կը հալածէ թշնամին եւ կը վանէ ոչ միայն Խալիսայէն այլեւ Շղի, Ալիմամադ եւ Զուտու գիւղերէն:

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՆԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Նորակազմ պետութեան բազմադրադ վիճակը՝ ծանրաբեռնուած բազում դորձերով, արգելք կ'ըլլայ Հայաստանի Հանրապետական կառավարութեան, օգնութեան ձեռք մեկնելու Գողթանին, որ կտրուած էր Մայր Հայրենիքէն՝ իյնալով ծով թրքութեան մէջ: Քրիստափորի եւ Ռոստոմի հայրենիքը կենաց եւ մահու պայքար կը մղէր: Դուրսէն եկած էին քանի մը անձնուէր զինուորականներ, եւ տեղական ուժերու օժանդակութեամբ, հազիւ կրցած էին կազմակերպել ժողովուրդին ինքնապաշտպանութիւնը: Սակայն կացութիւնը տակաւ աւելի յուսահատական կը դառնար: Անհրաժեշտ էր դերմարդկային ճիգեր գործադրել, կարենալ փրկելու համար Զանգեզուրի ժողովուրդը:

Ղարաբաղի եւ Զանգեզուրի սահմաններուն վրայ մղուած կռուները եւ աւերակ դարձած քանի մը հայ դիւղերու սրտաճմլիկ տեսարանը ցնցած էր տեղացի ազգաբնակչութիւնը, որ կռահելով իրեն սպառնացող վտանգը, իր աչքերը յառած էր Հայաստանի Հանրապետութեան՝ իր ճակատագիրը միանգամընդմիջտ անոր բանակներուն ու ռազմական ուժերու ճակատագրին կապելով:

Անգրկովկասեան նորակազմ պետութիւններու համար գոյութիւն ունեցող սահմանային խնդիրները առկախ կը ձգէին Զանգեզուրի եւ Ղարաբաղի հայութեան հարցը: Մինչեւ իրերու պարզուիլը, Հայաստանի կառավարութիւնը կը զգուշանար լեռնահայաստանը իր հողային ամբողջութեան իրաւական եւ անբաժան մասը ճանչնալէ, ու Զանգեզուր եւ Ղարաբաղ կը կառավարուէին տեղական խորհուրդներով:

1918 եւ 1919 թ. Զանգեզուրի մէջ կը գանուէին բազմաթիւ հերոս մարտիկներ, որոնք իրենց հեղինակութեամբ եռանդ ու կորով կը ներշնչէին լեռնային ժողովուրդին:

Առաջին հերթին Զանգեզուր կը հասնին Սասունի գունդի մարտիկները, խմբ. սասունցի Մուշեղ Աւետիսեանի(*) գլխաւորու-

(*) Տես «Յեղափոխական Ալպոս», Գ. Տարի, Բիւ 2:

Թեամբ: Իսկ 1918 թ. Յուլիսին կ'երթայ Զոր. Անդրանիկը իր դորամասով եւ կը մնայ մինչեւ Հ. Հանրապետութեան լիազօր Արսէն Շահմազեանի գալը:

Զոր. Անդրանիկ(*) կը հիմնէ պարէնի շտեմարաններ: Իսկ անոր սաղմական օգնութիւնը կը կայանայ այն բանի մէջ, որ ան առաջին հերթին կը մաքրէ հայութեան թիկունքը դանուող եւ վտանգ սպառնացող աւազակաբարոյ քանի մը գիւղեր: Թիկունքը ապահովե-



Մէջտեղը նստած -- Զախէն աջ՝ խմբ. Մուշեղ Աւետիսեան, Զոր. Սմբատ, խմբ. Ասլան Ստեփանեան, Զոր. Սմբատի վերի կողմը Մշեցի Սուրէն Սահակեան:

(*) Տես «Յեղափոխական Ալպում», Ա. Տարի, քիւ 2:

լէ ետք, արշաւանք կը կազմակերպէ դէպի Ղարաբաղ, ուր մեծ յաջողութեամբ կը հասնի Ղարաբաղի ամենագլխաւոր վայրերը:

Պաքու գտնուող անդլիացի Չօրավար Թամսըն իր ուղարկած պատուիրակներով կանգնեցուց Չօր. Անդրանիկի արշաւանքը:

1919 Մարտի 12-ին, երբ դեռ Անդրանիկը Չանդեղուր կը գլուխը կէտէր, հոն կ'երթայ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչը՝ Գնդ. Արսէն Շահմաղեան, որ այնուհետեւ պիտի ըլլար տեղական ուժերու ընդհանուր հրամանատարն ու ղեկավարը:

Անդլիացիներու կարգադրութեամբ Չօր. Անդրանիկ եւ իր զօրամասը կը ձգէին Չանդեղուրը ու կը հեռանային, յանձնելով երկիրը Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչին: (*)

Չօր. Անդրանիկի մեկնումի առթիւ Գորիսի հայ հասարակութիւնը կու տայ ողջերթի սեղան: Անդրանիկ կը ձգէ Չանդեղուրը 25 Մարտին:

Գնդապետ Արսէն Շահմաղեան կը սկսի կազմակերպել տեղական ուժերը:

Սիսիանի դինուորական ուժերու հրամանատար կը նշանակուի Գնդ. Պօղոս Տէր Դաւիթեան, իսկ անոր թղնական՝ Գնդ. Սմբատ Թորոսեան:

Այս երկու հերոսները Ղափանի շրջանի՝ Վերին Սոտանանի եւ Հազարակ գիւղի զաւակներն էին, որոնք իրենց կեանքը տուին իրենց պաշտած հայրենիքի ազատագրման գաղափարին:

Գնդ. Պօղոս Տէր Դաւիթեան առաջապահ զիրքերու մէջ ինկաւ հերոսական մահով, իսկ Գնդ. Սմբատ Թորոսեանը տարիներ ետք բոլշեւիկներու օրով, աքսորուեցաւ Սիպերիա, ուրկէ եւ ոչ մէկ լուր ստացուեցաւ իրմէ:

Արսէն Շահմաղեան շուտով լուր կը զրկէ քաղաքական այն լուրջ խնդիրներու մասին՝ զորս պէտք էր հասցնել Երեւանի կառավարութեան: Գտած էր երկու վստահելի անձեր. — մէկը ռուսական աքսորավայրէն վերադարձած Սաքոն (Եասլոն), իսկ միւսը՝ Գասպար Գասպարեան (**) (Արամայիս Մանուչարեան): Ասոնք մասնաւորապէս պիտի հետախուզէին գաւառի ներքին կեանքը եւ յայտնաբերէին գաղտնի եւ կասկածելի շարժումները:

Գնդապետ Արսէն Շահմաղեան, շնորհիւ իր կազմակերպչական աշխատանքին եւ աշալուրջ հսկողութեան, Չանդեղուր հասնելէն քանի մը ամիս ետք, Նոյեմբերի սկիզբը, կը գառնայ Չանդեղուրի հերոսամարտի ղեկավարը, իր ճակատը օժելով հերոսական միւռոնով եւ Չանդեղուրի հայութեան տալով ապահովութիւն՝ Ատրպէյճանի հանդէպ:

(*) Տես «Ազատ Սիւնիք», էջ 8-9:

(**) Այժմ ողջ՝ կ'ապրի Լոս Անճելըս - Գալիֆօրնիա (Մ. Նահանգներ):

Այս հերոսամարտի աւարտելէն վերջ, Հայաստանի կառավարութիւնը Երեւան կը կանչէ Արսէն Շահմաղեանը :

Երբ համայնավարները գրաւեցին Հայաստանը, Գնդ. Ա. Շահմաղեանն ալ ենթարկուեցաւ շատերու դժբախտ ճակատագրին : Չերբակալուելով նախ տարուեցաւ Օրէոլ քաղաքը, ապա Նոյօ, Տուր, Խանսկ, ուրկէ ի վերջոյ աքսորուեցաւ Սիպերիոյ խորերը, ու հոն ալ կնքեց իր մահկանացուն՝ հեռու հայրենիքէն ու հարազատներէն :

Չանդեղուրի մէջ թշնամին դեռ կը շարունակէր իր յարձակումները, որոնք կը փշրուէին տեղացիներու կորովի դիմադրութեան առջեւ :

Նոյն ատեն արեւմուտքէն՝ Նախիջևեանի կողմէն եւս, դէպի Չանդեղուր կը շարժին թուրքեր, որոնք կը գրաւեն Նորս, Գիւմրի, Գժաձոր եւ Մազրա հայկական գիւղերը, որոնց բնակիչները սուրի եւ կոտորածի մատնելէ ետք, կը մօտենան Չանդեղուրի դռներուն :

Ահա այդ օրերուն, Հ. Յ. Գաշնակցութեան Բիւրոյի առաջարկով այդ վտանգուած շրջանը կը դրկուի Գարեգին Նժդեհ՝ արդէն փոխ-դնդապետի աստիճան ստացած : Նժդեհ 1919 Օգոստոսի սկիզբը



Գ.Ա.ՍՊԱՐ
Գ.Ա.ՍՊԱՐԵԱՆ
(Ատրպէյճանի դեսպան
Հախվերտովի
շոգեկառքը
կեցնողներէն)

Երեւանէն կ'անցնի Գողթան՝ նշանակուելով Կապարդողթի հրամանատար, որուն կ'ենթարկուէին Գողթանի, Գենուաղի եւ Ղափանի շրջանները, իր հետ ունենալով խումբ մը փոքրաթիւ հաւատարիմ մարտիկներ :

1919-ի Օգոստոսին, Գորիս հասնելով, Նժդեհ կը տեսակցի

Հայաստանի Հանրապետութեան լիազօր Արսէն Շահմազեանի հետ եւ անմիջապէս կ'անցնի շրջանները :

Նժդեհի առաջին գործը կ'ըլլայ ծանօթանալ Ղափանի դիւղերուն ու իր հռետորական - քարոզչական տաղանդով դիմադրական դօրաւոր ոգի ներշնչել ժողովուրդին :

Գողթանը կը ներկայացնէր ողբալի վիճակ մը, իսկ Հայաստանի Հանրապետական Կառավարութիւնը չէր կրնար օգնութեան ձեռք երկարել, պայմաններու դժբախտ բերումով :

Նժդեհ եւ Գողթանի դաւառապետ Աշոտ Մելիք-Մուսեան Գողթանէն կու գան Ա. Շահմազեանի մօտ, խորհրդակցելու կարգ մը խնդիրներու շուրջ :

Գարեգին Նժդեհ կը գեկուցէ Գողթանի հայ ժողովուրդի մասին, խոր յուզումով պարզելով, որ ժողովուրդի ինքնապաշտպանութեան գործը կը դանուի ողբալի վիճակի մէջ : Ժողովուրդը կը հրատարի մասնակցելէ պաշտպանութեան գործին, որմէ կախուած է իր իսկ գոյութեան խնդիրը : Ժողովուրդը կը դանուի անապահով դրութեան մէջ. ուտելու հաց չունի, սովի սպառնալիքի տակ է :

1919 Յոգոստոս 10-ին Գ. Նժդեհ հետեւեալ հրամանը կ'արձակէ Ղափանի Հանքերէն .

Ղափան - Գեկուազ - Գողթանի միացեալ զօրամասերուն .

1.— Այսօրուրնէ ես ստանձնած եմ Ղափան - Գեկուազ - Գողթանի միացեալ ուժերու հրամանատարութիւնը : Ընդ սմին կը հրամայեմ բոլոր պաշտօնական գործերով՝ դիմել ինձ :

2.— Զօրամասերու «չտարը» կը դանուի Հանքերու մէջ, ուր բոլոր ռազմաշրջաններու պետերը պէտք է ուղարկեն իրենց հաղորդագրութիւնները :

3.— Ոչ ուշ քան ամսոյս 12-ի ժամը 16-ը տեղեկացնել զինուորներու հրացաններու ինչ ձեւի ըլլալը, եւ փամփուշտներու քանակի մասին :

Ղափան - Գեկուազ - Գողթանի Միացեալ
Ուժերու Ընդհ. Հրամանատար
Ն Ժ Դ Ե Հ

Ինքնապաշտպանութեան գործը լուրջ հիմերու վրայ դնելու համար, անհրաժեշտ էր կազմակերպել Զանգեզուրի ժողովուրդը, ինչպէս նաեւ առաջացնել զինուորական լաւապէս կազմակերպեալ եւ կարգապահ ուժեր :

Զանգեզուրը կը բաժնուի երեք շրջաններու՝ հետեւեալ ձեւով .—

1.— Կապան կամ Ղափան, որ հին Բաղայ իշխաններու երկիրն է եւ կը կոչուէր Բաղաբերդ :

2.— Գողթան, որ մեր հին պատմական դրականութեան մէջ ծանօթ է որպէս դուսանաց երկիր :

3.— Արեւիք, Մեղրիի շրջան, որ կը կոչուէր նաեւ Գենուազ այսինքն՝ արեւակողմ կամ արեւահայեաց :

Եւ այսպէս այդ երեք շրջաններու սկզբնական վանկերէն կը կազմուի Կապ-Ար-Գողթ անունը՝ տրուած Նժդեհի հրամանատարութեան ենթակայ հողամասին, որ երկու տարուան ընթացքին սլտի տարածուէր՝ Արաքսէն մինչեւ Վայոց Ձորը :

Անդրադառնալով ժողովուրդի յուսահատ բարոյականին, Նըժդեհ կը շրջի բոլոր շրջանները, կազմակերպելու համար զինուորական ուժերը :

Առաջին անգամ կ'անցնի Գենուազ, կը շրջի բոլոր գիւղերը : Հասարակ գիւղացիի կեցուածքով, սերտ յարաբերութիւն կը մշակէ ժողովուրդին հետ, ռազմական կազմակերպութեան իր ծրագրի իրագործման համար հող սպասարաստելով : Ան կրնայ հասկցնել, թէ խաղաղ սրայմաններու մէջ, զինուոր ու ղեկավար կը մնան զազափարի եւ գէնքի անբաժան ընկերներ :

Իր բոցաշունչ լեզուով, ընկրկած եւ թմրած դանդուածներուն արիական ոգի կը ներշնչէ եւ կը կազմակերպէ օրինակելի եւ ուժեղ զօրամաս մը :

Կազմակերպչական նոյն եռանդով, Նժդեհ կ'անցնի Ղափանի շրջանը ու կը կազմակերպէ Դաւիթ Բէկեան վաշտեր :

Զինուորական հայրենասիրական ոգիի տարողութիւնը, կազմակերպչական դրութիւնը լուսադոյնս ըմբռնելու համար, հոս կ'արժէ մէջբերել Նժդեհի իսկ խօսքերը, Դաւիթբէկեան կոչուած վաշտերու մասին. («Հայրենիք» Ամսագիր, Ա. տարի, թիւ 12, Հոկտեմբեր 1923). —

«Միայն յեղափոխական խանդավառ ոգիով ուժեղ այդ ընկերութիւնը կոչուում էր Դաւիթբէկեան ուխտ : Զինուորները՝ Դաւիթբէկեան կամ Գեղուաձորեան :

Ուխտի մարտական ուժերը բաժանուած էին թեթեւ միաւորների, որոնք կոչուում էին Փայլախմբեր :

Սրանք ունէին իրենց ասարեկիչներն ու սուրհանդակները : Նորերն ընդունուում էին միայն հների երաշխաւորութեամբ :

Զինուորները իրար հանդիպելիս ասում էին՝

— Յիշի՛ր Գեղուաձորը :

— Նաեւ Դաւիթ Բէգին, — լինում էր սլատասխանը :

— Մեզ համար չկայ մահ, — ասում էին բաժանուելիս :

— Մահը՝ մեր թշնամուն, — լինում էր սլատասխանը :

Անողոք կերպով հալածուում էին ընկերութեանց կողմից հայազգի դաւաճանները եւ բոլորը, որոնք Զանգեզուրի ատրպէյճանացման տխուր գործում (որն այդ օրերին առաջ էր տարւում խորհրդային կեղծ դիմակի տակ) որեւէ ծառայութիւն էին ցոյց տալիս թըշնամուն :

Ընկերութեան նշանարանն էր՝ «Յանուս հայրենիքի Դաւիթ-բեգաբար»:

Վաշտապետ եւ զինուոր, կ'ապրին իրենց սեփական միջոցներով: Վաշտերը բազկացնող զինուորը, ինքը՝ զիւղացիութիւնը եւ տեղացի ազգաբնակչութիւնն է, որ իր ժամերէն մէկ քանին պարտական է յատկացնել հասարակաց՝ այսինքն՝ նաեւ իր ինքնապաշտպանութեան գործին:

Կռուող ուժը՝ վարձկաններու զասակարդ մը չէ հոն, այլ ժողովուրդը՝ որ կը զգայ թէ իրմէ դուրս ոչ մէկ ձեռք, ոչ մէկ ոյժ կայ իր ընտանիքը, իր ինչքն ու պատիւը պաշտպանող:

Անհրաժեշտ էր միշտ բարձր պահել այդ ժողովուրդին բարոյականն ու տրամադրութիւնը, իր մէջ արթնցնելով եւ վառ պահելով հայրենասիրական զիտակցութիւնը:

Այս նպատակով հրամանատար Գ. Նժդեհ 1919 Հոկտ. 23-ին Լիջիէն կ'արձակէ իր թիւ 4 հրամանը, որ զօրքին ուղղուած պարզ յայտարարութիւն մը չէր, այլ ողբկոչումը մեր յեղափոխական հերոսամարտին փշոտ ուղիներուն վրայ ինկող զաղափարի ոահվիրաներու յիշատակին:

Ահաւասիկ այդ հրամանը.

Շարք մը ժողովուրդներու գորքին մէջ կայ շատ գեղեցիկ սովորութիւն մը, այն է՝ զինուորներու անուանացուցակներու ստուգման ժամանակ նախ յիշատակել իրենց երկրի ազատագրութեան ցանապարհին ինկած հերոսներու անունները:

Երբ ստուգողը կու տայ այդ նուիրական անունները՝ «ինկաւ» կը պատասխանէ գորաշարժի մէջ, աջ թեւի առաջին զինուորը:

— «Փառք», կը կրկնէ աջ թեւի երկրորդ զինուորը:

— «Յաւերժ փառք», կ'աւելցնէ ամբողջ գորաշարժը:

Ազգային նահատակներու անուններուն ամէնօրեայ յիշատակումը զինուորներու մէջ ստեղծած է բարոյա—հայրենասիրական բարձր տրամադրութիւն, ինկած նահատակներու հաւատարմութեամբ ու անձնուիրութեամբ ծառայելու, ու մեռնելու քաջօրէն իրենց հայրենիքին համար:

Կը հրամայեմ Ղափան—Գեղուազ եւ Գողթանի գորամասերու պետերուն որդեգրել այդ գեղեցիկ սովորութիւնը եւ ամէնօրեայ ստուգումներու ժամանակ յարգել մեր ցեղի ընտիր որդիներու խրնկելի անունները՝ Քեռի, Խեչօ...:

ՆԺԴԵՀ»

Նժդեհ շրջաններու գրեթէ բոլոր զիւղերու մէջ կառույց միջնարերդեր, որոնք կոչուեցան Քրիստափորաբերդ, Խեչոյաբերդ, Ռոստոմաբերդ եւայլն:

Բոլոր ժողովրդական վաշտերը ունէին իրենց «Յեղափոխա-

կան սուրբը», իրենց զօրավիզը: Վաշտի մը զօրավիզ կը դառնայ Քրիստափորը, ուրիշի մը՝ Սեչոն, երրորդի մը՝ Դուժանը, չորրորդի մը՝ Ռոստոմը եւ կռիւներու ժամանակ կը պաշտպանէ զայն:

Գիւղացիութիւնը, այր, կին, երախայ, շարթուան մէջ որոշ օրեր, մէկ մարդու պէս ոտքի կեցած, կը սկսի խրամատներ պատրաստել, ինչ որ պարտադիր էր ամէն գիւղի եւ ամէն ճակատի համար:

Կը շինէին 10—80 քիլոկրամ ծանրութեամբ մետաղէ տակառներ, զորս կը լեցնէին պղինձի կտորներով ու պայթուցիկ նիւթերով եւ կռուի պահուն կը գործածէին զանոնք, թշնամի բանակներուն դէմ, սարսափ ազդելու համար: Ժայռերու կատարներէն վար կը գլորէին այդ տակառները ա՛յն պահուն՝ երբ թշնամին ձորերու մէջ կը դանուէր: Եւ ահա բարձունքներէն վար իրենց զահավէժ անկումին մէջ անոնք միասին կը տանէին երկաթի եւ ժայռերու կտորներ: Սարսափը եւ աւերը, որոնք առաջ կու գային այս կերպով թշնամի շարքերուն մէջ, նկարագրել անկարելի է:

Բովանդակ կապարգողթի շրջանը մշտատեւ յարարերութեան մէջ դնելու համար, կը հաստատուին գիշերային լուսախօսութեան և ցերեկային նշանատուութեան կապեր:

Իր «Հայ—բոլշեւիկեան կռիւները(*)» գրութեան մէջ, անդրադառնալով կազմակերպչական այս աշխատանքներուն, նժդեհ ի միջի այլոց կը գրէ հետեւեալը.—

«Ղափանի Հանքերում հաստատելով շտաբս, անցայ գործի:

«Շրջագայելով գաւառակները, տեղն ու տեղը ուսումնասիրեցի երկրի աշխարհագրութիւնն ու տեղագրութիւնը: Մանօթացայ շրջաններու ռազմագիտական «յամառ» եւ թոյլ կէտերի հետ: Սահմանադիսային եւ հասարակականապէս թոյլ բոլոր գիւղերում կառուցել տուի միջնաբերդեր եւ այլ ձեւի ամրութիւններ, տալով սըրանց այս կամ այն ազգային հերոսի կամ գործչի անունը՝ Քրիստափորարերդ, Եփրեմարերդ, Ռոստոմարերդ եւայլն: Գիւղէ գիւղ անցնելով, ուսումնասիրեցի ժողովրդի նիստ ու կացը, սովորութիւնները, աւանդութիւնները, հողերանութիւնը: Սօսեցի Սիւնիքի անցեալից՝ մեծ մեռելներից ու փառքերից: Աշխատելով մշակել ժողովրդի մարտական առաքինութիւններն ու սիրտը, նրա մէջ ջանացի վառել իր անպարտելիութեան հաւատը եւ իրեն մօտիկ ապագայում յաղթանակներ տալու խոստումներ կատարեցի: Ձէնք կրելու ընդունակ տարրերից կազմակերպեցի ժողովրդական վաշտեր եւ, առաջ քաշելով գիւղերի բանիմաց ու արի երիտասարդներին, սկսեցի մարդել եւ դաստիարակել նրանց, որպէս վաշտապետ, դասակապետ, օղակի աւագ, մի խօսքով, որպէս ղեկավար:

(*) «Հայրենիք Ամսագիր», Բ. Տարի քիւ 1, Նոյեմբեր 1923, էջ 111:

«Վաշտերիս սորվեցրի լեռնային կռուի արուեստը, միշտ էլ բացօթեայ, լեռների վրայ կամ դաշտերում, դործնական ծանօթութիւններ տալով ռազմազիտական զանազան հնարազիտութիւնների, դաւերի ու խաղերի մասին: Գիւղերի մէջ դասուանդեցի պատնէշային կռուի ձեւերի, անսխալ նշանառութեան եւ լեռնային տեղեկագրութեան առաւելութիւններից օգտուելու մասին: Սովորեցի պայթուցիկ տակառներ պատրաստելու եւ պայթեցնելու ձեւերը: Կազմակերպեցի ռազմափորձեր եւ փորձնական ահակոչեր, ինչպէս եւ զիտարաններ, դարաններ ու լուսախօսութիւններ:

«Համոզուած լինելով, որ մեր հանրապետութիւնը, հակառակ իր ցանկութեան, պիտի չկարողանայ Սիւնիք եւ Ղարաբաղ հասցնել զինուորական ոյժ, տեխնիկ միջոցներ եւ կենսամթերք, ժամանակ չխնայեցի մարտական ուժերի ողելորութեան ազբիւրը դարձնել ժԸ. դարի Դաւիթբէգեան շրջանը եւ մեր վերջին յեղափոխական հերոսամարտը:

«Թշնամուն հողերանօրէն զերազանցելու համար, պէտք էր երկիրը լցնել մեր սրամական հերոսների եւ նահատակների ողիստուերներով, եւ դա յաջողում է ինձ: Ահա՛ նման, մօտ չորս ամիս տեւող կրակօրական ինքնապաշտպանութեան իմ դործունէութիւնը ստեղծեց ապագայ ռազմական ձեռնարկութիւններիս համար այն բոլոր նախապայմանները՝ ժողովրդական կուռ բանակ, տաքտիքական դաստիարակութիւն, հողերանական նպաստաւոր մթնոլորտ, — բախտորոշ ազդակներ, որոնք հնարաւորութիւն պիտի ընձեռէին իմ խնամքին յանձնուած երկրամասին վարելու իրեն վիճակուած անհաւասար զոյամարտը»:

Այսպիսով, քանի մը ամսուան ընթացքին, Նժդէհ, իր դործակիցներով կը յաջողի կազմակերպել ամբողջ Ձանդեղուրը, ժողովուրդին մէջ վերականգնելով զիմադրական ոգին, որ չափազանց տկարացած էր, նոյնիսկ ա՛յն աստիճանի, որ առաջացած էր Ատրբայէյճանի ենթարկուելու արամազրութիւն, որոշ անձերու մօտ:

* * *

1919 թուականին շատ ծանր էր Սիւնիքի հայ զիւղացիութեան վիճակը, որովհետեւ ամէն կողմէ շրջապատուած էր թրքական զիւղերու բազմութեամբ: Տարիներով Ձանդեղուրը, Ղափանը, Գենուաղը (Արեւիքը) եւ Գողթանը կտրուած էին իրարմէ:

Մուսաւաթ Ատրպէյճանի կառավարութիւնը ամէն կերպ խոչընդոտ հանդիսանալով Սիւնիքի հայ ժողովուրդի միութեան՝ իր դործակալներով եւ մեծազումար զրամներով Նախիջևանը կ'ապրատամբեցնէ Հայաստանի Հանրապետութեան դէմ եւ Զիբրայիլի ու Ձանդեղանի կողմերէն մեծաքանակ թուրքիկ խումբեր կազմելով՝ կը սպառնայ ե՛ւ Ղափանին ե՛ւ Գենուաղին, որպէսզի այդ շրջանները եւս մաքրելով հայութենէն՝ հնարաւորութիւն ունենայ Օրդուբաթի

վրայով միանալ Նախիջևանին: Ատրպէյճանի հանրապետութիւնը միշտ հնարաւորութիւն կը ստեղծէ հայերու դէմ գրգռելու տեղական թուրք ազգաբնակչութիւնը, պարբերական կոտորած կազմակերպելու կամ գիւղերը աւերելու համար:

Հայ գիւղացիները ամէն բայէ ոչնչացման դատապարտուած էին, եթէ ձեռք չառնուէին անհրաժեշտ միջոցներ: Ահա այդ շրջանին էր (1919 թ. Հոկտեմբերին) երբ գնդապետ Նժդէհ ստանձնեց կապարգողթի ռազմաճակատի հրամանատարութիւնը. չկային կանոնաւոր զօրամասեր, թնդանօթներ եւ ոչ ալ կազմակերպչական աշխատանք կատարուած էր: Միակ ուժը՝ զինուած գիւղացիութիւն մը պիտի ըլլար:

Այդ նպատակին հասնելու համար, գնդապետ Նժդէհ նախ հետամուտ եղաւ զինուած գիւղացիութենէն զխտակից, ուժեղ եւ անձնուէր վաշտեր կազմակերպելու եւ ապա ձեռնարկելու խիստ զրծուարին, բայց անհրաժեշտ զինուորական գործողութիւններու՝ սկըսած Բարդուշատի ամերէն մինչեւ Օրդուբաթի շրջանը: Ամենավրտանգուած վաշտերէն մէկը համարուած է Օխչի ձորը (Գեղուաձորի արեւմտեան կողմը), ուր կային 5 հայկական գիւղեր: Թուրք-թաթարները միշտ կ'ուզէին անկէ հեռացնել հայերը որպէսզի այդտեղէն հնարաւոր ըլլար հայերուն, կապուիլ Գողթանի կենդանի մընացած գիւղերուն հետ: Ուստի 1919 թ. Նոյեմբեր 25-ին Սպարապետ Նժդէհը սկսելով ռազմական գործողութիւններու, կարճ ժամանակուան ընթացքին կը գրաւէ Օխչի ձորի՝ Շարաղին, Օխչի, Փիրղովդան, Արայրխ եւ այլ գիւղեր, որոնց ազգաբնակչութիւնը կը դադրէր դէպի Նախիջևան:

Օխչու ձորի կռիւէն ետք կռուող ուժերը կ'անցնին Գեղուաձոր, ուր 5 օրուան ընթացքին 3 հայ գիւղերէ քանի մը հողի սպանուած էին. շուտով կռուի նախաձեռնութիւնը եւ հրամանատարութիւնը կը ստանձնէ Նժդէհ, իր հետ ունենալով Արսէն Շահմաղեանը: Ան այնպիսի դասաւորում կը կատարէ, որ Զանգեզուրը եւ Գենուազը, հաւասար ուժեր դուրս տային, որովհետեւ Գեղուաձորի զիրքերը շատ ամուր էին, եւ կռիւը երկար պիտի տեւէր: Լեռները ձիւնով ծածկուած էին, եղանակը շատ ցուրտ էր, ու ստիպուած էին զինուորները լաւ հագուեցնել ու բաւական ալ պաշար ունենալ: Գենուազի ու իր շրջանի Ա. Բ. Գ. վաշտերու զօրքը, մօտ 800 հողի, պիտի պաշտօնանէր Օրդուբաթի ճակատը: Շուտով շորս կողմերէն կը սկսին գալ գիւղացիները եւ զանազան գիւղերէ կամաւոր կ'արձանագրուին մօտ 150 հողի, որոնք շատ լաւ կռուողներ էին եւ որոնք համախորմուած էին թովմասի եւ Ենովքի վաշտերուն մէջ:

Կռուող ուժերը կը բաժնուին երեք մասի. աջ թեւը կը յանձնուի Արսէն Շահմաղեանի, Ասատուր Գաւրիթեանի, Արմենակ Պարոնեանի, եւ Սամսոն Բէզի եւ Հալիձորի բերդի մօտ անտառ-

ներէն դէպի Սուստուպ Սարի դիրքերը կը դրաւ : Երկրորդ թեւը Ե. Սարգիսեանի ղեկավարութեամբ մէկ թնդանօթով եւ Լազոյի 100 հոգի Տաթեւցիներով, պաշտօն ունէր «Բերսի» շրջանը դիրք բռնել որպէսզի թուրքերը չկարենան անցնիլ դէպի Նախիջեւան :

Հերթական գործողութիւնը պիտի սկսուէր Գեղուածորի աւազակաբարոյ եւ թշնամի տարրին դէմ, որ իր կատարած դազանութիւններով ու թալանով միանգամայն յուսահատութեան դուռը կը հասցնէր Գենուազի զիւղացիութիւնը : Գեղուածորի թուրք մասսան սերտ կապեր կը հաստատէր մէկ կողմէ Նախիջեւանի, միւս կողմէ Զանգեւանի եւ Զիրբայիլի, իսկ երրորդ կողմէ Շիրակի վրայով նաեւ Հաջիսամլուի թուրքերուն հետ, հայկական զիւղերն օղակելով չորս կողմէ :

1919 Նոյեմբեր 30ին ժողովրդային զօրամասերուն կ'ուղղուի հետեւեալ հրամանը .

«Զինուորնե՛ր, թշնամիի ցանկութեամբ սկսած է մեր արշաւանքը, մեր խաչակրաց արշաւանքը Գեղուածորի դէմ :

«Վաղը, երբ ձեր խենթ զրոհներէն եւ դարկերէն թշնամին շջմած կը թողու իր զիւղերը, ձեզ կ'ողջունեն մեր հինաւուրց, այսօր թշնամիի կողմէ պղծուած բերդերու եւ վանքերու աւերակները :

«Վաղը, երբ այդ ձորի մէջ կը լսուի ձեր ոտնաձայնը, ձեր զէնքերու շաշիւնը, հայ դերիները, Քէյֆաչէնի բէգերու շնաբարոյ կրքերու առարկան դարձած հայ կանայք ծնկաչոք կ'աղօթեն ձեր զէնքի յաջողութեան համար :

«Վաղը, երբ քաջերդ Աշիրաշ հասաք, յիշեցէ՛ք Խալիլ-բէգեան սեւ օրերը, երբ այս զիւղի մօտ թշնամին բարբարոսաբար մորթեց երկու հազարի չափ, օսմանեան սուրէ ճողոպրած հայ կին ու երախաներ : Կ'ըսեն, այժմ այնտեղ ամբողջ ձոր մը լիքն են կմախքներով, դանկերով, ուր յաճախ հիւր կու դան Գեղուածորի շուներն ու գիշատիչները :

«Յիշեցէ՛ք այդ, եւ եղէք անխնայ ձեզ դիմադրողներու նկատմամբ, ասպետ եւ մարդ եղէք կանանց, երախաներու եւ ծերերու նկատմամբ :

«Ուրեմն, յառա՛ջ, մեզ հետ Աստուած եւ Դաւիթ-բէգի վրիժակ հոգին» :

ՆԺԴԵՀ

Նոյն օրը կը յայտարարուի զօրահաւաք :

Քսանըչորս ժամուան մէջ Ղափանի վաշտերը կազմ ու պատրաստ՝ կը հաւաքուին Հանքերը, Գենուազցիները՝ Բաղաբերդ, իսկ Դարապասի ու Տաթեւի ուժերը կը կեդրոնանան Մալտաշ : Նոյեմբեր 31-ի ցերեկը զօրքը ռազմախաղերով ժամանակ կ'անցընէ :

Երեկոյեան Նժդէհ իր զօրքին կը խօսի կատարուելիք արշա-

ւանքի նշանակութեան մասին, եւ հերոսներու անունով զօրքը կը զգուշացնէ կիներու եւ երախաներու վրայ ձեռք բարձրացնելէ :

Գիշերուան ժամը 12ին, զօրքը շեփորի ձայնէն կազմ ու պատրաստ՝ ոտքի է արդէն. գիշերուան ժամը 1-ին կը տրուի արշաւանքի հրամանը :

Յարձակումը կը սկսի 1 Դեկտեմբեր 1919-ին :

Ժամը 4-ին, տրուած մարտադրի համաձայն, կը գրաւեն իրենց դիրքերը ու կը սպասեն ընդհ. յարձակողականի ազդանշանին : Ժամը 6-ին Ղափանցիք բռնած են Գեղուաձորի բարձունքները եւ պայթուցիկ տակառի մը տուած նշանին վրայ՝ գրոհը կը սկսի : Թէեւ Թշնամիի դիրքերը բարձր սարերու վրայ էին եւ ցուրտ ձմեռն ամէն կերպ արգելք կը հանդիսանար այդ խելայեղ ձեռնարկին, սակայն շնորհիւ հրամանատարի փորձառութեան, յարձակումը կը պսակուի մեծ յաջողութեամբ : Զինուորները կը յաջողին լեռ բարձրացնել ու ժանակով եւ երկաթի կտորներով լեցուած տակառները, զորս կը գլորեն դէպի Թշնամիի դիւղերը : Անոնց պայթիւնները սոսկում առաջ կը բերեն եւ Թշնամին կը սարսափի :

Կռուի առաջին օրը Թշնամին ուժեղ դիմադրութիւն մը ցոյց կու տայ. երկրորդ օրը հայ զօրքը կը մտնէ Շհարջիկ : Դեկտեմբեր 2-ը կ'անցնի առանց վճռական արդիւնքի : Դեկտեմբեր 3-ին կը հասնի Նոյեմբեր 24-ին Գորիսէն ուղուած Թնդանօթը, որ երկու ուժը արձակելէ ետք՝ կը փճանայ :

«Պահեստի մէջ ընդամէնը մէկ օրուան հաց կայ» կը գրէ տընտեսական բաժնի կառավարիչը : Գորիսէն կը հաղորդեն. «Մթերանոցներու մէջ ռազմանիւթը սպառած է» :

Հակառակ այս բոլորին՝ կռիւը կը շարունակուի :

Հետեւեալ օրը Բաղարբերդի բարձունքին վրայ կը ծածանի Հայկական Եռագոյնը :

Կռուի չորրորդ օրը Արսէն Շահմազեան իր 50 ընկերներով կը բարձրանայ լեռները ու կ'անցնի Թուրքերու Թիկունքը, Տաթեւի կողմէն շրջապատելով Թուրքերը՝ ձորի երկու կողմերէն : Թուրքերը կը սկսին նահանջել դէպի Գեղուայ բարձունքները : Գ. Նժդեհ, Ասատուր Դաւիթեանի(*) հետ, 50 հոգի օգնութեան կը ղրկէ Ա. Շահմազեանին : Այս Զանգեզուրցի մարտիկները գիշերը կը միանան Շահմազեանի : Նոյն գիշերը Թուրքերը Գեղուաձորի ներքին մասերը ձրգելով կը բարձրանան կեղրոնի Մեծ դիւղը, որ 35—40 տունէ կը բաղկանայ : Առաւօտեան մերինները կ'անցնին յարձակողականի,

(*) Ասատուր Դաւիթեան, Կարնեւանի Ա. վաշտի վաշտապետը, իսաղազութեան ժամանակ մեկնած էր Թիֆլիս. ամուսնացած էր. բայց իմամալով Զանգեզուրի կռիւներու վերսկսումը, շուտով կը վերադառնայ Երեւան. Բագար—Չայի գծով կ'անցնի Զանգեզուր եւ կը միանայ Նժդեհի բանակին :

Շահմազեան 50 հոգի կը թողու դիրքերը, միւսները կը բաժնէ երկու մասի. ինքը ու Ասատուրը կը մտնեն գիւղը, թուրքերը խոյս տուած էին. իսկ տուներու մէջ կային բաւական կռուող ուժեր, որոնք պատերը ծակելով կը կրակեն, սակայն հայերը կը յաջողին գրաւել ա՛յն տունը, ուր թրքական ուժերը կային. նոյն ժամուն Գենուազի կողմէն թովմաս եւ Ենովք լեռներէն կ'իջնեն գիւղը:

Այդ ճակատագրական պահուն, կարծէք երկինքէն հասած ըլլային, Զանգեզուրի կողմէ սպայ Արմենակ Պարոնեանը եւ Սամսոն Խանը, իրենց 150 հոգինոց ընկերներով, որոնք կանգնած էին Խուստուպ սարի փէշերուն վրայ, հին Գեղուայ բերդի գիմացը եւ այնտեղէն կը դիտէին Գեղուաձորի զանազան մասերը, երբ կը տեսնեն, որ թուրք կռուողներ երբեմն ոչխարի հօտեր կը տանին դէպի բարձունքները, կ'որոշեն մտնել Գեղուաձոր, աջ ու ձախ՝ սարերը բռնելով, իբրեւ յետսապահներ յառաջանալ տղոց օգնելու համար, քանի որ Նժդեհ բերդի կողմերն էր: Շուտով սուրհանդակ կ'ուղարկեն Նժդեհի մօտ եւ իրենց դրութիւնը կը բացատրեն, ան ալ կը գրէ. «Վաղը առաւօտ ընդհանուր յարձակման պիտի անցնինք, կը սպասեմ Շահմազեանի գործունէութեան»:

Անդրէաս Պէկի տղան Մելիք Աղատեան, գիշերը իր 100 հոգինոց խումբով կը մտնէ Գեղուաձոր եւ կը յառաջանայ դէպի Գեղ գիւղը, եւ կռուի խառն միջոցին, Արմենակը 3—4 կողմէն կը մտնէ գիւղը եւ կոտորումի կը սկսի մինչեւ թովմասի եւ Ենովքի հասնելը, որոնք իրենց կարգին իրենց ուժերով կ'օգնեն Արմենակի եւ Արսէն Շահմազեանի: Գիւղի բոլոր թուրք կռուողները կը սպաննուին:

Կռիւը կը տեւէ մինչեւ կէսօր. թշնամին կը նահանջէ: Կէսօրէ ետք վիրաւորները կը տանին Հանդ գիւղը, ուր Մեղրիի հանքերու կողմէն Նժդեհ կ'ուղարկէ բժիշկ եւ դեղօրայք: Յաջորդ օր կրկին ուժեղ կռիւ էր Գեղուայ բարձունքներուն վրայ: Պարտուած նահանջող թուրքերը Բերսէն կ'անցնէին Նախիջեւան: Գեղուաձորը մաքրուած էր: Աւաղակներու եւ մարդասպաններու բոյնը՝ ջնջուած:

Այնուհետեւ այդ շրջանի պահպանութիւնը եւ դիրքապահութիւնը կը մնայ Հանդ, Քաջարանց եւ Բերդիկան գիւղերու վրայ:

«Կռուի եօթներորդ օրը, Գեկտեմբեր 7-ին կը գրաւուի Աջիբաշին՝ Գեղուաձորի վերջին գիւղը:

Պարտուած թշնամին կը նահանջէ դէպի Նախիջեւան: Գեկտեմբեր 10-ին շրջանի ամբողջ հայութիւնը կը տօնէր զօրքին տարած փառաւոր յաղթանակը (*):»

Գեղուաձորի յաղթութեան լուրը շուտով կը տարածուի ամէն կողմ: Այս առթիւ Զանգեզուրի Աղդ. Խորհուրդի անդամ՝ Մելիք

(*) Վարդան Գեորգեան — «Լեռնահայաստանի Գոյամարտը 1919—1921», էջ 22:

Սմբատ Ստեփանեան, հետեւեալ գրութիւնը կ'ուզէ հրամանատար Նժդեհին .-

«Սիրելի՛ Գարեգին,

Կատարածներիդ անվերջ շնորհակալութիւն: Կ'ուզեմայի այս պատմական օրերին գեղեցիկ յաղթական շարքերը այստեղ ընդունել եւ ապա վերադառնալ կեդրոն:

Ղափան, 1919 Դեկտ. 8

ՍՄԲԱՏ ԲԷԿ

Քանի մը օր ետք զօրքին ցանկութեամբ եւ անոր անունով, քսանըհինգ վաշտապետներ հետեւեալ նամակը կը գրեն իրենց հրամանատարին .

«Մենք Ղափանի զինուորութիւնն ու վաշտապետներս, ի նկատի առնելով այն, որ դուք ըլլալով Ղափանի ռազմական ուժերու հրամանատար, ո՛չ թէ միայն գերծ պահեցիք մեր երկրի սահմանները թշնամի ռանգուրիւններէն, այլեւ մաքրեցիք անառիկ Գեղուածորը, որ մահու չափ վտանգ կը սպառնար մեր Հայրենիքին, որոշեցինք երախտագիտութեամբ նուիրել ձեզ, սիրելի՛ հրամանատար, Դաւիթ-Բէկեան պատուոյ սուր, հետեւեալ մակագրութեամբ. ԳԱՐՆԳԻՆ ՆԺԴԵՀԻՆ, որուն Ղափանը անուանեց երկրորդ Դաւիթ-Բէկ, իսկ թշնամիս՝ Աժդահա փաշա»:

Ի դիմաց զինուորութեան՝

Վաշտապետներ (25 ստորագրութիւններ)

Ղափան, 1920 Յունուար 15

Գեղուածորի մաքրագործումէն ետք, կռուի դաշտը կը փոխադրուի Բարգուշատի եւ Հաքեարուի շրջանը, ուր տեղական թըրքութիւնը Զիրբայիլի կողմէ թիկունք ունենալով Ատրպէյճանի հանրապետութիւնը՝ անընդհատ յարձակումներով միշտ վրդոված էր Ղափանի հայութեան խաղաղութիւնը:

19 Յունուարի 1920-ին, Սպարապետ Նժդեհի առաջնորդութեամբ, Ղափանի զինուորութիւնը յարձակման դիմելով Բարգուշատի անթիւ թրքական զիւղերուն վրայ, կը գրաւէ հետեւեալ զիւղերը .- Զարալու, Սալգաշ, Փարիջան, Գէոյիալ, Դաշրաշ, Հարթիզ, Միհրալու, Խոջամասիլու, Այեադի, Զօր, Մազրտտի, Թարաւլու, Զարդախլու, Վ. եւ Ն. Քէօրջալանլու, Կարադաջ, Քիւրդ-Խալաջ, Ային, Ղուրդ-Ղալա, Զիրիկլու, Սեւաքար, Միսիթան, Ղարադաջ-Բուլադի, Կարի-Ղչլադ, Խանլաւա, Մահմուտու եւ Հաջիլու: Իսկ Զանգեզուրի հայկական զօրամասը նոյն ժամանակ կը մաքրէր սահմանին մերձակայ Հաքեարուի ամերուն վրայ թրքական միւս զիւղերը: Որպէսզի պարզ ըլլայ, թէ որքան ոգեւորուած էր տեղական

հայ գիւղացիութիւնը Բարգուշատի ռազմական գործողութեամբ, բաւական է ըսել, որ արհամարհելով թշնամիի քանակն ու զիրքերու ամբողջութիւնը՝ զինուորները նուազով կ'անցնէին զիրքէ զիրք եւ գրեթէ առանց զոհերու թշնամին կը վանէին իր ամբողջութիւններէն: Իսկ ցոյց տալու համար, թէ թշնամիին որքան սարսափ ազդած էր հրամանատար Նժդեհի ներկայութիւնը եւ թէ ինչպէս հմայք ունէր ան իր զինուորներու աչքին, բաւական է յիշել, որ այդ կռուի ընթացքին երբ հայ զինուորները հնարաւորութիւն չունեցան դրոհ տալով դրաւելու Թալաճ գիւղի անառիկ զիրքերը ու մութը վրայ հասնելու պատճառով կը պատրաստուէին հեռանալ զիրքերէն, հրամանատար Նժդեհը ինքը անձամբ, անվահերութեան ու անձնազոհութեան օրինակ հանդիսանալով, միայն 10 հեծեալ զինուորներով յարձակման կը դիմէ եւ թշնամին փախուստի կը մատնէ եւ զիրքը կը գրաւէ:

Այս դէպքերու շրջանին կը պատահի հետեւեալը. — Նախիջեւանի, Օրդուրաթի եւ շրջաններու ամբողջ թրքութիւնը նենգամտօրէն խարելով թէ՛ տեղական եւ թէ՛ իրենց տեղերը նոր վերադարձած հայ գիւղացիութիւնը, նախ կը զինաթափեն, ապա շրջապատելով գիւղերը՝ կրակի կու տան, ջարդելով տղայոց, կանանց, եւ երախաներուն: Լուրը կայծակի արագութեամբ կը տարածուի ամէնուրեք, ինչպէս նաեւ Ղափան:

Գողթանի ժողովուրդը, կ'ենթարկուէր անլուր գրկանքներու, սակայն Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը, արտաքին թէ ներքին պատճառներով չէր կրնար զօրքեր ուղարկել օգնելու եւ պաշտպանելու համար հայ ազդարնակչութիւնը: Զրկուած ըլլալով արտաքին օժանդակութենէ, Գողթանի ժողովուրդը կը դումարէ համազումար, խորհրդակցելու եւ անհրաժեշտ միջոցառումներու դիմելու համար:

Գողթանի վերջին համազումարէն ետք, կապար-Գողթի ընդհանուր հրամանատարը, շրջանի զաւառապետ Աշոտ Մելիք—Մուսեանէ կը ստանայ հետեւեալ զրութիւնը. «Մեմֆ կը մեռնինք. մեր ձեռքով կը կոտորենք մեր որդիները, մեր բոյրերը, հայրերն ու մայրերը, որպէսզի շան նման սովէն չսատկինք, իսկ տղամարդիկ կը կռուին իրենց միկնչեւ վերջին շունչը»:

Հակառակ Գորիսի հրամանատարութեան տատանումներուն, Գ. Նժդեհ կ'որոշէ օգնութեան հասնիլ Գողթանի: Պէտք էր փշրել այդ զաւառակի շուրջ թշնամիին ստեղծած օղակը:

Ստեղծուած կացութեան անդրադառնալով, Գ. Նժդեհ կը գրէ 11 Փետրուար 1920-ին.

«Ըստ Գողթանի ռազմական ուժերի հրամանատարի վերջին հաղորդագրութեան, կը գրէ ան Գորիսի հրամանատարութեան, յուսալքուած ու քաղցած ժողովուրդը պարզ եղանակի է սպասում որ

անցնի Ղափուշուզը, որ գաղթի, թողնի Գողթանը, որը յանուն Զանգեզուրի ինքնապաշտպանութեան՝ իր զողզոթան դարձրեց: Երէկ Քաջարանում ինձ եւ Աշոտին ներկայացան 200-ից աւելի Գողթանցիներ, որոնք նոր էին թողել Գողթանը եւ փախել սովի ձեռքից: Առաջարկեցինք վերադառնալ: Նրանք՝ լաց ու աղաղակով պատասխանեցին: Յուսադրեցինք, որ մինչեւ ամսի 18ը դրսի ուժերով պիտի անցնիմ Գողթան: Խոստացան վերադառնալ: Ինչպէս տեսնում



Լեռնահայաստանի մայրաքաղաքը՝ Գորիս

էք սովը ու իր առաջացրած մասնակի գաղթերը հասարակականապէս օր ըստ օրէ քայքայում են Գողթանը եւ սպանում նրա մարտունակութիւնը, որից մօտիկ ապագայում մեծ չափերով կարող է օգտուել թշնամին: Կրկնում եմ, մի քանի օր եւս — եւ պարտաճանաչ ու մարտնչող Գողթանը, մեր հանրապետութեան այդ Բելզեան որը երկրորդ տարին է ինչ, հաւատարիմ պահակի պէս ամենադժնդակ պայմաններում պաշտպանում է Զանգեզուրի նախադուռը — կ'ընկճուի եւ կը կորչի ընդ միշտ: Զանգեզուրի վերջնական փրկութեան ձգտողը նախ պիտի մտածէ Գողթանի մասին, որի մի բուռ

Ժողովուրդը այլևս առանց գրտի ուժերի օգնութեան չի կարող մնալ Ղափուջուղի այն կողմը: Այս անգամ էլ ինձ և Աշոտին յաջողուեց մի կերպ խափանել Գողթանի մասսայական դադիթը, որն այնքան ազիտալի պիտի լինէր Ձանդեղուրի համար: Տուածս խօսքը Գողթանցիներէ զրժեւ չեմ կարող, դա սճիր և գաւաճանութիւն կը լինէր: Վճռել եմ — մինչեւ ամսիս 18-ը — մի քանի հարիւր Ղափանցիներով անցնելու Ղափուջուղ: Եթէ չկարողացայ փրկել ժողովրդի գրութիւնը, կը մեռնիմ նրա հետ, նրա կողքին»:

ՆԺԴԵՀ

1920 թ. 11 Փետրուար

Վերոյիշեալ գրութենէն վերջ Նժդէ հետեւեալ հրամանը կ'ուզէ զօրքին.

1.— Երկրորդ տարին է ինչ, քշնամին անվերջ կրկնում է իր յարձակումները՝ Ձանգեգուրի նախադուռը պաշտպանող Գողթանի մի բուն ժողովրդի վրայ՝ այդ շրջանին տէր դառնալու ու այդպիսով միացնելու երկու մուսուլման երկիրները — Ատրբէջանն ու Տանկաստանը: Տանկէրտը տեղահանելուց յետոյ քշնամին աննախընթաց բարբարոսութեամբ սրի եւ հրի մատնեց Գողթանի կուլտուրական փառքը կազմող Ագուլիսների ուղղամիտ ազգաբնակչութիւնը: Գողթանը ցայսօր ամենադժնդակ պայմաններում իր վրայ է փաշել, գրադեցրել Նախիջեւանի եւ Օրտուրադի շրջանների բովանդակ մուսուլման ուժերին եւ այսպիսով ապահովել Ձանգեգուրը թիկունքից: Այժմ նա՝ քշնամու յամառօրէն կրկնուող յարձակումներից տնտեսապէս ու հասարակականապէս ծայր աստիճան փայփայուած, իւր վերջին համագումարում որոշել է՝ «կամ կռիւ կամ գաղթ»:

Խորապէս գիտակցելով Գողթանի ռազմագիտական խոշոր նշանակութեանը, գնահատելով նրա Ձանգեգուրի համար կատարած դերը եւ նկատի առնելով նրա արդի աննախընթաց կրիտիկական դրուրքիւնը՝ հրամայում եմ կապարգողթի ռազմական կամաւոր ուժերին, մի շարք մուսուլման գիւղերի տեղահանութեամբ եւ աւերումով Գողթանի ժողովրդի համար ստեղծել ռազմագիտական ու տնտեսական հնարաւորութիւն շարունակելու իր գոյութիւնը հայրերի երկրում:

2.— Զինակիցներ, հասել է օրը, անօրինակ հերոսութեամբ աւելի քան երկու տարի ամենադժնդակ պայմաններում Ձանգեգուրի նախադուռը պաշտպանող այն մի բուն ժողովրդի փրկութեան օրը, այն փաջանուն ժողովրդի, որն ամիսներ առաջ խորապէս գիտակցելով իր շրջանի ռազմագիտական խոշոր նշանակութիւնը, բաց նակաս յայտնեց մեզ իր որոշումը.

«Գողթանը կը մեռնի, բայց չի գաղթի»: Հասել է ժամը, երբ երկու մեծ ու բնափր հայրերիներին՝ Աստուածաշունչ Քրիստափորի

եւ Ռոստոմի արիւնաներկ ու սրբապղծուած ծննդավայրը՝ երբեմնի չճնաղ Ագուլիսները պիտի վերագրաւուին, պիտի վերականգնին իրենց շէնութեամբ ու բարոյական մեծութեամբ :

Լսեցէ՛ք, հնչել է ժամը, երբ վախկոտ էդիֆների տմարդ սրից զարնուած հազարաւոր անքաղ մեռելները ձեզնից արդար ու արիւնոտ հատուցումն են պահանջում :

Լսէ՛ք, եւ հարիւրաւոր գերուած ու լկուած հայ կանանց, որոնք ձեր գոռ արշաւի եւ ուռաների սպասումով, ձեզ հերոսութեան են կանչում :

Լսէ՛ք, եւ ինձ, ձեր դեկավարին, որը ձեզնից ծուխ, քշնամի գիւղերի հրդեհն ու քաղցր ծուխն է պահանջում, այն փրկարար ծուխը, որն այնքան բարձր ու առատ բարձրացրիք ե՛ւ պատմական Որոտանի ափերում, ե՛ւ Գեղուաձորում :

Լսէ՛ք, իմ քաջ ու հայրենասէր զինակիցներ, լսէ՛ք, լցուէ՛ք բոցով ու վրէժով առէ՛ք գէնիներդ ու յառա՛ջ : Յառա՛ջ, մեզ հետ Աստուած եւ մեծ հայորդիների՝ Քրիստափորի եւ Ռոստոմի անհանգիստ հոգիները : Յառա՛ջ :

Հրամանատար՝ ՆՓԴԵՀ

Փետր. 12, ժամը 7-ին

Անհրաժեշտ նախապատրաստութիւններէն ետք, 1920 թ. Մարտի 20-ին կը սկսի վրիժառութեան արշաւանքը դէպի Օրդուբաթ : Նժդեհն այս արշաւանքը անուանած էր «պատանակրաց» արշաւանք՝ զինուորութեան ներշնչելով այն զաղափարը, թէ իրենք կ'երթան մեռնելու իրենց հարազատներու լկանքներու համար, ուստի ամէն զինուոր պիտի զիտակցի, թէ ինքը կը տանի իր հետ իր պատանքը, թէ ինքը պիտի զոհուի : Սպարապետ Նժդեհի զօրամասը պիտի անցնէր Սիւնեաց երկրի ամենաբարձր լեռան՝ Ղափուջուղի կատարով, որ մօտ 4000 մեթր բարձր է եւ ամբողջովին ձիւնով ծածկուած : Դժուար էր վերելքը, փոթորիկ, ձիւն եւ ոչ մէկ արահետ :

Հակառակ այդ դժուարութեանց, աննկարագրելի հերոսութեամբ հայ զինուորները կ'անցնին Ղափուջուղի զազաթով եւ կը յարձակին Օրդուբաթի շրջանի թալանով եւ սպանութեամբ յղփացած թուրք զիւղերուն վրայ :

1920 թ. Յունիսի 13-ին, թիւ 23 հրամանով Սպարապետ Նժդեհը ուղեւորել Ղափանցիները եւ վառ պահել անոնց մէջ քաջութեան եւ արիւթեան ոգին, այդ զործողութեան առթիւ ի միջի այլոց կը գրէ . «Ղափանցիներ ենք մենք եւ այդ կը նշանակէ, որ, էն մե'նք էինք, որ մահաշունչ ձմեռուան կիսուն, երբ քաղցած եւ թափառ դայլն անգամ սարսափով կը մօտենայ Ղափուջուղի, Ղափանի այդ փոքր Մասիսին, մենք մեր հոգու կրակով հալեցուցինք ձիւները, մեղմացուցինք բնութեան արհաւիրքը եւ Գողթան իջանք՝

յանուն Քրիստափորի սրտէն զարնուած նուիրական ծննդավայրի թշնամու գիւղերու սեւ ու թանձր ծուխը բարձրացնելու...» :

Անօրինակ ոգեւորութեամբ եւ վրէժի թոյնով լեցուած թըշնամիի 14 գիւղերն հողի վերածուեցան. Նախիջեւանի թուրքերը չորս ծանր թնդանօթներով օգնութեան եկան, բայց առաջին ընդհարման ջարդուեցան եւ սկսան նահանջել: Գնդ. Նժդեհ իր հերոսներով կ'առաջանայ դէպի Օրտուբաթ: Բայց այդ ժամանակ ան տեղեկութիւն կը ստանայ, որ Պրինց Ղաջարն Ատրպէյճանեան զօրքերով եւ թըշնդանօթներով Կարեազինի եւ Զիրբայիլի կողմէ դալով՝ շրջապատած է Ղափանի Զէյլա գիւղը, վտանգելով իր արեւելեան թեւը:

Մինչ այդ, Նժդեհի արշաւանքը ոչ միայն սարսափի մատնած էր Օրտուբաթի թուրք բնակչութիւնը, այլեւ մտահոգութիւն պատճառած Ատրպէյճանի պետական շրջանակներուն:

Գողթանի այդ կռիւներու մասին Ատրպէյճանական թաթար թերթերէն արտատպելով, Թաւրիզ հրատարակուող «Միւսարէք» հայ թերթը իր 1920 Ապրիլ 22, թիւ 13-ին մէջ թարգմանաբար կու տար հետեւեալը. — «Օրտուբաթի հասարակական գործիչ Ասքիեր Սանը, որ կ'ապրի ներկայիս Թաւրիզ, Զուլֆայէն զրկած է հետեւեալ հեռախօսականը. — «Ներուզի առաջին օրը, Մարտ 21-ին, հայկական զինուած ուժերը, բաղկացած 10,000 հոգիէ, յարձակեցան հետեւեալ թաթարական գիւղերուն վրայ. — Դայլուն, Վանանդ, Վալաւիր, Հանան, Տիսար, Աղրի եւ Տիսա: Գրաւելով այդ գիւղերը՝ այրեցին եւ յարձակեցան Օրտուբաթի վրայ: Հեռախօսային հաղորդակցութիւնը ոչնչացուած է: Օրտուբաթի կողմէ կը լսուին ուժեղ թնդանօթաձգութեան ձայներ: Օրտուբաթի ժողովուրդը կը խնդրէ ձեզմէ օգնութիւն՝ մուսուլմաններուն ազատելու համար: Յայտնեցէք Ատրպէյճանի Կառավարութեան եւ եւրոպական պետութիւններուն ներկայացուցիչներուն ու միջոցներ ձեռք առէք պաշարուած Օրտուբաթը ազատելու համար»:

Երկրորդ հեռախօսականը կը ստացուի Զուլֆայէն. —


«Հայերը գրաւած են Օրտուբաթ տանող բոլոր ճանապարհները: Նախիջեւանէն եկած օգնական ուժը կ'աշխատի անցնիլ Օրտուբաթ, Ահարի վրայով: Շրջակայ գիւղերու ազգաբնակչութիւնը սարսափի մատնուած՝ հաւաքուած է Օրտուբաթ: Ուտեստեղէն չի ճարուիր: Դիմեցէք Պարսից Կառավարութեան եւ օգնութիւն խնդրեցէք Ղարաբաղէն: Օրտուբաթը կը ուժակոծուի: Երկու կողմէն ալ մեծ կորուստներ կան: Հայկական ուժերը կաղմուած են կանոնաւոր կառավարական զօրքերէ՝ Զանգեզուրցիներէ, Պարսկահայերէ, եւ տեղացիներէ»:

1920 Փետրուարին Պաքու կայացուցած համագումարին, Իթթիհատը ի միջի այլոց կ'անցընէր հետեւեալ որոշումը. «Պահանջել Ատրպէյճանի կառավարութենէն, որ վերջին ամենակտրուկ միջոց-

ներ ձեռք առնէ լիկուխտացիայի ենթարկելու Զանգեզուրի դէպքերը» :

Իսկ Սան-Սոյսկին, Ատրպէյճանի Արտաքին Գործոց Նախարարը, սպառնազին կը բողոքէր Հայաստանի Կառավարութեան. «Պարտք կը համարեմ Ձեզ տեղեկացնել, որ մահամետական ազգաբնակչութեան դէմ ուղղակի գործողութիւնները չզաղրեցուելու պարագային իմ կառավարութիւնս, ստիպուած վճռական միջոցներ ձեռք պիտի առնէ՝ պաշտպանելու համար իր քաղաքացիներու կեանքն ու դոյքը: Ատկէ առաջանալիք ամբողջ պատասխանատուութիւնը թողելով՝ Հայաստանի Կառավարութեան վրայ» :

«Պարլամենտի անդամ Զալիլ-Բէգ Սուլթանովը, Ջիրբայիլէն պարլամենտին կը հեռագրէ, որ Զանգեզուրի հայերուն վերջին յարձակումը սկսած է Մարտ 29-ին եւ վերջացած Ապրիլ 4-ին: Մահամետական զիւղերը բոլորովին այրած են: Թալանէ զերծ մնացածները փախած են Պարսկաստան: Պարսկաստանի մէջ մօտ 10,000 ա-



Հայ գործը՝ քնդանօթի փորձերու ժամանակ :

տրրպէյճանցի թուրքեր կը մնան անպատասպար ու անօթի: Բնակչութիւնը խուճապի եւ սոսկումի մատնուած է: Պարսիկները փոխանակ օգնելու փախստականներուն՝ կը կողոպտեն: Սուլթանովը ինքն ալ փախստականներու մէջն է» :

«Մինարէք»ի 1920 թիւ 14-ին մէջ կը կարդանք.

«Գորիսէն կը հեռագրեն, որ Ղափանի ուղղութեամբ գործող թուրք ուժերու մէջ երեւան հանուած է ատրպէյճանեան հետիոտն տիվիզիայի մասնակցութիւնը: Զանգեզուրի եւ Ղարաբաղի միջեւ գտնուած հողամասը գրաւած են հայ զիւղացիները: Գրաւուած են նաեւ Դեմիրչիլար, Գուրաթլու, Գոնդուրլու եւ Սաչմաս զիւղերը, մինչեւ Բարթաղ» :

Կռուի դաշտին մէջ շահուած իւրաքանչիւր յողթանակ փառքի էջ մը ունի վերապահած անոր, որ կռուիլ եւ մեռնիլ դիտէ: Անտարակոյս մեռնելու այդ պատրաստակամութիւնը չէ, որ հրամանատարի մը տաղանդին ամենէն անհերքելի ապացոյցը կը կազմէ, որքան շղթայադերժուած անակնկալները բոսկէսպէս դիմադրաւելու կամքը: Նժդէհ օժտուած էր երկուքով ալ:

Օրտուրաթի կռիւներուն մասին, Քաշալ Ղազար իր անտիպ յուշերուն մէջ կը պատմէ հետեւեալը.

«1920, Յունուարի վերջերը Ղափուջուղ լեռան վրայով անցայ Ղափանի Հանքերը, ներկայացայ Հ. Յ. Գաշնակցութեան տեղական մարմնին, Գնդ. Նժդէհին եւ Ազգ. Խորհուրդի անդամներուն (հոն էր նաեւ գաւառապետ Աշոտը): Նոյն օրը առաջարկեցի Նժդէհին եւ Աշոտին, կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին Գողթանի մէջ անպայման կազմակերպել ընտիր խումբ մը, որ խիստ կերպով պատժէ Օրտուրաթի եւ իր յարակից գիւղերը՝ անխտիր: Աշոտը, ձայնակցելէ առաջ, Նժդէհի համաձայնութիւնը առած էր, ուստի կը մնար Ղափանի Ազգ. Խորհուրդի կազմը: Յաջորդ օրը Հ. Յ. Գ. ի տեղւոյն կոմիտէի եւ Ազգ. Խորհուրդի խառն ժողովին կ'որոշուի.

Ա.— Գողթանի մէջ կազմակերպել ուժեղ արշաւախումբ մը Գնդ. Նժդէհի հրամանատարութեան տակ, եւ օգնական նշանակել Քաշալ Ղազարը, որ Ղափանի, Գենուաղի շրջաններէն երկու լրիւ վաշտեր կազմելով, դանոնք պիտի փոխադրէ Գողթան, միացնելու համար արշաւախումբին որպէս օգնական ոյժ:

Բ.— Մեղրի եւ Կարճեւան գիւղերու տեղական վաշտերը՝ համախմբուելով Կարճեւան, Գերասիմ Բալայեանի առաջնորդութեամբ պատրաստ պիտի մնան: Երբ արշաւախումբը կռուի սկսի, Գերասիմը Օրտուրաթի կռնակէն պիտի յառաջանայ, իր տրամադրութեան տակ ունեցած ուժերով:

Գ.— Նժդէհի ժամանումը եւ թուականի որոշումը կը ձգուի իր հայեցողութեան:

Քանի մը օր Ղափան մնալէ ետք, վերադարձայ Գողթան:

Մարտ 9-ին, Բաղարբերդէն Գնդ. Նժդէհ կը գրէ հետեւեալը.

Սիրելի Ղազար

«Ես ու Աշոտը, Ղափանի ու Գենուաղի վաշտերով միասին համախմբուած ենք Քաշարան, ամենէն ուշը մինչեւ ամսոյս 15-ը Բիստ կ'ըլլանք. սպասեցէք մեր ժամանումին»:

ՆժԴԵՀ

«Որոշեալ օրը, մայրամուտէն առաջ, եւ հակառակ օդի ու եղանակի աննպաստ ըլլալուն, Նժդէհը զինակիցներով միասին եկաւ Բիստ գիւղը: Երկու քիւղմեթր գիւղէն դուրս, Գողթանի յատուկ պատգամաւորութիւնը եւ երեք գիւղերու ժողովուրդը առանց սեռի



եւ տարիքի խտրութեան դիմաւորեցին եւ բարի գալուստ մաղթեցին հրամանատար Նժդեհին: Բխտի մէջ, տօնական եւ ցնծութեան ժամեր կ'ապրէր ժողովուրդը:

«Մարտ 19-ին, պատերազմական բոլոր իրերն ու պիտոյքները՝ թնդանօթ, գնդացիք, ձեռնառումք եւայլն, տեղափոխելով կեդրոնացուցինք Յղնայ գիւղը:

«Վաշտերը իրենց լրիւ տարադով համախմբուեցան Յղնայ գիւղի եկեղեցին: Ս. Պատարագէ եւ արարողութենէ ետք, զինուորները շղթայ կազմած կը մօտենային սկիհին, ծունկի դալով հաղորդութիւն կ'առնէին ու ապա դուրս կու գային եկեղեցիէն:

«Պատարագիչ քահանան աւուր պատշաճի քարոզէ ետք, բարի երթ եւ յաղթական վերադարձ մաղթեց իր զաւակներուն:

«Գնդ. Նժդեհ բեմ բարձրացաւ ու իր պերճախօս լեզուով զինուորները խրախուսեց ու քաջալերեց անշունչ քարերն իսկ ոտքի կանգնեցնելով: Ճառը վերջացուց սա խօսքերով. — Սիրելի՛ զինակիցներ, մենք պիտի ջանանք Ազգը պարտական թողուլ մեզի, բայց ոչ թէ մենք պարտական մնանք Ազգին: Մենք պիտի արշաւենք Օրտուրաթի եւ յարակից թաթար գիւղերու վրայ, վրէժ լուծելու մեծ յեղափոխական Գրիստափոր Միքայէլեանի ծննդավայր Ազուլիսէն եւ անխնայ պատժելու անարդ թշնամին: Օն յառաջ, օն յառաջ...:

«Մարտ 20-ին որոշուած վաշտերը իրենց տեղերը մեկնեցան:

«Ռամիսի, Ղափանի եւ Գենուաղի վաշտերը Գ. Աթաջանեանի ղեկավարութեամբ ճամբայ ելան դէպի Դոնիս, անկէ դէպի Ազուլիս:

«Յղնայ եւ Ազա գիւղերու տեղական վաշտերը միանալով, գնդապետ Սաչատուր Յարութիւնեանի առաջնորդութեամբ մայրամուտէն ետք պիտի ժամանէին Ազա եւ Սարապա-Գիլանի ամրոցը հաւաքուէին:

«Շոռուի եւ Փարաղաշաի գիւղերու տեղական վաշտերը Ռուբէնի գլխաւորութեամբ բռնեցին Օրդուրաթէն դէպի Դիսար եկող ճամբան, դէպի Ազուլիսի գիծը:

«Առաջին վաշտը եւ Փառակայ գիւղերու երկու գնդացիները շղթայ կապեցին Դիսար եւ Վանան գիւղերու դիմաց:

«Առաջին վաշտէն յիսնեակ մը, թնդանօթին որպէս պաշտպան, սպայ Պ. Պապիկեանի ղեկավարութեամբ, զիրք բռնեց Ղարա-Նօքուշ (Սեւ Բարձունք) կոչուած բլուրի դադաթը:

«Ամէն կողմէ կազմ ու պատրաստ կը սպասէին պատերազմական փողի հնչումին:

«21 Մարտի առաւօտեան Ղազարի հրամանով Գնդ. Պապիկեանը իր թնդանօթի առաջին հարուածով սկսաւ կռիւր: Անոր յաջորդեցին եւ միահամուռ ձայնակցեցան թէ գնդացիները եւ թէ զիրքերէն հրացանաձգութիւնները:

«Գեաթինը կը շարժուէր, օդը կը թնդար՝ հայ դինուորի մարտակոչերէն: Աջ ու ձախ հուռա՛ կոչելով անձնազոհ մեր մարտիկները արծուի պէս, դիրքէ դիրք դուրս գալով, կը վազէին դէպի թշնամի դիւղերը: Իսկ թնդանօթները կը ոմբակոծէին Դիսար, Վանանդ, նոյնիսկ հեռաւոր Արաքսի ափերը դանուող դիւղերը եւ դէպի Օրդուրաթ փախչող թշնամին:

«Գնդ. Նժդէհ իր կռուող ուժերով ու թնդանօթներով կը շրջէր բոլոր դիրքերը: Նոյն օրը իմ խումբս Աւերակ դիւղը մտաւ: Ժամը 12-ի մօտերը, Գնդ. Նժդէհ իր գինակիցներով եկաւ դիւղ:

« — Ղաղա՛ր, ըսաւ, թշնամին ամուր կերպով սլաշտպանած է Դանակերտը եւ իր շրջանի դիւղերը, որոնց մէկը միւսէն երեք քիլոմէթր հեռաւորութիւն ունին:

«Նժդէհի հետ խորհրդակցարար երկու խումբերով մտանք հեղեղատ եւ այգիներէն ու պարտէզներէն առաջացանք դէպի թշնամի դիւղը: Նախքան յարձակիլը, սարսափ տարածելու համար քանի մը պայթուցիկ տակառներ նետեցինք եւ կրակ տալով հրդեհեցինք դիւղի կալերը եւ յարդանոցները: Տակառներուն արձակած ահագնազոռ ձայնը ու արձագանգները շճեցուցին թշնամին: Խումբը կրակելով սկսաւ յառաջանալ դէպի դիւղը: Զինուած թշնամիի խումբերը, լըքելով դիւղն ու դիւղացին, լեղասպատառ փախան դէպի Ադուլիս, իսկ մեր քաջարի յիսնեակը, հասնելով անոնց, զնդակներու տարափի տակ առաւ դանոնք: Հազիւ քանի մը ժամ տեւեց կռիւը, դիւղը մեր ձեռքն էր արդէն:

«Առաջին յաջողութիւնը երբ վերջացաւ, կարգը եկած էր Վերի եւ Վարի Ադուլիսները դրաւելու: Երբ Գնդ. Նժդէհի հարց տուի, թէ ինչո՞վ կրնաս բացատրել կարճեւանի դիրքի լուծութիւնը, ան պատասխանեց, թէ պատճառը հասկնալու համար սուրհանգակ ուղարկած է, որ տակաւին չէ վերադարձած:

«Նժդէհ իր վաշտով անցաւ Դոնիս դիւղի հիւսիսային կողմէն դէպի Ադուլիսի թաթարական վարի թաղը, իսկ ես վաշտովս ուղիղ ճամբայով թովմաս Առաքեալի վանքին դիմացէն պիտի մտնէի քաղաք ու դայն դրաւէի: Մինչ առաջին յիսնեակը կ'առաջանար քառաժայռերու մէջ, զնդակներու տարափին տակ, ես երկրորդ յիսնակը կը փոխադրէի նոր դիրքերը: Այդ միջոցին երկու տեղերէ վերաւորուեցայ. հազիւ զիս փոխադրեցին օդնութեան խաչի առաջին կայարանը: Մինչ այդ, Նժդէհը հասաւ եւ իր կարգադրութեամբ զիս ձիով փոխադրեցին Յզնայ դիւղը, բայց վերջին անգամ ըլլալով տեսայ իմ սիրած ու փայփայած Ադուլիսը:

«Երկրորդ օրը, Մարտ 22-ին, թշնամին սկսաւ դաշտային թնդանօթներով քանի մը ուժեր տեղացնել Ազա դիւղի եւ Խարապա-Գիլանի ամբոցները: 1920 Մարտ 25-ին Ղալիանի-Հանքերէն

սուրհանդակի միջոցաւ ստացանք Գնդ. Ռուբէն Նարինեանի հետեւեալ երկտողը.

Սիրելի Նժդեհ,

«Թշնամին մեծ ուժերով կ'առաջանայ: Թաթարները վերադարձան իրենց նախկին դիրքերը: Ազարակ-Ձէյվա գիւղերու գրութիւնը օրհասական է: Կը խնդրեմ շտապեցէք մեզ շուտով հասնելու, բերելով ձեզի հետ թարմ ուժեր»:



Գ. Նժդեհ եւ Գնդ. Ռուբէն Նարինեան (այժմ ողջ, Թեհրան)

«Երկու ժամ ետք հասաւ երկրորդ սուրհանդակը այս անգամ բերելով Ազգ. Սորհուրդի նամակը՝ հրամանատար Նժդեհին.

«Քու սիրած Ղափանը ձեռքէ պիտի երթայ: Այս գիշեր Ձէյվան պիտի յանձնուի թաթարներուն, Ձէյվանի յանձնուելէն ետք, պարզ է, որ Մողէս, Ուժանի, Եղաւարդ եւ Ազարակն ալ, այսօր

կամ վաղը սխալի յանձնուին: Հրամանատարութիւն չկայ, զինուորները չեն կռուիր, ի սէր այն քու նեղութիւններուդ, միակ դուն ես, որ կրնաս մեզ փրկել եւ մեր հայրենիքը. հասիր մեզ. մինչեւ 3 օր էթէ հոս չհասնիս, քու սիրած Ղափանը կորած կը տեսնես»:

Օրդուրաթի դործողութիւնները դադրեցնելով՝ Սպարապետ Նժդեհ կը շտապէ Ղափանի օգնութեան:

Մարտ 26ին Փառակայ դիւղի ճամբով, Ղափուջուղի վրայով Գնդ. Նժդեհ իր վաշտերով միասին կ'անցնի Բաղարբերդ, այնտեղէն Ղափան:

Քանի մը օր ետք Գնդ. Գարեգին Նժդեհ հետեւեալ նամակը կ'ուղարկէ Քաչալ Ղազարին. —

Սիրելի Ղազար, (*)

«Նախ կը ցաւիմ, որ իրարմէ բաժնուեցանք: Երկրորդ՝ մենք հասանք այն ժամանակ, որ Զէյլան իյնալու վրայ էր, մնացած դիւղերը դադրեցնել սկսած էին. երբ դիրքերու մէջ լսուեցաւ եւ տարածուեցաւ մեր ներկայութիւնը, աննախընթաց էր ողբերգութիւնն ու ուրախութիւնը:

«Ապրիլ 1-ի լուսաբացին սկսանք հակայարձակողականը: Մեր զինուորները դուրս գրին թշնամի դօրքերը: Հարթիչ եւ Սուսանի սարերու վրայէն թշնամի դիւղերու վրայ կը տեղային փամփուշտները՝ կարկուտի նման: Նուրի Փաշայի եւ Պրինց-Ղաջարի ուժերը կորսընցուցին իրենց բարոյական կորովը եւ նահանջեցին Դոնտարլու եւ Խոջահան: Որոշեցինք մէջտեղէն վերցնել Զանգեզուրի եւ Ղափանի միջեւ դանուող թաթարական սեպը — մօտ հարիւր դիւղ. եւ այսպէս կենդանի կապ ստեղծել երկու հայկական մասերու հետ:

«Կռուի երրորդ օրը, վերջին կատաղի յարձակումով մը դրաւեցինք Որոտանի ձախ ափի վրայ դանուող դիւղը: Յաճախ կը դըրեմ, քոյդ՝

ՆժԴԵՀ»

Ղափանի օգնութեան կը հասնի նաեւ Զանգեզուրի զօրամասը, որ անցնելով թշնամիի թիկունքը՝ երեկոյեան դէմ կը սկսի թըշնամիի դիրքերը ոմբակոծել եւ առաւօտեան ընդհանուր յարձակման գիմելով՝ սոսկալի ջարդ կու տան ատրպէյճանեան զօրամասերուն, որոնք կը նահանջեն դէպի Զիրբայիլ:

Բայց անընդհատ կռիւները ասով չեն վերջանար: 1920 թ. Մարտի 23-ին կը սկսին նոր կռիւներ Ղարաբաղի մէջ, որովհետեւ Ատրպէյճանի իշխանութիւնը կ'ուզէ զինաթափ ընել ժողովուրդը, կլանել Ղարաբաղը եւ ասլա Զանգեզուրի անընկճելի կամքը խորտակել:

(*) Քաչալ Ղազարի անտիպ յուշերէն:

Թէ՛ Ղարաբաղի եւ թէ՛ Զանգեզուրի մէջ միաժամանակ կը սկսին երկարատեւ կռիւներ, այդ կռիւներէն կախում ունէր տեղւոյն հայ ազգարնակչութեան ճակատագիրը: Ատրպէյճանի կառավարութիւնը իր բոլոր կանոնաւոր ուժերը եւ կամաւորական խումբերը ուղարկած էր Ղարաբաղի դէմ, միաժամանակ ոտքի բարձրացրնելով նաեւ Բարգուշատի եւ Հաքեարուի շրջանի թրքութիւնը: Իսկ հայկական զօրքը կազմուած էր միայն զինուած գիւղացիութենէ: Գնդապետ Նժդեհին վերապահուած էր իր ծրագրի վերջին, բայց եւ խիստ դժուարին մասի լուծումը, ուր ան ցոյց տուաւ իր ռազ-



Զաֆար Եօլեան (այժմ ռզ, Թեհրան)

մական տաղանդը, իր հեռատեսութիւնն ու կազմակերպչական բարձրը ոգին: Որոշեց մաքրել Բարգուշատի շրջանը եւ Մարտ 23-ին դիմելով յարձակման՝ ամենայն յաջողութեամբ իրազործեց իր ծրագիրը, զրաւեց թրքական մօտ 70—80 գիւղեր եւ միանգամայն մաքրեց Բարգուշատի եւ Արաքսի խառնարանէն մինչեւ Օրտուրաթի շրջանը:

Այսպիսի անձնուիրութեամբ 1919—20 թուականներուն Գրնդապետ Նժդեհը կրցաւ հարիւրաւոր թուրք զիւղերով շրջապատուած Ղափանի, Գենուաղի եւ Գողթանի քանի մը տասնեակ հայաբընակ զիւղերը արիւնահեղ կռիւներու ժամանակ ոչ միայն զերծ պահել աւերածութենէ, այլ եւ ամբողջ այդ շրջանները մաքրել թըշնամիներէն եւ միանգամայն ապահովել հայ զիւղացիի Փիզիքական գոյութիւնը: Հայակեր Գեղուայ եւ Օխշու ձորերը, արիւնաներկ Բարգուշատն ու Հաքեարուն միանգամայն մաքրեց աւաղակարարոյ եւ նենգ թշնամիներէն, Պրինց Ղաջարի եւ բաղմաթիւ տաճիկ փաշաներու զօրքերը ջարդեց Ղափանի եւ Գենուաղի դռներուն մօտ եւ փախցուց զիրենք:

1920 Ապրիլ 22-ին Գորիսի մէջ տեղի կ'ունենայ զօրահանդէս մը. «Հրասարակը ամբողջապէս լեցուած էր երկսեռ հասարակութեամբ, կը զրէ Երեւանի «Յառաջ»ի թղթակիցը. վերջին փառաւոր յաղթութիւններու առթիւ զօրքին շնորհակալական խօսք ըրին Չանդեղուրի զինուորական կոմիսար Ա. Մելիք-Եօլջեանը, Հայաստանի պարլամենտի անդամ Չաքար Եօլեանը եւ Չանդեղուրի հերոս Գարեգին Նժդեհը: Ղափանի հայ աշխատաւորութեան կողմէ սիրելի հերոսին տրուեցաւ դրօշակ մը, անոր կատարած վերջին քաջազործութիւններուն առթիւ»:

Ա. Մելիք-Եօլջեան Պաքուի կռիւներու ընթացքին ցոյց տուած գործունէութեան համար իր ստացած Գէորգիեւսկի խաչը անձամբ կախեց Նժդեհի կուրծքէն:

ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՄԷՋ

Ռուսական 11-րդ զօրաբանակը, բոլշեւիզմի անուան տակ, իբրեւ թէ դասակարգային պայքարի համար, 1920 Մայիսի սկիզբը դըրեթէ առանց կռուի կը խուժէ Պաքու: Ատրպէյճանի հանրապետութիւնը փաստօրէն կը կորսնցնէ իր անկախութիւնը: Քաղաքական որոշ նկատումներով, ռուս բոլշեւիկները անհրաժեշտ կը նկատէին, արեւելքի մահմեդականութեան համակրանքը դրաւելու համար, նոր տապալած հանրապետութեան այնպիսի ձեւ մը տալ, որ միամիտ ազգաբնակչութիւնը կարծէ, թէ դեռ կը շարունակուի իր անկախու-

Թիւնը. ուստի կը յայտարարեն Ատրպէյճանի Խորհրդային Հանրապետութիւնը:

Այդ անուանակոչումը զուտ անուանական էր, քանի որ հակառակ բոլշեւիկանալուն, Ատրպէյճանը շարունակեց իր նախկին քաղաքականութիւնը, այս անգամ Կարմիր Բանակի հովանաւորութեամբ եւ աջակցութեամբ:

Մուսաւաթական Ատրպէյճանը անյաջող փորձեր կատարած էր Վրաստանէն խլելու Զաքաթայի շրջանը, ինչպէս նաեւ Հայաստանէն՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը:

Կարմիր ուսերը ատրպէյճանցիներու դործօն օժանդակութեամբ 1920 Մայիսին գրաւեցին Զաքաթայի շրջանը, դայն յայտարարելով չէզոք հողամաս, երկու կողմերուն արգիլելով հոն զօրք մտցնել:

Նոյն ամսոյն վերջերը նոյն վիճակին կ'ենթարկեն նաեւ Հայկական Ղարաբաղը, ուր ամիսներ առաջ, բոլշեւիկներէն մեծաքանակ զուժարներ ստանալով, սկսած էին գործել բոլշեւիզմով տարուած, արծաթասէր, վրիժառութեան թոյնով լեցուած եւ դաւաճան տեղացի գործակալները: Առանց որեւէ դատի եւ քննութեան կը կացինահարեն, տմարդի ձեւով կը սպաննեն Ղարաբաղի հայ զիւղացիութեան շահերու երկար տարիներ նուիրուած գործիչները. հարիւրաւոր մըտաւորական ուժեր կը տանին Պաքու, Գանձակ ու Շուշի եւ կը բանտարկեն:

Քայլ առ քայլ հետեւելով իր նենգամիտ ծրագրին, սովետական իշխանութիւնը կ'որոշէ նաեւ գրաւել Զանգեզուրը, Սիսեանը, Ղափանն ու Գենուազը, ուր նախապէս չհամարձակեցան ոտք դնել թուրք զօրքերն ու Մուսաւաթ Ատրպէյճանը: Դիմելով իրենց նուիրագործած միջոցին՝ բոլշեւիկները նախ մեծ թիւով գործակալներ կ'ուղարկեն վերոյիշեալ վայրերը եւ կը սկսին սուտ քարոզչութեան, թէ բոլշեւիկ ուսը իր հետ կը բերէ խաղաղութիւն, կեանքի բարիքներ, քաղաքական ազատութիւն եւ աշխատաւոր զիւղացիութեան՝ իշխանութիւն: Այս բոլորի նպատակն էր ներսէն ապստամբութիւն առաջացնել, բոլշեւիկ զօրքերուն Ղարաբաղէն Զանգեզուր մտնելու առիթ ստեղծելով: Եւ երբ սեւահոգի քարոզիչները իրենց ստանձնած պարտականութիւնը իրագործած էին, սովետական իշխանութիւնը Յունիսի 29-ին 15 հոգիէ բաղկացած պատուիրակութիւն մը կը ղրկէ Զանգեզուրի Տեղ գիւղը՝ բանակցութիւն վարելու համար հայ զիւղացիութեան ներկայացուցիչներուն հետ(*): Բայց, իրականութեան մէջ, ատիկա ոչ թէ բանակցութեան համար զրկուած պատուիրա-

(*) Զարուղի ռազմաճակատի հրամանատար Եապոնի հազորդումին համաձայն, 15 հոգիէ բաղկացած պատուիրակութեան մէկը պարսկահայատակ հայ էր, մէկը՝ լեհ, իսկ 13 հոգի՝ թուրք:

կուլթիւն էր, այլ լրտեսութիւն կատարելու պաշտօն ունեցող խումբ մը:

Նոյն օրը Տեղ գիւղը կը ժամանեն Չանդեզուրի քաղաքացիական իշխանութեան կողմէ երկու ներկայացուցիչներ: Սովետական պատուիրակութիւնը կը յայտնէ, որ ինքը լիազօրուած է 11րդ բանակի եւ սովետական իշխանութեան կողմէ յայտարարելու, թէ սովետական իշխանութիւնը պիտի տարածուի նաեւ Չանդեզուրի մէջ: Չանդեզուրի ներկայացուցիչները կը բացատրեն, որ հայ գիւղացիութիւնը չի ցանկար սովետական կարգերը եւ զէնքի ուժով կը պաշտպանէ իր ազատութիւնը:

Դեռ բանակցութիւնները չվերջացած՝ բուլեւիկ կեղծ պատուիրակները գաղտնի կը հեռանան Տեղ գիւղէն եւ կը վերադառնան իրենց զօրամասերուն մօտ: 5 Յունիսի գիշերուան ժամը 11-ին բուլեւիկները իրենց գործակալներու միջոցաւ տեղեկանալով իրերու կացութեան, թէ հայկական զօրամասեր դրեթէ չկան Չանդեզուրի մէջ, կ'առաջանան դէպի Չարուղի եւ յանկարծակիի բերելով՝ կը ձերբակալեն ռազմաճակատի քանի մը հայ սպաները, կը շրջապատեն իբր թէ հակայեղափոխականներու վայրը հանդիսացող Կոռնձոր գիւղը, ապա հետիոտն եւ ձիաւոր զօրամասով ու 11 զնդացիներով կը սկսին կոտորածի: Ոմանք կը փախչին եւ կ'ապաստանին լեռները, իսկ ուրիշներ կը սպաննուին (*): Գիւղը թալանի եւ կողոպուտի կ'ենթարկուի: Հայկական փոքրաթիւ զօրամասը հրաման կը ստանայ դիմադրելու բուլեւիկներուն, բայց Քարաչէնի մօտ կարճ ընդհանրումէ մը ետք կը ստիպուի տեղի տալ թշնամիի թիւին առջեւ եւ քաշուիլ Դարալագեազ, երբ մանաւանդ կը նկատուի, որ այդ կողմի հայ գիւղացիութիւնը անտարբեր կը դռնուի ռուս բուլեւիկներու դէմ վարած կռուին հանդէպ:

Յունիս 5-ին Գորիս կը մտնէ 11-րդ կարմիր զօրաբանակի 28-րդ հրացանաձիգ զօրաբաժնի 84-րդ զօրամասը՝ համապատասխան թիւով հեծելազօրքով, թնդանօթներով, եւ հարիւրաւոր գնդացիներով: Ժամանակ մը ետք Չանդեզուր կը հասնին նաեւ 83րդ զօրաբաժնի 247, 248 եւ 249 գունդերը:

Չանդեզուրը գրաւուած համարելով՝ բուլեւիկները կը հետեւին դէպի Դարալագեազ նահանջող հայկական զօրամասին եւ կը գըրաւեն Սիսեանը՝ մինչեւ Բաղարչայի արեւմտեան լեռնաշղթան, ուրկէ կապ կը հաստատեն Նախիջեւանի թրքութեան եւ Տաճկաստանի հետ:

Ժամանակաւորապէս ապահովելով իրենց աջ թեւը եւ Նախիջեւանի վրայով կապ հաստատելով Քեմալ Փաշայի հետ՝ բուլեւիկները մասնաւոր ուշադրութիւն կը դարձնեն իրենց ձախ թեւին եւ՝ կը յա-

(*) «ԱԶԱՏ ՍԻՒՆԻՒՒՄ», էջ 19, 1921 (Լեռ. Հայկ. կառ. Դիւան, քիւ 51):

Ջողին գրաւել Ղափանը, Գենուազն ու Գողթանը եւ այդպիսով ընդ-
գիմադիր ուժերէն մաքրել ամբողջ Սիւնեաց աշխարհը:

Յուլիս 8-ին բողեւիկները կը սկսին առաջանալ դէպի Ղափան,
ուր այդ ժամանակ կը գտնուէր Գնդապետ Նժդեհը:

Գնդապետ Նժդեհ չէր ընկճուած այս ստեղծուած դրութենէն
եւ կ'որոշէ մնալ իր սիրելի ժողովուրդին մէջ, անոր հետ բաժնելով
անոր դառնութիւնները: Բողեւիկները առաջ անցնելով՝ կը հասնին
Ղափանի վերին Խոտանան գիւղը, ուր կը հանդիպին գիւղացիութեան
ուժեղ գիմադրութեան եւ ստիպուած կ'ըլլան կանգ առնել:

Սովետական զօրքերու զինուորական կոմիսար Իւանովը պաշ-
տօնական դրութեամբ կը յայտնէ Գնդապետ Նժդեհին եւ անոր միջո-
ցաւ Ղափանի հայ ժողովուրդին, Ղարաբաղն ու Զանգեզուրը գրաւե-
լու եւ ամէնուրեք ռեւկոմներ կազմակերպելու մասին. միաժամա-
նակ, կը շեշտէ նաեւ բողեւիկներու նպատակը՝ գրաւել Օրդուբաթ,
— Զուլֆան, որ կրնայ հայ ազգարնակչութեան սրտին շատ մօտ ըլ-
լալ եւ այսպիսով մոլորեցնել պարզամիտ գիւղացիութիւնը, որպէսզի
կարմիրները կարենան առանց արիւնահեղութեան իրենց հեռուոր
նպատակին հասնիլ:

Ահա այդ դրութեան պատճէնը.

Գնդապետ Նժդեհին

Արդէն Ղարաբաղ — Զանգեզուր մտած է կարմիր բանակը, բո-
լոր տեղերը կազմակերպուած են ռեւկոմներ: Կը հրամայեմ այդ առ-
թիւ յայտարարել ժողովուրդին եւ նամբայ տալ վերին Խոտանանի
մէջ գտնուող մեր գօրամասին անցնելու Մեղրիի վրայով Օրդուբաթ
— Զուլֆա:

Զօրամասի գինուորական կոմիսար
Ի. Ա. Ն. Ո. Վ.

10 Յուլիսի 1920 թ. վ. Խոտանան

Գնդապետ Նժդեհ ծանօթ ըլլալով բողեւիկներու դործելակեր-
պին եւ անոնց խարերայ ու ստոր արարքներուն, լաւ ըմբռնելով, որ
բողեւիկները ամենէն աւելի քարողչութեամբ եւ ժողովրդային ա-
պրտամբութիւն յառաջացնելով աժանագին յաղթութիւն կը տա-
նին եւ յենլով հայ գիւղացիութեան ազատ կամքի արտայայտութեան
վրայ՝ ի պատասխան այդ դրութեան, հետեւեալ վերջնագիրը կը ներ-
կայացնէ կարմիրներու զինուորական պետին:

Խոտանանի մէջ գտնուող կարմիրներու գօրամասի պետին.
Կապարգողթի գիւղացիական ներկայացուցչական խորհուրդը


(*) Լեռ. Զինուորական գլխաւոր շտաբի Արխիւ, թիւ 135:

հրամայած է ինձի ուղարկելու Ձեզ վերջնագիր՝ վաղը, ամսոյս 13-ին մինչեւ ժամը 7-ը թողուլ Ղափանի սահմանները, հակառակ դէպքի ստիպուած կ'ըլլամ անցնելու յարձակողականի եւ գէնֆի ուժով վանելու ձեզ:

Կապարգողթի ռազմական ուժերու հրամանատար
Ն Փ Դ Ե Հ

12 Յուլիսի ժամը 9-ին երեկոյեան
Ղափանի Հանգեր:

Այս վերջնագիրը միանգամայն անսպասելի էր կարմիրներուն համար, ուստի մինչեւ նշանակուած ժամանակի լրանալը՝ նոյն օրը ժամը 5-ին անոնք կը թողուն Սոտանան՝ Բաղուարդանի ձորով եւ ինչարեւի բարձունքներով կը փախին դէպի Չանգեղուր: Անոնք իրենց հետ կը տանին գնդապետ Նժդեհի վերջնագիրը տանող պատուիրակ Սմբատ րէկ Մելիք-Ստեփանեանը, զոր Պաքու կ'աքսորեն:



Ղ Ա Փ Ա Ն

— «Կարմիրները վճռականապէս որոշեցին անողոք ըլլալ դէպի Սիւնիքը (*) եւ հայ ապստամբ դիւղացիութիւնը ու այնպիսի տաժանելի միջոցներու դիմել, որ երբեք հնարաւոր չըլլայ ապստամբութեան մասին անգամ մտածել: Այդ նպատակին հասնելու համար նախ եւ առաջ պէտք էր գրաւել Ղափանն ու Գենուազը եւ մէջտեղէն վերցնել գնդապետ Նժդեհին, որ իր խիզախ գործելակերպով հան-

(*) Պատմական Սիւնեաց նահանգի մէջ կը մտնեն բուն Չանգեղուրը, Սիսեանը, Ղափանը, Գենուազն ու Գողթանի շրջանները:

զիստ չէր տար կարմիրներուն: Թշնամին յանկարծակիի բերելու համար, բողեւելի հայերն ու ռուսերը այստեղ եւս զիմած են իրենց եղբիտական միջոցին, նախ մեծամեծ դումարներով դադանի գործակալներ եւ լրտեսներ կը մտնեն Ղափան, Գենուաղ եւ յետոյ Օգոստոսի վերջերը 248, 249, 250, 251 եւ 252 ռուսական դունդերով կազմուած զօրամաս մը՝ առաջ կը շարժուի դէպի Ղափան - Գենուաղ ամէն կողմէ օղակելու, որպէսզի փրկութեան ոչ մէկ յոյս, ոչ մէկ ճանապարհ բաց չմնայ» (*): Ուստի բողեւելիներու կարգադրութեամբ նախիջեւանի եւ Օրդուրաթի կողմէ ռուսերէ, թուրքերէ եւ թուրք ասկերներէ բաղկացած զօրամաս մը կ'առաջանայ դէպի Գենուաղի Կարճեւան գիւղը. միւս կողմէ ռուսերն ու թուրքերը Ջիրբայէլէն առաջ գալով՝ կը յարձակին Շիւանիճորի վրայ, իսկ երրորդ կողմէ ռուսերն ու հայ դաւաճանները կը շրջապատեն Կալեր գիւղի ուղղութեամբ ինկած տարածութիւնը: Կռիւր ընդհատումներով կը տեւէ քանի մը շաբաթ, թշնամիները յարձակման կը զիմեն Ուրբաթ օրերը առաւօտ կանուխ եւ կռիւր երեք օր անընդհատ կը շարունակուի. Կիրակի, տեղի կու տան ու կը նահանջեն: Անհաւատար էր այդ կռիւր եւ ճակատազրական. մէկը կը կռուէր հարիւրի դէմ. քանի մը հայկական փոքր գիւղեր՝ երեք կողմէ շրջապատուած թշնամիներով, հաղորդակցութեան ճամբայ չունէին եւ անողոք թշնամիին դէմ իրենց ամբողջ ուժերը լարած էին: Ջարդուած թշնամին անհամար դիակներ փռած էր Ղափանի եւ Գենուաղի սարերուն վրայ եւ ձորերուն մէջ, բայց նորանոր եւ թարմ ուժեր ստանալով՝ կրկին առաջ կ'անցնէր: Երկարատեւ կռիւր յուսալքում առաջ կը բերէ ժողովրդական զինուած ուժերուն մէջ: Դուրսէն օգնութեան ոչ մէկ յոյս կար. Ղափանի գիւղացիութիւնը պարպելով վերջին փամփուշտը՝ ստիպուած էր զէնքը վար դնել եւ թոյլ տալ ռուսական զօրքերուն իր արեամբ ողողած շրջանը մտնել: Միայն մէկն էր մնացած անընկճելի եւ անվհատ, որ վերջին բոպէին իր հաւատարիմ ընկերներով եւ Ղափանի զինուած փոքրաթիւ ուժերով կը քաշուի Սուստուպ լեռը՝ հաւատալով իր սուրբ գործի յաջողութեան եւ վերջնական յաղթանակին: Գնդապետ Նժդեհն էր ան:

Բողեւելիները խաբերայութեամբ, դաւադրութեամբ ու զէնքի ուժով տիրելով Զանգեզուրին, Սիսեանին եւ Ղափանին, ի բաց առեալ միայն Շիրկերտ գիւղէն, առաջ կը բերեն բաւական մեծ թիւով հաստատութիւններ, ուր պաշտօններ կը յանձնեն իրենց տեսակէտով ամենամասնաւոր մարդոց: Գործիսի մէջ կը կազմեն Զանգեզուրի դաւառական Յեղկողմը իր բոլոր բաժանմունքներով. արտակարգ յանձնաժողով (Չեկա), որ իր տեսանելի եւ անտեսանելի բազմաթիւ գործակալներուն միջոցով ամենախիստ հսկողութեան

(*) «ԱՐՆՈՏ ԳԻՐՔ», էջ 8:

տակ կ'առնէ ամբողջ բնակչութիւնը եւ մասնաւորաբար ոչ-համայնավարները :

Գորիսի մէջ կը գրաւեն տպարանը, ելեկտրակայանը, բազմաթիւ մասնաւոր տուներ, ուր կը գետեղեն իրենց անհամար հաստատութիւններն ու զինուորականները : Թուրք, հայ եւ ռուս բոլշեւիկները իրենց գործունէութեան կը սկսին միթիւնկներով, որոնք պարբերաբար կը կրկնուէին Գորիս քաղաքի եւ շրջակայ գիւղերու մէջ : Կ'ըլլան բարօրութեան խոստումներ եւ կը խօսին բոլոր ազգերու եւ ժողովուրդներու միջեւ համերաշխութեան մասին, ապատութիւն, տնտեսական ապահով եւ բարւոք կեանք կը խոստանան : Նախկին Ռուսաստանի միջերջներու առատութեան երազով տոչորուող հայ աշխատաւորութեան ինչե՛ր չեն խոստանար : Ու ամէն տեղ կոչեր կը ցրուեն որպէսզի խեղճ ժողովուրդը խազի բերեն : Հոս առաջ կը բերենք, Զանդեղուրի ռեւիոմի կոչերէն մէկը, որ հրատարակուած է 1920 թ. Հոկտեմբերին, որպէս նմոյշ .

«Զանդեղուրի չքաւոր գիւղացիներուն

Կ Ո Չ

«Ընկեր գիւղացիներ,

«Կոմունիստական (բոլշեւիկեան) կուսակցութիւնը միակ կուսակցութիւնն է, որ կը պաշտպանէ ձեր շահերը : Խորհրդային իշխանութիւնն է, որ կը կռուի ձեզ կեղեքողներու, հարստահարողներու, ձեր արիւնը ծծողներու դէմ . բանուորութիւնը ձեր միակ գինակիցն է ու բարեկամը :

«Ընկերներ, բանուորութիւնը, անոր առաջնորդ կոմունիստական կուսակցութիւնը շատ լաւ գիտէ, որ դուք վատ դրութեան մէջ էք, գիտէ, որ մերկ էք, չոր չունիք, նաւթ չունիք, աղ չունիք, մէկ խօսքով ձեր տնտեսութիւնը քանի կ'երթայ կը քայքայուի . ձեր դրութիւնը քանի կ'երթայ կը վատանայ . . . :

«Հաստափորներէն կաշառուած ազնւոնները ձեր մէջ խռովութիւն կը սերմանեն մեր դէմ, թոյլ շտալով բանուորութեան, որ ան ձեզ համար անհրաժեշտ դործիքներ ու միջերջներ պատրաստէ :

«Ընկեր գիւղացիներ, դուք ալ լաւ պիտի ճանչնաք ձեր իսկական թշնամիները . պիտի կռուիք հարուստներու, անոնցմէ կաշառուած գանազան մութ անձնաւորութիւններու դէմ, որպէսզի բանուորութիւնը հանգիստ կարողանայ ձեզ օգնել իր ունեցած միջերջներով, իսկ դուք ձեր ունեցած հացով՝ բանուորներուն : Միայն բանուորներու եւ չքաւոր գիւղացիներու միութեան մէջ է մեր փրկութիւնը : Հակառակ դէպքին կը ստացուի այն, ինչ հիմա մեր գաւառի մէջ է, մենք կը մնանք սոված ու մերկ :

«Ընկեր գիւղացիներ, կազմուած է «գիւղացիի շաբաթ» : Ամբողջ շաբթուայ մը ընթացքին բանուորութիւնն ամենայն կերպ պէտք

է օգնէ գիւղացիներուն : Այդ շարժումայ ընթացքին գիւղացիները ճրի , առանց որեւէ վճարի , կը ստանան աղ , նաւթ , շոր , լուցկի , հնարաւորութեան սահմանին մէջ կը շինուին ճամբաներ , կը վերաշինուին ձեր երկրագործական գործիքները . . . :

Զանգեգուրի Ռեւկոմի նախագահ՝
ԵՐ . ԲԱԿՈՒՆՑ

Զանգեգուրի «Գիւղացիի Շաբաթ»ը կազմակերպող
Կոմիսիայի նախագահ՝ Ա . ՇԱՀԳԵԱԼԴԵԱՆ

Գիւղացիներու տնտեսական կեանքը խօսքով ապահովելէ ետք , բոլշեւիկները ազգերու համերաշխութեան դադափարն եւս կ'իրագործեն՝ Գորիս հրաւիրելով նախկին լքեալ գիւղերու թուրք ազգաբնակչութիւնը : Նախիջեւանի վրայով Գորիս կը հասնին նաեւ թուրք քանի մը գործիչներ , որոնք կը մասնակցէին Պաքուի բոլշեւիկեան ընդհանուր ժողովին : Բացի անոնցմէ , տիրահռչակ Սալիլ-Բէկը Մուկուլայէն կը ստանայ 6 փութ արծաթ ու ոսկի եւ Գորիսի եւ Նախիջեւանի վրայով կ'անցնի թուրքիա , իբր թէ ուսական դրամով կարմրրցնելու նաեւ Քեմալ վաչայի հայրենիքը :

Քանի մը վաճառականներ միամտութեամբ հաւատացած բոլշեւիկներու ճառերուն՝ Գորիսէն կը մեկնին Պաքու եւ Ռուսիա՝ մըթերք եւ այլ ապրանք բերելու , բայց ձեռնունայն եւ կորագլուխ կը վերադառնան երբ կը տեսնեն , որ սո՛ւնտական իշխանութեան եւ ոչ մէկ քաղաքէն արտածելու մթերք չկայ եւ ինքը Ռուսիան մեծ կարիք ունի մթերքներու ներածման . . . :

Կենսամթերքներու խոստումով կերակրող կարմիրները Զանգեգուր , Սիսեան եւ Ղափան կը մտցնեն քանի մը զօրամասեր , մօտ 12.000 հոգի եւ դանազան հաստատութիւններու մէջ ծառայող ճրիակերներու անազին վոհմակ մը : Բայց փոխանակ Ռուսիայէն եւ Պաքուէն մթերք եւ հազուատեղէն բերելու , ամբողջ բեռը կը ծանրանայ տեղական ազգաբնակչութեան վրայ : Գորիսի գաւառական Յեղկոմի որոշումով իւրաքանչիւր գիւղ պէտք է պահանջուած մթերքն ուղարկէր Գորիս , առանց որեւէ առարկութեան . հակառակողներուն ամբողջ ունեցածը կը զրաւուէր եւ զիրենք «ժողովրդային դատ»ի կը յանձնէին :

Գիւղական Ռեւկոմը գործի անցնելով , կը սկսի գիւղացիի կանոնաւորած տնտեսութեան քայքայումը : Իւրաքանչիւր ծխատէր , ունեւոր թէ աղքատ , պարտաւոր էր իրեն վիճակուած մթերքը տալ . եթէ չունէր , պարտաւոր էր ուրիշէ մը գտնել եւ պահանջը լրացունել . . . : Դժոխային պայմաններ ստեղծելէ ետք , երբ բնակչութեան թէ՛ Փիղքական եւ թէ՛ մտաւոր դոյութեան ամբողջ իրաւունքն իրենց ձեռքը առած էին , բոլշեւիկները եւ ժողովուրդը խզուեցան դուրսի աշխարհէն , նոյնիսկ իրենց հարազատ մայր հայրենիքէն : Բը-

նակչութեան մեծ մասը զինաթափ էր ու գրաւուած ուղղամթերքով զինած էին ուղղափառ, հաւատարիմ կոմունիստներն ու կամակատարները: (*)

1920 թ. Նոյեմբեր ամսոյն, ուսերու հետ միասին կը դործէ կարմիր անուան տակ Գորիս եկած թուրք զինուորներու Ց-րդ գունդը, մօտ 1200 հոգի, որոնք կանանց գլխու եւ օրիորդներու կուրծքի ոսկի եւ արծաթէ զարդեղէնով կը զարդարէին իրենց ձիերու կուրծքը: Թէ՛ Նոյեմբեր 3, եւ թէ՛ 21-ին Գորիսէն նահանջելու ընթացքին բռնաբարութիւնները խորամանկութեամբ կը թալանէին եզ, ձի, կով, էջ, ջորի եւ զանազան իրեր: Այս իրողութեան իբրեւ ապացոյց կրնայ ծառայել տխրահրոշակ Ա. Ղարազէօղովի միջնորդութիւնը՝ բռնաբարութիւնը հեծելազօրքի ձեռքով թալանուած անասունները վերադարձնելու գրաւոր փաստաթուղթը.

«84-րդ բրիգադայի պետին

(Գորիս)

«Սնձորեսկ զիւղի ժողովուրդը կը զանգատի ինձ, որ մեր զօրքերը Գորիսի վրայ յարձակելու ժամանակ, մեր հեծելազօրքը լեռներէն քշել-տարել է խնձորեսկներու անասունները: Սնձորեսկ զիւղը միշտ ծառայած է իբրեւ նեցուկ խորհրդային իշխանութեան եւ դաշնակներու դէմ եղած է: Տեղ զիւղի վրայ յարձակելու ժամանակ քիչ խնձորեսկներ չեն օգնած. կը խնդրեմ կարգադրել վերադարձնելու անասունները խնձորեսկներուն. այլեւ մեր հեծելազօրքի այդպիսի վարուեցողութիւնը կրնայ մեզմէ հեռացնել խնձորեսկները:

11-րդ Բանակի Զինուորա-յեղափոխական

Խորհրդի լիազօր եւ Ղարաբաղի ու Զանգեզուրի արտակարգ կոմիսար Ա. ՂԱՐԱԳԷՕՁՈՎ»

1920 թ.

Ղափանի տիրանալէ ետք, նկատի ունենալով որ այդ ժողովուրդը երկար չի կրնար հաշտուիլ նոր հասարակակարգին հետ եւ կանուխ թէ ուշ պիտի թօթափէ իր լուծը՝ ձեռք մեկնելով իր հրա-

(*) Մթերքներ ժողովելու ձեռք նկատմամբ բաւական է անոնց հրամաններէն նմոյշ մը տալ. Զանգեզուրի գաւառական Ռեւկոմը Սիսեանի միլիցիայետին 10 Սեպտ. 1920 թ. թիւ 179 գրութեամբ կը հրահանգէ հետեւեալը. «Կը հրամայեմ 24 ժամուան ընթացքին Սիսեանէն հաւաքել եւ փոխադրել Գորիս 18.000 փունտ ցորեն, նոյնչափ գարի, 800 ոչխար եւ 70 հատ գրաստ: Ընդդիմացողներուն գնդակահարել եւ հազորդագրել:

Զանգեզուրի գաւառի Ռեւկոմ»:

(Բռնաբարութեան գրաւուած փաստաթղթեր: Տես գլխուոր շտաբի արխիւ թիւ 215, 216, 217 եւայլն):

մանատար Նժդեհին, բողեւիկները կը դիմեն իրենց գլխաւոր զէնքին՝ խարերայութեան: Գիւղացիութեան կը յայտարարեն, թէ իրենք կը կոուին ոչ թէ Հայաստանի Հանրապետութեան դէմ, որ վաղուց ձեռք վերցուցած է Զանդեղուրէն, այլ կը կոուին Նժդեհի դէմ, որ զէնք վերցուցած է սովետական իշխանութեան եւ անոր զօրքերուն դէմ: Անոնք կ'աւելցնէին. «Մեզի Նժդեհը պէտք է, ոչ թէ ձեր երկիրը եւ եթէ դոյն չյանձնէք՝ ձեր գիւղերը կրակի կը մատնուին եւ կարմիր բանակը կը շարունակէ մնալ ձեր շրջանները եւ սպրիլ ձեր հաշուոյն»: «Զանդեղուրը եւ Նախիջևանը կը պատկանին Խորհրդային Հայաստանին, թէ, Խորհրդային Ատրպէյճանը արդէն իր համաձայնութիւնն յայտնած է» եւ այլն...:

Բողեւիկները աւելի խիստ վերաբերմունք ցոյց կու տան Լեւոնահայաստանի սպայութեան հանդէպ, համարելով այդ տարրը վը-



ՎԱՀԱՆ ԽՈՐԷՆԻ

տանգաւոր եւ փնասակար: Յուլիսի 10-ին կը ձերբակալեն բոլոր ըսպաները եւ Ռուսաստան զինուորական զարոյց ուղարկելու պատրուակին տակ, կ'աքսորեն Պաքու եւ Ռուսաստանի ներքին նահանգները, ուր անոնցմէ շատերը կը բանտարկուին, միւսները տաժանակիր աշխատանքի կը դատապարտուին: Դարձեալ Յուլիսի 10-ին, գիշերը, սպաներէն երեք հողի առանց որեւէ քննութեան կը տարուին Քարահունջ, ձորի ափին, ուր կը գնդակահարուին, մերկացուելէ ետք: Կը սպաննուին տեղակալ Օհանեան եւ փոխ-գնդապետ Տէր-Սարգիսեան, իսկ երրորդը կը յաջողի փախիլ եւ ազատիլ: Անձնական վրէժի թոյ-

նով լեցուած բոլշեւիկեան 11-րդ բանակի զինուորա-յեղափոխական խորհուրդի լիազօր Ա. Ղարադէօղեանը, որ իր իսկ հայրենի երկրի հայ զիւղացիութեան գլխատման եւ աւերածութեան չար ոգին հանդիսացաւ, առաջին անգամ ոտք կը դնէ Գորիս եւ իր այդ գալուստը կը պսակէ կարմիր տերրորով, իրենց նահանջի նախօրեակին սպաննել տալով Հայաստանի Հանրասլետութեան պարլամենտի անդամներ Վահան Խորէնին, Արշակ Շիրինեանը, ինչպէս նաեւ սիսեանցի Զ. Տ. Ղազարեանը եւ Մ. Աղամեանը:

Օգոստոս 2-ի զիշերը, Գորիսէն նահանջելէ առաջ, Զանգեզուրի տխրահոշակ շեկան(*) (արտակարգ յանձնաժողով) քաղաքի պատերուն կը փակցնէ հետեւեալ թուցիկը, ուղելով վարագուրել անձնական հաշիւները եւ արդարացնել պարլամենտի անդամներու անխիղճ եւ դադանային սպանութիւնը:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Դաշնակներու կառավարութեան կարմիր Զանգեզուրի վրայ նենգութեամբ յարձակուելու պատճառաւ, զիշերը՝ լոյս 2-ին Օգոստոսի, գնդակահարուած են դաշնակներ՝ Արշակ Շիրինեան, Վահան Խորէնի, Զախար Տէր Ղազարեան եւ Մ. Աղամեան.

ՉեկԱ»(**)

Գորիսի կեղրոնական բանտի ընդունելութեան գրքի մէջ, 177 թիւին տակ նշանակուած է. «Արշակ Շիրինեան եւ Վահան Խորէնին ձերբակալուել են եւ բանտն են ուղարկուած Յուլիս 30-ին Չեկայի նախագահի կարգադրութեան համաձայն, իսկ Օգոստոսի 1-ին 1920 թ. նոյն Չեկայի որոշման համաձայն ազատուած են»: Բայց այդ ազատուելը բանտի լեզուով կը նշանակէ, թէ դատարկած են սենեակը եւ բանտարկեալին հեռացուցած են այնտեղէն, սպանութեան վայր տանելու համար:

Օգոստոս 3-ին Գորիսէն նահանջող բոլշեւիկները իրենց հետ կը տանին բանտարկեալներ — Զ. Տ. Դաւիթեան, Գ. Մալինցեան, Պ. Փարսեան, Դ. եւ Գ. Տէր Մկրտիչեան եղբայրներ, Ա. Դադայեան եւ այլք, որոնք շղթայուած կը քշէին դէպի Շուշի, բայց ճամբան, առանց որեւէ հարցաքննութեան, Մակեր կոչուած տեղը (Ղարաղըշ-լաղի դիմաց) գնդացիքով բոլորն ալ անխնայ կը կոտորեն: Կ'ազատի միայն կոռնձոր զիւղի Գրիգոր քահանան, հակառակ իր 11 վէրքերուն, որովհետեւ բոլշեւիկները զինք մեռած կը կարծեն:

Հոկտեմբերի 16-ին, երբ Ղափանի եւ Սիսեանի շրջաններուն

(*) Չեկայի կատարած ձերբակալութեանց եւ գնդակահարութեանց մասին տես «ԱՐՆՈՏ ԳԻՐՔ»ը, էջ 23-24:

(**) Լեռնա-Հայաստանի գլխ. շտաբի արխիւ, թիւ 241:

մէջ կը նկատուին ապստամբական փորձեր, շարժումները ճնշելու ու ժողովուրդը սարսափի տակ պահելու համար, բոլշեւիկները Գորիսի բանտին մէջ սուիններով կը սպաննեն 10 տարի նիկոլայեան բանտերու մէջ շղթաներ կրած յեղափոխական մարտիկ Սազոն (Համբարձում Սարգիսեան) եւ 12 ուրիշ ընկերներ, որոնց մէջ՝ Յ. Մալինցեան, Ա. Միրաքեան, Ա. Տ. Մկրտիչեան, Փ. Մելիք Փարսաղանեան, Բ. Սարգիսեան, Սահակ — Բէկով եւ ուրիշներ: Սպանութիւնները սովորական կը դառնան նաեւ գիւղերու մէջ, ուր չկային ոչ դատարան, ոչ քննիչ եւ ոչ կեանքի ապահովութիւն: 252-րդ գունդի ղինուորական կոմիսար Իւանովը կը հրամայէ մանուկներէն մինչեւ 80-90 տարեկան ծերունիներուն անդամ չխնայել: Թուրքերուն կիսատ ձգած ջարդերը կը շարունակուին: Այդ հրամանը կը կատարուի առանց յատուցման, ինչ որ առիթ կու տայ տխրահռչակ Ղարադէօղեանին դրելու իր դեկուցման մէջ Պաքու, Նարիմանովին, թէ «նման դէպքերը կը նսեմացնեն եւ կը վարկաբեկեն սովետական կառավարութիւնը»:

Ամէն տեղ բանտերը լեցուած էին անմեղ զոհերով: Միայն Գորիսի բանտը, պատանդ անուան տակ մշտասլէս բանտարկեալ կը մընային հարիւր քաղաքացիներ, զորս շարաթը անդամ մը կը փոխարինէին ուրիշներով՝ որեւէ ապստամբութեան պարագային զնդակահարելու նպատակով:

Գորիսի կեդրոնական բանտի 1920-ի ընդունելութեան գրքին մէջ, Հոկտեմբեր ամիսէն սկսած բոլշեւիկներու ձեռքով տեղի ունեցած զնդակահարութեանց մասին հետեւեալը յիշուած է. —

Թիւ 261. 6-ին Հոկտ. 20 թ. Համբարձում Սարգիսեան բանտարկուած է քաղաքական բիւրոյի քննիչի ձեռքով. զնդակահարուած է 28-րդ հրաց. դիւիզ. առանձին բաժնմ. որոշ. 16-ին Հոկտ. 20 թ.:

Թիւ 263. Ավանէս Մալինցեան, թիւ 108 (հաղորդ) որոշ. 16ին Հոկտմ. 20 թ.:

Թիւ 264. Ալեքսանդր Միրաքեան, հաղորդ. թիւ 486, 16-ին Հոկտմ. 20 թ.:

Թիւ 265. Համբարձում Շալունց, փախեր է զնդակահարութեան ժամին:

Թիւ 272. Հոկտմ. 8-ին, Բէկով Սահակ՝ բանտարկուած է Գորիսի պարետի կարգադրութեամբ. զնդակահարուած է 28-րդ հրաց. դիւիզիայի առանձին բաժանմունքի որոշումով 16-ին, Հոկտ. 20 թ.:

Նոյն թիւի — Սարգիսով Բախչի — 16 Հոկտմ. 20 թ.
 Մելիք Փարսաղանեան — 16 Հոկտմ. 20 թ.:

Հրաց. դիւիզիայի առանձին բաժանմունքի որոշումով:

Թիւ 281. Տէր Մկրտիչ Ալեքսանդր 16 Հոկտմ. 20 թ.:

Թիւ 290. Ավանէս Պօղոսեան 16 Հոկտմ. 20 թ.:

Թիւ 290 Ալեքսանդր Հասրաթով, 16 Հոկտ. 20 թ.:

Թիւ 290. Սիմոն Պօղոսով, 16 Հոկտ. 20 թ.:

Թիւ 290. Յակոբ Վանէսով. 16 Հոկտ. 20 թ. Հրաց. դիւիզ. առանձին որոշ.

Թիւ 290. Շամիր Կարապետեան. 16 Հոկտ. 20 թ. Հրաց. դիւիզ. առանձին բժ.ի որոշ.

Թիւ 290. Ահարոն Կարապետեան (Չահրամանեան) 16 Հոկտ. 20 թ. Հրաց. դիւիզ. առանձին բժ.ի որոշ.:

1920 թ. Հոկտ. 17-ին Գորիսի պատերուն վրայ փակցուած ուսերէն եւ հայերէն լեզուով հրամանի մէջ յիշուած են սպաննուած հայերու անունները եւ պատճառարանութիւնը:

1920 թ. Յուլիսի 6—19 Չանդեղուրի բոլշեւիկներու ձեռքով միայն Գորիսի կեդրոնական բանտին մէջ քաղաքական պատճառարանութիւններով բանտարկուած են հետեւեալ թիւով անձեր (*).—

	Հոգի
1) Գորիս քաղաքական պարետի կարգադրութեամբ բանտարկուած է	379
2) Միլիցայատի կարգադրութեամբ բանտարկուած է	79
3) Յատուկ բաժանմունքի կարգադրութեամբ բանտարկուած է	45
4) Քաղաքական բիրոյի կարգադրութեամբ բանտարկուած է	58
5) Առանձին զօրամասի թիւ 2 կայազօրի պետի կարգադրութեամբ բանտարկուած է	28
6) Չանդեղուրի չեկայի նախագահի կարգադրութեամբ բանտարկուած է	32
7) Չանդեղուրի ուեկոմի կարգադրութեամբ բանտարկուած է	18
8) Չանդեղուրի չեկայի քննիչի կարգադրութեամբ բանտարկուած է	16
9) Գորիս քաղաքի կայազօրի պետի կարգադրութեամբ բանտարկուած է	63
10) Զինուորական քննիչի պետի կարգադրութեամբ բանտարկուած է	5
11) Ներքին յանձնաժողովի վարիչի պետի կարգադրութեամբ բանտարկուած է	2
12) Գորիս քաղաքի միլիցիայի կարգադրութեամբ բանտարկուած է	7
13) Ժողովրդական դատարանի նախագահի կարգադրութեամբ բանտարկուած է	10

(*) Բանտի ընդունելութեան գիրք. թիւ 137 եւ 352:

- 14) Կովկասեան զնդի պետի կարգադրութեամբ բանտարկուած է 4
- 15) Քաղաքացիական քննիչի կարգադրութեամբ բանտարկուած է 9
- 16) Կովկասեան զնդի զին. կոմիսարի կարգադրութեամբ բանտարկուած է 1
- 17) Կովկ. բրիգադայի շտաբի պարետի կարգադրութեամբ բանտարկուած է 1
- 18) Պալատական ռեկոմի կարգադրութեամբ բանտարկուած է 1
- 19) Տրանսպորտի ենթաբաժնի պետի կարգադրութեամբ բանտարկուած է 2
- 20) 28-րդ դիւիզիայի շտաբի պարետի կարգադրութեամբ բանտարկուած է 1
- 21) Արտակարգ յանձնաժողովի կարգադրութեամբ բանտարկուած է 1
- 22) Զինուորական կոմիսարի կարգադրութեամբ բանտարկուած է 1

Ընդամենը՝ 763

Պարզ էր, որ քաղաքական կեանքով ազատ ապրած մարդու համար անտանելի պիտի ըլլար նոր ստեղծուած «վարչակարգը»:

Գիւղացին լսեց բազմաթիւ խոստումներ, բայց ոչ մէկ բան իրականացած տեսաւ. երկիրը տնտեսապէս միանգամայն քայքայուեցաւ. զէնքի ուժով խլեցին եւ Պաքու տարին տասնեակ հազար փութերով հացահատիկ եւ այլ մթերքներ. գիւղացիի վերջին լծկանն անգամ չխնայեցին, սայլին լծելու եւ քշելու դէպի Շուշի: Չկար ոչ կեանքի եւ ոչ գոյքի ապահովութիւն: Այդ դեռ բաւական չէ, բոլշեւիկները հոն տարած էին նաեւ թուրք զինուորներու գունդ մը, որ հայու ռիսերիմ թշնամին ըլլալով, որեւէ գիւղ որ մտնէր, կը սկսէր գազանութիւններու, առեւանգումի, ալան-թալանի. այս բոլորը տեսնելով Լեոնահայաստանի գիւղացին համոզուած էր, որ բոլշեւիկները իրենց հետ կը բերեն ստրկութիւն, կասպանք, կոտորած եւ կատարեալ աղքատութիւն, ուստի անհրաժեշտ է թօթափել այդ լուծը եւ նոր, ազատ կեանք ստեղծել իրեն համար:

ԿՈՒԻՒՆԵՐԸ՝ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐՈՒ ԴԷՄ

1920-ի Յուլիտի սկիզբները, կարմիր բանակը կը դրաւ Գորիսը, եւ զօրամասէն բաժին մը, Յուլիտի Տ-ին, անսպասելիօրէն մըտնելով Ղափանի նախադուռը կազմող Խոտանան զիւղը՝ կ'առաջանայ դէպի Ղափանի հանքերը:

Նժդէհի հեծելախումբը Չալին — Գէօլի մօտ կը կարէ կարմիրներու ճամբան եւ պայթեցնելով տասնեակ մը պայթուցիկ տակառներ՝ թշնամին կը հարկադրէ նահանջել դէպի Խոտանան:

Այդ դէպքէն օր մը ետք, կը ստանան կարմիր զօրքերու կոմիսարի գրութիւնը, որով կը հրամայէր «նամբայ տալ վերին Խոտանանի մէջ գտնուող զօրամասին անցնելու Մեղրիի վրայով, Օրդուրաթ — Զուլֆա»:

Գրութիւնը կը յանձնուի Ղափանի Ազգային Խորհուրդին, որ Յուլիտ 12-ին, Առաջաձոր զիւղին մէջ կը դումարէ արտակարգ ժողով մը, նախագահութեամբ Գ. Տէր Մինասեանի, քարտուղարութեամբ Վ. Փարսազանեանի, եւ միաձայնութեամբ կ'որոշէ.

- ա) Թոյլ չտալ կարմիրներուն մտնելու Ղափան:
- բ) Վերին Խոտանանը եւ անոր հետեւող միւս զիւղերը, եթէ եղան, կը համարուին հայրենիքի դաւաճան եւ թշնամի(*):

Ստանալով շրջանի հաւաքական եւ անվերապահ կամքն արտայայտող այդ որոշումները, Նժդէհ Յուլիտ 12-ի երեկոյեան կարմիր զօրքերու պետին կ'ուղարկէ վերջնազիր՝ հեռանալ Ղափանի սահմաններէն:

Նշանակուած ժամանակը դեռ չլրացած, բոլշեւիկները խուճապահար կը փախչին դէպի Գորիս, իրենց հետ տանելով բանազնաց, երկրաչափ Սմբատ Մելիք Ստեփանեանը:

Յուլիտ 29-ին, կարմիրները մեծ ուժերով կը վերսկսին իրենց յարձակողականը Ղափանի դէմ, այս անգամ արեւելքէն:

Կռիւները անհաւասար էին, կատաղի, եւ կը տեւեն 72 օր:

Սպարապետ Նժդէհ հեռատեսութեամբ զխտէր, որ Զանգեզուրն

(*) Ժողովի արձանագրութիւններէն:

ու Սիսեանը նուաճուելէ ետք, անշուշտ, Ղափանի բուն մը հայ գիւղացիութիւնը պիտի չկարենար ուժեղ կերպով մինչեւ վերջին շունչը պաշտպանել իր անկախութիւնը, երեք թշնամի միացեալ ուժերուն դէմ: Ուստի դեռ 1920 թ. Օգոստոս 23, 25 եւ 30-ին, թիւ 24, 25 եւ 26 իր պաշտօնական ղեկուցումներուն մէջ, զորս ուղղած է Հայաստանի Հանրապետութեան զինուորական նախարարին (պատճէնը ներքին եւ արտաքին գործոց նախարարութեանց) կը խնդրէր հայ կանոնաւոր զօրքերու շուտափոյթ օգնութիւնը: Ի միջի այլոց գրած է. —

«Բազուի մի քանի տասնեակ հայերով կաշառուած Ատրպէյճանը տէր դարձաւ Ղարաբաղին: Սովետական Ղարաբաղը վարակեց բուն Չանդեղուրի որոշ գիւղերը եւ թշնամի թալանի տենչով խելագարուած սրիկայախումբերը գրեթէ առանց կռուի մտան Գորիս: Վերջինս իր հերթին արագացուց Սիսեանի անկումը: Ու այսօր այդ բոլորը՝ ե՛ւ Ատրպէյճան, ե՛ւ Ղարաբաղ, ե՛ւ բուն Չանդեղուր ոտքի հանած իր բովանդակ ուժերը՝ ե՛ւ զօրք, ե՛ւ տեռոր, ե՛ւ թղթադրամներու դէղեր, կաշուէն դուրս կու գան ընկճելու իրենց դէմ ծառայած Ղափանը, Գենուազը, Բաղարբըղն ու Գողթանը: Այդ շրջաններու ապստամբ ժողովուրդը, որ Ատրպէյճանի հետ մէկէ աւելի անգամ չափուած է եւ միշտ ալ յաղթած, ջերմ հաւատով կը սպասէ զօրքերու շուտափոյթ երեւալուն իր երկրի սահմաններուն մէջ:

«Ուշացնել օգնութիւնը, կը նշանակէ թուլացնել սպասող ազգարնակչութեան մարտական կորովն ու հաւատքը եւ հեշտացնել թշնամիի գործը, որ աննախընթաց արագութեամբ առաջ կը տանի, բռնութեամբ սովետականացած հայ տարրի ղինաթափումը, գլխատումն ու անտեսական քայքայումը»: Ղափանը մինակ մնալով անհաւասար կռուի մէջ, հացի եւ ռազմամթերքի շղոյթութեան պատճառով, իր վերջին փամփուշտը կրակելէ ետք, կը հարկադրուի վար դնել դէնքերը:

Գիտակից զինուորութեան միայն մէկ մասը Նժդէհի հետ կը քաշուի Սուսուտուլ լեռը, ուր կը սպասէ հայրենի երկրի կանչին:

Այդ հերոսական պայքարի եւ կռուի առթիւ, 1920 թ. Սեպտեմբերի 11-ին թիւ 35 պաշտօնական ղեկուցումը ուղղելով Հայաստանի Հանրապետութեան զինուորական նախարարին եւ Սպարապետ Նազարբէկեանին՝ Նժդէհ կը գրէ. —

«Աշխարհէն կտրուած հերոսական Ղափանն իր 70 օրուան կրփունքով՝ վառելով իր վերջին փամփուշտը, ռազմական ուժերու մէկ մասով, քաշուեցաւ լեռները. թշնամին իմ վրայ յարձակեցաւ միաժամանակ ե՛ւ Չէյվայէն, ե՛ւ Ինջարեւիտէն, ե՛ւ Գեղուաձորէն ե՛ւ Գեղարբէլէն:

«Մեծամասնականները ոտքի հանած էին Բարգուշատի, Հաք-

եարուի, Այրիչայի եւ Գեղուածորի բովանդակ ուժերը: Օգնական ուժեր էին բերած եւ Ջիրբայիլէն: Առաջնորդի դեր էր կատարած Չանգեղուրի ժողովուրդի տականքը՝ հայ դաւաճաններու ամբողջ լեզէոն մը:

«Չէյվայի կատաղի կռիւներուն, որտեղ Ղափանցի ռազմիկը դուրս բերաւ իր անընկճելի հողի ի ամբողջ թափը, թշնամին կրեց մեծ կորուստ: Սեպտ. 3-ի կռուին, Չալին-Գէօլի մօտ, ոչնչացուցինք մեծամասնականներու ամբողջ դիւիզիոն մը: Թշնամին կը յառաջանար թղթադրամներու դէղեր ցրուելով, կաշառելով բոլոր տեսակի թափթփուքներուն: Թշնամի զօրքերու շարքերը խտացուցած են պրոֆեսիոնալ դաւաճանները, շանտաժիշտները, գրպանահատները, լրտեսները, գողերն ու աւաղակները, սեղմ՝ ըսած՝ հայ ցեղի բոլոր տեսակի տականքներն ու քրէական տիպերը:

«Թշնամին չի ճանչնար ո՛չ սրբութիւն, ո՛չ սկզբունք: Կնոջը ձերբակալած են, որպէսզի մատնի ամուսնուն, որդին ահաբեկած են, որ հօրը տեղը մատնի: Գիւղերը կտրուած են իրարմէ: Չերեզվի շայկաները, որոնց սռաջ նսեմանում են ցարական եւ սուլթանական ժանդարմայական տխրահռչակ վարչութիւնները, մութ սպանութիւնները, թալանն ու կողոպուտը դարձեր են սովորական երեւոյթ»...:

Մինչ տեղի կ'ունենային բոլշեւիկներու դէմ անհաւասար մարտընչումները, Ղափանի, Գենուաղի եւ Գողթանի հայ գիւղացիութիւնը, ականատես Նժդեհի հայրենասիրական անսակարկ եւ անձնազոհ գործունէութեան, ինչպէս նաեւ հայրենի երկրին մատուցած անգնահատելի ծառայութեան, երախտագիտական ջերմ զգացմունքով կապուեցաւ հերոսին, սիրեց զինք եւ բարձր գնահատեց անոր քանի մը տարուան շարքաշ ծառայութիւնը: Երբ այդ շրջանները ի սպառ կտրուած էին դուրսի աշխարհէն եւ բոլշեւիկեան զօրքերը բոյն դրած Չանգեղուրի եւ Մխեսանի մէջ, 1920 թ. Օգոստոսի 25ին, ամբողջ ժողովուրդն ու զինուորութիւնը կը հաւաքուին Ղափանի կաւարտ գիւղի եկեղեցին, ուր տեղի կ'ունենայ եկեղեցական հանդէս: Ամբողջ զինուորութիւնը ժողովրդական ներկայացուցիչներու հետ կ'ուխտեն պատմական մեծ հերոս Դաւիթ Բէկի եւ Մխիթար սպարապետի անունով հաւատարիմ մնալ հայրենի երկրի ազատութեան, իրենց հրամանատար Նժդեհին եւ կռուիլ մինչեւ վերջին շունչը: Այդ պատմական բոպէին գնդապետ Նժդեհի մէջքը կը կապեն նաեւ կարմիր գօտի եւ բոլոր հանդիսականներու ցնծութեան տարափին տակ, զինք կը կոչեն իրենց Սպարապետը: Այդ պատմական խորհրդաւոր ուխտի պահուն գնդապետ Նժդեհը, իրեն յատուկ կրակոտ ճառով մը իր զինուորներուն կու տայ քանի մը պատուէրներ, որոնք իրրեւ սկզբունք պիտի ծառայէին հայրենի երկրի ազատութեան համար վարած կռիւներու ընթացքին:

1.— «Քաջերին, միայն քաջերին է լսում եւ զօրավիգում պատերազմների քմահաճ Աստուածը...»

2.— «Ան է միշտ յաղթողը, որն արդէն յաղթել է իրեն, այսինքն որն իր մէջ մեռցնելու չափ թուլացրել է մահու երկիւղը:

3.— «Անոնք, որոնք ծառայած են բարձր հայրենասիրութենէն դրդուած, միայն անոնք են աւելցնող իրենց ղէնքի եւ ցեղի փառքը:

4.— «Քեզ վրայ նայիր որպէս դատապարտուածի, որը յանուն իր երկրի ու ժողովուրդի պաշտպանութեան պիտի միշտ պատրաստ ըլլայ ընդունելու մահը:


5.— «Եղիր խիզախ, խստաբարոյ ու չարքաշ»...

Այս պատուիրանները, — որոնց կիրարկման կենդանի օրինակը, ինքն իսկ՝ Նժդէհը կը հանդիսանայ, — խորապէս կը տպաւորեն ժողովուրդը: Ծնորհիւ այդ ուղղութեամբ առաջ տարած դերմարդկային գործունէութեան, Սպարապետ Նժդէհ իրօք կը փրկէ երկիրը վերահաս վտանգէն: Բայց անհրաժեշտ էր, որ Ղափանն եւս ճաշակէ դառնութեան բաժակը, չէ՞ որ ամբողջ երեք տարի ուստի երես չէր տեսած, չէ՞ որ ան ստիպուած է եղեր միս մինակ, չորս կողմէ շրջապատուած թշնամիներով, միշտ ղէնքը ձեռքին պատրաստ ըլլալ դիրքերու վրայ. կեանք մը՝ որ յողնեցուցած էր զինք: Եկող ուսուր կը խոստանար տալ խաղաղութիւն, ամէն բարիք եւ ազգերու համերաշխութիւն, չէ՞ որ ըստ հայ գիւղացիի հասկացողութեան, նախկին ուսան էր, որ կու գար:

Ղափանի ժողովուրդին անձնատուութեան այդ անսպասելի քայլը խորապէս կը խոցէ Սպարապետի հայրենասիրութիւնը, որուն պարտական էր զափանցին իր կեանքի եւ գործի գոյութեամբ, եւ զոր կ'անուանէին «Աժդահա փաշա», «Երկրորդ Դաւիթ Բէկ», «Ամէն կռուին փառիշահ»:

Որ ժողովուրդը խաբուած է բոլշեւիկներու քարոզչութենէն եւ խարդախ գործունէութենէն, այդ շատ լաւ ըմբռնած էր Սպարապետ Նժդէհը: Բայց կարմիրներու ստրկացնող, ապականող լուծին ենթակայ մնալով, ժողովուրդին այլասերելու և կորսուելու միտքն էր, որ կը տանջէր զինք. չէ՞ որ ան իր կեանքը մաշեցուցած էր այդ ժողովուրդին համար, ամենանեղ օրերուն օգնութեան հասած էր անոր: Ինչո՞ւ այդ ժողովուրդը այժմ կը զառնար դէպի բոլշեւիզմը: Ժողովուրդի այդ ապերախտ վարմունքը ստիպեց սպարապետին, որ կըլտամբէ այդ ժողովուրդը, 1920 թ. Սեպտեմբերի 12-ին ուղղելով անոր դրութիւն մը, ուր ի միջի այլոց կ'ըսէ. —

«Քու մէկ մասի վախկոտութեան եւ դաւաճանութեան շնորհիւ թշնամին մտաւ Ղափան եւ քու ռազմական ուժերու ամենաքաջանուն եւ խիզախ մասը՝ կրակելով իր վերջին փամփուշտը, քաշուեցաւ լեռները... Զգոյշ, Ղափան, մեռցնելով իմ հաւատքը դէպի քու հաւատարմութիւնը, դուն քեզ կը մեռցնես... Ա՛հ, ո՞ւր էք, ո՞ւր, իմ



ԶՕՐ. ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

երէկուան ուխտեալ զինուորներ, Գեղուածորեան հպարտ փառակիցներ: Չորե՛ր, վա՛յ ձեզ, սիրտս կ'արնոտի ձեզ համար, տեսնելով թէ ինչպէս թշնամին անփառունակ գերեզման կը փորէ»...

Յիշեցնելով անոնց Դաւիթ Բէկեան ուխտը նոյն թուի Սեպտեմբերի 15-ին կը գրէ. «Ես Դաւիթ Բէկեան ուխտին հաւատարիմ, կը շարունակեմ մնալ լեռներու, ամպերու տակ, մինակ, վիրաւոր ու աւելի հպարտ քան էի:

«Այժմ ես կը լղեմ քու եւ թշնամիի ինձ հասցուցած վէրքերը եւ կը սպասեմ քեզմէ խնդրածս վարպետին, որ գայ, շուտ գայ կուսիտ դործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քու գլխուն գալիք զուլումները, քու խայտառակութիւնը, քու բարոյական անկումը:

«Դուն ուզեցիր այն, ինչ որ կ'ուզէր թշնամին... Դուն քու վիրաւոր սրտէն զարնուած հրամանատարին կը դաւաճանես, մենակ թողելով»:(*)


Կսկիծէն խայթուած, ժողովուրդի ապերախտութեան սեւ ուրուականը միշտ աչքին առջեւ, Նժդէհ կը բացազանչէ դառնացած հողիով 1920 թ. Սեպտեմբերի 17-ին. «Ժողովուրդ, քեզ հետ խօսողը քու հրամանատարն է, քու վիրաւոր, սրտէն զարնուած հրամանատարը, որի սուրը շատոնց է ինչ յանուն քու ինքնապաշտպանութեան, չէ հանդստացած պատեանին մէջ:

«Լսի՛ր, մէկ աւելորդ գուցէ եւ վերջին անգամ ան կը դիմէ քեզ, կը խօսի քեզ հետ: Ան կ'ըսէ.

«— Քու սեւ ու նեղ օրին, երբ հայակեր Գեղուայ եւ Օխշուձորերը, երբ Բարգուշատի ու Հաքեարու մէջ սպառնացած էին քու կին ու երախաներու արիւնով քու երկիրը ներկելու, դուն կանչեցիր ինձ եւ ես հասայ քու հաւարին: Ըսէ՛, ժողովուրդ, այն օրէն քու երկիրը մնա՞ց բարձր սար մը, քար մը, որու վրայ դրած չըլլար իմ յոգնած գլուխս: Ասա, դու ինձ տեսա՞ր օր մը, ժամ մը անհող, հանգիստ: Դուն զիս տեսա՞ծ ես փափուկ տեղաշորիս, հարուստ սեղաններու շուրջը: Դուն լսում ես, քարերը, քարե՛րը կ'աղաղակեն, կ'ըսեն՝ ո՛չ: Ասա, մնա՞ց բան մը, որ խնայէի, չզոհարերէի, քու ազատութեան, քու փրկութեան, քու փառքի համար: Քու դաշտերում, քու հողի վրայ իմ արիւնն է թափուել: Դեռ չէ փակուել թշնամիին ինձ հասցուցած վէրքը. իսկ քոնը, ժողովուրդ, քո հասցրածը միշտ թարմ պիտի մնայ ու հազար վէրքերու ցաւով պիտի մորմոքայ:

«Ժողովուրդ, այսօր, երբ ատրպէյճանեան դրամներով կաշառուած բոլշեւիկները, քու գերեզմանափորերը, կեղծ ու պատիր խոստումներով քու դուռն են բախել եւ քո ձեռքով պղծած աղ ու հացիդ սպասում, դու դաւաճանարար լքում ես, մինակ թողում քո վիրաւոր

(*) «Խուստուպեան կանչեր», էջ 17—18, 1921, Գորիս:



Խուստուպ լեռան ժայռերը

Հրամանատարին: Այդ հերիք չէ, քո լրտեսներն ու ահարեկիչները իմ գլուխն են փնտռում, երեք միլիոնով Ատրպէյճանին ծախելու: Ապերա՛խտ ժողովուրդ: Քանի՛, քանի՛ անգամ քո կի՛նն ու երախան կռիւներից վերադառնալիս փաթաթուել են ձիանս վզով, համբուրել ձեռներս, «փաշա ջան» կանչել: Քանի՛-քանի՛ անգամ փրկել եմ քեզ վերահաս վտանգից, կոտորածից: Ի՞նչ, մոռացա՞ր իշխան Ղաջարին,

որի զօրքերին պատերիդ տակից եմ քշել: Վա՛յ քեզ ժողովուրդ, ի՞նչ պատասխան պիտի տաս Աստծուդ, խղճիդ, պատմութեանը:

«Ժողովուրդ, կ'անցնին օրեր, թշնամին, քեզ զինաթափելուց ու ղեկավարներիցդ զրկելուց յետոյ, երբ այլեւս չի լսուի «Աժդահա փաշա» անունը, կը սկսի հաղար ձեւով ու ճանապարհով բնաջնջել քեզ: Այն ատեն դու կը վերյիշես քո հրամանատարին, որի սուրը եօթն անգամ մեծացրել էր քո երկիրը եւ քեզ համար բացարձակ ապահովութիւն ստեղծել, այն ժամանակ հայեացքդ կը դարձնես Խուստուպին, ու նրա կատարին նստած սեւ ամպերին, կը նայես, կը կանչես, բայց հրամանատարիդ փոխարէն սարերիդ ու ձորերիդ թոյլ արձագանգը կը պատասխանէ քեզ: Գուցէ մի օր էլ թշնամուց հալածական սարերն ընկնես ու թափառումներիդ ժամանակ յանկարծ մի թփի տակ, մի ժայռի վրայ իմ ստուած դիակը գտնես, ծունկ դաս եւ արիւն լացես:

«Ժողովուրդ, ինձ լքելուց, ինձ դաւաճանելուց առաջ զլացար իմ խնդիրը կատարել: Գու չուղարկեցիր վարպետներդ բուժ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին դալիք դուլումը, քո բարոյական անկումը: Ներում եմ, թէ եւ պատմութիւնը չի ների քեզ եւ խնդրում, երբ ինձ սպանուած տեսնես, դիակս թաղիր Խուստուպի ամենաբարձր կատարին, որտեղից երեւայ ինձ ե՛ւ Ղափանը, ե՛ւ Գենուազը, ե՛ւ Գողթանը, ե՛ւ Գեղուածորը:

«Իսկ, մինչեւ այդ հայեացքդ մի՛ կտրիր Խուստուպից: Որքան յաճախ, որքան շատ նայես այդ սէզ ու սեւ ամպերով ծածկուած սարին, այնքան շուտ կը դայ, կը հասնի փրկութիւնդ:

«Աստուած եւ իմ սէրը քեզ հետ, ապերախտ ժողովուրդ»:

1920 Սեպտ. 17

Հրամանատար՝ ՆՃԴԵՀ

Խուստուպեան Լեռներ

Բողեիկները 1920 Սեպտեմբերի սկիզբը Ղափանին տիրանալէ ետք, քանի մը անգամ բուռն յարձակումներ կը կատարեն եւ երեք կողմէ գրոհ կու տան նաեւ Գենուազը գրաւելու համար: Հայ եւ ռուս համայնավարները չեն վարանիր մինչեւ իսկ Նախիջեւանի, Օրդուբաթի եւ Ջիրբայի շրջանէն թուրք եւ տաճիկ զինուորները հրաւիրելու, կոուելու համար հայերու դէմ, իբրեւ հակայեղափոխական տարր, բայց այդ բոլոր փորձերը ոչ մէկ յաջողութիւն կ'ունենան: Հրաժարելով Գենուազը գրաւելու ծրագրէն, բողեիկները իրենց ուշադրութիւնը կը դարձնեն Ջանգեղուրի, Սիսեանի եւ Ղափանի վրայ ջանալով իրենց դիրքերը ամրացնել այդ շրջաններուն մէջ միաժամանակ սին խոստումներով ու խաբերայութեամբ թափանցելով հայկական գիւղերը: Ամենակարճ ժամանակամիջոցին քամեցին անոնց ամ-

բողջ տնտեսութիւնը, դանձոնք զրկեցին քաղաքացիական ազատութեանէն այն աստիճան, որ զիւղէ մը հարեւան զիւղը երթալու համար, պէտք էր բուլճեւիկեան անցազիր ունենալ: Գիւղերը բանտեր դարձան, իսկ զիւղացիութիւնը՝ անպաշտպան ոչխարի հօտ: Այս վիճակը երկար չէր կրնար տեւել, հակառակ որ արտաքին քաղաքական պայմանները բոլորովին աննպաստ էին որեւէ ապստամբութեան համար, որովհետեւ Հայաստանի Հանրապետութիւնը ստիպուած ըլլալով թուրքերու դէմ կռուելու, ոչ միջոց եւ ոչ ալ ժամանակ ունէր իր ուշադրութեան առարկայ դարձնելու Լեռնահայաստանի մէջ կատարուած դէպքերը: Լեռնահայաստանի հայ զիւղացիութեան միակ յոյսը մնացած էր զնդապետ Գ. Նժդէհը, որ նետուած էր տառապանքի աշխարհ եւ իր իսկ արեան գնով հայ ժողովուրդի փրկութիւնը կ'ուզէր ձեռք բերել:

Հայաստանի մէջ 1920-ի Մայիսեան բուլճեւիկեան «ապստամբութիւնը» իր արձագանգը ունեցաւ նաեւ Զանգեզուրի մէջ, ուր 11-րդ կարմիր Բանակը գործօն օժանդակութիւն եւ մասնակցութիւն ունեցաւ:

Հայաստանեան աղբիւրներ այս մասին կու տան լայն տեղեկութիւններ, ազգայնական հայ զիւղացիութիւնը որակելով «Բանդառ»ներ, աւագակներ:

Մայիս 19-ին Քարուանսարայի Ռեւկոմը հռչակեց սովետական իշխանութիւն: Այդ առթիւ Գ. Կ. Յրջոնիկիձէն կը գրէ Վ. Ի. Լենինին եւ Ի. Վ. Սթալինին ուղարկած հեռագրին մէջ. —

«Քարուանսարա Մայիսի 21-ին յայտարարած է սովետական իշխանութիւն: Հայկական 6-րդ դունդի կանոնաւոր զօրամասերը անցան ապստամբներու կողմը: Ռեւկոմը զիմած է մեզ օգնութեան. կը խնդրենք ձեր անմիջական ցուցումները»:(*)

21 Մայիսին 11-րդ կարմիր Բանակի օգնութեամբ ապստամբները զրաւեցին նաեւ Դիլիջանը: Բայց յաղթանակը կարճ տեւեց:

«Մայիսեան ապստամբութիւնը աւելի երկար եւ յամառ բնոյթ ստացաւ Զանգեզուրի մէջ: Զանգեզուրի զաւառի մէջ կեդրոնացած Նժդէհի բանդիտական շայկաները, որոնք արիւնալի դատաստան կազմակերպեցին կոմունիստներին եւ ապստամբութեան յարած զիւղացիներին նկատմամբ»:(**)

1920 թ. Մայիս 24—25-ին Սիսեանի մէջ ստեղծուեցաւ ռազմա-ռեւոլուցիոն կոմիտէ, որուն կազմին մէջ մտան Թովմաս Ադոնցը, Յակոբ Գէորգեանը (Տանին), Միքայէլ Գէորգեանը: (***)

(*) Ս.Մ.Կ.Պ. Մարքսիզմ—Լենինիզմը Հայկ. Ֆիլիալի արխիւ, ֆ. 32, գ. 2, ք. 2:
 (**)
 (***) «Քաղաքացիական կռիւները Զանգեզուրում». Երեւան 1958, էջ 38:

Ա. Վ. Վարդանապետեան կ'ըսէ .

«Մայիսի վերջերը Սիսեանի շրջանի ապստամբները արդէն կազմակերպուել էր եւ դաշնակներու դէմ կը դործէին քանի մը զինուած ջոկատներ՝ անուանի կոմունիստ Եղիա Իսկանտարեանի հրամանատարութեամբ :

Կարմիր Բանակը՝ Յուլիսի սկիզբներուն շարժեցաւ դէպի Սիսեան եւ Ղափան :

«Դաշնակները աւելի լաւ ծանօթ լինելով դաւառի տեղական սլայմաններին, բոլոր միջոցները դործադրեցին յաղթանակ շահելու համար : Օգոստոսի 3-ին նեղելով Կարմիր բանակի զօրամասերին, դաշնակները ետ դրաւեցին Սիսեանը եւ Գորիսը : (*)

«Դաշնակցական զինուած ուժերու հրամանատարութիւնը բոլոր միջոցները ձեռնարկեց՝ Կարմիր Բանակի զօրամասերին դուրս մղելու յատկապէս Ղափանէն եւ կասեցնելու առաջխաղացումը դէպի Ղափանի հանքերը :

«Այդ նպատակով Նժդեհը Կարմիր Բանակի դէմ կեդրոնացրեց թէ՛ հետեւակային եւ թէ՛ հեծելազօրային ջոկատներ, նպատակ ունենալով լեռներում ոչնչացնել Կարմիր Բանակի առաջապահ ուժը : (**)

«Ստրատեգիական շատ կարեւորութիւն ունեցող այդ լեռնային (Պուստուպ) դօտիում հէնց ամբացած էր Նժդեհը իր բանդիտական խմբերով : Դաշնակները 1920 թ. Սեպտեմբերի առաջին կէսերից սկսեցին մարտերը Կարմիր Բանակի դէմ : Տեղի ունեցան դժուարին մարտեր, որովհետեւ Գենուաղի ուղղութեամբ ինկած յարմար դիրքերը դաճուում էին դաշնակների ձեռքում :

«Դաշնակները ռազմական տեսակէտից ունեւալով որոշ առաւելութիւններ (նրանք նախօրօք դրաւել էին անառիկ լեռնանցքները), յանկարծակի յարձակում էին Կարմիր Բանակի զօրամասերի վրայ եւ մեծ վնաս պատճառում նրանց» :

«Մայիս 27-28ին դաշնակցական զինուած բանդաները Դրոյի հրամանատարութեամբ մտան Սնձորեսկ : Թէպէտեւ ռազմա-աւելուցիոն կոմիտէի ջոկատները ուժեղ դիմադրութիւն ցոյց տուին, բայց ուժերը անհաւասար էին, եւ ի վերջոյ, ապստամբները թողուցին զիւզն ու հեռացան :

«Դաշնակ Դրոն իր ջոկատներով շտապեց դէպի Սիսեան, ճնշեց այնտեղի ապստամբութիւնը և տանջամահ ըրաւ զիւղացիներին, յատկապէս ձերբակալուած կոմունիստներին : (***)

«11-րդ Կարմիր Բանակի հրամանատարութիւնը տեղեակ լի-


(*) «Քաղաքացիական Կոիւնքը Զանգեզուրում», Երեւան 1958, էջ 17 :

(**) Անդ, էջ 18 :

(***) «Հայաստանի Կարմիր Բանակը Քաղաքացիական Կոիւնքում», 1920 - 1921, էջ 15 :

նելով դաշնակցական զինուած բանդաների գազանութիւններին յատկապէս Զանգեզուրի գաւառի խաղաղ բնակչութեան եւ կոմունիստներին նկատմամբ, 1920 թ. Յունիսի 29-ին յատուկ պատուիրակութիւն ուղարկուեց Ղարաբաղէն դէպի Զանգեզուր, Տեղ գիւղը: Պատուիրակութեանը առաջ խնդիր էր դրուած բանակցել դաշնակցական պարագլուխների հետ, որպէսզի նրանք վերջ տան քաղաքացիական կռիւներին եւ ճանաչեն սովետական իշխանութեանը Զանգեզուրում: (*)

«Նոյն թուականի Յունիսի 28-ի ժամը 6-ին կարմիր Բանակի շտաբը տեղեկութիւն ստացաւ այն մասին, որ դաշնակցական զօրամասերի կողմից դրաւուած են մի քանի գիւղեր: (**)



Մ Ե Ղ Ր Ի

«1920 թ. Օգոստոսէն սկսեալ, երբ ամէն կողմէ շրջապատուած էի թշնամիներով, — կը դրէ Նժդեհ, — սուրհանդակներու միջոցաւ անդադար դիմելով Հ. Հ. Զինուորական նախարարին, Արտ. եւ Ներքին Գործոց նախարարութեանց, սլարլամենտի նախագահին եւ Հ. Յ. Դ. բիւրոյին անվերջ բախում էի անոնց դռները, օգնութիւն ու ռազմամթերք խնդրելով...:

... «Ընկերներ, աւելորդ անգամ մըն ալ կը խնդրեմ արագացնել օգնութիւնը: Այս շրջանները իրենց անչափելի ռազմական նշանակութեամբ եւ գերազանցօրէն մարտունակ ժողովուրդով մեր հանրապետութեանը շա՛տ, շա՛տ են սլէտք» (18 Սեպտեմբերի 1920):

Կարմիրները գրաւելով Ղափանը, հոգեբանական հեռատես

(*) «Հայաստանի կարմիր բանակը քաղաքացիական կռիւներում», էջ 16:

(**) Անդ, էջ 17:

հաշուով մը, կ'աճապարէին գրաւել Մեղրիի շրջանը, — Արեւիքը եւ հայ մարտիկները «սրբել, թափել Արաքս»ը, ինչպէս այդ օրերուն կ'արտայայտուէր բոլշեւիկեան ռուսատառ թերթը՝ «Կարմիր Աւան-գարդը»:

Պուստուպի վրայ ձգելով խումբ մը մարտիկներ, Նժդեհ կ'անցնի Արեւիք, խորհրդակցութեան հրաւիրելու համար այդ շրջանի փրկութեան կոմիտէն:

Իր հետ էր Գողթանի վշտակիրը՝ Աշոտ Մելիք-Մուսեանը, որուն նախագահութեամբ, Սեպտեմբեր 6-ին, Կալեր գիւղին մէջ կը գումարոսի Արեւիքի ներկայացուցչական ժողովը:

Կալեր գիւղի ժողովին մասին Նժդեհ կը գրէ հետեւեալը. (*)

«Իմ օրագրութիւնը ասում է. «1920 թ. Սեպտեմբեր 6-ին Կալեր գիւղում նշանակուած ժողովին հրաւիրուած ու ներկայ էին Գենուաղի 13 գիւղերի երկուքական ներկայացուցիչները: Օրակարգի հարցերն էին՝ ստեղծուած քաղաքական դրութիւնը եւ Գենուաղի բռնելիք դիրքը:

«Արտայայտում էին դրեթէ բոլորը: Նախագահում էր ընկեր Աշոտը:

«Վերջացնելով ժողովին ուղղածս խօսքը, առաջարկում եմ պատասխանել ինձ՝ Գենուաղը դիմադրելով է թշնամուն թէ ոչ:

«Ներկայացուցիչ Դանիէլեանը յայտարարում է, որ Գենուաղը վաղուց է կայացրել իր որոշումը, տալով իր խոստումը իր հրամանատարին, որ ինքը որպէս մի մարդ կը ծառանայ թշնամու դէմ:

«Գենուաղի փրկութեան կոմիտէն յայտարարում է, թէ իր շրջանի հայութեան բռնելիք դիրքը որոշել է այսպէս. — Գենուաղը իր ուժերը գնում է սաղմական դրութեան մէջ, բռնում է բոլոր գիւղերը, եւ սպասում Երեւանեան զօրքերի երեւալուն բուն Զանգեզուրում, որ միացած Ղափանի ուժերին, դարկէ թշնամուն թիկունքից»:

«Պօսքը, հերոսական ու անվերապահօրէն վճռական խօսքը ասում էր արդէն:

«Փոքրիկ, բայց մեծ Գենուաղը, անդիտանալով իր հողու եւ ազատութեան թշնամիների թուական հազարապատիկ մեծութիւնը, պիտի շարունակէր անհաւասար կռիւլը: Նրան՝ Գենուաղին էր վերապահուած լինելու ազատութեան Բեթլեհէմը, ուր պիտի ծնուէր ու զարդանար Սիւնիքի ազատութիւնը...:

«Սեպտեմբեր 6-ին, երեկոյեան դէմ, շրջանի ներկայացուցչութիւնը ցրւում է գիւղերը: Սուրհանգակները դէպի Պուստուպ են տանում Գենուաղի հերոսական որոշումները, իսկ մենք, ես, Աշոտը եւ Գենուաղի հրամանատարը մեկնում ենք Շիւանիձոր:

(*) «Հայ Բոլշեւիկեան Կոնիւնքը», Նժդեհ, «Հայրենիք» ամսագիր Ա. տարի քիւ 12 (1923, Հոկտեմբեր) էջ 101:

«Գեներալի վճռականութիւնը հպարտութեամբ էր լցրել բոլորիս հոգիները: Աշտի յոգնաթախիժ դէմքի վրայ ժպիտ կար: Ուժասպառ եւ հիւանդ, նա մասնաւորապէս այդ օրը, կալերի ժողովից յետոյ, իրեն, «աւելի քան հայարտ էր զգում իր հայ լինելու համար»:

«Ուրախ էր եւ Արեւիքի ազգասէր ու արի հրամանատարը որի մէջ այդ օրը խօսում էր մեր լեռների սլաշտամունքը, նա, իմ ջահել զինակիցը դռնում էր, որ «չկայ աւելի մեծ դժբախտութիւն, քան հայրենի լեռներից հեռու մեռնելը»:

«Մեզ ուղեկցող զինուորներից մէկի դարդոտ երգը տխրօրէն արձագանգում էր մօտակայ ձոր ու ծմակներում:

«Ես խորհում էի վաղուայ մասին»:

Այսպէս, Արեւիքը կը վճռէ ծառանալ Կարմիր Բանակին դէմ: Կարմիր Բանակը չ'ուշանար իր ներկայութիւնը զգացնել տալու Արեւիքիներուն:

Գրեթէ միաժամանակ Կարմիր Բանակը կը սկսի իր գրոհներուն թէ՛ Օրդուբաթի եւ թէ՛ Բարթազի կողմէ: Ան ոտքի կը հանէ Չանգիլանի թաթարները եւ Օրդուբաթի թրքական ուժերը, որոնց անվիճելի սեփականութիւնը կը համարէր Չանգեզուրը:

Կռիւ էր, կռիւ, որուն նմանը քիչ անգամ տեսնուած է պատերազմի դաշտը:

Թշնամին դուրս ելած էր դիրքերէն եւ կը յառաջանար դէպի Արեւիք:

Արեւիքի հերոսական որդիները կը գերազանցեն ամէն ակնկալութիւն, ապշութեան մատնելով թշնամին:

Թշնամին ջարդուած, բարոյալքուած եւ անփառունակ կը փախի դէպի Ղափան:

Հայ զէնքի այդ փայլուն յաջողութեամբ Նժդեհ կարելիութիւն կ'ունենայ ծրագրելու եւ գործադրելու Ղափանի վերագրաւումը:

«Հայաստանի Կարմիր Բանակը» դրքին մէջ, հետեւեալ անձիշդ տողերը կը կարդանք այս սպաստամբական շարժման եւ Ղափանի վերագրաւման մասին.—

«Կարմիր Բանակը կասեցնելու նպատակով՝ Նժդեհ զիմեց խարդախ միջոցի, մշակեց Ղափանում հակասովետական, կոնտր-ռեւոլուցիոն խռովութիւն բարձրացնելու պլան: Դաշնակները նպատակ ունէին հիմնովին ոչնչացնել ռեւոլուցիոն շարժումները. ձախողել կարմիր զօրամասերի ազատագրական արշաւանքը դէպի Հայաստանի խորքերը: Դաշնակցականները սերտ կապեր ունենալով Թաւրիզի եւ Թեհրանի ռէակցիոն տարրերի հետ, նրանցից օգնութիւն ըստանալով իրականացրին իրենց ստոր գաւերը: Կարմիր բանակի թիկունքում բարձրացրին կոնտր-ռեւոլուցիոն խռովութիւն»:

Ասպատամբած ժողովուրդի անվերապահ աջակցութեամբ եւ իր հաւատարիմ հետեւորդներով, Նժդեհ կը յաջողի բոլշեւիկեան անարգ

գրաւումէն աղատագրել Սիսեանն ու Ղափանը, 14 Հոկտ. 1920-ին :

Հոկտեմբեր 16-ին, 28-րդ դիւիզիայի պետ Նեստերովսկին, իր գործի յաջողութեան համար անհրաժեշտ կը համարէ դիմելու բուլճե-ւիկեան տակտիկայի... Ան, Չանգեղուրի, Նախիջեւանի ու Շուշիի շրջաններու ժողովուրդին կ'ուզէ առանձինն հրամանով կոչ(*) մը, որուն մէջ Նժդեհը կ'անուանէ բանդիտ, թալանով ապրող եւ դրացի-ները կոտորող... : Ամբողջութեամբ մաղձ ու թոյն ծորող այդ հրա-մանագրին մէջ կը սպառնայ ամբողջ դիւղեր հիմնայատակ կործանել, եթէ վերջ չդրուի ասպատամբութեան, եւ կը պահանջէ վճարել «Նժդե-հին եւ նրա արբանեակներին» :

Հայաստանէն դալիք օգնութիւնը միշտ ալ անհրաժեշտ կը մը-նար : Առ այդ Նժդեհ կոչ կ'ուզէ .—

«Ի սէր Գենուազի, Գողթանի եւ Ղափանի մարտնչող ժողո-վուրդի, որը ոչինչ չխնայեց Հայաստանի նախադուռն եւ ամբու-թիւնները պաշտպանելու համար, որը չորրորդ ամիսն է ինչ յանուն իր հարազատ հանրապետութեան իր լաւագոյն մարտիկներին ազնիւ արիւնը կը դոհի, սեղան հանում, օգնութիւն հասցրէք ինձ զօրքով, թնդանօթներով և ուղմամթերքով... Օգնութի՛ւն, օգնութի՛ւն, օգ-նութի՛ւն իր վերջին փամփուշտը կրակող Ղափան — Գենուազին (1920 թ. Նոյեմբերի 19-ին) :

Այս հարցով Երեւան կը մեկնի Աշոտ Մելիք-Մուսեանը : Անոր բերած խնդիրները բաւարարուած են. կարգադրուած է ուղարկել ուղմամթերք, հազուստ եւ դրամ : Ս. Մելիք Նուջեանին կը յանձնուի յիսուն միլիոն ուրբի, Չանգեղուր հասցնելու համար. իսկ զին-ուորական նախարարութիւնը հազուստ կը տրամադրէ : Այս գոյքերու եւ դրամի մէկ մասը կը մնայ ճամբան, մէկ մասը կը դրաւեն բուլճե-ւիկները, իսկ մէկ մասը, օրինակ դրամ, տեղ կը հասնի : Չանգեղուր շուտով կը հասնին սպաներ եւ սուրհանդակ Ռաշխը :

Ելեկտրականացած է լեռնահայութիւնը, սարսափած՝ Կարմիր Բանակը :

Ահա ուղմական այդ վայրկեանը բնորոշող հատուած մը՝ 28րդ Կարմիր հրացանաձիգ զօրամասի պետ Նեստերովսկիի հրամանա-գրէն : (**)

«Համարեա ամբողջ Չանգեղուրը բռնկուած է ասպատամբու-թեամբ :

«Ասպատամբուած հայերը դրաւած են Անգեղակոթը, Ղարաքի-լիսան, ամբողջ Ղափանի շրջանը եւ Օխչի եւ Մեղրի Չայի աւազան-ները :

«Նիւվաթի դիւղի շրջանը գործող 252-րդ հրացանաձիգ եւ

(*) Տես «Արևոտ գիրք», էջ 64 :
 (**) Լեռնահայաստանի զինուորական շտաբի արխիւ :

Կովկասեան երկրորդ դնդերու հետ ունեցած կապը խղուած է :

«Ղափանի աննշան զօրամասը շրջապատուած է . անոր վիճակը անյայտ է :

«25-րդ հրացանաձիգ դունդը կը կռուէր թշնամիի հետ Տանձաւերեցէն դէսլի հարաւ գանուող Ինջարելլի բարձունքներուն վրայ :

«20-րդ զօրաբաժնի Կովկասեան զօրամասին հրամայուած է Արաքսի ափով յառաջանալ եւ Հոկտեմբեր 16-ին ըլլալ Նիւվաթիի շրջանը , ուր իրենց ենթարկելով 252-րդ հրացանաձիգ եւ Կովկասեան երկրորդ դունդերը , վճռականութեամբ եւ դաժանութեամբ ջարդել Նժդէհի բանդաները :

«Այս դործողութենէն ետք , հարուածելով Ղափանի շրջանը , վերջ տալ ապստամբութեան :

«Գրաւուած դիւղերու մէջ սովէն ապահովել զօրամասերը ի հաշիւ ապստամբներուն» :

Այս հրամանով հրամանատարը կը մատնէ այն խուճապային , սարսափահար ու դազանային հողելվիճակը , որ այդ օրերուն ստեղծուած է , գլուխը կորսնցուցած կարմիր հրամանատարութեան մէջ :

ԱՇՈՏ ՄԵԼԻՔ ՄՈՒՍԵՍ



Նժդեհի գէնքի յաջողութեան լուրը կ'արձագանգէր նոյնիսկ Թուրքիոյ մէջ:

Ահա՛ թէ ինչ կը դրէ բժ. Արտաշէս Բարաւեանը, «Տարի մը գերութեան մէջ» իր յօդուածաշարքով:

«Յուլիսին նորէն կենդանութիւն առաւ Եազուտիէն:

Մեզմով սկսան հետաքրքրուիլ:



ԲԺ. ԱՐՏԱՇԷՍ ԲԱՐԱՎԵԱՆ

Յաճախ կու գար զնդապետ Էմին Պէյը եւ կը կարդար մեզի Չանդեղուրի դէպքերու մասին տեղեկագիրներ:

Ան ոգեւորուած կը պատմէր հայերու (ինքը կ'ըսէր դաշնակներու) քաջութեան մասին:

Պաշտօնական զեկոյցները չէին ըսեր, «դաշնակները յարձակեցան», այլ՝ «դաշնակները քաջութեամբ ետ մղելով թշնամիի յար-

ձակումները, ջարդեցին բոլշևիկեան դուռները եւ մեծ քանակութեամբ ուղղամտութեք ու դերիներ վերցուցին»:

Էմին Պէյի ըսելով, 5-10 օրէն Երեւանը կը դրաւուի դաշնակցականներու կողմէ եւ այլեւս բոլշևիկները չեն յանդգնիր ոտնձգութիւններ ընել Հայաստանի դէմ»:

Նժդէհ ամբանալով Ղափանի մէջ, դալիք արիւնահեղութիւններէն խուսափելու ցանկութեամբ՝ կարմիր հրամանատարութեան կը յղէ հետեւեալ վերջնագիրը.

«Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայութիւնն արդէն գլխատուած ու տնտեսապէս քայքայուած է կարմիր բանակի ձեռքով: Ձեր գործերի ներկայութիւնը Սիւնիֆի սահմաններում այլեւս անհանդուրժելի է: Հրամայում եմ, եթէ չէք ուզում 11-րդ բանակի մնացորդներն էլ կոտորածի եւ գերութեան մատնել, անմիջապէս դատարկել Զանգեզուրը, հակառակ դէպքում ստիպուած կը լինեմ կոռուով տիրելու ձեր ձեռքին գտնուած երկրամասին:

ՆժԴԵՀ

14 Նոյմ. 1920 թ., Ղափանի Հանգեր

Նժդէհի այդ վերջնագրին խորհրդային զօրահրամանատարութիւնը կը պատասխանէ սուրով, ուղարկելով իր դէմ Պաքուէն հասած նոր ուժեր. — թրքական դուռը Զաւալ փաշայի հրամանատարութեամբ, ինչպէս նաեւ հռչակաւոր կուրոչիինի հեծեալ զօրադուռը:

Տաթևի եւ Գորիսի միջեւ, Եռաբլուր դաշտի վրայ, տեղի կ'ունենայ Նժդէհի վճռական ճակատամարտը, որուն ընթացքին կարմիր բանակը անգամ մը եւս կը զգայ Սիւնիքի զարկերուն թափը:

Նժդէհ իր վաշտերով, թրքական զիակներու վրայէն կ'անցնի Գորիս:

Վիրաւորուած ու դերի է նաեւ Զաւալ փաշան:

Այս վերջնագրին եւ յաջորդող դէպքերուն անգրադառնալով, Նժդէհ կը դրէ հետեւեալը. (*)

«Վերջնագիր ներկայացնել, սպառնալ, բայց չիրագործել ըսպառնալիքը՝ կը նշանակէ թելաւորել հակառակորդին: Վերջնագրիս պատասխանը չկար եւ չէր ստացուելու: Կարմիր հրամանատարութիւնը Զանգեզուրը դատարկելու փոխարէն Պաքուից նորանոր զօրամասեր էր քաշում դէպի այդ տնտեսապէս եւ հասարակականօրէն քայքայուած երկիրը: Մնում էր զգացնել տալ Պաքուի, որ ապստամբական վերջնագիրը «զրպանի մէջ սեղմած անզօր բռունցք» չէ, այլ յաղթողի կամքը, որը պիտի յարգուի:

«Գիշերուայ ժամը մէկն էր:

(*) «Էջեր Լեռնահայաստանի Գոյամարտէն», «Հայրենիք» Ամսագիր, Բ. տարի թիւ 6 (1924 Ապրիլ), էջ 119:

«Թիկնապահս, մտնելով ինձ մօտ, զեկուցում է. «Գորիսից սուրհանդակներ են եկել, կարելոր գրութիւն ունեն յանձնելու եւ ուղում են ձեզ տեսնել. ընդունե՞լ»:

«Ներս են մտնում երկու Գորիսիցիներ. յիշում եմ մէկի անունը՝ Գարեգին:

«Երէկ Ուչ Թափալարում ջարդուած թշնամու մնացորդները խուճապով թափուեցին քաղաքը, — դրեթէ հեւալով պատմում է մէկը: Քիչ անց՝ քաղաքում կարմիրների մէջ տարածուեց խուճապը եւ բոլորն սկսեցին փախչել դէպի Զարուղ: Գորիսի եւ Վերիշէնի երիտասարդութիւնը, տեսնելով այդ բոլորը, յարձակուեց փախչողներին վրայ եւ զինաթափեց շատերին: Քաղաքն այժմ մեր ձեռքին է: Թշնամին ամբացել է Քարաշէնի բարձունքների վրայ եւ ոմբակոծում է քաղաքը: Տղաներն օդնութիւն են խնդրում: Պէտք է հասնել, թէ չէ լուսարացին, նոր ուժեր ստանալով, թշնամին կարող է վերագրաւել քաղաքը եւ սրի քաշել ժողովրդին...»

«Համբուրելով սուրհանդակներին, մէկին անմիջապէս երկխօսք գրութեամբ՝ «Գալիս եմ, դիմադրէ՛ք», վերադարձնում եմ Գորիս:

«Շեփորը ոտքի է հանում մեր վաշտերը:

«Եայջուց հաղորդագրում են՝ «Փամփուշտ չունինք»:

— «Ռազմամթերքի կարիքը չենք զգալու. անմիջապէս շարժուել դէպի Գորիս» — լինում է պատասխան-հրամանը:

«Նոյեմբեր 22-ի առաւօտեան բաղմահազար մի բազմութիւն, խոնուած Խորէնու, Շիրինի, Սաքոյի եւ այլոց եղբայրական դերեզմանի շուրջը, եկեղեցական զանգերի քաղցր զօղանջների տակ մատուցանում է մեզ Գորիսի աղ ու հացը:

«Սանդալառութիւն կայ, կայ ուրախութիւն, ուրախութեան արցունք, ժպիտ...»

«Գորիսը մերն է:

«Նահանջող թշնամին՝ անյոյս, ոմբակոծում է մեր դէպքերը: Խճուղիով առաջանում եմ դէպի Քարաշէն եւ տալիս վերջին գրոհի հրամանը: Բարձրանում է յաղթութեամբ արբեցած ժողովրդական վաշտերի գոռ ուռռան եւ լռութեան դատապարտում թշնամու թրնդանօթները: Երեկոյեան դէմ կարմիր 11-րդ զօրաբանակի վերջին զօրամասերը յետ էին շարտուած Արդալլա:

«Զանգեզուրը՝ մաքրուած թշնամիներից, տօնում էր իր ազատագրումը»:

«Հայաստանի կարմիր բանակը Քաղաքացիական կռիւներում, 1920-1921» գրքին մէջ (էջ 31), կը կարդանք հետեւեալը այս կռիւներու մասին.—

«1920 թուականի Հոկտեմբերի 10-ից մինչեւ Նոյեմբերի 20-ը կատաղի մարտեր տեղի ունեցան 11-րդ բանակի եւ դաշնակցական

զինուած ուժերի միջեւ՝ Զանգեզուրի շրջանում: Դաշնակները, Նըժ-
դեհի գլխաւորութեամբ, Ղաթարը գրաւելուց յետոյ անցան Օրդու-
բաթի շրջանը եւ ամրացան այնտեղ: Դաշնակցական լրտեսներին ժա-
մանակաւորապէս յաջողուեց իրենց կողմը գրաւել Զանգեզուրի շրջա-
նի խարուած ու մոլորուած որոշ գիւղացիներ: Տեղի ունեցին
տարրերի աջակցութեամբ դաշնակցական զօրքը յարձակուեց 11-րդ
բանակի զօրամասերի վրայ, գրանով իսկ խոչընդոտ հանդիսանալով
նրանց առաջխաղացմանը՝ դէպի Զանգեզուրի խորքերը:


«Դաշնակները կենտրոնացրել էին Սիսեանում Ծամիրի ջոկա-
տը՝ 200 հոգի, եւ Ղաթարում Նժդեհի ջոկատը՝ 600 հոգի: Դաշնակ-
ցական զինուած ուժերի թիւը Զանգեզուրում կազմում էր շուրջ 2500
մարդ»:

Նոյն գրքին 32, 33, 34 էջերու մէջ կը կարդանք.—

«Հոկտեմբերին դաշնակցական հրամանատարութիւնը մեծ
ուժեր կենտրոնացնելով Ղաթարի մօտ, դորձադրեց բոլոր ջանքերը,
որպէսզի գրաւի Հանքերը եւ ամրանայ Ղարաքիլիսա ու Ենգիջա բը-
նադներում: Հոկտեմբերի 25-ին թշնամին գրաւեց Ղարաքիլիսա,
Ենգիջա գիւղերը եւ դուրս եկաւ Ուչ-Թափա լեռնաշղթայի ձախ թեւը
եւ Ուչ-Թափա սարը տանող դիրքային գիծը: 11-րդ բանակի շտաբը
1920 թուականի Հոկտեմբերի 27-ին զանգեզուրեան զօրքի հարուա-
ծային խմբին հրամայեց՝

Ա) 1-ին հարուածային խմբի 28-րդ հրաձիգ գիւղիային (գի-

Ղ Ա Ր Ա Ք Ի Լ Ի Ս



ւիզիայի հրամանատար Նեոտերոփսիկի), 83-րդ եւ 84-րդ հրաձիգ բրիգադաներին, թեթեւ մարտկոցի դասակին, լեռնահեծեալ մարտկոցի զօրամասերին՝ մինչեւ Հոկտեմբերի 31-ը հարուածային զօրասիւնը կենտրոնացնել Շահվեղլար գիւղում, լուսաբացին յարձակուել եւ գրաւել Ղաթարի հանքերը:

Բ) 2-րդ հարուածային չարասեան զօրքերին՝ 1-ին հեծեալ բրիգադին, 18-րդ հեծեալ գիւլիգիային, 103 եւ 105-րդ հեծեալ գնդերին, 28-րդ հրաձիգ գիւլիգիային եւ լեռնահեծեալ գումարտակին՝ մինչեւ Հոկտեմբերի 31-ի երեկոյ կենտրոնացնել բրիգադի զօրամասերը Եայջի գիւղի շրջանում, Նոյեմբերի 1-ի լուսաբացին գրաւել Վերին Խոտանան գիւղն ու Խաչին Խուլթ լեռնազաղաթը...:

«11-րդ բանակի վերսյիշեալ զօրամասերը Հոկտեմբերի վերջերից մարտերի մէջ մտան գաշնակցական դինուած ուժերի դէմ: Դաշնակները բաւական մեծ ուժ ունէին Եայջի գիւղում:

«Այդ ուղղութեամբ տեղի ունեցան յամառ մարտեր: Կարմիր բանակին հրամայուած էր՝ առաջընթացի ժամանակ անխնայ կերպով ոչնչացնել գաշնակցական բանդիտներին, օգնել խաղաղ բնակչութեանը, ոչինչ չվերցնել նրանց գոյքից:

«Դաշնակների դէմ մղուող մարտերում Կարմիր Բանակի զօրամասերը խոշոր աջակցութիւն ստացան տեղի բնակչութեան եւ կոմունիստական ջոկատների կողմից: Շարունակելով առաջխաղացումը, Հոկտեմբերի 27-ին, 18-րդ հեծեալ գիւլիգիայի 103 եւ 105-րդ գնդերը դուրս եկան Սիդնակ, Քեշիշքենդ գիւղերի շրջանից, տեղաւորուեցին Կալասար կոչուած բնակավայրում: Առաջին հեծեալ գումարտակը, որն իր կազմում ունէր չորս թնդանօթ, տեղաւորուեց Շուչաքենդում:

«Հոկտեմբերի 31-ին 18-րդ գիւլիգիայի առաջին բրիգադի 103 եւ 105-րդ գնդերը, դուրս գալով Գորխից, շարժուեցին դէպի Եայջի - Քիւրուտլար ուղղութեամբ, իսկ 18-րդ հեծեալ բրիգադն անցաւ Ուչ-Թափա բարձունքը եւ միացաւ քուրփական(*) կարմիր գնդին:

«Զանգեզուրեան իմրի զօրքերին հրամայուած էր մինչեւ Նոյեմբերի վերջը ազատագրել Զէյլա եւ Շահվեղլար գիւղերը:

«Կարմիր բանակի զօրամասերը (83-րդ եւ 84-րդ բրիգադաները) յաղթահարելով մեծ դժուարութիւններ, ետ մղեցին թշնամու գրոհները եւ մինչեւ Հոկտեմբերի 4-ը գրաւեցին Արծուանիկ գիւղն ու տեղաւորուեցին այնտեղ: 250 եւ 252-րդ գնդերը տեղաւորուեցին Արծուանիկի հիւսիս-արեւելեան մասում. իսկ 240-րդ գունդը՝ 5222 բարձրութեան լանջերում: Նոյն ժամանակ 251 եւ 252-րդ գնդերը ա-

(*) Պերնախօս խոստովանութիւն, ուր կը հաստատուի, թէ բոլշեիկները քուրփերու հետ միասնաբար յարձակած են Զանգեզուրի գանազան շրջաններուն վրայ:

ուաջադրանք էին ստացել մինչև Նոյեմբերի 6-ը գրաւել Ղաթարը, իսկ 248-րդ գունդը պէտք է թշնամուն ետ շարտէր Սեւքարի ուղղութեամբ եւ գրաւէր Մէուլ-Կաչալա ու Սեւքար գիւղերը:

«Իաշնակները այդ ուղմանակատում կենտրոնացրել էին իրենց լաւագոյն զօրամասերը: Նրանք յանկարծակի յարձակուեցին Կարմիր Բանակի վրայ եւ գրաւեցին Չափնի, Չէյվա եւ Արծուանիկ գիւղերը: Թշնամուց անվնաս լինելու համար 83-րդ բրիգադի զօրամասերին հրամայուեց՝ քաշուիլ Գորիսի կողմը եւ բռնել պաշտպանողական դիրք՝ Բազարչայի ամերում:

«Արծուանիկ — Չափնիի ուղղութեամբ գործող կարմիր զօրամասերի ժամանակաւոր անյաջողութեան պատճառը հետեւեալն էր. զօրքերի երկրորդ խումբը, որին հրամայուած էր առաջ շարժուել դէպի Բազարչայի ուղղութեամբ, դանդաղեցրեց իր առաջխաղացումը, գրանուլ իսկ հակառակորդին հնարաւորութիւն տուեց Սոտանանի շրջանում կենտրոնացնել իր լաւագոյն զօրամասերը եւ թեւերից հարուածել Կարմիր Բանակին: Անյաջողութեան պատճառներից միւսն էլ այն էր, որ 20-րդ դիւիզիան կռուի վճռական պահին չկարողացաւ



Չէյվա

օգնութեան հասնել 84-րդ բրիգադին: Նժդեհի հրամանատարութեամբ գործող զօրամասերը օգտուելով դրանից, ճակատային գրոհ սկսեցին Կարմիր Բանակի դիրքերի վրայ: Բացի այդ՝ Կարմիր Բանակը խիստ յոգնած էր եւ զգում էր պարէնի ու հագուստեղէնի պակաս»:

Վերոգրեալ քիչ մը երկար մէջբերումները, առնուած սովետական աղբիւրէ, ցոյց կու տան, թէ բոլշեւիկեան 11-րդ բանակը, հակառակ իր թիւին ու դինական առաւելութիւններուն, չյաջողեցաւ ամրանալ իր գրաւած շրջաններուն մէջ, շնորհիւ հայ մարտիկներու անձնազոհութեան, Նժդեհի խիզախ ու հնարամիտ ղեկավարութեան, ինչպէս նաեւ իրե՛նց՝ բոլշեւիկներու խաբեպատիր ու վայրագ գործունէութեան պատճառով:

11-րդ բանակի հրամանատարութիւնը, շուտով կը հրահանգէ նախ՝ իր լաւագոյն ուժերը (250, 252 եւ 254-րդ դնդերը) կենտրո-

նացնել եւ ապահովել իրենց ձախ թելը, ապա հեծեալ գունդի պաշտպանութեան տակ, Նոյեմբերի 4-ին եւ 5-ին կ'անցնին յարձակման, հրետանային ուժեղ կրակի աջակցութեամբ: Անոնց նպատակն էր գրաւել Արժուանիկ եւ Չէյվա գիւղերը: Առաջին զօրասիւնի զօրքերն ալ չեն յաջողիր գրաւել Ղափանը, քանի որ Նժդեհի զինակիցները արդէլք եղան Կարմիր Բանակի ձախ թելի զօրամասերուն՝ միանալու իրենց աջ թելի զօրամասերուն:

«Օգտուելով յարմար առիթից, դաշնակների առաջապահ զօրամասերը յարձակուեցին 248-րդ զնդի վրայ եւ ձեռք բերելով դիրքային որոշ առաւելութիւնները՝ վտանգ սպառնացին Արժուանիկի ռազմաճակատի զօրամասերին:

«Կարմիր բանակի 250 եւ 252-րդ զնդերին շյաջողուեց վերականգնել կապը 84-րդ բրիգադի զօրամասերի հետ եւ միանալ նրանց, քանի որ հակառակորդը կենտրոնացնելով աւելի մեծ թիւով ուժեր, կարմիր զօրամասերին հարկադրեց նահանջել դէպի Գորիս(*):

1920 թ. Նոյեմբերի 20-ին առաջին գիծերու վրայ գործող զօրամասերը հրահանգ կը ստանան թողուլ ռազմաճակատը եւ ետ քաշուիլ դէպի Սովետական Ատրայէյճան:

1920 թ. Նոյեմբերի 21-ին Կարմիր Բանակի վերին ուժերը կը հեռանան Գորիսէն: Նոյեմբեր 22-ին Նժդեհի ուժերը կը մտնեն Գորիս:

84-րդ զօրամասի հրամանատարը Նոյեմբեր 24-ին երեք հոգիէ բաղկացեալ պատգամաւորութիւն մը կ'ուղարկէ Սպարապետ Նժդեհի մօտ անոնց միջոցաւ յայտնելով իրենց ցաւալի դրութիւնը, թուրքերու անընդհատ յարձակումները, հացի եւ այլ պարէնի պակասութիւնը, ճամբաներու գոց ըլլալը, եւ կը խնդրէ իրենց օգնել ու ճամբայ բանալ դէպի Եւլախ երթալու եւ կամ իրենց զէնքերն ու ռազմամթերքը ստանալով մեկնելու Երեւան: Այդ երեք ռուս պատգամաւորները կը մնան Կոռինձոր գիւղը, մինչեւ Նժդեհի վերադարձը, որ գործով մեկնած էր Սիսեանի կողմը:

84-րդ զօրամասի հրամանատարը տեսնելով, որ պատգամաւորներու վերադարձը կ'ուշանայ, այդ առիթէն օգտուելով նամակ մը կ'ուղարկէ ապստամբ ուժերուն եւ սակայն Չանգեղուրի հրամանատարութեան կողմէ կը մնայ անպատասխան: Եւ ահա Աւդալլարի եւ Չարուղի կիրճերուն մէջ, 84-րդ զօրամասի մնացորդ զինուորներու հրամանատարը՝ Սեմենով եւս, զնդապետ Նժդեհի անունով նոյն թուի Նոյեմբեր 26-ին կ'ուղղէ նամակ մը, խաղաղ բանակցութեան առաջարկներ ներկայացնելով, ինչ որ իրենց հին յանկերզն էր դարձած, անվերջ կրկնութիւններով:

(*) «Հայաստանի կարմիր բանակը Բաղաբաղիակաճ կոիւնեքում», էջ 35:

Կարմիր գորարանակի հրամանատարութեան պաշտօնական գրութեանց մէջ բազմիցս յիշուած սպանակիքները, լոկ խօսքեր էին միայն՝ ցոյց տալով իրենց անգորութիւնը: Նժդէհ համոզուած ըլլալով այդ իրողութեան եւ դէմ չըլլալով նաեւ հաշտութեան բանակցութիւններուն, միաժամանակ խորապէս դիտնալով, որ բոլշեւիկեան հաշտութիւնը վաղանցուկ է, կ'որոշէ իրենց պաշտօնական գրութիւններուն եւ դրկած պատգամաւորներուն պատասխանել ընդարձակ գրութեամբ մը, ուր առիթէն օգտուելով մի առ մի կը թուէ անոնց տմարդի բոլոր արարքները, կատարած արիւնահեղութիւնները, բռնարարութիւններն ու աւերները: Եւ ահա անոնց բարբարոսութեան ամբողջ պատկերը կու տայ հետեւեալ պաշտօնական գրութեամբ.

Կարմիր Զօրամասի Պետին եւ Զինուորական Կոմիսարին

«Զանգեզուրի ապստամբական հրամանատարութիւնն» ընդունում է Ձեր առաջարկութիւնը՝ հաշտութեան բանակցութիւնները վերսկսելու համար, բայց ոչ Չարուզ գիւղում, այլ Գօրխում, որտեղ եւ առաջարկում է ուղարկել Ձեր լիազօր ներկայացուցիչներին:

«Օգտուելով առիթից աւելացնում եմ:

«Դուք Ձեր անթիւ ու անհամար թերթերում, թուրքիկներում, ինչպէս եւ Ձեր ինձ ուղարկած վերջին երկու գրութիւնների մէջ Զանգեզուրի աշխատաւոր մասսաների ապստամբութեան եւ Ձեր այնպիսի շողութեան պատճառը համարում էք Զանգեզուրի ապստամբական հրամանատարութիւնը:



Հին Խնձորեսկ

«Ինչպիսի՛ ինքնախարէութիւն :

«Արեան ու երկաթի սիստեմը, որով Դուք կառավարել էք ու շարունակում էք կառավարել ժողովուրդը, յեղափոխական դեմոկրատիայի ու պատմութեան կողմից վաղուց ի վեր թքուած ու դատապարտուած այդ սիստեմը Ձեզ շատ հեռուն, բնական է, տանել չէր կարող :


«Սօսեմ կօնկրետարար :

«Ղափանին տիրելու համար Դուք աւանդարդ ունենալով դարեր շարունակ հայի արիւն քրտինքով ապրող ոչակցիոն թրքութիւնը, հրի ու սրի էք մատնում շրջանիս զիւղերից ամենարարեկեցիկը — Ձէյվան եւ Ձեր այդ վանդալական ակտը համարում յեղափոխական :

«Դուք կրկնում էք Ձեր յարձակումները Արծուանիկի վրայ եւ Ձեր սանձարձակ արարքներով, կին ու երախաների կոտորածով ու բռնարարումներով մեզ յիշեցնել էք տալիս տխրահռչակ ենիչերիների ձեռքով կատարուած բարբարոսութիւնները :

«Դուք քառասուն օր շարունակ ոմրակոծում էք Շիւանիձորը, եւ երբ երկու հայ դաւաճանների դաւադրութեամբ Ձեզ յաջողում է մտնել այդ չարարախտ զիւղը, Դուք այնտեղ քարը-քարի վրայ չէք թողնում : Տեղի են ունենում սովորական սպանութիւններ, կին ու աղջիկների բռնարարում, ալան-թալան եւ նման ենիչերական ակտեր :

«Ես հրամայել եմ հաւաքել Ձեր թնդանօթներից, ոմբաձիգներից ու գնդացիներից այս զիւղի գլխին թափած ամբողջ երկաթն ու արծիճը եւ նրանից Արաքսի ափին, մի բարձր սարի վրայ, կանգնեցնել մի տխուր կոթող այս սեղմ արձանադրութեամբ՝



Նոր Խնձորեսկ

«Նրանց անունը կարմիր էր, գործերը սեւ: Թող յաւերժ անիծուած լինեն նրանք»:

«Դուք տաճիկ ասկեարներով պաշարում էք Եայջին, տեղահանում ժողովրդին եւ թալանում: Պանիկայի մատնուած ժողովրդի հետ մի մասը կոտորում է գիւղի պատերի տակ, մի մասը թափում գետը, խեղդում, իսկ ազատուածները գիւղի վերագրաւումից յետոյ, անիծելով իրենց օրն ու արեւը, մերկ ու քաղցած, գալիս ու ծրւարում են իրենց աւերուած տներում:

«Եւ այդ բոլորից յետոյ դուք միամտօրէն զայրանում ու դարմանում էք եւ առանց խղճի խայթի շարունակում էք ճառել աշխատաւորութեան շահերից:

«Ահա ինչով եւ ինչպէս աշխատաւոր գիւղացիութեան զգուանքն ու թշնամանքը շահեցիք եւ ստիպեցիք նրան անպատիւ կեանքին գերադասել պատուաւոր մահը:

«Այլեւս գաղտնիք չէ աշխարհի համար, որ Ձեր դրօշակի տակ գործում են արեւելքի անէծքն ու ամօթը կազմող օսմանեան ջարդարար ու հայակեր փաշաները:

«Տաճկա-Հայաստանի վեց վիլայէթներում մահուան թագաւորութիւն ստեղծող (ուժ հարիւր հազար անթաղ մեռելներ!) հռչակաւոր էնվեր ու Սալիլ մարդակերներն այսօր Ձեր քաղաքական եւ զինուորական խորհրդատուներն են հանդիսանում:

«Դուք յանուն Ձեր ուտօսիտական ցնորքների շփարանեցիք Քեմալի հայաջինջ հորդաները Հայաստան քաշելու եւ նրանց սրին ու սուինին մատնելու հայ աշխատաւորութեան Փիղիքական դոյութիւնն ու նրա դարաւոր քրտինքի արդասիքը:

«Ու այդ բոլորից յետոյ դեռ Ձեզ զարմացնում է հայ մասսաների տպատամբութիւնը:

«Օսմանեան ունեւորներն ու սոցիալիզմը !

«Արեւելքի բորենիներն ու յեղափոխական աշխատաւորութիւնը !

«Ի՞նչ արսուրդ, ի՞նչ պղծանք ու հայհոյանք սոցիալիզմի ու յեղափոխութեան հասցէին:

«Պատմութիւնը, անկաշառ պատմութիւնն իր խօսքը, իր անէծքի խօսքն ունի ասելու նրանց, որոնք յանուն իրենց քաղաքական ու ռազմազիտական նպատակների պրօֆանացիայի ենթարկեցին մարդկութեան տառապող մասի կրօնը հանդիսացող սրբազան սոցիալիզմը:

«Դուք գիտէք, որ Ղարաբաղի գիւղացիութեան ամէն մի շունչն ամբողջ տարուայ համար ունի մի փթից մի քիչ աւելի հացահատիկ, իսկ զանգեզուրցին՝ մօտ մէկուկէս փութ: Դուք գիտէիք այդ, կայ ստատիստիկա: Գիտէք եւ այն, որ երկու ամսից յետոյ սովն ու տիՖն այդ գծրախտ գիւղացիութեան մէջ կ'ունենան առատ հունձ: Այդ գիտենալով հանգերձ Դուք շարունակում էիք նոր ուժեր քաշել Ձան-

գեղուր :

«Ձեր տրանսպորտն ուժեղացնելու նպատակով Դուք վերջին գրաստը խլեցիք հայ աշխատաւորներից : Գործախ պատերի տակ ու ճանապարհների վրայ թափթփուած հազարաւոր բեռնակիր անասունների լէշերը շատ բան են ասում Ձեր դաժան, անմարդասիրութեան մասին :

«Սակայն միայն տնտեսական քայքայումով չէք բաւականացել Դուք :

«Սոցիալապէս քայքայել էք ու գլխատել Չանդեղուրի բոլոր հասարակութիւնները :

«Ով Ձեր շարքերում չի եղել, դուք նրան Ձեր թշնամին էք համարել ու ոչնչացրել :

«Զարուղի սպանդանոցն ու Գործախ բարդուղիմէստեան դիշերները դեռ չեն մոռացուել :

«Ես տեսայ Ձեր ստեղծած կատակոմբներն եւ Ձեր զոհերից շատ Ձեզ համար ցաւեցի :

«Եւ հէնց Ձեր այդ խելագար ու մասսայական տեռորը, Ձեր տեռորի հունձը մեծապէս արագացրեց Ձեր սպարտութիւնը : Դա ճշմարտութիւն է, ընդունեցէք :

«Դուք վաղուց էք թքել բոլոր տեսակի բարոյական սկզբունքների ու հասկացողութիւնների վրայ :

«Ձեզ համար չկայ սրբութիւն :

«Ձեր չեկերի դէղերը, Ձեր բօսիղմը, կաշառման սիստեմը, Ձեր առանձին պոստերը, որոնց առաջ նսեմանում են ցարական բոլոր տեսակի ժանդարմայական վարչութիւններն ու օխրանկաները, Ձեր յարուցած կատաղի հալածանքն ազատ խօսքի ու մտքի դէմ, Ձեր արձձի եւ սուինի լեղուն, որ ժողովուրդը շուղեց հասկանալ, Ձեր շպիոնաժը, Ձեր չրեզվըշայկաները, Ձեր խորհրդաւոր սպանութիւններն ու հարիւրներով սլատանդ վերցնելու խայտառակ սիստեմը, Ձեր քաղաքական անհամբերութիւնն ու ազանդաւորութիւնը — ահա Ձեր սպարտութեան սլատանները : Ընդունեցէք, դա էլ է ճշմարտութիւն :

«Ձեր նուաճած վայրերում դուք զինեցիք հասարակութեան տականքները եւ նրանցով — նախկին ժանդարմներով, լրտեսներով, դրոպանահատներով, գողերով, աւազակներով, շանտաժիստներով ու նման քրէական տիպերով խտացրիք Ձեր շարքերը :

«Ո՞վ է Արմենակ Ղարապետեանը :

«Քաղաքական մի ողորմելի աւանդիւրիստ, մի հողեկան հիւանդ, մի սաղիստ, որն իւր անմեղ ու անզէն զոհերին բարբարոսաբար մորթել է տալիս եւ հրճւում :

«Այս «կարմիր» ստահակը, որի փռչտոցով նստում ու կանգնում էք Դուք (իր խօսքերով), իր հօր վրէժը լուծելու համար սլատ-

րաստ է կարմիր բանակն եւ Չանդեղուրի աշխատաւոր գիւղացիութիւնն ոչնչացնել :

«Ո՞վ է Երեմիա Բակունցը, Մուշեղ Չաքարեանը :

«Մէկը միւսին արժող երկու կուսակցական դասալիքներ, իրենց կատարած դեղձումների համար թէ կուսակցութիւնից եւ թէ Չանդեղուրի կենտրոնական խորհրդից դուրս քշուած :

«Ո՞վ է Տիգրան Մելիք - Շահնազարեանը :

«Թողենք, որ ինքն որակէ իրեն :

— «Ընկերներ» — անձնասպանութիւնից առաջ գրում է վերջինս, խարուած ենք, խարուած բոլորս :

«Ատրպէյճանում՝ սկսած Նարիմանովից, չի եղել եւ չկայ մի հատիկ բոլշեւիկ :

«Մուսաւաթը, հին մուսաւաթն է գոյնը փոխել եւ մեզ խաբել : Դարձի եկէք, ընկերներ, դարձի, քանի դեռ ուշ չէ : Ես գիտակցօրէն չեմ դաւաճանել հայ աշխատաւորութեանը, բայց անդիտակցօրէն ծառայել եմ ոչակցիոն Ատրպէյճանին : Ես խոստովանում եմ իմ մեղքը, թող Աստուած ու պատմութիւնը ներեն ինձ : Մեռնում եմ» :

«Ահա ճշմարտութիւններից ամենատարրականը, ընդունէք :

«Դուք անվերջ խօսում էք, գրում հայ եւ թուրք աշխատաւորութեան համերաշխութեան ու եղբայրութեան մասին եւ միաժամանակ շատ տեղերում թուրք աշխատաւորութիւնը հանում հայերի դէմ, նրանց ձեռքով թափում հայի արիւնը, աւերում հայ գիւղերն եւ այսպիսով աւելի խորացնում ազգային անտաղոնիզմը :

«Դուք հաշտութիւն էք առաջարկում ինձ, իսկ Ատրպէյճանի 70 ինժիններներն ու տեխնիկները Հոկտեմբերի 5-ից սկսած աշխատում են Ջիրրայիլի գաւառում, որպէսզի Չանդեղուրի լեռնային մասերը թնդանօթներ տեղափոխելու հնարաւորութիւն ստեղծեն :

«Դուք զինաթափել էք հայ աշխատաւորութեանն եւ շարունակում էք այդ տխուր գործը, երբ մինչեւ ատամները զինուած Մուսաւաթական Ատրպէյճանը յարմար առիթի է սպասում Չանդեղուրն առանց հայի թողնելու :

«Ձեզ խարուածներիդ համար Ատրպէյճանը սովետական է, իսկ հայ աշխատաւորութեան համար դա մնում է նոյն ոչակցիոն հայահալած Մուսաւաթական «Հանրապետութիւնը», որի ղիւղիղները՝ դեռ տարին լրացել ինչ փորձեցին Չանդեղուրը հրի ու սրի մատնել, սակայն ջարդուելով Չաբուղում յետ քաշուեցին :

«Լսէք եւ այս ճշմարտութիւնը :

«Մեր ձեռքն են ինկած մի շարք դոկումենտներ, որոնք այլ բան են ասում Ատրպէյճանի մասին :

«Թւում է, որ այժմ քիչ բան չէ պարզուած եւ Ձեր լիազօր ներկայացուցիչ Լրգրանի համար :

«Մոսկուան եւ Դուք, բոլորդ խարուած էք Քեմալիստներից :

Այդ բանը, ըստ իմ ունեցած տեղեկութիւնների, արդէն պարզուած է եւ Մասկուայի եւ Լըզրանի համար:

«Յեղափոխական լողուններով Քեմալն եւ ընկերութիւնը քողարկել են իրենց պանիսլամական ամենառէակցիոն նպատակները:

«Պանիսլամիստների, որոնք շատ են Ձեր դրօշակի տակ, նպատակն է միանալ Ատրպէյճանի հետ, տիրել Պաքուին, կապուել Տաղրստանի հետ եւ քշել ուսաներին Հիւսիսային Կովկասից:

«Եթէ լայն եւ ստոյգ ինֆորմացիա ունէք քաղաքական աշխարհից, ապա այդ բանը վերջին օրերս պէտք է յայտնի լինէր եւ կարմիր հրամանատարութեանը:

«Վերջացնելով երկար գրութիւնս երկու խօսք էլ ասեմ իմ մասին:

«Ես, որին այնքա՛ն հայհոյում են Ձեր թերթերն ու թոուցիկները, աւելի շեշտուած ու հին սոցիալիստ եմ, քան ձեզ մոլորեցնող Նարիմանովներն ու Կարայեւները:

«Յանուն իմ յեղափոխական հաւատամքի, եղել եմ բոլոր բանտերում, Արաքսի ափից մինչեւ Պետրոկրատ: Աւելի քան երեք տարի ես շղթաներ եմ մաշել բանտերում եւ աքսորավայրերում: Կուուել եմ եւ կուուելու եմ բանութեան դէմ, ինչ քողի տակ եւ ինչ գոյնով էլ որ դա երեւան դայ՝ ճնշելու յեղափոխական աշխատաւորութիւնը:

«Կուուել եմ թուրք աշխատաւորութեան ազատութեան համար Պարսկաստանում, Պալքաններում՝ Մակեդոն ժողովրդի փրկութեան համար: Կուուում եմ եւ այսօր:

«Եթէ իմ օգնութեան կարիքն երբեւիցէ դպացիք, դիմէք, կը հասնեմ: ՆԺԴԵ Հ»:

1920 թ. 30 Նոյեմբերի, Գորիս

Նժդեհի այս պատասխանը, որ ամփոփած է իր մէջ դառն ճրջմարտութեան ամբողջ շարան մը, որոշ ժամանակ մը լուեցնել տուաւ 28-րդ դիւիզիայի կարմիր հրամանատարութեան եւ քաղաքական նուրբ նկատառութեամբ արդելք հանդիսացաւ նոր դիմումներու:

Քանի մը ամիսներու ընթացքին, հրամանատար Նժդեհ, Օխչիի, Գեղուածորի, Շուռնուխի, Որոտանի, Ասկիւլումի եւ Չաւրնդուրի փառահեղ յաղթութիւններով կ'արդարացնէր իր վրայ դրուած յոյսերը:

Այս կոիւնեքու ընթացքին ձեռք ձգուած էին մեծ քանակութեամբ ցորեն եւ սաղմամթերք:

Այսքան մեծ ջանքերու եւ անձնազոհութեան շնորհիւ է, որ ժողովուրդը կը սկսի ազատ շնչել եւ պաշտել իր հերոս Սպարապետը:

Այսպիսով, երկիրը կը մաքրուի կարմիր զօրամասերէն եւ կը վերադրուուին Արեւելեան սահմանները:

Յաղթական վաշտերը բաղմամբիւ դերիներով, ձեռք ձգած գընդացիներով, հրացաններով, հեռախօսային գործիքներով, խրա-

մաշինութեան վերաբերեալ կազմածներով ու դրօշակներով կը վերադառնային դէպի հանքերը, տօնելու Սիւնիքի ժամանակակից պատմութեան փառքի շքեղ էջ մը գրկող իրենց այս նոր յաղթանակը:

Մեծամասնական ուժերու պարտութենէն ետք, Պաքու հրատարակուող «Կրասնի Աւանկարտ» թերթը «Հօր գէնի — Մեր կռուի ձեւը» խորագրին ներքեւ այսպէս կ'արտայայտուէր.

«Արեւելքի մէջ յայտնուած է կրտսեր քոյրը մեծ դաշնակիցներու — Արեւելեան համաձայնութիւնը Հայաստանի, Վրաստանի, Ռումանիոյ եւ Յունաստանի պուրժուազիաներն են կազմած այդ դաշնակցութիւնը, որպէսզի խեղդեն ծաւալուող յեղափոխական շարժումը արեւելքի մէջ: Արեւելեան Համաձայնութեան անմիջական ներկայացուցիչներէն մէկը աւազակապետ Նժդէհն է, որ իր բանակը կազմած է ազգային ատելութեամբ լեցուած հայերէ: Մինչդեռ Նժդէհը Չանդեղուրի լեռներուն վրայ աւազակութեամբ կը դառնայ, Կարմիր սուիները փախցուցին ուրիշ գայլ մը՝ Դրօն:

«Ընկեր կարմիրները պէտք է ամուր սեղմեն իրենց հրացանները եւ քշեն սեւ գայլ Նժդէհը:

«Կարմիր Բանակի հանդէպ խորամանկ եւ յամառ թշնամին՝ Նժդէհը, Դրօն եւ այլ հին գայլերը, լաւ գիտեն զինուորական դործը: Ուստի եւ այդ ապստամբներու դէմ անհրաժեշտ է մեծ ուժ, ջարդելու համար անոնց հրօսակախումբերը: Նոյն ատեն մենք պիտի չըժողովուրդը, որ ապստամբներու յաջողութիւնը մեծապէս կախուած է ազգաբնակչութեան տրամադրութիւններէն: Ահա թէ ինչու Կարմիր Բանակը, թշնամիին կենդանի ուժերը խորտակելէ դատ, պիտի ձգտի ժողովուրդը ըմբոստացնել, թշնամացնել ապստամբութեան ղեկավարներուն դէմ»:(*)

Խօսելով Չանդեղուրի վերջին յաղթական կռիւներու մասին, Հնչակեան Կուսակցութեան Թաւրիզի խմբակի օրկան «Զանգ» թերթը կը գրէ.

«Պատմական Սիւնիքը, — Չանդեղուրը, դարձեալ կոր ի գլուխ ջարդել է 4000 թաթար թալանչիներու, որ ծածկուած բոլշեւիկ անուան տակ, ուղել էին խուժել հայ առիւծներու բոյնը եւ աւերակ դարձնել մեր սէգ Չանդեղուրը»:(**)

Չանդեղուրի վերջին յաղթութիւններու առիթով Հ. Հ. կառավարութեան քարտուղարը կը գրէր Նժդէհին.

«Ամբողջ ընկերները հիացմունքով կը հետեւին Դաւիթ — Բէկի հողեզաւակի հերոսական պայքարին եւ կարող եմ ըսել, թէ ամբողջ

(*) «Կրասնի Աւանկարտ», քիւ 52, 1920 Հոկտ. 30, Բագու:

(**) Արտատպուած «ԱՅԳ» շաբաթաթերթէն, 24 Հոկտ. 1920, քիւ 40:

մեր կուսակցական մարմիններու եւ առ հասարակ հայութեան լայն խաւերու ջերմ համակրութիւնը Ձեզ հետ է» :

Երեւան, 30 Նոյեմ. 1920

Յ. ՏԵՎԷՃԵԱՆ

Բոլշեւիկեան եւ առաջնայճանեան ներխուժող կանոնաւոր եւ անկանոն զինեալ ուժերուն զէմ տարուած յաղթանակները կը բարձրացնեն ժողովուրդին եւ մարտիկներուն բարոյական կորույր: Դժուարին պայմաններու մէջ, զինական անբաւարար միջոցներով տարուած յաղթանակները մզիչ ուժ կը հանդիսանան, որպէսզի ժողովուրդը մտածէ կազմակերպման մասին:




Լ. Շանթ, Յ. ՏԵՎԷՃԵԱՆ, Յ. Քաջագունի, Ս. Վրացեան
(նկարուած 1922-ին):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Իր աղգային — քաղաքական շահերու տէր, եւ մանաւանդ անկախ եւ քիչ-չատ հզօր Հայաստանը, իր աշխարհադրական դիրքի շրջնորհիւ՝ խոչընդոտն էր Խ. Միութեան եւ Թուրքիոյ բարեկամութեան: Իյնալով Խորհրդային Միութեան ու Թուրքիոյ միջեւ, ան արգելք կը հանդիսանար անոնց միացման եւ մէկ ճակատ կազմելուն: Ահա թէ ինչու, թէ՛ մէկուն եւ թէ՛ միւսին ցանկալի էր Հայաստանի անկախութեան վերացումը եւ հայ ժողովուրդի ոչնչացումը որպէսզի կարողանային ազատօրէն կապուիլ:

Այսպէս ուրեմն, ժամանակաւոր շահերու, ժամանակաւոր հաշիւներու հետեւանքով պատմականօրէն երկու թշնամի պետութիւններ՝ Ռուսիա եւ Թուրքիա եղբայրական ձեռք կը մեկնէին իրարու, «ընդհանուր թշնամիին»՝ Հայաստանի դէմ: Այդ եղբայրութիւնը շատ շուտով կը վերածուի նաեւ քաղաքական խոչոր ալտի մը. — 1919 թուի աշնան, Սամսոնի մէջ կը կնքուի բարեկամական դաշնագիրը



Ա.Փիոն Գարահիսարի
գաղթականները շոգեկառփին մէջ



Գաղթականները
Երեւանի մէջ


մը, որ յետագային աւելի կ'ամրապնդուի 1921 Մարտ 16-ին, Մոսկուայի մէջ:

Թուրք - բուլղարական այդ դաշնակցութիւնը, ընդհանուր առմամբ, ահաւոր աղէտ էր հայ ժողովրդի ու մանաւանդ Հայաստանի անկախութեան համար: Սակայն անոր մէկ յօդուածը յատկապէս Հայաստանի ու հայ ժողովրդի դէմ էր ուղղուած: Բուլղարական Ռուսաստանը ոչ միայն համաձայն կը դառնուէր այլեւ կը պարտաւորէր Քեմալական Թուրքիան յարձակելու Հայաստանի Հանրապետութեան վրայ:

Հայաստանի կառավարութիւնը, անգիտակ այդ դաւերուն, լուռ ու խաղաղ լծուած էր երկրի բարեկարգութեան եւ վերաշինութեան ծանր աշխատանքին:

Նոյն ժամանակ Հայաստանի Հանրապետութիւնը արտաքին աշխարհի մէջ շտեմնուած յաջողութիւն ձեռք բերաւ 1920 թուին: Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը, որպէս մէկ անկախ պետութեան ներկայացուցչութիւն, դնաց Սեւր եւ դաշնակից մեծ պետութիւններու շարքին ստորագրեց Թուրքիոյ մահուան դատաւճիտը եւ Հայաստանի Հանրապետութեան յաղթանակի նուիրագործումը՝ Սեւրի սրտամական դաշնագիրը, 10 Օգոստոս 1920 թրւականին:

Հայաստանի կառավարութիւնը դռները կը բանայ հայ ժողովուրդին առջեւ, որուն մեծ մասը Թուրքիա եւ Ռուսիա կը դառնուէր: Դուռ կառավարութիւնը օգտուելով այս թոյլատուութենէն Հայաստան կ'ուղարկէ իրեն վստահելի չեկիստներու և սպաներու խումբ մը, որպէսզի բուլղարական քարոզչութիւն կատարէ:



Ապաստան սրահ մը Էջմիածնի մէջ



Ժամանակաւոր որբանոց մը Կարսի մէջ

Ռուսիայէն եկած հայ սպաները հայկական բանակին մէջ պաշտօն ստանձնելով, կ'երթան մինչև Հայաստանի սահմանները: Անոնց առաջին գործը կ'ըլլայ բոլշևիկեան քարոզչութիւն կատարել եւ դրժրախտարար կը յաջողին հայ զօրքի մէկ մասը թունաւորել բոլշևիկեան ալլասերիչ գաղափարականով: Անոնք կ'ըսէին. «Ինչո՞ւ կը կըռուիք եղբայրական քուրքի ուէմ, գացէ՛ք տուն: Թուրք զինուորը կու գայ ոչ քէ քէ սպաննելու եւ քու տունն ու տեղը աւերելու համար, այլ ան կու գայ Դաշնակները պատժելու եւ իշխանութիւնը անոնցմէ խլելու: Այժմու քուրքը այլեւս այն քուրքը չէ, այլ մեր եղբայրը եւ հայ ժողովուրդի բարեկամը»: Խեղճ հայ զինուորը շարունակ կը լսէ նման խօսքեր, որոնց ազդեցութեան տակ կ'անենայ վարանումներ, մնալով երկուութեան մէջ:

Հայկական կառավարութիւնը շատ ուշ կ'իմանայ բոլշևիկեան եւ թրքական քարոզչութիւնները: Արդէն 15 Սեպտեմբեր 1920-ին, թուրք բանակը Քեաղիմ Քարապէքիրի հրամանատարութեամբ կը մօ-



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿԸ
մարզանփի եւ հրետանիի վարժուքեան ժամանակ

տենայ Օլթիին եւ Սարիղամիշին: Սեպտեմբեր 20 եւ 21-ին կը սկսին կռիւները Սարիղամիշի ճակատին վրայ, Քէորօղլի Բաշի լեռան ուղղութեամբ: 22 Սեպտեմբերին կը դրաւեն Օլթիին, եւ կը շարժին ամբողջ սահմանի երկարութեամբ, շարք մը սաղմահան ճակատներ ստեղծելով: Հետեւաբար հայ բանակը պէտք է բաժնէր իր ուժերը՝ բոլոր ճակատներու վրայ, կարենալ դիմագրաւելու համար թշնամին: Մինչ հայ բանակը հաղիւ կը յաջողէր կասեցնել թշնամին, հիւսիսային սահմանի վրայ կ'երևին մեծամասնականները իբրեւ նուաճողներ: Իրենց բարեկամ թուրքերու օգնած ըլլալու նպատակով՝ խորհրդային 11-րդ Կարմիր Բանակի քանի մը զունդերը Ատրպէյճանէն կը մտնեն Հայաստանի սահմանները, եւ Սեպտեմբեր 19-ին Աղ-

գիրարայի կիրճէն անցնելով՝ կը դրաւեն Ղաղախի քանի մը դիւղերը : Հայկական զօրքերը յանկարծակիի կու գան : Պարզ էր, որ հայկական բանակը, — այն ալ փոքրաթիւ, յոգնած եւ ամէն տեսակէտով դժուարին պայմաններու մէջ, — պիտի չկարողանար կռուիլ երկու ճակատի վրայ, շատ աւելի զօրաւոր երկու թշնամիներու դէմ :

Հայաստանի կառավարութիւնը կը մտածէր Ռուսերու դէթ չէզոքութիւնը ապահովել եւ իր ամբողջ ուժերը կեդրոնացնել մէկ ճակատի վրայ՝ թուրքերուն դէմ : Այդ օրերուն Երեւան կը գտնուէր Խորհրդային Ռուսաստանի լիազօր-ներկայացուցիչը՝ Լըզրանը : Անոր ներկայութիւնը մեծ յոյս էր, մանաւանդ որ իր հերթին շարունակ վառ կը սլահէր այդ յոյսը՝ Հայաստանի կառավարութեան հետ բանակցութիւններ վարելով եւ դանազան խոստումներ շռայլելով : Ան 21 Հոկտեմբեր 1920ին կը ստորագրէ համաձայնութիւն մը Հայաստանի կառավարութեան հետ, խոստանալով, որ Ռուսիա ազդեցութիւն ի դորձ կը դնէ թուրքերու եւ Ատրպէյճանի վրայ՝ որպէսզի անոնք ետ քաշեն իրենց զօրքերը Հայաստանի սահմաններէն եւ հողային զիջումներ ընեն հայ հանրապետութեան :

Դեկտ. 2-ին Հ. Հ. կառավարութիւնը երբ իշխանութիւնը կը յանձնէ մեծամասնականներուն եւ վերջինները շուտով Երեւան կու գան, Դարալազեազը՝ Լեւոնահայաստանը կը մնայ կղզիացած :

Հայաստանը խորհրդայնացաւ : 4 Դեկտեմբերին Քանաքեռէն Երեւան կը մտնեն բոլշևիկեան զօրքը, ինչպէս նաև Հայաստանի համար Պաքուի մէջ կազմուած ռազմա-յեղափոխական կոմիտէն՝ Սարգիս Կասեանի գլխաւորութեամբ : Իշխանութեան փոփոխութիւնը կը կատարուի շատ խաղաղ, առանց որեւէ միջազէպի, առանց կաթիլ մը արիւն թափելու :

Հայաստանի խորհրդայնացումէն ետք, Երեւանէն հեռացողներ առաւելաբար կը մեկնին Չանդեղուրի շրջանը, ուր կը տիրէր Նժդէհի իշխանութիւնը : Այս առթիւ, մեծ յեղափոխական Լեւոն Քալանթարեան կ'ըսէ . —

«1920 Դեկտ. 1-ին հրահանգ ստացանք ներքին գործոց նախարարութենէն թողուլ Երեւանը : Մենք, երեք հոգի, որոշեցինք անցնիլ Չանդեղուր : Գաղտնի կը մնար մեր մեկնելու վայրը : Ընկեր Ռուբէնն ալ համաձայնեցաւ մեր հետ մեկնելու դէպի Չանդեղուր : Շուտով դացի Դրոյի մօտ. կ'ուղէի իմանալ, թէ ան ի՞նչ կը մտածէ : Ան կը մնար Երեւան : Չէ՞ որ այդ բոլշևիկ կոչեցեալներուն չէր կարելի հաւատալ. որքան աշխատեցայ համոզել մեզի հետ գալ, կտրուկ պատասխանեց . — «Կառավարութիւնը հրահանգեր է, պիտի մնամ ինչ որ ըլլայ» : Այնտեղ էր խմբ. Համազասպը. ան կը պատրաստուէր հեռանալ, ինծի առաջարկեց միանալ իրեն, դէպի Թիֆլիս երթալու, մերժեցի . «Դուն ալ գուր ըտրել ես այդ վտանգաւոր ճամբան», ըսաւ Համազասպը : Մենք իրարու հրաժեշտ տուինք, համբուրուե-

ցանք, ցանկութիւն յայտնելով, որ նորէն իրարու կը հանդիպինք Երեւանի մէջ:

«Դրօն երկրորդ անգամ համբուրեց եւ պատուիրեց շատ զգոյշ ըլլալ, լաւ, ընտիր ընկերներ վերցնել հետս: Ընկեր Դրօն գիտէր դէպի ուր երթալս, եւ հաւաստիացուցի, որ օձիք ձեռք չենք տար: «Կաւ դինուած ենք եւ վստահելի ընկերներ ալ ունինք. մեռնիլ կայ, յանձնուիլ չկայ, ժամանակ մը Զանգեղուր կը մնանք, երբ պէտք ըլլայ վերադառնալը, դիւրին է» ըսի իրեն:



ԽՄԲԱՊԵՏ ՄԱՐՏԻՐՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

«Դեկտ. 1-ի գիշերուան ժամը 10-ին պատրաստ էինք շարժուելու, — ընկ. Ռուբէն, ընկ. խմբապետ Մարտիրոսը, ընկ. Մակուեցի Մեսրոպը, ընկ. Համօն (սպայ), ես եւ տասը հոգի մեր պահեստի Միլիցիայի զինուորներէն:

«Եղանակը շատ ցուրտ էր, բայց լաւ հագուած էինք. նստեցանք ձիերու վրայ, անցանք Ղամարլուի շրջանը Իաւա գիւղը, ժամը մէկի մօտ, մեր ընկերներէն մէկուն տունը: Շատ լաւ ընդունեց. հանգրստացանք, հաց կերանք, քիչ մըն ալ գարի վերցուցինք ձիերուն համար, լեցուցինք մեր խուրջիները: Լուսաբացին, ժամը մօտ չոր-

սին, մեկնեցանք Բէյուկ - Վեդիի մօտով. այս ճանապարհը շատ վրտանդաւոր էր, բայց որովհետեւ շատ մօտ էր, այդ դժով գացինք: Երբ հասանք վտանդաւոր տեղը, բոլորս ալ մեր ղէնքերը պատրաստ իրարմէ տասը քայլ հեռու անաղմուկ սկսանք յառաջանալ: Այնքան ցուրտ էր, որ դուրսը ոչ ոք կար, մենք ալ աննկատելի անցանք, հասանք Չանախլու, չորս կողմը ձիւն բռնած էր. ճամբան չէր երեւար. մեր ընկերները լաւ ծանօթ էին այդ շրջանին, այնպէս որ առանց շեղուելու դուրս եկանք Դարալագեազի Ռենդ գիւղի մօտ: Յուրտը շատ կը նեղէր մեզ:

«Դեկտեմբեր 2-ն էր. կը կասկածէինք, որ Երեւանի բոլշեւիկեան իշխանութիւնը հրահանգած կրնայ ըլլալ, որ ճամբաները փակուին, անցուղարձը արդիւրուի: Գիշերը մնացինք Ռենդ գիւղը ընկ. Մհերի մօտ: Որոշեցինք այդ օրը անպայման դուրս գալ Դարալագեազի սահմանէն եւ մտնել Մալիշկա գիւղը, որ Լեռնահայաստանի հովանու տակ էր եւ նոյն գիշերը հասանք Մալիշկա գիւղը: Ընկեր Ռուբէնը գնաց Մալիշկերացի ընկ. Արշակի տունը, իսկ միւսներն ալ գիւղացիներու մօտ գետեղել տուինք. մենք ալ մեր ծանօթներէն մէկուն մօտ մնացինք: Ընկեր Ռուբէնը այդտեղ փոխեց իր անունը ընկեր Գէորդի, որ չճանչնային ղինք. կ'ուզէր իր Չանդեղուր գալը գաղտնի պահել. ամբողջ օրը մնացինք Մալիշկա գիւղը: Ապա շարունակելով մեր ճամբան, հասանք Բազար-Չայ, Մալախաններու գիւղը, անկից անցանք Գնդեւազ գիւղը: Այդ գիւղը կը գտնուէր Լեռնահայաստանի զինուորական վաշտ մը. կարգադրեցին եւ մեզ բոլորս տեղաւորեցին այս գիւղը:

«Նկատելի էր Բազար-Չայի մալախաններու ապրուստի առաւելութիւնը, համեմատած Գնդեւազին: Գիւղացիներէն մէկուն տան առջեւ խանութի պէս տեղ մը կար, ուր նստած էր մօտ 18 տարեկան ռուս զինուոր մը, որ գերի մնացած էր 11-րդ կարմիր բանակէն: Այդ զինուորը կօշկակար էր, գիւղացիներու կօշիկները կը կարկտնէր: Մօտեցայ, հարցուցի, թէ ո՞րտեղացի է. պատասխանեց.

« — Վորենիժի շրջանէն:

« — Դուք հոս ի՞նչ գործ ունիք:

« — Ես ոչ մէկ գործ չունիմ: Մեր գիւղէն հրամայեցին այսինչ ժամուն պէտք է պատրաստ ըլլամ զինուորական ծառայութեան երթալու: Այլեւս ոչ մէկ խօսք, պէտք է պատրաստ ըլլամ. իսկ եթէ քանի մը վայրկեան ուշանալու ըլլայինք խիստ կը պատժուէինք: Երբ բոլորը հաւաքուած ըլլան, կը շրջապատեն զինուորներով, կը տանին ուր որ կ'ուզեն: Անօթի, ծարաւ, տկլոր կը քշեն. ով որ վատառողջ է՝ ճամբան կը մեռնի. ով որ առողջ է «տեղ» կը հասնի: Երբ հասանք այս լեռները, հրահանգեցին ապստամբներու հետ կրօուիլ: Չորերուն մէջ, չգիտեմ որ կողմէն, ինկանք զնդակներու տարափի տակ. մեզ խառնեցին իրար. ամէն քարի տակէն, լեռներու գա-

դաթէն հէնց հրացաններ կը կրակեն . մեզ լաւ մը ջարդեցին զնդակներով : Մէկ մասն ալ տաք հազուատ չունէր , դիրքերու մէջ սառեցան : Մեզի հետ էին նաև թուրք զինուորներ , որ պատերազմի ժամանակ գերի էին ուսերու մօտ . անոնց ալ մեզի պէս քաշած բերած էին . այդ ձորերու մէջ կոտորուեցան . մաս մըն ալ ետ փախան . ես ալ մընացի գերի , ուժ չունէի փախչելու :

« — Ինչո՞ւ այդքան նիհար էք :

« — Որովհետեւ կուշտ հաց չենք կերած , չկար որ ուտէինք . մեզի ըսած էին , այս շրջանը եթէ վերցնենք ամէն ինչ առատ է : Հագուատ , կօշիկ , սպիտակեղէն եւ ուտելիքներ . մենք ալ մեծ յոյսերով եկանք , բայց վերջը շատ տխուր անցաւ մեզի համար . սառեցանք , սպաննուեցանք , հիւանդացանք , ով որ կարողացաւ՝ փախաւ : Մեզի ըսին , որ այս շրջանները դօրք չկայ , մի քանի հոգի են եւ վախկոտ , բայց տեսայ դօրք կայ եւ լաւ կոռուղներ են : Դուք , ըսաւ ինձի , քանի Դրօվ եւ Նժդեմիս ունիք (ըսել ուղեց Դրօ եւ Նժդեհ) , ամէն տեղ կը լսենք այդ երկու անունները , մեզի ըսած էին այդ երկուքը եթէ կրցաք ձեռք ձգել , ամէն ինչ վերջացած պիտի համարէք . կը տեսնեմ , որ այդ Դրօվները եւ Նժդեմիսները շատ շատ են եւ կատաղի մարդիկ :

« — Եթէ ձեզ այստեղ լաւ չի դար , կրնանք ձեզ ետ ուղարկել ձեր բանակը . այնտեղ աւելի լաւ կ'անցնի ձեզի համար , ըսի :

« — Ո՛չ , ո՛չ , այստեղ ինձի համար շատ լաւ է , ուրախութեամբ կը մնամ . երթամ հոն որպէսզի մեռնի՞մ , չեմ ուզեր : Երթալով աւելի կը վատթարանայ մեր կեանքը . ամբողջ Ռուսաստանի ցանկութիւնն է բոլշևիկ կոչեցեալները բնաջնջել աշխարհի երեսէն : Այս ձեւով եթէ շարունակուի , Ռուսիոյ ժողովուրդը կը փճանայ , կ'այլասերուի , բոլոր զեկավարները լրտեսներ , հրեաներ եւ վրացիներ են , կը քանդեն , կը քանդեն . . . :

« Այս բառերը արտասանելէ ետք , սկսաւ արտասուել :


« Այլեւս հարց չտուի , միայն ըսի . — Ռուսերուն աչքը բացուի խելքի դան , լաւ կ'ըլլայ » :

« — Շատ ճիշդ էք , երբ այլեւս ոռւս չըլլայ՝ լաւ կ'ըլլանք . մեր ընտանիքէն ես եմ մնացեր , այն ալ բերին եւ այս օրուան ձգեցին . հայրս սպաննուեցաւ կռիւներու ժամանակ , մայրս ծեր կ'իւնէր , հիմա մեռած կ'ըլլայ ցուրտէն եւ անօթութենէն :

« Զգեցի զինք հեռացայ , լացը չէր կրնար զսպել :

« Պատրաստուեցանք մեկնելու դէպի Ռւղ . պիտի անցնէինք Ադուզի — Վաղուդիով . ձիւնը ծածկած էր ամէն տեղ . մտանք չոր ճամբայ մը , որ երթալու համար աւելի մօտ էր : Քիչ ետք՝ ձիերը ալ ազատ չէին կրնար քալել ձիւնի կոյտերու վրայ , չէի հասկնար , թէ ինչ պատահած էր . . . Մէկ երկու մտրակ դարնելէ ետք , ձին ոտքը դրաւ կոյտի մը վրայ , որ խրուեցաւ խորը , փշրեց ձիւնի կոյտը , տե-

սայ մարդու դիակ մը: Այդ ան տեղն էր, ուր Կարմիր Բանակը կռուի
բռնուած էր Լեռնահայաստանի զինուորներու հետ եւ ջարդուած:
Մեծ քանակութեամբ երկաթէ գլխարկ (կասիա) թափուած էր աջ ու
ձախ: Սառած զինուորներ 15—20 տարեկան նստած տեղերնին մնա-
ցեր էին, փայտացած: Թափուած դիակներ՝ այստեղ—այնտեղ...:



ԼԵՒՈՆ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ

Նկատելի էին թուրք զինուորներու դիակները. այս զինուորները
ոռւս—թրքական պատերազմի դերիններն էին: Մօտ ժամուան մը
ճանապարհ թափուած էին դիակները, շատ տխուր տեսարան էր. այս
ալ մէկ ուրիշ սպանդանոցն էր բռլչեւիկներուն, որոնք անխիղճ կեր-
պով ջարդել տուած էին խեղճ ու կրակ ժողովուրդը: Անցանք այս
դերեզմանոցէն հասանք Ուզ եւ մնացինք մեր ընկերներու մօտ հիւր:
«Երեք օր մնալէ ետք լաւ կազդուրուելով, առաւօտ կանուխ

մեկնեցանք զէպի Տաթեւ : Շատ ցուրտ էր, ոտքերս սկսած էին ցաւիլ յօղացաւէն, զոր ստացած էի Կարսի բանտը. մեզ տեղ տուին գիւղացիք : Շուտով լուր դրկեցինք Նժդեհին, Գորիս, որ գայ Տաթեւ : Նոյն օրը եկաւ. այնուհետեւ գիւղացիներու վերաբերմունքը մեզի հետ լաւ եղաւ : Պիտի ըսեմ, որ այդ շրջանը Նժդեհին շատ կը սիրէին : Նժդեհ լաւ հարուստ լեզու ունէր եւ գիտէր գիւղացիներու հոգեբանութիւնը, կը վարուէր այնպէս որ անոնց կամքով ըլլայ :

* * *

2 Դեկտեմբեր 1920-ի Հայաստանի խորհրդայնացումով, Չանգեզուրը կրկին անդամ կ'ենթարկուէր բուլշեւիկեան լուրջ սպառնալիքի, սակայն Նժդեհի ղեկավարութեան տակ կը մերժէր ենթարկուիլ Երեւանի բուլշեւիկեան Յեղկոմին :

16 Դեկտեմբեր 1920-ին, Խորհրդային Հայաստանի գինուորական կոմիսար Աւիսն ու հրամանատար Դրօն հեռագրով կոչ մը կ'ուղղեն Չանգեզուրի գիւղացիութեան եւ հրամանատար Նժդեհին, յայտնելով, թէ Ատրպէյճանը ի նպաստ Հայաստանի հրաժարած է Չանգեզուրէն, Լեոնային Ղարաբաղէն եւ Նախիջեւանէն, թելադրելով վարդնել զէնքերը եւ «Խորհրդային Հայաստանի իշխանութեան դրօշակի տակ կանգնել, մերձեցալ Ռուսաստանին եւ Խորհրդային Ատրպէյճանին» : Կոչը կ'ըսէր ի միջի այլոց. — «Պահանջում ենք անմիջապէս դադարեցնել ամէն տեսակի պատերազմական գործողութիւն եւ ենթարկուել Հայաստանի խորհրդային իշխանութեան : Սոյն հրամանը խախտելը մեր կողմից կը նկատուի իբրեւ թշնամական գործողութիւն, ուղղուած Խորհրդային Ռուսաստանին եւ նրա կարմիր զօրքի դէմ» :

84-րդ զօրարածնի հրամանատար Սեմենովը եւս՝ Յունուարի 22-ին, իր առանձին պաշտօնական թուղթը կ'ուղղէ Չանգեզուրի կառավարութեան, ցոյց տալու համար թէ ինքը պաշտպան կը հանդիսանայ խորհրդային Հայաստանի աշխատաւորութեան, եւ որ ի գուր են այլեւս ապստամբներու բոլոր ջանքերը, ու մէկ ելք կայ միայն՝ այն է, սեղմել այն ձեռքը, որ մինչեւ այդ պարզուած կը մնայ օդի մէջ :


Սպարապետ Նժդեհ, ինչպէս նաեւ Չանգեզուրի գիւղացիութիւնը միանգամայն իրազեկ էին Հայաստանի շուրջը կատարուած դէպքերուն. գիտէին նաեւ, թէ ի՞նչ դաւերու, ի՞նչ մեքենայութեանց զոհ դարձած է մեր հայրենիքը, որ ի վերջոյ ստիպուած կառավարութեան ղեկը յանձնած է կոմունիստ կուսակցութեան. բայց այդ բոլորը չեն ընկճեր Սպարապետին եւ ապստամբ գիւղացիութեան կամքը, աւելի արժանահաւատ աղբիւրէ տեղեկութիւն ստանալով, թէ ինչպէս խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լըզրանը եւ

Հայ կոմունիստները դաւաճանելով իրենց պաշտօնական յայտարարութեանց՝ դժոխքի կը վերածեն Հայաստանը, բուն հալածանքի կ'ենթարկեն անկախ Հայաստանի ղեկավարութիւնը, եւ բանտերը կը լեցնեն հայրենասէր անմեղ զոհերով, որոնց մասին կամ իրազեկ չէ եւ կամ գիտութեամբ կը լռէ կարմիր բանակի հրամանատարութիւնը. Սպարապետ Նժդեհ անհրաժեշտ կը համարէ 1921 թ. Յունուարի 25-ին առանձին գրութեամբ յանուն 11-րդ բանակի հրամանատարի, անոնց բազմիցս առաջարկած հաշտութեան մասին իր վերջնական խօսքն ըսել եւ ապա ցոյց տալ Խորհրդային Հայաստանի սոսկալի դրութիւնը եւ ի յայտ բերել իրենց խոստումներու եւ կատարածի կատարեալ հակասութիւնը.

11-ՐԴ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

«Ձեր նամակով Դուք խնդրում էք, որ մենք Ձեզ հետ հաստատենք բարեկամական յարաբերութիւններ: Ես սկզբունքով հակառակ չեմ այդ առաջարկին, սակայն ներկայ հանդամանքներում հաստատել անկեղծ բարեկամական յարաբերութիւններ միանգամայն համարում եմ աննպատակալարմար, համոզուած ըլլալով, որ այդ հանդամանքը դրական եւ ցանկալի հետեւանքներ պիտի չունենայ: Դժբախտ Հայաստանում տեղի ունեցող այժմեան Ձեր բարձր հրամանատարութեան եւ Հայաստանի կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի գործունէութիւնը գալիս է ապացուցելու եւ խախտելու իմ հաւատն ու վստահութիւնը դէպի Ձեր առաջարկն ու անկեղծութիւնը: Ինչպէս ինձ, նոյնպէս եւ Ձեզ համար գաղտնիք չէ, որ շնորհիւ Ձեր բարձր հրամանատարութեան վարած քաղաքականութեան, Հայաստանը դարձաւ սոսկումների եւ արեան թատերաբեմ: Ձեր բարձր հրամանատարութեան թելադրանքով էր, որ Քեմալիստները գրաւեցին Սարիղամիշը, Կաղղուանը, Ղարսը, Ալեքսանդրապոլը եւ Իզմիրը, տնտեսապէս քայքայեցին եւ սոցիալապէս մեռցրին այդ ծաղկած երկիրը եւ ժողովրդին բեռնակիր անասունների դարձրնելով՝ նոցա իսկ մէջքով ռազմամթերքն ու հարստութիւնը փոխադրեցին Տաճկաստանի խորքերը: Հայաստանը աշխարհագրական իւր դիրքով գտնուելով այն մեծ ճանապարհի վրայ, որով միանում է Եւրոպան Ասիայի հետ, շարունակ ենթակայ է եղել բարբարոսների ասպատակութեան եւ դժբախտ աշխատաւոր հայ ժողովուրդը հազարաւոր զոհեր է տուել վանդալների այդ ասպատակութեան ժամանակ, որոնք արշաւել են Արեւմուտքից եւ Արեւելքից: Այժմ պատմութիւնը կրկնում է նոյնութեամբ, միայն այն տարբերութեամբ, որ այժմ հայութիւնը գլխատուում է սոցիալիզմի դիմակի տակ եւ ինչպէս ինձ, նոյնպէս եւ Ձեզ համար գաղտնիք չէ, որ Հայաստանի այն մասերում, որոնք գրաւուած չեն տաճիկներով եւ գտնուում են Խորհրդա-

յին իշխանութեան ներքեւ, ստեղծուած է աշխարհի կացութիւն, որ սպասուած է հայ գիւղացիութեան Ֆիզիքական գոյութեան եւ, որ ամենագլխաւորն է, գլխաւում, սպանում է ժողովրդի կենդանի խօսքը: Հարիւրներով հայ յեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչները բանտարկուած են, զնդակահարուած եւ աքսորուած են, ո՞ւր, յայտնի չէ: Այդ բանում եւ տեսնում եմ խորհրդային իշխանութեան ղեկավար շրջանների ակնյայտ նենդամիտ միտումները՝ գլխատել Հայաստանի աշխատաւոր գիւղացիութիւնը եւ մեռցնել նորա անկեղծ յեղափոխական — սոցիալիստական միտքը: Այն պայքա-



Պատմական Գորիսը Օտարո Բարսեղի քանդակով:

Պատմական Գորիսը

րը, որ այժմ մղուած է Հայաստանում, նա դասակարգային բնոյթ չէ կրում եւ բոլշեւիկները, մանաւանդ հայ բոլշեւիկները միմիայն տիրապետելու տենչանքով բռնուած, ձգտում են հեռացնել ասպարէզից միւս սոցիալիստական կուսակցութիւններին, որպիսիք են դաշնակցականները, էսէրները, մենշեւիկները եւ այլն: Մի՛ մոռանաք, որ այն բարձր գաղափարների, սոցիալիզմի իրականացումը, որը դուք այժմ կեղծ ճանապարհով էք տանում, վերջիվերջոյ պիտի լւր գաղափարական պայքարով իրականացնի այն յեղափոխական դեմոկրատիան, որոնց այժմ Դուք հետապնդում եւ գլխատում էք:

Մի՛ մոռանաք, որ Ձեր կուսակցական հայ աշխատավորների մեծագոյն մասն իրենց յեղափոխական դաստիարակութիւնն ու միտքը ըստացել է մեզանից, մեր միջից, որ յեղափոխական մտքի այբ ու բենը ստացել են Դաշնակցութիւնից, որը տասնեակ տարիների ընթացքում պաշտպանել է Արեւելքի աշխատավոր զիւղացիութեան շահերը եւ շընորհիւ այդ կուսակցութեանն էր, որ յառաջ եկաւ յեղափոխութիւն թէ՛ Թուրքիայում եւ թէ՛ Պարսկաստանում: Այժմ այդ կուսակցութեան լաւագոյն գործիչները, որոնք անիծեալ բռնակալութեան օրերում հիւժուում էին բանտերում եւ հեռավոր Սիպիւրի տունդրաներում, կանդալները մաշում, այժմ նոքա բանտարկւում են եւ հրացանազարկ են լինում Ձեր կողմից: Այսպիսի պայմաններում խօսել բարեկամական յարաբերութիւնների մասին, աւելի քան միամտութիւն է:

«Անկեղծ բարեկամական յարաբերութիւն մեր մէջ կարող է ստեղծուել այն դէպքում, երբ հայ մտավորականութիւնը կ'ազատուի բանտերից, երբ կը զազարէք նրան հալածելուց, երբ Ձեր բարձր հրամանատարութիւնը իրական եւ կարուկ միջոցներ ձեռք կ'առնի մաքրել այն հողամասերը, որոնք գրաւուած են Ֆեմալականներից եւ վերջապէս երբ կը զազարէք Չանգեղուր ուղարկել զանազան մութ անձնավորութիւններ «զազանի եւ շտապ դործերով», ինչպէս այդ անում է 11-րդ բանակի ռեզիստրացիայի բաժինը: Երբ ես կը համոզուեմ, որ Դուք կը սկսէք իրականացնել Չանգեղուրի աշխատավոր զիւղացիութեան ցանկութիւնները, որի հաւաքական կամքը արտայայտում եմ ես, երբ ես կը համոզուեմ, որ Դուք յանձինս հայ յեղափոխական դեմոկրատիայի տեսնում էք ոչ թէ Ձեր թշնամուն, այլ նրանց, որոնք կոչուած են շարունակել ընդհանուր յեղափոխական գործը, այն ժամանակ միայն ես կարող եմ հաւատալ Ձեր անկեղծութեանը եւ Ձեր մեկնած ձեռքը չի կախուի օդում: Իմացէք եւ յիշէք, որ ես եւ Չանգեղուրի ժողովուրդը, որն ինձ է յանձնել իւր բախտը, ներկայացնում է իրենից մի սլատկառելի իրական ոյժ, որը, ինչպէս ես առաջ էլ գրել եմ, մի օր Ձեզ պէտք պիտի դայ:

«Չանգեղուրի կարմիր բանակի օգտակար գործունէութեան մասին թոյլ տուէք կասկածել, որովհետեւ Դուք եւս լաւ գիտէք, որ Չանգեղուրի աշխատավոր զիւղացիութեան պաշտպանութեան եւ մարդասիրութեան ամենատարրական օրէնքներն անգամ ոտնահարուած են՝ տնտեսապէս քայքայուած Չանգեղուրում գտնուած կարմիր բանակի կողմից: Կրկնում եմ, որ ինչպէս մինչեւ բոլշեւիկների գալը, նոյնպէս եւ այժմ ես բացառապէս դրադուած եմ հայ աշխատավոր ժողովրդի Փիլիքական դոյութեան եւ նրա յեղափոխական սոցիալիստական զազափարների պաշտպանութեան հողսով: Երբ գործով ապացուցէք, որ Դուք միանգամայն թշնամի չէք դժբախտ հայ ժողովուրդին, որն ասլրում է Արեւելքի եւ Արեւմուտքի մեծ

ճանապարհի վրայ, այն ժամանակ միայն կարելի է բարեկամական փոխ-յարարերութիւն ստեղծել մեր եւ Ձեր միջեւ:

«Իմ կոնկրետ ցանկութիւններն են՝

«1.— Երբ Դուք ազատէք բանտերից Հայաստանի յեղափոխական — սոցիալիստական կուսակցութիւնների անդամներին,

«2.— Մաքրէք Քեմալականներից այն հողամասերը, որոնք զբաւուած են նրանց կողմից,

«3.— Հրաժարուէք Չանդեղուրում դադանի, ստորերկրեայ աշխատանք կատարելուց, այն ժամանակ միայն կարելի է ստեղծել բարեկամական յարարերութիւններ ինքնավար Սիւնիքի եւ խորհրդային իշխանութեան միջեւ:

Սպարապետ Սիւնիքի եւ Գողթանի ՆԺԴԵԶ

25-ին Յունուարի 1921 թ. Գորիս»



Նժդէի

Այս սպաշտօնական գրութիւնը կը հանդիսանայ արձագանգը այն ուժեղ բողոքին, որ անդադար կը հնչէր մայր Հայաստանի բանտերուն մէջ բոլշեւիկներու ձեռքով կալանաւորուած հարիւրաւոր մտաւորական ուժերու, զինուորականներու, ինչպէս նաեւ Ռուսիա

աքսրուած սպայութեան կողմէ : Ազատ մնացած էր միայն Լեոնա-
հայաստանի զիւղացիութիւնն իր Սպարապետին հետ , որ իրեն իրա-
ւունք կը համարէ ամենայն արժանաւորութեամբ իր հայրենիքի եւ
անոր տանջուող ժողովուրդի դատը սլաշտպանել՝ ընդդէմ ընկերվա-
րութեան անուան տակ թաքնուած նոր աշխարհակալներուն :

Ի Ն Ք Ն Ա Վ Ա Ր Ս Ի Ի Ն Ի Ք

1920 թ. Դեկտ. 25-ին , Չանդեղուրի հայ ժողովուրդի ցանկու-
թեամբ , Տաթեւի սպամական վանքի մէջ կը կայանայ համազանգե-
ղուրեան համադումարը , ուր ներկայ կ'ըլլան Չանդեղուրի բոլոր շըր-
ջաններու 69 զիւղերէ ընտրուած եւ ուղարկուած 100 պատգամաւոր-
ները , Չանդեղուր — Գողթանի սպարապետ Նժդեհը , Չանդեղուրի
բոլոր շըջանային խորհուրդներու 15 ներկայացուցիչները , ընդամէնը
118 հոգի : Կէսօրուան ժամը 2-ին , ժողովը կը բանայ Չանդեղուրի
զիւղացիական խորհուրդի նախագահ Տ. Մելիք-Յուսէյիներն՝ եւ
կ'առաջարկէ ընտրել համադումարի դիւանը :

Չայներու մեծամասնութեամբ կ'ընտրուին — Նախագահ՝ Եզոր
Յարութիւնեան եւ Տիգրան Մելիք — Յուսէյիներն , քարտուղարներ՝
Սամուէլ Մաշուրեան եւ Նիկողայ Դօրոնց :

Նախագահը , նիստը բացուած յայտարարելէ ետք , համառօտ
կերպով կը բացատրէ համադումարի սպամական նշանակութիւնը եւ
կ'առաջարկէ անցնիլ օրակարգի հետեւեալ հարցերու քննութեան .—

1.— Չեկուցում Հայաստանի քաղաքական կացութեան մասին
եւ համադումարի բռնելիք դիրքը :

2.— Չեկուցումներ բոլոր շըջանային խորհուրդներու , իրենց
դործունէութեան մասին :

3.— Ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձեւը :

4.— Իշխանութեան կազմակերպումը .

ա) Սպարապետի հրաւիրումը :

բ) Ինքնավար Սիւնիքի պարլամենտի դիւանի ընտրու-
թիւնը :

գ) Ինքնավար Սիւնիքի վերահսկիչ մարմնի ընտրու-
թիւնը :

- 5.- Իշխանութեան կեդրոնատեղիի որոշումը :
- 6.- Արտաքին քաղաքականութիւն : Փոխ-յարարերութիւն .-
- ա) Հայաստանի Հանրապետութեան .
- բ) Ատրպէյճանի Հանրապետութեան .
- գ) Պարսկաստանի Կառավարութեան .
- դ) Հարեւան թուրքերու :
- 7.- Ինքնապաշտպանութեան հարց :
- 8.- Պարենաւորում :
- 9.- Պետական ծառայողներու սոցիւններու նորմաներու որոշումը :
- 10.- Մասնաւոր եւ խոշոր սեփականութիւններու պետականացումը .
- ա) Վանքապատկան եւ եկեղեցական .
- բ) Թաներու , բէկերու եւ մելիքներու .
- գ) Արդիւնարերութեան .
- 11.- Ընթացիկ հարցեր .
- ա) Որբանոցի .
- բ) Զուլահանոցի .
- գ) Նախկին կառավարութիւններէն զանազան անձնաւորութիւններու մօտ մնացած դումարներու պահանջման հարց :
- դ) Դրամներու գործադրութիւնը :

Շարք մը ներկայացուցիչներու երկար ու բազմակողմանի արտայայտութիւններէն ետք , համադումարը բուռն ծափահարութիւններով եւ հուռուսներով միաձայնութեամբ կ'ընդունի հետեւեալ բանաձեւեր .

« Զանգեղուրի աշխատաւոր զիւղացիութեան շարք մը տականքներու եւ աղգուրացներու հրաւերին շնորհիւ , առանց աղգարընակչութեան կիսմքն ու ցանկութիւնը հարցնելու , Զանգեղուր մտան սովետական գործառնները , որոնք իրենց հինգ ամսուան տիրապետութեան ընթացքին անտեսապէս քայքայեցին Զանգեղուրի աշխատաւոր զիւղացիութիւնը :

« Սովետական հրամանատարութիւնը հէնց առաջին քայլէն , դաւառի զիւղացիութեան նկատմամբ , սկսաւ իր աւերիչ , քայքայիչ քաղաքականութիւնը , որուն մէջ նսեմացած են սլատմական Լենկ-թեմուրեան եւ արեւելքի բարբարոսներու արշաւանքներն ու գործեւակերպը :

« Հայ աղքատ զիւղացիութեան անտեսապէս քայքայած շրջանին , ան կ'որոնէր բուրժուական տարրեր եւ կապիտալիստներու դէմ մղուելիք քաղաքականութիւնը գործադրեց աղքատ , անօղնական զիւղացիներու եւ այլի կանանց դէմ :

«Ան խլեց մեր վերջին պատառ հացը, տարաւ մեր աղքատ
զիւղացու միակ եղը, կովը, ձին ու աւանակը, գրաւեց անոր անա-
սունները, կերը եւ թողուց մերկ ու զուրկ՝ ամէն ինչէ :



Զ Ա Ն Փ Ե Զ Ո Ի Ր

«Սովետական հրամանատարութիւնը մտոցած իր ժողովրդա-
սիրական շարք մը փքուն լողունները՝ աւերի տուաւ հողին հաւասարեցուց
մեր գիւղերը եւ իր գրաւածներու հանդէպ մեզ շտուաւ թել
մը անդամ :

«Ան անկարող եղաւ ամբողջ Զանգեզուրին տալ մի գրուանքար

նաւթ անդամ, չնայելով մեզ նաւթ, մանուֆակտուրա եւ այլ մթերքներ տալու խոստումներուն:

«Այս բոլորէն ետք, մենք համոզուեցանք, որ սովածներու այդ բանակը եկած է միմիայն յափշտակելու մեր կայքն ու գոյքը, թաւանելու մեզ եւ ի սպառ ոչնչացնելու:

«Սովետական կառավարութիւնը իրեն յատուկ արեան բազմիքներ սարքեց մեր զիտակից երիտասարդներու նկատմամբ եւ տասնեակներով կոտորեց զանոնք, չխնայելով մեր զրական վաստակաւոր գործիչներ՝ Վահան Խորէնիի, Շիրինեանի եւ տարիներ շարունակ բանտերու մէջ տառապած՝ Սաքոներու յօշոտելը: Առանց քննութեան եւ որոշ մեղադրանքներու մեր սանչպար զիւղական երիտասարդներէն տասնեակներ զլխատուեցան եւ փոսերը թափուեցան, եւ վերջը իր հայակործան յաղթանակը կամենալով առաջ տանիլ, մեր դաւառը մացուց 1000-ով տաճկական զինուորներ, որոնք իրենք զիրենք հայու Աստուած էին անուանած:

«Սովետական կառավարութիւնը մոռնալով տաճկական դարաւոր հայաջինջ քաղաքականութիւնը հայ ժողովուրդի նկատմամբ, դէպի հայ զիւղեր ուղարկեց տաճկական զինուորներ, որոնք Քարահունջ, Շինուհայր, Խոտ, Հալիճոր, Եայջի, Զէյլա եւ ուրիշ զիւղեր իրենց բարբարոս եւ զազանային ինստիւֆտները գործադրեցին հայ կնոջ եւ կոյս աղջիկներու վրայ, անոնց սպառիւր ոտքի տակ տալով:

«Կոխտեցին, ցեխի հաւասարցուցին մեր պապենական ամէն տեսակի սրբութիւն, եկեղեցի, ընտանեկան պատկառանք եւ պատիւ:

«Սովետական կառավարութիւնը, իր ալան-թալանը, իր ճրնչումները, իր բռնութիւնները եւ տարածուած սիֆիլիսը կատարեալ կերպով առաջ տանելու համար եւ վախնալով ժողովրդական բռնկումներէն, հարիւրաւոր անմեղ մարտիկներ բանտը ձգեց ու խեղդեց, սպառնալով ազդարնակութեան իր տեռորներով, որեւէ ցոյցի եւ ապստամբութեան դէպքին կոտորել զիրենք:


«Չանդեղուրի աշխատաւոր զիւղացիութիւնը չկարողանալով տանիլ նման բարբարոսութիւնները, որոշեց գուրս) փոխել սովետական Ռուսաստանի դօրքերուն եւ անոր զիմակի տակ թաքնուած աւարապէյճանեան վարձկաններուն, որոնք աւերեցին իր երկիրը՝ եւ ազատել իր օճախն ու պատիւը:

«Տարւոյս Հոկտեմբեր 10-ին, ապստամբական դրօշ պարզելով՝ իր սիստեմադիկ բռնկումներով մինչեւ տարւոյս Նոյեմբերի 21-ի զիշերը գուրս քշեց իր սահմաններէն անկոչ այդ զօրամասերը, որոնք իրենց հինգամսեայ ներկայութեամբ զանոնք կորստեան դուռը հասցուցին:

«Սովետական Ռուսաստանն ու Ատրապէյճանը չբաւականանալով այս ամենէն, ցանկացան զլխատել ու ի սպառ ոչնչացնել հայ

ժողովուրդը եւ ներս հրաւիրեցին տաճկական հորդաներուն Քեմալի գլխաւորութեամբ Հայաստան, եւ Ալեքսանդրապոլի պատերուն տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու այսպէս կոչուած «խորհրդային» իրաւակարգը, ուժիմ եւ ծրագիր մը, որոնց կարող չէ այլեւս հանդուրժել թէ՛ մեր երկիրը եւ թէ՛ բովանդակ հայ ժողովուրդը:

Ի նկատի առնելով վերոյիշեալները եւ այն, որ Զանգեզուրը երեք տարիէ ի վեր կ'ապրի իր ներքին ուրոյն կեանքով եւ շարունակելու է նոյնը, համադանգեղուրեան համադումարը իր սոյն օրուան նիստին մէջ որոշեց՝



Գ Ն Դ Ե Վ Ա Ն Ք

1) Զանգեզուրը յայտարարել ժամանակաւորապէս ինքնավար, մտցնելով հանրապետական իրաւակարգ, ըլլալով անկախ, մինչեւ որ քաղաքական հնարաւորութիւն ունենայ միանալու իր մայր երկրին՝ Հայաստանին:

Ինքնավար Սիւնիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները:

2) Համադումարը կը լսէ շրջանային խորհուրդներու համառօտ գեկուցումները եւ դիտողութիւնները իրենց գործունէութեան մասին եւ կ'առնէ ի դիտութիւն:

3) Մտքերու փոխանակութենէ ետք համադումարը միաձայն

ընդունեց եւ հաստատեց ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձեւի հետեւեալ դիտարկ կէտերը. —

— Սոյն համազումարը ճանչնալ ինքնավար Սիւնիքի բարձր օրէնսդրական մարմին — պարլամենտ, որուն վերապահել Սիւնիքի բախտի լիակատար տնօրէնութիւնը :

ա) Համազումարը միաձայն որոշեց եւ հրաւիրեց իր ազատարարը, հերոս Նժդեհին որպէս Սիւնեաց սպարապետ եւ բուն ծախահարութիւններով իր կատարեալ վստահութեան քուէն տալով անոր, իր բախտին յանձնեց դայն :

բ) Զինուորական բոլոր տեսակի գործերը կը տարուին սպարապետի ղեկավարութեամբ, որը այդ մասին իրազեկ կը պահէ պարլամենտը :

գ) Ինքնապաշտպանութեան հարցի վերաբերեալ բոլոր միջոցներու ձեռնարկումը եւ գործադրութիւնը կը թողուի սպարապետի կարգադրութեանը :

դ) Ինքնավար Սիւնիքի կառավարութեան համար առաջարկուած 15 թեկնածուներէն, ձայներու մեծամասնութեամբ, զազանի քուէարկութեամբ ընտրուեցան հետեւեալ 8 անձնաւորութիւնները. — Գ. Տ. Մ., Նիկողայ Դօրունց, Իսրայէլ Մելիք — Փարսաղանեան, Գէորգ Գրիգորեան, Եզոր Յարութիւնեան, Մկրտիչ Տէր Մկրտիչեան, Տիգրան Մելիք Յուսէյինեան եւ Սամուէլ Մաշուրեան եւ անոնց անձնափոխանորդ՝ Մինաս Մինասեան : Գենուաղի շրջանին իրաւունք տրուած է ընտրել ներկայացուցիչ մը եւ ուղարկել կառավարութեան կազմը լրացնելու համար :

ե) Ինքնավար Սիւնիքի վերահսկիչ մարմնի անդամները կ'ընտրուին հետեւեալ երեք անձնաւորութիւնները. — Գասպար Սաշատուրեան, Մուշեղ Ոսկանեան եւ Գէորգ Գէորգեան. իսկ անոնց անձնափոխանորդներ՝ Տիգրան Սաղանդարեան եւ Շիրին Շիրինեան» :

Օրակարգի 11 հարցերը վերջացնելէ ետք, կը կարգացուի Արեւիքի շրջանէն ստացուած հետեւեալ հեռագիրը.

— Տաթեւ, — Զանգեզուրի սպարապետ Պ. Նժդեհին :

«Ձեր կարգադրութիւնը՝ ներկայացուցիչներ ուղարկել Տաթեւի համազումարին, Արեւիքի Փրկութեան Կոմիտէն ստացաւ ամսի 21-ին, երեկոյեան : Զղալով, որ կ'ուշանանք, հրաւիրեցինք ամսոյս 22-ին շրջանային համազումար, որտեղ ներկայ էին Արեւիքի 12 դիւղերու ներկայացուցիչներ, 68 հոգի : Բացակայ էին, Կարճեւանի եւ Ապկէզի ներկայացուցիչները : Արեւիքի դիւղացիական պատգամաւորներու ժողովի օրակարգի հարցերն էին. —


ա) Հայաստանի տեղի ունեցած յեղաշրջումը եւ Արեւիքի ժողովուրդի բռնելիք գիրքը :

բ) Համազանգեղուրեան համազումարին ներկայացուցիչներ ուղարկելու հարցը :

Կարգադրուած էր բոլոր զիւղերու հասարակական ժողով դու-
մարել, քննել այդ հարցերը, եւ ուղարկել ներկայացուցիչներ՝ ման-
դատով:

Գիւղացիական պատգամաւորներու ժողովը որոշեց Տաթեւի
համագումարին շրջանի կողմէ ներկայացուցիչներ ուղարկել՝ Դաւիթ
Դաւթեան եւ Սաչատուր Դանիէլեանին: Պատգամաւորներ դուրս ե-
կան Մեղրիէն ամսոյս 22-ին: Լիճք — Տաշտոնի սարը կապուած ըլլա-
լու պատճառով ետ վերադարձան, անցան հանքերը:

Առաջին հարցին ժողովը պատասխանեց հետեւեալ բանաձեւով,
որը ամբողջովին կը հեռախօսենք Ձեզ:



Տ Ա Թ Ե Ի Ի Վ Ա Ն Ք Ը

«Արեւիքի տասներկու զիւղերու ներկայացուցիչներս, թիւով
68 հոգի, Դեկտեմբերի 22-ի ժողովում քննութեան առնելով ներկայ
քաղաքական դրութիւնը Հայաստանի մէջ, հետեւեալ որոշումը ար-
ձակեց. —

«Բուշեւիկեան իշխանութիւնը բռնի կերպով է փաթաթուած
հայ ժողովուրդի վրին, Հայաստանը սովետական է յայտարարուած
տաճկական եւ ռուսական զօրքի բռունցքի ճնշման տակ: Նորմալ
պայմաններու մէջ նման երբեք քաղաքական յեղաշրջում չէր կրնար
կատարուել Հայաստանի մէջ, բնդհակառակն, շատ անգամ հայ ժո-
ղովուրդը ցայտուն կերպով արտայայտուած է, որ Ինֆը Ազատ եւ
Անկախ Հայրենիք կը ցանկայ, եւ որովհետեւ բռնակալական ստոր
միջոցներով ժողովուրդի մը վրին փաթաթուած իշխանութիւնը տե-
ւական ըլլալ չէր կարող, ինչպէս նաեւ այդ իշխանութիւնը վայելել
չէր կրնար ժողովուրդի մեծամասնութեան հաւատն ու վստահութիւ-
նը, Արեւիքի ժողովուրդի ներկայացուցիչներս այն ամուր համո-
զումն ունինք, որ շուտով Հայաստանի հայութիւնը ոտքի կը կանգնի

եւ զղուանքով դէն կը շարտէ այն լուծը, որ այսօր ակամայէն ընդունած է իր վրայ: Ոտքի կը կանգնի նոր ցասումով, ջարդ ու փշուր կ'ընէ այն երկաթէ կապանքները, որոնցմով սովետական իշխանութիւնը կապկպել է իրենց եւ նորէն Արարատեան սրբազան դաշտերը կը ծածանեցնէ ազատ ու անկախ կեանքի կարմիր դրօշակը:

«Արեւիքի ժողովրդական ներկայացուցիչներս համոզուած ենք, որ այս ապստամբութիւնը աւելի արագ կը կատարուի, եթէ Զանգեզուրը կանգուն մնայ իր սահմաններուն մէջ, իսկ ժողովուրդի հոգին եւ կամքը անընկճելի իր հերոսական որոշման մէջ, այն է՝ ապրիլ ազատ եւ այդ իսկ նկատառումներով, Արեւիքի ժողովրդական ներկայացուցիչներս Դեկտեմբեր 21-ի ժողովի մէջ դտանք, որ մեր հորիզոններուն վրայ դեռ փրկութեան ճառագայթները ընդմիշտ չեն մարիւր, որ կայ փրկութեան ճանապարհ, ուստի որոշեցինք պաշտպանուիլ մինչեւ վերջին հնարաւորութիւնը:

«Որոշուեցաւ թոյլ շտալ ոչ մէկ օտար զօրքի եւ օտար մարդոց ներս խուժելու մեր երկրի սահմանները եւ խառնուիլ մեր ներքին գործերու մէջ»:

Ներկայացուցիչներ՝

ԴԱԻԻԹ ԴԱԻԹԵԱՆ, ԽԱԶԱՏՈՒՐ ԴԱՆԻԷԼԵԱՆ

26 - 12 - 1920 թ. Երեկ. ժամը 8-ին Հանգերէն(*)

Անդրադառնալով Տաթեւի Ա. համագումարին, հայաստանեան սովետական ազրիւրներ կ'ունենան զանազան արտայայտութիւններ, միշտ, ըստ իրենց աւանդութեան, խեղաթիւրելով եղելութիւնները եւ վարկարեկիչ բառերով: Այսպէս, Ծ. Աղայեանի «Հոկտեմբերեան ռուսիւցիան եւ հայ ժողովրդի ազատագրումը» գրքին մէջ կը կարդանք (էջ 371). —


«Դեռեւս 1920 թ. Դեկտեմբերի 25-ին Տաթեւի վանքում տեղի էր ունեցել զաչնակների, հոգեւորականների եւ կուլակային խաւերի առաջին համագումարը, որը Զանգեզուրը յայտարարել էր «Ինքնավար Սիւնիք»: Նժդէհը, որպէս ռազմական դիկտատոր, յայտարարուել էր «Սիւնեաց սպարապետ», որը կապ հաստատելով արտաքին ինտերւենտների հետ, յոյս էր դնում նրանց օգնութեամբ տապալել Հայաստանում Սովետական իշխանութիւնը եւ նորից վերականգնել զաչնակցական բռնապետութիւնը»:

Իսկ «Հայ ժողովրդի Պատմութիւն» 12 պրակով աշխատութեան 10-րդ պրակին մէջ (Շ. Յարութիւնեան, «Հոկտեմբերեան Ռուսիւցիան եւ Սովետական իշխանութեան հաստատումն ու ամրապնդումը Հայաստանում» (1917 - 1921 թ.թ.) կը կարդանք (էջ 174).

(*) Ինքնավար Սիւնիքի հորհրդարանի դիւան, 3 Յունուար 1921 թ.:

«1920 թ. Դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում տեղի է ունեցում դաշնակների և կոնտրառեւոլյուցիոն միւս պարտիաների, հոգեւորականների ու կուլականների առաջին «համագումարը», որը Չանդեղուրը յայտարարում է «Ինքնավար Սիւնիք»: Բանդիա Նժդեհը, որպէս ռազմական ղեկաւոր, հռչակում է «Սիւնեաց երկրի սպարապետ»:

Իրականութիւնը այն է սակայն, որ Չանդեղուրի ժողովուրդը արդէն իսկ ճաշակած ըլլալով բուլշեւիկ իշխանութեան վայրագութիւնները, չէր հաշտուած Հայաստանի խորհրդայնացման դադափա-



Ն Ո Ր Բ Ա Յ Ա Ջ Ի Տ

րին հետ, և Ինքզինք անկախ կը հռչակէր, մտած ըլլալով, որ Հայաստան կրկին պիտի վերագտնէ իր ազատութիւնն ու անկախութիւնը:

Հայաստանի խորհրդայնացումով ստեղծուած վտանգաւոր ու շփոթ կացութեան անդրադառնալով, Նժդեհ ի միջի ալրոց կը գրէ հետեւեալը.

«Երեւանը մեծամասնականներու յանձնելէ ետք, մեր կառավարութիւնը չկրցաւ ոչ մէկ կերպով կապ ունենալ Լեւոնհայաստանի հետ, և ես՝ ինձ դադապաղտի անցած դործիչներէն և Գարալագեազէն տեղեկութիւններ ստանալով բուլշեւիկներու հալածանքներու և բռնութեանց մասին, որոչեցի գրաւել Գարալագեազը, և այսպիսով օգնութեան հասնիլ մեր մայր երկրին և բանտերու կոտորածի ու սարսափի տակ դանուող մեր ընկերներուն. իմ այդ որոշումը միանգամայն անկախ էր Երեւանի շրջաններու առաջ եկած ապստամբական

չարժուճներէն, որոնց մասին զիս ոչ ոք իրազեկ չէր դարձուցած: Փետրուար 17-ին Սիսեանի զօրամասը կը գրաւէ Դարալագեազը, եւ տեղացիներու հետ միացած կ'անցնինք մինչեւ Քէօմուրլու: Այսպիսով կը մաքրուի բոլշեւիկներէ այն գիծը, որ կենսական նշանակութիւն ունէր Երեւանի շրջանի եւ Դարալագեազի միացման համար: Նոր-Քայազիտի շրջանի առաջ բերած շարժումը եւ իմ անձամբ այն կողմն անցնիլը այն նշանակութիւնն ունեցան, որ բաւական ժամանակ գրաւեց թշնամիի ուժերը դէպի Իրան և միաժամանակ յապաղեցուց Երեւանի անկումը»:

Նժդէհ մտահոգուած էր նաեւ այն իրողութեամբ, որ Երեւանի Հանրապետական կառավարութեան անկումով, լուրջ սպառնալիքի ենթարկուած էր Գեղուազ — Սիւնիքի ճակատը:

14 Փետրուար 1921-ին Սիսեանի մէջ կը յայտարարուի զօրահաւաք: 15-ին, Նժդէհի ուժերը կը կեդրոնանան Բազարչայ:

Նժդէհ շուտով կը հրահանգէ արեւմտեան ճակատի պետ Եապոնին, — որուն մօտ էր այդ ժամանակ Ռուրէնը, — առաջանալ եւ միանալ Ղամարլուի եւ Զիմանքեանդի զօրամասին:

«Մեր ծրագրի միայն մի մասն էր յաջողուել — կ'ըսէ Մ. Գրիգորեան —, կտրել էինք Վայոց Ձորը երկու կողմից, սակայն Այնազորի կռիւր մեզ խանգարում էր ամէնուրեք անակնկալի բերելու թշնամին եւ առանց արիւնահեղութեան գրաւելու ամբողջ գաւառը:

«Այնազորի կռուին մի կերպ վերջ տուինք, բայց անհրաժեշտ էր յայտնել Եապոնին դործի ընթացքի մասին եւ խնդրել, որ արագացնի իր շարժումը: Նա առաջ էր շարժուում եւ արդէն գրաւել էր Մալիշկան, ուր գտնուող ռուսական զօրքերը, առանց դիմադրութիւն ցոյց տալու, անձնատուր էին եղել: Մեզ մնում էր գրաւել նախ՝ Քէշիշքենդը, գաւառի կեդրոնը, ուր գտնուում էր մեծամասնակաների զօրամասն իր սպայակոյտով, ապա Ղօյթուրը, ուր կեցած էր թշնամու թնդանօթաձիգ վաշտը:

«Եապոնին զեկուցելուց վերադարձին, ես երեք ընկերներով անցնում եմ Ղօյթուր, իսկ Եապոնը ժողովրդական բանակով շարժւում է Քէշիշքենդը գրաւելու:

«Ղօյթուրում գերի եմ վերցնում թնդանօթների պահակ զինուորին, իմ ընկերներից մէկին նշանակում եմ նրա տեղը, իսկ ինքս գնում եմ թշնամու հրամանատարի մօտ: Ես ստիպուած եմ լինում հրամանատարին յայտնելու, թէ Պայթուցուց նամակ եմ բերել, ապա վերցնում եմ հեռախօսը, ստուգելու համար թէ ի՞նչ է կատարուում Քէշիշքենդում: Սկիզբը պարզօրէն լսում էր զնդացիների ձայնը, որ աստիճանաբար սաստկանալով, յանկարծ կտրւում է: Ենթադրեցի, որ մերոնք արդէն վերցրել են Քէշիշքենդը: Անմիջապէս թողի հեռախօսը, մօտեցայ թշնամու թնդանօթաձիգ վաշտի հրամանատարին, յայտնեցի, որ Նժդէհ գրաւել է Վայոց Ձորը, յայտարարել է

ան Լեւոնահայաստանի մաս, որ ժողովուրդը մեր կողմն է, ուստի առաջարկեցի, որ հրամանատարը անձամբ կարգադրի իր զինուորներին անձնատուր լինելու՝ առանց կռուի եւ զիմադրութեան: Նժդէհի անունը սասանեցրեց հրամանատարին: Խեղճը դողդողաց, դունատուեց, ապա, ստիպուած՝ անձամբ դնաց զինուորների մօտ եւ յայտնեց ամէն ինչ:

« — Յանձնու՛՛մ ենք, յանձնու՛՛մ ենք... միարեան աղաղակեցին զինուորները... »

«Կէս ժամ անց՝ մեր զօրքը մտաւ Ղօյթուր» : (*)



1.- Յովհաննէս Քուրանեան, 2.- Օնէ (Յովհաննէս Մելիքեան), 3.- Զէմլեակ, 4.- Եապոն (Յովհաննէս Պարոնեան), 5.- Դալի Ղազար, 6.- Խմբ. Մարտիրոս, 7.- Ռիժա Տիգրան:

Փետրուար 16-ի լուսարացին արեւմտեան զօրահրամանատար Եապոնի ղեկավարութեամբ զօրքերը առաջ կը շարժին ու գրեթէ առանց դնդակ մը իսկ արձակելու կը գրաւեն Դարալաղեազը (Վայոց - Զոր): Վայոց - Զորի գրաւումով Սիւնիքի մարտական ուժերը կը բանային դռները Խորհրդային Հայաստանի վրայ:

Արդարեւ, երբ 2 Ապրիլ 1921-ին Հայաստան կրկին (18 Փետրուարի ապստամբութենէն ետք) կ'ենթարկուի բոլշեւիկեան լուծին, Դարալաղեազը կը հանդիսանայ այն միակ բաց դուռը, ուրկէ վտանգուած մտաւորականութիւնն ու զինուորականութիւնը կը յաջողին անցնիլ Զանգեզուր, ապա՝ Պարսկաստան: Եւ այս, չնորհիւ Նժդէհի հեռատես, եւ մանաւանդ յանդուզն քայլին:

Վայոց - Զորի գրաւումը խանդավառութեամբ կը լեցնէ Սիւնիքի ազգաբնակչութեան սիրտը:

1921 Փետր. 21-ին Գորիսի Ս. Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ շը-

(*) «ՓԵՏՐՈՒԱՐ 18», հրատ. Հ. Յ. Դ. Փրակայի Ուսանողական Միութեան, 1927, Փրակա:

քեղօրէն տեղի կ'ունենայ Սիւնիքի սպարապետութեան յանձնուելիք դրօշակի հանդիսադրութիւնը: Հոժ բազմութեան մը ներկայութեան, սպարապետ Նժդեհի մէջքին կը կապեն օծուած դօտին ու անոր կը յանձնեն հայկական եռագոյնը, «Ինքնավար Սիւնիքի կառավարութեան անյաղք սպարապետ Նժդեհին» մակադրութեամբ:

Այդ առթիւ Ինքնավար Սիւնիքի կառավարութիւնը կը հրատարակէ հետեւեալ կոչը.—

ՍԻՒՆԻՔԻ ԱԶՔԱԲՆԱԿՈՒԹԵԱՆ

Հայ ժողովուրդ,

«Ամսոյս 21-ին, Գորիսի Ս. Լուսաւորիչ եկեղեցիի հանդիսաւոր մաղթանքէն ետք, ժողովուրդի հոժ բազմութեան եւ զինուորական վաշտերու ներկայութեամբ, օծուեցան Սիւնիքի կառավարութեան կողմէ Սպարապետին զրկուելիք դօտին եւ դրօշակը, որմէ ետք նախագահը օծած դօտին կապեց Սպարապետի մէջքը եւ դրօշակը յանձնեց անոր:

«Հայ ժողովուրդ, այդ օրը եւ այդ փառաւոր տօնը եզակի տեղ պիտի ունենան Սիւնիքի համար:

«Կառավարութիւնը ժողովուրդի անունով յանձնեց Սպարապետին Ազատ Սիւնիքի եռագոյն դրօշակը, անոր հետ իրեն յանձնեց եւ ձեր քաղաքական բախտը, ձեր պատիւը, նամուսի պաշտպանութիւնը, համոզուած ըլլալով, որ ձեր Սպարապետը, ինչպէս մինչեւ այսօր, այսուհետեւ եւս իր հերոսական քաջութեամբ, կը շարունակէ փառաւոր յաղթութիւններով ապացուցել աշխարհին, որ հայ ժողովուրդը տողորուած ազատ եւ անկախ հայրենիք ունենալու տենչով, պատրաստ է դոհարերել այն ամէնը, ինչ հարկաւոր կ'ըլլայ հասնելու ցանկացած նպատակին:

«Սպարապետն ընդունելով Սիւնիքի պաշտպանութեան դրօշակը, ուխտեց ու երդուեցաւ՝ միշտ բարձր պահել կառավարութեան եւ ժողովուրդի կողմէ իրեն յանձնուած դրօշակը:

«Սիւնիքի ժողովուրդ, բոյորուեցէք ձեր սիրելի Սպարապետին շուրջը, թեւ ու թիկունք հանդիսացէք անոր, որ կարողանայ կատարել այն ծանր պարտականութիւնը, որը դրուած է անոր վրայ ձե՛ր եւ ի՛ր Հայրենիքի կողմէ:

«Կեցցէ՛ Սիւնիքի ազատարար Սպարապետ Նժդեհը.

«Կեցցէ՛, Սիւնիքի ազատարար Հայ ժողովուրդը:

Ինքնավար Սիւնիքի կառավարութիւն

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Մինչ Չանդեղուրի մէջ տեղի կ'ունենային վերողրեալ բախումներն ու դրաւումները, Արարատեան Հայաստանի մէջ արդէն իսկ պայթած էր Փետրուարեան համաժողովրդական ապստամբութիւնը, բոլշեւիկեան օտարամուտ, խարերայ պարտադրուած վարչակարգին դէմ :

Հաւատալով բոլշեւիկեան քարոզչական մեքենայի խաբեպատիր լողուններուն, Հայ ժողովուրդը հաւատացած էր անոնց բոլոր խոստումներուն. — պարէն, հազուատ, հանդարտ ու ապահով կեանք, աժանութիւն : Տակաւին, ժողովուրդին այն վստահութիւնը ներշնչուած էր, որ ոռւս բոլշեւիկ զինուորը բոլորովին տարբեր պիտի ըլլար ոռւս ցարական զինուորէն, պիտի չբռնանար իր վրայ, քանի որ մաս կը կազմէր եղբայրակա՛ն Կարմիր Բանակին :

Սակայն, երկուքուկէս ամսուան բոլշեւիկեան իշխանութեան չըջանին իսկ ժողովուրդը տեսաւ, որ ոչ միայն իրականութիւնը համապատասխան չէր խոստումներուն, այլ կը կատարուէր բոլորովին հակառակը :

Բոլշեւիկեան իշխանութիւնները սկսան Ռուսիա ուղարկել Հայաստանի մէջ դտնուող արդէն իսկ անբաւարար պարէնը, ռազմամթերքը, հայկական բանակի թնդանօթները, հազուատները : Նոյնիսկ, հայ որբերու յատկացուած ալիւրն ու կաթը յափշտակելով, ուղարկեցին՝ «որպէս նուէր Սորհրդային Հայաստանի կողմէ քոյր Ռուսաստանին եւ Ատրպէյճանին» :

Առաջին օրերէն իսկ սկսան ձերբակալել խորհրդարանի անդամներն ու քարտուղարները, ուսուցիչները, զօրավարներն ու սպաները, դաշնակցական, Դաշնակցութեան համակիր կամ իրենց համար որեւէ պատճառով անբաղձալի անձերը :

Ողբալի կացութեան մասին այս հպանցիկ արձանագրութիւններն իսկ բաւարար են ցոյց տալու համար, թէ բոլշեւիկները անշնչելի մթնոլորտով վարչակարգ մը հաստատած էին Հայաստանի մէջ : Հայ ժողովուրդը կ'ապրէր մղձաւանջի ու սարսափի օրեր :

Անդրադառնալով այս բռնութիւններուն, ահաւասիկ թէ ի՛նչ կը դրէ Ա. Ալպոյաճեան(*) .—

«1921 Յունուարին հալածանքն ու կեղեքումները կը հասնին ծայրագոյն աստիճանի. կը կատարուին հսկայ շուրջկալներ, անվերջ խուզարկութիւններ, պարէնի եւ մթերքներու բռնագրաւումներ: Մասնաւորապէս ծանր կ'ազդէր բնակչութեան վրայ կարմիր Բանակի զինուորներու տուներու վրայ բռնի բաժանումը:

«Հայաստան իր ինքնորոշ եւ հայեցի դրոշմը կը կորսնցնէ վերստին, ուստիանութեան ենթարկուելով, մանաւանդ Դեկտեմբերի վերջերը՝ երբ երկրին ներքին կառավարութիւնն իրապէս կ'անց-



Հայ որբերը Երեւանի մէջ:

նէր Չեկայից, Չերեզվիզակայից (արտակարգ դատախոսներ): Հայ պետութեան մը առաջին որոշիչ նշանը՝ հայ բանակը դոյութիւն ունենալէ կը դադրէր, վասնզի Կասեանի կառավարութիւնը ոչ միայն Դեկտեմբեր 17-ին, զօրացրումով հայ բանակը կը ջնջէր, այլեւ անոր սպաները դաւով մը կը հեռացնէր երկրէն: Արդարեւ 1921-ին զանոնք կը հրաւիրէր խորհրդարանին առջեւ եւ ապա հաւաքուած 1000-ի չափ սպաները, — որոնց մէջ էին Չօր. Նազարբէկեան, Հախվերդեան, Կամազեան, Ֆէսինքօ, Շուլզովնիկեան, Բարադամեան, Սիլիկեան եւ այլն, — ձերբակալել կուտար ուստի կարմիր զօրքին եւ հսկողութեան տակ կ'ուզարկէր Քանաքեռ, ուր անոնցմէ 25-ը ազատ կ'ար-

(*) «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ», Թեոդիկ, 1922:

ձախուէին ու մնացեալները կը տարուէին Պաքու: Հոն իրենցմէ 90 սպաներ եւս ազատ կ'արձախուէին եւ մնացեալներուն կէսը կը ղրկուէր Տինիքիներեան սպաներու մօտ՝ Բէաղան, միւսներն ալ՝ զանազան քաղաքներ: Զօր. Շուրպովնիկեան Պաքուէն Ռոստով փոխադրուած պահուն՝ կառախումբէն վար նետուելով անձնասպան կ'ըլլայ»:

Այս բոլորէն ետք, պարզ էր, որ հայ ժողովուրդը այլեւս չէր կրնար համբերել, որովհետեւ կը տեսնէր, թէ իր լաւագոյն զաւակները բանտերու եւ զնտաններու մէջ կը կայինահարուին ու ինքը տէրը չէ իր ունեցածին, իր պատուին եւ շարունակ ենթակայ է կարմիր սարսափին:

Ու ահա հայ ժողովուրդը մէկ մարդու պէս ոտքի կ'ելլէ, առանց սեռի, դասակարգի, տարիքի խտրութեան, մահը արհամարհելով




Գաղթականները կարսի որբանոցին մէջ:

եւ գիտակցելով, որ ինքը չափազանց անզօր ու թոյլ է իր հակառակորդին բաղդատութեամբ: Յուսահատութիւնը երբեմն հերոսութիւն կը ծնի, մանաւանդ երբ հերոսացողը գիտէ պատուով մեռնիլ: Եւ տարերային ուժով պայթեցաւ 18 Փետրուար 1921-ի համաժողովրդական ապստամբութիւնը, որ մեր ժողովուրդի նորագոյն պատմութեան ամենահոյակապ էջերէն մէկն է:

Սովետական Հայաստանի այժմու «պատմագիրները», կ'անդրադառնան Փետրուարեան ապստամբութեան դէպքերը գիտելով եւ ներկայացնելով իրենց սեւ ակնոցներով: Կ'արժէ հոս մէջբերել քանի

մը տող, որ սահմանուած է միջնակարգ վարժարանի աշակերտութեան. (*)

«Փետրուարի 18-ին թշնամին արեւելքից, հիւսիսից եւ արեւմուտքից ընդհուպ մօտեցել էր մայրաքաղաքի մատույցներին: Վճռական մարտեր են տեղի ունենում Շորբուլազի եւ Վերին Աղբաշի շրջակայքում, Քանաքեռում եւ Հրազդան գետի կամուրջի համար: Փետրուարի 17-ի լոյս 18-ի դիշերը դաշնակցական բանգաները Հրազ-



կացիահարուածները բուշեիկներու ձեռքով՝ Երեւանի բանտին մէջ (Խմբ. Համագասպ, Գնդ. Ղորղանեան եւ ուրիշներ):

դանի կամուրջի եւ Նորքի կողմից թափանցում են քաղաքի կենտրոնական մասերը, միանում տեղի կոնտրաբեւոյուցիոն ուժերին: Փետրուարի 18-ի վաղ առաւօտեան Երեւանի փողոցներում սկսում են ուժեղ մարտեր: Շատ տեղերում հրաձգութիւնը փոխում է սուլինամարտի: Երեւանի պաշտպանութիւնն ամբացնելու համար Շահթախ-

(*) «ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» (Չեռնարկ միջնակարգ դպրոցի համար), Խմբագրութիւն Ս. Տ. Երեմեան, Մ. Ս. Հասրաթեան, Բ. Ն. Առաքելեան, Գ. Գ. Միքայէլեան, Ա. Ռ. Յովհաննէսեան, Բ. Բ. Պիոտրովսի, Երեւան 1958: Գ. հատոր էջ 51:

տից (Նախիջևան) մեկնած 178-րդ դունդը, «Աղատամարտ» զրահագնացքի հրամանատարի եւ մեքենավարի սարտաթի պատճառով, ճանապարհին մի քանի ժամ ուշանում է: Այդ ուշացումը վճռական նշանակութիւն ունեցաւ Երեւանի անկման դործում: Գնդի ժամանումից յետոյ տեղի ունեցան մի շարք մարտեր: Նրա մի մասը Երեւանի



Ս Ի Մ Ո Ն Վ Ր Ա Յ Ե Ա Ն

արեւելեան բարձունքներից հետապնդելով դաշնակիներին, հասաւ մինչեւ Նորքի շրջակայքը: Բայց արդէն ուշ էր, քաղաքի կարեւոր կէտերը գտնւում էին թշնամու ձեռքում: Երեւանի պաշտպանութիւնը վտանգուած էր:

«Փետրուարի 18—19ին դաշնակիները դրաւել էին մի շարք այլ շրջաններ: Նրանց ձեռքն էին անցել Ապարանի, Ախտալի, Կոտայքի, Նոր Բայազիտի շրջանները: Երեւանում կազմակերպւում է դաշնակիների, այսպէս կոչուած նոր կառավարութիւնը՝ «Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն»:

Երեւանի բոլշեւիկեան Յեղկոմի վայրագ դործելակերպի հետեւանքով պայթած 18 Փետրուարի համաթողովրդական մեծ ապրս-



ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ




ԱՐՇԱԿ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ



ՀԱՄԱՐՉՈՒՄ ՏԵՐՏԵՐԵԱՆ



ԲԺ. ՍԱՐԿԱՏ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ



ՎԱՀԱՆ ՄԻՆԱԿՈՐԵԱՆ



ՍԱՄՈՒԷԼ ՄԵՍՐՈՊԵԱՆ



ՅԱԿՈՒ ՏԷՐ ՅԱԿՈՒԵԱՆ
(Յ. Իրազեկ)



ՍՊԱՐԱՊԵՏ ՍՈՒՐԷՆ
(Կուրօ Թարխանեան)

տամբուլթեամբ կը տապալի խորհրդային իշխանութիւնը, որ կ'անցնի Հայրենիքի Փրկութեան Կոմիտէին, որ ունէր հետեւեալ կազմը.

ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ — Նախագահ եւ արտաքին գործերու, գիւղատնտեսութեան եւ պետական գոյքերու վարիչ:

ԱՐՇԱԿ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ — Զինուորական գործերու վարիչ:

ԿԱՐՕ ՍԱՍՈՒՆԻ — Ներքին գործերու վարիչ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՏԷՐՏԷՐԵԱՆ — Ելեւմտական գործերու վարիչ:

ՅԱԿՈՒ Տ. ՅԱԿՈՒԵԱՆ — Պարենաւորման վարիչ:

ԲԺ. ՍՄԲԱՏ ԵՂԻԱՉԱՐԵԱՆ — Խնամատարութեան վարիչ:

Յետոյ աւելցան նաև Ա. Խոնդկարեան՝ արդարադատութեան վարիչ, Վ. Մինախորեան՝ պարենաւորման (Յ. Տէր Յակոբեանի ռազմաճակատ մեկնած ըլլալուն համար): Աւելի ուշ աւելցան նաև Սամուէլ Մեսրոպեան(*) եւ Արմենակ Մաքսապետեան:

Փրկութեան Կոմիտէն առաջին առթիւ կը հրատարակէ հետեւեալ թիւ 1 կոչը.—

«Քաղաքացիներ,

«Բողեւիկեան իշխանութիւնը Հայաստանում վերացուած է:

«Մինչեւ կառավարութեան կազմուելը՝ ամբողջ իշխանութիւնը դանում է Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի ձեռքը: Ամէն քաղաքացի պէտք է պաշտպանի կարգն ու օրէնքը: Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի կողմից հրատարակուած բոլոր կարգադրութիւնները խիստ կերպով պէտք է կատարուեն քաղաքացիներին կողմից:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻ

ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

1921 թ. Փետր. 18, Երեւան

Յաջորդող զէպքերուն անդրադառնալով, Շ. Յարութիւնեան հետեւեալը կը գրէ.—

«Սովետական իշխանութեան դէմ պայքարելու գործում դաշնակները մենակ չէին: Նրանց ախտիւ կերպով օգնում էին միւս հակառեւոյուցիոն պարտիաները: Փետրուարի 25-ին Երեւանում հրաւիրւում է Դաշնակների, Էսէռների, Սպեցիֆիկների, Հնչակեանների եւ Հայ Ժողովրդական պարտիայի ներկայացուցիչների միացեալ խորհրդակցութիւն, որը որոշում է ընդունում ամէն կերպ օժանդակել «Հայրենիքի Փրկութեան» կոմիտէին: Խորհրդակցութիւնում կազմւում է միջպարտիական խորհուրդ՝ սոցիալիստի դիմակի տակ թաքնուած Սպեցիֆիկ Բ. Իշխանեանի նախագահութեամբ»:(**)

(*) Տես «ՅԵՂԱՓՈՆԱԿԱՆ ԱԼՊՈՄ», Գ. հատր, էջ 135:

(**) Շ. Յարութիւնեան, «ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ», 10-րդ պրակ, էջ 158, Երեւան:

Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահ Ս. Վրացեան 20 Փետրուար 1920 թուակիր նամակով մը Ռուբէն Տէր Մինասեանն ու Նժդէհը տեղեակ կը սլահէր Երևանի մէջ տեղի ունեցող դէպքերուն եւ ի միջի այլոց կը զրէր .

«Եթէ այդտեղ առանձին անհրաժեշտութիւն չկայ, շատ լաւ կը լինէր, որ Նժդէհն մի քանի հարիւր Զանդեղուր — Ղարաբաղցի մարտիկներով անցնէր Երևան, ժողովրդի բարոյական թափը ամբացը-



Հ. Յ. ԴԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆ Ա Ձ Դ

Հ. Յ. ԴԱՅՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՈՆ Ի ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ
ԵՒ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳԸ՝

ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐԻ
ՄՈՒԲԻԼԻԶԱՅԻԱ.

Այսօրւանից սկսած իւրաքանչիւր շրջանի բոլոր դաշնակցական ընկերները պարտաւոր են ներկայանալ տեղական մարմինն կամ Բիւրօյի լիազօրին կ'նրանց տրամադրութեան տակ զնեյ իրենց բոլոր ուժերը:

ԻՐԱՔԱՆՉԻՒՐ ԱՆՊԱՐՏԱՃԱՆԱԶՈՒԹԻՒՆ ԱՅՍ
ԽՆԴՐՈՒՄ ՀԱՄԱՐԻՈՒՄ Է

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ

և պէտքէ համապատասխան պատժի արժանանայ:

Հ. Յ. Դաշնակցութեան
ԲԻՒՐՈ
5 Մայիսի 1920 թ.
Երևան

ներու համար: Կը կամենայի, որ Նժդէհն այստեղ պաշտօն ստանձնէր»:

Արդարեւ, ճիշդ էր, որ բոլշեւիկները դուրս շարտուած էին, սակայն ժողովուրդը, չէր կրնար անմիջապէս մոռնալ անոնց բռնութիւններն ու սարսափի մթնոլորտը, հետեւաբար մտահոգութեան մէջ կը գտնուէր:

Սպարապետ Գ. Նժդէհ կատարելապէս իրազեկ ըլլալով բոլոր անցուղարձերուն՝ ի պատասխան բոլշեւիկներու կողմէ առաջարկուած հաշտութեան վերջին դրութեան, 1921 թ. Փետրուարի 24-ին, ուղղեց հետեւեալ խիստ ուժեղ պաշտօնական նամակը, որ կը շօշափէ նաեւ Հայաստանի մէջ սովետական կարգերու օրով կատարուածները. —

Բ Ա Յ Ն Ա Մ Ա Կ

11-ՐԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

Պաֆու

«Մոռանանք. մի վայրկեան մոռանանք, որ մենք կռուող կողմեր ենք:

«Մոռանանք, որ այն Դուք էիք, որ խաբելով աւարի ու աւերածութեան մասնեցիք ըմբոստ ու ազատասէր Ղարաբաղը, Սիւնիքն ու Վայոց — Զորը. սոցիալական քայքայումի հետ անաստուածօրէն առաջ տարաք այդ լեռնաշխարհը լցնող ժողովրդի գլխատման տխուր դործը:

«Մոռանանք եւ այն, որ Դուք էիք, Դուք, որ արհամարհելով յեղափոխական էտիկայի ամենատարրական պահանջները՝ զինակցելով արեւելքի գերազանցօրէն ուժակցիտն, կուլտուրաւեր ու հայաջինջ ուժերի հետ, երէկուայ հանրապետական Հայաստանը Քեմալիստան դարձրիք:

«Մոռանանք նաեւ, որ՝ Ձեր հայ աշխատաւորութեան հասցրած չարիքից ու հայահալած եւ հակա-յեղափոխական քաղաքականութիւնից խթանուած Սիւնեաց, Արցախի ու Վայոց — Զորի ռազմական ուժերը մի զիշեր իջան լեռներից ու մաքրեցին իրանց երկիրը, աշխարհի չորս քամիներին տալով Ձեր բարբարոս զօրամասերը:

«Մոռանանք այդ բոլորը, չնայած որ պատմութիւնն ու Ձեր ձեռքով խաչուած հայ ժողովուրդն երբեք չի մոռանայ. մոռանանք, կրկնում եմ, եւ խօսենք որպէս երկու օրեկտիւ կողմեր:

«Սկսում եմ, լսէ՛ք:

«Ձեր վերջին նամակի մէջ Դուք առաջարկում էք ինձ բարեկամանալ սովետական Հայաստանի կառավարութեան հետ եւ միամտօրէն հարց էք տալիս՝ թէ ո՞ւմ վրայ եմ դրել յոյսս:

«Սովետական Հայաստան չկայ: Կայ քաղաքականապէս բըռ-

նարարուած Երեւան անունով մի քաղաք եւ մէկուկէս տանեակ գիւղեր՝ այսինքն տերիտորեալ մի արսուրդ :

«Ձեր դաւադրութեամբ Հայաստան երկիրը դարձաւ Քեմալիստական : Միամիտ չլինենք ենթադրելու, որ Մոսկուայի Ձեր վերջին կոնֆերանսը մուկ չի ծնելու : Ձեր ցանկութեամբ տաճիկներ մտան Հայաստան, սակայն Ձեր հրամանով նրանք պիտի չհեռանան եւ խոստովանենք, որ եթէ Քեմալիստները քաղաքական հնարաւորութիւն ունենան շարժուելու դէպի Երեւան, Ձեր, միայն թալանի մէջ մարդուած եւ Ղարաբաղում կին ու երեխաներ կոտորելու դործում մասնագիտացած զօրքերը չեն, որ պիտի պաշտպանեն Ձեր ձեռքով գլխատուած ու զինաթափ եղած հայ աշխատաւորութիւնը : Չգիտեմ նրման պայմաններում արսուրդային Սովետական Հայաստանի հետ բարեկամանալը միտք կ'ունենա՞յ : Թւում է, որ իմ՝ Երեւանի կառավարութեան հետ բարեկամանալուց կը շահի միայն Ձեր երէկուայ «բարեկամ», այսօրուայ «թշնամի» Քեմալը, որովհետեւ հայ զինուորն անմարտունակ, փախս է դառնում, երբ անգամ ձեւականօրէն դառնում է կամ կոչում կարմիր, բոլշեւիկեան, սովետական : Ձեր հարցին, թէ ո՞ւմ վրայ եմ դրել յոյսս, Անտանտայի, թէ Վրաստանի, պատասխանում եմ — միայն իմ աղատասէր ժողովրդի յաղթական ռազմունակութեան, իմ երկրի բարձր լեռների եւ իմ պաշտպանած Արդար Դատի վրայ :

«Ուժեղը նա չէ, որ ուտող բերաններ, երկոտանի մեքենաներ, թալանիչներ, կամ թնդանօթներ ու արձիճ շատ ունի, բայց սիրտ եւ հոգի չունի եւ սրբութիւններ չէ ճանաչում :

«Ուժեղը նա չէ, որն ոչնչով չէ տարբերում կարմիր ցարերից, սուլթաններից, որը խարերայութեամբ դրախտ եւ հազար ու մի բարիքներ բերելու խոստումներով մտնում է մի երկիր, թալանում, սոցիալապէս գլխատում, ապստամբութեան մղում ժողովրդին եւ թողնում, փախչում . . .


«Ուժեղը նա չէ, որ ամբողջ բրիգադաներով յարձակում է Շիւանի-Չոր անունով մի գիւղի վրայ եւ քառասուն օր անընդհատ թնդանօթներից եւ զնդացիրներից արձիճ ու կրակ է թափում հարիւրի հասնող ապստամբների գլխին եւ նահանջելուց առաջ ասպետութիւն չի ունենում ծունկի դալու ապստամբների դիրքերի առաջ եւ ասելու՝ — «Փա՛ռք Ձեզ, ապստամբներ՛ր, որ այդպէս կռուել եւ ձեր երկիրն ու մարդկային իրաւունքները պաշտպանել գիտէք» :

«Ուժեղը նա չէ, որի ուժերի աւանգարդը կազմում են՝ կարմիր սուտը, խարերայութիւնն ու պրովակացիան, որը չգիտէ, որ գերմանական զրահապատ բռունցքը Չարդ ու փշուր դառաւ, զինաթափ եղաւ բէլգիական տրադիկ ու հերոսական հոգու առաջ :

«Ուժեղը նա չէ, որ յանուն իր աննշան յաջողութիւնների, իր Պիւռոսեան յաղթութիւնների դաշնակցում է անգամ սատանայի հետ,

որը լինելով Նապոլեոնի խեղանկարը, Մաքիավելլն է իսկական:

«Ուժեղը նա չէ, որը կազմակերպուած մեծ թալանն ու մեծագոյն ոճիրն անուանում է Ռուսական Մեծ Յեղափոխութիւն, որը խե-



Հ Ի Ն Գ Ո Ր Ի Ս

լազար հալածանք ու տեռոր է յարուցել անդամ սոցիալիստական ինտելիգենցիայի դէմ, որն առանց ամօթի ու խղճի խայթի իր ամենավուրդար - քրէական դործիչներին, ինչպիսիք են սաղիստ Աթար-

բէզեանն ու Աւիսը, — անուանում է ուսական Մարա(թ) :

«Ուժեղը նա չէ, որը օրական եօթն անգամ վերեւ ու ներքեւ թքել զիտէ, բայց կուրծքի վրայ, գրպանի խորքում ուսական խաչն ու Տիրամօր պատկերն ունի: (*)

«Ուժեղը նա չէ, որի յաղթութիւնները ռազմական լինելով, բարոյական չեն :

«Գուք չզիտէք, թէ ո՞վ, ինչպէ՞ս եւ ինչո՞վ է յաղթում :

«Լսէ՛ք, ասեմ :

«Գիշեր է : Մի քանի գինուորներ Գորիսի մի այգում սուր խրամատաշինական գործիքներով փոսեր են փորում : Գերեզմանները պատրաստ են : Ահա բանտի դռներից դուրս նետեցին երկու ականաւոր սոցիալիստների : Գատապարտուածները զիտեն, որ իրենց տանում են հողին յանձնելու, բայց չզիտէին, որ պիտի մորթուեն : Մօտեցրին փոսերին : Մի քանի սրեր բարձրացան մթութեան մէջ ու իջան : Սոցիալիստներից մէկը գլխատուած էր, իսկ միւսի ձախ թելը կտրուած :

«Սրիկանե՛ր, սպանէ՛ք, կտրէ՛ք միւս թելս էլ, բայց զիտցէ՛ք, որ դուք ձեզ էք սպանում : Յարն էլ ձեզ պէս վարուեց ժողովրդի պաշտպանների հետ» — ու մեռաւ բռնաբար :

« — Սրիկանե՛ր, մարդասպաններ, վերջին անգամ դռաց Շիրինն ու սրերի ծանր հարուածներից գլորուեց փոսը :

« — Սրիկանե՛ր, մարդասպաններ, վախվիտելով ու կամացուկ կրկնեց խարուած ժողովուրդն ու սեղմեց բունցքը :

* * *

«Կռիւ էր : Չերոնք միացած Սալիլ-փաշայի թապուրներին, թնդանօթների ու գնդացիների հետ կախուել էին Ալազեազից Կարճեւան գիւղին վրայ : Երբորդ օրն էր, ինչ ապստամբները հեզնում էին թշնամու բոլոր ճիգերն ու փորձերը եւ առատ հունձ անում :

«Չուր չկար, ծարաւ էինք : Կարճեւանցի հայ կիներ, կուժը լիքը սառը ջրով բարձրանում էր դէպի մեր դիրքերը : Թշնամին նկատելով՝ գնդացիբային կրակ բացեց նրա վրայ : Հարիւրաւոր գնդակներից մէկը փչրեց հայ կուժը : — Կիներ նորից իջաւ Արաքսի ափը, վերցրեց մի ուրիշ կուժ, լցրեց ջրով ու շարժուեց դէպի մեր դիրքերը : Էլի նա ինկաւ կրակի տակ, թեթեւ վիրաւորուեց ու կորցրեց իւր կուժը : — Հաւատացած էինք, որ նա այլեւս չի վերադառնայ, բայց մի քիչ անց, նորէն պաշտելի հերոսուհին, կուժն ուսին, բարձրացաւ սարը :

«Վիրաւորուած հայ կնոջ ներկայութիւնը կրակով ու վրէժով

(*) Ինձ մօտ գերի բռնուած հազարաւոր ուս կարմիր գինուորներ ցոյց են տուել ինձ իրենց վզից կախած խաչը եւ ծոցերում ունեցած Տիրամօր պատկերը (Ծանօթ. Սպարապետ Նժդեհի) :

լցրեց ապստամբների հողիները: Կէս ժամ անց, թշնամին մեր սարերից կրնկակոխ փախչում էր:

«Ահա իմ ուժը:

* * *

«Կուրիւշկինը իր հեծելազօրքով եկել, պաշարել էր Երիցվանիկ գիւղը: Հրամայուած էր ցերեկը չպատասխանել թշնամուն: — Ապստամբները սրտատրոփ սպասում էին խաւարն իջնելուն, իրենց հարազատ տարերքին, երբ հպարտ զաւիանցին թշնամու բանակին մասին հարց տալու փոխարէն, հարցնում — Ո՞ւր է թշնամին:

«Գիշեր է: Գայլավաշտերը սպասում են աղղանշանին՝ սկսելու իրենց ուժանակային գրոհը: Լռութեան մէջ բարձրացաւ ապստամբներից մէկի մահն արհամարհող, վտանգն անդիտացող երգը: Վաշտերը դուրս թռան իրենց խրամատներից, լսուեց դուռ ուռա՛ն, որին հետեւեցին դինամիտային պայթիւնները:

«Լոյսը բացուեց: Մեր ձեռքն էր մնացել թշնամու ուժերի կիսից աւելին, մի քանի հարիւր հրացան ու երկու տասնեակից աւելի զնդացիրներ:

«Մենք այսպէս շատ անգամ երգով ենք յաղթում:

* * *

«Սիւնիքի երկնքի տակ, բացօթեայ, հաւաքուած են հազարաւոր կանայք քաղաքից ու գիւղերից: Միտինք է: Ո՞ւր ում է մէկը: — Դիմենք Սպարապետին, եթէ նա այսօր մինչեւ երեկոյ չքշի թշնամուն Չարուղից էլ դէն, մենք կը յարձակուենք դեղատների վրայ, մեր մէջ կը բաժանենք եղած թոյնը եւ անձնասպանութեամբ վերջ կը տանք մեր կեանքին, որ մէկ էլ կարմիր զինուորի կամ սեւ ասկեարի երեսը չտեսնենք:

«Հերոսական այդ որոշումը յայտնուեց զօրքին:

«Մութը դեռ չէր ընկել, երբ մեր սուրհանդակն աւետեց, որ ջարդուած թշնամին յետ է շարտուած Աւդալլար:

«Ահա թէ ինչո՛վ եւ ինչպէ՛ս ենք յաղթում մենք:


* * *

«Այսպէս, եկաք, խաբեցիք, թալանեցիք, ապստամբեցրիք ժողովրդին ու քչուեցիք: Դուք պարտուեցիք, որովհետեւ պէտք է պարտուէիք, որովհետեւ դա պատմութեան վճիռն է, որովհետեւ մարդկութիւնն է այդպէս ցանկանում:

«Դուք պարտուեցիք, որովհետեւ Դուք բարոյապէս պարտուած

էք եղել հէնց ձեր քանդուած ու գլխատուած բուն հայրենիքում — Ռուսաստանում, որովհետեւ ձեր ամէն մի քայլը, ամէն մի գործը բարոյական մի պարտութիւն է, էտիքական մի անձնասպանութիւն:

«Սիւնիքը յաղթեց ձեզ, որովհետեւ նա սկսեց է յաղթէր, որովհետեւ վարձկան դինուորականների տեղ նա ունի երկու հարիւրի չափ ժողովրդական ուխտուած վաշտապետներ, նոյնքան Դաւիթ-Յէզեան դայլավաշտեր, իրեն սպաստան բարձր լեռներ. որքան բարձունք, այնքան դնդացիր (միայն ձեր գորքերից խլուած 200-ը), խոր ձորեր թշնամու համար դերեղման, թնդանօթներ, առատ ուղմամթերք, հա-



ԴԱՒԻԹԻ ԲԵՐԴԸ (ՀԱԼԻՉՈՐ)

ղարաւոր փթերով ուժանակ, ծով ատելութիւն դէպի իր թշնամին, ծով սէր դէպի հայրենի երկիրն ու արիւնով ձեռք բերուած ազատութիւնը, բոլոր ճակատներում անյատակ մեշօկներ, որոնք բերանբաց սպասում են մեր երկրի թշնամիներին ու կրանիտէ հաւատ, որ ապրտամբուած ժողովուրդին միայն Աստուած կարող է յաղթել:

«Խորամանկ Մաքիավէլն էլ չի օգնի Ձեզ: Ձեր լաւագոյն մոդեռն զէնքերը — կարմիր սուտն, չեղած դրախտն էլ չեն փրկիլ Ձեզ, որովհետեւ այդ զէնքերով միայն մի անգամ կարելի է յաջողել, յաղթել: Ձեր մեղրամիտն անցած համարէք: Խոստացած դրախտի տեղ դժոխք, հաղար ու մի բարիքների փոխարէն՝ սով, սիֆիլիս, արիւն, արցունք, կոտորած, Քեմալ, Քեմալիստան բերիք հայ աշխատաւորութեան համար:

«Եզրելով նամակս, աւելացնում եմ. ի դուր էք ենթադրում, որ ես ցանկութիւն ունեմ պայթեցնելու Երեւանն ու մէկ ու կէս տասնեակ գիւղերը, որոնց վզին զօռով է դրուած սովետական լուծը, եթէ Ձեր Ղարաբաղում սկսած բարբարոսութիւններով չստիպէք ինձ անելու այդ քայլը:

«Յգրութիւն:

«Ինքնավար Սիւնիքի Սպարապետ՝ ՆՓԴԵՀ

Գորիս, 24 Փետրուար 1921 թ.»

Անշուշտ պէտք չէր ակնկալել, որ բազմապիսի դաւերով ու նենգութիւններով Հայաստանը իրենց ենթարկած բոլշեւիկները լուռ պիտի մնային, հակառակ այն բացարձակ իրողութեան, որ դուրս չպրտուած էին ժողովուրդին կամքով, համաժողովրդական ընդվզումով:

Բոլշեւիկեան բանակը չզազրեցուց իր յարձակումները, վերագրաւելու համար Երեւանը, սակայն այդ յարձակումները կը մնան ապարդիւն եւ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն կը կառավարէ երկիրը:

Հայրենիքի Փրկութեան Կոմիտէն կը գիտակցէր, որ կը գրտնուէին դժուարին կացութեան մէջ եւ ազատատենչութիւնն ու հայրենասիրութիւնը, գաղափարականն ու անձնագոհութիւնը ի վերջոյ տեղի պիտի տային կարմիր սուխներուն առջեւ:

Այս առթիւ, Ս. Վրացեան հետեւեալ նամակը կը գրէ.—

«Սիւնեաց Սպարապետ ՆՓԴԵՀին

եւ Դարալազեազի Հրամանատար Եապոնին

«Գրաբերներս լիազօրուած են Ձեզ տեղեկացնելու այստեղի կացութեան մասին եւ մեր կողմից անելու մի շարք առաջարկութիւններ: Ես խնդրում եմ նրանց հաւատալ եւ ամենայն լրջութեամբ վերաբերուել:

«Մի բանի վրայ միայն առանձնապէս շեշտում եւ խնդրում եմ ուշադրութեան առնել.— Դարալազեազ — Չանդեզուր — Երեւան դժի բացումը մեզ համար շատ է կենսական եւ անյետաձգելի, ինչպէս նաեւ մարտական օժանդակութիւն հասցնելը: Ամէն գնով պէտք է կապուէք մեզ հետ եւ ճանապարհ ապահովէք:

Մնացեալը կը պատմեմ:

Ձերդ՝ Ս. ՎՐԱՅԵԱՆ

Երեւան, 25 Մարտ 1921

Այս նամակէն ետք, ՆՓԴԵՀի ուժերը կը գրաւեն Չանախչուի շրջանը, ճամբայ բանալով:

1921 թ. Մարտի 28-ին, բոլշեւիկները, Թիֆլիսէն անցան ընդ-

հանուր յարձակման եւ նահանջի մղեցին Սպիտակ Սարի հայկական ուժերը: Երեք օր ետք, թշնամին դրաւեց Աշտարակը, որով հնարաւորութիւն ստացաւ Եղվարդի հայկական ուժերու թիկունքէն դործողութիւններու սկսելու: Գերի մնալու վտանգէն խուսափելով՝ վերջինները նահանջեցին Երեւան: Ապրիլ 2-ի լուսարացին թշնամին հնարաւորութիւն ստացաւ դործի սկսելու Երեւանէն 10 վերստ հեռու գրտնուող տարածութեան վրայ՝ Էյլարի ճակատին դէմ: Ուժեղ հեծելազօրներու հետապնդման պատճառով, հայկական ուժերը անկարող եղան ամրանալ Քանաքեռի բարձունքներուն վրայ եւ նահանջելով, կէսօրին հասան Երեւան:

Սկսաւ քաղաքացիներու խուճապային փախուստը: Ո՞ւր կ'երթային եւ ինչո՞ւ, ոչ ոք դիտէր. յայտնի էր միայն, որ բոլշեւիկները կու գային: Դժուար է պատկերացնել փախչողներու սարսափը. ակահատեսներու համաձայն դիտողի վրայ դիւահարներու տպաւորութիւն կը ձգէին անոնք: Կարծես կը պարպուէր ամբողջ քաղաքը, արագ ու դղրդոցով կ'իջնէին խանութներու փեղկերը, կը բացուէին ու կը գոցուէին պատուհանները. աղմուկն ու իրարանցումը չափ չունէին, ճիչերը իրարու կը խառնուէին:

Խառնիխուռն վազող այդ ամբոխի մէջ կարելի էր տեսնել դըլխարաց օրբեր, կիներ, երախաներ, հազիւ հազ շարժող ծերունիներ:

Սարսափի աւելի ծանր պատկեր մը կը ներկայացնէր Ապարանի, Էջմիածնի, Չանգիրասարի եւ Սարտարապատի շրջաններու ազգաբնակչութեան փախուստը:

Ապրիլ 2-ի առաւօտեան, Աշտարակէն, Եղվարդէն նահանջող զօրքերու հետ միասին, Վաղարշապատ կը հաւաքուի շրջանի հասարակութիւնը: Մինչեւ կէսօր 5000 հոգիէ բաղկացած բազմութիւն մը կը դիմէ արտասահման անցնելու:

Յաջորդ օրը Փրկութեան Կոմիտէն հարկադրուած եղաւ ժողովուրդին բաժնել մթերքներ: Ապրիլ 8-ին Գէօլ-Այսօրում արդէն համախմբուած հասարակութիւնը մեծ խումբերով կ'առաջանայ դէպի Խոսրով — Ջումուչբասան — Արմիկ դժուարին ու ճիւղապատ ճանապարհը եւ քանի մը օրուան աննկարագրելի տառապանքներէ յետոյ, կը հասնի Ելփին:

Ապրիլի կէսերուն տարագիրներ հաւաքուած էին Քէչիչքենդ:

Այդ «գաղթական»ներուն օժանդակել, պարէն եւ ապաստան տալ պէտք էր: Եւ հայ գիւղացին չվարանեցաւ իր դուռը բանալու իր եղբօր առջեւ:

Դարալագեազի գիւղացիութեան այդ շրջանին արտայայտած դիրքը ճշդելու համար, չենք կրնար անտես առնել այն մրցակցութիւնն ու խանդավառութիւնը, որ արտայայտած էին անխտիր բոլոր գիւղերու պատգամաւորները, մթերքի Փոնտը կազմելու ժամանակ: Բայց այդ նախնական աշխատանքները ապարդիւն անցան, որովհե-

տեւ թիկունքի ինքնապաշտպանութեան գործողութիւններու անյաշողութեան պատճառով, տարազիրները ստիպուեցան առաջ շարժուիլ դէպի Չանգեղուր ու ցրուիլ Միսեանի ու Տաթեւի դիւղերը:

Ապրիլի վերջերը դաղթի հոսանքը կանգ կ'առնէ Տաթեւի մէջ: Քսան օրուան յուզումնալից ու դժնդակ դաղթը հետքեր էր ձգած, աւելի շատ բարոյալքուած էին դաղթի արհաւիրքներու անձանօթները. սնունդի պակասը ու անկանոն կեանքը հիւժած էին շատերը:

Անհնարին պայմաններով Հայրենիքի Փրկութեան կոմիտէն կրցաւ բաղմահազար բաղմութիւնը, Չեկոյէն աղատուած մտաւորականութիւնը, պետական պաշտօնեաները, մարտիկներ եւայլն պարենաւորել եւ Միլի Չորի ամայի, դժուարանցանելի շրջանէն ճանապարհ դնել դէպի Գարալագեազ՝ այնտեղէն Չանգեղուր:

Գարալագեազը մաս կը կազմէր ինքնավար Լեռնահայաստանի՝ Գորիս մայրաքաղաքով, ուր նստած էր Տաթեւի համագումարի ընտրած կառավարութիւնը: Իշխանութեան պետն էր սպարապետ Գ. Նժդեհը: Երեւանի անկման լուրը եւ տարազրութեան հոսանքը բնական կերպով աննպաստ ազդեցութիւն պիտի ունենային նաեւ Գարալագեազի դիւղացիութեան վրայ, եւ Հայրենիքի Փրկութեան ուժերը անցնելէն ետք, շուտով Գարալագեազը պիտի իյնար բոլշեւիկներու ձեռքը:

Չանգեղուրը ի վիճակի չէր երկար ժամանակ պահել ու պարենաւորել Երեւանէն եկած հազարաւոր տարազիրները: Այս եւ նման այլ հարցեր լուծում կը պահանջէին: Տաթեւի մէջ, Հայրենիքի Փրկութեան կոմիտէի խորհրդակցութենէն կը սրարդուի, որ միակ լուծումը տարազիրներու թաւրիզ փոխադրութիւնն է, որովհետեւ կարելի չէր ոչ վերադառնալ եւ ոչ ալ Չանգեղուր մնալ:

Հայրենիքի Փրկութեան կոմիտէի ռազմական եւ քաղաքացիական գործօն ուժերը կը դրուին Չոր. Գարեգին Նժդեհի տրամադրութեան տակ: Ան վճռական կերպով կ'որոշէ պայքարիլ Լեռնահայաստանի անկախութեան համար, մինչեւ Հայաստանի վերջնական ազատագրումը բոլշեւիկներու տիրապետութենէն:

Ապրիլ 21-էն սկսած՝ տարազիրները 14 մեծաթիւ (150—300 մարդ) եւ շարք մը մանր խումբերով կը մեկնին Մեղրի: Բոլոր մեկնողներուն կը տրուէր երեք օրուան պարէն: Մայիս 10-ին Տաթեւէն կը մեկնի վերջին մեծ խումբը, որմէ ետք կը մնան անհատներ եւ ուշացած խմբակներ:

Մեղրի կը դառնուէր մօտ 6—7 հազարի բաղմութիւն մը: Պարզ էր, որ այդքան մարդ արագօրէն դետէն անցընելը հնարաւոր չէր. լաստերու թիւը սահմանափակ էր: Մայիս 15-էն յետոյ խնամքն ու պարենաւորումը համեմատաբար կանոնաւորուած էին, լաստերու թիւը հասած էր 8-ի, որով հնարաւորութիւն կը ստեղծուի արագացնելու փոխադրութիւնը:

Համաձայն Արաքսի ափին կատարուած ցուցակագրութեան՝
 դետն անցած են .—

1.— Ապրիլի 25-էն մինչև Մայիս 9-ը	700 անձ
2.— Մայիսի 9-14	392 »
3.— Մայիսի 14-19	713 »
4.— Մայիսի 19-էն Յունիս 2-ը	4383 »
5.— Այդ ժամանակամիջոցներուն ճրի՛	400 »
6.— Զանգեզուրի անկումէն ետք	1453 »

Ընդամենը՝ 8041 »



ԲԺ. ՌՈՒԲԷՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Չանդեգուրի վրայով Թաւրիզ մտած ամբողջ տարագրութեան 63 առ հարիւրը տեղ է հասած 1921 թ. Մայիսին :

Լեւոնահայաստանի անկումէն ետք, Յուլիսի 7-էն յետոյ, կը սկսի երկրորդ դաղթը : Այդ դաղթը կը բերէ 1388 հոգի Թաւրիզ եւ 64 հոգի Մուժամբար, որոնց մեծ մասը կը հասնի 7 օրուան մէջ, Յուլիսի 10-16ին :

Ըստ Թաւրիզի դաղթականական կոմիտէի ցուցակներուն 1921 թ. Ապրիլի 30-էն մինչեւ Յուլիսի վերջը, Թաւրիզ եւ Մուժամբար հասած են 7836 տարագիրներ :

Գաղթողները եղած են Էջմիածնէն, Սուրմալուէն, Նախիջեւանէն, Շիրակէն, Կարսէն, Դիլիջանէն, Նոր Բայազիտէն, Ղարաբաղէն, Չանդեգուրէն, Դարալագեաղէն :



Հիւանդանոցի սրահներէն մէկը, ուր ԲԺ. Ռուբէն Ստեփանեան կը քննէ իր հիւանդները : (Խաչանիշովը ԲԺ. Ռուբէն Ստեփանեան) :

Թաւրիզի մէջ Յուլիսի առաջին օրերուն տարագրեալները կ'ընտրեն դաղթականական կոմիտէ մը, Հ. Յովհաննէսեանի նախագահութեամբ : Կոմիտէին զուգահեռ անգնահատելի աշխատանքներ կը կատարէ թեմի առաջնորդ Ներսէս Արք. Մելիք Թանգեանը :

Կիսաքաղաք վիճակով կատարած երկարատեւ ճամբորդութեան եւ դաղթի հակառողջապահական սլաշմաններով, մասնաւորապէս Արաքսի ափին, տարագիրները Թաւրիզ հասած էին ուժասպառ ու հիւանդ : Մանր հիւանդները կը տեղաւորէին յատկապէս բացուած երկու հիւանդանոցները : Մասնաւոր ուշադրութիւն կը դարձուի տարագիրներու հագուստին, որուն համար հիմնուած էր յատուկ կայան :

1921 թ. Յունիսի 10-էն մինչեւ Սեպտ. 15-ը առողջապահական

գործի ծանրութեան մեծ մասը ծանրացած էր Հայ դադթականական Ֆոնտի վրայ :

Հայ դադթականական Ֆոնտի լուծումէն ետք, կը բացուի նոր դարձանատուն մը՝ Բժ. Ռուբէն Ստեփանեանի ղեկավարութեամբ 1921 թ. Նոյեմբեր 1ին : Դարձանատունը կը գործէ մինչեւ 1922 թ. Մարտ 7-ը եւ այդ ժամանակամիջոցի ընթացքին 2435 այցելուներ կ'ունենայ :

Այնուհետեւ բժշկական օգնութեան գործը կը կատարէ Հ. Յ. Դաշնակցութեան կարմիր Սաշը, որ կ'օգնէ հիւանդներուն, միանուազ նպաստներով ու դեղերով :

Լ Ե Ռ Ն Ա Ն Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Վրաստանի խորհրդայնացմամբ եւ Հայաստանի երկրորդ անկումով Սիւնիքի կեանքը կ'ալեկոծէր . այս պատճառով Ապրիլ 27-ին Տաթեւի վանքին մէջ տեղի կ'ունենայ Տաթեւի երկրորդ համագումարը, ուր կ'որոշուի երկիրը յայտարարել Լեռնահայաստան եւ իր կառավարութիւնը Լեռնահայաստանի կառավարութիւն :

Համագումարը միաձայնութեամբ կ'որոշէ .

«Քանի որ Սիւնիքի ամբողջ բախտը եւ Հայ ազգաբնակչութեան Ֆիզիքական գոյութիւնը վստահուած են Նժդէհին, որն իր ամբողջ գործունէութեամբ միշտ ալ հանդէս է եկած որպէս անձնագոհ, տուկուն եւ նախանձախնդիր ղեկավար, կ'որոշուի ապագայ ըլլալիք կառավարութեան կազմը եւս վերապահել անոր : Կառավարութիւն կազմելու համար վարչապետ ընտրել Սպարապետին, տալով անոր գորավարի աստիճան եւ սարգեւատրել զայն «Սոցալտուպեան արծիւ»ի երկաթէ շքանշանով» :

Լեռնահայաստանի ժողովրդական ներկայացուցիչներու համագումարը, Ապրիլ 27-ի նիստին, կ'ընտրէ Լեռնահայաստանի նոր կա-

աւարութիւնը եօթը նախարարներով, սպարապետ Նժդէհի նախարարապետութեամբ, հետեւեալ ձեւով .—

Նախարարապետ, արտաքին գործերու եւ զինուորական նախարար — Գ.Ա.ՐԵԳԻՆ ՆՓԳԵՀ

Ներքին գործոց նախարար — Ս. ՄԵԼԻՔ - ԵՕԼԶԵԱՆ

Հաղորդակցութեան նախարար — Ա. ՕՀԱՆՋԱՆԵԱՆ

Արդարութ. եւ Լուսաւորթ. նախարար — Յ. ՏԷՎԷՃԵԱՆ

Պարենաւորման նախարար — Յ. Տ. ՅԱԿՈՒԵԱՆ

Խնամատարական նախարար — ԲԺ. ՄԻՆԱՍԵԱՆ

Ֆինանսներու նախարար — ԲԺ. Ս. ԵՂԻՍՉԱՐԵԱՆ

Պետկ. Վերհսկիչ նախարար — Գ. ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

Տաթևի երկրորդ համադումարին անդրադառնալով, «Հոկտեմբերեան Ռեւոլուցիան եւ հայ ժողովուրդի ազատագրումը» գրքին մէջ (էջ 371—372) Ծ. Աղայեան կը գրէ հետեւեալը .—


«1921 թ. Ապրիլի 21ին Տաթևում կայացած դաշնակցականների ժողովը լուծարքի ենթարկեց «Հայրենիքի Փրկութեան Կոմիտէ»ն եւ ստեղծեց «Հայաստանի կառավարութիւնը»: Շուտով, Ապրիլի 26-ին, Տաթևի վանքում հրաւիրուած է «Ինքնավար Սիւնիք»ի 2-րդ համադումարը, որի որոշմամբ Զանդեղուրը յայտարարուած է «Լեռնահայաստան», իսկ Գորիսը՝ նրա մայրաքաղաք: Այստեղ էլ հէնց կազմուեց դաշնակցական կառավարութեան պարլամենտը, նշանակուեցին նախարարներ: Ապրիլի 27-ին Նժդէհը հաստատուեց «Լեռնահայաստան»ի վարչապետ»:

Թէ ինչի՞ կը միտէր Տաթևի Բ. համադումարը, այդ հարցը լուսադոյնս կը բացատրէ Նժդէհ(*) .—

«Երեւանեան դաղթի առաջացրած բարոյալքումից հետո պահելու համար՝ պէտք էր մի նոր ժեստով դօտեպնդել տեղական ժողովուրդը: Եւ այդ ոչ միայն անկախ Հայաստանի դադափարն ապրեցնելու համար, այլ եւ որպէսզի հողերանական հնարաւորութիւն տրուէր Սիւնիքի հայութեան՝ մի որոշ ժամանակով եւս դիմաւորելու իրենց օղակող ռուս եւ թուրք հորդաներին, մինչեւ որ մազապուրծ եղած հայ մտաւորականութիւնը կ'անցնէր Պարսկաստան: Երեւանի առաջին անկմամբ ստեղծուած ծանր դրութիւնը փրկել էր ինքնավար Սիւնիքը: Նրա երկրորդ Խորհրդայնացմամբ առաջացած ազէտալի դրութիւնը պիտի փրկէր անկախ Լեռնահայաստանը, որը

(*) «ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, Գ. տարի Բիւ 10(34), Օգոստոս 1925, «Ազատ Սիւնիք», Նժդէհ, էջ 138:





փաստորէն գոյութիւն ունէր Ղարաբաղի եւ Վայոց-Ձորի գրաւման օրերից» :

Տաթևի համադումարի նախօրեակին, Տաթևի մէջ գումարած իր մէկ նիստի ընթացքին, Հայաստանի Հանրապետութեան Փրկութեան Կոմիտէն կ'առնէ կարգ մը որոշումներ, որոնցմով իր գրեթէ բոլոր իրաւասութիւնները կը փոխանցէ Լեոնահայաստանի կառավարութեան : Հ. Հ. Փրկութեան Կոմիտէի նախագահ Ս. Վրացեան այդ որոշումները կը յայտնէ Նժդէհին, իր 21 Ապրիլ 1921 հետեւեալ գրութեամբ (*). —

«Սիրելի Նժդէհ. որոշուեց՝

1) Հայաստանի բոլոր ռազմական ուժերը եւ գոյքերը յանձնել Լեոնահայաստանի կառավարութեան. այդպիսով, ուրեմն, մեր սպարապետն էլ, ամբողջ հրամանատարութիւնն էլ ենթարկուած են Սիւնեաց սպարապետութեան : Կարծում եմ լաւագոյն կը լինի նշանակել Կուռոյին ձեզ օգնական եւ արեւմտեան ճակատի հրամանատար :

2) Հ. Հ. Փրկութեան Կոմիտէն ընտրում է իր տեղը փոքրահազմ մի կառավարութիւն էտ հոբ խնդիրները լուծելու, իսկ Հ. Փրկութեան Կոմիտէն ենթարկուած է լիկւիտացիայի :

3) Կառավարութեան նախագահութիւնը յանձնեցին ինձ :

4) Կառավարութիւնը կը մնայ այստեղ եւ կ'օգնէ տեղական իշխանութեան, գաղթականութեան, էվակուացիայի եւ այլ խնդիրներում :

1921 թ. 21 Ապրիլ

ՍԻՄՈՆ ՎՐԱՅԵԱՆ

Լեոնահայաստանի անկախութեան հռչակման, իշխանութիւնը Նժդէհի փոխանցուելու եւ այլ հարցերու եւ դէպքերու մասին կ'արժէ մէջբերել նաեւ Ձոր. Սմբատի վկայութիւնը (գրուած Թաւրիզ, 31 Օգոստոս 1921-ին). —

«Ապրիլ 18-ին Նժդէհ եկաւ Բաղար-Չայ եւ զինուորական խորհուրդի հետ համաձայնեցաւ բանակը ուղարկել արեւմտեան սահմանը եւ տեղաւորել Շրխլար, Օրչիս եւ Մեղրի կէտերու վրայ, որպէսզի հնարաւոր ըլլար հանդստացնել հիւժուած եւ յոգնած զինուորութիւնը : Եւ Ապրիլի 22-ին Բաղար-Չայի մէջ ստացայ Տաթևէն Ձոր. Նրժդէհի նոյն ամսուան 21-ի հրամանը եւ բանակը շարժեցուցի դէպի ցոյց տուած ճանապարհը Գողթան երթալու համար : Թէեւ Գողթան երթալու խնդիրը բոլորովին նոր էր, բայց ես ստիպուեցայ ենթարկուիլ, որովհետեւ Հայրենիքի Փրկութեան Կոմիտէի նախագահ Ս.

(*) «ՀԱՅՐԵՆԻՔ» ամսագիր, Գ. տարի, Թիւ 10(34), Օգոստոս 1925, «Ազատ Սիւնիք», Նժդէհ, էջ 140 :



ՍԻՆՆԻՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՆԷՆ ԱՆՅԱՂԹ ՍՊԱՐԱՊԵՏ ՆԺԴԵՀԻՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԻՆԱՆՇԱՆԸ :

«...Ողջո՛յն ու յարգանք քեզ...»

Ողջոյն. բովանդակ Զանգեզուրի հայութեան հուստուպեան եւ Ալագեազի, Դափանի ու Արեւիքի արքունի հսկիչ ու պահապան, մեր այս լեռնոտ երկրի ազատութիւնը մարմնացնող ԶՕՐԱՎԱՐ ՍՊԱՐԱՊԵՏ ՆԺԴԵՀԻՆ :

Դու, որ քեզ շրջապատող բարձրաբերձ ժայռերին յատուկ հր-պարտութեամբ եւ վեհութեամբ միշտ բարձր պահեցիր ազատութեան եւ նշմարտութեան վեհ դրօշակը եւ այդ կարմիր ու պայծառ դրօշակի եւ սուրբների տակ փշրեցիր օտարամուտ քշմամի վռնակներին...

Ողջո՛յն ու մեծարանք քեզ...» :

(«ԱԶԱՏ ՍԻՆՆԻՔ», Թիւ 5, 20 Մարտ 1921

Վրացեան Ապրիլ 22-ին Տաթևէն կը յայտնէր, որ մեր բանակը դըրուած է Նժդեհի տրամադրութեան տակ :

«Ապրիլի 29-ին Նժդեհ Հանքերէն ինծի ուղարկած էր իր երկրորդ հրամանը Գողթան երթալու մասին, յանձնարարելով այնտեղ ստեղծել քաղաքացիական իշխանութիւն, զնդահահարել մի քանի տեղացիներ եւ կապ պահել ապստամբներուն հետ : Ան ինծի դրած է նաեւ նամակներ, որով կ'ուզէր հաստատել, որ Իշխան Յովսէփ Ար-



ԶՕՐ. ՍՄԲԱՏ

ղութեանի տուած տեղեկութիւններու համաձայն շուտով ապստամբութիւն կը սկսի սովետական երկիրներու մէջ եւ թէ թուրքերը պիտի չբողոքեն Գողթանի դրաման դէմ :

«Ապրիլի 26-ին Մեղրիէն Ս. Վրացեան, Յ. Քաջազնունիի հետ համաձայն, նոյն ամսոյն 28-ին Կարճիանէն Յակոբ Տէր Յակոբեան եւ 29-ին Մեղրիէն Ռուբէն ինծի դրած նամակներով կը թելադրէին երթալ Գողթան : Նժդեհի հրամանը եւ միւս կողմէ կառավարութեան եւ Պարլամենտի նախագահներու, կառավարութեան մէկ անդամի եւ Հ. Յ. Դ. բիւրոյի անդամ Ռուբէնի նամակները նեղ դրութեան մէջ դրած էին զիս ու իմ բանակը, թէեւ կար մտադրութիւն զինուած անցնելու Պարսկաստան Սմկոյի դէմ կռուելու համար :

«Վերի բոլոր պատճառներուն վրայ պէտք է գումարել նաև ճանապարհի խիստ դժուարութիւնը, թէև Նժդէհ կը դանկը, որ երկու օրուան մէջ՝ 2700 զինուորութիւն անցեր էր 12·855 սաք բարձրութիւն ունեցող եւ ամբողջապէս ձիւնապատ Խափուչուղը :

«Այս բոլորէն ետք՝ զինուորներու մեծ մասի տրամադրութիւնը նկատի ունենալով, ես ստիպուեցայ խիստ դժման ենթարկել բանակը Նժդէհի համաձայնութեամբ ու դորժակցութեամբ եւ Մայիսի 8-ին 300 զինուորներ ուղարկել Գողթան, Սասունցի Մուշեղի առաջնորդութեամբ» :

Ժողովուրդն ու զօրքը խանդավառելու, հողերանական ընկճուած մտայնութիւնը վերականգնելու նպատակով թափուած ճիղերը որքան ալ մեծ ըլլային, կացութիւնը կը մնար աւելի քան բարդ, կնճռոտ ու զրեթէ յուսահատական : Այդ իսկ պատճառով, Նժդէհի ղեկավարած կառավարութիւնը անվարան կը դիմէ բանակցութիւններու, երբ Երեւանի խորհրդային կառավարութիւնը կ'ուզէ խաղաղ լուծում գտնել, Լեռնահայաստանն ալ կցելու համար Սովետական Հայաստանի :

Բոլշեւիկները կ'ուզեն այս անգամ խաղաղ միջոցներով դրաւել Զանդեղուրը : Ու այդ նպատակով Զանդեղուր կ'երթան Յեղկոմի կողմէ Արտ. Կարինեանը, 11-րդ կարմիր բանակի ներկայացուցիչ Մելնիկովի ընկերակցութեամբ, բանակցելու համար Լեռնահայաստանի կառավարութեան հետ, բայց բանակցութիւնները դրական հետեւանք չեն ունենար, բոլշեւիկները կը պահանջեն առանց պայմանի անձնատուութիւն, զանդեղուրցիք կը պնդեն Լեռնահայաստանի անկախութեան վրայ :

«Տաթեւի մէջ, — կ'ըսէ Նժդէհ, — իմ կողմէ նշանակուած կառավարութիւնը դեռ նոր վերադարձած էր Գորիս, երբ Գնդեւազի ռազմաճակատի պետը հեռազրեց. — «Երեւանէն սահմանադրուիս հասած են մեր երկու յայտնի մտաւորականներէն՝ Գաւիթ Անանունը եւ Աղօն միջակէտ, կ'ուզեն տեսակցիլ Լեռնահայաստանի կառավարութեան հետ վերջակէտ» :

« — Կարգադրեցի ընդունիլ զանոնք :

«Վերջինները յայտնեցին, թէ Հայաստանի Հեր զիւզն է եկած Ա. Կարինեանը՝ Հայաստանի Խորհրդային իշխանութեան, իսկ Վ. Մելնիկովը՝ ուսս կարմիր բանակի կողմէ :

«Անոնք եկած էին բանակցելու իմ կառավարութեան հետ :

«Երեւանէն մեզի «խաղաղութեան համբոյր» էին բերած :

«Այդ օրերուն խորհրդային մամուլի օրդանները կը զրէին, թէ Կարինեանի պատուիրակութիւնը հրահանգ ունի՝ Լեռնահայաստանի կառավարութեան հաղորդելու Լենինի երկու ծանօթ գրութիւնները, որոնցմէ մէկը քաղաքական ներում կը շնորհէր խորհրդային իշխա-

նութեան հակառակորդներուն, իսկ միւսը Չանգեղուրը կը հրաւիրէր միանալ Խ. Հայաստանին:

«Մայիս 6-ին իմ կառավարութիւնը քննութեան առաւ Երեւանէն եկած առաջարկը եւ իր կողմէ բանակցելու համար նշանակեց իր պատգամաւորութիւնը՝ Մ. Գ. Տ. ի նախադասութեամբ՝

«Երկու պատգամաւորութիւնները իրար հանդիպեցան Ղալաջուղ դիւղը:

«Առաջին նիստը(*) կայացաւ Մայիս 12-ին, առաւօտեան ժամը 10-ին:

«Փոխադարձաբար լիազօրութիւնները ստուգելէ ետք, փոխադարձ համաձայնութեամբ որոշուեցաւ նիստերու նախադասութիւնը տանիլ փոխն ի փոխ, իսկ բանակցութիւնները կը վարէին հայերէն լեզուով:

Առաջին նիստի նախադաս կ'ընտրուի Լեոնահայաստանի կառավարութեան անդամ՝ Գեթէոն Տ. Մինասեանը, որ իր բացման խօսքին մէջ կ'ըսէ. — Պաշտօնական նիստը բացուած կը յայտարարեմ: «Հայաստանի սովետական կառավարութեան ընկեր գելեգատներ, կ'ողջունենք Հայաստանի սովետական կառավարութեան ներկայացուցիչներու գալուստը Լեոնահայաստան: Յոյս ունիմ, որ այս երկու գելեգացիաներու խորհրդակցութիւնը հնար կը գտնէ հաստատելու այնպիսի փոխյարաբերութիւն մը, որ հնարաւոր կ'ըլլայ ստեղծել վերջնական խաղաղութիւն: Լեոնահայաստանը եւ մասնաւորապէս Չանգեղուրը իր աշխարհագրական դիրքով կամուրջն է հանդիսացած բոլոր անցքերու, որոնք կու գան անցնելու դէպի Մերձաւոր Արեւելք: Չանգեղուրը իր հարեւան երկրամասերու նկատմամբ ունի նաեւ ռազմագիտական խոշոր նշանակութիւն:

«Ռուսական յեղափոխութեան ընթացքին քանի մը անգամ եւ մի քանի կողմէ փորձեր եղան տիրելու այդ Լեոնաշխարհին: Առաջին անգամ անգլիական խմբերիալիզմի ներկայացուցիչները Անդրկովկասի մէջ մի քանի անգամ ցանկացան եւ ղեմեցին ակտիւ քայլերու յանձնելու Չանգեղուրը եւ Լեոնային Ղարաբաղը Ատրպէյճանին, բայց Չանգեղուրի զինուած դիւղացիութիւնը ընդդիմացաւ վճռական կերպով:

«Անկից ետք Ատրպէյճանի նացիոնալիստները քչեցին իրենց բանակները դէպի Չանգեղուր ու Ղարաբաղ եւ ամէն անգամ ջարդուած նահանջեցին: 1919 թուին Ատրպէյճանի կողմէ եղաւ վերջին փորձը, երբ 12 հազարնոց բանակով արշաւեցին Չանգեղուր, բայց մեր զինուած աշխատաւորութիւնը, նոյն Գորիսի պատերուն տակ,

(*) Արձանագրութիւն՝ Լեոնահայաստանի եւ Խորհրդային Հայաստանի կառավարութեան լիազօր ներկայացուցիչներու բանակցութիւն, Ղալաջուղ 1921 թ. Մայիս:

Ղարդեց զանոնք: Երբ փառաւոր օր մը Ատրպէյճանը կարմրեցաւ եւ դարձաւ սովետական, այդ անուան տակ շահագործելով բուլղերիկեան լողունները, ռուսական կարմիր զօրամասեր ուղարկեցին դէպի Չանդեզուր, որոնց յաջողուեցաւ տիրել եւ ժամանակաւորապէս տէր դառնալ Չանդեզուրի մէկ մասին. բայց կռիւր կը շարունակուէր Ղափանի լեռներուն մէջ, ինչ որ հետզհետէ ծաւալեցաւ նորէն: Ժողովուրդը տէր դարձաւ իր երկրի մեծ մասին եւ ապա 1920 թ. Նոյեմբերեան ժողովրդական ընդհանուր ապստամբութեան հետեւանքով եկուոր զօրամասերը դուրս քշուեցան վերջնականապէս Չանդեզուրի սահմաններէն: Ընկեր պատգամաւորներ, մեծամասնական զօրամասերու հինգամսեայ ներկայութիւնը Չանդեզուրի մէջ ոչ միայն Փիղիքապէս բռնացաւ Չանդեզուրի հայ աշխատաւորութեան կամքի վրայ, այլև բառիս իսկական իմաստով տնտեսապէս եւ կուլտուրապէս քայքայեց ծայր աստիճան մեր դիւղացիութիւնը:

«Եկուոր մեծամասնականներու խոշոր խոտառումները մնացին լոկ խօսքեր»...:

Իրերու այս կացութեան մէջ վրայ կը հասնէր Մայիս 28ի Հայաստանի անկախութեան տարեդարձը, զոր հանդիսաւորապէս կը տօնէր Լեռնահայաստանի կառավարութիւնը Գորիսի մէջ:

Հակառակ տիրող մռայլ կացութեան՝ ժողովուրդը խանդավառ եւ բարձր տրամադրութիւններով կը մասնակցէր Հայաստանի անկախութեան տարեդարձին: «Մարդ ակամայ կը յիշէր, կը գրէ «ԱՅԳ», Աւարայրի դաշտի հերոսամարտն ու սպարապետ Վարդան Զօրավարը եւ վերջինս կը համեմատէր մեր նորագոյն պատմութեան պատիւը փրկող սպարապետ Նժդեհի հետ: Եթէ առաջինը կը մղէր կրօնական կռիւ, երկրորդը կը մղէր գերազանցօրէն քաղաքական կռիւ, յանուն հայ ժողովուրդի ազատութեան եւ անկախութեան, յանուն իսկական յեղափոխութեան(*) :

Այդ օրը Նժդեհ յարգանքի իր տուրքը կը բերէ դէնքի իր ընկերներուն, որոնք կառչած Սիւնիքի անմատչելի լեռներուն, իրենց մասնակցութիւնն էին բերած Լեռնաշխարհի հայութեան ինքնապաշտպանութեան գործին: Գնդապետի աստիճան կը ստանայ զըլխապետ՝ Ռուբէն Նարինեան, իսկ փոխ գնդապետի աստիճան՝ Գարեգին Ամիրջանեան(**), Թորոսեան, Գարեգին Ամիրխանեան, Մելիք Օհանջանեան եւ Կասեւան Գրիգորեան: Աստիճանի բարձրացում կ'ունենան նաեւ կրտսեր սպաներ, վաշտապետներ եւ խմբապետներ:


Ենօրեայ բանակցութիւններէ ետք, Կարինեանի պատգամաւորութիւնը կը վերադառնայ Երեւան՝ իր կառավարութեան տանելով Լեռնահայաստանի պահանջները:

(*) «ԱՅԳ» շաբաթաբերք», քիւ 25, 1921 Յունիս 16, Թաւրիզ:

(**) Տես «ՅԵՂԱՓՈՒՅԱԿԱՆ ԱԼՊՈՄ», Զ. հատոր, էջ 295:

Կարմիր պատուիրակութեան խոստացած «չուտափոյթ պատասխան»ի փոխարէն, Մայիսի վերջերը «մասնաւոր առաքելութեամբ և յատուկ լիազօրագրով» Սիւնիք կը վերադառնայ երկրաչափ Սմբատ Մելիք Ստեփանեանը, զոր տարի մը առաջ, Խոտանանի նահանջին, առեւանգած էր Կարմիր Բանակը:

Ս. Մելիք Ստեփանեան, որպէս բնիկ սիւնեցի, ծանօթանալով երկրի և ժողովուրդի դրութեան «Հ. Ս. Ս. Հ. ի ժողովրդական Կոմիսարներու Խորհուրդ»ին կը տեղեկագրէր՝



ՄԱՅԻՍ 28-Ի ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

«Այստեղ ևս կը տեսնեմ ժողովուրդ, կառավարութիւն և զօրահրամանատարութիւն՝ միարան:

«Ամէն ինչ նորմալ է այստեղ:

«Այստեղ չկան խաներ, բէգեր, կապիտալիստներ, բուրժուաներ, կուլակներ: Չկայ ամէնը, որ տկարացնի ժողովուրդի ռազմական թափն ու ուժը: Ժողովուրդի տրամադրութիւնը կատարելապէս յեղափոխական է...:

Լեռն. ինժիներ՝

Ս. ՄԵԼԻՔ ՍՏԵՓԱՆԵԱՆ»

Բանակցութիւնները կը շարունակուէին, ոմանք ալ կը սպասէին, թէ այս անգամ բոլշեւիկները կը յարզեն իրենց ստորագրութիւնը:

Սակայն շուտով պարզուեցաւ, որ զործը միայն Երեւանի կառավարութեան հետ չէ, այլ՝ նաեւ կարմիր Բանակի, որ կը ղեկավարուէր թաթար Ատրպէյճանի կամքով:

Գ. Նժդէհ կ'ըսէ. «Յարգելով մեր պահանջները՝ խորհրդային իշխանութիւնը ստորագրած կ'ըլլայ Կարմիր Բանակի պարտութիւնը», ահա՛ թէ ինչու Երեւանը կ'ուշացնէր իր պատասխանը:

«Գիտէիմք, որ Կարմիր Բանակի գորահրամանատարութիւնը մարտական ելք կը փնտռէ՝ իր զէնքի պատիւը փրկելու համար:

«Մեզի համար գաղտնիք չէր եւ այն, որ Աւիս Աթարբէգեան «ձախութեամբ հիւանդ» խմբակի ազդեցութիւնը Երեւանի մէջ դեռ զգալի է, որ ձախերու դասակարգային կատաղախտը բուժելու սահմանուած Լենինեան զոյգ նամակները չէին հասած իրենց նպատակին:

«Մեզի ծանօթ էր նոյնպէս Միասնիկեանի կառավարութեան և ոռւս 11-րդ Կարմիր Բանակի զօրա-հրամանատարութեան միջեւ զոյութիւն ունեցող ներքին անհամակամութիւնը:

«Պէտք է հաստատազրեւել, որ այդ պարագան յաճախ մեծապէս դժուարացնում էր թէ՛ մեր եւ թէ՛ Երեւանի զործը:

«Երեւանին յղած մեր պահանջներու պատասխանին կը սպասէինք, երբ ստացանք Յեղկոմի մէկ կոչը՝ ուղղուած Լեոնահայաստան ասպատանած Արարատեան գաղթականութեան:

«Այդ կոչէն պարզուեցաւ, որ Հայաստանի կոմիտարներու խորհուրդը մասնաւոր ղեկընտով «դաւաճան եւ թշնամի» է հռչակել Հայաստանէն Զանգեզուր փախածները, եւ կը սպառնար «Նժդէհի դրօշի տակ մնալու դէպքին» բանտարկել անոնց ընտանիքները և բռնազրաւել անոնց ստացուածքը:


«Այլեւս պարզ էր, որ Հայաստանի Յեղկոմը իր յաճախակի բանակցութիւններով կը ձգտէր ժամանակ շահիլ, եւ օր մը մեզ մզել անձնատուութեան, առանց զիջումներու:

«Այդ կը պահանջէին կարմիր ղէնքի պատիւը եւ թաթար Ատրպէյճանի շահը:

«Հազարաւոր տարագիրներու՝ Թաւրիզէն Երեւան դառնալէ ետք, այլեւս իշխանութեան համար չէր կրնար դադանի մնալ, որ Լեոնահայաստանը կը տառապի սովէ և ռազմամթերքի պակասէն:

«Ծանօթ մեր այդ ծանր դրութեան՝ Երեւանը չէյթանարար կը ձգձգէր մեզի տրուելիք պատասխանը:

«Ան կ'ուզէր — ժամանակ շահելով — ազատուիլ կարմիր բանակի համար անպատուարեր՝ մեր պահանջները յարզելու հարկադրութենէն:



ՄԶԿՆԻՇՈՒԹԻ ԳՂՈՂԱԳՂՈՒՄՆԵՐԻ ԿԱՐՏԱԿԱՆՈՒՄ

«Իսկ մենք դեռ չէինք դադրած զխտակցելէ, թէ մեծապէս մեղանշած կ'ըլլանք մեր ժողովուրդի ապագայի դէմ, եթէ չօգտուէինք Լեոնահայաստանի ձեռք բերած ռազմական հմայքէն:

«Լեոնահայութիւնը իր երկրի եւ ապագայի պաշտպանութեան խորին մտահոգութեամբ անձնական վտանգը անզխտացաւ եւ անդամ...»

«Պէտք էր, ամէն զնով պէտք էր յարգել տալ մեր պահանջները:

«Անոր համար ալ, վերջին անգամ ըլլալով, պէտք էր Լեոնահայաստանը շարժման մէջ դրուէր իր Դաւիթ-Բէզեան վաշտերով:

«Պէտք էր զգաստացնել խորհրդային իշխանութիւնը, պէտք էր անոր զգացնել տալ, որ դու կռիւներում թրծուած Լեոնահայութիւնը իրեն համար ստեղծուած ամենածանր դրութեան մէջ իսկ գիտէ դարնել ու յաղթել:

«Եւ մէկ ալ, ու վերջին անգամ, զարկաւ Սիւնիքը: Յունիս 15-16ին, Գնդեւադի մեր զօրամասերը խորտակեցին բոլշեւիկեան ուժերը:

«Այդ նոյն օրերուն, թշնամին, որ մեծ ուժեր էր կեդրոնացուցած Օրտուրաթ ու Բարթազ, — Արաքսի հայկական ափը գրաւելու եւ աչապիսով մեզ Պարսկաստանէն կտրելու ցանկութեամբ, — անցաւ յարձակման՝ Արեւիքի դէմ:

«Իմ ուժերը ջարդեցին թշնամիին եւ այդ ճակատներու վրայ:

«Կարմիրները ռազմադործողութիւններու սկսան եւ Զարուզի ողողութեամբ՝ բուն Զանդեզուրի դէմ:

«Յունիս 18-ին, թշնամիի Որոտանի ափին կեդրոնացած ուժերը ցրուելու նպատակով, թեթեւ զօրամասով մը մտայ Բարդիւշատ, ուր յանկարծակիի եկած թրքութիւնը աղուհացով զխմաւորեց մեզ եւ հաշտակութիւն յայտնեց:

«Այսպէս, իմ ուժերը յաղթեցին բոլոր ճակատներու վրայ, վերցնելով հազարի շափ գերիներ, մի քանի Լեոնային թնդանօթներ, ռազմամթերք եւ այլ կարգի աւար»:

Լեոնահայաստան ցնծութեան մէջ էր:

Գորիսը կը տօնէր հայ զէնքի նոր յաղթանակը:

Կառավարութիւնը կը շնորհաւորէ Սպարապետ Գարեգին Նըժդեհէր:

— Հայաստանի կառավարութիւնը լսելով Ձեր կազմակերպած, Ձեր հոգիով սնուած եւ Ձեր գաղափարներով ոգեւորուած քաջարի արեւմտեան բանակի վայոց Չորի տարած մեծ յաղթութեան մասին, պարտք կը համարեմ յայտնել Ձեզ շնորհակալութիւն, եւ այլն(*):

(*) Ի դիմաց վարչապետի՝ Ս. Մելիք Եռլչեան:

Այս նոր յաջողութեան առթիւ Խ. Հայաստանը ահապահգ կը հնչեցնէր :

Թերթերն ու թուրքիկները անգոր կատաղութեան փրփուր ու ցեխ կը ժայթքէին :

Ահա՛ թէ ինչպէս կ'արտայայտուի նոր յաղթանակի մասին «Սորհրդային Հայաստան»ը (*):



1) ԿԱՍԵԻԱՆ ԳՐԻԳՈՐԵԱՆ, 2) ՎԱՆՕ ԽԱՆՁԱՏԵԱՆ,
3) ԲԱԳՐԱՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

«Ստոր ու զաղրելի նենդութեամբ դաշնակցական մաուզերիսաները յարձակած են մեր սահմանապահ զիւզերու եւ պահակներու վերայ, եւ ներս են խուժած Դարալաղեալ :

«Հայաստանի կառավարութիւնը, ժողովրդական կամխարներու խորհուրդը ամէն բան ըրած էր իր կողմէ՝ խաղաղ կերպով դաղ-

(*) 1921, Յունուար 19, քիւ 106:

րեցնելու քաղաքացիական կռիւր: Անոր ուղարկած դեղեղացիային Չանդեղուրի գաշնակցականները առաջին անգամ կերակրէր են ընդհանուր խօսքերով»:

Գ. Նժդէհ, Կարինեանին ճամբու էր դրած յատուկ պահանջներով, որոնք սակայն լենինեան վարդապետութեան նենդ չարափոխումով Երեւանը դարձուցած էր «ընդհանուր խօսքեր»:

Իր նենդամ իր գաւաղբուծեան թակարդն ինկած ու արդարօրէն ծեծուած թշնամին հայհոյելով, դէպքերը խեղաթիւրելով եւ ըստ պառնալով հանդերձ՝ սկսած էր դգաստութեան նշաններ ցոյց տալ:

Իրենց պաշտօնական օրդանի(*) առաջին էջի վրայ գրուած է. «Կեցցէ՛ Խորհրդ. Հայաստանը եւ անոր անբաժան մաս աշխատաւոր Չանդեղուրը»:

Չոյք յայտարարութիւններով, մէկը թուարուած 12 Յունիս, միւսը՝ 13 Յունիս, — խորհրդային իշխանութիւնը Լեռնային Ղարաբաղն ու Չանդեղուրը Հայաստանին կցուած կը յայտարարէր:

Ահաւասիկ այդ պատմական երկու կարմիր փաստաթուղթերը:

1.— «Ատրպէյճանի սոցիալիստական Խորհրդ. Հանրապետութեան Յեղկոմի դեկլարացիայի եւ Հայաստանի ու Ատրպէյճանի սոցիալիստական խորհրդային հանրապետութիւններու կառավարութիւններու մէջ եղած համաձայնութեան հիման վրայ, յայտարարուած է, որ Լեռնային Ղարաբաղն այժմեան կազմած է Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետութեան անբաժան մասը:

Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմներու Խորհրդի Նախագահ
Ա. ՄԻԱՍՆԻԿԵԱՆ (Ա. ՄԱՐՏՈՒՆԻ)
Քարտուղար՝ Մ. ՂԱՐԱԲԷԿԵԱՆ

1921, ք. Յունիս 12, Երեւան

2.— «Հ. Ս. Խ. Հ. Ժողովրդական Կոմիտեաներու խորհուրդի յայտարարութիւնը Չանդեղուրի իշխանութեան:


«Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետութեան կառավարութիւնը սոյն գրութեամբ նորէն կը դիմէ Չեղ եւ կ'առաջարկէ Չանդեղուր ապաստանած բոլոր ըմբոստ տարրերուն վերջ տալ ապստամբութեանը խողող կերպով եւ հպատակուիլ երկրի միակ օրինական իշխանութեանը.— Խորհրդային Հայաստանի կառավարութեանը: Խորհրդային Հայաստանը հայ բանուորներու եւ դիւղացիներու համար, հայ աշխատաւորութեան իշխանութիւնն է: Եւ որպէս այդպիսին, ան դործադրած է եւ կը դործադրէ բոլոր ջանքերը

(*) «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ», քիւ 106:

մշակելու այն կենսաձևեր, որն աւելի հարազատ եւ մօտ է ժողովրդի պահանջներուն եւ տեղական պայմաններուն :

«Նկատի առնելով Զանգեզուրի զիւղացիութեան առանձին կարիքները, Ս. Հայաստանի կառավարութիւնը կարելոր կը համարէ յայտարարել, որ ան իր կողմէ հնարաւորութիւն կու տայ Զանգեզուրի աշխատաւորութեանը մշակել ուրոյն համայնական կենցաղ : Զանգեզուրի բոլոր բնակչութիւնը պէտք է ունենայ իր տեղական մարմինները, իր առանձին կենսաձևեր :

«Սակայն այդպէս ըլլալով հանդերձ՝ Զանգեզուրը պիտի կազմէ Ս. Հայաստանի անքակտելի մասնիկը : Ան կազուած պէտք է ըլլայ ամենասերտ կերպով բանուորա-զիւղացիական իր հայրենիքի հետ :



11-ՐԴ ԲԱՆԱԿԷՆ ՄԱՍ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

Այդ կապը պիտի ամրացնեն իրենք Զանգեզուրի զիւղացիները, որոնց հնարաւորութիւն կը տրուի ձեռնարկել ինքնապաշտպանութեան եւ Լեռնավայրի ամրացման համար բոլոր անհրաժեշտ միջոցները :

«Հ. Ս. Ս. Հ. կառավարութիւնը այժմ կը յայտարարէ, որ Զանգեզուրի մէջ ամենայայն չափով կիրարկուի բնդհանուր զինավարժութեան սկզբունքը, որուն համաձայն երկրի ամէն մէկ քաղաքացի պիտի դառնայ իր տեղավայրի դոյութիւնը պաշտպանող ռազմական ուժ :

«Բայց պաշտպանելով այդ սկզբունքը, Հայաստանի խորհրդային կառավարութիւնը չի թոյլատրեր իր երկրի սահմաններու մէջ օտար զօրամասերու կազմակերպութիւնը՝ Զանգեզուր գործող այժմ-

եան զօրամասերը պիտի ենթարկուին մեր ընդհանուր հրամանատարութեանը: Եւ ձուլուելով մեր զօրքի հետ պիտի կազմեն Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետութեան կարմիր զօրաբանակի անբաժան մասը:

«Միաժամանակ Չանդեղուրի մէջ կը դործադրուի ամենայն վճռականութեամբ ընդհանուր քաղաքական ներման այն հրամանագիրը, որ հրատարակուած է Հայաստան:

«Խորհրդային կառավարութեան դէմ կռուող բոլոր դործիչները ոչ միայն ազատ պիտի ըլլան որեւէ հալածանքէ, այլեւ կրնան անարգել մնալ Չանդեղուր: Ոչ ոք անոնցմէ չ'աքսորուիր երկրի սահմաններէն այն չափով, որչափ անոր աշխատանքը չ'ուղղուիր Հայաստանի խորհրդային իշխանութեան դէմ:

«Ելնելով այդ հիմնակէտէն, խորհրդային կառավարութիւնը համապատասխան ձեւով կը լուծէ նաեւ քաղաքական կուսակցութիւններու եւ մամուլի ազատութեան խնդիրը: Բոլոր քաղաքական այն հոսանքները, որոնք կը կտրեն վերջնականապէս իրենց կապը միջազգային իմպերիալիզմի հետ, բոլոր այն կազմակերպութիւնները, որոնք կը սլաշտպանեն խորհրդային դիժը, իրաւունք կ'ունենան միանգամայն ազատօրէն դործել Հայաստանի մէջ: Այդ հոսանքները կ'ունենան թէ՛ իրենց առանձին կազմակերպութիւնները եւ թէ՛ ազատ մամուլը: Ինչ կը վերաբերի Չանդեղուրի աւերուած վայրերու, եւ լրքուած գիւղերու բնակիչներուն, Հայաստանի Խ. կառավարութիւնը կը դանէ, որ Չանդեղուրէն հեռացած նախկին բնակչութեան վերադարձը պիտի չհատարուի հակառակ տեղացի աշխատաւորութեան ցանկութեան:

«Չանդեղուր ասրող հայ գիւղացիութիւնը կրնայ ապահով ըլլալ, որ անոնցմէ չի խլուիր ոչ մէկ հողավայր:

«Ի լրում շեշտուած կէտերու՝ Հայաստանի խորհրդային իշխանութիւնը կը յայտնէ, որ ներկայիս համայն կովկասի մէջ հաստատուած է ամուր եւ անպարտելի խորհրդային իշխանութիւն: Հայաստան միացած է եղբայրական կապերով հարեւան պետութիւններու՝ Խորհրդային Վրաստանի եւ Խորհրդային Ատրպէյճանի հետ: Լեռնային Ղարաբաղը վերջին համաձայնութեամբ Հայաստանի Խորհրդային կառավարութեան կողմէ յայտարարուած է Հայաստանի անբաժան մասը:

«Չկայ այլեւս, բացի Չանդեղուրէն որեւէ վայր, որ հակառակ ըլլայ բանուորա-գիւղացիական իշխանութեանը: Նոյնիսկ Շարուր-Նախիջևանը՝ այն շրջանը, որն իր աւտոնոմ (ինքնավար) դոյութեան պատճառաւ ստեղծել է աւելորդ եւ անտեղի տարակուսանքներ, կիրառել է լիովին խորհրդային սկզբունքը: Այդ խորհրդային վայր մըն է եւ որպէս այդպիսին ան հարազատ եղբայրն է Խորհրդային Հայաստանի եւ ոչ մէկ վտանգ խորհրդային Նախիջևանի կողմէ չի կրնար

սպառնալ հայ դիւզապիութեանը: Այդ դիտակցութիւնը ունի վերջինը, որն այժմ երկար շարաններով վերադարձած է իր վայրերը եւ տեղական իշխանութեան աջակցութեամբ կը վերահաստատուի իր հին բնակավայրերը:

«Այսպիսի պայմաններու մէջ՝ երբ ամէնուրեք հաստատուած է հղօրաւոր Խորհրդ. իշխանութիւնը, երբ Խորհրդային Հայաստանը խմբած է իր շուրջ հայաբնակ խոշոր վայրերը եւ դարձած է իքսական հայրենիք՝ համայն հայ ժողովուրդի համար, երբ իմպերիալիստներէն եւ հին բռնապետներէն ազատագրուած հայ աշխատաւորութիւնը ունի իր սոցիալիստական պետութիւնը, ուր տիրած է հայ լեզուն, Զանգեզուրի ապստամբութիւնը եւ անոր մեկուսացումը խանդարած են մեր հայրենիքի խաղաղ շինարարութեան դործը եւ անոր բոլոր հատուածներու վերջնական միացումը:

Ուստի Հ. Ս. Խ. Հանրապետութեան Ժողովրդական կոմիտարներու խորհուրդը այլեւս չի կրնար հաշտուիլ հին դրութեան հետ եւ կ'առաջարկէ Ձեզ անյապաղ տալ սլարդ պատասխան այս պաշտօնական դիմումին:

Հ. Ս. Խ. Հ. Ժողկոմխոր. նախագահ
ՄԻԱՍՆԻԿԵԱՆ (ԱԼ. ՄԱՐՏՈՒՆԻ)
Ժողովր. կոմիտ. Խորհուրդի անդամներ
Պ. ՄԱԿԻՆՅԵԱՆ, Ա. ԲԷԿՉԱՏԵԱՆ,
Ս. ՍՐԱՊԻՈՆԵԱՆ (ԼՈՒԿԱՇԻՆ), Ա. ԿԱՐԻՆԵԱՆ
Քարտուղար՝ ՄԻՔ. ՂԱՐԱԲԷԿԵԱՆ

13 Յունիս 1921 թ. Երեւան:

Ք. Նժդեհի ռազմական գործողութիւններէն չորս օր անցած՝ Երեւանի Յեղկոմը Ատրպատականի թեմական առաջնորդ Ներսէս Ս. Արք. Մելիք-Թանգեանին կ'ուղարկէ վերեւ արտագրուած երկու յայտարարութիւնները, որոնց հիման վրայ վերջինը կ'ուղարկէ հետեւեալ հեռագիրը.—

«Ժողովրդական կոմիտարներու նախագահ քաղաքացի Միասնիկեանին, պատճէն՝ Սպարապետ Նժդեհին,

«Ստանալով կոմիտարներու խորհուրդի 1921 Յունիս 13ին հրատարակած դեկլարացիան Զանգեզուրի մասին, վրացեանի համաձայնութեամբ սուրհանդակ ուղարկեցինք Նժդեհի մօտ, պատերազմական գործողութիւնները դադարեցնելու եւ հաշտութեան բանակցութիւններ սկսելու առաջարկութեամբ: Ասոր հետ միասին այդ հարցի առթիւ Քրիզոր վարդապետանին յանձնեցի իմ գրաւոր առաջարկութիւնը Ձեզ:

ՆԵՐՍԷՍ Ս. ԱՐՔ.

Թաւրիզ, 1 Յունիս, 1921»:

Նոյնիսկ հայ բուլղեւիկներն ալ դիտէին, որ Հայաստանի համար աւելի մեծ եւ մահացու վտանգ գոյութիւն չունի, քան Նախիջեւանը:

Լեոնահայութիւնը բաւարարուած էր այս կոչերով:

Սօսքը տանք Զօր. Գ. Նժդեհին.

— «Մենք երբեք չանդիտացանք ռազմական էտիկայի պահանջները:

«Իմ գինուորը մնաց մարդ՝ բոլոր կռիւներուն, եւ բոլոր դէպքերուն:

«Իմ ժողովրդական բանակը միշտ ալ յաղթեց նաեւ բարոյսպէս՝ իր թշնամիներուն դէպի հայ դէնքը յարգանք ու հիացում պարտադրելով:

«Թաթարները, — որոնք իմ գինուորի դարչապարի ծանրութիւնը զգացին իրենց մօտաւորապէս երկու հարիւր դիւղերու սեմին, — անկեղծօրէն կը խոստովանէին իրենց պարտութիւնն ու փախուստը(*):

«Թուրքերը խօսեցան «հայերու քաջութեան մասին»(**):

«Հարեւան պարսիկները մեր կռիւներն անուանեցին «մեծ քաջագործութիւններ»:

«Կարմիր բանակի համար մենք եղանք՝ «հին դայլեր, որոնք լու գիտեն գինուորական արուեստը»(***):

Կասեանի կառավարութիւնը մեր դէնքի յաջողութիւնները վերադրեց Անգլիոյ ամենագոր մատին:

«Բայց եւ այնպէս յաջողեցանք թշնամին փախցնել դէպի լեռնաշխարհ, ուր իրեն օգնութեան եկան անգլիական իմպերիալիստներ:

«Այսպիսին էին իմ վարած կռիւները Լեոնահայաստանի, ուր — հաստատադրենք եւ այդ — պետական կանոնաւոր բանակ չէր իմ ղեկավարածը՝ այլ մէկ շինական ժողովուրդ, որ դէնքէն դատ հարկադրուած էր գործածել նաեւ իր արօրն ու մանդաղը: Պէտք էր ժողովուրդի ծոցէն դուրս քաշել նոր պետեր, որովհետեւ ցարական գինուորականները շատոնց թողած, հեռացած էին: Պէտք էր մարդէլ, թրծել, հասցնել ժողովրդական նոր ղեկավարներ, որոնք կարողանային Լեոնահայ զանգուածներու մէջ ոտքի հանել, արթնցնել մեր ցեղի նիրհած ռազմախանդ ուժերն ու առաքինութիւնները»:

Թշնամիի անվերջօրէն կրկնուող յարձակումներու դէմ հրամայողարար պէտք էր ստեղծել անցեալի ցեղային արժէքներով,

(*) «ԱԶԱՏ ՍԻՆՏԻՔ»:

(**) «ՀԱՅՐԵՆԻՔ» 1924. քիւ 7:

(***) «ԿԱՐՄԻՐ ԱԻԱՆԳԱՐԳ» 1920. քիւ 52:

փառքերով ու սրբութիւններով թաթախուն մթնոլորտ մը, որուն մէջ սիւնեցին մահն անդիտացող խոյանքներ կատարէր :

Եւ ըրաւ այդ բոլորը :

Ո՞րն էր այն ուժեղ ազդակը, այն վեհ դադափարը, որուն այնքան անձնուիրութեամբ եւ այնպիսի ինքնամոռացութեամբ նուիրուած էր այդ հերոսը :



ԽՆԿԹ

1919-ի Նոյեմբերէն սկսեալ Հայաստանի Հանրապետութեան զինուորական հրամանատար գնդապետ Նժդեհը ամբողջ երկու տարի դորժեց այդ շրջաններու հայ զիւղացիութեան մէջ, առանց դադարի, առանց հանդիստի, ի մօտոյ ուսումնասիրելով իր ժողովուրդի մանաւանդ անոր երիտասարդ զինական ուժի թէ՛ հողեկան եւ թէ՛ Ֆիզիքական աշխարհը : Խորապէս զիտակցելով ժամանակի անհրաժեշտ պահանջներուն, այն համոզման յանդած էր, որ ինչպիսի արհաւիրքներ ալ տեղալու ըլլան, այսուհանդերձ այդ ժողովուրդը իր սեպացած լեռներու, անդնդախոր ձորերու եւ կոյս անտառներուն կռթնած կրնայ արեան դնով սլաշտսլանել իր ազատութիւնը, իր անկախութիւնը : Գնդապետ Նժդեհ, զինուորականի հմտութիւնը միացնելով իր կազմակերպչական տաղանդին, ռազմաճակատի հրամանատարի պատասխանատու սլաշտօնը ստանձնած օրէն իսկ ձեռնարկեց

եռուն գործունէութեան: Չղալով, որ տեղական ազգաբնակչութեան համար տնտեսապէս խիստ ծանր եւ քայքայիչ կ'ըլլայ երիտասարդ ուժերու տեւական զինուորադրութիւնը, ան զիւղերը բաժնեց զօրաչըջաններու՝ համաձայն զինուած ուժերու թիւին, նշանակելով վաշտապետներ, զորս ընտրեց նոյն զինուորներէն՝ աւելի համարձակ, խիզախ եւ քաջարի անձերը: Իր ազգու, գրաւիչ եւ հրաշունչ ճառերով անոնց ներշնչեց անձնագոհութեան զազաւարը՝ հայրենիքի փրկութեան համար: Այսպիսով կազմակերպեց ժողովրդական կուռ բանակ մը, որ պատրաստ էր իր հրամանատարի ձեռքի մէջ շարժումին անսալով կրակի մէջն անդամ նետուելու:

Չանգեղուր բաւական ժամանակ զիմադրեց բուլշևիկներու յարձակումներուն: Ոչ մէկ տեղէ օդնութեան յոյս չէր մնացած: Պարսկաստանի վրայով, արտասահմանի հետ կապուելու բոլոր փորձերը եւ այնտեղէն նիւթական կամ քաղաքական օդնութիւն ստանալու յոյսերը անցան անյաջող:

«Արտասահմանը» իր հոգերով զբաղած էր եւ հայերը լսելու ժամանակ չունէր: Ինչպէս վերջը յայտնի եղաւ, Լոնտոնի բանակցութիւնները քեմալական թուրքերու հետ ձախողած էին: Թուրքերը Մարտ 16-ին բարեկամական դաշինք էին կնքած Մոսկուայի մէջ Խորհրդային Ռուսաստանի հետ: Ի՞նչ կրնար ընել փոքրիկ Լեռնահայաստանը ռուսական ասարկու ուժին դէմ: Եւ հերոսական ազատամարտը անխուսափելիօրէն պիտի վերջանար կամ անպայման անձնատուութեամբ եւ կամ կռուով՝ մինչեւ վերջին փամփուշտը, ու պարտութեամբ:

1921 Յունիսի 22-ին կառավարութեան ստացած հեռագրով պարզուեցաւ, որ զօրքերը Դարալագեալի ամբողջ ճակատէն կը նահանջեն: Յունիսի 23-ին, նախարարներու նիստի որոշումով, Ս. Եղիազարեանը եւ նախարարներէն Մելիք-Նօլչեանը անմիջապէս ռազմաճակատ ուղարկուեցան ինքնապաշտպանութեան գործը կազմակերպելու, ամբացնելու եւ վերականգնելու մնացած ուժերը: Նոյն գիշերը լուսաբացին կառավարութեան թիւ 1435 հրահանգի համաձայն, անոնք կը մեկնին Ղարաքիլիսա, ուր նոր հասած էր Գնդ. Նժդեհը: Նոյն գիշերն իսկ սպարապետը անոնց լիազօրութիւն կու տայ գործելու զինուորական նախարարի եւ սպարապետի անունով եւ յանձնարարելով ուժերը ետ քաշել Սիսեանի սահմանները, ինք կ'անցնի Ղափան:

Յունիս 25-ի լուսաբացին Ս. Եղիազարեան եւ Մ. Նօլչեան կը մեկնին Բաղար Չայ, հոն էր միայն սպարապետի օգնական Կուռօն(*)

(*) Երբ Հ. Հ. Փրկուբեան կոմիտէն իր իշխանութիւնը փոխանցեց Լեռնահայաստանի կառավարութեան, Կուռօ Թարխանեան, որ Հայաստանի բանակի սպարապետն էր, նշանակուեցաւ Նժդեհի օգնական:

իր սպաներով : Կապուելով ճակատի հետ, կ'իմանան, որ ճակատին վրայ, մեր ուժերը աւելի քան չնչին են. Գնդեւազի մէջ Խնկօն ունէր հեծելազորի մաս մը, մօտ 50—60 ձիաւոր, Եսպօնի հետ քանի մը սպաներ՝ 10—15 դինուորներով, Զուլում Սիսիանցիներու վաշտը՝ մօտաւորապէս 200—250 հոգի, իսկ Ղուչչի-Բիլազ դիւղը Նաւասարդեանի հեծելազորը՝ 60—70 ձիաւորներով :

Ծանօթանալով ճակատի դրութեան կ'որոշեն իրազործել սպարապետ Նժդեհի հետ ունեցած խորհրդակցութեան որոշումը :

Յունիս 28-ին կը յաջողին հաւաքել բոլոր մնացած ուժերը մօտ 150—200 ձիաւոր եւ կ'անցնին դէպի Ախլաթիան դիւղը, որ դրաւած էր թշնամին, ապա Ուզի բարձրութիւններով կը հասնին մինչեւ Դարարաս :

Ընկեր Ս. Եղիազարեան 2 Օդոստոս թուակիր հետեւեալ դրութիւնը կ'ուղարկէ .—

«Շտարը տեղափոխուեցաւ Դարարաս : Այս դէի վրայ համեմատարար շատ չնչին ուժերը, Դարարասցիներու օգնութեամբ եւ Գորիսէն եկած 15 ձիաւորները՝ մեզ կըրցան սրաշտպանել երեք օր, մինչեւ որ Ղափանէն հասաւ հրամանատար Գերասիմը, 200—300 Ղափանցիներով :

«Յուլիս 2-ի առաւօտեան անցան նախայարձակումի եւ դրաւելով բարձունքները՝ շրջապատեցին Ախլաթիանը՝ երեք կողմէ : Կռիւր տեւեց մինչեւ ճաշ. երեւի կը վերջանար այդ դիւղի դրաւումով, երբ մենք տեղեկութիւն ստացանք աջ թեւէն, թէ անոնք նահանջած են Եսյջի՝ թշնամիի գերազանց ուժերու ճնշման տակ. իսկ Գորիսէն շտարի պետ Ռ. Նարինեանը 12-ին (2 Յուլիս) յայտնեց, որ Գորիսը պիտի թողուն այն պատճառով, թէ թշնամին Զարուղէն կը շարժուի եւ կու գայ դէպի Գորիս : Յուլիսի 2-ին, ժամը 2-ին Տաթեւէն տեղեկութիւն ստացանք սպարապետէն, որ Գորիսը եւ Բուն Զանգեզուրը թողուած է. եւ հրամայեց ետ քաշել մեր ճակատի զօրքերը, որոնք կրնան կտրուիլ թշնամիի կողմէ :

«Մենք հրամայեցինք զօրքերուն, ձեւականօրէն կռիւր շարունակել մինչեւ երեկոյ եւ մթութենէն օգտուելով ետ քաշուիլ, դէպի սպարապետի ցոյց տուած տեղը՝ Գեաղբիլ, Հաղա-Կայից դիժը եւ կապ հաստատել Ինջարելու դանուած ուժերու հետ : (Հրաման 2/VII — 1921 Տաթեւ) : Յուլիսի 2—3ի դիշերը դործը կատարուեցաւ : Ամբողջ զօրքերը եւ մեզ հետ նահանջող ժողովուրդը ամսոյն 3—4ին անփորձ հասաւ Ղափան : Սպարապետի օգնականը ամբողջ ժամանակ եղած է ինձ հետ :

«Սպարապետ Նժդեհը այս շրջանի մէջ աչալուրջ գործունէութիւն ցոյց տուաւ եւ եթէ ան ժամանակին մեզ իմաց չտար, իրարու ետեւէն ուղարկուած երեք սուրհանդակներով, որ մեր աջ թեւը ար-

դէն նահանջած է մինչեւ Եայջի, որ Գորիսը եւ Զանգեզուրը արդէն լքուած են մեր կողմէ, որ մեր զօրքերը արդէն հասել են այդ դժի վրայ Տաթեւ, եթէ այս բոլորը ան ժամանակին մեղ չյայտնէր, մեր ճակատի զօրամասերը, որ յաջողութիւն ունէին այդ շրջանը, կրնար կտրուիլ Բաղայից եւ շրջապատուէր թշնամու կողմէ: Ես ականատես ելլալով սպարապետի այս շրջանի գործողութիւններուն, կը գտնեմ որ ան կանգնած էր իր կոչման բարձրութեան վրայ»:

Երեք ամիսներու ընթացքին ոչ միայն յաղթականօրէն ետ կը մղուին Կարմիր Բանակի բոլոր յարձակումները, այլեւ Նժդէհի զօրամասերը կը վերագրուեն Վայոց-Չորը:

Իր «Ազատ Սիւնիք» գրութեան մէջ, «ՈՂԲԵՐԳՑԻՆ ՄԻՆԱԿ» խորագրին տակ, վերջին կռիւններու մասին արտայայտուելով եւ բացատրելով դէնքերը վար դնելու պատճառները, Նժդէհ ի միջի այլոց կը գրէ հետեւեալը. —

«Երբեք իրեն այնքան մինակ չէր դդացած Լեոնահայաստանը, ինչպէս արեւմտեան ճակատի ծանօթ դէպքէն յետոյ:

«Պարտուած էին Դենիկինը, Կոլչակը, Իւզենիկը: Խորհրդայնացած էին Կրիմը, Ուրալը, Ազրբէյջանը, Վրաստանը, Հայաստանը:

«Բոլշեւիկները պարտութեան մատնած էր իր բոլոր ակտիւ թըշնամիներուն եւ բոլորը հանած մեր Լեոնաշխարհին դէմ: Թշնամիի հետ, անոր բանակներուն մէջ էին ռուսը, լատիշը, հրեան, լէզզին, վրացին, թուրքը, թաթարը՝ մի ամբողջ Բարեւոն: Անոր օգնութեան եկած էր նաեւ ակամայ կարմրած հայը՝ անշուշտ, ոչ կոուելու եւ յաղթելու, այլ մեղ գրկելու անխնայ հարուածելու հնարաւորութենէն:

«Մենք եղբայրասպան կռիւններ չէինք վարած. լեոնաշխարհը քաղաքացիական պատերազմ չէր տեսած: Մենք կոուած էինք թաթարի, թուրքի եւ ասոնց օգնութեան փութացած կարմիր ռուսի դէմ: Եւ եղած էինք մեր հարուածներուն մէջ ազատ ասոնց նկատմամբ:

«Այժմ հայն էր կազմած թշնամի ուժերու առաջամարտիկը, որուն պարտութեան մատնելու համար պիտի չկարողանայինք դործի դնել մեր ուժանակային պայթուցիկ տակառները, մեր լեոներու ժայռերը, մեր սպիտակարութեան տարերային ձեւերը... Մեր վճռականութիւնը:

«Յանուն հայ ժողովրդի դոյութեան պաշտպանութեան դէնք բարձրացնողները՝ պիտի չկարողանային մեր վարած դոյամարտին տալ եղբայրասպան բնոյթ:

«Մի՛ կրակէ՛ք, մե՛նք ալ հայ ենք», — ահա՛ Սիւնեցիի բազուկը անդամալուծող ճիշը:

«Մե՛նք ալ հայ ենք» կը կանչէին կարմիր ճակատներէն Սիւնիքի դէմ զօռով քշուած Երեւանի հայերը:

«Թ՛չնամին գիտակցօրէն կռիւներուն տուած էր քաղաքացիա-
կան, եղբայրասպան բնոյթ, համոզուած, որ նման կռուի համար իր
նետած ձեռնոցը պիտի չկարողանար վերցնել:

«Մեկի ալ հայ եկի»...

«Բողբուկեան ռազմաճակատներէն բարձրացող այս տխուր
կանչէն առաջ մեզ հասած էին եւ ուրիշ բարոյալքիչ աղաղակներ:



ԳԵՐԱՍԻՄ ԲԱԼԱՅԵԱՆ

«Ա՛լ հերիք է», — կանչած եւ կը կանչէին Երեւանէն, Թաւրիզէն,
Բուքրէզէն, Փարիզէն:

«Կը չափուին բանակները, կառավարութիւնները, բայց կը
յադթեն կամ կը պարտուին՝ ազգերը, ցեղերը:

«Հայութիւնը իրեն պարտուած կը զգար, աւելի ճիշդը՝ անկա-
րող շարունակելու իր անկախութեան պայքարը, — ահա՛ թէ ինչու
առանց կռուի տեղի պիտի տար անոր վերջին բանակը՝ վերաւոր,
բայց անյադթ Լեոնաշխարհը»:

Լեոնահայաստանի արեւելքէն եւ արեւմուտքէն յառաջացող
խորհրդային բանակներու ճնշման տակ, կառավարութիւնը տեղի կու-
տայ, որովհետեւ պաշտպանուիլը այլեւս անհնար եւ անօգուտ էր

դարձած : Ուստի Լեռնահայաստանի կառավարութիւնը կ'որոշէ թողուլ երկիրը եւ անցնիլ Պարսկաստան ու Յուլիս 10-ին 1921 թ. Նըժդէհ կ'անցնի Արաքս դետը կամովին անսալով վերէն եկած հրահանգին :



1) ՎԱՂԱՐՇԱԿ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, 2) ԱՍՕ ՄԵԼԻՔ ԱԼԼԱՎԵՐՏԵԱՆ, 3) ԿՈՒՌՕ ԹԱՐԵԱՆԵԱՆ, 4) ԽԱԶԻԿ ՄԵԼԻՔՈՆԵԱՆ, 5) ՌՈՒԲԷՆ ՆԱՐԻՆԵԱՆ :

Լեռնահայաստանի մարտնչումներու, հերոսական խոյանքներու, ազատագրական պայքարի մէջ Նժդէհ զործակից ունէր անձնուէր հերոս զործիչներու եւ զինուորականներու հոյլ մը, ինչպէս՝

Աշոտ Մելիք-Մուսեան, Սամսոն բէզ, խմբապետ Քաչալ Ղազար, Եսայոն Պարոնեան, Գերասիմ Բալայեան, Պողոս Տէր Դաւթեան, Ալեքսանեան, Ռուբէն Նարինեան, Մելիք Օհանջանեան, Ամիրջանեան, Գրիգորեան, ինչպէս նաեւ այլ բազմաթիւ անուանի եւ խոնարհ մարտիկներ :

Այստեղ տեղին է տալ անուանացանկը բոլոր անոնց, որոնք մասնակցած են այդ հերոսամարտին : Այս ցանկը պատրաստած է



ԲԺ. Մ. ՄԻՆԱՍԵԱՆ

Վանբէկ, որ ընդունելով թէ հրնան մոռցուած անուններ ըլլալ, կը գրէ .— «... Գործիչների անուանացանկը գրի եմ առել 1928 թուին, Թաւրիզում, վերաւոր ժամանակս, երբ դեռ բոլորի անունները թարմ էին յիշողութեանս մէջ» :

Ստորեւ՝ Վանբէկի պատրաստած ցանկը .—

— Գարեգին Նժդէհ — Լեզենդար սպարապետը — Զանդեղուրի վերջին շրջանի :

— Սպայ Արսէն Շահմազեանը — Զանդեղուրի մեծ կռուի հրամանատարը :

— Կուռօ (Կուռօ Թարխանեան) գնդապետ հերոս :

— Զօր. Ղազարեան :

— Գնդապետ Գօնդարով — Գեներալ Ղազարեանի սպայակոյտի պետը :

- Թովիշի Սիմոն — Կ-րդ Բատարէի հրամանատարն աննման :
 — Պօղոս Գաւթեան — սպայ Սիսեանի, հերոս ու աննկուն հրամանատար. սպանուեց բոլշեւիկ Կուրոչկինի դէմ տարած յաղթանակում : Ղափանի Խոտանան դիւղից :
 — Տ. Յովհաննէս Տէր Գրիգորեան — Տաթեւի վանքի վանահայրը՝ սսկեղօծ խաչով դրօշակ նուիրողը — Հալի Չորի հարիւրեակին :



ԱՐՏԵՄ ԽԱՆՁԱԴԵԱՆ

- Արշակ Շիրինեան — Համալսարանական, խորհրդարանի անդամ, անվախ ղեկավարն Չանդեղուրի. չարաչար կացնահարեցին բոլշեւիկները Գորիսում. Շինուհայր դիւղից էր :
 — Վահան Խորէնի — Սիսեանի բռնակոթից. խորհրդարանի անդամ, բարձրագոյն կրթութեամբ. կացնահարեցին բոլշեւիկները Գորիսում :
 — Սերգէյ Մելիք Եօլչեան — Սիսեանից համալսարանական, Չանդեղուրի նահանգապետը, մեռած թեհրան :
 — Բժ. Միքայէլ Պարոնեան — Գորիսի Ազգ. Խորհուրդի նախագահ :

- Օսիպով Նիկոլայ — Գորիսի Ազգ. Խորհուրդի անդամ, Գորիսցի :
- Յակոբ Տէրունի — Գորիսի Ազգ. Խորհուրդի Սիսեանի Ուչից. մեռած՝ Թեհրան :
- Բժ. Մ. Մինասեան — Գորիսի Ազգ. Խորհուրդի անդամ, Գորիսցի :
- Գեթէոն Տէր Մինասեան — Գորիսի Ազգ. Խորհուրդի անդամ, Ղափանից :
- Արաէմ Խանդատեան — Գորիսի Ազգ. Խորհուրդի անդամ եւ խմբապետ, Գորիսցի :
- Խուրէն Նարինեան — Գնդապետ Նժդեհի շտաբի պետը, Ղարաբաղցի, վերապրող՝ Թեհրան :
- Գարեգին Ամիրջանեան — Գնդապետ հերոս, Ղազախից, մեռած՝ Նոր-Ջուղայ :
- Չաքար Եօլեան — Խորհրդարանի անդամ, ղեկավար դործիչ, Գորիսցի, վերապրող՝ Թեհրան :
- Համբարձում Շնաթաղեցի — Վաշտապետ, քաջ :
- Սարգիս Տէր Գրիգորեան — Տանձատափի խմբապետ, վերապրող՝ Իրան :
- Էրթող Յովհաննէս — Շնաթաղցի, հսկայ մարմնով, դարձանդ ազդող ձայնով, վայրենի տեսքով հերոս : Շնիշարի Չորի թուրքերը սարսափում էին սրանից :
- Չախար Տէր Գաւթեան — Կոմիսար (Որոտան) ձորերի, զնդակահարուած բոլշեւիկներից :
- Բաղրատ Բաղիրեան — սպայ, Գորիսցի, զուած՝ բոլշեւիկներից :
- Արմենակ Պարոնեան — Սպայ, Գորիսցի, փախստական՝ բոլշեւիկներից :
- Բանակոթի զումարտակապետ կապիտանը, քաջ, անյայտացած բոլշեւիկներից :
- Վալադիա Տէր Ասատրեան — Խնատաղցի, եռանդուն դործիչ, անյայտացած բոլշեւիկներից :
- Աղալօ Բարայեան — Գորիսի Կոմիսար. իւր 12 տարեկան վաշտապետ տղան (իւր հասակակիցներին՝ մեծ կոուրն կապի զեր կատարեցին) :
- Տէր Մկրտիչեան եղբայրներ — Գորիսցի, զնդակահարուած բոլշեւիկներից :
- Գոնդարով սպայ, Թիֆլիսից. Գորիսի Չիաւոր հարիւրեակապետը :
- Գարեգին Մելիք Քարամեան :
- Չախար Տէր Ղազարեան — Սիսեանից, հրամանատար Պո-

դասի աջ բազուկը . Սիսեանի քաջ կոմիտարը . զնդակահարուած՝ բոլ-
չեւիկներից :

— Տէր Գրիգոր — Կոսին Չորի քահանան . բոլչեւիկների խմբ-



Ե Ա Պ Օ

բախան զնդակահարման Ժամանակ , Տակերում , 11 վերջով հրաչքով
ազատուած :

— Նիկողայ Կրմենանց — Սիսեանի բռնակոթից . գործիչ :

— Եսայոն Պարոնեան — Գորիսցի , յայտնի խմբապետ . մե-
ռած՝ Թաւրիզ :

— Սաքօ Եսայօն (Համբարձում Սարգսեան) Գորիսցի, գործիչ. զնդակահարուած բոլշեւիկներէից :


— Սսազ — սպայ Քարահունջից . Արաքսում նահանջին խեղդուեց . քաջ էր :

— Հսօ — Տանձատափից , հին հայդուկ , սպանուեց Հարամի-Դուղում :

— Դաւիթ — Դարարացի , հին գործիչ , մարտիկ . սպանուեց բոլշեւիկներէից :

-- Սարգիս -- Անդեղակոթցի . վաչտապետ :

— Սամսոն — Բարդաշում , խմբապետ , Ղարարաղցի :



ԳԵՐԱՍԻՄ ԱԹԱՋԱՆԵԱՆ

— Ալում — Աւատանցի . վաչտապետ :

— Սիմոն Վախմեսար -- Երիցաթումբից . ձիաւոր հարիւրեակի օգնական :

— Մեսրոպ Ֆարսունց , Դաւիթ Խուրչխան , Տատուր Խրոսունց՝ Գորիսից գործիչներ :

— Գնդ . Մելիք Յուսէյինեան — Գորիսցի . Բարդիւշատի հըրամանատարը :

— Խաչատուր Մալինցեան -- Գորիսցի . Տեղի հերոս ճակատապետը . սպայ :

— Կապիտան Ամիրխանեան — Ալեքսանդրապոլ , Խնձորեսկի ճակատապետը :

— Մելիք Թանգեան Սիմոն բէդ — Բոնակոթից . մատակարար , մեռած Թաւրիզ :

- Ներսէս — Խնածախեցի . հերոս , սպիտակ ձիաւորը :
- Աղաջան Օհանեան — խմբապետ , Ղարաբաղցի . սպանուեց Նազրութի շրջանում բուլշեւիկներէն :
- Յովհաննէս Թերզեան — տաճկահայ . Կոստին Չորի վաշտի օգնական . մեռած Համազան :
- Գարեգին Մելիք Օհանեան — Գորիսցի . կոմիսար՝ Տեղ եւ Կոստին Չոր շրջանի : Մեռած՝ Շիրազ :
- Պարուչիկ Արտեմ Պետրոսեան — Ղարաբաղցի . Չէյալի հերոսը :
- Գերասիմ Աթաջանեան — Ղափանից . հակաբուլշեւիկեան հերոսներէն :
- Վարդան — Տաթևից . խմբապետ :
- Պալեան — Շինուհայրի վաշտապետը , քահանայի տղան :
- Պալեան քահանայ — Շինուհայրի տւաղ քահանան , կարգացող , հեռատես մէկը՝ խոհուն յատկութիւններով . թուրքին լաւ ճանչցող :
- Բաղրատ Տէր Յովհաննէսեան — Բռնակոթից . սպանուեց Թաւրիզ :
- Ստեփան Մելիք Փարսաղանեան — Ղափան . դործիչ . Նաւրուի մեր մատակարարապետը :
- Գէորդ Ղաղարեան — Ղարաբաղցի . շրջուն դործիչ . սպանուեց բուլշեւիկներէն Սիսեանում :
- Պարուչիկ Միքայէլ Մելիք Ալլահալերզեան — Ղարաբաղցի . Գորիսի կոմենդանտ :
- Աչոտ Մելիք Մուսեան — Գենուաղ — Գողթ . դործիչ . անձնասպան :
- Ղաղար Քոչարեան — Գենուաղ — Գողթ . յայտնի խմբապետ — Բաշղեառնեցի :
- Մովսէս Գիւլնազարեան — Գենուաղ — Գողթ . քաջ սպայ :
- Բախդի բէկ — Խնատաղցի . բէկ :
- Գարեգին Մելիք Քարամեան — Գորիսցի . դործիչ :
- Դօրունց Նիկոլայ — դործիչ :
- Գրիգոր Գրիգորեան (Չոփուռ) դործիչ . Գորիսցի :
- Երեմ Խուրշիտեան — Գորիսցի . վաշտապետ :
- Բաղրատ Բաղիրեան — Գորիսցի . սպայ :
- Առաքել Առաքելեան — Շինուհայրից . ուսուցիչ , դործիչ :
- Ասողիկ Սաֆրազբէկեան — Ղարաքիլիսցի . որբանոցի կառավարիչ :
- Միշա Սաֆրազբէկեան — Ղարաքիլիսցի . սպայ :
- Միշա Օրբելեան — Տաթևից . սպայ :
- Աւաղ Բիւնաթեան — Բռնակոթից . կոմիսար :
- Յովհաննէս վարժապետ — Գորիսցի . դործիչ :

- Կապիտան Յուլիաննէս — Ղափանից :
- Կապիտան Թորոսեան — Ղափանից , համեստ հերոս :
- Վաղարշակ Նարինեան — Ղարաբաղցի - Էսեռ . ջուլհակա-նոցի կառավարիչ :
- Մելիքսէթ (քէօսայ) Եսայեան — Ղարաբաղցի զիւանա-պետ եւ յայտնի սիրուած Ֆելլետոնիստ :
- Սպայ Մաղաթ — Ղարաբաղցի . Քաջալ Դաղի հերոսներից :
- Կապիտան Վահան Գալստեան — Աղբաշից :
- Սմբատ բէկ — Ղափանի շրջանի զեկավար զործիչ :
- Սամսոն բէկ եւ Մելիք Փարսաղանեան — Ղափանի շրջանի զեկավար զործիչ :



Մ Ո Վ Ս Է Ս Գ Ի Ի Լ Ն Ա Ջ Ա Ր Ե Ա Ն

- Կապիտան Արզանեան — Թնդանօթաձիգ . քաջ ու տոկուն . լաւ նշանառու :
- Նիկիտա Օրբերեան — Սպայ , Թնդանօթաձիգ . Նարամի ա-ղբրեջանական Թնդանօթներին լուսնոզը :
- Պուլպսիկ — Թնդանօթաձիգ սպայ . Դրօ-ի բոլշեւիկեան ճա-կատամարտում , Բարիսոֆկայի եւ Ազեղակոթի վրայ բոլշեւիկեան զերազանց ուժ . Թնդանօթներին լուսնոզը :
- Փոխ զնդապետ Կարսեան Գրիգորեան — մեռած Թեհրան :

-- Սպայ Բաղրատ Բաղդասարեան — Խնձորեսկից . մեռած թեհրան :

— Վաղդէն Միրզարէկեան — Ղարաբաղցի . ձորերի ձիաւոր հարիւրապետը եւ զինուորական կազմակերպիչ :

— Գալուստ Մաշուրեան — Երիշէնից . հին զինուոր . մեռած Արաքսում :

— Թուրէն Մելիք Յանեան — Գորիսից . երիտասարդների նախագահ :

-- Անուրը մոռացել եմ — Կոսին-Չորի շքանշանակիր քաջ վաշտապետը :



Նժդեհի Դաւիթ — Բեկեան կապիտան
Նիկոլա Բարայեան . Գորիսեցի :

— Վալոդիա — Խնածախից . եռանդուն կուսակցական գործիչ :

— Լազր — Քարահունջի վաշտապետը :

— Բողունց Նարին (Կզիբ) — Տեղեցի . քաջ կռուող :

— Աշալօ — Արամուսցի . խմբապետ , որ պարելով էր կուում :

— Մալունց Ղազար — Գորիսից . հսկայ հասակով , անզլիական բրանէ օթոմորիլների առաջը կտրողը . «Հեռացէ՛ք Գորիսից . թուրքին մենք չենք ենթարկուի» :

— Գ. Մալինյեան — Գորխից . զնդակահարուած խմբովին ճակերում :

— Պ. Փարսեան — Գորխից . բուլշեւիկներից խմբովին զընդակահարուած :

— Փարսաղան Մելիք Փարսաղանեան — Ղափանից , զնդակահարուած խմբովին :

— Մեսրոպ Բէկ Սարատիկեան — Գորխի զաւառապետը :

— Սիսակ Բունաթեան — Բունակոթից . վաշտապետ . սպանուեց հակաբուլշեւիկեան կռիւներուն :

— Սպայ Օհանեան — Գնդակահարուեց բուլշեւիկներից Քարահունջի ձորում Յուլիս 10-ին :

— Առուստամ Բունաթեան — Բունակոթից . օղնական վաշտի , սպանուեց հակաբուլշեւիկեան կռիւներում Ղարաքիլիսի մօտ . քաջ :

— Եայջիի վաշտապետը քաջ (անունը մոռացել եմ) — սպանուեց Նարամի Դուղի կռիւներում :

— Տիգրան Սաղանդարեան — Աղգային խորհուրդի անդամ :

ՏԱԹԵԻԻ ՎԱՆՔԸ՝ ԱԻԵՐԱԿԻ ՎԵՐԱԾՈՒԱԾ



- Կոստիա Աթալեան — Ղարաբաղցի զինուորական գործիչ:
- Գնդապետ Տէր Սարգիսեան — զնդակահարուէց բոլշեւիկներէն՝ Քարահունջի ձորում:
- Ներսէս Բարաեան — Գորիսցի կուսակցական գործիչ:
- Վանօ Խանգաղեան — Գորիսից մեռած թեհրան:
- Նիկոլա Բարալեան — Գորիսցի:

Այս բոլոր ղեկավարներու, գործիչներու եւ մարտիկներու մէջ, Նժդեհի շեծութիւնը անոր մէջ կը կայանայ, որ ան կրցաւ հպարտութիւն խրոխտ լեռնցիներու կամքն ու կորովը կեղբոնացնել, բոլորը համախմբել մէկ դրօշի տակ ու հանդիսանալ ոգին ու մղիչ ուժը հերոսական խոյանքներու եւ գործերու: Նժդեհ պիտի չյաջողէր, եթէ ինք չունենար անհուն նուիրումութիւն, անխառն հայրենասիրութիւն եւ քաջամարտիկ պայքարողի սիրտ:



Նժդեհի մեծագոյն արժանիքն էլ առաքինութիւնը այն է, որ ան երբեք չլքեց ժողովուրդը, անոր հետ բաժնեց բոլոր դառնութիւնները եւ նոյնիսկ մերժեց Հայաստանի կառավարութեան Երեւան վերադառնալու հրահանգը ու մնաց կռուի պատնէշին վրայ:

1920 Օգոստոս 7-ին Գորիսի ձորի կռուի ժամանակ, երբ թըշնամիին զնդակը կը վերաւորէ զօրավարը եւ երբ շուրջի ընկերները տեսնելով կը մօտենային եւ կ'ուզէին տեսնել իր վիճակը, Նժդեհ բարձր ձայնով կ'ըսէ. «Թշնամիի զնդակը համբուրեց ոտքս», եւ հակառակ վերաւոր վիճակին, կը մնայ կռուի առաջաւոր զիրքերուն վրայ:

Նժդեհն էր, որ պարտութեան մատնեց Մեծամասնական 11-րդ զօրարանակի հեծելազօրաց պետ Կուրոչկինը, որ Ռուսիոյ մէջ հռչակ հանած էր, իրրեւ անպարտելի ու Դենիկինի, Գոլշակի եւ Վրանդէլի բանակները ջարդող:

Ու հայ աշուղը երգեց իրեն ձօնուած համարը :

«Սիւնիքը մոռցած նախնեաց քաջերին,

Ուժդ է երգում, տաղանդ երկնային .

Եւ վրանգէլը եւ քաջ Դենեկին

Նախանձում են քու անլուր փառքին» :



ՌՈՒԲԷՆ ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆ

Ինքն եղաւ, որ կուուեցաւ իշխան Ղազարներու եւ Խալիլ Փաշաներու դէմ, յաղթեց ու կոտորեց անոնց բանակները :

Իսկ հայ բուլշեւիկ Գործկոմի նախագահ Սարգիսեանը Երեւանի մէջ կը յայտարարէր, թէ «Ժողովուրդը ցարդ կապուած է Նժդէհի

հետ, միշտ կը յիշէ դայն եւ կը կարծէ, որ ան հեռացած չէ Չանդեղուրէն եւ օր մը դուրս պիտի դայ բուլղեւիկներու դէմ»... : («Հայրենիք», 4 Նոյեմբեր 1923) :

Արտասահման անցնելէ ետք, 35 տարեկան հերոսին համար կը սկսէր կեանքի նոր շրջան մը :

*
* *

Չանդեղուրի երկամեայ կռիւները, որոնք մղուեցան Նժդէհի ղեկավարութեամբ, կարելի է բաժնել երկուքի .

Ա. — Պայքար՝ տեղացի թուրք-թաթար զիւղերու եւ Ատրպէյճանեան անկանոն ու կանոնաւոր ուժերու դէմ :

Բ. — Պայքար՝ կարմիր բանակի դէմ, որ Ատրպէյճանի խորհրդայնացումէն ետք կը ջանար Չանդեղուրի շրջանը գրաւելով կցել Ատրպէյճանին :

Ինչպէս զրեթէ ամբողջ Արարատեան Հայաստանի մէջ, Չանդեղուրի մէջ եւս թուրք-թաթար ազդարնակչութիւնը կը ներկայացնէր ժողովուրդին մէկ մեծ տոկոսը եւ այդ իսկ հանգամանքէն օգտուելով, դժուարութեանց, բռնադատումներու կ'ենթարկէր տեղւոյն հայութիւնը, զէն ի ձեռին օժանդակելով ատրպէյճանեան զինեալ ուժերուն, այդ հողամասը կցելու համար Ատրպէյճանին :

«1919—1921-ին, թշնամի 200-ի հասնող զիւղեր փճացած կամ տեղահանուած են եւ այդ շրջանները վերապահուած են իրենց պատմական եւ բուն տէրերուն՝ հայերուն» :

Կարմիր Բանակը իր սկզբնական կռիւներու ընթացքին պարզապէս կամակատարը կը հանդիսանար Ատրպէյճանի մուսուլմանական ու բանիսլամութեան ջատագով ղեկավարներուն, ջանալով հայկական այդ հողամասը զէնքի զօրութեամբ կցել Ատրպէյճանի, այս վերջնայս եւ թուրքիոյ միջեւ կամուրջ մը ստեղծելով :

Նժդէհի կռիւները, ի մասնաւորի 1921 թուականի պայքարները կը ձգտէին Չանդեղուրը ընդունիլ տալ օրպէս հայկական հողամաս, ենթակայ Երեւանի իշխանութեան :

Լեռնահայաստանի կառավարութիւնը պիտի իյնար անխուսափելիօրէն, այդ իրողութեան կը զիտակցէին Նժդէհ եւ այլ ղեկավարներ :

Ռուբէն Տէր Մինասեան 4 Սեպտեմբեր 1921-ին կը զրէր, Չանդեղուրի եւ Դարալաղեաղի անկման պատճառներու մասին . —

«Ա. — Չանդեղուր եւ Դարալաղեաղ անխուսափելիօրէն պիտի ընկնէին, որովհետեւ ամբողջ ժողովուրդը, Երեւանի ղաղթականներու եւ կառավարութեան դալէն ետք հասկցաւ, որ Երեւանը ընկած է ռուսական սուխններով, որ Թիֆլիս սովետական է, Բազու սովետա-

կան է եւ ուրեմն զանգեղուրցին մէն մենակ այլեւս չէր համարձակուելու մտածել, որ կարող է յաղթել Ռուսաստանին :

«Բ.— Զանգեղուրցին հասկացաւ, որ ինքը մենակ է եւ աննեցուկ՝ բոլոր դաշնակիցներու կողմէ եւ դեռ թուրքիոյ կողմէ եւս վրտանդ կը սպառնայ :

«Գ.— Զանգեղուրցին մինչեւ իր անկումը կուտած է, որովհետեւ վախը կար թուրքիոյ, Ատրպէյճանի հետ միացման եւ ցանկու-



ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅ

թիւն կար միանալու Հայաստանին : Այդ հիմնական պատճառները կը վերանային Սովետական Հայաստանի յայտարարութիւններու շնորհիւ, որ Զանգեղուրը կը մտնէ Հայաստանի սահմաններու մէջ :

«Այս հիմնական պատճառներէն դուրս եղան այնպիսի դէպքեր, որ արագացուցին անկումը, դուրսէ մի քանի ամսով» :

8 Յունիս 1921-ին, Ղափանի հանքերէն Սովետական Հայաստանի Յեղկոմին ուղղուած զրութեամբ մը, Նժդէհ ի միջի այլոց կը շեշտէր.—

«Որպէսզի հայ աշխատաւորութիւնը եւ անոր ինտելիգենցիան այսպէս թէ այնպէս հաշտուին Հայաստանում ստեղծուած խորհրդ-

դային իրաւակարգի հետ եւ նոր ընդվզումով չփորձեն ազատագրուելու ձեր լծից, ընդվզումներ, որոնք պիտի թուլացնեն սոցիալապէս արնաքամ եղած հայ աշխատաւորութիւնը՝ եւ Ձեզ՝ ես կը ցանկանայի տեսնել Խորհրդային Հայաստանում այնպիսի բարեփոխութիւններ՝ քաղաքական եւ տնտեսական հողի վրայ, որոնք համապատասխանէին մեր ժողովրդի լաւ հասկացած շահերին»:

Առաջարկուած բարեփոխումներու կարգին Նժդէհ կը յիշէր հետեւեալ պայմանները.—

«Ա.—»

«Բ.— Նախկին թրքահայերը ստանում են հողաբաժիններ:

«Գ.— Ազգայնական բախումների վերացման համար կատարւում է հայերի եւ թուրքերի տեղափոխութիւն Հայաստան ու Ատրրպէյճան»:

«Դ.—»

«Ե.—»

«Զ.— Հայ լեզուի պետական իրաւունքի վերականգնումն եւ նրա պարտադիր դործածութիւնը պետական հիմնարկութիւններուն և զօրքի մէջ:

Նժդէհ կը շարունակէ.—

«Գալով Լեոնահայաստանի առանձնապատուկ վիճակին, ես կը ցանկանայի հետեւեալ պայմանների ընդունելութիւնը Խորհրդային Հայաստանի կողմից:

«Ա.— Լեոնահայաստանը պարփակուած է իր մէջ ամբողջ Ձանգեզուրի դաւառը, լեոնային Ղարաբաղը, Վայոց-Ձորն ու Գողթանը:

«Բ.— Լեոնահայաստանը իբրեւ մի վարչական միաւոր եւ Հայաստանի անբաժան ինֆնալար մասը, կառավարւում է իր ընտրովի կեդրոնական եւ տեղական իշխանութիւններու միջոցաւ ու ենթարկւում է Հայաստանի կեդրոնական կառավարութեանը:

«Գ.— Լեոնահայաստանի զիւղացիութեան սակաւահողութեան պատճառով թուրք փախստականների վերադարձը վերջնականապէս խափանւում է և լքուած զիւղերը յանձնւում են մնացած սակաւահող զիւղացիներին:

«Դ.—»:

Պարզ ու յստակ են Նժդէհի պայմանները, որոնք հիմնականօրէն կ'արտայայտեն մէկ մտահոգութիւն եւ մէկ պահանջ.— Ձանգեզուրը պահել հայկական:

Շնորհիւ այդ երկամեայ կռիւներուն այսօր կ'ապրի Ձանգեզուրի եւ Ղարաբաղի հայութիւնը:

Շնորհիւ այդ հերոսական պայքարներուն Սիւնիք այսօր անբաժան մէկ մասը կը կազմէ Հայաստանին:

Ու այդ պայքարներուն ողնասիւնն է Ձոր. Գարեգին Նժդէհ:

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՄԷՋ

Լեռնահայաստանէն ահամայ եւ արիւնտ սրտով հեռանալով, ուրիշ բազմաթիւներու նման Նժդէ՛՛հ կը մնայ թաւրիզ, ուր կ'ենթարկուի բուշեւիկներու հետապնդումին, ըստ այդ շրջանին հոն ապրողներու վկայութեան: Նժդէ՛՛հ շուրջ չորս ամիս պահուած կ'ապրի թաւրիզ (*), ապա կ'անցնի Եգիպտոս, ուրկէ կ'երթայ Պուլկարիա եւ հոն ալ կը հաստատուի:

Գ. Նժդէ՛՛հ լայն ժողովրդականութիւն կը վայելէ պուլկարահայ գաղութին մէջ, ինչպէս նաեւ համակրանք՝ պետական շրջանակներու եւ մակեդոնական յեղափոխական ղեկավարներու մօտ, որոնց հետ յաճախ կը տեսակցի հայկական հարցերու կապակցութեամբ:

Գարեգին Նժդէ՛՛հ, իրեն յատուկ խանդով, եռանդով ու հաւատամքի վերածուած հաւատքով կը լծուի ազգային, հանրային — կուսակցական աշխատանքներու: Տարիներով անդամ կ'ընտրուի Հ. Յ. Դաշնակցութեան Պալքանեան կեդրոնական կոմիտէին, կը ստանձնէ ու կը վարէ պատասխանատու պաշտօններ, նոյն զոհողութեամբ եւ անձնուրացութեամբ:

29 Յունիս 1924-ին, Սոֆիայի դերեզմանատան մէջ հանդիսաւոր շուքով բացումը կը կատարուի, հայկական ազատագրութեան ճամբուն զոհուած Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներէն Քրիստափոր Միքայէլեանի եւ Վռամշապուհ Քէնտիրեանի յուշարձանին: Հազարաւոր հայրենակիցներու առջեւ ճառեր կ'արտասանեն Գ. Նժդէ՛՛հ, Ծ. Միսաքեան, Կ. Մեհեան, Յ. Ամատունի, Յ. Տէվէճեան եւ ուրիշներ:

Նժդէ՛՛հ, այդ առթիւ կ'արտասանէ հետեւեալ բոցաշունչ ճառը.

Մեծ մարդը. — Դա սպասուելիք օգնութիւնն է, մխիթարութիւնը: Մետիան, որ ժամանակների մայրը երբեմն-երբեմն աշխարհ կ'ուղարկէ այս կամ այն ժողովրդի եւ մարդկութեան համար:

(*) Տես Անտրէ Ամուրեանի գրութիւնը, հետագայ էջերուն մէջ:

Մեծ մարդը.— Պարզատես, վշտակիր, հերոս երեւալով հոգեկանօրէն կը փոխի իր միջավայրը: Նրանով կ'արժէքաւորուի, կ'իմաստանայ, կը վեհանայ կեանքը: Նրա խօսքը կ'ազդէ որպէս հրաշէկ կայծ՝ բռնկեցնելով իրեն հետ առնչող սրտերն ու զգացումները: Նրաներկայութիւնը կ'ազնուացնէ, կը թեւաւորէ, կը գօտեպնդէ հոգիները: Նրա շնորհիւ անկարելին կը դառնայ միայն դժուարին, դժուարինը՝ կարելի: Նրազները կը դառնան նպատակ, նպատակները՝ իրականութիւն: Կը փոխէ ժողովուրդի հոգեբանութիւնը, ճակատագիրը, պատմութիւնը:

Մեծ մարդը.— Դա Աստուած է, միայն այն տարբերութեամբ, որ դա իրեն Աստուած կը զգայ միայն իր կեանքի որոշ վայրկեաններում եւ որպէս այդպիսին կը կերտէ իր յաւերժական, իր աստուածարժան գործերը:

Այդպիսին էր Քրիստոսափորը՝ Հայկական Պրոմիթէժը, մեր Յեղափոխութեան արարիչը, մեծ առաքեալը, մեծ վրիժակը:

— Քրիստոսափորի հոգու եւ գործի մեծութիւնը պատկերացնել կարենալու համար, դառնանք, մի վայրկեան, վերադառնանք մեր Յեղափոխութեան նախօրեակը՝ տեսնենք թէ ի՞նչ էինք երէկ:

Աշխարհի ամենէն անիծապարտ բռնապետութեան արնոտ ձեռքով կը խաշուէր հայ ժողովուրդը:

Գողգոթայէն՝ Արեւմտահայաստանէն կը քարձրանար աղաղակը հաւաքավառ խաչեցեալի.— օգնութիւն, փրկութիւն ինձ:

Իսկ մարդկութիւնը՝ յանցաւոր ու անտարբեր, կը պատասխանէր.

— Մարա՞ւ ես, արբ արցունքդ...

— Կոտորւո՞ւմ ես, ջրի շա՞փ էլ արժէք չունի արիւնդ՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես...

— Կողոպտւո՞ւմ ես, տէր չե՞ս վաստակիդ՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես...

— Շղթաների մէ՞ջ կը ծնեն, կ'ապրեն, կը մեռնեն զաւակներդ՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես...

— Կա՞ իս է գլուխդ, խոնա՞րհ է ճակատդ, բռնութեան լծի տակ երկատկուած է մէջքդ, պատուիդ տէրը չե՞ս, ցեղիդ սրբազան լեզուէն օգտուելու իրաւունքն իսկ չունե՞ս, վաղո՞ւց է ինչ եկեղեցիներիդ գանգերի քաղցր դօղանջը չես լսում, առանց իտէալի եւ վեհութեան կը սողա՞ս միայն — ստրո՞ւկ ես՝ դու ես մեղաւոր, դու. ի՞նչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգաւոր խօսքին: Ո՞վ ասաց, որ թոյլը մեղաւոր չէ, որ թոյլ է, և որ ուժեղը երախտիք չունի, որ ուժեղ է: Դու խաբուած ես ժողովուրդ, դու գոհն ես քրիստոնէական բարոյախօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շար, որպէս քօղ եւ դիմակ ուժեղների հոգու համար: Թուլութիւնը, — ասում է աշխարհը, —

ծնուած է սնուցանելու ուժը: Ուժն է ծնում իրաւունքը: Ուժեղին է աշխարհը, հայրենիքը, ազատութիւնը եւ ամէն ինչ:

Ուզո՞ւմ ես վերջ տալ դերմարդկային տառապանքիդ, որի Շէյք-քըսիիբը դեռ չէ յայտնուել: Ուզո՞ւմ ես վերջ տալ Գողգոթայիդ, որի վրայ, որպէս յոյսի ժողովուրդ, կը մեռնես ամէն օր եւ չես մեռնի: Ուզո՞ւմ ես փրկուիլ. — եղիր ուժեղ, քանզի թոյլերը բարեկամ չունեն աշխարհում: Իսկ ուժիդ ապացոյցը տալու համար, ցոյց տուր երկու բան. — առաջինը, որ դիտես մեռնել դիտակցօրէն, կուում գործօն եւ իմաստալի մահով, երկրորդը՝ որ դիտես մեռցընել: Ապացուցեցի՞ր այդ, ունեցա՞ր այդ երկու առաքինութիւնները, մասնաւորապէս առաջինը՝ փրկուած ես:

Այս էր աշխարհը հայկական գողգոթայի հանդէպ: Այսպէս կը պատասխանէր մարդկութիւնը մահուան դատապարտուած այս ժողովուրդին, որ չէր ուզեր մեռնիլ, բայց չէր կարող եւ ապրել:

90-ական թուականներին ուժգնօրէն զգացուեց Քրիստափորի շունչը: Նրա դրօշի տակ հաւաքուած հասարակական բանակը — կուսակցութիւնը արդէն խոռովել է մահուան լուծիւնը: Հոգեպէս կը լարուի ժողովուրդը: Նրա որդիները որպէս ապստամբ կը նետուին լեռները, արիարար կը շափուին բանակիների հետ՝ կ'անգիտանան վրտանդը, կ'արհամարհեն մահը, ժպիտը երեսներին կը բարձրանան կախազանները, բաց ու բարձր ճակատով կ'երեւան աքսորի ճանապարհներին, կը պայթին մի շարք ապստամբութիւններ՝ մէկը միւսէն հերոսական ու հիասքանչ, տեղի կ'ունենայ արշաւանքների մի ամբողջ շարք՝ մէկը միւսէն յանդուսն ու փառաւոր, օրէց օր կը խորանայ պայքարը, լեռների վրայ կը բազմանան յեղափոխական խմբերը, անհաւասար կռիւներում կը դարձնուի լեզենդար Փեղային, ազատամարտը կը ծնի հերոսներ, կը հարստացնի մեր ցեղի հերոսական մարտիրոսութիւնը, նրա փառատաճարը: Ի լրումն այդ բոլորի մի օր բռնակալի որջում՝ Ստամբուլում կը պայթի, կը դոռայ դժոխային մեքենան — Սուլթանասպանութեան փորձը — ծնունդ Քրիստափորի տիրանական մտքի եւ զգացումի, մի յանդուսն մահափորձ, որի մասին եւրոպական «Ֆրանսֆուրտեր Յայտունդ»ը կ'արձանագրէր. «Հայկական ուժանակը զղրղեցրեց ոչ միայն Պոլիսը, այլեւ ամբողջ աշխարհը» (ծափեր):

Հետեւա՞նքը:

Կրաւորական նահատակութեան փոխարէն — նշան մեր երէկուան թուլութեան — պատճառը օտարների դէպի մեզ ստացած սպանիչ արգահատանքի — մեր ժողովրդի վերջին տարիների հերոսականը՝ արժէքը անկախ հայրենիք ունենալու իրաւունքի (ծափեր):

Քրիստափորը վառելով մեր ժողովրդի հոգու մէջ ինքնայարգանքի զգացումը, կը դարձնէ նրան արժանի մարդկութեան յարգանքին:

1.- Արամ Յակոբեան, 2.- Յովհաննէս Ամատունի,
3.- Շաարշ Միսաբեան, 4.- Վարդան Շահպազ, 5.-
Զանգով, 6.- Եորկան Ճիւլ, 7.- Զօր. Գարեգին Նըժ-
դեհ, 8.- Յովհաննէս Տէվէնեան, 9.- Յ. Պարսում-
եան, 10.- Լեանգով, 11.- Կարօ Ղազարոսեան, 12.-
Անդրէաս Յակոբեան:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ



ՄԻՔԱՅԷԼԵԱՆԻ ԱՌՋԵԻ

Նկարուած 1923-ին, Հ. Յ. Դաշնակցութեան եւ Մակեդոնական կազմակերպութեան կողմէ կատարուած տարեկան ուխտագնացութեան առթիւ: Յառաջամասի ձախ եւ աջ կողմերու ծաղկեպսակները դրած է Մակեդոնական կազմակերպութիւնը, ցանկապատին ներսինները՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը:



Մարդկութեան պատմութիւնը այլ բան չէ, քան պատմութիւնը ազգերի արժանապատուութեան համար մղուած պայքարի: Շնորհուած արժէքներէ եւ արժանապատուութեան փոխարէն, ինքնանուաճ ազգային արժանապատուութիւն եւ ինքնաստեղծ արժէքներ: Այն ինչ որ այսօր ունինք, այն ինչ որ մեզ տուել է քաղաքական կշիռ, այն ինչ որ շատ բան է աւելացրել մեր ազատութեան արժանի համարուելու իրաւունքին, չէ մոռացուած, չէ շնորհուած՝ դա ձեռք է բերուած երկարատեւ եւ հերոսական պայքարով (ծափեր):

Քրիստափորի շնորհիւ քաղաքական մուրացիկը կը դառնայ մարտիկ:

Գաղթականութիւնները կամ կը կորչին, կամ կը յարմարուին օտար միջավայրին: Հայր բնաւեր՝ չի կորցնի իր ազգային դիմադրութիւնը, նա չի ապագգայնանայ, որովհետեւ մեծ հայու շնորհիւ իր հոգումէջ եւ իր շուրջը կը կրի հոգեւոր հայրենիքը, որովհետեւ օտար միջավայրերում հոգեպէս կ'ապրի իր հայրենիքում:

Մեր վերջին վեց տարուան պատմութիւնը — տխուր նկարագրութիւնը մեզ հետ կատարուածի, Քրիստափորի օրօք եւ նրանից յետոյ կը դառնայ պատմութիւնը այն բանի, ինչ որ մենք կը կատարենք մեր թշնամիների հետ: Քրիստափորը կը փրկէ հայ պատմութեան արժանապատուութիւնը:

Սեղմ ասած՝ շնորհիւ Քրիստափորի օտար լծերի տակ սարկօրէն հոգեվարող հոգեւոր հօտի փոխարէն այսօր կայ անկախ եւ ստեղծագործ քաղաքական ժողովուրդը եւ յաւիտենական արժէքներից՝ Մայիսի 28ը: Այսօր քսաներորդ դարաշեմքում կանգնած՝ հայութիւնը նախայեղափոխական շրջանի սարուկների եւ առեւտրական միջնորդների արհամարհուած հօտը չէ, որին աշխարհը կը զլանար անկախութեան իրաւունքը, այլ մարդկութեան գնահատանքին արժանացած քաղաքական մի ժողովուրդ՝ վերաւոր, բայց ազատ հայրենիքն ունենալու իրաւունքը ձեռքին: Մի ժողովուրդ, որ Քրիստափորի թողած անմեռ արժէքների դիտակցութեամբ եւ պաշտամունքով կը շարունակէ գոռալ մարդկութեան երեսին. «Աչ ոքի ի վնաս, իմ եւ մարդկութեան երջանկութեան համար անկախ ապրիլ կ'ուզեմ»:

Փառք հայ ժողովուրդի հոգեբանութիւնը, ճակատագիրը եւ պատմութիւնը վերաստեղծող մեծ Քրիստափորին:

Թող ապրին նրա թողած արժէքները (բունն ծափեր):

Այս վերլուծական խօսքերուն մէջ ի յայտ կու գայ Նժդեհի հաւատամքը՝ ուժի պաշտամունքը, որուն կարիքն ունէր հայ ժողովուրդը, աւելի վեր բարձրանալու համար, գիտակցութեամբ եւ վստահութեամբ: Նաեւ ի յայտ կու գայ Նժդեհի գաղափարախօսի շնորհը, գինուորականի շնորհներէն ետք:

Հայրենիքէն դուրս, հայրենի հողէն հեռու, Նժդեհի միայն ար-

տաքինն էր փոխուած, զինուորական տարազի փոխարէն քաղաքացիական հագուստ, իսկ ներքինը՝ դադափարականը կը մնար նոյնը: Արդարեւ ան կը մնայ նոյն ազգայնականը, նոյն անդիջող պայքարողը, ի խնդիր հայութեան, հայկականութեան: Ինչ որ հայկական է՝ վեր է ամէն բանէ: Սակայն մինչ հայրենի հողին վրայ ինքն էր յղացողը, հրահանգողը, գործադրողն ու գործադրել տուողը, այսինքն կը գործէր ազատօրէն, գրեթէ առանց որեւէ արտաքին միջամտութեան, հոս՝ արտասահմանի մէջ, պայմաններու հիմնական տարբերութեամբ, իր տեսակէտները չէին որ անպայման կ'իւրացուէին ժողովներու կողմէ, գործադրութեան գրուելու համար: Կային ժողովներ, կային այլ տեսակէտներ, կային այլ դեկավարներ, հետեւաբար նաեւ մարդկային տկարութիւններ, որոնք միացած տեսակէտներու տարբերութեանց, տեղի կու տային տարակարծութեանց, վէճերու, ներքին հակամարտութեանց: Ինչպէս ուրիշներ, Նժդէհ եւս կամայ թէ ազամայ մասնակից կը դառնայ նման «պայքար»ներու, որոնց հիմնական մտահոգութիւնը կը մնայ Հայաստանն ու հայը, պէտք է ճշգեղ(*):

Ազգային հասարակական իր գործունէութեան մէջ Նժդէհ կը վայելէ մեծ վարկ: 1932-ին կը մասնակցի Հ. Յ. Գաշնակցութեան ժԲ. Ընդհանուր Ժողովին, որ կը գումարուի Փարիզի մէջ: Այս ժողովին կողմէ որպէս գործիչ կը հրաւիրուի Մ. Նահանգներ, ուր կը մընայ երկու տարի, ունենալով բազմարդիւն ու բեղուն գործունէութիւն, դառնալով ամերիկահայ ազգային կեանքի առանցքը գրեթէ:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ

Մեծ ու բազմարդիւն է Մ. Նահանգներու մէջ Նժդէհի գործունէութիւնը, զոր կարելի չէ բաժնել թուարանական կոտորակներու եւ որուն մասին կարելի չէ երկար չխօսիլ, անդրադառնալով յարակից խոր արմատ ունեցող հարցերու:

Այն օրէն, որ բուլշեւիկ եւ թուրք զինակցութիւնը կարսի հայասպան դաշնագրով «լուծուած» յայտարարեց հայկական հարցը,

(*) Տես, յետագայ էջերուն մէջ, Երուանդ Ֆրնտրգեանի եւ Աշոտ Արծրունիի գրութիւնները:

ուսուր այլեւս թուրքի կողքին էր, հետեւաբար թուրքը չէր միայն մեր դէմ, այլ երկուքը՝ առանձնաբար եւ միասնաբար: Այս «միասնութիւնը», — Զօր. Նժդէհի բնորոշումով՝ «թրքոբոլշեւիզմ»ը, — Հայաստանի անկախութիւնը խլելէ ետք, իր թշնամանքը Հայաստանի սահմաններէն տարածեց բոլոր այն վայրերը, ուր ապաստան գտած հայ ազգայնական խմբակցութիւնները դեռ կը շարունակէին մտահոգուիլ իրենց հայրենիքի ճակատադրով: Հայաստանը վերականգնելու հայկական ձգտումները թուրքն ու բոլշեւիկը հաւասարապէս պիտի ընդունէին իրենց դէմ ուղղուած, հետեւաբար միացեալ ճակատով պայքարը պիտի տանէին հայ ազգային խաչալներու եւ կազմակերպութիւններու դէմ՝ օգտուելով դիւանագիտական — քաղաքական իրենց կարելիութիւններէն ու առաւելութիւններէն եւ օգտագործելով հայերու ներքին տկարութիւնները, պարտուողական յոռետեսութիւնը եւ ծայր տուած ներքին հակամարտութիւնը:

Պարզ է, ուրեմն, որ թէ՛ բոլշեւիկները եւ թէ՛ մանաւանդ թուրքերը կարեւորութիւն պիտի ընծայէին նաեւ ամերիկահայ գաղութը բարոյապէս նուաճելու գործին. — ըլլայ հայ կեանքը վրդովելով եւ քայքայելով, ըլլայ իրենց դատի համար հայ մարդիկ շահելով, իրենց քարոզչութեան ուղիները հարթելու նպատակով:

Ահա թէ ի՛նչ կ'ըսէ այդ առթիւ հանգուցեալ Վահան Գարտաշեանը. — «Անդարա Ուաշինկթըն դրկեց նշանաւոր մտադործ մը (Ջարդարաներէն Մուխթար պէյը) իբրեւ իր դեսպանը: Ուաշինկթըն գնահատելով այս կեղծ դեսպանի կատարածները, առիւծացուց զայն: Այս մարդը պետական քարտուղարի (ամերիկեան) գործօն աջակցութեամբ, ինչպէս նաեւ որոշ ընկերութեանց գործակցութեամբ, շարժման մէջ դրաւ թրքանպաստ եւ հակահայ փրփականտի խոչոր մեքենայ մը: Շատ մը ամերիկացիներ եւ առնուազն երեք լրաթերթեր կանոնաւորապէս կը վճարուին անկէ»:

Այսպէս ուրեմն, թուրքերը հարկադրուած էին գումարներ յատկացնել «հակահայ» քարոզչութեան: Այլ կերպ չէին կրնար վարուիլ նաեւ բոլշեւիկները «հակադաշնակ» փրփականտի ճակատին վրայ: Կազմալուծելով ամերիկահայ գաղութը՝ անոնք աւելի դիւրացուցած պիտի ըլլային իրենց յաջողութիւններու գործը:

Այսպէս, 1933—34ին թուրքերը մասնաւոր ճիգ կը թափէին, միջազգային դետնի վրայ մոռցնել տալու համար հայկական եղեռնը, միաժամանակ ջանալով իրենց քաղաքական կապերը ամրապնդել եւ մեծ վարկեր ստանալ:

Նոյն օրերուն, Շիքակոյի մէջ, Մայիս 27-ին, տեղի կ'ունենայ համաշխարհային ցուցահանդէսի պաշտօնական բացումը, որուն կը մասնակցին 39 ազգեր, իրենց սեփական դրօշակներով: Հայերը դուրս կը մնան թափօրէն, որովհետեւ ինքնակոչ յանձնախումբ մը թշնամական դիրք կը բռնէ Եռագոյնին հանդէպ, հասկցնելով ցուցահանդէսի

օտար կազմակերպիչներուն, որ հայերը... անդրօրակ ազդ են եւ կամ
Եռագոյնը ազդային դրօշակ մը չէ: Եռագոյն դրօշակը պարզել-չպար-
զելու խնդրին ուղղակի պատճառ կը հանդիսանայ իր անփառունակ
անցեալով ծանօթ ամերիկահայ Առաջնորդ Ղեւոնդ Արք.:

Մօտ մէկուկէս տարի առաջ իր Տիթրոյիտ այցելութեան առթիւ
Հ. Յ. Դ. Չաւարեան ահումբին մէջ ազդային անկախութեան դադա-
փարը եւ Հայկական Եռագոյնը փառաբանող Առաջնորդ Դուրեան,
մասնաւորապէս վերջին ամիսներուն անակնկալ դիմափոխութեամբ
մը սկսած էր պայքար մղել նոյն այդ դրօշակին եւ իր իսկ ջատագո-
ված դադափարներուն դէմ: Եւ Դուրեանի այս նոր «ելոյթ»ը կամ
հակադրօշ պայքարը կոպիտ ու դռնհիկ ձեւով մը արտայայտուեցաւ
Յուլիս 1-ին, որ նշանակուած էր իրրեւ Հայկական օր՝ Շիքակոյի
Համաշխարհային Յուլիանդէսին մէջ:



ԳՐՈՅԻ

ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

ՎՐԱՅ

Չախէն աջ.- Մի-
սաք Թորլաքեան, Մը-
կրտիչ Ս. Էսմէրեան
եւ Մատթէոս Լէյլէկ-
եան (4 Յուլիս 1961):

Ղեւոնդ Արք. իր սրահ մտնելուն համար պայման կը դնէ վեր-
ցնել Հայկական Եռագոյն դրօշակները:

Այս անակնկալ եւ ընդվզեցուցիչ պահանջը կը բախի բուն
ընդդիմութեան: Տեղի կ'ունենան ազմուկ, իրարանցում ու կռիւ,
մինչեւ որ ցուցահանդէսին պատասխանատուն ստիպուած կ'ըլլայ օդ-
նութեան կանչել մեծ թիւով ոստիկաններ, կարգը վերահաստատելու
համար: Վերջապէս, ոստիկաններու կողմէ կը վերցուին Հայկական
դրօշակները: Ատկէ ետք միայն, ժպտար դէմքին, սրահ «յաղթական»
մուտք կը գործէ Առաջնորդը:

Վերոյիշեալ դէպքէն քանի մը օր ետք, Նիւ Եորքի ՀՕԿ-ի վար-
չութեան ուղղած իր նշանակալից հեռազրույ, Առաջնորդը բառացի

կերպով կ'ըսէ. «Արդելեցի Հայկական Եռագոյնի պարզումը Շիքակոյի մէջ՝ նկատելով այդ արհամարհական ցոյց մը՝ ներկայ Խորհրդային կառավարութեան դէմ»:

Այս ընդվզեցուցիչ դէպքէն ետք, տեղի կ'ունենայ Ղեւոնդ Արք.ի մահը: Առաջնորդի սպանութենէն ետք, համայնավարներու ցուցմունքով ձերբակալուեցան անհատ դաշնակցականներ, Միացեալ Նահանգներու դանազան քաղաքներէն: Համայնավարները օգտուելով այս դէպքէն, ամէն առիթով Դաշնակցութիւնը վարկաբեկել աշխատող տարրեր օգտագործեցին եւ սկսան բուռն պայքարի Հ. Յ. Դաշնակցութեան դէմ:

Յունուար 24-ին ԱլլլընիիՔորթ ավ Էփիլսի առջեւ տեղի կ'ունենայ Դուրեան Արքեպս.ի սպանութեամբ ամբաստանուած դաշնակցական տղոց դատավարութիւնը. ձերբակալուած էին նաեւ Մատթէոս Լէյլէկեան եւ Նշան Սարգիսեան: Երբ կարդացուեցաւ անոնց մահուան վճիռը, յայտարարեցին.

«Մենք մեր խղճին առջեւ արդար եմք, ու թէեւ գոհ դաւերու, բայց սիրով պիտի դիմաւորենք մահը: Մեր միակ բաղձանքն այն է, որ ամէն ընկեր մնայ ամուր, օրինապահ եւ հաւատաւոր դաշնակցական: Ամուր պահեցէք կուսակցութիւնը, որովհետեւ ա'ն է մեր ժողովուրդին յոյսը: Ո՛չ մէկ քայլ՝ որ կրնայ ծառայել մեր հակառակորդներու սադրանքներուն: Եթէ մեր ներքին ներդաշնակութիւնը խանգարողներ կան, բերէք մեր մօտ, որպէսզի մենք խօսիմք անոնց:

«Մենք երախտապարտ եմք կուսակցութեան եւ ընկերներուն մեզի ցոյց տուած իրենց ջերմ վերաբերումին համար: Մեզ սիրող ընկերներէն կը խնդրենք մնալ ամուր եւ դաշնակցականի վայել կեցուածքով:

«Եթէ Ապրիլ 11-ին մահավիճող գործադրուի մեր նկատմամբ, կը խնդրենք թաղելէ առաջ վերջին անգամ ըլլալով մեր դիակները տանիլ մեր Տունը՝ Դաշնակցութեան ակումբը, թաղել մեզ երկուքս միեւնոյն գերեզմանին մէջ եւ մեր դիակները պատել Եռագոյնով»:

Սպառնալից այս շրջանին Ամերիկա էր Զօր. Նժդէհը, որուն մասին ամերիկեան անգլիատառ մամուլը կ'ըսէ. «Զօր. Նժդէհի առաքելութիւնն է արթնցնել զգացումները բուլղեւիկեան գործունէութեան դէմ եւ միացնել իր հայրենակիցները ազատ եւ անկախ Հայաստանի դատին շուրջ»: Իսկ հայ բուլղեւիկներու օրկան «Բանուոր» թերթը կը պատմէ. «Ամերիկայի Դաշնակցութիւնը իր գոյութեան ամենէն յուսահատական եւ քրիթիկական մէկ շրջանին մէջն էր, երբ հոս բերել տուաւ Նժդէհը... Դաշնակցութիւնը թէ՛ նիւթապէս, թէ՛ քաղաքականապէս սնանկ հռչակուած էր: Ալ ոչ մէկ ելք չունէր: ...Այո, յուսահատական կացութենէն Դաշնակցութիւնը փրկելու համար առաքեալի մը պէտք ունէր եւ «հայութեան մեծագոյն կուսակցութիւնը» Նժդէհին փակաւ»: («Բանուոր», 3 Հոկտ. 1934):

Քարոզչական եւ խառնակչական աշխատանքներուն «գաղափարական» նուաճումի յոյսեր կը կապեն բոլշեւիկները, որոնք Ամերիկա կը հասցնեն Լիթվինովը :

Ամերիկայի մէջ գործունէութեան այս ուժեղացումը մէկ կողմէ պիտի բարոյալքէր ազգայնական հայութիւնը, թեւաւորելով ա-



Ն Ժ Դ Ն Հ
նաո խօսելու ընթացքին

պասերած եւ համայնավարամիտ տարրերը, միւս կողմէ՝ մոռցնել տալով Հայաստանի կրած ողբերգութիւնը եւ հայիական դատը՝ մեր դատը պիտի հեռացնէր հայութենէն :

Այս վտանգներուն հակադրելու սահմանուած էին Զօր. Նժդէհի տարած աշխատանքը եւ քարոզչութիւնը՝ ոչ միայն հայ կեանքի, այլ եւ ամերիկեան մամուլին մէջ:

Նիւ Եորքի, Փրովիտենսի, Պոսթընի, Պրֆլոյի, Տիթրոյիտի, Սէնթ Լուիզի, Համիլթընի, Կոլտի, Ֆրեդնոյի, Լոս Անճելոսի, Սան Ֆրանսիսկոյի, Թորոնթոյի, Սէնթ Քատերինսի եւ այլ վայրերու ամերիկեան մամուլի էջերէն՝ Զօր. Նժդէհի տարած հակահամայնավար եւ հակաթուրք դործունէութեան մասին քանի մը մէջբերումներ աւելի: Եւս կը լուսարանեն այդ հաստատումը...

«Տարազիր հայ գորավարը կը խօսի դառնօրէն, դատապարտելով համայնավարութիւնը»: «Զօր. Նժդէհ կը մատնանչէ կարմիր վրտանդը»: «Հայ գորավարը կը դատապարտէ Ամերիկայի մէջ աքթիւլացած սոցիալական քարոզչութիւնը»: «Պատերազմի շրջանի հայկական բանակի ղեկավարը կը խօսի կարմիրներու դործունէութեան մասին՝ Մ. Նահանգներու մէջ»: «Զօր. Նժդէհ կ'ըսէ, որ Սովետ Ռուսիոյ համայնավարները բռնաբարելով նախագահ Ռուզվելթի եւ Մաքսիմ Լիթվինովի միջեւ կնքուած ուխտը՝ Ամերիկայի մէջ ամէնուրեք կը տարածեն համայնավարական քարոզչութիւնը»: «Զօր. Նժդէհ կ'ըսէ. — Ամերիկայի համար շատ աւելի լաւ է ճափոններու թշնամանքը, քան ուսերու բարեկամութիւնը»: «Բոլշեւիզմը ոչ թէ շեմոկրատիա է, այլ դեմոնոկրատիա. — ոչ թէ ժողովրդապետութիւն, այլ դիւապետութիւն»: «Տարազիր հայրենասէրը կը յարձակի կոմունիստական ուսմունքի դէմ»: «Զօր. Նժդէհը կ'ըսէ, թէ բոլշեւիզմը հակաքրիստոնէութիւն է: Ան կը վտանգէ եւ կը սոյաննէ անհատի ոգին, կը կործանէ հաւաքականութեան եւ ազգութեան բարոյականը: Անիկա անձնական եւ դասակարգային եսականութիւն է»: «Զօր. Նժդէհը կը թելադրէ հակակոմունիստական ուժերուն՝ միշտ յարձակողական ըլլալ, յաղթական ըլլալու համար»: «Զօր. Նժդէհ կը խօսի թուրք բարբարոսութեան դոճ դարձած երկու միլիոն հայ նահատակներու մասին»: «Զօր. Նժդէհ կ'ըսէ. — Չկայ սոսկական բոլշեւիզմ, այլ կայ թրքօ-բոլշեւիզմը»: «Զօր. Նժդէհ անէ՞ք կը կարդայ թրքօ-բոլշեւիզմին», եւ այլն, եւ այլն...

Այս խորագիրները՝ առնուած ամերիկեան կարգ մը թերթերէ, ինչպէս՝ «Տիր Տիթրոյթ Ֆրի Փրես», «Բոլթ Տէյլի Ռիփորթըր», «Տիր Համիլթըն Սփէքթէյթըր» եւ այլն, կը բաւեն հաստատելու, թէ ամերիկեան հասարակական կարծիքի վրայ ազդող զօր. Նժդէհի հակաբոլշեւիկ—հակաթուրք յարձակողական քարոզչութիւնը չեն կրնար նոր թափ չտալ թրքօ-բոլշեւիկեան դաւերուն՝ անոր դէմ:

Շանթահարիչ այս քարոզչութեան դուզահետ՝ Զօր. Նժդէհ տարաւ նաեւ ամերիկահայութիւնը կազմակերպելու աշխատանք:

Արդարեւ, Զօր. Նժդէհ մեծ երախտիք ունի նաեւ ամերիկահայութեան կազմակերպման ու ազդաստիճանման ճիղերուն մէջ: Իր-

րեւ Հ. Յ. Դաշնակցութեան գործիչ, 1933-34 թուականներուն մազ-
նիսացուց ամերիկահայ զանգուածները, անխտիր՝ դաշնակցական,
չէզոք եւ նոյնիսկ ռամկավար: Ան էր, որ հիմը դրաւ մեր ցեղակրօն
ուխտերուն: Ան էր ոգին Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան, որ



ԱՌԱՋԻՆ ՑԵՂԱԿՐԾՆ ՈՒԽՏԵՐՈՒ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐԷՆ

Ոտքի, ճախէն աջ.— Յակոբ Յակոբեան, Արթըր Կիրակոսեան,
Գ. Մ. Պոզոյեան: Նստած.— Նժդեհ:

ցարդ կը գործէ: Անոր ճառերը կու դային լսելու նոյնիսկ հայերէն
չգիտացողները, այնքան որ հմայիչ էին ու կախարդիչ: Նժդեհի ոգին
ու շունչը կ'ապրին ամերիկահայ յատկապէս երիտասարդ դաշնակ-

ցութեան մէջ. ան մեծ երախտաւորն է ամերիկահայ Յեղակրօն Ուխտերու :

Գ. Նժդէհի նախաձեռնութեամբ և անոր ցեղահար շունչէն 1933 թուին Ամերիկայի մէջ ծնունդ առաւ ցեղակրօն շարժումը : Նոր վարդապետութեան մարդա-ընկերարանական խորունկ ըմբռնումները, շարժումի արագ ծաւալումը եւ ստեղծած խանդավառութիւնը ապացոյց են, որ Յեղակրօնութիւնը նոր սերունդին համար «փրկութեան դօտի» մըն է :

Ինչ որ ալ ըսուեցաւ ու զրուեցաւ, ինչ որ ալ ըսուի ու գրուի, որքան ալ ժանդոտ սլաքներ ուղղուեցան ու ուղղուին այդ շարժումի հասցէին, բացարձակ ճշմարտութիւն է, որ ցեղակրօնութիւնը հայութեան, Հայաստանի ու հայ դատին համար բազմօգուտ շարժում մըն է :

Անոնք, որ հողիով քանդուած չեն, անոնք որ թշնամի չեն մեր ցեղի գոյութեան, անոնք որ համահայկական ուխտէն ուժացած չեն, ոչ միայն պիտի խանդավառուին ցեղակրօնութեամբ, այլեւ պիտի տքնին անոր համար, գիտակցելով, որ միայն ատով հնարաւոր է վերականգնել մեր ժողովուրդի ռազմական, մշտնջենականացման եւ յարատեւութեան ոգին : Բան մը, առանց որուն յաւիտեանս կարելի է տարադիր մնալ, բայց երբեք Հայաստան ունենալու արժանի ըլլալ :

Յեղակրօն ուխտերու ծրագիր-կանոնագիրը պատրաստուած էր լայնախոհ ոգիով : Պէտք է ստեղծել ընդհանուր կեդրոն մը, ուր հայ պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը դաստիարակուին համացեղային սկզբունքներով եւ ոգիով :

Յեղակրօնութեան սկզբունքը, ոգին լաւագոյնս կարելի է ըմբռնել ու գնահատել, ծանօթանալով այդ շարժման Հաւատամքին : Առ այդ, ստորեւ կու տանք հատուած մը Գ. Նժդէհի «Յեղային արթնութիւն» գրութենէն :

ՅԵՂԱԿՐՕՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԱՄՔԸ

Յեղակրօնութիւն,

Լօգանում եւ Լօգանից յետոյ, անասելիօրէն վիրաւորուած, զարնուած անարգանքի փոշիների մէջ, իր խորքի մէջ ապտակուած, ցնցուած հայ հոգու ծնունդն է դա :

Չէ', այլեւս այսպէս ապրել չէ' կարելի, ապրել առանց սեփական իրաւունքի, արժէքի եւ արժանիքի գիտակցութեան, առանց ներքին հպարտութեան — առանց սեփական կեանքի — չէ', այսպէս չէ' ուզում ապրել նորահաս սերունդը :

Անցեղանաւաչ՝ անգոր ու նուաստ է հինը. մեզ պէտք է նոր հայը, որին սպասում ենք ցեղակրօնութիւնից : Մեզ պէտք է ցեղակրօն հայը, որ զօրէր դիմանալ մերօրեայ քաղաքական աշխարհին :

Յեղակրօնութիւն —

Յեղիս ճանաչումն է դա, ճանաչումը մի գերիվերոյ ուժի, էութեան.

Երկրորդ՝ այդ ուժ էութիւնից ծնած լինելուս դիտակցութիւնն է դա.

Ապա՝ այդ ուժ-էութեան ցմահ հաւատարիմ մնալուս ուխտն է դա:

Ա.

Ես ցեղակրօն եմ —

Եւ ահա կ'երդնում վահագնի աջի վրայ՝ երբեք չմեղանչել ուխտիս դէմ — ապրել, գործել ու մեռնել որպէս ցեղամարդ:



Զախէն աջ, կանգնած.— Տիկ. Լուսիա Խթեան, Ս. Լեւոնեան, Խաչիկ Մաքրուհի Խաչիկեան:

Զախէն աջ, նստած.— Տիկիներ Արաֆսի Գրիգորեան, Նուարդ Սահակեան, Զօր. Գ. Նժդեհ, տիկիներ վարդանուշ Մելիքեան, Մէյրի Խօնկեան:

Բ.

Ինձ համար անհատականության եւ ազատության ամենաբարձր արարքը — դա հնազանդուելն է ցեղիս :

Գ.

Ես ցեղանաճաչ եմ, եւ ահա՛ գիտեմ, թէ մե՛ծ է իմ ցեղը, թէ իմ ցեղն աւելի՛ն է տուել մարդկության քան ստացել է նրանից. գիտեմ, որ հայոց նորագոյն յեղափոխութիւնը վերջին գործը չէ իմ ցեղի էութեան. գիտեմ, թէ ի՛նչ բաների ատակ է իմ ցեղը :

Դ.

Ես ցեղահաւատ եմ, եւ ահա՛ պաշտում եմ ե՛ւ մի այլ աստուածութիւն — ցեղիս արի՛ւնը, որի անարատութեան մէջ է իմ ցեղի ապագան :

Ե.

Ես ցեղահազորդ եմ, եւ ահա՛ զգում եմ, որ իմ անձը աւելի՛ իմ գերագոյն ծնողին — իմ ցեղին է պատկանում, քան իմ անմիջական ծնողներին :

Զ.

Իմ ժողովրդի քաղաքական նախատաքրով զբաղուելու պարտականութիւն ունիմ ես, եւ ահա՛ պայքարում եմ մի մե՛ծ նախատաքրի համար, որին արժանի է իմ ցեղը :

Է.

Ցեղակրօն եմ, ասել է՝ ո՛ւր էլ որ լինեմ, ընկերային ինչ դիրք էլ որ ունենամ, ես խանդավառօրէն կը մնամ հպատակն ու մարտիկն իմ ցեղի :

Ը.

Հայաստանից դուրս, սփիւռքի մէջ, ի՛նչ վիճակում էլ որ լինեմ՝ մեծահարուստ, բարեկեցիկ թէ օրավարձով աշխատող բանուոր՝ անդարձ պանդխտութիւն չեմ համարի տարագրի կեանքս : Զէ՛, վերադարձ կայ :

Թ.

Կը դաւանեմ, որ իմ սերունդը աւելի՛ մեծ պարտականութիւն ունի, քան ունէր անցնող ազատագրական սերունդը : Պարտականութեան մէջ՝ ցեղակրօնի իմ բաժինը — առիւծի բաժինն է, ամենամե՛ծը :

Ժ.

Յեղակրօնը, որի նշանաբանն է — աւելի', է՛լ աւելի գորութիւն — պաշտամունք ունի իր ցեղի մարտական ուժի, իմա՛ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հանդէպ:

ԺԱ.

Զոհապաշտ եմ ես, եւ ահա՛ երկիւզածօրէն կ'ոգեկոչեմ նրանց, պաշտամունքը յախտեցական է, որոնք առիծացան իրենց արիութեան մէջ, աստուածացան իրենց հոյակապ նուիրումի մէջ — որոնք իրենց արիւնը շոռայեցին մեր ցեղի գոյութիւնը եւ պատիւը յախտեցականացնելու համար:

ԺԲ.

Յեղակրօնն էլ է ձգտում երջանկութեան — տեսնել թէ ինչպէ՛ս անում է իր ժողովրդի գորութիւնը եւ արդարօրէն ընդարձակում է Հայաստանը:

ԺԳ.

Յեղով է ապրում, ստեղծագործում եւ յաւերժանում ժողովուրդը: Մարդկային մշակոյթի գործում գորութեանական ուժ է ցեղայնութիւնը: Արդ, թէ ինչո՛ւ ցեղային անհատականութեան եղծումը՝ ցեղակրօնը համարում է ռնիր՝ ուղղուած մարդկութեան եւ, ի մասնաւորի իր ժողովրդի դէմ:

ԺԴ.

Յեղակրօնը խորշում է այն բոլոր վարդապետութիւններից եւ հոսանքներից, որոնք միտում են մեր նորահաս սերունդը հեռու պահել ցեղի կազմութիչ ստիւնէն — կաթէն:

Նա խորշում է հայ իրականութեան մէջ զեռացող այն բոլոր ուժերէն, որոնք թէպէտեւ հասարակական դիրքով հակոտնեայ, բայց ընդհանուր հոգեբանութեամբ միացած նական են յարդարած մեր լուսաւոր ազգայնականութեան դէմ:

Աւելի՛ պարզ: Ազգայնականութեան երկու ձեւերից՝ — ազգայնական անհատապաշտութիւն եւ եսապաշտութիւն — ցեղակրօնը ողջունում է առաջինը, որն այլ բան չէ, եթէ ոչ ազգ-անհատի արդար եւ արգասաւոր ձգտումը՝ հաւատարիմ մնալ իր ցեղի ոգուն, կատարելագործել իր պատմական տիպը, եւ պաշտպանել իր հաւաքական անձի ազատութիւնը:

Յեղակրօնի այդ ձգտումը լիուլի համապատասխանում է համամարդկային բարոյականի եւ յառաջդիմութեան բարձր սկզբունքներին:

ԺԵ.

Մե՛ծ է ցեղակրօնի իմ քշնամանքը, ինչպէս մե՛ծ է իմ պաշտամունքը:

Ցեղիս քշնամիներ են — թուրքը, բուլշեիկը եւ սրանց հայադար գործակալները, ամէն անուան ու ծպտումի տակ — որոնց վրնաբար կը հակադրեմ իմ գորութեանական ցեղապաշտութիւնը:

— Ինձ համար գոյութիւն ունի հարցերի հարցը՝ հապա բախտահաս թո՛ւրքը:

— Ես խորշում եմ բուլշեիզմից, որովհետեւ հակամարդկային է: Երիցս ատում եմ դա, որովհետեւ հակահայ է՝ թուրքի չափ. որովհետեւ թուրքի հետ զինակցած մտաւ Հայաստան, որովհետեւ նրանից ցայսօր օգտուեց ցեղիս գերեզմանափորը — թո՛ւրքը, միա՛յն թուրքը:

Ցեղադրուծ բուլշեիկը իր շնական հրաժարիմքն ունի.

Ես իմ՝ վնական այս՛ն՝ ցեղիս.

Նա իր թուրքէ անգոր եղիցի՛ն ունի.

Ես՝ իմ հանապազօրեայ ազատագրական աշխատանքը ցեղիս համար:

Զգուելիօրէն բացասական է բուլշեիկը, եւ դիմագուրկ՝ հոգեպէս:

Ցեղակրօնը մարդկութեան ներկայանում է ցեղադրոշմ նակատով:

ԺԶ.

Պարտուողականութիւն, կրաւորական տառապանք, սարսափի հոգեբանութիւն, լակկանութիւն, մտքի անիշխանականութիւն, կրօնական անդեմականութիւն, դասակարգային եւ յարանուանական Եսականութիւն — այդ ամէնից խորշելով խորշում է ցեղակրօնը:

ԺԷ.

Ցեղակրօն եմ, ասել է՝ պարտիմ, կամիմ, կարող եմ գերազանցել, եւ պէ՛տք է գերազանցեմ ցեղիս քշնամիներին — նա՛խ թուրքին:

ԺԸ.

Ուժապաշտ՝ տկարութիւն ու նահանջ չի նանաչում ցեղակրօնը: Նրա մօտ կենդանի է ծարար՝ ուժի, քաղցրութիւնը՝ գահաբերութեան եւ նիզը՝ ցեղի ուժերի կեղրոնացման:

Արտաշիսեան իր նախնիքների մեծութեան հետամուտ՝ նա պատկառում է իր ցեղէն, եւ աշխատում ամէնուրեք արժանաւորապէս ներկայացնել դա:

ԺԹ.

Նրա համար նուիրական է հայոց նորագոյն քաղաքական գոյառութեան օրը — Մայիս 28-ը — եւ այն խորհրդանշող սրբազան եռագոյնը, որ է՝ սրբութի՛ւն, քաղաքական դա՛տ եւ վախճանաբանութի՛ւն, միաժամանա՛կ :

Ի.

Հայ մարդու հետ ցեղակրօնը խօսում է հայերէն, որովհետեւ գիտակցում է, թէ լեզուի մահը արագացնում է ժողովուրդների հոգեւոր մահը :

ԻԱ.

Ինքնամսխումի մէջ ազատ չէ՛ ցեղակրօնը :
Քաջատողջ լինելու իրաւունք եւ պարտականութիւն ունի նա, որի ձեռքին է գալոց սերունդների նակատագիրը :



ՇԻՔԱԿՈՅԻ ՑԵՂԱԿՐՕՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՈՒԽՏԻ
ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԽՄԲԱՆԿԱՐԸ (1935)

ԻԲ.

Նրա համար նախասիրելի են ա՛յն գիտութիւնները, արուեստներն ու արհեստները, որոնք կարելի է ծառայեցնել իր ցեղի հզօրութեան եւ յաղթանակին: Յեղակրօնը՝ մարտիկ է կամ պատրաստուում է դառնալ այդպիսին:

ԻԳ.

Անձնական կամքի մշակութեամբ՝ ցեղակրօնը սատարում է հայ ոգու հսկայացումին:

Յեղի կամքի աստուածացումը — ահա՛ թէ ինչի է ձգտում նա:

Այդ անմեռ կամքին ահա՛, որ չմեռաւ դաժան դարերի հարուածների տակ, եւ չթողեց որ հայութեան մէջ Մամիկոնեանների ռազմաշունչ ոգին մեռնի, ցեղակրօնն ասում է վնասաբար՝ այո՛ եւ ամէ՛ն:

*
**

Նժդէ՛հ ամերիկահայ երիտասարդ սերունդին հողի՛ն մէջ ոչ միայն տարածեց՝ այլ մանաւանդ հիմնաւորեց ցեղապաշտութեան, հայրենասիրութեան սուրբ գաղափարը՝ ցեղակրօնութիւնը:

Որպէ՛ս արդիւնք իր ճառերուն, ճիզերուն, անդուլ աշխատանքներուն, եւ «Հայրենիք»ի մէջ երեւցող գրութիւններուն, կազմուեցան Ապրիլեան Սան, Հայ Որդիք, Որդիք Հայաստանեայց, Շաւասպեաններ եւ այլ պատանեկան — երիտասարդական կազմակերպութիւններ, կամ՝ ցեղակրօն ուխտեր:

Մէկ խօսքով՝ Նժդէ՛հ հանդիսացաւ ցեղակրօն շարժման տաղանդաւոր քարոզիչն ու հիմնադիրը:

Երբ ցեղակրօն շարժումը թափ էր ստացած Միացեալ Նահանգներու մէջ, խանդավառելով նաեւ արտասահմանը, Նիկոլ Աղբալեան 17 Յունուար 1934 թուակիր հետեւեալ նամակը կը ղրկէր Պէյրութէն, Նժդէ՛հին.

«Յեղակրօնութեան շարժումը, որ այդպէս յաջողութեամբ կը ծաւալի քու խօսքի հմայքով, պիտի կարողանա՞յ տեւել, երբ դուն թողուս Ամերիկան: Մարդարէն աշակերտներ ունի՞, որ պահեն ուղին եւ ուրեմն դործը: Շարժումը հողերանական հիմունքներ ունի, որովհետեւ ազգային զգացումը իբր ցեղային զգացում զօրաւոր է հայ տարրի մէջ, շատերը կարող են յարել այդ շարժումին, որ ծրագրապէս դուրս է կուսակցութենէն(*), բայց իր խօսքի մէջ խորապէս ազգային է, որով շատերը, որ կուսակցութեան ծրագրէն կը խրաչին

(*) Հ. Յ. Դաշնակցութիւն:

անոր ընկերութեան հիմքերու պատճառով՝ դիւրութեամբ կրնան յարիւ այդ շարժման, որ ազգային է՝ ըլլալով ցեղային, բայց ընկեր-
 վարական չէ։ Այդ շարժումի շնորհիւ կը ստեղծուի մէկ առողջ (ընդ-
 դժուար նամակագրին է) հայութիւն, ինչ որ անհրաժեշտ պայման է
 ամէն քաղաքական գործունէութեան...



ՎԱՐԴԱՆ ՇԱՀՊԱԶ ԵՒ ՆԻԿՈՂ ԱՂԲԱԼԵԱՆ

«Աւելի լաւ է ցեղակրօն լինել քան անկրօն եւ անտարրեր, այդ
 շարժումը ինքնավստահութիւն կը ներշնչէ։—

«Յաջողութի՛ւն. այս ծանր օրերուն՝ մարդ թեթեւ կը շնչէ,
 երբ կը տեսնէ ցեղի ոգին կենդանի է եւ արթուն, մեր գործը հետե-

ւորդներ ունի, որ կրնայ մեզ նման չըլլալ եւ մեր ճամբան չբռնել, բայց այնտեղ կ'երթանք, ուր կ'երթայինք արիւնի ծովերու մէջէն»:

Յեղակրօն շարժման տարածման եւ յարատեւման մասին, Աղբալեանի արդար մտաւիտութիւնը՝ բարեբախտաբար չարդարացաւ եւ տեւեց ու կը տեւէ այդ շարժումը:

Յեղակրօն ուխտերու Ա. պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ Պոսթրնի «Հայրենիք»ի շէնքին մէջ, 16 Յուլիս 1933ին, 8 շրջաններէ հաւաքուած 40-ի մօտ երիտասարդներով: Այս ժողովը, նախապատրաստական լայն աշխատանքներ տանելու նպատակով, որոշեց կազմակերպութեան առաջին պատգամաւորական ժողովը դումարել 1—3 Յունիս 1934ին. նոյն օր բացուեցաւ Յեղակրօն Ուխտերու անդրանիկ պատգամաւորական ժողովը, «Հայրենիք»ի սրահին մէջ, նախազահութեամբ Գ. Նժդեհի: Պատգամաւորներ եկած էին մօտաւոր ու հեռաւոր բազմաթիւ վայրերէ (կազմուած էին արդէն 40 Ուխտեր): Ահաւասիկ հատուած մը այս առթիւ «Հայրենիք»ի գրածէն.

«Յունիս 1-ին, երեկոյեան ժամը 8.30-ին «Հայրենիք» ահուճրի սրահին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր բացումը Յեղակրօն Ուխտերու առաջին համագումարին:


«Հակառակ նախորօք որեւէ ծանուցում կամ հրապարակային յայտարարութիւն եղած չըլլալուն, «Հայրենիք» ահուճրի սրահը լեցուեցաւ երկսեռ խումն բազմութեամբ մը: Շատեր ոտքի վրայ մնացին, իսկ շատ ուրիշներ ալ ստիպուած ետ դարձան, կանգնելու իսկ տեղ չունենալով:

«Հայ Կարմիր Թաշի Կեդր. Վարչութեան կողմէ, տիկին Ս. Տեստեկիւլ Պատգամաւորականին ուղղեալ բարի դալուստի ուղերձ մը բրաւ: Ապա խօսեցաւ ընկ. Ասատուր, յանուն Հ. Յ. Դ. Կեդր. Կամիտէի եւ Յեղակրօն Ուխտերու առժամեայ վարչութեան եւ կատարեց համագումարին բացումը:

«Յետոյ ժողովը վարեց ընկ. Նժդեհ, որ գեղեցիկ ու խնամուած բանախօսութենէ մը ետք, հետզհետէ խօսելու հրաւիրեց բազմաթիւ ընկերներ, — Ռուբէն Դարբինեան, Տոքթ. Ն. Տ. Ս. Թաշճեանը, Թուղճեանը, Պաղտոյեանը, Ա. Բարսեղեանը եւ Մանտալեանը. Մ. Վերածինը, Համաստեղը, Յ. Տէր Յովհաննէսեանը, Պ. Ա. Ֆէթիվաճեանը եւ ուրիշներ: Յեղակրօններու կողմէ խօսեցան Տ. Մուրատեան, Սաչազլեան, Օր. Սիրունեան եւ ուրիշներ:

«Ընկեր Նժդեհ յայտարարեց, որ Հ. Յ. Դ. Ամերիկայի Կեդր. Կոմիտէն Յեղակրօն Ուխտերու առաջին համագումարին նուիրած է գեղեցիկ Եռագոյն դրօշակ մը, իսկ Սիրաքիւզէն տէր եւ տիկին Թօփուղեան 25 արտավար տարածութեամբ գետին մը՝ Յեղակրօն Ուխտերուն:

«Ապա որոշուեցաւ, յանուն Յեղակրօն Ուխտերու առաջին հա-



Հ. Յ. Գ. ՅԵՂԱԿՐՕՆՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ: ՊՈՍԹԸՆ, ՄԷՍ., ՅՈՒՆԻՍ 1-3-1934:

- 1) Ասատուր Կիրակոսեան, 2) Մարքիմ Պոգոյեան, 3) Մ. Օգանեան, 4) Ա. Էսբեան, 5) Հ. Բաղարամեան,
- 6) Համաստեղ, 7) Զօր. Գ. Նժդեհ, 8) Մալխաս, 9) Տոբր. Լեւոն Տաղլեան, 10) Յ. Խուշպուլեան, 11) Մ. Վե-
րածին, 12) Վ. Տէր Բարսեղեան:

մագուժարին հեռագրել Հ. Յ. Դ. Բիւրոյին, խոստանալով անոր, որ Յեղակրօն Ուխտերը եւս պիտի քալեն Հ. Յ. Դաշնակցութեան գծած ճամբով, միշտ բարձր բռնելով մեր ազատագրական պայքարին դրօշակը» :

Առաջին համագումարի որոշումներով հաստատուեցաւ կազմակերպութիւնը Յեղակրօն Ուխտեր կոչելու կարգադրութիւնը. Յունուար 14-ը հռչակուեցաւ Յեղակրօններու Օր : «Հայրենիք» շաբաթաթերթը նկատուեցաւ իբրեւ Յեղակրօններու օրկան, եւայլն : Ի վերջոյ կատարուեցաւ ընտրութիւնը անդրանիկ կեդրոնական վարչութեան, որուն անդամակցեցան Արա Անլեան (Եունիըն Սիթի), Խաչիկ Մ. Պողոյեան (Պրաքթըն), Ասատուր Կիրակոսեան (Ուստր), Յակոբ Յակոբեան (Մալպորո), Նազելի Իսպիրեան (Շիքակօ) եւ Տիգրան Մուրատեան (Տիթրոյիտ) : Եօթներորդ անգամի մը ընտրութիւնը վերապահուեցաւ Գալիֆորնիային եւ ընտրուեցաւ Գարեգին Ռատիկեանը : Իսկ այս անդրանիկ Կեդր. Վարչութեան իբրեւ անդրանիկ ատենապետ դործի դլուխ անցաւ այժմ Փրովիտէնս բնակող եւ այսօրուան ամերիկահայ դաշնակցական կազմի ամենէն դործունեայ եւ ամենէն փորձառու անդամներէն Ասատուր Կիրակոսեան, որ եղաւ Յեղակրօն Ուխտերու գլխաւոր առաջնորդը, իր այդ օրերու դործակիցներուն իսկ հաստատումով :

Կեդրոնական վարչութեան կից իբրեւ խորհրդական նշանակուեցան Համաստեղ եւ Յովհաննէս Տ. Յովհաննէսեան, իսկ մնայուն դործադիր քարտուղար ընտրուեցաւ Ճէյմս Մանտալեան :

Այս ընտրեալ կազմով ալ Յեղակրօն Ուխտերը իրենց առաջին քայլերը նետեցին կեանքի մէջ : Արդէն իսկ կազմակերպուած Ուխտերը սկսան բազմանալ ամէն անկիւնէ իրարու քով եկող երկսեռ երիտասարդներով եւ միաժամանակ կազմուեցան նոր Ուխտեր :

Հայ կեանքէն խզուելու եւ հայկական արժէքներուն ու ձգտումներուն անձանօթ մնալու դատապարտուած հազարաւոր երիտասարդուհիներ եւ երիտասարդներ, իրենց ստացած դաստիարակութեան շնորհիւ, դարձան հայութեան պատիւ բերող արժանաւոր հայորդիներ :

30 Յունիս — 3 Յուլիս 1940ին Շիքակոյի մէջ դումարուած Տրդ Պատգամ. Ժողովը որոշեց Յեղակրօն Ուխտերը կոչել Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն : Այս նոր մկրտութեան գլխաւոր պատճառներէն էին այն քսութիւնները, զորս Դաշնակցութեան հակառակորդները կը տարածէին ամերիկեան շրջանակներու մէջ, նացիական ցեղապաշտութեան դաւանակի՛ց կամ դործակի՛ց հռչակելով ամերիկահայ ցեղակրօնները : Եւ դժուար էր օտարներուն բացատրել եւ դիւրութեամբ ըմբռնել տալ ցեղակրօն բառին նշանակութիւնը :

Ահա, այս նկատումներով, կազմակերպութեան համար իւրաց-



3
4
5
6
7
8
9
2

ուեցաւ «Ամերիկայի Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն» անունը (Արմինիըն Եուրօի Ֆետերէյշըն օֆ Ամերիքա) :

Հ. Ե. Դաշնակցութիւնը ներկայիս ունի երէցներու եւ կրտսերներու 56 մասնաճիւղեր Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ : Այսպէս, մասնաճիւղեր կան .—

Գալիֆորնիա .— Լոս Անճելըս, Իսթ Լոս Անճելըս, Ֆրեզնօ, Սան Ֆրանչիսքօ, Օքլէնտ եւ Հոլիվուտ :

Քանեքթիքըթ .— Պրիճփորթ, Հարթֆըրտ եւ Նիու Պրիթէյն : Իլլինոյզ .— Շիքաղօ, Իսթ Սէյնթ Լուիզ, Կրանիթ Սիթի և Ուոքեհըն :

Մէյն .— Փորթլէնտ :



ՇԻՔԱԿՈՅԻ ՅԵՂԱԿՐՕՆՆԵՐԷՆ ԽՈՒՄԲ ՄԸ (1934)

Մեսչուսէց .— Պոսթըն, Լորէնս, Լովել, Սոմըրվել, Սփրինկֆիլտ, Ուոթըրթաուն, Հուայթինսվիլ եւ Ուատըր :

Միչիկըն .— Տիթըսթիթ՝ 3 մասնաճիւղ (մէկը՝ Կրտսեր) և Փոնթիաք :

Նիու Ճըրզի .— Եունիըն Սիթի :

Նիւ Եորք .— Պինկհեմթըն, Պրոնքս, Նիւ Եորք Սիթի, Նիակարա Ֆոլզ, Թրօյ եւ Սիրաքիւզ :

Օհայօ .— Գլիվլէնտ :

Փենսիլվանիա .— Ֆիլատելֆիա եւ Փիցպըրկ :

Ռոտ Այլընտ .— Փրովիտէնս :

Ուիսքոնսին .— Ռէյսին :

Վիրճինիա .— Ռիչմընտ :

Ուաշինկթըն .— Տի-Սի :

Իսկ Գանատայի չորս մասնաճիւղերը կը գտնուին Մոնթրէալ, Համիլթըն, Պրէնտֆորտ եւ Սէյնթ Քատրինզ:

Յեղակրօն Ուխտերու կազմութեան տարիներուն եւ մինչեւ Երկրորդ Աշխարհամարտի 1944 թուականը, նոյնանման մասնաճիւղեր գոյութիւն ունեցած են նաեւ Պուլկարիոյ Հայաչառ քաղաքներէն Սոֆիայի, Փրովտիպի, Վառնայի եւ Ռուսճուքի մէջ, ինչպէս նաեւ Պերլին, Երուսաղէմ եւ Հեռաւոր Կալիպթա: Ամերիկահայ Ուխտերը կապ պահած են նաեւ արտասահմանի իրենց այդ քոյր մասնաճիւղերուն հետ:



ԶՕԲ. Գ. ՆԺԴԵՀ, ՇՐՋԱՊԱՏՈՒԱԾ ՏԻԹՐՈՅԻԹԻ ՅԵՂԱԿՐՕՆ ՈՒԽՏԻ ԿԱՐԳ ՄԸ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ:

Ամենէն շուտ բուռնութիւնները ըմբռնեցին, որ ցեղակրօնութիւնը հողեւոր շանթարդել մըն է բուռնութիւնը գէմ եւ շարժում մը, որ կոչուած է վարակել բովանդակ հայ գաղթաշխարհը: «Սորհրդային Հայաստան» թերթը, Աւտոյեանի գրչով կը գրէր. «Շրջելով մէկ գաղութէ միւս գաղութ, ան (Նժդեհ) փորձ կ'ընէ բորբոքելու Դաշնակցութեան մարուող օջախը»: Ամերիկայի բուռնիկ «Բանուոր» թերթը արտատպելով «Ս. Հայաստան»ի այդ յօդուածաշարքը կուտար «Դաշնակ ինտերվինցիոնիստական – միջամտողական քաղաքական ձգտումներ»ու ահազանգը («Բանուոր», 3 Հոկտ. 1934 թ.):

«Դաշնակցութիւնը Եռագոյնը վերցուցած կ'ըսէ աշխարհին՝ — Հայրենիք կ'ուզեմ»: Զօր. Նժդեհի այս խօսքը «Բանուոր»ը կը մեկ-

նաբանէ այսպէս. «Մի՞թէ այս բացորոշ գորակոչ մը չէ բոլոր դաշնակ շարքայիններուն, որպէսզի Եռագոյնը եւ հրացանները շալկած՝ պատրաստուին Հայաստանի վրայ յարձակուելու: Մի՞թէ ասիկա պատերազմի յայտարարութիւն մը չէ Խ. Հայաստանի դէմ, իշխանութիւնը տապալելու, երկիրը գրաւելու եւ դաշնակ արիւնաթաթախ ռեժիմը վերստին հաստատելու» («Քանուոր», 6 Հոկտ. 1934):

Այն օրերուն, երբ Նժդէհի խանդավառութեան ծաւալուն ալիքը հազարներ կը քաշէր դէպի ազգայնական հայութեան կազմակերպութիւնները, երբ աշխարհի բոլոր ծայրերէն հայութիւնը եւ մասնաւորապէս նորահաս սերունդը լարուած ուշադրութեամբ կը հետեւէին Միացեալ Նահանգներու մէջ սկսուած ցեղաշարժին, երբ բազմաթիւ




ԶՕԲ. Գ. ՆԺԴԵՀ ՆԿԱՐՈՒԱԾ

ՈՒՈԹԸՐԹԱՈՒՆԻ ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՀԵՏ 1933ԻՆ:

վայրերէն համակրանքի արտայայտութիւններ եւ դիմումներ կ'ըլլային շարժման հիմնադրին, երբ ամէնուր կը սպասուէր, թէ այսօրվազը այդ շարժումը պիտի դառնայ համազաղութային, երբ աստիճանաբար համոզում կը դառնար, որ այդ շարժման շնորհիւ միայն կարելի է կենդանի ուժ մը ստեղծել Հայաստանի ինքնապաշտպանութեան համար, անդին հայանուն անձեր, բոլջեւիկեան սայլին լըծուած, կարելի ու անկարելի, երեւակայելի ու աներեւակայելի բոլոր միջոցներուն կը դիմեն խափանելու համար շարժման տարածումը:

Այդ օրերուն, տեղի կ'ունենայ Գուրեան Արք.ի սպանութիւնը: Դաւադիր ու նենգամիտ ձեռքեր ճիզ չեն խնայեր այդ սպանութեան պատասխանատուութիւնը վերադրելու Նժդէհին, պարզապէս այս




ԼՕՐԷՆԱԻ ՑԵՆՂԱԿՐԾՆ ՈՒԿՏԻ ԿՈՂԱՐԷ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԴԱՇՏԱԳՆԱՑՈՒԹԵՆԷՆ ԵՆԷՆ ՏԵՍԱԼԱՆ ՄԸ
ԱՆՈՒՑԻՆ ԶԱՐԲԻ ՎՐԱՅ ՎՐԱՅ Կ՛ԵՐԵԼԻՆ ԶՕՐ. ԳԱՐԵԳԻՆ ԴՄԻԷԻ, ԶՕՐ. ՍԵՊՈՒԿ, ՏԻԳՐԱՆ ՏԵՐ ԱԿՏԻՍԵՆԱՆ, ԱՐԲԸՐ ԿԻՐԱԿՈՍԵՆԱՆ :

կամ այն ձեռով զայն չէզոքացնելու համար, որովհետեւ Նժդեհի չէզոքացումով, կանգ պիտի առնէր ցեղակրօն ազգայնական շարժման կազմակերպութեան գործը: Դիւային մեթոտով մը այդ հրէշային բանսարկութիւնը տարածեցին զազութէ զազութ, վարկարեկելու համար Նժդեհն ու իր գործը:

Իսկ զազութի բոլշեւիզմի պաշտօնաթերթ «Բանուոր» իր 1934 Հոկտ. 3, 5 եւ 6 թիւերուն մէջ կը գրէր. «Նժդեհը Ամերիկայի մէկ ծայրէն միւսը արեան եւ տեռորի վարդապետութիւնը տարածեց... Իր հետեւորդները գրգռեց, յուզեց, լարեց և. Հայաստանի դէմ»:

«Ցեղակրօնութեան քրմապետը... կը խօսի այն դերի մասին, որուն կոչած են ցեղակրօն ուխտի ապագայ գորավարները — այն է պայքարիլ բոլշեւիկին եւ բոլշեւիզմի դէմ»: «Ազգերը չեն ապրիր միայն հաց արտադրելու եւ սպանելու համար, ցեղերը անով չեն ապրիր, ցեղերը կ'ապրին հոգեւոր հացով»:

«Այդ հոգեւոր հացն է, որ Նժդեհ առատօրէն բաժնեց Ամերիկայի մէջ, ո՛ւր որ զնաց: Այդ հացի կծու հետեւանքն էր զաշնակ հա-



Հ. Յ. Գ. ՅԵՂԱԿՐՕՆ ՈՒԽՏԵՐՈՒ ԱՆԴԱՄԱՏԵՏՐԸ (1937—1940)

կախորհրդային ազրեսիւ աքթը, որ Ամերիկայի մէջ արտայայտուեցաւ եկեղեցիները իբրեւ բանակատեղիներ զբաւելու եւ Դուրեանը սպանելու գործնական ձեռնարկներով»:

Նժդեհ ցեղապաշտ էր, բայց իր ցեղապաշտութիւնը չէր նմաներ դերման (հիթլերական) ցեղապաշտութեան: Նժդեհ կը սիրէր հայ ցեղը եւ կը պայքարէր անոր բարձրացման ու ազատութեան համար, սակայն ոչ ի վնաս ուրիշ ցեղերու եւ ազգերու: Ան առողջ ցեղապաշտութեան քարոզիչն էր: Ան հաւատացած էր հայ ժողովուրդի, հայ ցեղի մաքրութեան, ազնուութեան եւ բարձրութեան, ան կը ձրդտէր օժտել իր ցեղը անհրաժեշտ ազատութեամբ:

Ինչպէս ամէն կարող գործիչ ու հերոս, Նժդեհ եւս ունեցաւ

իր հակառակորդները, զինք ատողները եւ վատաբանողները: Աստուծո՛ր երեք տեսակի էին՝ մեր ժողովուրդի դարաւոր սոսիս թուրքը, հայոց ազգայնութեան թշնամի բոլշեւիկները եւ անոր ետեւէն քալող սեւ պլոքը եւ երրորդ՝ իրենք զիրենք չէզոք յորջորջող խեղճուկ եւ ստորաքարչ անհատներ (եւ թերթուկներ), որոնք փորձեցին Նժդեհը ներկայացնել իրրեւ վախկոտ, մանաւանդ այն ատեն, երբ Նժդեհը դեռեւս չէր մեռած, Սիպերիոյ բանտերու մէջ կը տառապէր յանուն մեր ժողովուրդի, յանուն հայ ցեղի ազատագրութեան:

ԿՐԿԻՆ ՊՈՒԼԿԱՐԻԱ

Գարեգին Նժդեհ, 1934-ի աշնան Մ. Նահանգներէն վերադարձաւ իր բնակավայրը՝ Սոֆիա, ուր դիմաւորուեցաւ մեծ խանդավառութեամբ:

Իրմէ առաջ սակայն, հակադաշնակցականներուն Սոֆիայի համախոհները պուլիար սատիկանութեան հետ տեսակցելով, կը յայտնէին, թէ Նժդեհ Սոֆիա կը վերադառնայ հոն մահափորձեր կատարել տալու առաքելութեամբ: Կատարուած ամբաստանութեան հետեւանքով ալ Գ. Նժդեհը կը խուզարկուի սահմանադրութի կայարանին մէջ եւ կը զրաւուին մօտը ունեցած թուղթերը:

Նամակը, զոր իր բնազրով կը հրատարակենք ստորեւ, կը պատմէ այդ եղելութիւնը, Շիքախօ բնակող ընկեր Յովակիմ Գ. Յովակիմեանին:

Սիրելի Յովակիմ,

Գրում եմ Սոֆիայէն: Անշուշտ հակառակորդ քուրջերի մէջ կարդացիր Սերպ եւ Բուլղար սահմանադրութի վրայ իմ դէմ տեղի ունեցած դաւի մասին: Հակադաշնակցական տականքը, ամբողջ մի տարի, աշխատած էր ծանօթ սահմանադրութի վրայ ինձ յանկարծակիի բերելու: Եւ ահա, անսպասելիօրէն, Գրադոմանում (սահմանադրութի առաջին պուլիարական կայարանը) ինձ մօտենում է — դնացքի մէջ — մի պաշտօնեայ եւ յայտնում, թէ հրաման ունի ինձ մօտ եղած զրագրութիւնը վերցնելու եւ ուղարկելու Սոֆիայի քաղաքական բաժնի պետին:

«Պաշտօնեան ինձ չի ճանաչում և ստանում է մօտս եղած թուղթերը :

«Մինչեւ այդ, Սոֆիայի կայարանում հաւաքուած ընկերները սպասում են ինձ. հակառակորդ մը լուր է տարածում, թէ Նժդեհը «ձերբակալուած է, խուզարկուած է, վար է առնուած» եւլն :

«Այդ դէպքէն երկու ժամ յետոյ Սոֆիա եմ հասնում. «Թիւրիմացութիւնը» (թշնամիները հաւատացրել էին պատկան իշխանութիւնը, թէ Ն.ը «նոր սպաննութեան» հրաման է բերում) պարզում է եւ ներողութիւն խնդրելով «Թիւրիմացութեան» համար, թուղթերս վերադարձնում են ինձ :

«Տեսնում ես, հակադաշնակցական շուրթիւնը մահուան պէս արթուն է եւ գործի վրայ ամէն տեղ եւ ամէն օր, ժամ, վայրկեան :

«Սիրելիս, Ամերիկայում կատարուած գործի մեծութիւնը, կարելի է դիտել հեռուէն, դրսէն : Երեւակայել չես կարող, թէ ինչ ազդեցութիւն է ունեցել մեր վերջին երկու տարուայ կուսակցական յաջողութիւնը մեր այլ դադութների վրայ :

«Ցեղակրօնութեան հանդէպ հիացում եւ բերկրանք կայ : Այդ ամէնը հալալ լինի Ձե՛զ, Ամերիկային :

«Սոֆիա էր ընկեր բժ. Համօ Օհանջանեանը : Քննեց ինձ եւ գրտաւ, որ լեարդս լրջօրէն վնասուած է. իսկ սրտիս էլ մկանները զգալապէս տկարացել են :

«Իբր թէ բժշկուում եմ, տեսնենք : Կը յուսամ բոլորդ էլ լաւ էք :

«Համբոյրներս ցեղակրօն բալիկներիդ, ազնիւ եւ ազիզ քրոջս՝ Եւզինին եւ քե՛զ :

Քոյդ ՆժԴԵՀ

Բարեւէ՛ բոլոր ընկերներին եւ ընկերուհիներին ու ցեղակրօններին :

ՆՈՅՆ

Սոֆիա, 1934 Նոյս . 25


Մահամազլուխի այս միջադէպը կազմակերպուած էր բոլշեւիկեան սանձը իրենց վզին անցուցած հայանուն եղկելիներու կողմէ :

Սակայն, հանգիստ չէին նաեւ թուրք—բոլշեւիկները, որոնք սկսան հետեւիլ իր գործունէութեան, զինք հալածելու եւ զանազան ձեւերով արգելք հանդիսանալու համար անոր հայանպաստ շինիչ աշխատանքին : Սոֆիայի «Տելի Օրման» թրքերէն թերթի խմբագիր Մահմուտ Նեճմետտինի նենգամիտ մատնչական արտայայտութիւնները նաեւ արձագանգ գտան պուլկար համայնավար «Նովոյ Վրեմէ» թերթին մէջ, որ լոյս ընծայեց զրութիւն մը, ի միջի այլոց գրելով. «Հայ յեղափոխական գորավար մը, յատուկ առաքելութեամբ գաւառները կը շրջի եւ հայուրեան յեղափոխական տարրը կը նախապատրաստէ անմիջական եւ ուղղակի գործողութեան, Թուրքիոյ դէմ» :

Թշնամանքի պատճառը, ուրեմն, անցեալը չէր կրնար ըլլալ,

այլ ներկան եւ ապագան : Եւ այդ մասին շուտով վկայութիւն կը ըստացուի թուրք մամուլէն :

1935ի Օգոստոս 20-ին Կ. Պոլսոյ կիսապաշտօնաթերթ «Ճում-հուրիէթ»ը գրեց եւ «Հապէր», «Ազատ», «Զաման», «Լա Ռեփուպլիք» եւ ուրիշ թերթեր այլազան ճոխացումներով կրկնեցին, թէ «պատերազմի ատեն Հայերը պուլկար դրօշին տակ պիտի ծառայեն» :



Զախէն աջ.— Եղիշէ Յակոբեան,
Գ. Նժդեհ եւ Յ. Գ. Յովակիմեան
(Ապրիլ 1934, Շիֆակօ) :

Թուրք մամուլի այս վերադրումները ժամանակին հերքուեցան «Նովի Տնի», «Զորա» թերթերու եւ Փրոֆ. Կենովի կողմէ : Բայց թուրքերը չգոհացան տրուած բացատրութիւններով, այլ անհանդրոտացած Հայերու Պուլկարիոյ մատուցելիք ծառայութիւններու հեռանկարէն՝ սկսան դիւային միջոցներ խորհիլ Պուլկարիոյ մէջ իսկ վրտանգել տալու համար այն մարդը, որ պատերազմի մը ատեն կ'են-

Թաղրուի ըլլալ «Հայերը պուլկար դրօշի տակ հաւաքողը»: Այդ անձը ուրիշ մէկը չէր, եթէ ոչ Զօր. Նժդէհը, որ տակաւին 25 տարի առաջ Անդրանիկի հետ կազմակերպած եւ վարած էր հայկական վաշտը եւ վէրքերը ստացած Պուլկարիոյ համար: Կը տրուի գաղտնի ծուռնալ մը, որուն մէջ Զօր. Նժդէհի ենթակայ կը համարուի «Թուրքիոյ շրջանը» եւ որուն հիման վրայ Յոյները նոյնիսկ տարանցիկ վիզա չտուին անոր, որպէս «թրքութեան թշնամի»:

Անհանդատութեան նոր պատճառ մըն ալ դրսեւորեց «Վագրթ» թերթը: Եւ այդ «Մեծ Հայաստանի գաղափարն է», որ կը հետապընդուի, «Զօր. Նժդէհի գլխաւորութեամբ»:

Ահա ուրեմն Նժդէհի դէմ հալածանքին բուն պատճառները.—

1.— «Պատերազմի ատեն Հայերը պուլկար դրօշի տակ պիտի ծառայեն» («Ճումհուրիէթ»):

2.— «Անոնք Մեծ Հայաստանի գաղափարը կը հետապնդեն» («Վագրթ»):

Երկու սկզբունքներուն ալ առաջնորդ կը նկատուէր միեւնոյն մարդը կամ մարդիկը — «Զօր. Նժդէհ եւ իր շուրջը հաւաքուած դաշնակ արկածախնդիրները» («Վագրթ», 1935 թ., Օգոստ. 20 Յուլիս): ... Ասոնք, որ «Պալքանեան անամպ ու վնիտ մթնոլորտը այլայլելու կը ձեռնարկեն»: Ուստի^o, «վստահ եմք, որ Պուլկարիոյ մէջ Թուրքիոյ մեծ բարեկամ Քէօսէիվանով պիտի տայ պէտք եղած դասը Զօր. Գարեգինի շուրջ հաւաքուածներուն»:

Այս մեղադրանքներուն զուգահեռ, վրանբաց յարձակումները, մութ մեքենայութիւնները աւելի եւս սաստկացան 1935 թուականին, յանդելով կազմակերպուած դաւադրութեան: Այդ օրերուն Սոֆիայի մէջ կը գործէին ոչ միայն «Թալէաթ»ները, այլ Չեկայի դործակալ՝ իր ժամանակին այնքան աղմուկ հանած Սքոպլինը: Պարզ է, որ «Սքոպլին»ները եւ «Թալէաթ»ները չէին կրնար անտարբեր մնալ հայ նորահաս սերունդը կազմակերպող Զօր. Նժդէհի հանդէպ, մասնաւորապէս այն օրերուն, երբ ականատես կ'ըլլային 18 Օգոստոս 1935-ի այն ցոյցին, որուն մասնակցեցան տասնեակ հազարներով Հայեր եւ Պուլկարներ, Մեծ Հայաստանը խորհրդանշող եւ Պալքանեան պատերազմը վերյիշեցնող հայկական դրօշակները պարզած: Իր տարողութեամբ այնքան տպաւորիչ ցոյց մը՝ որ հայեւպուլկար եղբայրակցութեան ուխտը արձագանգ դառնալով պուլկար ամբողջ մամուլին մէջ:

Անթիւ եւ անհամար են բոլշեւիկներու կատարած մութ սպանութիւնները, նիւթած դաւերը եւ քաղաքական հակառակորդները վարկարեկելու եւ իրենց համար անվտանգ դարձնելու միջոցները: Յայտնի է որս ծանօթ զինուորականներու ճակատագիրը: Մասնաւորապէս մեզի, հայերուս ծանօթ են խորհրդային իշխանութեան գաղութահայութիւնը ներսէն պայթեցնելու մեքենայութիւնները եւ անոր տկարութիւնները շահագործելու յամառ փորձերը:

Զօր. Գ. Նժդեհ կրցած էր յարարերութեան մէջ մտնել պուլկար բարձրաստիճան պաշտօնեաներու եւ զինուորականներու հետ, որոնք զինք կը հրաւիրեն իրենց պաշտօնական օրերուն եւ զինուորական տողանցքներուն :

1939-ի Յունիսի մէջ տեղի ունեցաւ Քըրճալիի յուշարձանի հանդիսութեան բացումը :

«Պուլկարսի Տոպրովուլէց» թերթի մէջ Միխօ Քոփանով, խօսելով այդ հանդիսութեան մասին, ի միջի այլոց կը գրէ .

— «Վաշտին մէջ են նաեւ խումբ մը հայ կամաւորներ : Անոնք եկած էին իրենց պատերազմական գրօշակով, որ հպարտօրէն ծածանեցաւ Պալքան-Թորէսի վրայ եւ հոն փառաւորուեցաւ, որովհետեւ հայկական վաշտը իսկապէս կռուեցաւ առասպելական քաջութեամբ : Զիրենք կ'առաջնորդէր իրենց հրամանատարը Զօր. Գ. Նժդեհ, որ այն ատեն դեր տեղակալ էր : Զօրավարը ունէր քաջութեան բազմա-



ՄԱԿԵԴՈՆՕ - ՕՏՐԻՆՑԻՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՔԸՐՃԱԼԻԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ :

Մէջտեղը՝ Գ. Նժդեհ, որ իբրեւ դեր-տեղակալ մասնակցեցաւ Ռոստոքեան կրօններուն :

Թիւ շքանշաններ, զորս իրաւամբ կը կրէ եւ պէտք է որ հպարտութեամբ կրէ, որովհետեւ միշտ եւ ամէն տեղ կռուի առաջին գծին վրայ էր : Ժամանակները ստիպած են զինքը, որ ըլլայ լռակեաց եւ համեստ, հակառակ ունեցած իր բարձր սւաման :

«Շարք էր անյաջողութեանց պատճառով, անոր հայրենիքը չէ տեսած ազատութիւն, եւ ան իր մէջ կը պահէ չիրականացուած իտէալներու մեծ վիշտը :

«Պէտք է խոստովանինք, որ Հայաստան ունի գէշ ճակատագիր մը : Առանց կորսնցնելու իր հերոսութիւնն ու յոյսերը ան տուաւ անհամար զոհեր եւ չքաջողեցաւ բան մը ձեռք բերել :

«Անոնք, որոնք կը զոհարեւրէին եւ ստիպուեցան զէպքերու բերումով թողուլ իրենց հայրենիքը, կը կրեն եւ պիտի կրեն անոր տըխուր պատկերը :

«Անոնք, որ կը ճանչնան այդ հերոսները, պէտք է տան անոնց այն բոլոր պատիւները, որոնք կը տրուին իսկական մարտիկներու» :

Զօր. Գարեգին Նժդեհ իր սպառանկեկան տարիքէն ջերմօրէն սպահեց իր քաղաքական վաղեմի հաւատքն ու համոզումները՝ հայկական դատին եւ այդ ճակատին վրայ հայ ժողովուրդի դիրքի մասին: Մնաց մանաւանդ կատաղօրէն հակաբոլշեակ եւ այս անգամ իր պայքարը մղեց չարաղէտ բոլշեակի դէմ, հրապարակով եւ մամուլով:

Զանգեղուրի հերոսը, որ նախ այնքան քաջութեամբ ու արհամարհանքով կեցած էր՝ համայնավարներուն դէմ, եւ ապա արտասահմանի մէջ, հայ երիտասարդութիւնը աղղայնօրէն բոցավառող հետոր էր. իր կեանքի վերջին շրջանին դարձած է քաղաքական գործիչ:



ՖԻԼԻՊԵԻ ՅԵՂԱԿՐՕՆՆԵՐԷՆ ԽՈՒՄԲ ՄԸ
(Նկարուած 1943ի գարնան)

Սկիզբն էր դառն փորձառութեան մը ու կարծէք ամենէն աւելի ինք կը զգար այդ: Անձկութեան արտայայտութիւն մը կը մատնէր հողեփիճակը:

1942-ի ձմեռը ահաւոր էր Եւրոպայի մէջ. երեք սարսափելի աղէտներ ծանրացած էին՝ մանաւանդ արեւելեան երկիրներուն վրայ. պատերազմ, աննախընթաց ցուրտ եւ սով: Յունաստանի մէջ, մասնաւորաբար, մարդիկ կ'ապրէին մեծ մասով, օրուան հացը գտնելու անսովոր, անդուրթ պայքարի մը մէջ:

Այդ աղիտալի մթնոլորտին մէջ, Զօր. Գարեգին Նժդեհ կ'եր-

Թայ Թեազոնիկէ (Սելանիկ), իր մտերիմ Հայկ Ասատուրեանին հետ : Այդ ճակատագրական օրերուն, մարդիկ կ'ուզէին յստակ ձեւեր ու միջոցներ, փրկութեան մը համար, որ որեւէ ժամանակէ աւելի կը վերաբերէր Փիղիքական դոյութեան : Զօր. Նժդէհ կը խօսէր դադափարական կառուցումներու մասին, որոնք ուժի հասնելու ճիգերով պէտք է կատարուէին մեր մէջ իսկ, ազգային վերանորոգման մը համար . . . :

Ան դացած էր ըսելու, թէ ամէն նիւթական դժուարութիւն կ'անցնի, բայց դադափարականը կը մնայ, իր աւելի դժուար հարցականներով . . . : Նժդէհ հաւատաւոր բանրերն էր Հայ Ոգիի ուժին, որուն գերազոյն կարողութեանց կը հաւատար : Կը հաւատար, թէ Հայը անսլարաւելի դոյութիւն մըն է, եւ ոչ մէկ արդելք անընկճելի էր հայութեան համար, եթէ վճռէինք մոլեռանդ հայեր ըլլալ :

Վերջին համաշխարհային պատերազմին, գործեց հակախորհրդային ճակատի վրայ : Երկար ժամանակ մնաց Պերլին, անցաւ մինչեւ Խբիմ եւ Հիւսիսային Կովկաս եւ երբ գերման նահանջը սկսաւ, իր գործակիցներուն հետ վերագարձաւ Պուլկարիա, 1944-ի սկիզբները, իր ընտանիքին մօտ :

Նժդէհ օդտակար հանդիսացաւ խորհրդային բանակէն բազմաթիւ հայ ռազմագերիներու, որոնց համար իր անունը հայրենական խորհրդանիշ մըն էր արդէն : Կը խանդավառէր դանոնք պայքարը շարունակելու, կարճ իր բռնակալութեան խորտակման համար : Ներկայ դռնուեցաւ ամէն տեղ, ուր կը կանչուէր, յանուն պարտականութեան, յանուն հայրենիքին ու իր ժողովուրդին :

ԵՐԿՐՈՐԴ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՀ

Ռումանիոյ խորհրդայնացումէն ետք, 1944-ին, Կարմիր Բանակը եկած հասած էր Ռումանիոյ հիւսիս-արեւելքը, մինչեւ Եաշ, եւ կրնար մէկ սստումով իջնել հարաւ, ճեղքել Դանուբը եւ խուժել Պուլկարիա :

Այդ օրերուն Սոֆիա կը գտնուէին Զօր. Գարեգին Նժդէհ, Օննիկ Մխիթարեան, Տոքթ. Հայկ Ասատուրեան, Արամ Յակոբեան, Ներսէս Աստուածատուրեան եւ ուրիշներ, որոնք մնացին մինչեւ Սեպտեմբեր, երբ արդէն սկսած էր գերմանական նահանջը եւ Կարմիր Բանակն ալ հասած՝ Դանուբի եզերքները . . . :

Դեռ կարմիր բանակը Դանուբը չանցած, Սեպտ. 9-ին պայթեցաւ Պուլկարիոյ համայնավար ապստամբութիւնը: Ու պայթեցաւ այնքան անակնկալօրէն ու յանկարծակի, որ թռչուն մը անգամ չկրցաւ փախիլ երկրի սահմաններէն: Եւ բոլորը ինկան թակարդի մէջ: Պայթած էր աղէտը բոլորի գլխուն: Ոչ մէկ փախուստի ճամբայ կար:

Նորահաստատ համայնավար կառավարութիւնը, 5-6 ամիս ոչ մէկուն չէր մօտեցած, հայկական շրջանակներու մէջ, յայտնօրէն թաքնուածներուն կեղծ վստահութիւն ներշնչելու համար: Ապա հետապնդումը սկսած էր միայն Զօր. Գ. Նժդեհի դէմ: Հայանուն տականքներ, որսկան շուներու պէս մէկ տեղէն միւսը կը նետուէին Նժդեհի թաքստոցը երեւան հանելու համար, բայց չէին կրնար գտնել:

Ի վերջոյ Նժդեհ կը ստիպուի անձամբ յանձնուիլ կարմիր իշխանաւորներուն, որպէսզի կարենայ փրկել իր միւս ընկերները:

Ռուս համայնավարները ձերբակալելով Նժդեհը, կարճ ժամանակ մը բանտարկեցին Սօֆիայի մէջ, ապա փոխադրեցին Մոսկուա և այնտեղէն ալ՝ Երեւան:

Զօր. Գարեգին Նժդեհի երկրորդ ձերբակալութիւնն էր այս, որպէս համայնավարութեան թիւ մէկ թշնամի: Անոր «դատավարութիւնը» տեղի կ'ունենայ Հայաստանի մայրաքաղաքին մէջ, ուր ամիսներով հարցաքննութեան կ'ենթարկուի քաղաքային, ստիկանական եւ զինուորական իշխանութեանց կողմէ:

Նժդեհի պատժական վճիռը կը տրուի Երեւանի մէջ տեղի ունեցած «դատավարութենէ» մը ետք: Ո՛չ Նժդեհ եւ ո՛չ ալ ուրիշ որեւէ հայ բանտարկեալ դատարան չեն ներկայացուած: Բաղձաթիւ անգամներ հարցաքննուած են, առանց դատարան առաջնորդուելու:

Հայաստանի մէջ իսկական դատարանը Չեկան էր եւ դատաւորները՝ չեկիստները: Դատի կամ դատարանի գոյութիւնը խարկանք էր, երեւոյթները փրկելու համար: Անոնք այդ հարցաքննութեան թուղթերը կ'ուղարկեն Մոսկուա, ուրկէ կը հրահանուէր վերջին եւ վերջնական վճիռը, զոր ենթականերուն կը յայտնէին առ ի գիտութիւն...:

Նժդեհի «դատավարութիւնը» կը սկսի 1945-ի սկիզբները եւ կը տեւէ մինչեւ 1948-ի աշունը: Կը դատապարտուի 25 տարուան բանտարկութեան:

Երեւանի բանտին մէջ Նժդեհ կը մնայ երկուքուկէս տարի: Կը պահեն այնքան խիստ մեկուսացման մէջ, որ նոյնիսկ տեղեակ չ'ըլլար, որ մէկ տարիէն աւելի իր դիմացի խուցին մէջ կը գտնուէր իր կուսակցական մէկ ընկերը: 25 տարուան բանտարկութեան վճիռը յայտնելէ ետք, Նժդեհը կը փոխադրեն Ռուսիոյ հիւսիսը Սիպերիա գտնուող Վլադիմիրո քաղաքին բանտը:

Այն օրերուն Զօր. Նժդեհի կիներ՝ Եփիմէն Միայեալ Նահանգ-

ներէն ընկ. Յովակիմ Խուչպուլեանին կ'ուղարկէ նամակ մը, զոր հոս կ'արտագրենք նոյնութեամբ:

Բաւիիֆէնի, 13-8-1947

«Սիրելի եղբայր Խուչպուլեան»

«Ստացայ Ձեր նամակը, զրուած Մայիս 20-ին. ես ստացայ Օդոստոս 4ին, Տիկին Վերժինին նամակին մէջ, չգիտեմ ինչ էր պատճառը որ ուշ ստացայ: Իմ վիճակը Ձեզ յայտնի է, իմ կորուստը շատ մեծ է, եւ շատ նեղութեան մէջ եմ: Ինչպէ՛ս չըլլամ, ահա երեք տարին պիտի լրանայ Հոկտեմբեր 10-ին, որ ոչ մի լուր ունիմ իմ կեանքի



ԶՕՐ. ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ ԵՒ ՅՈՎԱԿԻՄ ԽՈՒՇՊՈՒԼԵԱՆ

ընկերոջմէս, ոմանք կ'ըսեն թէ ողջ է, Ուրալները կ'աշխատի եւ ուրիշներ այստեղէն, չգիտեմ որքան իրաւ է :

«Դուք գրեր էք, որ Ձեզի գրեմ առանց քաշուելու, թէ ինչի՛ պէտքութիւն ունիմ : Եթէ կարելի է ինձ գրամ ուղարկէք : Ես հոս դացի պանքան, եւ հարցուցի ի՞նչ միջոցով կրնան ինձ օգնել Ամերիկայէն, անոնք պատասխանեցին թէ այստեղի Դըրկովսքա պանքայի միջոցաւ կրնան գրամ ուղարկել :

«Եթէ գրամի խնդիրը շըլլայ, այն ատեն ճերմակեղէն :

«Պիտի սպասեմ Ձեր նամակին : Կը ներէք Ձեզ տուած ձանձրութեանս : Յարգալից բարեւները մեր բոլորից՝ Ձեզ :

«Կը յուսամ, որ դիտէք, թէ մանչ դաւակ ունիմ, այլևս 11 տարեկան է, հոս դպրոց կ'երթայ, իմ յիշատակը . . . : Մանչուկս ձեռքերնիդ կը համբուրէ, երբ վերադառնանք Սոֆիա, կը խոստանամ Ձեզ ուղարկել նրան լուսնկարը :

«Բարեւներ բոլոր ծանօթներուն :

Յարգանքներով՝
ԵՓԻՄԷ Գ. Ն.

Ընդհանրապէս Պալքաններէ տարուած բոլոր հայ բանտարկեալները կ'ուղարկուէին աքսորավայրեր, ուր ծանր աշխատանքներ կատարել կու տային : Բացառութիւն կը կազմեն միայն Նժդեհը եւ Երեւանի բանտի իր խուցի դիմացը բանտարկուած ընկերը, զորս մինչեւ վերջ ալ կը պահեն բանտերուն մէջ :

1952-ին Նժդեհն ու իր ընկերը նորէն կը տանին Երեւանի բանտը, ուր կը մնան շուրջ մէկ տարի. հարցաքննութիւններն ու «մտերմական» գրոյցները իրարու կը յաջորդեն : Աւելի ուշագիւր եւ յարգալից վերաբերում ցոյց կը արուի : Նոյնիսկ օր մը ներքին գործոց մինիստրը այդ երկու ընկերները իր ինքնաշարժով պտոյտի կը տանի Երեւան եւ շրջակայքը՝ ի հարկէ ամէն ինչ գիտելով ինքնաշարժի ապակիներէն . . . :

Երկու բանտարկեալներուն համար ալ դադտնի կը մնայ Երեւան փոխադրուելու եւ նման վերաբերում ցոյց տալու նպատակը : Միայն երբ կը մեռնի Սթալին, երկուքին ալ կրկին անգամ կ'ուղարկեն Վրադիմիրոյի բանտը, առանց որեւէ լուսարանութիւն տալու :

Սթալինի մահէն վերջ, բոլոր աքսորական ու բանտարկեալ օտարահպատակները արժանացան ընդհանուր ներման եւ վերադարձուեցան իրենց վայրերը : Գ. Նժդեհն ալ, պուլկարահպատակի իր հանգամանքով, պէտք էր օգտուած ըլլար այդ ներումէն, բայց չօգտուեցաւ : Իր մահը ցանկացող բոլշեւիկ իշխանաւորները չարտօնեցին անոր վերադարձը : Այս անգամ Նժդեհը կը տանին Թայշէտ քաղաքը, որ կը գտնուի Սիպերիա՝ Պայքալ լիճին հիւսիս արեւմուտքը, կլիմայի տեսակէտով մանաւանդ շատ աննպաստ պայմաներու մէջ, որոնց

չկրցաւ դիմանալ՝ տարիներու տառապանքէն, յուզումներէն եւ առանց անոնց ալ արդէն իսկ հիւանդկախ իր առողջութիւնը:

Բանտին մէջ Նժդեհ ինքզինք կը պահէ յեղափոխականի վայել բարձրութեան վրայ: Կրցածին շափ օգտակար կ'ըլլայ բախտակից ընկերներուն եւ կը պաշտպանէ անոնց իրաւունքները: Այդ գեանի վերայ նոյնիսկ անդամ մը, որպէս բողոք, հացադուլ կը յայտարարէ: Մինչեւ վերջ ալ բանտի ամենէն հեղինակաւոր անձը կը մնայ:



ՆՃԴԵՀԻ ՏԻԿԻՆԸ՝ ԵՒՓԻՄԷ ԵՒ ՈՐԴԻՆ՝ ՎՐԷԺ

Եւփիմէ տարիներով տառապեցաւ բանտի եւ ախտաւառի մէջ, ու Նժդեհի մահէն ետք մահացաւ Պուլկարիոյ մէկ խուլ անկիւնը, ամէն բանէ զրկուած: Ողբերգութիւն մը եղաւ խեղճ կնոջ կեանքը, աւելի քան տասնամեակ մը, պարզ այն պատճառով, որ Նժդեհի կիցն էր:

Սակայն Նժդեհի փառապատիւը կը կազմէ կուսակցականի իր կեցուածքը: Նժդեհ քննիչներուն կը ներկայանայ որպէս հաւատաւոր դաշնակցական եւ կորովի կը պաշտպանէ Դաշնակցութիւնն ու դաշնակցական զաղափարները: Ան հպարտօրէն կը պատասխանէ. «Ոչ մէկ ուժ կրնայ իմ հողիէս ու սրտէս դուրս հանել Դաշնակցութիւնը»:

Յաւերու տեսակը ճաշակած ու դառնութեան բաժակը ցմբուր խմած Նժդեհը, վստահօրէն զգացած էր, թէ պիտի մեռնէր: Այդ կը

հաստատել կտակի համազօր իր ցանկութիւնները. — եղբօրը յանձնել իր մարմինը, որպէսզի թաղուի Հայաստանի մէջ, ու յանձնել իր ձեռագիրները, զգեստն ու ժամացոյցը: Բողջելիկները եղբօրը յանձնեցին միայն զգեստն ու ժամացոյցը:

Գարեգին Նժդեհ իր համոզումներէն իսկ բխող կեցուածքով, մնաց մաքուր եւ անշահախնդիր, իրրեւ մարդ: Նիւթին ու դրամին հետ երբեք գործ ու հաշիւ չունէր: Քսակով մնաց միշտ աղքատ եւ չահ չփնտռեց մինչեւ անգամ իր զրջի վաստակին մէջ: Կուշտ մնալու համար սշատառ մը հաց. — ասկէ անդին չանցաւ բնաւ իր նիւթական «շահախնդրութիւնը»: Միշտ սակաւատէտ՝ առանց նիւթականի:

Ի՞նչ մեղք ունէր Նժդեհ, որուն կեանքը երկարամեայ նուիրում մը եղաւ իր ժողովուրդին թէ՛ ռազմական ճակատներու եւ թէ խաղաղ ու բնականոն պայմաններու մէջ: Կռի՛ւ էր հայրենաքանդ բոլջելիզմի դէմ հայրենիքի մէջ եւ կռուեցաւ ան առիւծի խոյանքով: Կռուեցաւ՝ իրրեւ հայրենասիրական պարտականութիւն: Կռուեցաւ՝ շարունակելու համար ժողովրդային Փետրուարեան յաղթական ապրտամբութիւնը Լեռնահայաստանի մէջ: Կռուեցաւ՝ կանխելու համար Աւիսներու եւ Աթարրէկեաններու նոր ոճիրները վերապրող հայ ղեկավարութեան եւ մտաւորականութեան գլխուն: Կռուեցաւ՝ պարտագրօրէն, արդարօրէն, սանձելու համար եղբայրասպան բոլջելիկներու աբիւնաժարաւ ախորժակները:

*
**

Գրուեցաւ, որ զօր. Գ. Նժդեհի նախաձեռնութեամբ եւ անոր ցեղահար շունչէն, 1933 թ. Ամերիկայի մէջ ծնունդ առաւ ցեղակրօն շարժումը: Նոր վարդապետութեան մարդա-ընկերաբանական խորունկ ըմբռնումները եւ շարժումի արագ ծաւալումը, ստեղծած խանդավառութիւնը ապացոյց են, որ Յեղակրօնութիւնը նոր սերունդին համար «փրկութեան գօտի» մըն է:

Նժդեհ երբ Ամերիկա եկաւ, կարգ մը շրջանակներ կ'ըսէին, թէ հայերը սոված աղղ մըն են, թէ հայերը կը պատկանին մոնկոլական ցեղին, եւ որոշ տեղեր նոյնիսկ եթէ իմանային, որ այս անձը հայ էր՝ իրենց հետ դործառնութիւն չէին ըներ: Ահա այդ օրերուն Նժդեհ հրատարակել տուաւ փոքր պրոշիւր մը, յայտնելով թէ արիական ցեղի կը պատկանինք:


Ինչ որ ըսուի ու զրուի իր մասին, արեւի պէս պայծառ ճըշմարտութիւն մըն է, որ ցեղակրօնութիւնը ոչ միայն հայութեան եւ Հայաստանի դատին, այլ նաեւ անոնց արդար իրաւունքները հետապնդող կուսակցութեան համար անհրաժեշտութիւն մըն է:

Հ. Յ. Դաշնակցութիւնը սկիզբէն իսկ եղած եւ մինչեւ յաւիտ-

եան պիտի մնայ հայ ժողովուրդի ցեղային ուխտը: Ուրիշ կարգի սոփեսաութիւններ ո՛չ հայոց պատմութիւնը կրնայ հանդուրժել, ոչ ալ դաշնակցական ուխտի նահատակներու սրբազան յիշատակը:

Շնորհիւ Գ. Նժդեհի ոգեշունչ խօսքին եւ հմայքին, Հ. Երիտասարդաց Դաշնակցութիւնը այսօր Ամերիկայի մէջ դարձած է ազգային այն ամուր ապաստանը, ուր մանող երիտասարդը ապահով կը զղայ ինքզինք, հողիով հայ, դադափարականով հարուստ եւ զոհարերութեան ոգիով հպարտ:

Իր զոյութեամբն ու զօրծունէութեամբ, Հ. Ե. Դաշնակցութիւնը, ոսկեղէն կապը կը հանդիսանայ, Հ. Յ. Դաշնակցութեան նըւիրական զօրծին ու ոգին հետ: Իսկ Նժդեհի պատրաստած սերունդ-



ՅԵՂԱԿՐՕՆՆԵՐՈՒ ԽՈՒՄԲ ՄԸ՝ ՍՊԱՐԱՊԵՏԻՆ ՀԵՏ

ները, իրրեւ զանդուած, շարունակութիւնը իրենց հայրերուն ու մայրերուն բազմութեան, նոյն ձգտումներով եւ նոյն հաւատքով, այսօր կը կազմեն մասնաւորաբար ամերիկահայութեան ազգային կեանքի ողնասիւնը, իրենց ապատատենչ հայու զոհարերող կեանքով:

Եւ այսօր հազարաւոր հայ երիտասարդներ անցած են Յեղակրօն կազմակերպութեան դրօշին տակէն, իրենց ժողովուրդին ծառայելու ոգիով թրծուած, այն խորին համոզումով, թէ ծառայելով հայ ժողովուրդին, ծառայած կ'ըլլան Արդարութեան ու Ազատութեան դատին, ծառայած կ'ըլլան քաղաքակրթութեան, որուն բարձրագոյն բարոկայանը՝ Արդարութիւնը պէտք է ըլլայ:

Ամերիկահայութիւնը խոր ցաւով կ'իմանայ Գարեգին Նժդեհի

մահուան դոյժը, որ կը ցնցէ մասնաւորաբար ցեղակրօն երիտասարդութիւնը: Արդէն մահուրնէ բաւական ետք է, որ լուրը իմացուցաւ արտասահմանի մէջ:

Ի յիշատակ Յեղակրօն Ծարժման հիմնադրին, Հ. Ե. Դաշնակցութիւնը նոյն տարուան 27 Հոկտեմբերին կազմակերպեց հոգեհանդիստ եւ հոգեճաշ: Հոգեհանդիստը տեղի ունեցաւ Մեծագոյն Պոսթրնի Ս. Ստեփաննոս եկեղեցին, ուր ներկայ էր հոծ բաղմութիւն, յարգելու համար յիշատակը անոր՝ որուն կեանքին հիմնական, գրեթէ միակ նպատակը Հայաստանի ու հայութեան ծառայութիւնն էր

Եկեղեցական արարողութենէն ետք, «Հայրենիք»ի սրահին մէջ հոգեճաշ մը տրուեցաւ Հ. Ե. Դ. ի կողմէ: Հաւաքոյթին բացումը կը կատարէ Վ. Գարպասեան, որ ամփոփ կը յիշէ հանդէսին նպատակը, եւ յորդանքի խօսքով կ'արտայայտուի Գ. Նժդեհի ազգային, կուսակցական գործունէութեան մասին: Ապա կը հրաւիրէ Ճէյմս Թաշճեանը, որ ճառով մը կը ներկայացնէ Գ. Նժդեհը: Հայրենիքի մէջ, Նժդեհի ծանօթ կռիւնները յիշելէ ետք, Ճէյմս Թաշճեան մասնաւորաբար կը ծանրանայ Զանգեղուրի իր կռիւներուն վրայ: Ապա, անգրադառնալէ ետք Մ. Նահանգներու մէջ անոր աշխատանքներուն, կ'ըսէ. «Երբ Ամերիկա եկաւ, մեծ յեղաշրջում առաջ բերաւ հայ երիտասարդներու մէջ, եւ դանոնք մղեց ազգային կեանքի: Հիմնեց ցեղակրօն ու խտերը եւ հայ երիտասարդին ուղղեց նշանախօսք մը՝ «Լաւ նկարագիր, լաւ հայ»:

Երկրորդ ատենախօսք կ'ըլլայ Յովհաննէս Տ. Յովհաննէսեան, որ Հ. Ե. Դ. առաջին կեդրոնական Վարչութեան անդամակցած էր, եւ գործակցած Նժդեհին:

«Այսօր, ամերիկահայութիւնը մեծագէս երախտապարտ է Գարեգին Նժդեհին, որովհետեւ անոր շնորհիւ է, որ մեր երիտասարդութիւնը վերադարձուեցաւ մեր ժողովուրդին:

«Հ. Յ. Դ. գործիչ էր ան, եւ մեր կուսակցութեան ոգին բերաւ երիտասարդութեան: Զինուոր էր Հ. Յ. Դաշնակցութեան, եւ միշտ պատրաստ՝ ծառայելու: Ան ըսաւ սքանչելի խօսքեր մեր երիտասարդութեան: Յիշեցուց, որ Անիի Մայր Տաճարին վերեւ քանդակուած էր խաչ եւ առիւծ, այսինքն, քրիստոնեայ ըլլալ բայց եւ կոռուղ:

«Կ'ըսէր՝ թէ իշխան մը կայ ամէն հայու մէջ: Դաւիթ Բէկի ոգին ունէր, անոր ուժեղ, հայրենաշունչ ոգին: Համաստեղի «Սպիտակ Զիւլուր»ին մէջ յիշուած հերոսի մը ըմբոստութիւնը կը պատմէր. «Այս սրբատաշ քարերով ախոռ չեմ շիներ»: Ամբողջական սէր ունէր ժողովուրդին հանդէպ, եւ կ'ուզէր պայքարի առաջնորդել երիտասարդութիւնը:

«Այս մեծ զինուորը, մեծ հայրենասէրը ժառանգ ձգեց ձագուկները, Հ. Ե. Դաշնակցութեան ուխտերու հայորդիները, որոնք կը կրեն ազդեցութիւնը իր ողիին, մտածման եւ հայրենասիրութեան»:

Պօսելու կը հրաւիրուի Ճէյմս Մանտալեան, որ նոյնպէս Հ. Ե. Գ. ի առաջին կեդրոնական Վարչութեան անդամներէն էր եւ կազմակերպութեան մէջ երկար տարիներ գործած էր իբրեւ քարտուղար և խմբագիր :

Ան եւս կը պատմէ իր խոր տպաւորութիւնը Գ. Նժդեհէն, որուն հետ գործակցած էր, կազմակերպութեան հիմնադրութեան օրե-



**ՅՈՎԱԿԻՄ ԽՈՒՇՊՈՒԼԵԱՆ
ՆՃԴԵՀԻ ԿԻՍԱՆԴՐԻԻՆ ՄՕՏ**

Ան կրցաւ իր ժողովուրդին մէջ վառ պահել
իր սիրելի Սպարապետին յիշատակը

րուն : Շեշտը կը դնէ Գ. Նժդեհի մաքուր, անկողմնակալ նկարագրին, անաչառ եւ քաջ ոգիին վրայ : Անոր մղած ազատագրական հերոսամարտերուն անդրադառնալով, կը շեշտէ հոն նշմարուող բացառիկ հերոսական ոգին : «Կախարդող, ներշնչող էր իր խօսքը, եւ նոյնիսկ չհասկցողներ կ'ազդուէին անկէ» կ'ըսէ ան :

«Նժդեհ, — կը շարունակէ Ճ. Մանտալեան, — ազգային ինքնավստահութիւն ներշնչեց հայ երիտասարդութեան, տուաւ իտէպ մը անոր, սորվեցուց ճակատը բարձր պահել: Մենք երախտապարտ եւ շնորհակալ ենք իրեն»:

Վերջին խօսողը կ'ըլլայ Արթըր Կիրակոսեան, որ նոյնպէս անդամ եղած է Հ. Ե. Դ. ի առաջին Կեդրոնական Վարչութեան. ան եւս խոր հիացում կը յայտնէ Գ. Նժդեհի հանդէպ, զոր ուզած էր սպարապետ կոչել, դեռ առաջին օրերէն:

Ա. Կիրակոսեան կը յիշէ հայ երիտասարդութիւնը Ամերիկայի մէջ կազմակերպելու ի դորձ դրուած առաջին ջանքերը, որոնք սակայն, սկզբնական յաջողութենէ յետոյ, գրեթէ անելի յանդած էին: «Գ. Նժդեհ եկաւ, եւ յեղաշրջում բերաւ նոր սերունդին մէջ», կ'ըսէ:

«Ան կը խօսէր մեր պատմութենէն. — Մեծն Տիգրան Աշխարհակալ, վահագնեան ոգի, Վարդան զօրավար եւ այս հերոսական անուններէն սրտապնդիչ տրամադրութիւն կը ստեղծէր: Անմիջապէս կազմուեցան Հ. Ե. Դ. 24 մասնաճիւղեր, որոնք ինքնաբերաբար ցեղակրօն կոչուեցան, ապա շուտով կրկնապատկուեցան, եւ Բ. Պատգամաւորական Ժողովին արդէն 64 մասնաճիւղեր եղած էին: Նոյնիսկ ունէինք ոչ-դաշնակցական 400 երիտասարդներ մեր մէջ:

«Գ. Նժդեհ, — կը շարունակէ Ա. Կիրակոսեան իր ողբերիչ ճառով, — հերոսական թափով, «մեռնելու պատրաստ երիտասարդութիւն» կ'ուզէր, եւ անձնապէս ցոյց կու տար օրինակը՝ հիւանդ վիճակի մէջ իսկ հանդէսէ հանդէս վազելով, խօսելու համար»:

Այս արտայայտութիւնները հոս մէջբերեցինք, ամերիկահայ ազգայիններու իսկ խօսքերով հաստատած ըլլալու համար այն աշխատանքը, զոր կատարած է Նժդեհ՝ Մ. Նահանգներու մէջ, նաեւ ցոյց տալու համար այն խոր յարգանքը, սէրն ու ակնածանքը, զոր ամերիկահայութիւնը կը տածէր ու կը տածէ մեծ հայորդիին հանդէպ:

Վերոյիշեալ յարգանքի հաւաքոյթ — հոգեճաշը սկիզբ մըն էր միայն, ազգանշան մը:

Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան Ուխտերը Մ. Նահանգներու բոլոր շրջաններուն մէջ պատշաճօրէն տօնեցին եւ ոգեկոչեցին այդ մեծ կազմակերպութեան հիմնադիր, ազգային մեծ հերոս, անդուզական հոետոր եւ հայրենասիրութեան մարմնացում Գ. Նժդեհի յիշատակը:

Ա Ր Զ Ա Ն Ը

Սան Ֆրանսիսքոյէն Յովակիմ Խուչպուլեան, որ եղած էր Նժդեհի գործակիցը, իր Զօրավարին անունը յաւերժ պահելու մտահոգութեամբ կը յղանայ անոր արձանը կանգնելու դադափարը: Այս նպատակով նամակ մը կը գրէ Հ. Ե. Գ. Կեղրոնական Վարչութեան և կ'առաջարկէ՝ Զօր. Գ. Նժդեհի յիշատակը յաւերժացնելու համար, շինել անոր արձանը եւ կանգնեցնել Հայաստան Քէմփի երիտասարդներուն յատկացուած բաժնին մէջ, որպէս երախտագիտութեան ար-



ԱՐԹԸՐ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Կը խօսի արձանի բացման առթիւ

տայայտութիւն մը, ազգային ներշնչման աղբիւր այն տասնեակ հազարաւոր երկսեռ ամերիկահայ երիտասարդութեան կողմէ, որ վերջին տարիներու ընթացքին անդամ եղած է Հ. Ե. Գ. ի եւ ներշնչուած Նժդեհի քարոզած հայապահպանման եւ ազգային ազատագրութեան վեհ դադափարներով:

Հ. Ե. Դաշնակցութեան կեդրոնական Վարչութիւնը վերոյիշեալ առաջարկը կը տանի Յուլիոս Դ-ին Շիքակոյի մէջ դումարուած Պատգամաւորական Ժողովին, ուր բոլոր պատգամաւորները միաձայնութեամբ եւ ոգեւորութեամբ կ'որոշեն կանգնեցնել Նժդեհի արձանը Հայաստան Քէմփին մէջ: Հ. Յ. Դաշնակցութեան հովանաւորութեամբ, Յ. Խուչպուլեանի տարած աշխատանքով եւ Հ. Ե. Դաշնակցութեան աջակցութեամբ, կրտսեր եւ երէց ընկերներու նուիրատուութիւններով կ'իրագործուի կիսանդրին կանգնեցնելու ծրագիրը:







Յ. ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Կը խօսի արձանի բացման առթիւ

Նժդեհի աշխատանքին արդար հատուցում մըն էր այն ձեռնարկը, որ իրագործուեցաւ Պոսթընի մէջ, իր նահատակութենէն տարիներ ետք, իրրեւ յարզանք անոր անմոռանալի յիշատակին:

«Հայաստան Քէմփ»-ի Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան յատկացուած մասին մէջ բարձրացուեցաւ ողբացեալ ռազմիկի և դաշնակցական աննկուն գործիչին կիսանդրին, որուն բացումը կատարուեցաւ 15 Սեպտեմբեր 1964ին:

Հ. Ե. Դաշնակցութեան պաշտօնաթերթ «Հայրենիք» Շաբաթաթերթի խմբագիրներէն Ճէյմս Թաշճեան, որ խոր երախտագիտութեամբ կը յարգէ իր ուսուցչին յիշատակը, կ'ընէ բացման խօսքը եւ



Տեսարաններ՝ Նժդեհի արձանի բացման հանդիսություն

յուզումով կ'արտայայտուի անծանօթ գերեզմանի մը մէջ հանդէպ
նահատակ Նժդեհի գործին շուրջ: Ապա, ողբացեալի գործակիցներէն
Յովհաննէս Տէր Յովհաննէսեան եւ Համաստեղ, ժողովուրդի խան-
դավառ ծափերուն մէջ վար կ'առնեն կիսանդրին ծածկող քողը: Հայ-
րենիք այցելած հայրենակից Խաչիկ Կարապետեան Սիւնիքէն բերած
հողը կը սփռէ կիսանդրիին շուրջը, ապա յաջորդաբար խօսք կ'առ-
նեն Յ. Տէր Յովհաննէսեան, Հ. Ե. Դաշնակցութեան կողմէ Քենեթ
Պետրոսեան, Հ. Օ. Մ. ի Կեդրոնական Վարչութեան անունով տիկին
Սթելլա Ռստիկեան, գրագէտ Համաստեղ, Յովակիմ Խուշպուլեան եւ
Հ. Յ. Դ. Կեդրոնական Կոմիտէին կողմէ Արթըր Կիրակոսեան:



ՃԵՅՄՍ ԹԱՇՃԵԱՆ

Կը խօսի արձանի բացման առթիւ

Նժդեհի կեանքը եղաւ զոհողութիւններու շարք մը: Եղաւ զին-
եալ եւ գաղափարաբանական պայքարներու յաջորդականութիւն մը:
Զրկանքներու, տառապանքներու շարք մը:

Պատանի տարիքէն նուիրուելով ազգային-կուսակցական գոր-
ծունէութեան, մինչեւ մահ մնաց պատնէշի վրայ, ռազմադաշտի
պայքարէն անցնելով գաղափարական պայքարի մարդ:

Եթէ ուզենք հաշուեկշիռը ընել Նժդեհի կեանքին եւ գործու-
նէութեան, երկու կոթողային իրականացումներ կը ցցուին գլխա-
ւորաբար. — Զանգեզուր եւ ցեղակրօն շարժում:

Վրէժխնդրութեան զգացումը սրտին մէջ բոցաւառ՝ օտար ճակատի վրայ դարաւոր ոտխին դէմ դէնք վերցնելէ ետք, ապա Հայաստանի հողին վրայ կարգ մը վայրերու մէջ պատերազմելէ ետք, ի վերջոյ մասնաւոր առաքելութեամբ կ'ուղարկուի Չանդեզուր: Հայաշխարհի այդ շրջանին մէջ իր վարած կռիւները կը կազմեն իր կեանքի փառապատկը: Արդարեւ, իր ղեկավարութեամբ խումբ մը անձնագոհ մարտիկներու անտակարկ, պահանջին անհամապատասխան պայմաններով մարտնչումներու շնորհիւ է, որ Չանդեզուրը կրցաւ ոչ միայն զիմազրաւել թուրք - թաթարական դաւերը, այլ մանաւանդ աւելի՛ հայկական զիմազիծ ստացաւ, մաքրագործուելով



ՀԱՄԱՍՏԵՂ՝ կը խօսի արձանի բացման առթիւ


տատասկներէն, «փուշ»երէն եւ կցուեցաւ Հայաստանի հանրապետութեան: Եթէ այսօր, Չանդեզուրը մաս կը կազմէ Հայաստանի, այդ արդիւնք է Հ. Յ. Դաշնակցութեան վարած քաղաքականութեան, որուն առաջնորդը հանդիսացաւ Նժդէհ:

Արտահայաստանի մէջ սիրտը բարախեց Հայաստանով, Հայաստանի համար: Հրապարակեց եւ դատապարտեց թուրք - բուլղերիկեան դաւերը՝ Հայաստանի ու հայութեան դէմ: Հայապահպանման գլխաւոր կռուան նկատեց ազգային առողջ գիտակցութիւնը եւ ջանաց այդ ճամբով դաստիարակել ամերիկահայ նոր սերունդը: Այդ գործերակերպին հետեւանքով, եղաւ հիմնադիրը ցեղակրօն շարժման, որուն շնորհիւ բազմահարիւր ամերիկահայ երիտասարդ - երիտասարդուհիներ ազատեցան ստոյգ ձուլումէ:

Ու նոյն այդ ամերիկահայ սերունդը գիտցաւ յետ մահու տուրքը տալ Նժդէհին, կանգնելով իր կիսանդրին:

СХЕМА

РАСПОЛОЖЕНИЯ НАСТЕВ
ГРУЗИИ, АРМЕНИИ И БАНД В ТЫЛУ АРМИИ
К 25 АВГУСТА 1920 Г.



Исполнитель По Отделу Штаба Кларк
В. В. Варакно
Высший Комиссар В. Таракчан
Помощник Разведывательного
Отделения
А. Ш.

- 1 - Դիւիզիաներու գորատեղեր դիւիզիայի գունդ, շրջան:
- 2 - Զրահապատ զնացիներ.
- 3 - 1) Ազատամարտ:
- 1) «Մահ կամ ազատութիւն»:
- 2) ...վարդան:

Երկրորդ մաս

ՆՇԽԱՐՆԵՐ

ՆԺՊԵՆԷՆ

Յետագայ էջերուն մէջ կու տանք Նժդե-
հէն հատընտիր գրութիւններ:

Այդ գրութիւնները կը շօշափեն Զանգե-
զուրի մէջ իր ղեկավարութեամբ տարուած
պայքարէն կարգ մը դրուագներ, նաեւ այդ
պայքարին բնոյթն ու նպատակը բացատրող
բաժիններ:

Կան նաեւ գաղափարաբանական գրու-
թիւններ, առնուած իր լոյս տեսած գրքերէն:
Ընթերցողը պիտի նկատէ, որ այս երկրորդ
սեռի գրութեանց առանցքը կը կազմեն Հայն
ու Հայաստանը, բացառաբար: Նժդեհի համար
ցեղն է, ցեղային հպարտանքը, որ պիտի հան-
դիսանայ ազգային վերապրումի, ազգապահ-
պանման հիմնական եւ գրեթէ միակ կոռուանը:
Իրեն համար ցեղային գիտակցութիւնն է, որ
օտար ամբարձու վրայ հայ երիտասարդութեան
փարոսը պիտի հանդիսանայ՝ խուսափելու հա-
մար ընկլուզող ալիքներէն ու խարակներէն:

Պատկերներով, օրինակներով, յաճախ
բարձրասլաց երեւակայութեամբ ու թռիչքնե-
րով, միշտ նոյն կորիզն է իր մտածումներուն
առարկան. — Յեղակրօնութիւն:

ԻՆՉՈՒ
ՊԱՅՔԱՐԵՑԱԻ
ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԸ

Լեոնահայաստանի ինքնապաշտպանողական երկարատեւ ու արիւնալի խոյանքը դուրսէ անխմաստ թուէր օտարներուն, մասնաւորապէս բուլղերիկներուն, որոնք քաղաքական միամտութիւնը ունէին հաւատալու եւ հաւատացնելու, որ ոչ թէ միայն իրենց ցնորական վարդապետութիւնը, այլեւ յետադիմական համիսլամականութիւնը՝ յանձին քեմալական ջարդարար հորդաներու, կոչուած է բարերարելու, փրկելու մարդկութիւնը: Սակայն հայ ժողովուրդին համար, որ անբախտութիւնը ունեցած է մօտէն ճանչնալու եւ չափելու՝ մէկէ աւելի անգամներ, իր գերեզմանափորը հանդիսացած, տարամերժ համիսլամականութեան արժէքը, մեր դոյամարտը քաղաքականապէս աւելի քան իմաստալից էր:

Լեոնահայաստանի հայութեան և անոր ինքնապաշտպանութիւնը վարողի համար միեւնոյնը չէր, թէ ո՞ր հանրապետութեան մաս պիտի կազմէր Սիւնիքը՝ Հայաստանի՞ թէ Ստրպէյճանի:

Սակայն անոր համար գրեթէ միեւնոյնն էր, թէ քաղաքական

ինչպիսի ցուցանակ կը կրէ Ատրպէյճանը — Մուսաւաթական թէ խորհրդային :

Մեր կռիւը չէր մղուեր այս կամ այն կուսակցութեան կամ դասակարգի դրօշի տակ : Ան ուղղուած չէր խորհրդային իրաւակարգին դէմ :

Հայկական լեռնաշխարհը Ատրպէյճանին կցելու տարիներով կրկնուող փորձերը — ահա թէ ի՞նչն էր մեր բազուկը զինել եւ մեզ լեռները հանել :

Աշխարհ գիտէ, որ Սիւնիքի կռիւներու պատմութիւնը աւելի հին է, քան կարմիրներու դոյութիւնն Անգրիովկաս : Գաղտնիք չէ ե՛ւ այն, որ մենք Սիւնիքի, Գողթանի եւ Ղարաբաղի մէջ զուտ հայ բուշելիկեան ճակատներ չենք ունեցած : Խորհրդային զօրքերը՝ ոտք դնելով Ատրպէյճան՝ զօրացուցին մեր աղտիւ թշնամիները — թաթար եւ տաճիկ, որոնք անպաշտօն կերպով, բայց փաստօրէն վաղուց թըշնամական գործողութիւններ սկսած էին հայ ժողովուրդի դէմ :

Նուրի եւ Խալիլ փաշաները, Էտիֆ եւ Խալիլ բէյերը, իրենց յենարան ունենալով Զիրբայիլ — Կարեազինը արեւելքէն, Օրտուբաթ — Նախիջևանը հարաւ-արեւմուտքէն, երկրորդ տարին էր, որ Կաշուիէն դուրս կու գային՝ Սիւնիքի հայութեան գերեզմանի վրայով կամուրջ ձգելու Ատրպէյճանի եւ Տաւկաստանի միջեւ :

Մկսուած յարձակումներուն աւելի սխտեմաթիկ բնոյթ եւ մեծ թափ տուաւ 1919 Հոկտ. 29ին Տաւկաստանի եւ Ատրպէյճանի միջեւ կնքուած պաշտպանողական եւ յարձակողական դինակցութիւնը : Նրապատակը կը մնար նոյնը՝ մեր ժողովրդի խոշոր մէկ մասի բնաջրնցմամբ տէր դառնալ Գողթանի, Սիւնիքի բնական ամրութիւններուն, մշտական ահի ու սարսափի տակ պահելու համար մեր մանուկ հանրապետութիւնը : Եւ Ատրպէյճանի դէպքերը դահալիթող, խորհրդայինացումը ոչ այլ ինչ էր եթէ ոչ քաղաքական խաղ մը՝ կատարուած օսմանեան փաշաներու կողմէ՝ յանուն իրենց մերձ-արեւելեան պանիսլամական նպատակներուն :

Արեւելքի առաջին խորհրդային հանրապետութեան կառավարութիւնը, յանձին Ն. Նարիմանովի, բոլշելիզմի դիմակին տակ, շարունակեց, ինչպէս եւ կը սպասուէր, Մուսաւաթի գերազանցօրէն ազգային քաղաքականութիւնը : Բազուի համիսլամականները իրենց ազգային հարստութիւնը, թեքնիք միջոցները՝ դէնք, ռազմամթերք, կարմիրներէն փրկելու համար, որ առաջ զօրացրման ենթարկեցին Մուսաւաթական բոլոր զօրքերը : Այդ խորամանկ խաղով անոնք յաջողեցան Մոսկուայէն կորզել նաեւ Բազու ժամանած ռուսական կարմիր զօրքերը Խորհրդային Ատրպէյճանի բանակը յայտարարելու ի-



բաւուները: Այսպիսով իրեն ենթարկելով ամբողջ XI բանակը, IX բանակի մէկ խոշոր մասը, պանխալամականներու եռապետութիւնը յանձին Նարիմանովի, Սալիլ փաշայի եւ Կարայեւի, գործի կ'անցնի եւ ամենակարճ ժամանակի ընթացքին կու տայ իրական ապացոյցներ, որ ինքը աւելի խելօք է եւ ոչ պակաս ազդասէր, քան Մուսաւաթը:

*
*
*

Կը սկսի Սիւնիքի ողբերգութիւնը:

Մօտ ամբողջ տարի մը, ուսու, թուրք եւ թաթար հորդաները օսմանեան փաշաներու եւ անոնց ձեռքին կոյր գործիք դարձած կարմիր հրամանատարական կազմի ղեկավարութեամբ, իրենց տրամադրութեան տակ ծովային թէ ցամաքային հաղորդակցութեան միջոցներ ունենալով հանդերձ, Տաճկաստան եւ Հնդկաստան տանող երեւակայական ճանապարհները կը փնտռեն Սիւնեաց լեռներուն վրայ:

«Ընկեր մարտիկներ, — կը դոտար այդ օրերուն Կարմիր Բանակի օրդաններէն(*) մէկը, անխնայ դարկէք սպիտակ Նժդեհներուն, որոնք կը յարձակին երիտասարդ հանրապետութեան վրայ: Ամբարցընե'նք կարմիր Հոկտեմբերը Արեւելքի մէջ:

Ահա թէ ի՞նչ կ'ըսէ նաեւ կոմունիստական կուսակցութեան Անդրկովկասի ազխտացիոն բաժանմունքի օրդաններէն մէկ ուրիշը. —

«Խորհրդային Ռուսաստանը Լեռնահայաստանի հետ հաշտութիւն կնքած է: Ռուսաստանի հակայեղափոխութեան վերջին յենարան Վրանդելը ջախջախուած է: Այժմ կոմունիստական յեղափոխութեան ուշադրութիւնը ուղղուած է դէպի Արեւելք, մասնաւորապէս Տաճկաստան, որտեղ յեղափոխական շարժում է սկսուած քեմալականներու ղեկավարութեամբ ընդդէմ անդլիական, գերմանական եւ ֆրանսական կապիտալիստներու: Խորհրդային Ռուսաստանը, որպէս պաշտպան կեղեքուող ազգերու, պէտք է պաշտպանէ եւ պաշտպանելու է Տաճկաստանի ազատագրական շարժումը: Ատոր համար ալ Խորհրդային Ռուսաստանը պէտք է ունենայ մշտական եւ անմիջական կապ Տաճկաստանի հետ, որուն ճանապարհը Զանդեղուրն է»:

Ահա եւ XI Կարմիր Բանակի քաղաքական բաժանմունքի կողմէ հայ աշխատաւորութեան ուղղուած թոուցիկ-դրութեան մը հետեւեալ բնորոշ տողերը. —

«Քեմալը միեւնոյն ժամանակ կ'աշխատի իր բանակը միացնել Ռուսաստանի եւ Ատրպէյճանի կարմիր բանակներուն, որպէսզի ընդհանուր ուժերով ջախջախե'նք անդլիական, ֆրանսական եւ միւս՝ արեւելքի ժողովուրդներուն ճնշող կապիտալիստները: Ահա ասոր համար է, որ բուրժուական կուսակցութիւնները՝ Հ. Յ. Դաշնակցու-

(*) «Կարմիր Աւանգարդ», քիւ 56, 1920 թ. Նոյեմբեր:

Թիւնն ու ուրիշներ, այդպէս տենդորէն կ'աշխատին Խորհրդ. Ատրըպէյճանի գաւառներուն մէջ ապստամբութիւն առաջացնել(*): Մեր բանակն ու Քեմալը բոլոր ազգութիւններու աշխատաւորութեան համար ազատութիւն կը բերեն: Վայ անոր, որ զէնք կը բարձրացնէ Խորհրդային Ատրպէյճանի դէմ»...

Ինչպէս կը տեսնէք, Կարմիր Բանակի բարձր հրամանատարութեան կողմէն, որը ներշնչուած եւ ուղղուած էր Բազուի տաճիկ եւ թաթար բանխալամականներէն, Սիւնիքը անվերապահօրէն յայտարարուած էր «Խորհրդային Ատրպէյճանի գաւառ» եւ անոր անբաժան մասը:

Իմ հասցէին ուղղուած «խփեցէ՛ք» եւ «վա՛յ անոր» սպառնալիքները ուղղուած էին Սիւնեաց ժողովրդի այն մէկ մասի հասցէին, որը քաջութիւնը ունեցած էր չճանչնալ զոյնը փոխած Ատրպէյճանի գերիշխանութիւնը, որ որպէս հակազրութիւն բոլշեւիկներու վարած քաղաքականութեան եւ Սիւնիքի նկատմամբ ունեցած որոշման, կայացուցած էր իր վճիռը՝ թոյլ չտալ, ինչ զնով ալ ըլլայ, որ կարմիրները ներխուժեն Ղափան:

Ղափանի ներկայացուցիչները այս որոշումը կայացուցին իրենց պատգամաւորներու գեկուցումը լսելէն յետոյ: Վերջիններս 1920 թ. Յուլիս 11-ին տեսնուած էին խորհրդային ներկայացուցչութեան հետ եւ վերջինէն լսած հետեւեալը. ա) Մենք եկած ենք Չանգեղուրն ու Ղարաբաղը կցելու Խորհրդային Ատրպէյճանին. բ) Պիտի զինաթափենք ժողովուրդը. գ) Չէնքերը յանձնելու էք մեր կողմնակիցներուն»:

Ահա՛ այն ընդվզեցուցիչ ճշմարտութիւնը, որ բոլշեւիկները հնարաւոր չէին համարած թաքցնել, խալամ զանգուածները իրենցմէ չզրադեցնելու համար:

Այսպէս, Հայաստանի տերիտորիան անդամահատութեան մահացու փորձէն ազատելու համար, նախ Սիւնիքի մէկ մասը ապամբողջ Լեւոնահայաստանը զէնքի դիմեց եւ պաշտպանուեցաւ, մինչեւ որ Խորհրդային Հայաստանի խելագար յեղկոմը՝ Կասեանի ղեկավարութեամբ փոխարինուեցաւ Միասնիկեանի կառավարութեամբ եւ մինչեւ որ երկարատեւ ու արիւնալի կռիւններէն խրատուած Մուկուան վերջապէս բարեհաճեցաւ Սիւնիքը կցել Հայաստանին:

Անշուշտ, քաղաքական այդ ակտէն յետոյ, անխմաստ համարելով յետագայ պայքարը՝ տեղի պիտի տար, առանց կռիւի ե՛ւ ապրստամբ ժողովուրդը:

II

Արարատեան Հայաստանի առաջին անկման նախօրեակին իմ

(*) «Զանգեղուրի կոմունիստ», Բիւ 2, 20 Նոյեմբեր 1920:

եւ կարմիր հրամանատարութեան միջեւ տեղի ունեցող բանակցութիւնները մնացին անհետեւանք: Թշնամին շլացած Երեւանի կամովին խորհրդայնացումէն, չուզեց կատարել մեր առաջադրած հաշտութեան նախնական պայմանները եւ ստիպեց մեզ Սիւնիքը յայտարարելու ինքնավար, մինչեւ որ քաղաքական հնարաւորութիւն կը ստեղծուէր միանալու մայր երկրին: Սիւնիքը կարող չէր տեղի տալ, քանի դեռ տաճկական զօրքերը կը գտնուէին Ալեքսանտրապոլ, Շարուր եւ Նախիջեւան, միշտ պատրաստ՝ ցանկութեան դէպքին արհամարհելու Երեւանի բոլշեւիկեան ուժերը եւ շարժելու Սիւնիքի դէմ: Չէինք կարող տեղի տալ նաեւ այն պատճառով, որ ամբողջ հայ մտաւորականութիւնը կը գտնուէր բանտերը, կարմիր կացնի սարսափի տակ: Յետագայ դէպքերը եկան արդարացնելու Սիւնիքի անկախութիւնը եւ մեր բռնած դիրքը:

Իշխելու խելագարութեամբ բռնուած հանրածանօթ բուռ մը հայազգի կոմունիստներ, յենուած կարմիր սուիներու, դժբախտ Հայաստանի խորհրդային ռեժիմի անուան տակ հրապարակ հանած էին տարամերժ աղանդաւորութիւն, բռնամոլութիւն, քաղաքական շնականութիւն, կուրութիւն, խելագարութիւն, կործանման ծարաւ, անաւարտութիւն եւ այլն, երկիրը վերածելով կատարեալ դժոխքի մը: Մտաւորականութեան մեծագոյն մասը բանտերու մէջ հոգեվարքի մէջ էր, առատ տուրք բերելով բոլշեւիզմի դադանին: Սպայութիւնը քշուած էր Ռուսաստանի խորերը: Գիւղացիութիւնը տնտեսապէս եւ հասարակականապէս քայքայուած, մատնուած էր անտէրութեան: Արարատեան հայութիւնը գլխատումէ փրկելու համար սկսուած բանակցութիւնները անհետեւանք մնացած էին: Պէտք էին աւելի իրական միջոցներ: Անհրաժեշտ էր նաեւ Երեւանի համար դուռ մը բանալ դէպի Սիւնիք: Այդ նպատակով իմ ուժերը վերագրուեցին Արարատեան Հայաստանի գաւառներէն Վայոց Ձորը եւ կապուեցան Արարատեան Հայաստանի հետ, ուր գրեթէ նոյն օրերուն(*) պայթած էր Երեւանեան ընդհանուր ապստամբութիւն: Երեւանի ուժերը, 42 օրուան կռիւներէ յետոյ, իրենց հետ ե՛ւ հայ մտաւորականութիւնը, թուով մօտ 12.000 հոգի, տեղի տալով խորհրդային ուժերուն առաջ, քաշուեցան Սիւնիք:

III

Սիւնիքի վրայով հեղեղի պէս կ'անցնէր Արարատեան դաղթականութիւնը: Տեղական ժողովուրդը հաւանական լքումէ հեռու պահելու համար՝ պէտք էր նոր ժեսթով մը գօտեպնդել զայն: Եւ այդ ոչ թէ Սիւնիքի անկախ դոյութիւնը երկարելու համար, այլ որպէսզի

(*) Երեւանի ապստամբութիւնը պայքած էր Վայոց Ձորի գրաւումէն երկու օր ետք:

այդ ապստամբ երկրամասին հնարաւորութիւն տրուէր որոշ ժամանակ մը եւս ղիմադրաւելու զինք օղակող թշնամիները, մինչեւ որ խորհրդային կացինէն մազապուրծ եղած հայ մտաւորականութիւնը, արեւմտահայ զօրամասերը, սպայութեան մեծագոյն մասը, խմբապետներու որոշ մէկ մասը անցնէին Պարսկաստան :

Երեւանի առաջին անկումէն ետք զրութիւնը փրկած էր ինքնավար Սիւնիքը, անոր երկրորդ անկումէն ետք, ստեղծուած սպառնական զրութիւնը պիտի փրկէր եւ փրկեց ազատ Լեռնահայաստանը :

Լեռնահայաստանի գոյութիւնը անհրաժեշտ էր նաեւ այլ տեսակէտով մը. պարսից կառավարութիւնը, որ յարգելով իմ ղիմումը թոյլատրած էր 500 մտաւորականներու մուտքը Պարսկաստան, Արաքսի հայկական ափը, Մեղրիի ղիմաց կուտակուած 7—8000նոց բազմութենէն յանկարծակիի եկած՝ կարգադրեց զազրեցնել զազթականութեան անցքը :

Աշխարհէն կտրուած, զուրկ հազորդակցութեան ու փոխադրութեան ամենատարրական միջոցներէն, զուրկ հացէ, ռազմամթերքէ, տարիներու անհաւասար կռիւներէն անտեսապէս քայքայուած ու յոգնած Սիւնիքի համար կը ստեղծուէր աննախընթացօրէն սպառնական զրութիւն մը : Այդ զրութենէն զուրս գալու, ըսել է՝ Արարատեան Հայաստանի մտաւորականութիւնը (որ չէր ստեղծուած ամիսներու եւ տարիներու ընթացքին եւ որուն կորուստը մահացու հարուած պիտի հասցնէր հայ ժողովուրդին) փրկելու համար ստեղծուեցաւ Ազատ Լեռնահայաստանը :

Երկրորդ անգամ ստիպուած եղայ անձամբ տեսնուելու պարսից իշխանութեան ներկայացուցիչներուն եւ ինծի բարեկամ խաներուն հետ եւ անոնց հաւաստիացնելու, որ Սիւնիքը մտադիր չէ տեղի տալու, որ Արարատեան զազթականութիւնը Պարսկաստան կը փոխադրուի ոչ թէ Սիւնիքը վտանգուած համարելով, եւ որ ես իմ ուժերով Սիւնիք պիտի մնամ մինչեւ վերջին փամփուշտը՝ եւայլն :


Պարզուեցաւ, որ որոշ մութ ուժեր պարսկական ափին պրովոկացիոն լուրեր տարածեր էին, ե՛ւ իմ Պարսկաստան անցնելու, ե՛ւ իմ տեղի տալու մասին ու առիթ տուած պարսից իշխանութեան ընելու մտաւորականութեան անցը զազրեցնելու դժբախտ կարգադրութիւնը : Թիւրիմացութիւնը պարզուեցաւ եւ վերսկսաւ զազթականութեան անցը — նահանջը (*):

Անշուշտ կամուրջի մը գոյութիւնը մեծապէս պիտի դիւրացնէր ու արագացնէր նահանջի գործը. դժբախտաբար Սիւնիքը Պարսկաստանին միացնող Արաքսի վրայ կամուրջ գոյութիւն չունէր եւ չունի :

(*) Նահանջ կ'անուանեմ, որովհետեւ մտաւորականութեան հետ, երկիրը վրտանգուած համարելով, Պարսկաստան կ'անցնէին նաեւ մեծ քանակութեամբ ռազմական ուժեր :

Ի դուր անցան մեր աւելի քան ամիս մը տեւող գերմարդկային ճիգերը՝ Արաքսի մեր ափին շինուած շարժական կամուրջէն օգտուիլ կարենալու համար: Կը մնար բաւականանալ գոյութիւն ունեցող ամենանախնական ու անբաւարար միջոցներով — պարսկական լաստերով, որոնք մօտ երկու ամիս երթեւեկեցին Արաքսի վրայ, մինչեւ որ վերջացաւ գաղթականութեան անցը:

Ահա՛ թէ նաև ի՞նչ լուրջ պատճառներով 3-4 ամիս եւս անհրաժեշտ կը գտնար երկարածուցել Ազատ Լեռնահայաստանի գոյութիւնը:



Արաքս գետը, ուրկէ տարագիրները անցան Պարսկաստան

IV

Թշնամին՝ Վրաստանի եւ Երեւանի մէջ ունեցած իր նոր յաջողութիւններէն թեւ ու թափ առած՝ չյապաղեցաւ անդամ մը եւս իր արիւնտ թաթը սպառնալիորէն պարզելու դէպի Արաքսի ափին թափուած հայ մտաւորականութիւնը: Արարատեան գաղթականութեան Մեղրիի եւ Արաքսի ափին խոնուելու երկրորդ օրը, կարմիր ուս եւ թուրք դօրքերու հրամանատարութիւնը Օրտուրաթէն, թուրք պատգամաւորներու միջոցով, Գենուազի գետափնեայ ազգարնակութեան ուղղեց իր «վար դրէք ձեր դէնքերը եւ յանձնուեցէք» վերջնադիրը: Ռուս եւ թուրք միացեալ զօրամասերու հրամանատարութիւնը, հայ ժողովուրդը զլիսատելու խելագարութեամբ բռնուած, վեր-

ջին փորձը կը կատարէր Արաքսի ջուրերուն մէջ խեղդելու, ոչնչացընելու հայ մտաւորականութիւնը, որուն համար ալ կը պահանջէր տեղի տալ, հրաժարիլ մտաւորականութեան պաշտպանութենէն:

Վայրկեանի բովանդակ լրջութեան և պատասխանատուութեան դիտակցութեամբ տողորուած՝ Լեոնահայաստանի սպարապետութիւնը ժողովուրդի անունով կարմիր հրամանատարութեան ուղղեց հետեւալ պատասխանը. «Մենք ունինք կեդրոնական իշխանութիւն, որուն կարող էք դիմել այդ առթիւ»:

*
**

Այդ պատմական եւ ծանր օրերուն, երբ Արաքսի հայկական ասփին կը լուծուէր հայ մտաւորականութեան մեծագոյն մասին ըլլալը չըլլալու հարցը, հայրենի լեռներէն յաղթական կրճքերն ու դէնքերը դէպի թշնամին դարձուցած, օր մը չոր հացով, միւս օրը արմտիքով ապրող Լեոնահայաստանի վաշտերուն ցոյց տուած հերոսական խոյանքները պիտի մնան դալիք սերունդներուն համար որպէս հայրենասիրութեան ու անձնուիրութեան դասական օրինակներ: Հպարտ՝ այդ օրերու պատմական դորձերով, անսահման թախիժով եւ քաղցրութեամբ վերյիշելով մեր լեոնաշխարհի բարձունքներուն ու ձորերուն հերոսի մահով ինկած իմ ընկեր զինուորները, մտքովս կը ծընրադրեմ անոնց ինկելի հողաթումրերուն առջեւ եւ ծաղկեպսակի փոխարէն Սիւնիքի բովանդակ փառքը կը դնեմ անոնց գերեզմաններուն վրայ:

1923 թ. Մարտ

ԱԶԱՏ ՍԻՒՆԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԱՆԿՈՒՄԸ

Արեւիքի բարձունքներէն Ալազեազի եւ Սոյիւխներու վրայ դեռ նոր լուծ էին թշնամի թնդանօթները :

Ռուս եւ թուրք հորդաները մէկ ալ փորձած էին փակելու Սիւնիքէն դէպի Պարսկաստան բացուող փոքրիկ պատուհանը՝ խղելու մեր կապը արտաքին աշխարհին հետ : Փորձած էին, փորձանքի եկած եւ նորէն, ծեծուած, հալածուած մինչեւ Օրտուրաթի դռները :

Գեհուազի արծիւները դեռ նար էին վերադարձած իրենց բոյները :

Հակառակ եղած փայլուն յաղթանակին, լուռ, մռայլ, սրտաբեկ է ամբողջ Արեւիքը : Լեռնահայութեան անլուր ողբերգութիւնը կարելի է կարդալ ամէն մէկ Արեւիքցիի աչքերուն մէջ :

Օր մը առաջ ան յաղթած է թշնամուն, իսկ այսօր կ'իջնէ լեռներէն եւ վազը, վազը -- ի՞նչ ողբերգութիւն, անոր ներկայացուցչութիւնը պէտք է մեկնի Գորիս՝ թշնամիին յայտնելու Արեւիքի «հըպատակութիւնը» :

*
**

Յունիս 7ին կալերի և Մեղրի միջեւ կը հանդիպինք Գենուազի պատուիրակութեան, որ Ղափանի վրայով պէտք է անցնէր Գորիս՝ «տեսնուելու խելքը զլիսին եւ քիչ մը հայ մէկուն հետ»:

— Իջնելով ձիերէն, կը տեղաւորուինք ծառերուն տակ Մեղրի գետի ափին:

«Ամբողջ տարի մը դիմադրել, յաղթել եւ չպարտուած, գրկելի կռիւը շարունակելու հնարաւորութեան», — պատուիրակութեան անդամներէն մէկուն այս խօսքերով կը սկսի մեր խօսակցութիւնը:

Պէտք էր որոշ հրահանգներ տալ: Մեր պատուիրակները պիտի չքաշուէին հայ բոլշեւիկեան կռիւներու պատճառը համարելու սովետո—տաճկական զինակցութիւնը եւ հայազգի բոլշեւիկներու «ձախ տղայութիւնը», որուն երեսէն այնքան տուժեց հայ ժողովուրդը: Անոնք պէտք է հասկցնէին եւ համոզէին հայ բոլշեւիկները, որ միեւնոյնը չէ, թէ ո՞ր խորհրդային հանրապետութեան անբաժան մասը կը կազմէ մեր լեռնաշխարհը՝ Հայաստանի՞ թէ Ատրպէյճանի: Անոնք պիտի նախազգուշացնէին ոչնչով չկրկնել տխուր անցեալը, մասնաւորապէս ժողովուրդէն չպահանջել եւ ոչ մի հատիկ զէնք: Անոնք պիտի լուսարանէին եւ պահանջէին խորհրդային իշխանութեան ներկայացուցած իմ գրաւոր պայմաններուն յարգումը:

— Տեսնենք, թէ ի՞նչպէս կ'ընդունին մեզ, — ձիերը նստելնուս կ'աւելցնէ մէկը:

— Մեր գործը բոլշեւիկներու հետ է, որոնք հակառակորդի հերոսութիւնը յարգելու առաքինութիւնը չունին: Բայց չեմ կասկածիր, որ ձեզ կը լսեն մեծ ուշադրութեամբ եւ երկար, որպէսզի չստիպեն մեր գոյամարտի երկրորդ տարեմուտը, — որ վաղն է, — տօնելու Երասխի հայկական ափին:

Ըսելով այդ, կը բաժնուինք:

Անոնք կ'ուղեւորին զէպի Ղափան, իսկ մենք՝ զէպի Մեղրի:

*
**

Մեղրի հաւաքուած է գրեթէ շրջանի ամբողջ ժողովուրդը: Գիւղական վաշտերը եկած են զինուած: Դաշտերուն եւ այգիներուն ոչ ոք չկայ, ոչ ոք չ'երեւիր: Դեռ լուսարացին կը զօղանջեն Մեղրի եկեղեցւոյ դանդերը: Փողոցներուն եւ մեծ հրապարակի վրայ տեղտեղ համախմբուած է զիւղացիութիւնը: Լեռներու վրայ, ուր դեռ երէկ կը բորբոքէր կռիւը, կը տիրէ խորին լռութիւն: Տարեվերջն է այսօր հայ—բոլշեւիկեան կռիւներուն:

Ուղիղ տարի մը առաջ, այսօր, թշնամին՝ յանկարծակիի բե-

րելով Ղափանը՝ մեզ ներկայացուց իր առաջին վերջնադիրը՝ «Ճանապարհ տուէ՛ք կարմիր գորգին»։ Տարի մը առաջ սիւնեցին արձակեց իր առաջին զնդակը կարմիր զօրքերու վրայ, որպէս բողոքի ցոյց բուլշևեիզմի եւ պանիսլամիզմի յանցաւոր գինակցութեան դէմ։

Եւ այն օրէն ինչե՞ր չտեսան, ինչերո՞ւ վրայ չեղան մեր լեռներն ու հարեւանները։ Քանի՛-քանի անգամ Սիւնիքը կրկնեց յաղթական Աւարայրը։ Քանի՛ եւ քանի անգամ այն օրէն թշնամի բանակները փորձեցին Արաքսի ջուրերուն մէջ խեղդել Սիւնիքի բուն մը ապստամբներուն, բայց միշտ ալ հազար դիակներ փռելով մեր լեռներու վրայ՝ քաջուեցան հեռուները, Սիւնիքի եւ հայ դէնքի գովքը ընելու։

Այսօր սակայն ժողովուրդը եկած է ճամբայ զնելու իր առաջնորդին։

*
**

Արաքսի ափէն կը տեղեկացնեն, թէ տարազիրներու անցքը վերջանալու վրայ է։

Կը կարդադրեմ պատրաստուիլ։ Մեղրիի հնամենի «չինարի» շուրջը եւ դէպի Արաքսը ձգուած ճանապարհի վրայ կը խոնուի յուզուած ժողովուրդը։

— Յտեսութի՛ւն, հերոս ժողովուրդ. ցտեսութիւն կ'ըսեմ եւ ոչ մնաս բարով...։

Կու լայ ժողովուրդը, որու խելահեղ գրոհներէն ու դարկերէն շատ լացած էին թուրք, թաթար եւ ուրա հորդանները։

Տխուր կը զօղանջէին պանդերը։ Կու լար Արեւիքի խորհրդապաշտ հոգին։ Մենք կը թողունք հայրենի լեռները...։

*
**

«Քարելոնի դետափերուն քովը՝ հոն կը նստէինք եւ Սիոնը մը տարերելով կու լայինք»...։

Արաքսի պարսկական ափին նստած, Սիւնիքի երէկուայ յաղթականներէն ոչ ոք կրկնեց թագակիր սաղմոսերգուի այդ տխուր տողերը։ Անոնք պարտուած չեն։ Անոնք յաղթած են, պարտադրած են իրենց պայժմանները եւ այժմ Արաքսի ափին ամրացած, կը սպասեն թշնամու առաջին քայլերուն Սիւնիք, որ վճռեն իրենց ընելիքը։

Թրքո-թաթար զօրքերու միջամտութեան դէպքին, մենք վայրկեանարար պիտի գտնուէինք Սիւնիք։ Մեր պայժմանները յարդուելու դէպքին, մենք պիտի քաջուէինք հեռուները։

Այդ մասին գիտէր թշնամին, ան գիտէր եւ այն, որ եթէ հարկադրուած եղանք իրադործելու իրեն ուղղած մեր պայմանագրի մէջ ըրած սպասուելիքը, կարմիր բանակը չէր, որ անկարելի պիտի դարձրնէր մեր վերադարձը:

Յուլիսի 12-ի գիշերը Սիւնիք թողած մարդիկս կը բերեն հետեւեալ տեղեկութիւնները. —

«Գորիս մտած բուշեւիկեան զօրամասը օր մը մնալէ յետոյ, հեռացած է Սիւնիքէն: Զինաթափութեան եւ ձերբակալութեան դէպքեր չեն եղած: Վերաբերմունքը դէպի ժողովուրդը վատ չէ: Թշնամին, ցանկալով խուսափիլ նոր բարդութիւններէ, վճռած է յարգել մեր պայմանները» եւայլն:

Այդ այդպէս ըլլալով հանդերձ, ես անհաւանական չէի համարեր թուրք զօրքերու Սիւնիքը գրաւելու փորձը:

Կարիներեանի պատուիրակութիւնը չէր թաքցուցած, թէ Սորհրդային Ռուսաստանը վճռած է ամէն գնով բարեկամ մնալ քեմալական Տաճկաստանին, որ Սորհրդ. իշխանութիւնը ոչ միայն Կարսը, այլեւ Թիֆլիսը կը գիշեր, եթէ տաճիկները շարունակէին յամառիլ Մոսկուայի խորհրդածողովին:

Անոնք, որոնք վատութիւն ունեցած էին յայտարարելու ի լուր աշխարհի, թէ «Հայ ժողովուրդը կարող է եւ գոյութիւն չունենալ, միայն թէ կարմիր Հոկտեմբերը յաղթանակէ ալեւոր Արեւելքին», բնաւ պիտի չանհանդստանային, եթէ թրքո—թաթար ուժերը՝ Սիւնիքը «գիտակներու կամուրջ»ի վերածելու նպատակով, օգտուելով առիթէն տէր գառնային մեր Լեռնաշխարհին:


Յունիսի 13-ին փոքրիկ խմբակ մը եւ հետս վերցուցած երկու թնդանօթները գնդապետներէս մէկուն գլխաւորութեամբ թողելով Արաքսի ափին ինկած պարսկական գիւղը, հետս եղած ձիաւորներով եւ գաղթականներով կը շարժիմ դէպի Մուժամբար:

Տխուր կ'անցնինք մեզ օտար, բայց ոչ թշնամի ժողովրդի միջով, որ երկու ամբողջ տարի վկայ եղած է Լեռնահայաստանի յաղթական խոյանքներուն եւ առիթ չէ փախցուցած հազար ու մէկ ձեւով արտայայտելու իր հիացմունքը: Անոր վերաբերմունքը յարգալից է եւ այժմ: Ան ծանօթ է մեր ապրած ողբերգութեան: Անոր ներկայացուցիչները յաճախ կը կրկնեն, թէ Սիւնիքի դրութեան մէջ ասիացի այլ ժողովուրդ մը մտքէն իսկ չէր անցրնէր գիմադրութիւնը, իսկ եւրոպացի զինուորն ու զօրավարը անձնատուութեան կը գիմէին կռուի հէնց առաջին օրերուն:

— Հեռուն, հա, դեռ կ'երեւի Ալազեազը, — յաճախ ծանր լու-

Թեան մէջ կը բարձրանայ գինակիցներու մէկի կամ միւսի տխուր
բացականչութիւնը եւ կը ստիպէ զիս ալ սանձահարելու ձիւ :

Քիչ յետոյ ալ պիտի չերեւան Սիւնեաց լեռները : Զգալով այդ ,
տղաներս , կարծէք հրամանով , գրեթէ միաժամանակ կը կանգնեցնեն
ձիերը եւ գլուխնին կը դարձնեն դէպի ամպերու մէջ կորած հայրենի
սարերը :



Ն
Ժ
Դ
Ե
Ն

Ազօթողի արձանացած դրութեան մէջ լուռ էին անոնք : Չէին
չարժեր անոնց շրթունքները , բայց ես կը լսէի անոնց ձայնը : Կը
խօսէին անոնց հայեացքները , կու լային սրտերը . . .

«Ո՛վ Երուսաղէմ , թէ որ քեզ մոռնամ , թող աջ ձեռքս իր պաշ-
տօնը մոռնայ» , — այս կ'ըսէր ամէն մէկը անխօս :

Այսպէս երգուրնցան անոնք՝ չմոռնալ Սիւնիքը :

Հ Ա Յ

ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ

ԿՌԻՒՆԵՐԸ

I

ԱՌԱՋԻՆ ԳՆԴԱԿԸ

1920 Յունիս 17-ին Ղափանի հանքերուն տեղի ունեցած կապարգողթի հայութեան ներկայացուցչական ժողովը կ'որոշէ .

Ա.— Բոլոր շարժումները, ներքին թէ արտաքին, ուղղուած Հայաստանի անկախութեան եւ մասնաւորապէս, Ղարաբաղ — Զանգեզուրի ազատագրական ճգտումներու դէմ, համարել հակայեղափոխական եւ դաւաճանական ու ամէն դնով աջակցիլ կառավարութեան՝ իրենց սաղմի մէջ խեղդելու երկիրը դէպի կորուստ տանող բոլոր երեսօյթները :

Բ.— Ատրպէյճանի խորհրդայնացումը համարել քաղաքական շանտաժ, ստեղծուած տաճկա—ատրպէճանական համխլամականներու եւ ռազմապաշտներու ձեռքով՝ յատկապէս Հայաստանի անկա-

խուժիւնը եւ հայ ժողովրդի Ֆիզիքական գոյութիւնը վտանգելու նը-
պատակով :

Գ. — Ամէն մէկ Ղափանցի, 18—60 տարեկան, ինչպէս եղած է մինչեւ օրս, ղէնքը ձեռքին կոուելու է Ատրպէյճանի ղէմ մինչեւ վերջին փամփուշան ու արեան կաթիլը, քանի ան կը շարունակէ իր հայակեր քաղաքականութիւնը :

Գ. — Ամուր պահելով կառավարութեան բարոյական ու Ֆի-
զիքական հմայքը, ղիշեր-ցերեկ հսկել ղիրքերուն եւ կոչ ընել Ձան-
գեղուրի ազդարնակչութեան՝ վարուիլ նոյն ձեւով :

Այդ օրերուն Ղափան կ'անցնին տարաբախտ Խորէնին եւ Շի-
րինեանը, որոնք Գորիս նոր եկած էին Հ.Յ.Դ. Ձանգեղուրի արտա-
կարգ կոմիտէի կողմէն : Վերջինները Կապարգողթի տրամադրու-
թիւններուն ծանօթանալու համար խնդրեցին ինձմէ իրենց հետ միա-
սին այցելել իմ շրջանի քանի մը ղիւղերը :

Յունիսի վերջերուն Մեղրիէն կը հասնի Դրոյի գրութիւնը, ո-
րով ան կը տեղեկացնէ, թէ բոլշեւիկները ուժեր կեդրոնացուցեր են
Ձարուղ եւ պատրաստ են անցնիլ Ձանգեղուր : Այդ լուրին վրայ մենք
անմիջապէս վերադարձանք Ղափան, ուրկէ Շիրինեանը, Խորէնին եւ
Աշոտ Մելիք-Մուսեանը ճամբեցինք ղէպի Գորիս :

Յուլիս 5-ի առաւօտեան ժամը 10-ի մօտերը մեր երեք տարա-
բախտ ընկերները կը հասնին Քարահունչ եւ ականատես կ'ըլլան բոլ-
շեւիկեան բացօթեայ միթինկի մը : Այդտեղ մերիններուն համար կը
պարզուի, որ Երեւանեան ուժերը տեղի տուած են, նահանջելով ղէ-
պի Վայոց Ձոր եւ Գորիսը անցած է կարմիրներու ձեռքը :

Մերինները, առանց մտանելու իրենց ներկայութիւնը, կը հե-
ռանան Քարահունչէն : Շիրինեանը Խորէնին հետ կ'անցնի իր հայրենի
ղիւղը՝ Շինու Հայր, իսկ Աշոտը, առանց յատուցելու կ'աճապարէ ին-
ծի հասցնելու Գորիսի անկման լուրը :

Յանկարծակիի եկած, Յուլիս 7-ին, Կապարգողթի ազդարնակ-
չութեան եւ ուղղեցի իմ նախազգուշական խօսքը .

«Հա՛յ ժողովուրդ, Կապարգողթի եւ Բաղարբրդի հերոս ժողո-
վուրդ, վտանգը, բոլշեւիկի կեղծ կարմիր փետուրներով զարդար-
ուած Ատրպէճանեան վտանգն է կանգնած գուռիդ : Ուրեմն, ինչպէս
եւ միշտ, եղիր արթուն, սպառնալէն ու միշտ պատրաստ ղիրքերուն,
յանկարծակիի չզալու համար : Աստուած եւ իմ սուրը քեզի հետ :

★

★

Ղարարաղը առանց կոուի թշնամիին ձգելը, անշուշտ, պիտի
ունենար իր բարոյալքիչ ազդեցութիւնը Ձանգեղուրի վրայ : Կամ
թշնամին չափազանց ուժեղ է, որ երեւանեան ղորքերը խուսափած են

չափուիլ անոր հետ, կամ ինչ-ինչ քաղաքական նկատումներով, պէտք չէր կռուիլ եւ չեն կռուած մերիները:

Այսպէս էր մտածած բուն Չանդեղուրը եւ աղու հացով ընդունած թշնամին:

Այդ բոլորը դադտնիք չէր ե՛ւ իմ շրջաններու հայութեան համար, որուն որոշ տարրերը նոյնպէս ազդուած էին ստեղծուած դրութենէն:

Յուլիս 8-ին Շիկահողի ուսուցիչ Բագարատ Յարութիւնեան, նախկին կամաւորներէս, իր ցանկութեամբ, Գորիս դրկեցի, թշնամի ուժերու եւ մտադրութիւններու մասին որոշ տեղեկութիւններ բերելու համար: Վերջինս յայտնի էր իբրեւ դադափարական կոմունիստ: Չորանալով իր համայնավար ըլլալը, ան միշտ ալ առանձին հպարտութեամբ կը խօսէր իր լաւ հայ ըլլալու մասին եւ կը վստահեցնէր, որ ինք որեւէ կապ չունի բուլշեւիկներու հետ, որ քանի դեռ վերջինները բարեկամ կը մնան արեւելեան փաշաներուն, իրականի մէջ կը մնայ թշնամի բուլշեւիկներուն: Այս մարդը, ըստ իր խոստումին, Գորիս պիտի մնար ընդամէնը օր մը եւ, որոշ տեղեկութիւններ հաւաքելէ յետոյ, գիշերով պիտի հեռանար քաղաքէն:

Յուլիս 10-ի գիշերը բուլշեւիկեան հեծեալ գունդ մը յանկարծակիի կը բերէ Ղափանի սահմանագլխային գիւղերէն Խոտանանը: Լուսարացին այդ գիւղէն կը հասնի առաջին սուրհանդակը եւ կը գոռոթէ Խոտանանի անկման լուրը:

Նա կը պատմէ նաեւ Բագարատի դաւաճանութեան մասին: «Լաւ հայը» թշնամիի ընելիքներու եւ ուժերու մասին տեղեկութիւններ բերելու փոխարէն թշնամի բանակը առաջնորդեր էր դէպի Ղափան:

Մէկ քանի թիկնապահներով կը հասնիմ կաւարտ՝ տեղական ուժերը ոտքի հանելու: Քիչ անց Չալինդէօլ հասան Խլաթաղից եւ Առաջաձորից փախած քանի մը գիւղացիներ ու պատմեցին, որ այդ գիւղերն ալ աղ ու հացով ընդունած են կարմիրներուն եւ որ թշնամին արդէն կը շարժի դէպի Հանքերը:

Մօտ քառորդ ժամ անց՝ թշնամի հեծելագորքը յայտնուեցաւ կաւարտի եւ Առաջաձորի միջեւ ինկած ձորին մէջ:

Մօտակայ գիւղերէն ժամանակին հասած իմ վաշտերը գրաւած էին արդէն ճանապարհի երկու կողմերու բարձունքները: Կաւարտէն ճակատ են տեղափոխուած բաւական պայթուցիկ տակառներ: Միայն «համոզմունքներով կոմունիստ» հայը կը մատնէ իր ներկայութիւնը: Ան թշնամի զօրքերուն առաջ ինկած կը մօտենայ մեր դիրքերուն: Կը հրամայեմ տակառներէն մէկը պայթեցնել: «Առանց գնդակ մը արձակելու Բագու, Շուշի, Գորիս մտած զօրքը» անմիջապէս կը դադրեցնէ իր առաջխաղացումը: Քիչ անց, անոր բանա-

զնայները, ճերմակ զբօշակը սրբազան, կ'առաջանան զէպի մեր գիրքերը:

— Պարո'ն զնդապետ, շարունակելով նստած մնալ ձիուն վրայ, — սկաւ կարմիրներու ներկայացուցիչը, — խորհրդային հրամանատարութիւնը կը խնդրէ ձեզմէ ճանապարհ տալ իր զօրքերուն անցնելու Զուլֆա:

— Զուլֆա անցնելու համար կարմիր հրամանատարութիւնը իր արամաղրութեան տակ ունի լաւագոյն ճանապարհը՝ Սիսիան — Նախիջևան գիծը, — կ'ըլլայ իմ պատասխանը:

— Այդ ճիշդ է, բայց մեզի պէտք է նաև Ղափան — Մեղրի գիծը, որ ըստ կարմիր հրամանատարութեան, մեծապէս պիտի գլուրացնէ մեր առաջխաղացումը զէպի հեռուները՝ Պարսկաստանի վրայով Հնդկաստան եւայլն:

Կարմիրներու բանազնացի վերջին խօսքերը կը ստիպեն ինձ ժպտիլ:

— Ի՞նչ, գուք Պարսկաստանը արդէն խորհրդայնացած կը համարէք:

— Գրեթէ այո՛, — յաղթական թոնով կը պատասխանէ կարմիրը:

Այս կարճ փոխասացութենէն յետոյ ինձի կը մնար խորհրդային բանազնացներուն զգացնել տալ, որ լաւ կ'ըլլայ, եթէ կարմիր զօրքը ետ քաշուի Ղափանի սահմաններէն եւ սպասէ ժողովրդի վերջին խօսքին. որ քանի դեռ ժողովուրդը չէ ըսած իր խօսքը, ես տեղի չեմ տար. որ սկսուելիք կռիւներու եւ թափուելիք արեան ամբողջ պատասխանատուութիւնը ընկնելու է կարմիր հրամանատարութեան վրայ:

Օգտուելով առիթէն, չէի կարող Բաղարատին չխիչեցնել մեր պատմութեան ախուր վկայութիւնը հայ մասնիչներու մասին: «Շապուհի բանակները կ'առաջնորդէին Հայաստանի աշխարհագրութեան ու ամբուրթիւններուն ծանօթ հայ դաւանաները»:

Թշնամի բանազնացները կը վերադառնան, տանելով իմ պատասխանը:

Մեր գիրքերուն՝ կը թնդայ «Ղափան երկիր ազատ, անկախ» երգը:

Արեւելքի ջարդարար փաշաներու հետ զինակցած բոլշևիզմի խօփը առաջին անգամ քարին կը դարնուի:

Յերեկուան ժամը 4-ի մօտերը թշնամին կը նահանջէ զէպի Խոտանան եւ այնտեղէն, ճիշդ նոյն օրը, ինձի կ'ուղղէ հեռեւեալ վերջնագիրը.

«Գնդապետ Նժդեհի,

Արդէն Ղարաբաղ – Զանգեզուր մտած է Կարմիր Բանակը: Բոլոր տեղերը կազմակերպուած են յեղկոմներ: Կը հրամայեմ այդ առ-

թիւ յայտարարել ժողովրդին եւ ֆանապարհ տալ վերին Խոտանան գտնուող մեր գորամասին անցնելու Մեղրիի վրայով Օրտուբաթ — Զուլֆա :

Զօրամասի գինուորական կոմիսար՝ ԻվԱՆՈՎ :

10 Յուլիս, 1920 թ. վ. Խոտանան»

Հանրապետական դորամասերու, ինչպէս եւ բուն Զանգեզուրի, Սիսիանի, Տաթևի եւ այլ վայրերու ազգաբնակչութեան առանց կրօնի տեղի տալը, իմ ժողովրդական վաշտերու յողնածուծութիւնը՝ որպէս հետեւանք երկարատեւ կռիւներու եւ ռազմամթերքի պակասը նուազ չափով չէին կորովազրկել ե՛ւ Ղափանը : Տատանում կար, անվճռականութիւն կը դզացուէր ե՛ւ այդ շրջանի հայութեան մէջ, բան մը, որ կը սպառնար իմ խնամքին յանձնուած երկրամասը եւս առանց կռուի յանձնելու թշնամիին :

Գիտակ՝ ստեղծուած փափուկ դրութեան, Յուլիս 12-ին, Առաջաձոր գիւղը հրաւիրեցի Ղափանի երկրորդ արտակարգ ներկայացուցչական ժողովը, որուն բոլոր գիւղերը մասնակցեցան երկուքական ներկայացուցիչներով : Ժողովը կը քննէ «կարմիր հրամանատարութենէն ստացուած վերջնագիրը եւ ընդհանուր հրամանատար Նրժդեհի կողմէ տրուելիք պատասխանը» :

Ժողովին ես գիտամբը չմասնակցեցայ, որպէսզի ժողովուրդի ներկայացուցչութիւնը չնեղուի բարոյապէս եւ արտայայտուի ազատ : Ժողովը տեղի կ'ունենայ բացօթեայ : Ժողովատեղիէն քանի մը քայլ հեռու համհարցիս հետ նստած կը սպասեմ ժողովրդի վերջին խօսքին : Կռուելու է Ղափանը, թէ ոչ :

Այդ հարցին պիտի պատասխանէր ժողովուրդի ներկայացուցչութիւնը եւ կը դժուարանայ պատասխանել : «Այո»ի դէպքին ան դործ պիտի ունենար Ռուսիոյ եւ Ատրպէյճանի ծով ուժերու հետ. իսկ «ոչ»ի դէպքին՝ «բարի ճանապարհ» պիտի ըսէր ինձի, իր ղեկավարին :

Ծանր էր ժողովի, ըսել է՝ ժողովրդի դրութիւնը : Ողբերգական ըլլալու աստիճան ծանր էր ե՛ւ իմ դրութիւնը : Բողեւիզմի եւ համխալամութեան եղբայրացումէն ես լաւ բան չէի սպասեր հայ ժողովրդի համար : Ահա՛ թէ ինչու բարոյապէս ազատ չէի դզար դիս, հանրապետական դորքերը Զանգեզուրը լքելէն յետոյ, առանց կռուի Կապարգողթն ալ Սորհրդային Ատրպէյճանին յանձնելու :

Ժողովը շատ կ'երկարի : Գրեթէ այլեւս խօսողներ չկան : Նախագահը ունելիով է որ քանի մը կցկտուր եւ անորոշ խօսքեր դուրս կը քաշէ այս կամ այն ներկայացուցչի բերնէն : Ոչ ոք կ'ուզէ պատասխանատուութիւնը իր վրան առնել : Վաշտապետներէս Գերասիմը

տեղեկացուց ինձի ժողովին մէջ ստեղծուած ծանր մթնոլորտի մասին: Միջամտութիւնս անհրաժեշտ կը դառնար:

Կ'անցնիմ ժողովատեղին:

— Ղափանցիներ, եկայ, ձեր վերջին խօսքը լսելէ առաջ, իմ վերջին խօսքն ըսելու ձեզի: Ձէ, ալ ոչինչ ունիմ ըսելու ձեզ: Միայն ինզիր մը ունիմ, որ չէք կարող չկատարել: Վաղուց է, որ կը կըռուիմ ձեր երկրին մէջ, ձեզի համար: Որպէս բարոյական վարձատրութիւն, կ'ուզէի, որ հանէիք իմ աչքերը, կուրցնէիք զիս, որ անբախտութիւն չունենայի ձեր գլխին գալիք աղէտը տեսնելու:



Աջէն ձախ.— Դերասան Յովհ. Զարիֆեան, Գ. Նրժդեհ, Հացիկեան, Վ. Մըխսեան: Հինգերորդին անունը անյայտ: Նկարուած 1934ին:

Այդ էր իմ վերջին խօսքը, զոր ժողովին ըսելէ յետոյ, դառնացած, բայց ոչ ընկճուած՝ ընդհանուր լռութեան մէջ հեռացայ ժողովատեղիէն:

Մօտ կէս ժամ անց՝ ինձի ներկայացուցին ժողովի արձանագրութիւնը, որուն մէկ հատուածը կու տամ ստորեւ.—

«ԹՈՂ ՀՈՍԱՂ, ինչ գնով ալ ուզէ ըլլայ, կարմիրներուն ներխուժելու Ղափան: Ղափանի ներկայացուցիչները այս որոշումը կա-

յացուցին իրենց պատգամաւորներուն ղեկուցումը լսելէ յետոյ, որոնք 1920 թ. Յուլիս 11-ին տեսնուած էին խորհրդային ներկայացուցչութեան հետ եւ վերջինէն լսած հետեւեալը՝

Ա.— Մենք եկած ենք Զանգեզուրն ու Ղարաբաղը կցելու Ատրպէյնանին, Բ.— Պիտի ղինաթափենք ժողովուրդը, Գ.— Չէնքերը յանձնելու ենք մեր կողմնակիցներուն» :

Անմիջապէս վաչտերուն հաղորդուեցաւ Ղափանի որոշումը եւ իմ թշնամիին ուղղած հետեւեալ հակավերջնազիրը :

«Խոտանանում գտնուող կարմիրներու զօրամասի պետին : Կապարզողթի գիւղացիական ներկայացուցչական խորհուրդը, հրամայել է ինձ ուղարկելու ձեզ վերջնազիր՝ վաղը, ամսոյս 13-ին, մինչեւ ժամը 7-ը թողուլ Ղափանի սահմանները, հակառակ դէպքին ստիպուած կ'ըլլամ յարձակողականի անցնելու եւ ղէնքի ուժով վանելու ձեզ :

ՆԺԴԵՀ

1920 թ. 12 Յուլիս, Ղափանի Հանքեր» :

Յուլիս 13-ի առաւօտեան, դեռ լոյսը չբացուած, թշնամին կը ձգէ Խոտանանը եւ կը նահանջէ դէպի Գորիս :

Այսպիսով առաջին անգամ կը փրկուի Կապարզողթը :

II

ԹՇՆԱՄԻԻ ԱՄԵՆԱԿԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Կարմիրները շատ շուտ զգացնել տուին, որ իրենց ռազմավարութեան եւ ռազմական ուժերու դէմ կռուելը աւելի հեշտ է, քան իրենց քարոզութեան դէմ :

Մինչեւ օրս ալ կը խոստովանիմ, ես առանց գլխապտոյտի չեմ կարողացած կարգալ խորհրդային թերթերն ու թուոյցիկները :

Կարմիրները չեն խօսիր, չեն դրեր համոզելու, տարհամոզելու, սեղմ ըսենք՝ հասկցնելու համար : Անոնք կ'աղմկեն, միայն կ'աղաղակեն, կը ճշան, բեմական կեցուածք կ'ընդունին, սպառնալից ժեստեր կը կատարեն, խոստումներ կ'ընեն՝ միայն եւ միմիայն շջմեցնելու համար : Թերթելով խորհրդային օրգանները, մարդ ահամայ կը յիշէ լատինական ասացուածքը, — «Լռէ՛ք՝ անոնք կ'աղմկեն» : Այո՛, կ'աղմկեն եւ գիտեն աղմկել :

«Ամբոխները ամենէն առաջ յոյսեր կը փնտռեն : Զուրկ կարելիութեան զգացումէն եւ օժտուած ծայրայեղ քեթեւամտութեամբ, անոնք կ'ընդունին ամենէն անհաւանական խոստումները» : Ֆրանսացի հռչակաւոր հոգեբանի այդ խօսքերէն, կը թուի, թէ ոչ ոք այնքան մեծ չափով օգտուած է, որքան կարմիրները :

Հազարաւոր թերթեր, թուղթիկներ, քարոզիչներ ու գործա-
կալներ թափուած դիւղերը՝ աշխատաւոր զանգուածներուն կ'ըսէին,
կը խօսէին, հաւատացնելով, թէ խորհրդային իշխանութիւնը սայլե-
րով, ուր երկաթուղի կայ՝ վազաններով, ուր ծով՝ նաւերով՝ հաց,
հանգիստ ու ազատութիւն կը բերէ մարդկութեան սոված ու տառա-
պած մասի համար:

Խօսքէ, սուտէ, կեղծիքէ դատ կար ե'ւ ուրիշ միջոց մը, գուցէ
աւելի հրապուրիչ եւ դորաւոր, քան առաջինները: Դրամն էր այդ:

Պէտք է ըսել, որ խոստումներ կատարելու աստիճան թշնամին
չուսլ եւ առատաձեռն էր նաեւ դրամի գործածութեան մէջ: Նա կ'ա-
ռաջանար դրամի դէղեր ցրուելով, կաշառելով ազգարնակութեան բո-
լոր տեսակի տականքները: Թոյլատրելի կը համարուէին բոլոր մի-
ջոցները: Չկար ազնիւն ու ստորը, սուրբն ու անսուրբը, մարդկայինն
ու տմարդը: Ինչ որ հնարաւոր էր, ուրեմն ապա եւ կարելի էր ու
թոյլատրելի: Բարոյականութիւն, էտիկա, մարդկայնութիւն, —
այդ բոլորը թքուած ու յանձնուած էին արխիւ:

Թոյլատրելի կը համարուէր նոյնիսկ դասական բռնապետու-
թիւններու ու բռնապետներու «բաժնէ որ տիրես»ի մաքիավելական
բարոյագուրկ միջոցը: Քաղաքական նոր նկատումներով ոչ միայն
հայկական Ղարաբաղն էր յայտարարուած Խորհրդային Ատրպէյճանի
անբաժան մասը, այլեւ Չանդեղուրը:

Դատապարտելի ցեղամիջեան հակամարտութիւնն ալ օգտա-
գործելի կը համարուէր խորհրդային քաղաքականութեան կողմէն:
Գանձակի կարմիր հրամանատարութիւնը հայերու ձեռքով սանձա-
հարած էր մուսաւաթական մասսաները, Չանդեղուր՝ թուրք եւ տա-
ճիկ ուժերով սլաշարած կապարդողթի հայութիւնը:

III

ԱՆՅԱԶՈՂ ՓՈՐՁ ՄԸ

Յուլիսի վերջին տեղի կ'ունենայ Երեւանեան զօրամասի յար-
ձակումը Չանդեղուրի վրայ, որը որոշ սխալներու շնորհիւ, կը վեր-
ջանայ անյաջողութեամբ: Կռուի երկրորդ օրը հանրապետական զօր-
քը, տեղի տալով թշնամի ուժերու առաջ, վերստին կը լքէ Գորիսը:

Ղափանէն օգնութեան հասած իմ զօրամասին այս անգամ ալ
կը վիճակի ապահովել Երեւանեան ուժերու նահանջը:

Դէպի Դարալագեազ քաշուող ուժերու անկարգ նահանջի շը-
նորհիւ, իմ ուժերէն տասնեակի մը կը դժուարանայ ժամանակին
դուրս գալ Գորիսի ձորէն եւ կ'իյնայ թշնամի կրակի տակ: Չինուոր-
ներս փրկելու փորձի ժամանակ՝ վիրաւորուած՝ կը շարժիմ դէպի

Ուշթափալար, ուր Դրօն առաջարկեց ինձ անցնիլ Երեւան, բժշկուելու համար:

Պարզելով Չանգեղուրը անտէր թողելու անպատեհութիւնները, կը բաժնուիմ անկէ եւ կ'անցնիմ Ղափան:

IV

ՍՊԱՌՆԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ

« Հ. Հ. Զինուորական Նախարարին: Պատճէնը՝ Խորհրդարանին: Երկրորդ անգամն է, ինչ Ղափանը, Գենուաղը, Բաղարբերդը եւ Գողթանը Երեւանեան դօրամասի ռազմական անմիտ խաղերու շնորհիւ կը մնան մինակ, պաշարուած, կտրուած աշխարհէն: Մեր ժողովուրդը Գորիսի առաջին անկումէն յետոյ, անհամբեր կը սպասէր եւ ջերմօրէն կը հաւատար, որ իր կառավարութիւնը այսօր վաղը կը հասնի իրեն՝ կը վերադրուէ Չանգեղուրը:

Սակայն մեր մտքէն անգամ չէր անցներ, որ տեղի կ'ունենայ վտանգաւոր խաղ մը, անմիտ յարձակում մը, որ Երեւանեան դօրամասը կը վտանգէ մեր դրութիւնը եւ երրորդ օրը վերստին կը լքէ Չանգեղուրը եւ կը քաշուի Դարալագեազ: Այդ անմիտ խաղին մասնակցելու կանչուած էին նաեւ Ղափանի ուժերուն մէկ մասը, որոնք վերադարձեր են գաղաղած: Անոնք կը սպասեն եղեր, որ Երեւանեան դօրքը չկրկնէ իր հին սխալը, որ նա կ'անցնի Ղափան — Գողթան, աւելի ուժեղացնելու այդ շրջանները, բայց դժբախտաբար կատաստրոֆիկ սխալը կատարուած է եւ Դրօն այսօր Չանգեղուրէն դուրս կը դանուի:

Ասկէ դառ, Չանգեղուրի նախկին հրամանատարութիւնը թոյլ տուած է աղաղակող անարգարութիւն մը: Ան իր թնդանօթները Ղափանին տալու փոխարէն, իր հետ Դարալագեազ տարած է Ղափան եղած երկու թնդանօթները, պատճառաբանելով, որ ոչ մէկ թնդանօթաճիգ սպայ համաձայն չէ վերադառնալ Ղափան: Ի՞նչ, Դրօն եկած էր մեզ գինաթափի ընելու, թուլցնելու: Ի՞նչ կը նշանակէ այս:

Մինակ մնացած ժողովուրդը հաղար ենթադրութիւններ կ'ընէ:

Վերջին անգամ կը դիմենք ձեզ և կը խնդրենք արագացնել զօրքերու առաքումը Սիսիան: Մեր հրամանատարը կը դանէ, որ կարիք չկայ կռուով վերադրուել Գորիսը եւ պահելու Չարուղի ճակատը: Գրաւելով Սիսիանը մինչեւ Տաթեւ, մենք փաստօրէն տէր կը դառնանք ամբողջ Չանգեղուրին: Ուշթափալար — Տաթեւ — Ինջարէլ գիծը բռնելով, մենք կը ստիպենք բոլշեւիկներուն ձգելու Գորիսը: Ղափանի գիւղացիական ներկայացուցչական խորհրդի նախագահութիւն: 1920 թ. 21 Օգոստոս, Հանքեր»:

Մեզ վիճակուած չէր ստանալ լեռներով երթեւեկող սուրհանգակներու միջոցով Երեւանին յղած այս գրութեան պատասխանը :

Ես գիտէի, որ այլեւս Երեւանը մեզի հետ չէր կարող կապուիլ Սիսիանի վրայով, բայց չէի սպասեր, որ ան երբ եւ իցէ կը հաշտուի Ջանգեղուրէն ընդմիջա ձեռք քաշելու մտքի հետ : Նուազ յոյսեր ունէի նաեւ Ծարսուր — Նախիջեւանի ուղղութեամբ սկսուած Երեւանեան դօրքերու գործողութիւններու յաջողութեան նկատմամբ :

Ես գիտէի Ղափանի թոյլ, խոցելի կողմը եւ անհանգիստ էի : Դրութիւնը կը շարունակուէր օրէ օր աւելի եւ աւելի բարդանալ :

Օգնութեան փոխարէն Օգոստոս 15-ին կը ստանանք հետեւեալ գրութիւնը .

«Ղափանի գորամասի պէտ նժդեհին .

Կը հաղորդեմ ձեզ զինուորական նախարարի հրամանի պատճէնը՝ «Ձինուորական նախարարը կը հրամայէ Ձեզ, կապ պահելով նժդեհի հետ, տեղեկացնել անոր, որպէսզի ան, համաձայն կնքուած զինադադարի, հաւաքէ իր գորամասերը, նոյնպէս եւ բոլոր ցանկացողներուն եւ նախազգուշական միջոցներ ձեռք առնելով անցնի մեր տերիտորիան, բերելով իր հետ ամբողջ զէնքերը : 10 Օգոստոս 1920 թ. , Ձինուորական նախարարի Համհարզ Գիւլազիզեան» :

Կը խոստովանիմ, որ կեանքիս մէջ ոչինչ զիս այսպէս յանկարծակիի բերած է, ինչպէս այդ գրութիւնը : Եթէ Հայաստանի զինուորական նախարարութիւնը ցանկութիւն ունենար գոնէ անգամ մը զիմեւ Հայաստանի քարտէսի խորհրդին, անշուշտ պիտի համոզուէր, որ նման վերաբերմունքով ոչ միայն Ջանգեղուրն էր որ կը յանձնուէր կարմիրներուն, այլեւ Արարատեան Հայաստանը :

Օգոստոս 18-ին սուրհանգակները Երեւան տարին իմ հետեւեալ գրութիւնը . «Ձինուորական նախարարին, պատճէնը՝ Գեն . Նազարբէգովին : Դրօն զինուորական նախարարի անունով կը հրամայէ ինձ, համաձայն կնքուած զինադադարի, վերցնել իմ գորամասը եւ անցնիլ մեր տերիտորիան : Ես չեմ գիտեր թէ՛

1) Ի՞նչ պայմաններով, որո՞ւ հետ (Ատրպէյճանի թէ Սովետական Ռուսաստանի) եւ ո՞րքան ժամանակով կնքուած է զինադադարը :

2) Եթէ կապարդողթի իմ ուժերը, համաձայն զինադադարի, պէտք է ձգեն իրենց երկիրը եւ քաշուին մեր տերիտորիան, ապա բուշելիկները եւ Ատրպէյճանական բանտաները ե՞րբ եւ ո՞ւր քաշուելու են :

3) Ի՞նչ կ'ըլլայ Գողթանի դրութիւնը, որը վարչական տեսակէտէն մտած չէ Ջանգեղուրի մէջ :

4) Չէ՞ք կասկածիր, որ թշնամին կարող է դաւադրել, — այն է, որ մեր դուրս գալէն յետոյ, յանկարծակիի բերէ անտէրացած ազ-

գարնակույթիւնը եւ տէր դառնայ կապարդողթի չորս ապստամբ շըր-
ջաններուն :

5) Մեր խոր հետախուզութիւնը կը պարզէ, որ Այրի - Չարուս
կուտակուած են բաւական մեծ ուժեր :

Զէ՞ք ենթադրէր, որ եթէ ես Զանգեզուրը ձգեմ, այդ ուժերը
հեշտութեամբ կարող են տէր դառնալ Երեւանին :

Սակայն ի՞նչ զինադադար է, որուն ժամանակ բոլշեւիկները
կը շարունակեն իրենց շահատակութիւնները, թալանը եւ զինաթա-
փութիւնը, Սիսիան եւ բոլոր Զանգեզուրը : Նժդէհ 1920 թ. 13 Օգոս-
տոսի, Հանքեր» :



ԴԵՊԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի Ն Ք Ն Ա Պ Ա Շ Տ Պ Ա -
 Ն Ո Ւ Թ Ե Ա Ն
 Կ Ր Ա Ի Ո Ր Ա Կ Ա Ն
 Շ Ր Զ Ա Ն

1919 թ. Հոկտ. 29-ին Տաճկաստանի եւ Ատրպէյճանի միջեւ, ներկայացուած մէկ կողմէն յանձին Օսմանեան ընդհանուր սպախակոյտի պետ Զեւադ փաշայի, եւ միւս կողմէն՝ Ատրպէյճանի լիազօր Քերիմովի, կը կնքուի պաշտպանողական եւ յարձակողական զինակցութիւն, որ նպատակ ունէր վտանգել հայ ժողովուրդի Փիղիքական գոյութիւնն ու անկախութիւնը:

Համիսլամութեան այդ նոր արտայայտութեամբ սպառնական գրութեան մէջ կը գրուի մասնաւորապէս Գողթանի, Զանգեզուրի եւ Ղարաբաղի հայութիւնը: Գրեթէ միաժամանակ մեր այդ երեք՝ մայր երկրէն կտրուած երկրամասերը կ'ենթարկուին թշնամի կանոնաւոր եւ անկանոն զորամասերու յարձակումներուն:

Էդիֆ եւ Խալիլ բէյերը, յենակէտ ունենալով Նախիջեւան — Օրտուրաթը, կը սկսին իրենց գործողութիւնները Գողթանի դէմ: Քեազիմ բէյը Բարդիւշատէն՝ Ղափանի արեւելեան գիւղերու դէմ, իսկ Նուրի եւ Խալիլ փաշաները՝ Զարուղէն Զանգեզուրի դէմ:

Թշնամին նպատակադրած էր՝ մեր ժողովրդի խոշոր մէկ մասի դիակի վրայով կամուրջ նետել Տաճկաստանի եւ Ատրպէյճանի միջեւ եւ, տէր դառնալով Սիւնեաց աշխարհի ու Գողթանի բնական ամրութիւններուն, մշտական սարսափի տակ պահել մեր մատաղ հանրապետութիւնը:

Գողթանի դրութիւնը, որ աւելի ծանր էր իր աշխարհէն կտրուած ըլլալու, հացի, ռազմամթերքի պակասութեան եւ այլ պատճառներով, այդ օրերուն կը ստիպէ այդ դաւառի՝ կոմիսար Աշոտ Մելիք – Մուսեանին սրտառուչ կոչով մը, հողեվարող Գողթանի դատը յանձնել համայն հայութեան և անմիջական օգնութիւն խնդրել: Նոյն օրերուն Երեւան կը հասնի մեր այդ վտանգուած երկրամասի միլիցիայի պետ Մովսէս Գիւլնաղարեանը՝ օգնութեան գործը արագացրնելու առաքելութեամբ: Հ. Հ. կառավարութիւնը՝ դրադուած Վեդիբասարի ու Շարուրի անյաջող կռիւներով, կը դժուարանայ կանոնաւոր զօրամասեր ուղարկել Գողթան եւ այդ շրջանը կը զրկէ զիս:

*
**

Մեզի հետ, գրեթէ միաժամանակ Չանդեղուր կը հասնի Գողթանի միլիցիայետը, իր հետ բերելով Հ. Հ. Նախարարական Խորհուրդի կողմէն Գողթանի 5-րդ համագումարի նախագահութեան տրուած պատասխան – դրութիւնը, որուն մէջ, ի միջի այլոց, ըսուած է՝ «Հայաստանի կառավարութիւնը այժմ ձեզի իրական օգնութիւն հասցնելու կարող չէ: Գողթանի ժողովուրդը դադիթեցուցէք Գենուազի եւ Ղափանի շրջանները»:

Իմ եւ Աշոտի կողմէ կ'որոշուի ժողովրդի սեփականութիւնը չզարձնել այդ դրութիւնը՝ լքում եւ խուճապ չառաջացնելու նպատակով: Ամէն գնով պէտք էր մեր ձեռքը պահել Գողթանը, եթէ չէինք ուզեր ձեռքէ տալ նաեւ Չանդեղուրը: Ով որ ծանօթ է մեր այդ դաւառակի բնական ամրութիւններու ռազմադիտական արժէքին, անվերապահօրէն կ'ընդունի, որ թշնամին, տէր դառնալով այդ շրջանի, առանց դժուարութիւններու պիտի վտանգէր ողջ Չանդեղուրը՝ Հայաստանի ուժեղ ողնաշարը:

Ահա այդ պարզ նկատառումներով կ'ընդունիմ՝ Ղափանի եւ Գենուազի ազգային խորհուրդներու ցանկութեամբ՝ կապարգողթի(*) ռազմական ուժերու ընդհանուր հրամանատարութիւնը եւ անմիջապէս երկու հարիւր ընտիր զանգեղուրցիներով Ղափաջուզի լեռնանցքով կ'իջնեմ Գողթան:

Մեր այդ շրջանի կուլտուրական փառքը կազմող Ագուլիսները

(*) Ղափան – Գենուազ – Գողթան:

վաղուց ճանչցած էին Ատրաքէյճանի իշխանութիւնը եւ կը կառավարուէին Էդիֆ - բէյի կողմէն :

Ազուլիսներու օրինակին հետեւելու պատրաստութիւններու մէջ էր եւ Յընա գիւղը : Սակայն, Սիւնեցիներու զօրամասի ներկայութիւնը, դուրսի աշխարհի հետ ստեղծուած կապը եւ իմ անվերապահ խոստումը՝ ամենակարճ ժամանակամիջոցին բարւոքեց Գողթանի ռազմագիտական ու տնտեսական դրութիւնը՝ ունեցաւ իր բարերար ազդեցութիւնը եւ Յընան, Ռոստոմի ծննդավայրը, հրաժարեցաւ Ատրաքէյճանին հպատակութիւն յայտնելու մտքէն : Բարոյապէս գօտեպնդելով այդ շրջանի հայութիւնը, հայ խմբապետներէն Ղազարը նշանակեցի տեղւոյն ռազմական ուժերու հրամանատար եւ վերադարձայ Զանդեզուր :

*
* *

Ղափանի Հանքերում հաստատելով շտաբս, անցայ գործի :

Շրջագայելով գաւառակները, տեղն ու տեղը ուսումնասիրեցի երկրին աշխարհագրութիւնն ու տեղադրութիւնը : Մանօթացայ շրջաններու ռազմագիտական «յամառ» եւ թոյլ կէտերուն հետ : Սահմանագլխային եւ հասարակականապէս թոյլ բոլոր գիւղերուն կառուցանել տուի միջնաբերդեր եւ այլ ձեւի ամրութիւններ, տալով ասոնց այս կամ այն ազգային հերոսի կամ գործիչի անունը՝ Քրիստափորարբերդ, Եփրեմարբերդ, Ռոստոմարբերդ եւն . : Գիւղէ գիւղ անցնելով ուսումնասիրեցի ժողովրդի նիստ ու կացը, սովորութիւնները, աւանդութիւնները, հոգեբանութիւնը : Խօսեցայ Սիւնիքի անցեալէն՝ մեծ մեռելներէն ու փառքերէն : Աշխատելով մշակել ժողովրդի մարտական առաքինութիւններն ու սիրտը, անոր մէջ ջանացի վառել իր անպարտելիութեան հաւատքը եւ իրեն մօտիկ տպագային յաղթանակներ տալու խոստումներ կատարեցի : Զէնք կրելու ընդունակ տարրերէն կազմակերպեցի ժողովրդական վաշտեր եւ, առաջ քաշելով գիւղերու բանխմաց ու արի երիտասարդները, սկսայ մարզել եւ դաստիարակել դանոնք, որպէս վաշտապետ, դասակապետ, օղակի աւագ, մէկ խօսքով՝ որպէս ղեկավար :

Վաշտերուս սորվեցուցի լեռնային կռուի արուեստը, միշտ ալ բացօթեայ, լեռներու վրայ կամ դաշտերը, գործնական ծանօթութիւններ տալով ռազմագիտական դանազան հնարագիտութիւններու, դաւերու եւ խաղերու մասին : Գիւղերու մէջ դասաւանդեցի պատնիշային կռուի ձեւերու, անսխալ նշանառութեան եւ լեռնային տեղեկագրութեան առաւելութիւններէն օգտուելու մասին : Սորվեցուցի պայթուցիկ տակառներ պատրաստելու եւ պայթեցնելու ձեւերը : Կազմակերպեցի ռազմափորձեր եւ փորձնական ահալոչեր, ինչպէս եւ դիտարաններ, դարաններ ու լուսախօսութիւններ :

Համոզուած ըլլալով, որ մեր հանրապետութիւնը, հակառակ

իր ցանկութեան, պիտի չկարողանայ Սիւնիք եւ Ղարաբաղ հասցնել զինուորական ոյժ, տեխնիկ միջոցներ եւ կենսամթերք, ժամանակ չխնայեցի մարտական ուժերու ոգեւորութեան աղբիւրը դարձնել ժԸ. դարի Դաւիթբէգեան շրջանը եւ մեր վերջին յեղափոխական հերոսամարտը:

Թշնամին հոգեբանօրէն դերադաշնելու համար, պէտք էր երկիրը լեցնել մեր պատմական հերոսներու եւ նահատակներու ոգի-ստուերներով, եւ այդ կը յաջողէ ինձ: Ահա՛ նման, մօտ չորս ամիս տեւող կրաւորական ինքնապաշտպանութեան իմ գործունէութիւնը ստեղծեց ապագայ ռազմական ձեռնարկութիւններու համար այն բոլոր նախապայմանները՝ ժողովրդական կուռ բանակ, տաքտիքական դաստիարակութիւն, հոգեբանական նպաստաւոր մթնոլորտ, — բախտորոշ ազգակներ, որոնք հնարաւորութիւն պիտի ընձեռէին իմ խնամքին յանձնուած երկրամասին վարելու իրեն վիճակուած անհաւասար դոյամարտը:

ՕՆՁՈՒ ԶՈՐԻ ԳՐԱԻՈՒՄԸ

Չանդեղուրի, մասնաւորապէս կապարդողթի համար ճակատագրական նշանակութիւն ստացած էին Օխչու եւ Գեղուայ թրքաբանակ ձորերը, որոնք սերտ կապ ունենալով Ատրպէյճանի եւ Նախիջևանի թրքութեան հետ, եռուն պատրաստութիւններու մէջ էին՝ մէկ հարուածով ոչնչացնելու Գողթանի եւ Բաղարերդի հայութիւնը եւ ապա, տէր դառնալով այդ շրջաններու ռազմագիտական կարեւոր կէտերուն, հարուածելու Չանդեղուրը թիկունքէն:

1919 թ. Նոյեմբեր 1ին Օրտուրաթէն Օխչի ձոր կ'անցնին տաճկական երկու վաշտեր իրենց զարիթներով եւ շաւուշներով: Երկու օր ետք՝ այդ ձորը կը յայտարարուի Ատրպէյճանի անբաժան մասը: Քաղաքական այդ խաղէն յետոյ տաճիկ սպաները զօրահաւաքի կ'ենթարկեն տեղական թուրք ուժերը, կապուելով հռչակաւոր Գեղուաձորի հետ եւ այսպիսով կը փակեն Գողթանը Չանդեղուրին միացնող միակ ճանապարհը: Սովէն ու թշնամիէ նեղուած Գողթանը կը կրտորուի աշխարհէն, կը պաշարուի, իսկ Բաղարերդի հայութեան համար կը ստեղծուի աւելի քան սպառնական դրութիւն մը: Ահա մեր վրտանդուած այդ երկու շրջանի ազգաբնակիւթիւնը նման դրութեան մէջ թողուլ՝ կը նշանակէր զիտակցօրէն դայն թշնամիի սուրին եւ հուրին մասնել:

Ասղաղ ճանապարհով չյաջողեցայ վերականգնել հաղորդակցութիւնը Չանդեղուրի եւ վտանգուած շրջաններու միջեւ: Տաճկական վաշտերու ներկայութենէն երես ու սիրտ առած Օխչու թրքութիւնը լսել անդամ չցանկացաւ, ճանապարհը բանալու համար, տրբուած իմ առաջարկի մասին: Այլեւս ոչ ոք կը կասկածէր, որ այսպի-

սի հանդամանքներուն դանդաղիլը եւ Պ. Հասկելի բանակցութիւններու հետեւանքին սպասելը ոչ միայն պիտի յետաձգէր գործը, այլեւ պիտի վտանգէր Կապարդոզի գրութիւնը:

Կար եւ ուրիշ ծանրակշիռ պարագայ մը, որ նոյնպէս հրամայօրէն կը պահանջէր անցած համարել կրաւորական ինքնապաշտպանութեան շրջանը: Այն, ինչ որ հնարաւոր էր այդ օրերուն, հետագային կարող էր անհնարին ըլլալ: Այդ օրերուն Գենուազը ի վիճակի էր որոշ մարտական դեր ստանձնել Գեղուայ եւ Օխշի ձորերու նրկատմամբ, սակայն եթէ թշնամին սկսէր իր գործողութիւնները եւ դրադեցնէր մեզ միաժամանակ քանի մը ճակատներու վրայ, Գենուազը այլեւս այդ դերը չէր կարող կատարել: Ան, ինչպէս եւ Ղափանը, ստիպուած պիտի ըլլար ինքնապաշտպանուելու իր սահմաններուն վրայ, բախտի կամքին թողելով Գողթանի եւ Բաղարերդի հայութիւնը:

Ահա՛ թէ ե՞րբ եւ ի՞նչպէս թշնամին ստիպեց մեզ, հնչած համարել գործօն ինքնապաշտպանութեան ժամը եւ գործի անցնիլ:

*
**

Նոյեմբեր 15ի դիշերը Գենուազի ժողովրդական վաշտերը տրուած մարտադրի համաձայն, յանկարծակիի բերելով Օխշի ձորը, առաջարկեցին թուրք դիւղերուն՝ «դինաթափուիլ, յանձնել տաճիկ սպաները եւ ճանչնալ Ջանգեղուրի ազգային խորհրդի իշխանութիւնը»:

Թրքութիւնը պատասխանեց վճռական մերժումով եւ թշնամական գործողութիւններու սկսաւ մեր դէմ: Մեր կողմէն, առաջին անգամ, գործի գրուեցան պայթուցիկ տակառներ եւ կռուի առաջին օրն իսկ ձորի բոլոր դիւղերը(*) անցան մեր ձեռքը: Տաճիկական սպաներէն եւ դինուորներէն եւ ոչ մէկ հողի ազատեցաւ:

Մեր այս անդրանիկ յաջողութեան շնորհիւ վերահաստատուեցաւ հաղորդակցութիւնը Գողթանի, Բաղարերդի եւ Ջանգեղուրի միջեւ: Մեր վաշտերը իւրացուցին կռուի պատնիշային ձեւերը, ինչպէս եւ պայթուցիկ տակառներու վրկարար գործածութիւնը: Չեռք բերուեցաւ որոշ քանակութեամբ դէնք, ռազմամթերք, հացահատիկ եւ այլ աւար: Մեր գործադրած կռուի ձեւերու շնորհիւ ունեցանք մէկ վերաւոր միայն: Թշնամիի կորուստը մեծ էր: Բացի ատկէ, ան դրկուեցաւ կարեւոր ռազմագիտական յենակէտէ, իսկ մենք, վրկելով Բաղարերդի հայութիւնը, հնարաւորութիւն ստացանք, կարիքի դէպքին, Գողթանին ցոյց տալու մարտական աջակցութիւն:

(*) Շաբաղին, Օխշի, Փիրդովդան, Արալիս եւ այլն:

Ի Ա Ձ Ա Կ Ր Ա Ց

Ա Ր Շ Ա Ի Ա Ն Ք

Գ Ե Ղ Ո Ի Ա Ձ Ո Ր Ի

Դ Է Մ

Գեղուածորը պատմական, հին Բաղայ իշխանութիւնն է, որ՝ սեպածեւ թաղուած Սիւնիքի սրտին մէջ՝ հսկայական մագնիսի պէս դէպի իրեն կը քաշէր Ատրպէյճանի եւ Նախիջևանի թրքութիւնը եւ օրէօր աւելի նեղը կը դնէր Չանդեղուրի հայութիւնը:

Անդրկովկասեան հանրապետութիւններու գոյութեան առաջին օրերէն իսկ, թրքութեան այդ ամենէն անհաշտ ու հրոսակարարոյ հատուածը՝ մէջքը տուած Նախիջևանին՝ կը ձգտէր Ղափան-Գինուաղի վրայով միանալ Ատրպէյճանին, որմէ մօտ տասնեակ մը վերստերով գատուած է: Բոյն դրած հսկայ լեռներուն վրայ ու որջացած անդնդախոր ձորերու մէջ՝ այդ հռչակաւոր ձորը լայն հնարաւորութիւն ունէր ցանկութեան դէպքին, կարելի, իրարմէ գատել հայկական շրջանները եւ մշտական ահի ու սարսափի տակ պահել հայ ազգարընակչութիւնը: Այդ ձորի չար ու աղիտալի հարեւանութենէն մասնաւորապէս կը նեղուէին Ղափանը, Տաթևը, Դարարասը եւ Սիսիանը, որոնք ստիպուած էին իրենց կռուող ուժերու խոշոր մէկ մասը,

յանուն իրենց ինքնապաշտպանութեան, որ ու զիշեր պահել ճակատներու վրայ, զիրքերը :

Խալիլը կ'ըսէր սեւ ու արնոտ օրերուն այդ արեան ու զիակներու ձորէն անցնող Նախիջևանի եւ Երնջակի բազմահազար գաղթականութեան մէկ մասի արիւնով արբեցած այդ յանցաւոր ձորը անպատիժ կերպով դեռ կը շարունակէր իր ասպատակութիւնները : Անոր աւազակախումբերը սարբերարար կը քշէին այս կամ այն հայ դիւղի տաւար-ոչխարը, կը սպաննէին դաշտերուն մէջ յանկարծակիի բերելով հայ շինականը, կը փախցնէին կիները, զերի կը տանէին պատահած ճամբորդներ՝ փրկագին ստանալու նպատակով եւայլն :

«Ահա թէ ինչո՛ւ Զանգեզուրի հայութիւնը յանուն խաղաղութեան շարունակ կը պահանջէր պատժել Գեղուածորի մարդակերները եւ ապատել գերութեան մէջ գտնուող 40-ի շափ հայ կին եւ աղջիկներ^(*) :

Ահա թէ ինչո՛ւ պէտք էր կործանել «Կարթագինէն», եթէ չէինք ուզեր Զանգեզուրի հայութեան զերեզմանի վրայով միացած տեսնել արեւելքի եւ արեւմուտքի թուրք փաշաներու արիւնոտ ձեռքերը :

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Մօտ շարաթ մը տեսող իմ կատարած հետախուզութիւնները՝ Գեղուածորի աշխարհազրահան զիրքի ու տեղազրահան գրութեան հետ ծանօթանալու նպատակով, պարզեցին ինձ, որ Գեղուածորը այն եզակի վայրերէն է, ուր կռուի յաջողութիւնը սպասել կարելի է շատ բաներէ, միայն ոչ՝ ռազմավարական սովորական ձեւերէն :

Հրացանը չէր, որ պիտի մաքրէր այդ հեքիաթական ձորը, ուր ամէն մէկ բարձունք անառիկ բերդ մըն է, ամէն մէկ ժայռ՝ բնական ամրութիւն մը, ուր թշնամին հնարաւորութիւն ունի, կռուի շարունակ ձեւերու կիրարկման դէպքին, միշտ ալ ամենաչնչին ուժերով զիմադրել յարձակողի տասնապատիկ մեծ մարտական միաւորներուն . վերջապէս, ուր լեռները թողելէ յետոյ ան կարող է զիմադրութիւն ցոյց տալ նաեւ անդնդախոր ձորերու մէջ, ուր մտնել, ասլաւինած միայն հրացանին, կը նշանակէ զերեզման դտնել :

Ինձ համար դադանիք չէր եւ այն, որ խրամատային ձգձգուող կռիւներու դէպքին մեր դործողութիւնները կարող էին վերջանալ ոչինչով, որովհետեւ կռուի երկրորդ օրը Ատրպէյճանը պիտի չյապադէր օղնութեան փութալ Գեղուածորին :

(*) «Սիւնիք», քիւ 18 :

Ահա թէ ինչո՛ւ մեր հարուածը պիտի ըլլար շեշտակի, ահաբեկիչ եւ տարերային:

Իմ ժողովրդական վաշտերը հողերանօրէն պատրաստ էին խաչակրի բարձր արամազրութեամբ շարժելու դէպի թշնամին: Ըսել է՝ յաջողութեան բարոյական ազգակը կար: Կը պակսէին՝ կռիւներուն տարերայնութիւն հազարհոյ հարիւրի չափ պայթուցիկ տակառներ, հրաշագործ դէնք մը, սրուն փրկարար դաղափարը յղացեր էի թշնամի դիրքերը ուսումնասիրելու ժամանակ:

Մէկ քանի օրուան ընթացքին մօտ երկու տասնեակ՝ ուժանակի դործածութեան ծանօթ Ղափանցիներ կը պատրաստեն հարկաւոր քանակութեամբ 1, 2, 3, 4, 5 փթանոց տակառներ եւ մի քանի հարիւր ձեռնառումբ: Վերջին ռազմափորձէն յետոյ, Նոյեմ. 30-ին, վաշտերուն կը դրկուի կռուի ծրագիրը եւ մարտակոչը (*):

Նոյեմ. 30-ի առաւօտեան Ղափանի վաշտերը, կազմ ու պատրաստ կը հաւաքուին Հանքերը, Գենուազ, Բաղաբերդ, Տաթեւ — Դարաբասի ուժերը՝ Մաղղաչ: Նոյն օրը զինուորութեան եւ ղեկավարներուն կը բացատրեմ ներկայացած խնդիրները: Կէս դիշերին շեփորը ոտքի կը հանէ քուն մտած վաշտերը:

— Օ՛ն, յառա՛ջ, դէպի Գեղուածոր, դէպի յաղթութիւն, — կը արուի արշաւանքի հրամանը:

— Մեզի հետ Աստուած եւ Դաւիթ բէկի վրիժակ հողին, — կը լսուի զօրաշարքերէն:

Խորհրդաւոր լուսութեան մէջ կը բարձրանայ սիւնեցի երգչի յաղթական ձայնը:

(*) «Զինուորանէ՛ր քշնամիի ցանկութեամբ կը սկսի մեր արշաւանքը, մեր խաչակրաց արշաւանքը Գեղուածորի դէմ: Վաղը, երբ ձեր խենք գրոհներէն և զարկերէն քշնամին շշմած կը թողու իր գիւղերը, ձեզ կ'ողջունեն մեր հիմաւորց, այսօր քշնամիէն պղծուած, բերդերու եւ վանքերու աւերակները:

Վաղը, երբ այդ ձորէն կը լսուի ձեր ոտքերուն ձայնը, ձեր զէնքերու շաշիւնը, հայ գերիները, Քէյփաշէնի բէգերու շնաբարոյ կրքերու առարկան դարձած հայ կիներ ծնկաչոփ կ'աղօթեն ձեր զէնքի յաջողութեան համար:

Վաղը, երբ քաջերդ Աջիբաշ հասաք, յիշեցէ՛ք՝ հալիւրէգեան սեւ օրերը, երբ այս գիւղի մօտ քշնամին բարբարոսաբար մորթոտեց երկու հազարի չափ տանկական սուրէն նոզոպրած հայ կիներու երեխաներ:

Կ'ըսեն, այժմ այնտեղ ամբողջ ձոր մը լեցուած է կմախփներով, գանկերով, ուր յանախ հիւր կու գան Գեղուածորի շուներն ու գիշատիչները:

Յիշէ՛ք այդ եւ եղէք անխնայ ձեզի դիմադրողներու նկատմամբ, ասպետ եւ մարդ եղէ՛ք կիներու, ծերերու եւ երեխաներու նկատմամբ:

Ուրեմն, յառա՛ջ, մեզ հետ Աստուած եւ Դաւիթ բէգի վրիժակ հոգին»:

Ընդհանուր օգուտը թեև մէջ ես-զիտ աւելի զինուոր կը զգամքան թէ ղեկավար: Բազայ հին իշխանութեան աւեր ու կիսաւեր տաճարներու ու բերդերու փլատակներ մագնիսի պէս կը քաշեն, կը յուզեն, կը թեւաւորեն բոլորս:

— Շո՛ւտ, վայրկեան առաջ Գեղուայ դուռը փակող բերդի վրայ մեր դրօշակը տեսնել...

Այդ վեհ եւ կախարդական պատկերով հմայուած, զինուոր թէ ղեկավար կը մօտենանք Գեղուածորին:

ՅԱՐՁԱԿՈՒՄԸ

Դեռ լոյսը չբացուած «Կոմբախ» բարձունքէն դէպի ձորը, որուն մէջ ինկած են թշնամիի ամենէն ուժեղ զիւղերը՝ Շհարջիկն ու Ազաղուն, կը գլորուի հինգ փթանոց պայթուցիկ տակառ մը:

Ազաղանչանը տրուած է: Կը սկսի յարձակումը: Թշնամին իր զիրքերն է:

Կռիւը կը բորբոքի վայրկենաբար: Թշնամի ուժերը կը ղեկավարեն Եփրեմի օգնականներէն պարսկական կռիւներուն աչքի ինկած Խան Կուլին եւ հոչակաւոր Լայիշ Օզլին:

Ղափանի վաշտերէն մէկուն կը յաջողուի խիզախ թեւանցով մը անսպասելիօրէն յայտնուիլ Շհարջիկի եւ Ազաղուի թիկունքը, սեպածեւ թաղուելով այդ զիւղերու եւ երկու Գեղաթաղերու միջև: Տաթեւեան զօրամասը, որուն դրուած էր երկու համանուն զիւղերու՝ Գերաթաղերու գրաւման խնդիրը, ժամը 10-ի մօտերը թոյլ յարձակումէ մը յետոյ, կը քաշուի դէպի Ռաչղաշ, մերկացնելով Գերաթաղերու եւ Շհարջիկ—Ազաղուի միջև ճակատամուխ եղած Ղափանի թեւանցային վաշտի թիկունքը:

Այս դէպքէն օգտուելով, թշնամին հնարաւորութիւն կը ստանայ անցնելու հակաթեւանցի եւ նեղը դնելու Ղափանի վաշտը, որ միայն պայթուցիկներու առատ դորձածութեան շնորհիւ, կը կարողանայ դուրս գալ թշնամիի ստեղծած օղակէն: Տաթեւեան զօրասիւնի քայլը ընդհանուր նահանջ համարելով, Քիրսէն ետ կը քաշուին ե՛ւ Գարարասի ուժերը, որմէ ետք թշնամին համախմբելով իր ուժերը, կը նետուի Գենուաղի զօրամասի վրայ: Երեկոյեան դէմ ճակատը կը լքէ ե՛ւ Գենուաղի ուժերու մէկ մասը եւ կը քաշուի Լիցք: Կը մնայ Ղափանի զօրամասը եւ կը շարունակէ կռիւը:

Շնորհիւ ծանօթ պատճառներու, մեզի չի յաջողուիր, առաջին օրը, որեւէ յաջողութիւն ունենալ:

Ամբողջ զիշերը կ'աշխատիմ վերականգնել Տաթեւի եւ Բաղա-

բերդի ճակատները: Կռուի երկրորդ օրը մեզի կը յաջողուի մտնել Շհարջիկ եւ հրդեհել քանի մը շէնքեր, սակայն դարձեալ շնորհիւ Տաթևի ուժերու մէջ նոր սխալին, ստիպուած կ'ըլլանք քաշուելու մեր դիրքերը:

Այդ օրն ալ կ'անցնի առանց վճռական հարուածներու:

Դեկտ. 3-ին Հանքերը կը հասնի դեռ Նոյեմբեր 24-ին Գորիսէն խնդրած թնդանօթս, որ անպատում դժուարութիւններով, կազմալուծուած վիճակի մէջ, մաս առ մաս, շալակով զինուորներս կը տեղափոխեն Կոմբախ լեռան վրայ:

Երեկոյեան դէմ թնդանօթը երկու հրանօթ արձակելէ յետոյ կը դառնայ կողքի վրայ եւ կը ջարդուի նշանացոյցը:

— Թնդանօթը անպէտքացած է, ալ չեմ կրնար կրակել, — կը յայտնէ թնդանօթաձիգը:

Օրուան լոյսի հետ կը թուլանայ եւ կռիւը:

— Պարոն հրամանատար, — կը հաղորդազրէ մեր տնտեսական մասի կառավարիչը, նկատի ունեցէք, որ պահեստի ընդամէնը մէկ օրուան հաց մնացած է:

— Գորիսէն կը սրտասխանեն, — կը զեկուցէ համհարզս, — որ եռադծանի փամփուշտ շէնք կրնար զրկել, որովհետեւ իրենց համար ալ քիչ մնացած է:

— Պ. հրամանատար, — ինծի մօտենալով, կարեկցարար կ'ըսէ Ղափանի ազգային խորհրդի նախագահը, — փախիլ-ազատուիլն ալ քաջութիւն է՝ ըսած է Քէօրօղլին. ի՞նչ միտք կայ, հնարաւոր է առանց հացի, ապամամթերքի եւ թնդանօթներու շարունակել գործողութիւնները:

Ծա՛նր է վիճակս, ողբերգօրէն ծանր:

Ստեղծուած դրութենէն մինչեւ պարտութիւն եւ խայտառակութիւն քայլ մը մնացած է:

Նահա՛նջ... Միայն այդ դժբախտ դործողութեան մասին չէի մտածեր այդ ժամին:

Ես կարող չէի նահանջել, որովհետեւ իմ խնամքին յանձնուած ժողովուրդին շատ խօսած էի աննահանջ կռուի, յաղթական մահի, անկարելին կարելի դարձնելու մասին: Ես բարոյապէս ազատ չէի անգամ ետ նայելու, որովհետեւ ծով հպարտանք ու արհամարհանք դրած էի իմ զինուորներու հողւոյն մէջ, որովհետեւ հպարտ եղած էի, բարձր խօսած...

— Նահա՛նջ, չէ՛, չէ՛, խաչակիրները կամ կը յաղթեն կամ կը մեռնին, բայց ոչ կը նահանջեն:

Ահա՛ այսպէս, կռուի երրորդ օրը Գեղուածորի ռազմադործողութիւնները ինծի համար կը դառնան միաժամանակ ե՛ւ բարոյական խնդիր մը: Ես երբեք պիտի չմոռնամ այն վայրկեանը, երբ մեռնելու վճռականութեամբ նստայ ձիս եւ շարժեցայ դէպի կրակի դիժը: Ար-

դէն մութը ինկած էր : Մեր եւ թշնամի դիրքերը, որոշ կէտերու վըրայ, տխուր կ'առկայծէին խարոյկները : Հրացանածղութիւն չկար :

— Ո՞վ է եկողը, — կը լսուի սահակի ձայնը :

Կու տամ գիշերուան անուներ եւ կ'իջնեմ ձիէս :

Խարոյկներէն մէկի մօտ կը հաւաքուին ճակատապետները : Երկու խօսքով անոնց կը պարզեմ ընելիքս :

— Կը տեսնէ՞ք բերդը, որու փլատակներուն վրայ կը վառին թշնամիի կրակները. վաղը լուսարացին կամ մեր դրօշակը բարձրացուցէք անոր վրայ կամ դիակս, անոր պատերուն տակ : Դէ', վերա-



Չախէն աջ. — Ռուբէն՝ Նժդեհի քոչ որդին, Գեորգ՝ Նժդեհի քիկնապահը, Արամ՝ Նժդեհի ձիաւորներու հարիւրապետը, Ֆերիէտ (սպանուած Թաւրիզ), Գարեգին (ողջ՝ Քիրմանշահ – Իրան) :

Գարձէք դիրքերնիդ եւ վառ սահեցէք զինուորներու տրամադրութիւնը լուսարացի դրօշի համար : Ես պիտի աշխատիմ զեռ գիշերով զրաւելու Ղզղալան եւ զարնելու թշնամին թիկունքէն :

Վաշտապետներս զայրացած Գորիսի եւ Տաթեւի դէմ, կը ցըրուին իրենց տեղերը, իսկ ես կ'իստավաշտով մը կը շարժիմ Խլաթաղ :



Կէս գիշերը մօտ է : Խլաթաղի եկեղեցիին զանգը ոտքի կը հանէ գիւղացիութիւնը : Վայրկեաններ ետք, քանի մը գիւղացիներու հետ կը յայտնուի գիւղի քահանան :

— Խէ՛ր ըլլայ, պարոն, ինչո՞ւ այդքան ուշ, մտած կ'ըլլաք, հրամեցէ՛ք տուն, — ցուրտէն զողողալով կ'ըսէ քահանան :

— Ցուրտի մասին մտածելու ժամանակ չունիմ, տէրտէ՛ր, — կը խնդրեմ անմիջապէս ներկայացուցէ՛ք ինձ Ղզղալայի արահետներուն ծանօթ 3—4 վալադ, երեք հատ ալ՝ մօտ 50 արշիննոց չուան :

— Չուանն ինչերո՞ւզ պէտք է, Պ. հրամանատար, բեռնե՞ր ունիք, — կը միջամտէ տարեց գիւղացի մը :

— Ո՛չ, — ծիծաղով կը պատասխանեմ, — այդ չուաններով կամ թշնամին կամ մենք մեզ պիտի կախենք :

Գիւղացիները, կռահելով մեզ համար ստեղծուած ծանր դրութիւնը՝ կը մոռային :

Քիչ ետք կը ներկայանան վալադները : Բերած են ե՛ւ չուանները : Ժամանակը կարճ է, պէտք է աճապարել : Լուսաբացին անկարելի պիտի դառնայ այդ համարձակ ձեռնարկը, որմէ կախուած է թէ՛ կռուի եւ թէ՛ իմ բախար :

— Վաղը կը տեսնուինք Դաւիթ բէկի մեծ բերդը, — համբուրելով զինուորներէս մէկը եւ իր հրամանատարը, կու տամ շարժելու հրամանը :

— Վաղը կը տեսնուինք Դաւիթ բէկի մեծ բերդը, — Չիմանդադ, իսկ ես եօթը ձիաւորներով կ'ուղեւորիմ դէպի Հալիճոր :

Գիւղը դեռ կը հնչեն եկեղեցիի զանգերը : Հայ գիւղը կ'աղօթէ մեր զէնքի յաջողութեան համար : Կ'առաջանանք աճապարանօք : Ամենէն ուշը ժամը հինգին պէտք է ըլլանք մեր դիրքերը : Նոյն ժամին մեր ծանօթ կիսավաշտը, ճանապարհի չդոյութեան պատճառով, Չիմանդադէն Ղզղալա կոչուած բարձունքի վրայ չուաններով, մէկիկ-մէկիկ պիտի իջեցնէ քսանի չափ զինուոր եւ նոյնքան ալ պայթուցիկ տալիս, որպէսզի որոշուած ժամուն սկսինք ընդհանուր դրոհը : Շուտ տեղ հասնելու մտահոգութեամբ կ'անցնինք վատ, բայց կարճ ճանապարհներով :

Ուղեկիցներս լուռ են եւ մտածկոտ : Ես չեմ մտածեր : Կաւ... կաւ : Այս որոշման տէրը մտածելու կարիք չի զգար : Ալ չեմ մտածեր, բայց կը նախզգամ, որ ինձ պիտի յաջողուի բարոյապէս փրկել ե՛ւ զիս ե՛ւ մեր զէնքի պատիւը : Եւ որքան կը մօտենայ դրոհի ժամը, այնքան ես-զիս լուռ կը զգամ :

Մահն ու մահուան երկիւղը դադրած են դոյութիւն ունենալէ : Միակ բանը, որ դոյութիւն ունի, որ իրական է, ինձ համար, այդ Բաղայ մեծ բերդն է, որ հրեղէն պատկերի պէս թաղուած է ուղեղիս մէջ, հոգւոյս մէջ, երեւակայութեանս մէջ, որը առանց մեր դրօշակին չեմ կարող պատկերացնել :

*
* *

Որոշուած ժամին Ղզղալայէն մթութեան մէջ կը դժադրուի

պայմանական նշանը — «Ուժանակային խաղը»: Գրեթէ միաժամանակ Հալիճորի եւ Ղզղալայի դիրքերէն հսկայական զորդիւնով ու դոնոցով դէպի ձորերը կը գահավիժին տասի չափ պայթուցիկ տակառներ: Կը արուի ընդհանուր դրոհի հրամանը:

Ղափանի վաշտերը դուրս կը նետուին դիրքերէն եւ, առանց դնդակ մը արձակելու, հեղեղի պէս կը թափուին ձորերը: Ղզղալայէն թշնամիի թիկունքն անցած մեր կիսավաշտի գլորած «դինամիտային հրէշները» կը պայթին ուղղակի թշնամի դիրքերու վրայ: Տակառներու, ումբերու պայթիւններէն եւ մեր վաշտերու դոռ կեցցէներու արձագանգէն կը թնդան ձորերը: Ղափանի առիւծները կը մըրցին խիզախութեան եւ քաջութեան մէջ:

Ոչ ոք ուշադրութիւն չի գարձներ թշնամի կրակին, աշխատելով շուտ եւ առաջինը մտնել բերդը:

— Էրմանիլար բէիւֆ սանգեարլարի ալդրլար, դաշըն(*), — կը լսուի թշնամի պահակներու ձայնը:

Թշնամին, ծեծուած ու սարսափահար, կը լքէ Աղաղու եւ Շըհարջիկ գիւղերը՝ Գեղուածորի դուռը:

Մեր ուժերուն մէկ մասը կը հետապնդէ նահանջող թշնամին, իսկ միւսը՝ կը թափուի բերդը:

Գրիչս անդօր է, անկարող նկարագրելու բերդի դրաման առաջին վայրկեանները: Բոլորը կը խաչակնքեն իրենց երեսները, կը համբուրուին, կը դրկախառնուին, կը համբուրեն նուիրական փլատակները: Խանդավառութիւնը, արբեցումը ընդհանուր է:

Լոյսը կը բացուի մեր յաջողութեամբ:

Բաղաց երկրի դուռը փակող հնամենի բերդի կիսաւեր պատնէչի վրայ վեհօրէն ու հպարտ կը ծածանի մեր եռադոյն դրօշակը:

Մեր ձեռքն են թշնամիի երէկուան տիրապետող դիրքերը՝ ձորերու ռազմագիտական բանալիները: Կը մնայ օդտազորձեւ շահուած յաջողութիւնը:

Նոյն օրը, երեկոյեան դէմ, Գենուաղի քաջարի վաշտերը, կապուելով Ղափանի ուժերուն հետ, կը դրաւեն ձորերու սիրտը — հռչակաւոր ու յանցաւոր Գեղի գիւղը: Հայ քահանան ու հազարաւոր գիւղացիներ կը թափուին բերդն ու թշնամիի կողմէն դարերով անարդուած դարմանանոցներու եւ ախոռներու վերածուած հինաւուրց եկեղեցիները: Զօրքը վայրկեանէ վայրկեան կ'ընդլայնէ իր դրաման շրջանը:

Կռուի եօթներորդ օրը կ'իյնայ ձորերու վերջին գիւղը — հայ կին ու երեխաներու արիւնով յղփացած Աջիրաշը:

Գեղուածորը մերն է:

(*) Հայերը մեծ դիրքերը գրաւեցին, փախէ'ք:

ՇՈՒՌՆՈՒԽԻ ԿՈՒԻԻԸ

Որքան որ Գեղուածորերու դրաւումը բարձրացուց Սիւնիքի հայ տարրի տրամադրութիւնը, այնքան ալ ընկճեց թրքութեան ուղին:

Մեր կռուի ձեւերուն, ուժանակային դրոհներու, մասնաւորապէս տակառներու մասին, դրաւուած ձորերէն փախած թրքութիւնը սարսափելի առասպելներ հիւսեց ու տարածեց: Վախ կը տիրէ ամբողջ Բարգիւշատին: Հանդիսա չէ եւ Օրտուբաթը, որը համոզուած ըլլալով որ մեր հերթական հարուածը իրեն պիտի տրուի, իր հարըստութիւնները տենդօրէն կը տեղափոխէ պարսկական ափը: Մեր վաշտերը սրտատրոփ կը սպասեն դէպի Օրտուբաթ շարժելու հրամանին: Մեզի համար ստեղծուած նպաստաւոր հոգեբանական մթնոլորտէն կարելի է եւ պէտք է օգտուիլ մեծապէս:

Դեկտ. 9-ին Չանդեղուրի ընդհանուր հրամանատար զօրավար Ղազարովին կ'ուղղեմ դրութիւն մը, առաջարկելով եւ պարզելով յարձակողական իմ ծրագիրները:

Իմ այդ պաշտօնական դրութեան պատասխանելու փոխարէն Չանդեղուրի հրամանատարութիւնը զիս կը հրաւիրէ Գորիս խորհրդակցութեան:

Կը պարզուի, որ Երեւանեան զօրամասի հրամանատարութիւնը մտադիր է սկսելու Շուռնուխի գործողութիւնը: Աննպատակ ու վրտանգաւոր համարելով այդ գործողութիւնը, ես կը մնամ իմ նախկին տեսակէտիս վրայ: Այդ օրերուն, երբ հայկական Ղարաբաղի ապստամբութեան պատրաստութիւններ կը տեսնուէին, Շուռնուխի յիմար գործողութիւնը առիթ պիտի տար Ատրպէյճանին, նոր ուժեր կեդրոնացնել Ղարաբաղի եւ Չանդեղուրի ճակատներուն վրայ: Այդ շրջանը առնելիք մեր ամէն մէկ քայլը կարող էր դահաճիժել Ղարաբաղի դէպքերը, ուր այդ օրերուն ոչ կանոնաւոր կազմակերպութիւն կար, ոչ ալ հարկաւոր քանակութեամբ ռազմամթերք:

Կար վերջապէս Գողթանի հարցը, որ ծանօթ պատճառներով կարելի չէր յետաձգել:

— Մեր հերթական գործողութիւններու առարկան պէտք է ըլլայ Օրտուբաթը, — կը պահանջենք մենք՝ ես եւ Աշոտը:

— Շուռնուխի գործողութիւնը նա'խ, — կը յամառի Գորիսը: Կը սկսին լուրջ տարակարծութիւններ, այդ հարցերու շուրջ: Չանդեղուրի հրամանատարութիւնը, ինչպէս եւ ղեներալ-կոմիսարը կը մնան անյողգող իրենց որոշումներուն մէջ:

Ինձ կը մնայ տեղի տալէ առաջ, Հ. Հ. Կառավարութեան Գորիսի զինուորական եւ քաղաքացիական ներկայացուցիչներուն ուղղել հետեւեալը.

«Բարոյական պարտք կը համարեմ վերջին անգամ նախագրու-

շացնելու ձեզ, որ Շուռնուխի գործողութիւնները շատ ծանր հետեւանքներ պիտի ունենան Ղարաբաղի եւ Գողթանի համար: Ապագայ պատասխանատուութեան գիտեալ եւ իմ ուժերը ազատ կացուցանելու համար անգամ մըն ալ կը յայտնեմ ձեզ, որ ես քանիցս ձեզի յայտնած պատմաներովս ղէմ եմ Շուռնուխի ուղղութեամբ սկսուելիք գործողութիւններուն: Ի հարկէ, այդ այդպէս ըլլալով հանդերձ, իմ տեսակէտը տուեալ հարցի մասին, որպէս զինուորական, իրաւունք չի տար չկատարել ինձի տրուելիք հրամանը»:

Յունուար 19-ի առաւօտեան, ղեռ լոյսը չբացուած, կը սկսի մեր յարձակողականը: Թշնամին, ինչպէս եւ կը սպասէի, մեր կռուի ձեւերէն խուճապահար, կը բռնէ փախուստի ճամբան:

Մեր վաշտերը կը գործեն զրեթէ առանց հրացաններու: Գործ կը տեսնեն պայթուցիկ տակառները: Կռիւ չէ, այլ հարսանիք: Գրոհները կը կատարուին աննախընթաց տարերայնութեամբ: Մէկը միւսի ետեւէն կ'իջնան թշնամիի ձեռքին գտնուող բարձունքներն ու դիւղերը:


Կռուի երկրորդ օրը թշնամին, օգնական ուժեր ստանալով, կ'ամբանայ անուանի քիւրտ Սալաջի, բայց շնորհիւ մերիններու՝ նոյն օրը երեկոյեան ղէմ կազմակերպած խելահեղ խոյանքի մը, հակառակորդը կը ծեծուի ե՛ւ այդ կէտին վրայ:

Կորսնցնելով Բարդուշատ ղեռի աջ ափին ինչպէս այս կարեւոր ամբողջիւնը՝ թշնամի ուժերը կը բարոյսալքուին ու կը ցրուին, որմէ յետոյ մեր վաշտերը, յաղթականօրէն կը շարժին ղէպի Որոտանի ափերը(*):

Դժբախտարար, մեր այդ յաջողութեան առթած ուրախութիւնը շատ կարճատեւ եղաւ: Ազուլիսի տեղահանութիւնը, Էֆեթ բէյի կողմէն, եկաւ գառնացնելու մեր սրտերը:

Ջանգեղուրի հրամանատարութիւնը անպատեհութիւնը ունեցաւ շատ ուշ զգալու իր ազիտալի սխալը, բայց ուշ: Անոր կը մնար ընդունիլ, որ ռազմագիտական բոլոր սխալները կռուադաշտին վրայ կը սրբագրուին սուրով եւ հուրով միայն եւ խորապէս ցաւիլ, որ չէր բարեհաճած լսել անոնց, որոնք իրմէ առաջ ուրիշ դրամ էին Զանգեղուր եւ աւելի մօտէն ծանօթ էին իրերու դրութեան:

(*) Իմ ուժերը մարտագրով որոշուած վեցի փոխարէն կը գրաւեն 33 գիւղ եւ Այիկղաղ, Խանազա, Այեաղի, Գեոյեղ ու Հարթիշ բարձունքները:



«Դաշնակցութեան Պանթօնը» վտիտ գրքոյկ մըն է, 21 էջնոց: Բանաստեղծական թռիչքով գրուած էջեր են: Սրբտարուխ ու սրտագեղ «տուրքեր»՝ տրքուած ծանօթ կամ անծանօթ հայ զինուորագրեալին:

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ ԶԱԻԷՆԻՆ

Գիշե՛ր է...

Լուսնի ոսկեշող ցուլքերի տակ զլուխս՝ վշտացած հրեշտակի պէս գերեզմանաքարերից մէկին դրած՝ լռութեան խորհրդաւոր փրփուտն եմ լսում:

— «Տեսնո՞ւմ ես, փափսում է լռութիւնը միտտիկ, տեսնո՞ւմ ես այն զեղատխուր հողաթումբը... Ա՛հ, նրա տակ էն հողի տակ հող դարձողը երազում էր՝ Զարի ու Խաւարի գահերն աւերել, աշխարհը երջանկացնել էր երազում...»

Երազում էր ու երջանիկ էր Նա, երբ լսուեց Փալազի չար քրքիջը՝ շարժուեց մանդաղը մահաբեր ու սպաննեց երագն ու երագողին... ,

Այսպէս, լեզու առած փափառւմ է լռութիւնը միատիկ ու հողիս խեղդող թախծի գիշերն աւելի սե՛ւ, աւելի ճնշող է դառնում...

Եւ ուզում եմ ճշալ ու փախչել ես...

Փախչել, փախչել հեռու, շա՛տ հեռու...

Փախչել՝ դուրս գալ աշխարհից...

Ա Շ Ո Ւ Ղ Ը

— «Յո՞ երբաս»:

— «Հո՞ւմ՝ նորէն խաշուելու»:

... «Այնտեղ, Մասսի էն ստորոտում կայ մի երկիր, ուր դա-
րեր է ինչ, օրէնքի ու արդարութեան տեղ գործում են երկաթն ու
եաթաղանը, ուր հայ ցեղի եօթն անգամ խաշուած մասի օրը սեւով է
սկսւում, գողգոթայով վերջանում»...

Այսպէս սկսեց Նա իր պատմութիւնը Տաճկահայաստանի մա-
սին՝ Արաքսի ափին ընկած գիւղերից մէկում...

Ու այն օրէն «Մասսի էն ստորոտը» վառեց իմ երեւակայու-
թիւնը, իրեն քաշեց իմ սիրտը, իր հողին, իր անունին կապեց իմ
էութիւնը...

Ու այն օրէն շատերի պէս ես էլ ուխտեցի՝ էն շարաքախտ ժո-
ղովրդի օր ու արեւին մեռնել...

.

... «Աշխարհը, ո՛հ, այդ անսիրտ մայրը, որի լի ստինքները
միայն կարող հզօրները կը ծծեն»...

Աշխարհը, ուր մերկն ու սովածը, ուր ճակատագրի խորթ ու
զրկուած որդիները տեղ չունեն, փայ չունեն...

Այսպէս վերջացրեց նա իր խօսքն աշխարհի անարդարութեան՝
անարդար կարգերի ու օրէնքների մասին...

Ու այնուհետեւ մարդկութիւնը կերակրող, աշխարհը հարրս-
տացնող իրաւագործի բանուորն ու գիւղացին դարձան իմ աստուա-
ծութիւնը...



Առաքեալ, բառիս ամենավսեմ իմաստով յեղափոխական ա-
ռաքեալ էր Աշուղը:

Զկայ, Գողթանի երկնքի տակ, Արաքսի ափերում չկայ մի
գիւղ, ուր լսուած չլինէր Աշուղի ձայնը:

Ու միշտ էլ բերլիական առաքեալների պէս պարզ, ու միշտ էլ
ոտքով շրջելիս:

Ու այդ այն սեւ շրջանում, երբ անեղր Ռուսաստանի միակ

զարգերը կազմում էին ժողովուրդների երեւակայութիւնն ահարեկող դժոխային բանտերն ու գնդանները, կախաղաններն ու կառափնարանները, երբ ցարի ու խաւարի թագաւորութեան մէջ ազատ ու բարձր խօսքի տեղ աւելի ազատօրէն բարձրանում ու իջնում էր մըտրակը :

Այն մղձաւանջային շրջանում, երբ շատերն էին փախչում Հոսմից ու յանդուգն քիչերին ուղղում իրենց «Յո՞ երթաս»ը՝ Աշուղը վերջին անգամ, յեղափոխութեան կարմիր աւետարանը գրկած՝ մըտաւ Հոսմ ու... խաչուեց :

Փա՛ռք...

ԱՐԾԻԻ – ԼԱԹՕՆ

«Քե՛զ, արքաների մէջ միայն քեզ, դահերի մէջ միայն քո դահը՝ լեռների էն սէզ ու անհաս բաշերը սիրեցի ես»...

Այս խօսքերը շնչացին Արծիւ Լաթոյի բոցավառ շրթունքները, երբ մի օր, դեռ պատանի, հայրենի դաշտերից նրա հայեացքը՝ տիտան Արնոսի կատարին սաւառնող սեւ արծիւը գերեց...

Ու յուզուած ու մտախոհ նա վերադարձաւ տուն, պատից խլեց հօր հրացանը, համբուրեց, համբուրեց մէկ էլ, համբուրեց եօթն անգամ, գրկեց ու... լուսարացին ջահել Ռշտունցին էլ չկա՛ր գիւղում...

Օրեր անցան :

Արնոսի կատարէն Լաթոն իր արծուային թեւերը տարածեց Ռշտունիքի վրայ ու այն օրէն մեղմացան աւարն ու աւերը, նուազեցին արիւնն ու արցունքն այդ երկրում...

Պատերազմ էր :

Իր սրգիների արիւնով եօթն անգամ սրբացած հայու երկիրը ընդմիջտ ազատուած էր համարւում :

Երբ սկսուեց ոռնս դօրքերի Հայաստանն աւերող ու ամայացրնող նահանջը...

Լաթոն՝ Արնոսի հպարտ արծիւը չուղեց, չկարողացաւ բաժանուել իր սիրած լեռներէն ու մնաց...

Մնաց մենակ, մենակ ամայացած երկրի մէջ ու մենաւորի անսահման յուսահատութեամբ կանչեց՝

— «Ո՛ւր ես, ցեղդ իմ, ո՛ւր»...

Եւ երբ որբացած երկրի դար ու դաշտերը որպէս տխուր արձագանգ կրկնեցին. — Ո՛ւր ես յուսահատ ու մրիժավառ հայրդին՝ որպէս լերան կատարէն պոկուած հսկայ ժայռ՝ նետուեց գէպի թշնամին ու... ընկաւ...

Փա՛ռք...

ՀԱՅ ԽԱԶԱԿԻՐԸ

Ինձ ասացին՝ էլ չկայ Միհրանը, եւ ես տխուր ժպտացի միայն, ինչպէս մի օր ժպտաց Մահը, երբ հայ խաչակիրը խթանեց իր ջահել նժոյգն ու շնջաց՝

— «Տար ինձ, դէպի Միջագետքի աւազուտ անապատները թըրցուր ինձ, ուր կիզիչ արեւի տակ իմ ցեղի տխուր մասն է մարտիրոսանում» . . .

*
**

Ինձ դուժեցին՝ էլ չկայ Միհրանը եւ ես ասացի :

— «Թող այդպէս լինի, թող միհրանարար ընկենն նորերն ու նորերը, եթէ ազատագրուող մեր Հայրենիքում դեռ կայ մի բուռ հող, որ ներկուած չէ արիւնով» . . .

*
**

Ինձ ասացին՝ էլ չկայ Միհրանը եւ ասացի ես՝

— «Ձեռն լինի բոլոր խիզախները, որոնք դիտեն հեզնել մահը, անդիտանալ վտանգը, որոնք լաւագոյնն են լաւերի մէջ, որոնց սիրում է ե՛ւ Մահը . . .»

ԻՄ ՄԱՐԳԱՐԷՆ՝ ԶԱԽԱՐԵԱՆԸ

Ահա՛ Մարդը

Չոհարերի՛ր, զոհարերի՛ր անվերջ, առանց մնացորդի :

Չոհարերի՛ր ու տանջուի՛ր բաւականութեան լուսափայլ ժպտալ երեսիդ . . .

Եւ դու կը մօտենաս Աստուծոն, դու կը դառնաս մարդ Աստուծոյ

Այսպէս է պատգամում իմ մարդարէն իր հրեղէն խօսքը . . .

Մոռացի՛ր քեզ, յանուն թշուառների մոռացի՛ր քեզ, երբ հազար հազարներին սեւ ցաւն է ընկերում, բռնակալ կարիքը նեղում . . .

Մոռացի՛ր քեզ : Սիրի՛ր թշուառին : Ծառայի՛ր նրան : Թող քո ցաւը թշուառի ցաւը, քո Աստուածը թշուառի Աստուածը լինի . . .

Եղի՛ր հպարտ, գոյութիւնդ քարշ տալու համար մի՛ սողար, մի՛ ստորնանար եւ մի՛ ստիր . . .

Սաեւ՝ նշանակում է հայհոյել ճշմարիտը: Ստորանալ՝ նշանակում է դադարել մարդ լինելուց...

Եղի՛ր ազատ...

Գիտակից ստրուկի ու յանցագործի մէջ չկայ տարբերութիւն: Միայն իտէալիզ առաջ խոնարհիր ճակատդ, միայն իտէալիզ ազատ գերին եղիր...


Եղի՛ր բացարձակ...



ՍԻՄՈՆ ԶԱԻԱՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻՆ

Եւ ո՛չ մի դիջում: Յանցանք է դիջելը: Զիջել՝ նշանակում է թոյլ լինել, պարտութիւն կրել...

Այսպէս է պատգամում իմ մարդարէն իր աստուածաշունչ խօսքը եւ հոգիս՝ նրա հրեղէն պատգամներին գերի, վեհօրէն իր թեւերն է պարզում...



66 էջ, տպագրուած Գահիրէ, 1924ին: Գիրքը ունի հետեւեալ գլուխները.— Հայ երիտասարդութեան՝ երկու խօսք — I Հակամարտութեան օրէնքը — II Մեր Ապագան վտանգուած — III Հայրենապաշտութիւնը — IV վտանգաւոր Մոլորութիւններ — V Մեր Մամուլը — VI Կուսակցամոլութիւն — VII Պաշտամունքը Մեծ Մեռելների — VIII Գաստիարակիչ Տօներ — IX Ինքնապաշտպանութիւն — X Ղեկավարութիւն — XI Բարոյաշունչ Մթնոլորտ — XII Գաստիարակութիւն:

Ազգային եւ ազգայնաշունչ դաստիարակութեան հարցն է, որ գլխաւորաբար կը շօշափուի այս գրքին մէջ, ինչպէս կը տեսնուի խորագիրներէն:

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ՝ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ես ճշմարտութիւններ դիտեմ, որոնցից մէկն ասում է՝ ուզո՞ւմ ես զուշակել, տեսնել մի ժողովուրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդութեան:

Նայելով քեզ, հա՛յ երիտասարդութիւն, վարդազոյն լաւատեսութեամբ չեմ լցւում ես:

Երէկ դու աւելի յուսատու էիր քան այսօր: Իսկ մեր վաղը, մեր ապագան կախուած է մեր ներկայից:

Վաղը ազգովին պիտի հնձենք այն, ինչ որ սերմանում ենք այսօր.— այսօր, երբ դու նուազ խոստմնալից ես, երբ քո մէջ, շնորհիւ մեր օրերի նիւթապաշտական ոգու եւ համատարած յուսալքութեան, թուլացել է պաշտամունքը երկու աստուածութիւնների՝ հայրենի

Ժողովուրդի եւ երկրի, քո շարքերում, դիտե՛ս այդ, օրէցօր աճում է յողնածնների, ուղեկորոյսների եւ դարպընթաց եղածների թիւը:

Քո մի մասի մտքի ու սրտի սնունդը — աւա՛ղ — չէ կազմում «առիւծոսկրի ուղնուծուծը»:

Տկարանալով բարոյապէս, դու մեր մէջ թուլացնում ես մեր ժողովուրդի լաւագոյն ապագայի յոյսը:

Ահա թէ ինչո՛ւ ուղեցի մտերմարար մի քիչ խօսել քեզ հետ, ուղեցի օրագրիս մի քանի անարուեստ էջերով — ծնունդը իմ խորհրդածութիւնների — ստիպել քե՛զ եւս մտածելու մեր վաղուան մասին:

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ

«Մի գինուոր սպանում է Արխիմեդին»:

ՊԱՏՄՈՒԹԻԻՆ

Ժողովուրդների պատմութիւնն այլ բան չէ, քան իրենց գոյամարտի, իրենց յաղթութեանց եւ պարտութիւնների պատմութիւնը:

Պատերազմներն են օրօրելի մարդկութեան մանկութիւնը եւ ո՛չ խաղաղութիւնը, որը բնական վիճակը չէ եղել, այլ պատերազմների կարճատեւ դադար միայն:

Աշխարհը կառավարում է հակամարտութեան օրէնքը: «Մի գինուոր սպանում է Արխիմեդին»:

Յաղթում է ուժեղը եւ ո՛չ արդարը:

Վա՛յ թոյլերին:

*
**

Բոլոր ժողովուրդները՝ լուսաւորեալ թէ վայրենի՝ ձգտում են արեւի տակ յարմար եւ կայուն մի տեղ դրաւել:

Նրանք զէնքի են դիմում երբեմն ռազմասիրութիւնից, երբեմն մրցակցութիւնից, երբեմն կոյր ատելութիւնից մղուած:

Պատերազմում են, երբ պէտք է նորանոր շուկաներ ձեռք բերել, ծովերի տէր դառնալ, երբ պէտք է ինքնապաշտպանուել կամ ապահովել այս կամ այն երկրի անկախութիւնը:

Քիչ անդամ նրանց իրար դէմ չեն հանում նաեւ ամենէն անբնական եւ չնչին պատճառները, օրինակ իրենց միապետների դինաստիական շահերը, նրանց հիւանդոտ փառասիրութիւնը, կրօնների և բարութեան մասին ունեցած ըմբռնումների տարբերութիւնը եւլն.:

Պատերազմի համար են աշխատում եւրոպական իմպերիալիզմը, անգլիական ծովատիրութիւնը, ամերիկեան տոլարապաշտութիւնը, համիսլամականութիւնը, դեղին վտանգը, պանսլաւիզմը եւլն.:

Պատերազմ է անվերջ, եւ եթէ երբեմն ժողովուրդները կուուա-
ղաշտերում չեն, ապա նրանք զօրանոցներում են, ուր խելայեղօրէն
պատրաստում են նորանոր բախումներէ համար:

Չէզոքութեան են դիմում թոյլերը միայն, յաճախ բաժանելով
պարտուածներէ ճակատադիրը: Էսպէս չկան չէզոքներ: Եթէ երկուսն
այսօր բարեկամ են — նշանակում է թէ նրանք զինակցել են մի եր-
րորդի դէմ:

Ամէն մի պատերազմ երկու նորերի պատճառ է դառնում, ո-
րովհետեւ չափուած կողմերից ոչ ոք է իրեն վերջնականապէս պար-
տուած կամ յաղթական համարում:

Եւ միշտ էլ պարտուած կողմը դեռ իր նահանջի ճանապարհին
մշակում է իր փոխվրէժի ծրագիրը:

Մէկը յարձակում է, միւսը պաշտպանում. այդ երկուսից ո՞րն
է մեղաւոր:

— Եւ ոչ մէկը, իրաւունք ունեն երկուսն էլ, պատերազմն ար-
դար է երկուսի համար էլ՝ ասում է Փրանսացին:

Ես սիրում եմ թղթախաղում տանողին, ինչպէս եւ կուում յաղ-
թողին՝ ասում է անգլիացին:

Եթէ մեզ համար օգտակար է, ուրեմն եւ կարելի է, ասում է
գերմանացին:

Կամ բոլորի բարեկամը, կամ բոլոր թշնամին՝ ասում է ամե-
րիկացին: Եւ որովհետեւ հնարաւոր չէ բոլորի բարեկամը լինել, նա
դործնականում մնում է բոլորի թշնամին:

Պատերազմի դէմ մարդարէական խանդով ու դայրոյթով խօ-
սել են մարդկութեան ամենէն ընտիր ներկայացուցիչները, բայց եւ
այնպէս նա շարունակում է սրահել իր գոյութիւնը, հեզներով իմաս-
տասէրների ճշմարիտ խօսքը, սրանց ոսկի երազը:

«Գազանների խնճոյք», «աղգամիջեան սպանդ», «խելազար իրե-
րակերութիւն», «մարդկութիւնը կրծող սեւ վէրք», «օրինականացած
կողոպուտ» եւլն. — ահա՛ պատերազմն իր թշնամիների համար:

«Չէ, ասել է Հիւկոն, կեանքը չի կարող աշխատել մահուան
համար: Սպանութիւնը մնում է սպանութիւն, միեւնոյն է թէ ի՞նչ
ֆես կրում՝ ոճրագործի գլխա՞րկ թէ Փրանսիական կայսեր թագը»:

«Չէ՛, չէ՛, նրանք բնաւ կիսաստուածներ չեն. նրանք մարդ էլ չեն», — աշխարհակալների մասին ասել է Ֆենեչոնը:

«Լուսաւոր ազգերը նման են որսկան շներին: Մի անբարոյական բնազդ գրգռում է նրանց ոչնչացնելու իրար, առանց օգուտի եւ իմաստի», — ասում է Անատոլ Ֆրանսը:

«Նա — ասել է Լակտենցին — որն սպանել է միայն մէկին, դատապարտուած է որպէս յանցագործ: Բայց մորթեցէք հազար հոգի, արիւնով հեղեղէք երկիրը, դիակներով վարակէք գետերը եւ ձեզ տեղ կը տան Ուլիմպի վրայ...»:

Պատերազմն ունեցել է եւ ունի իր պաշտպանները, որոնց համար այդ մշտական չարիքը իր բնախօսական եւ բարոյական արդարացումն ունի:

— «Առանց պատերազմների աշխարհը կը վերածուի մի նիւթապաշտական ճահիճի», — ասում են սրանք:

— «Պատերազմը — դա լաւերի յաղթանակն է»:

— «Առանց պատերազմի աշխարհը կ'ընկնի մի վտանգաւոր լետարգիայի(*) մէջ»:

— «Անբարոյականանում են անմարտունակ ազգերը» եւլն.:

Սրանք ժխտում են պատերազմների պատահական բնոյթը, համարելով վերջինը որոշ ճակատագրական օրէնքների ծնունդ, որպէս մարդկային բարեշրջման բուռն եւ խոշոր արտայայտութիւններից մէկը:

*
**

Քսան երկար ու ճիգ դարեր են անցել Գողգոթայից մինչեւ մեր օրերը եւ աւա՛ղ — խաղաղութեան, եղբայրութեան ու սիրոյ ուսուցչի աստուածաշունչ խօսքը շարունակում է մնալ որպէս «ձայն բարբառոյ յանապատի»:

Երկու հակամարտ ուժերի արնոտ պայքարն է գեռ լցնում ազգերի պատմութիւնը — սրի եւ սիրոյ խօսքի պայքարը — երկու ուժեր, որոնցից մէկը երազում է վերացնել սահմանները երկրների եւ ժողովուրդների միջից, իսկ միւսը յամառում է հաստատ պահել այդ սահմանները, ասել է եւ ազգամիջեան թշնամանքը՝ իր դոյութիւնը յաւերժացնելու համար: Եւ գեռ իշխում է վերջինը, դեռ ուժեղ ու յաղթական է վերջինը եւ յոյս չկայ թէ մեր դարում սուրը կը վերածուի արօրի:

«Խաղաղութի՛ւն ես ուզում՝ պատրաստուիր կռուի» — այս է մնում օրուան հրամայականը:

(*) Մահաբուն:

Եւ՝ կարծէք խարուսիկ խաղաղութիւնից սարսափած՝ բռլորը, բռլորը պատրաստուում են, զինուում :

Եւ ոչ ոք է ապահով, որ վաղը աշխարհի վրայով վերստին չի անցնի պատերազմի դունաա ճիւղը, արնոտ սուրը ձեռքին :

ՀԱՅ ԲԵՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

«Ո՛չ. ախորը, ուր անասունները կ'ուտեն եւ կը պառկեն՝ հայրենիք չէ»:

ԼԱՄԸՆԷ

Հայրենասիրութի՛ւն — մարդկային առաքինութիւնների թաղն ու պսակն է դա : Մարդկային բարոյական յատկութիւնները իր մէջ միացնող այդ գերազոյն առաքինութիւնն է աղղերի գոյութեան անհրաժեշտ պայմանը եւ անսպառ աղբիւրը նրանց ուժի եւ մեծութեան : Նա այնքան է ջերմ մի ժողովուրդի մէջ, որքան փոքր է այդ ժողովուրդը եւ որքան ամբարիշտն են նրա հարեւանները : Եթէ այդպէս չէ ամէնուրեք, այդպէս պիտի լինի :

Այդ նուիրական զգացումը զարգանում է աստիճանաբար :

Սկզբում բնազդական, զարգանալով նա դառնում է իմացական ոգիանում է նա :

Առաջին դէպքում անհատը թելադրւում է, մղւում մի ինստինկտի (*), զգացումից . երկրորդ դէպքում՝ նա զխտակցօրէն կատարում է մի պարտականութիւն :

Նա զարգանում է ժողովուրդների ինքնազխտակցութեան եւ արժանապատուութեան զգացումի հետ, ընկնում՝ նրանց նիւթակրօնութեան, շուայլութեան, սեղմ ասած՝ նրանց բարքերի ապականութեան հետ, — մեծապէս արազացնելով նրանց անկումը :

Հայրենիքներն ապրում են հայրենասիրութեամբ, ընկնում՝ նրա պակասի շնորհիւ :

Մեր ժողովուրդն առանց հայրենասիրութեան այն է, ինչ որ մի մարմին առանց հոգու :

(*) Բնազդական :

Դա մայրն է — իր նման փրկարար — մի շարք առաքինութիւնների՝ գաղափարականութեան անձնուիրութեան, արիութեան:

Դա պատերազմողի բարոյական ամբուլթիւնն է, կախարդական զրահը, անվրէպ զէնքը:

Հայրենասիրութեամբ հարուստ ժողովուրդը զէպքերի խաղալիքը չէ, այլ նրանց հրամայողը:

Այդպիսին սովորական «նաւարեկութիւններ»ի ժամանակ չէ զինաթափում բարոյապէս: Վստահ իր բարոյական ուժերին, նա շատ շուտ է ուղղում իր մէջքը՝ վերադրաւում իր նախկին գերքերը, դրութիւնը:

Հայրենասիրութեան հետ բարձրանում են ազգերը, ընկնում նրա հետ:

Փոքր ազգերը պարտադրօրէն աւելի հայրենասէր պիտի լինեն, քան մեծերը, մենք աւելի՛ քան բոլորը:

Հայրենապաշտ պիտի լինենք մենք:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՄԵԾ ՄԵՌԵԼՆԵՐԻ

«Յիշէ գանոնք, որ գերեզմանին մէջ ննջելով սուրն իրենց գլխուն ներքեւը դրին: Քաջաց բարձն է սուրը»:

Նահատակները...

Այդ մեծ մեռելները ամենէն քիչ իրենց եւ իրենց կուսակցութեանց կը պատկանին, ամբողջովին՝ իրենց ցեղին եւ պատմութեան:

Իրենց ընտրած ճանապարհի բերմամբ նրանք կ'աշխատեն ու կը զոհարեն այս կամ այն կուսակցութեան դրօշի տակ, նահատակուելով՝ նրանք կ'ազգայնանան, կը դառնան որբազան սեփականութիւնը ողջ ազգի:

Չկան կուսակցական նահատակներ ու հերոսներ, կայ եւ կը մնայ ազգային մարտիրոսագրութիւնը եւ հերոսականը:

Մակայն այդպէ՞ս է հասկացել մեր ժողովուրդը, — ո՛չ դրժրախտաբար:

Հետեւա՞նքը: — Մեր նկուն եւ ողբալի վիճակը:

Պատճա՞ռը: — Կոյր եւ բարբարոս կուսակցամոլութիւնը, — մի զարհուրելի ախտ, որ պիտի թուլանայ, որ ուժեղանանք ազգովին:

Այդ ուղղութեամբ պիտի աշխատեն դպրոցը, մամուլը եւ ինքը ժողովուրդը:

— Իր ընտիր մեռելների պաշտամունքը չունեցող ժողովուրդը՝

ապերախտ ու բարբարոս, անարժան է անկախ հայրենիքի, որը միշտ էլ նահատակների սրբազան աճիւնից կը բարձրանայ:

— Մի ժողովուրդ բարոյապէս այնքան ուժեղ է, որքան ջերմ է նրա պաշտամունքը դէպի իր մեծ մեռելները:

— Իր նահատակների, իր անմահների դէմ մեղանշող ժողովուրդը մեծապէս մեղանշում է իր ապագայի դէմ:

— Կրօններն այլ բան չեն, բայց եթէ պաշտամունք մեծ մեռելների:

Անկրօն է՝ դէպի իր նահատակներն անտարբեր ժողովուրդը, ասել է՝ եւ անհողի, դատապարտուած բարոյական փտութեան:

— Մի ժողովրդի հզօրացոյն զինակիցները պատերազմի ժամանակ նախ եւ առաջ իր մեծ մեռելներն են:

— Խեղճ է այն ժողովուրդն, որն իր պայքարի եւ խոյանքների ժամանակ չի զղում, թէ իրեն աներեւութաբար զօրավիզում են իր մեծ մեռելները:

Չափուում են բանակները, ժողովուրդները, յաղթում մեռելները:

— Իր անմահներից շօղտուող, ասել է՝ սրանց պաշտամունքը չունեցող ժողովուրդի բովանդակ ուժը իր թուի, իր քանակի մէջ է միայն:

Եօթնիցս վա՛յ նման ժողովուրդին՝ անփառունակ մահ ու մոռացում — ահա՛ փայն ու բաժինը աշխարհից:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ռազմավարի հանճարը բխում է իր հոգու վեհութիւնից:

Ասել ենք, թէ ժողովուրդները իրենք են դարբինը իրենց ճակատագրի: Աւելի ճիշդ պիտի լինէր, եթէ ասէինք — մի ժողովուրդի ճակատագրի դարբինը նրա մտաւորականութիւնն է:

Յանձին իրենց ժողովուրդների իրապէս չափուում են — սկզբունքային թէ ռազմական բախումների ժամանակ — մտաւորականութիւնները, ժողովուրդների ղեկավար տարրերը:

Միեւնոյն ժողովուրդը, բանակը՝ նայած իր ղեկավարներին, կարող է ե՛ւ հրաշագործութիւններ կատարել ե՛ւ խայտառակօրէն ծունկի դալ հակառակորդի առաջ:

Ուզում եմ ասել, թէ մի բանակ, մի ժողովուրդ հողերանօրէն այն է միայն, ինչ որ նրա հաւաքական հոգու մէջ զրել են նրա ղեկավարները, — դա այն է, ինչ որ իր ղեկավարներն են:

*
**

Ո՞վ է, սակայն, կատարեալ ղեկավարը :

Ո՞չ, անշուշտ, բոլոր սպաները, բոլոր «մեծերը», որոնք բանակի հետ շարժւում են դէպի կռոււազաշտ :

Շատերը սրաներից այլ բան չեն, քան մի զոյգ ուսագիր, մի աստիճան, մի տիտղոս : Իսկական առաջնորդը շատ անգամ չէ նշանակւում, նա երեւան է զալիս, երբ նրա կարիքն է զգացւում, նա յայտնւում է վտանգի ժամանակ :

Մէկը կարող է աստիճանով զօրավար լինել, բայց ոչ եւ առաջնորդ : Մի ուրիշը, կրելով սթարգ հարիւրապետի ուսագիրները, կարող է կատարեալ առաջնորդ լինել :

Եթէ չեն ծնւում, ապա՛ դառնում են առաջնորդները :

*
**

Նա յաճախ սրտի եւ զործողութեան մարդ է քան մտքի :

Դա՛ հակառակ նրանց, որոնք յաճախ լաւազոյն բանակները վերածում են հօտերի, նա զիտէ հօտերը վերածել լաւ բանակների :

Նա՛ առիւծների խումբը ղեկավարելու նշանակուած ոչխարը չէ, այլ՝ ոչխարների հօտը կառավարող առիւծը :

Նրա համար զինուորը, մարդը այն չէ, որ տեսնում ենք, մարմինը չէ մարդ նրա համար, այլ այն, որ կարող է լինել, այն որ ընդունակ է լինելու մարդը, այն, ինչ որ ինքն է ուզում, որ լինի իր զինուորը, իր առաջնորդութեան յանձնուած մարդը :

Նրա համար երեք բարձր ճշմարտութիւններ ունի ժողովրդական ինքնապաշտպանութիւնը — հողերանականը՝ պէտք է լինել արի, բարոյականը՝ պէտք է լինել անձնագոհ, քաղաքականը՝ պէտք է լինել ինքնայարգ :

Ահա՛ թէ ինչու կատարեալ առաջնորդը հողերանօրէն վերաստեղծում է իր բանակը, տալով նրան իր հոգին :

Դա ասել է՝ միաժամանակ ե՛ւ դաստիարակ :

*
**

Եւ հողերան է նա :

Նա իր բանակի հողի մոզական բանալին ունի : Նա զիտէ, որ հաւատ ներշնչել զինուորին, կը նշանակէ տասնապատիւել նրա ուժերը :

Քիչ անգամ է նա ղիմում զինուորների բանականութեան, բայց միշտ էլ սրտին : Նա սիրտ է դնում իր ամէն մի խօսքի մէջ, ահա՛ թէ ինչո՛ւ եթէ կտրէք նրա խօսքերը՝ նրանցից արիւն կը կաթի : Նա զիտէ, որ կռուի ժամանակ զինուորը աւելի բարոյական մենակութիւնից է վախենում քան մահից, ահա թէ ինչո՛ւ նա երեւում է ա-

մէն տեղ, հասնում ամէնին, որպէսզի ոչ ոք — զինուոր թէ զեկավար — իրեն մենակ չզղայ, որ անխաթար պահի զօրքերի ներքին բարոյական կասլը, որ ամէն մէկին զղացնել տայ, թէ իր հետ է ամբողջ բանակը, ազգը, ցեղը եւ ինքը յաջողութեան Աստուածը: Նա գիտէ եւ հետեւեալը:

— Զինուորի համար կռուի ժամանակ զրօշակը, ազգը, հայրենի երկիրը եւ սրա սրբութիւնները խորհրդանշողը — դա իր առաջնորդն է, ահա թէ ինչո՛ւ կատարեալ առաջնորդը միշտ էլ իր զօրքերի հետ է, նրանց կողքին եւ նրանցից առաջ:

Թշնամիները — դեռ մարդագաշտում եւ զօրանոցում նա ներշնչում է իր զօրքին — թշնամիները նման են շների, որքան որ վախեցար, այնքան կը յարձակուին:

Այսքան արհամարհոտ է նրա խօսքը:

Ո՞վ ասեց որ միայն մենք, որ միայն մեր ազգն իրաւունք չունի ապրելու, յառա՛ջ, ցոյց տանք, որ ապրելու իրաւունք եւ արժանիք ունինք — այսպէս է նրա խօսքը կռուագաշտում:

Ամէն մի կռուի վրայ նա նայում է որպէս «զրօշամարտ»ի վրայ, որպէս զրօշի համար մղուող կռուի եւ լարում իր եւ իր բանակի բովանդակ կարողութիւնները:

Ամէն մի արնոտ բախում նրա համար մի նոր քննութիւն է, ուր իր ժողովուրդը մի աւելորդ անգամ եւս պիտի ապացուցի, թէ արեւի տակ իր տեղն ունենալու իրաւունքն ունի:

*
**

Նա ասում է.

— Իր հողի վրայ պարտուելը կրկնակի եւ աններելի պարտութիւն է: Իր երկրի սահմաններում պարտուող ժողովուրդն իրաւունք չունի խօսելու անկախ հայրենիքի մասին:

Իր հողի վրայ կռուող, ինքնապաշտպանող ժողովուրդի հետ են իր մեծ մեռելները, — մի ուժ, որի առաջ անգոր են բոլոր տեսակի ուժերը:

Նրա հետ է իր երկրի արեւը, որի առաջ թշնամին «ձիւնէ մեծութիւն է» միայն:

Նրա սիրտը լցնում է իր դաշտերի շունչը, իր լեռների սէղութիւնը:

Նրան օրհնում է հայրենի երկինքը:

Յաղթութի՛ւն — աղօթում են կանայք ու կոյսերը նրա համար:

Յաղթութի՛ւն — երգում են մանուկները:

Յաղթութի՛ւն — զօղանջում են զանդերը:

Բոլորը եւ ամէն ինչ կանչում է, ասում «քեզ հետ ենք, յա-

ուաջ» : Ամէն ինչ եւ բոլորը կանչում եւ հրամայում նրան՝ «յաղթի՛ր մեզ համար» :

Եւ յաղթում է նա :

Այսպէս, ե՛ւ դադափարապաշտ է կատարեալ զեկափարը :

*

**

Նա իր առաջնորդն ունի, որը, սակայն, ոչ աստիճանով իրենից բարձր զինուորականն է եւ ոչ ալ երկրի իշխանութիւնը :

Աներեւոյթ է, բարոյական է նրան առաջնորդող ուժը :

Կառավարութիւն, բարձր հրամանատարութիւն, ձեւական օրէնք — այդ բոլորը շատ քիչ բան կարող են տալ : Դիմադրութիւն — հնարաւորութեան սահմաններում յաղթութիւն — եթէ ձեզ տրուած են նիւթական գերադաս ուժեր : Այսքան համեստ են ձեւական իշխանութեան եւ օրէնքի պահանջները :

Կայ աւելին :

Կառավարութիւնը, բարձր իշխանութիւնը, օրէնսդիրը կ'արդարացնեն ձեր պարտութիւնը, եթէ կարողացաք ձեւականօրէն արդարացնել ձեր յանցաւոր քայլը :

Ձէ որ միշտ էլ «երկու բերանով» կարելի է «ապացուցել», որ պարտութեան օրը հացը ժամանակին չհասաւ, թշնամին թուական գերազանցութիւն ունէր, մեր նահանջի ճանապարհը վտանգուելու վրայ էր եւլն. :

Եւ հասկանալի է դա :

Կառավարութիւն, բարձր հրամանատարութիւն, դատաւորներ — սովորական մարդիկ են սրանք, որոնք վաղը միեւնոյն դրութեան մէջ կարող են ընկնել եւ իրենք :

Ահա՛ թէ ինչո՛ւ սրանցով եւ սրանց հրահանգներով առաջնորդուող ուղմափարը, եթէ գերադաս ուժեր չունի, կարող է երբեմն գիպուածով մասնակի յաջողութիւն ունենալ, սակայն երբեք բախտ չի ունենայ հաղորդագրելու ուղմաղաշտերից՝ «եկի, տեսի, յաղթեցի» :

Ահա՛ եւ թէ ինչո՛ւ խոհալական զեկափարը երկրի ձեւական իշխանութիւնից դատ միշտ էլ ունի նաեւ մի այլ իշխանութիւն — իր ժողովրդի մեծ մեռելների բարոյական իշխանութիւնը, որ հարիւրապատկելով նրա ուժերը, հարիւրապատիկ պահանջկոտ է եւ աններող :

*

**

Նրա համար միշտ էլ ճիշդ է հետեւեալը. մի բանակ, որն իրեն մէջ յաղթել է մահուան վախը՝ անպարտելի է եւ ամենակարող :

Նա գիտէ այդ ճշմարտութիւնը, ասել է, գիտէ եւ յաղթելու դադտնիքը :

Թշնամուց աւելի վտանգաւոր է համարում իր բանակի շարքերում եղած վախկոտներին :

Վախը — դա միայն «սրտի յիմարութիւն», կամ «ջղերի խաղ» է : Դա անինքնավստահութիւնն է, անվստահութիւնն դէպի իր եւ իր բանակի կարողութիւնները, դա հակառակորդի գերազանցութեան սպաննիչ գիտակցութիւնն է :

Ահա՛ թէ ինչո՛ւ վախկոտի համար միշտ էլ ուժեղ է թշնամին, անգամ այն ժամանակ, երբ իր դէմ կուուողը իրենից թոյլ է բոլոր տեսակէտներից :

Վախկոտներն են արիացնում, ուժեղացնում թշնամուն : Սրբանք են հեշտացնում թշնամու դործը : Սրանց երեսից են կորչում հայրենիքները :

Սրանք են իրական թշնամին :

Կռի՛ւ նախ սրանց դէմ :

Այսպէս է հասկանում նա բանակի հողերանութիւնը :

*

**

Նա դիտէ, որ չկայ զինուոր, անգամ ամենէն անարին որն ընդունակ չլինէր կարող առաջնորդի ազդեցութեան տակ հերոսին վայել դործեր կատարելու :

Նա դիտէ, որ չկայ մարդ, որ ընդունակ չլինէր հողեկան խոր յուզումների, խանդավառութեան, ինքնամոռացութեան, — հողեկան վիճակների, երբ մարդու մէջ մեռնելու աստիճան թուլանում են կենդանական բնագոյն ու վախը :

Եւ որովհետեւ համոզելու, ցնցելու, ներշնչելու արուեստն ունի, — ահա՛, օրեր անց, նրա բանակը ծփում է վտանգն արհամարհող, մահն անգիտացող ռազմաշունչ տրամադրութեամբ :

Նա յաղթել է այլեւս, յաղթել իր բանակի անինքնավստահութիւնը, վախը :

Այժմ կարող է երեւալ թշնամին՝ նա պատրաստ է :

*

**

Նա ռազմարուեստագէտ է եւ ոչ զինուորական արհեստաւոր :

Նրա համար կռիւը արուեստագիտական ստեղծագործութիւն է եւ ոչ արհեստ : Իր ռազմավարութիւնը նա մշակում է պատերազմի էութեան մասին ունեցած իր բմբոնումի եւ իր երկրի տեղագրական պայմանների համաձայն : Եւ ոչ մի «դժոխուած կանոն» եւ ոչ մի մեռեալ շարլոն : Վճռականութիւն եւ տարերայնութիւն — ահա՛ նրա վարած կռիւը : Գայլը խեղդել բնի մէջ — երբ յարձակում է : Որեւէ յամառ կէտի վրայ ուժաթափել թշնամուն եւ ապա անցնել յարձակողականի — ահա՛ նրա պաշտպանողականը : Ոչինչ է անհանդստացնում նրան իր երկրում :

Յո՞ւրա է, աւելի լաւ, թո՞յլ է թշնամին — յարձակուի՛ր : Անձրեւո՞ւմ է, աւելի լաւ, թո՞յլ է թշնամին — յառաջացի՛ր : Բո՞ւք է, մառախո՛ւղ, — ուրախացի՛ր, որպէս դայլը եւ յառա՛ջ : Իսկ երբ իջաւ եօթնիցս օրհնուած զիշերը — ցնծա՛, դու արդէն յաղթել ես : Դու չես կարող չյաղթել, որովհետեւ կռիւր տարւում է քո նուիրական հողի վրայ, քո երկրի սահմաններում, ուր ամէն ինչ քեզ հետ է, ուր ամէն ոք եւ ամէն ինչ կանչում են՝ «քեզ հե՛տ ենք, յառա՛ջ» :

*
**

Վերջապէս, նա ընկերն է իր զինուորի : Զօրքը եթէ ոչ առաջին, ամենէն ուշը երկրորդ օրը բնազդաբար ճանաչում է իր առաջնորդներին : Նա շատ շուտ է տարբերում «մեծ»ը «փքուած»ից : Նա յարգում է զխտակցական կարգապահութիւնը, բայց չի սիրում պաղ եւ անհողի պաշտօնականութիւնը : Նա ուզում է, որ իր առաջնորդը լինի աւելի սրտի մարդ եւ ամենազլխաւորը՝ նաեւ զինուոր : Եւ այդպիսին է կատարեալ առաջնորդը, նրան պաշտում են, բայց չեն վախենում նրանից, պիտի չվախենան :


Անրարոյացուցիչ է վախը : Կեղծ է այն ամէնը, որ հիմնուած է վախի վրայ — կրօն, բարոյականութիւն, կարգապահութիւն եւլն. : Նա «ներքին պահակն» է իր բանակի, նրա կենդանի խիղճը՝ միշտ արթուն եւ հսկող :

Երեւոյ նա եւ ահա բոլորը թափուեցին նրա շուրջը — եւ այլեւս ոչ ոք է յոգնած, սոված, դառնացած : Կառավարելու մի հատիկ միջոց ունի նա՝ խօսքը, խիստ, բայց ընկերական, խօսքը՝ երբեմն որպէս սանձ եւ միշտ էլ որպէս խթան : Նա կառավարում է անձամբ, արհամարհելով ճանապարհը մատով ցոյց տուող զեկավարներին : Ներշնչուած պատմութիւնից, նա իր զինուորներին եւ զեկավար տարրերին փոխանցում է իր ապրումներն ու զազափարները : Խիստ է, բայց ոչ կոպիտ : Հպարտ է, բայց ոչ փառասէր : Պարզ է չարքաչ, անշահասէր : Հաննիրային յաղթող Հոսմի կոնսուլներէն յանիրաւի աքսորուած Աքիպիոնը չէ նա, որը մեռնելով ազգատութեան մէջ, կտակում է զրել իր գերեզմանաքարին վրայ՝ «ապերա՛խտ հայրենիք, դու տէր պիտի չլինես իմ ոսկորներին» :

Նա Հելլագայի մեծ ռազմավարներէն Փոկիոնն է, որը յանիրաւի մահուան դատապարտուած, թոյնը խմելուց առաջ ասում է որդուն. «յանձնարարում եմ քեզ ծառայել հայրենիքիդ սրտանց եւ հաւատարմօրէն եւ ամենազլխաւորը՝ մոռանալ, որ իմ ծառայութեան համար նա ինձ վարձատրեց մահուամբ» :

Այսպէս է կտարեալ զեկավարը : Նա միաժամանակ ե՛ւ դատարարակն է, ե՛ւ ռազմարուեստագէտը, ե՛ւ կախարհը, ե՛ւ ընկերը, — նա Աստուածն է իր բանակին :

«Որդիների պայքարը հայրերի դէմ» գիրքը, որ տպագրուած է Մոփիա 1927ին, յանդուզն գաղափարներով գործ մըն է: Անշուշտ գուսակները հայրերու դէմ ապստամբութեան հրաւեր մը չէ, այսուհանդերձ երիտասարդութեան ուղղուած կոչ մըն է, փոխելու իրենց մտածելակերպն ու գործելակերպը, չհետեւելու իրենց հօր ուղիին: Ինչպէս իր գրեթէ բոլոր գրութեանց մէջ, հոս եւս ազգային գիտակցութեան զարգացման եւ ամրապնդման հարցը կը շօշափուի, արտայայտութեան նոր եղանակով, սակայն նոյն կուռ ոնով: Ըլլալ ցեղակրօն:



Պ Ա Յ Ք Ա Ր

Հասնող սերունդը պայքար կը պահանջէ «Հայոց չար բախտին, Հայոց տխուր իրականութեան» դէմ:

Գիտենք, որ շատեր քմծիծաղ մը պիտի ունենան, ուրիշներ՝ աւելի բարեմիտ երիտասարդի յանդգնութիւն ու վերացական մատուցաչ հոգիի պոռթկում պիտի նկատեն այս պահանջը, եւ սակայն բնական է ու արդար, որ նորահաս սերունդը նման պոռթկում մը ունենայ:

Հայոց չար բախտը ամենէն աւելի ծանր կը ճնշէ հայոց կանաչ ծիւրերուն վրայ: Մեր «տխուր իրականութիւնը» խորապէս կը տառապեցնէ, մահացու կերպով կը դաւկացնէ եւ արիւնաքամ կ'ընէ այդ «վերացական ու մատուցաչ հոգիները»:

Ի՞նչ, փրփրուն արիւնով, կորովի եռացող ալիքներով ու վարդերազներով կեանքի դուռը հասնիլ ու յանկարծ զգալ որ ոտքերուդ տակ գետինը խոյս կու տայ. արեւը կը մթազնի, շնչելու օդ չի մընար քեզի:

Ի՞նչ, տեսնել ու համոզուիլ, որ այս է քու «իրականութիւնդ», թափառական, աղերսող, օրէնքէ դուրս ձգուած մարդ՝ — ազգ — որ նախորդող սերունդը իր մարտիրոսացման մէջ կը յամառի անգամ մըն ալ մարտիրոսանալ, իր վէրքերը սեփական ձեռքերով կը խորացընէ, կը թունաւորէ ու դարմանի մասին չի մտածեր. քմծիծաղ կամ բարեմիտ ժպիտ ունի քու արդար ընդմիջումիդ առջեւ, բայց ոչ մէկ շարժում, ոչ մէկ շարժում վճռական ու կառուցանող:

Ու լռե՞լ: Լռել որպէսզի աւելի փորձառութեան ցուցատախտակին տակ ապաստանող յուսահատները, ծոյլերը, անկարողները եւ հաշմանդամները կեղծ փորձառութեան դեղահատե՞ր հրամցեն, ինքնարդարացման անվերջանալի տեսարաննե՞ր կարդան քու գլխուդ:

Եթէ փորձառութեան ու կեանքի օրէնքներու անունով կը խօսուի, ապա ի՞նչ կ'ըսէ այն միւս փորձառութիւնը, որ անհետ կորսուած հայկական հին դաղութներէն կու դայ: Ապա ի՞նչ կ'ըսէ կեանքի օրէնքը, այն որ չի խօսուիր, այլ բաց աչքերով կը տեսնուի ամէն օր, մեր շուրջը ու մեր մէջ:

Միթէ հայ լեզուն չ'ա՞ղճատուիր. միթէ հայ սիրտն ու հոգին այսպէս երկրէ երկիր, մշակոյթէ մշակոյթ ու դաղթային կեանքի յարափոփոխ պայմաններու տակ անօթութենէ յղփացում, փառքէն դէպի ստորնացում չի՞ փոխուիր, անճանաչելի չի՞ դառնար: Միթէ ցեղի դարաւոր արիւնը իր օրհնուած հարապատութիւնը կը պահէ՞:

Ուրեմն ո՞ւր կ'երթանք: Ո՞րն է փորձառութեան ձայնը, քմծիծա՞ղը, յուսալքո՞ւմը, անճարակութի՞ւնը թէ քնախտը:

Ո՞րն է կեանքի օրէնքը: Մեր մատղաշ արիւնը վկայ, մեր մտքի թռիչքը ու ողեկան ուժը վկայ, կեանքի օրէնքը՝ պայքարն է, այո, «պայքարը մեր չար բախտին դէմ»: Ու հաւատացէք մեզ, այն ցեղը, որ իր կեանքին ու իր արեւին համար կը պայքարի, պիտի դռնէ իր մէջ այնքան ուժ, այնքան յղացում եւ իրատեսութիւն, որ կարենայ ՉԱՐԸ ԲԱՐԻԻ ՓՈՆԵԼ:

Շարժման մէջ դրէք ցեղի ուժերը, հայոց ալեհեր փորձառութիւնը, մեզի հետ է ան, մեր արիւնի մէջէն կը խօսի:

ԱՌԻԻԾԱԾԻՆ ՄԱՅՐԵՐ

Մայրերի ափի մէջ պիտի փնտռել
ազգերի ցակատագիրը :

Տկարութեան եւ կեղծիքի դէմ սկսածդ պայքարի մէջ մինակ
չես դու, հայ երիտասարդ : Դու պիտի ունենաս քո մեծ ու վճռա-
կան զինակիցը — հայ մայրը :

Ինչպիսի՞ աստուածային հաճոյք մարտնչողի համար՝ լսել խը-
րախուսիչ ձայնը հայրենակրօն մօր :

Ո՞վ չգիտէ, թէ ազգային տաղնապնների օրերին, երբ հայրե-
նասիրօրէն կը բարախէ տառապող կնոջ սիրտը՝ կորած չէ դեռ ամէն
յոյս :

«Միշտ էլ յիշենք, — ասում է գաղիական պատմութիւնը, —
յիշենք, թէ մեր հայրենիքը ծնուած է մի կնոջ սրտից, նորա սիրուց
եւ արցունքներից. այն արիւնից, որ նա թափեց մեզ համար» :

*
**

Մօր ազգեցութիւնը, — որպէս գաստիարակչուհին եւ հողեւո-
րիչը մարտնչող սերունդների, — նորա հրաշագործ ազգեցութիւնը
այն ժողովուրդների համար, ինչպիսին է մերը, կը մնայ միակ լծա-
կը, որ պիտի բարձրացնի եւ մեր ազգային դատը, որի ծանրութիւ-
նը այսօր սարսափեցնում է միայն անհայրենասէրներին :

Բնութիւնը, — ասում է, — կնոջ ձեռքով կը դրէ տղամարդ-
կանց սրտի մէջ :

Ահա, թէ ինչո՞ւ, հայ կինը պիտի դառնայ հայրենապաշտպա-
նութեան տաճարի վեհաեան կոյսը, նշանակուած՝ անչէջ պահելու
նրա սրբազան կրակը :

Հայուհին, որին կարելի է ճանաչել հազարաւոր օտարուհիներ
մէջ այն կնիքով, որ նրա ճակատին դրել է ձիգ դարերի տառա-
պանքը, որ կարող է փոխարինել խաչափայտի Տիրամօրը — հայ կի-
նը աւելի հերոսուհի՝ քան թախծութեան մայր պիտի լինի : Նրա շըր-
թունքներէն պիտի չսպակատեն ժան Տ'Արքեան բառերը՝ ուղղուած
մեր սերունդներին. — «Եթէ յոգնած էք, դադար առէք, բայց մի՛
լքէք կոռուապաշտը, մի՛ դասալքէք» :

Նա միայն պիտի չողբայ վէրքերն իր հայրենիքի, այլ եւ մեր
սերունդներին անսահման սէր եւ պաշտամունք պիտի ներշնչէ դէպի
այդ վէրքերը :

Նա աւելի պիտի սիրէ եւ հպարտանայ, քան կարեկցէ :

Նրա հայրենասիրութիւնը եւս, — աստուածային կրակ, բոց
ու ջերմութիւն, — պիտի արթնցնէ թմրած առիւծը իր ժողովուրդի

մէջ, պիտի բարձրացնէ մեր առօրեայ կեանքի թափը, պիտի քաղցրացնէ ու հեշտացնէ անձնագոհութիւնը: Ոգիացած հայրենասիրութիւն, որից ժողովուրդները ստեղծում են մի հրաշագործ ուժ, անհրաժեշտ՝ Հայրենիքի անկախութեան ու հզօրութեան համար:

*
**

Յաճախ վիրաւոր, բայց հողեպէս անպարտելի, միայն նման ժողովուրդներն են յաջողում պատմութեան մէջ:

Յաջողում են նրանք, որոնք ծանօթ չեն յուսահատութիւն կոչուած տկարութեան: Իսկ չեն յուսահատուում ժողովուրդները, որովհետեւ մարդկութեան ընտանիքի բոլոր անդամները, մեր մտաւորականութեան որոշ մասէն դատ պիտեմ, որ մէկի հայրենի հողը չէ կարող միւսի համար մնայուն հայրենիք դառնալ, որ դա, Յաւիտենական Արդարութեան Օրէնքի ուժով, վաղ թէ ուշ, վերադարձում է իր տէրերին, եթէ վերջինների մէջ չէ նուազել սէրը դէպի հարազատ երկրամասը:

Իսկ սէր եւ նուիրում դէպի հայրենիքը, ներշնչում եւ սնուցանում է հայրենասէր մայրը:

Ահա թէ ինչո՛ւ մեր իրականութեան մէջ՝ ՄԱՅՐ անունը պիտի դառնայ ու մնայ սրբազան մենաշնորհը միայն եւ միայն հայրենակրօն մայրերի, եւ ոչ թէ բոլորի:

Իրենց սրգիններով պիտի ճանաչել եւ դնահատել կանանց:

Անհայրենասէր ու անարի սրգինների մայրը անկախ՝ իր հասարակական գիրքից մեր կեանքում պիտի չվայելէ յարգանք:

Ամէն ինչ — սէր, յարգանք, ակնածանք՝ հայրենասէր մօրը: Եւ ամէն ինչ հայրենասէր մօրից — հերոս սրգիններ, յաղթական դափնիներ, անկախ Հայրենիք:

Իտէալ մայրեր ունենանք երջանիկ Հայրենիք ունենալու համար: Այլասպէս, քանի դեռ հայրենաշունչ մայրը կը մնայ որպէս «բացակայող աստուածութիւն» հայ ընտանիքների համար, — թուրքը պիտի շարունակէ իր արնոտ խրախճանքը մեր սգաւոր Հայրենիքում:

*
**

Կան ժողովուրդներ, որոնք դեռ հեռու են անկախութեան եւ քաղաքակրթութեան բարիքները վայելելու բախտից, որովհետեւ կնոջ ազդեցութիւնը տկար է նրանց մէջ:

Մի ժողովրդի բարքերը, — գովելի թէ պարսաւելի, — կախում ունին մայրերից:

Մայրը, միշտ էլ, իր հոգուց մի բան տեղափոխում է իր զավակներին կրճաթի տակ :

«Ոչ խմաստասէրներ, ոչ էլ թաղաւորներ օգնութեան կանչենք Հայրենիքին, այլ մայրական ազգեցութիւնը միայն» :

Կը կասկածիմ այն մօր հայրենասիրութեան մասին, որի զավակները հայրենասէր չեն :

Կ'ողբամ հայրենասիրութիւնը այն ընտանիքների, որոնք հողեւոր Հայրենիքի մանրանկարը չեն :

Կը դարչիմ այն բոլորի հայրենասիրութիւնից, որոնք դեռ թուրքերէն կը խօսեն : Թրքախօս Հայ, հայրենասէ՛ր... Ողորմելի, փափկամարմին ծոյլ հայրենասիրութիւն, որ իր մայրենի լեզուն իւրացնելու ճիպն իսկ չէ փորձում : Անհէթեթութիւն : Լա՛ւ է համը, քան թրքախօս լինել :

— Սպարտան կը հասցնէր հայրենապաշտ եւ աներկիւղ մարտիկներ, որովհետեւ մայրենի ցանկութիւնն էր՝ նման սերունդ տալ Հայրենիքին :

«Կեանքի ընկեր ընտրենք.— կանայք՝ որոնց կաթը արիւն լինէր. որոնց ծնունդը՝ հերոս եւ վրիժակ».— այսպէս կ'երգէր հին դադիացին :

*
**

Հայ կիներ :

Սրա միջոցաւ հոգեփոխենք հայ ընտանիքը : Այդ վերջինի միջոցաւ՝ հայութիւնը :


Սկսենք հայ կնոջից. աշխատինք անդուլ, մինչեւ որ սրա կաթը կը դառնայ հայրենապաշտութեան սրբազան կաթը :

Հայրենապաշտօրէն դաստիարակենք հայ կիներ եւ նրան թողնենք մեր մատաղ սերունդի դաստիարակութեան դորձը :

Հայ կնոջ միջոցաւ դարձի եւ զգաստութեան հրաւիրենք դադութահայութեան ազգայնօրէն տկարացած տարրերը : Նրա պաշտպանութեան ու գուրգուրանքին յանձնենք մեր մայրենի լեզուն, Եռադոյնը, անկախութեան Մայիսը, — սրբութիւնները մեր ցեղի :

Ապագան վտանգուած մեր որբախնամ ժողովուրդը, — մէկ էլ կրկնենք, — չկորչելու համար, հրամայողարար պիտի դառնանք արիադաւան եւ արիախնամ : Հայ կնոջից սպասենք հոգեբանական այդ հրաշքը :

Ունենա՛նք առիւծածին մայրեր, որոնց արիական որդիները աւելորդ դարձնէին՝ Հայաստանը պաշտպանող արուեստական ամբութիւնները :



32 էջոց երկարաշունչ գրութիւն մըն է, տպուած Պէյրութ, 1929ին: Այս էջերուն մէջ Նժդէի ֆննութեան կ'են- քարկէ գաղթաշխարհի հայութեան գո- յավիճակը, որոնելով ազգապահպան- ման ազդակներ: Կը մշակուի նաեւ այն մտածումը, թէ որեւէ ազգային խնդրի համար, պէտք չէ ապաւինիլ օտարին, այլ՝ միայն մեր ուժերուն: Ազգային զարթօնք մը անհրաժեշտ է, ազգային գիտակցութեան բռնկում մը, լաւ- գոյնս հայ մնալու համար:

ԲԱՅ ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ա.

Քննադատել՝ հոգեպէս տառապել է նշանակում:

Վերջին տասնամեակի դէպքերը — թրքահայոց կոտորածը, Հայաստանի ստեղծուիլը, նրա կորուստը, Ռուս-տաճկական նոր սահ- մանազծումը, սրա հետեւանքով Մերձաւոր Արեւելքում մեզ համար առաջ եկած ծանր պայմանները, հայրենագուրիկ հայութեան տաղնա- պի վիճակն արեւմտեան գաղութներում եւայլն — մեզ դրին նոր իրո- ղութիւնների առաջ:

Ցնցուեց մեր կեանքն իր էական բոլոր կողմերով: Հսկայական փոփոխութիւններ առաջ եկան, ուշադրաւ երեւոյթներ: Եւ հանրա- ծանօթ իրողութիւն է, որ այս դէպքերը զարգացան բոլորովին հակա-

ուակ մեր տրամադրութեամբ՝ արտաքին իրողութիւնների թելադրութեամբ: Մենք անգոր եզանք ուղղութիւն տալ նրանց: Այս նշանակում է թէ ներքուստ մենք պատրաստ չէինք դէպքերի իմաստը հասկընալու, զանոնք մեր քաղաքական ձգտումներին համընթաց դարձրնելու:

Մենք ունէինք հողերանական մի սարսափելի թերի եւ բնական է, որ հետեւանքը այլ բան չէր կարող լինել, քան այսօրուան անմխիթար կացութիւնը:

Մակայն այս կացութիւնը առանձնապէս ողբերգական բնոյթ է ստանում այն պատճառով, որ մինչ մի կողմից աղէտներից ու փորձութիւններից յետոյ պատմութեան բերումով մեր ժողովուրդը հասունանում է, նրա մէջ անկախութեան դադափարը ժողովրդականանալով դառնում է հողերանութիւն, միւս կողմից նա տկարացել է, փոքրացել եւ արեւելքի պայմաններում մի ինքնուրոյն պետութիւն ստեղծելու համար — թուական ուժի տեսակէտից — դարձել է խընդրական:

Բնական է, որ հայոց պետութեան կորիզը պիտի կազմէ Սորհրդային Հայաստանը, իր 28.000 քառ. քիլոմետր տարածութեամբ եւ մօտ մի միլիոն բնակչութեամբ:

.

Բարոյա-նիւթական պրօգրէս — ասել է՝ ներոյժ ինքնապաշտպանութիւն: Պրօգրէսի հրամայականն է ինքնապաշտպանութիւնը: Այլեւս ոչ ոք է հաւատում — մեր ժողովրդից դատ — թէ կարելի է կանգնեցնել պրօգրէսի յաղթական կառքը՝ դեռինք փոռած պարտուածների եւ թոյլերի հառաչանքներով: Այլեւս ոչ ոքի համար է գաղտնիք, թէ պետութիւնները բնական հակառակորդներ են, որոնցից ամէն մէկը ձգտում է տարածուել, ուժեղանալ, շահել իր հարեւանների հաշուին: Յարձակում է, ով իրեն ուժեղ եւ պատրաստ է դրում յարձակուելու՝ լուաղոյն պաշտպանողականը համարելով նախադարձակողականը:

Յարձակում է նա ով որ իր դիմացը թուլութիւն է տեսնում:

Ամէն մի ժողովուրդ, երկաթէ անհրաժեշտութիւնից մղուած, նախապատրաստում է, անում այն, ինչ որ անում են բոլորը:

Թոյլը սարսափում է՝ չլինի թէ կուլ դնայ ուժեղին, իսկ ուժեղը արթուն հսկում է, որ իր հակառակորդը չզերազանցէ իրեն:

Եւ խաղաղապաշտ ու անարի ժողովուրդները տկարանում են եւ դառնում որսը նրանց, որոնց ոյժը աճում է եւ ծաւալում անդամադրելիօրէն:

Հասկնանք եւ հետեւեալը.
— Յանուն խաղաղութեան չեն կնքում պայմանագրերը, այլ յանուն պետութեանց օրուան կենսական շահերի:

Պետութիւնները հաշուի են առնում միջազգային իրաւունքը եւ

յարգում իրենց ստորագրած պայմանագրերը քանի դեռ շահում են գոյութիւն ունեցող դրութիւնից . սակայն հենց որ մի այլ դրութիւն, հենց որ մի ուրիշի թղթէ բարեկամութիւնը իրենց աւելի շահաւէտ թուաց՝ նրանք թքում են պայմանագրերի վրայ, լքում իրենց նախկին զինակիցներին եւ սպառնում աշխարհի խաղաղութեան :

Այս է իրերի առարկայական դրութիւնը, այս է իրական աշխարհը եւ ոչ այն, որի սխալ եւ խաբուսիկ պատկերացումով օրօրուել է եւ օրօրում է մեր սանտիմենտալ ազգը :

Բ .

Մի աշխատասէր եւ նիւթական ապաղայի համար այնքան ձիրքերով օժտուած ժողովուրդ, որ նիւթական բարիքներ կուտել եւ ամբարել զիսէ տարուան բոլոր եղանակների համար, որ ծիծաղելի կը համարէ, եթէ մէկը ամբան միայն արեւի դեղեցկութեամբ հիանայ եւ չմտածէ ձմրան մասին — զարմանալիօրէն իտէալիստ է դէպի խաղաղութիւնը, աղօթում է նրա արեւին եւ բնաւ չէ հաւատում, թէ պատերազմի ձմեռ կայ :

Սակայն պատերազմը գալիս է հակառակ մեր ցանկութեան, որովհետեւ հակամարտութեան օրէնքն է կառավարում աշխարհը :

Այս ճշմարտութիւնը չէ ուղում հասկանալ մեր ժողովուրդը — դրա համար էլ խաղաղ տարիների քրտնաջան աշխատանքով կուտակած բարիքները պատերազմի օրերին տալիս է թշնամուն, իսկ ինքն իբրեւ մուրացկան ծանրանում է օտարների վրայ :

Մենք կ'ուղէինք, որ մեր ժողովուրդը եւս վերջապէս բմբռնէր, թէ խաղաղութիւնը ոչ թէ յաւերժական չէ, այլ ժամանակաւոր զինազար միայն :

Խաղաղութիւնը նոյնիսկ նորմալ(*) վիճակ չէ, խաղաղութիւն չկայ մեր երկրապետի վրայ, չէ կարող լինել եւ մարդկային պատմութեան մէջ :

Պատերազմը ժողովուրդների կեանքում անխուսափելի մոմենտ(**) է . — դա չէ մղում սոսկ զիտակցական հաշիւների համար, դա մէկն է մարդկային էւոլիւցիայի(***) ամենարուճն արտայայտութիւններից : Պատերազմը բնազդն է, — այդ է պատճառը որ մարդիկ պատերազմում են համարեա ահամայից, դէմ գալով զիտակցութեան պահանջներին, բարոյական օրէնքներին եւ հետեւանքներին զիտակցարար անդրադառնում, հաշուեյարդարից, յաղթութիւնից կամ պարտութիւնից յետոյ :

(*) Բնական :

(**) Պահ :

(***) Հոլովոյթի :

Խաղաղութիւնը օրուան մարդկութեան համար ոչ այլ ինչ է քան յոգնածութիւն :

Պարտուած է այն ժողովուրդը , որ շուտ է յոգնում :

Պատերազմի է ձգտում նա , որ հաղղութեամբ է :

Պատերազմը հաղղութեամբի , առողջի ցանկութիւնն է , ինչպէս որ խաղաղութիւնը թոյլի բազմանքն է , յոգնածի՝ երազը :

Անշուշտ , խաղաղութիւնը յոգնած ժողովուրդների համար բարիք կը լինէր , եթէ պատերազմից յաղթական դուրս եկածները խաղաղութիւնը չարաշահել չիմանային :

Խաղաղութեան չարաշահումն աւելի՛ է աղիտաւոր պարտուած ժողովուրդի համար քան նոյնիսկ պատերազմը :

Պատմութեան մէջ քիչ են կոտորածային ոչնչացումների դէպքերը , մինչ հսկայական ժողովուրդներ աննպաստ խաղաղութեան մէջ , առանց արիւնոտ հարուածների , անհետացել են դանդաղօրէն :

Գանդաղ ոչնչացումի մի խաղաղութիւն է մեզ համար , ինչ այսօր իշխում է Մերձաւոր Արեւելքում :

.

Ներկայ Հայաստանը կազմում է հազիւ մէկ-տասներկուերորդը մեր պատմական հայրենիքի : Դա հայրենիք չէ , այլ հայրենի անկիւն :

Այժմու իր սահմաններում նա չէ կարող տեղ տալ ի սփիւռս աշխարհի ցաք ու ցրիւ եղած հայրենազուրկ հայութեան , դաղութահայութեան , որի թափառիկ վիճակն աղիտաւոր է երկու տեսակէտից . նախ՝ որ նա ենթակայ է ստոյգ կորստեան . օրինակ՝ Թիւրքիայում կոտորածի , այլ վայրերում՝ խաղաղ բնաջնջումի , ձուլումի :

Հայրենի անկիւն եւ թափառական ժողովուրդ : Մի ճակատագիր . որ երկմտութեան եւ տատանումի է մատնել է մեր ժողովուրդը . այսինքն՝ ազգային յոռետեսութեան : Իսկ վայ այն ժողովուրդին , որ վարակուած է այս հիւանդութեամբ . այդպիսին կանգնած է դերեզմանի ափին :

Չսարսափի՛նք , բայց եւ առանց սին պատրանքների եւ աւելորդ նախապաշարումների ընդունենք այդ դառնագառն ճշմարտութիւնը՝ — մեր ապագան վտանդուած է :

Գ .

Անիմաստ կը լինէր այս ճշմարտութիւնն ընդունիլ , եթէ դա մեզ միայն սարսափի պիտի մատնէ եւ ոչ ցնցէ :

Յնցումները ժողովուրդների կեանքում փրկութեան լծակներ են : Անբարոյական է եւ կորած մի ժողովուրդ , եթէ գոյութիւնն ապահովելու համար անընդունակ է խոր ցնցումների :

Հողեկան ցնցումների ընդունակ ժողովուրդները միայն կարող են վերանորոգուել : Աղիտաւոր չէ՛ կորուստներ ունենալը , այսինքն՝

անցեալի գէտքերից խրատուիլ, փորձուիլ, սթափուիլ, չիմանալը . պարզ՝ ազիտաւոր է վերադնահատումների անընդունակ լինելը : Առանց վերագնահատումի անիմաստ է որոնումը, իսկ առանց որոնումների ոչ միայն ժողովուրդների միտքն է մեռնում, այլ եւ հենց իրենք ժողովուրդները :

Վերադնահատումի պիտի ենթարկենք ոչ միայն գէտքերի առարկայական բնոյթը, այլ մանաւանդ մեր հոգեւոր կեանքի ենթակայական տարրերը :

Պիտի որոնենք, փնտռենք, գտնենք մեր դժբախտութեանց իրական պատճառները, ճանաչենք մեր խակական վէրքերը, ախտորոշանքի պիտի ենթարկենք մեր ժողովուրդի հոգին, որից յետոյ միայն խօսք կարող է լինել բուժումի մասին :

Ո՞վ է մեղաւոր, երկրին աշխարհագրական դի՞րքը, քրիստոնէական եւրոպա՞ն, մահմեդական Ասիա՞ն, ճակատագիր՞ը :

— Բոլորը բացի մեզնից, այսպէս կը տրամարանէ մեր անուղղայ քաղքենիամտութիւնը :

Այս մտայնութի՛ւնը . . . դանդաւուր, դժգոհում է նա, անիծում է ճակատագիրը եւ կրկնում անվերջ, թէ ինկած ենք աշխարհի մեծ ճամբաների վրայ, թէ աշխարհագրական ճամբաները վատ են :

Այստեղ կայ մի խեղճուկ ճշմարտութիւն, բայց դրա հանգէպ ի՞նչ հոյակապ առաւելութիւններ : Չէ՞ որ մեր բարձրաւանդակն անառիկ է, մեր լեռները մէկ-մէկ անխոցելի պատնէշներ : Անտեսել այս իրողութիւնը եւ ողբալի ճակատագիրը ոչ այլ ինչ է քան թոյլի, անարիի ինքնարդարացում : Թոյլի ինքնարդարացում — տկարի հողերանութիւն : Այստեղ ոչ միայն նախապաշարում կայ, այլ եւ առաքինութեան թերի :

Անարդար կը լինէր հաւատալ հիւանդներին, երբ սրանք դանդաւուր են աշխարհից :

Աշխարհը պատկերացում է, իսկ պատկերումի աղբիւրը սեփական հոգին է :

Հոգու հիւանդութիւն ունին ժողովուրդները, երբ դժգոհում են իրենց հայրենիքից :

Գուցէ իրօք աշխարհի ամենէն անառիկ բարձրաւանդակներից մէկի վրայ բազմած ժողովուրդը անարժան է իր ճակատագրին, բայց ճակատագիրը՝ երբե՛ք ապերախտ :

Լինէր հոօր՝ աշխարհի այդ հոյակապ կամուրջի վրայ հրաշքներ կը գործէր հայութիւնը : Տկար էր, տկարացաւ — դառաւ անարժան իր բնաշխարհին :

Հիւա՛նդ, դժբախտ ժողովուրդ, որ մինչեւ այժմ երկու առաքինութիւն է ունեցել .— Իր դժբախտութիւնները վերագրել արտաքին պատճառների եւ փրկութիւնը յուսալ արտաքին ուժերից :

Այստեղ է պատճառը մեր տարօրինակ հաւատի եւ խանդավա-

ուութեան, երբ օտարը խոստումներ է կատարում, եւ նոյնքան տարօրինակ հիասթափութեան եւ յուսալքումի, երբ նա դրժում է իր խոստումները:

Աղիտայի ինքնաժխտում, որ մեզ հոգեբանօրէն այնքան անարժէք է դարձրել, որ անգամ մեր դժբախտութեանց մէջ մեզքի որոշ բաժին էլ մեզ տայր զլանում ենք: Մենք այնքան անարժէք ենք թւում մեզ, որ չենք կարծում, թէ քաղաքական աշխարհում որեւէ բանի պատճառ — անգամ դժբախտութեան — մենք կարող ենք լինել: Ամէն ինչ լինում է, զուցէ մեզ համար, բայց մեզնից դուրս, անկախ մեզնից: Քաղաքական մի կոյր պատեհապաշտութիւն, որ մթաղեն է մեր բանականութիւնը անգամ մի կոպիտ, մի ազազակող ճշմարտութիւն տեսնելու — այն է թէ մեր դժբախտութիւնների համար մեզաւոր են ոչ թէ բոլորը բացի մեզնից, այլ նախ եւ առաջ մենք:

Դ.

Տարօրինակ է — տրամաբանում է մեր քաղքենիամտութիւնը — մեր հաւատքը դէպի Եւրոպան կոյր զգացում էր, մեր ներողամբտութիւնը դէպի թշնամի քրիստոնեան, բայց եւ այնպէս մենք ջարդուեցինք ու լքուեցինք:

Աչի'նչ կայ տարօրինակ, ջարդուեցինք եւ լքուեցինք, որովհետեւ եւրոպացու հոգեբանութեան բոլորովին անձանօթ էինք:

Դէպի Եւրոպան մենք ունէինք մի քրիստոնէական զգացում եւ շնորհիւ մեր տարօրինակ միատիցիզմին — մեր ազգային հիւանդութեան — մեր սեփական տրամագրութիւնները դրել էինք եւրոպացու հոգու մէջ եւ ամենախոր կերպով հաւատացել, թէ բոլոր քրիստոնեայ ժողովուրդները նոյն զգացումն ունին մեզ հանդէպ, թէ բոլոր պատերազմները մղւում են յանուն մեր փրկութեան:

Այս ինքնախաբէութիւնը մղեց մեզ քաղաքական մուրացկանութեան եւ քանի որ մենք նաեւ թոյլ էինք՝ անձնատուր եղանք լալկանութեան:

Մուրացկանութիւն եւ լալկանութիւն — մի ամբողջ ժամանակի հոգեբանութիւն, քաղաքական մեր միակ դէնքը: Լալկանութիւնը, սակայն, ապացոյց է հոգեւոր տհասութեան կամ անարիութեան: Մուրացկանութիւնը զզուելի է ընդհանրապէս: Մուրացկանին օգնում են ոչ միայն կարեկցանքից դրդուած, այլ եւ յաճախ զզուանքից:

Աւելի սարսափելի է քաղաքական մուրացկանութիւնը, քանի որ քաղաքականութեան մէջ կարեկցանք չկայ, իսկ զզուանք՝ շատ քիչ:

Անորակելի է մուրացկանութիւնը քաղաքականութեան մէջ:

Աներես մուրացկանի եսականութիւնը բոլորովին բնական է համարում, որ մարդիկ, թէկուզ ամենէն ինկաճները, զթան իրեն:

է՛լ աւելի աներես է մուրացկանը եւ պահանջկոտ, եթէ նա միա-
ժամանակ ե՛ւ հաշմանդամ է :

Ահա՛ մուրացկանի այս ետականութիւնը եւ հաշմանդամի պա-
հանջկոտութիւնը դարձել են հոգեբանութիւն :

Հոգեբանական այս երկու մօտեցումներ Աւետարանի ներշնչմամբ
ստացել են քաղաքական իմաստութեան, դիւանագիտական դէնքի բը-
նոյթ :

Քրիստոնէական մի հօտի համար չքնաղ առաքինութիւն, սա-
կայն միայն քրիստոնէական հօտի :

Այսօր մենք անիծում ենք քաղաքական բարերարներին, սակայն
մոռանում, թէ մուրացկանին եւ հաշմանդամին անկեղանոց են տալիս
եւ ոչ անկախ հայրենիք :

Երէկ այսպէս էինք, երբ կրօնական հօտ էինք. այսօր յաւակ-
նութիւն ունինք մեզ քաղաքական ուժ համարելու, բայց չենք ազա-
տագրուել հօտային հոգեբանութիւնից, որը թափանցել է քաղաքա-
կան հոսանքների մտայնութեան մէջ, որոնք դրա շնորհիւ անգիտակ-
ցաբար կառչել են օրիէնտասիոնների դադափարին :

Ճիշդ է, նկատելի է մի քայլ առաջ — քրիստոնէական նախա-
պաշարումից մինչեւ օրիէնտացիա — սակայն այդ բոլորի մէջ կայ
մի խոստովանութիւն, այն է՝ թէ մեր ժողովրդի որոշ տարրերը քա-
ղաքական կեանքի համար թերեւս պատրաստ չեն, խակ, անուժ, ա-
նարի եւ ապա բոլորովին չազատագրուած նախկին մտայնութիւնից :

Հայ քաղաքական մտքի դեզերումների մէջ սա մի երկրորդ
չրջան է — մտքի կիսանկախ դառնալու շրջանը :

Այս շրջանը կարճ ժամանակում այնքան ազիտաւոր հետե-
ւանքներ ունեցաւ եւ թուժ է թէ շարունակում է է՛լ աւելի մթաղնել,
արիւնոտել մեր ճակատագիրը՝ պառակտելով, ներքուստ թուլացնե-
լով մեր ժողովուրդը :

Այս հոսանքներն արդէն արտայայտութիւն են ստացել մեր
կեանքում իբրեւ ուսական կամ արեւմտեան օրիէնտացիայի — խօսք
կայ անգամ Տաճկաստանի մասին — ձգտող քաղաքական խմբաւո-
րումներ, որոնց խելակորոյս, ազգային տեսակէտից անիմաստ բա-
խումների հետեւանքով մեծապէս դիւրացուց Հայաստանի անկումը
եւ բաժանումը Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ :

Սակայն, այս մտայնութեան հետեւանքը միայն քաղաքական
կորուստը չէ :

Ամենասարսափելին ա՛յն է, որ դա անվերջ պիտի ներշնչէ մեր
ժողովուրդին այն համոզումը, թէ ինքը տկար է, կարօտ ուրիշների
հովանաւորութեան եւ այսպէսով կամազրկի, թուլացնի նրան՝ անըն-
դունակ դարձնի թէկուզ իր ինքնապաշտպանութիւնը սեփական ուժե-
րով կազմակերպելու :

Անկախութեան յաւակնութիւն ունեցող ժողովուրդները նախ

պէտք է այս մտայնութիւնից ազատուին :

Ինքնուրոյնութիւնից զուրկ ժողովուրդները չեն կարող պե-
տութիւն ստեղծել : Պետութիւնը նախատեսում է ինքնուրոյն քաղա-
քական միտք, պայքարելու ինքնավստահութիւն, կառավարելու նա-
խաձեռնութիւն, իսկ յաղթանակն այլ բան չէ, քան ինքնավստահ նա-
խաձեռնութեան պտուղը :

Եղան դէպքեր, երբ մեր այս կամ այն դաւառը մենակ էր, բայց
վճռական մինակի հոգեբանութեան շնորհիւ, յաջող կերպով տարաւ
իր ինքնապաշտպանութեան դժուարին պայքարը :

Եւ ընդհակառակն, այն դէպքերում, երբ մեր քաղաքականու-
թիւնը արտաքին ուժերի վրայ հաշիւներ արեց — մենք պարտուե-
ցինք չարաչար :

Պարտուեցինք, որովհետեւ այսպիսի հաշիւներով ղեկավար-
ուողը զուրկ է վճռական մենակի հոգեբանութիւնից, այսինքն յաղ-
թելու ամէն հաւանականութիւնից :

Քաղաքականութիւնն ընդհանրապէս սարսափում է մենակու-
թիւնից, իսկ օրիէնտացիաների քաղաքականութիւնը այլ բան չէ, ե-
թէ ոչ մենակութեան սարսափը :

Համակուե՞լ է մի ժողովուրդ այս սարսափով — պարտուած
է, կորած :

Այստեղ է մեր դժբախտութեան մի այլ պատճառը. ընդունինք
այս ճշմարտութիւնը եւս :

Մեր մի շարք հոսանքների օտարահակ տրամադրութեանց, մեր
ինքնավստահութեան պակասի եւ մեր մենակութիւնից սարսափելու
շնորհիւ, մեր ժողովուրդը, որ այլ դէպքում պիտի կարողանար իր
ինքնապաշտպանութեան դործը կազմակերպել յաջորդարար — դար-
ձաւ կամազուրկ մի ամբոխ ու պարտուեց :

Մեր պարտութիւնները հոգեբանական էին, պարտուեցինք ոչ
թէ նրա համար, որ թուապէս ու տեխնիքապէս թոյլ էինք, տկար,
այլ որովհետեւ այդպիսին էինք հոգեպէս :

Մի օտարի հովանու տակ հայր եղակի եւ ռազմաշունչ կռուող
է, իր սեփական դրօշի տակ՝ յաճախ անարի, պարտուողական :

Կարսում մենք ունէինք բնական ու արհեստական դիրքերի գե-
րազանցութիւն, թուական առաւելութիւն, աւելի լաւ պարենաւորում,
բայց եւ այնպէս պարտուեցինք, որովհետեւ չունէինք վճռական մե-
նակի հոգեբանութիւն, ինքնուրոյն կերպով որեւէ բան անելու հա-
ւատ : Պարտուեցինք, որովհետեւ մենք միայն, որպէս ազգ, մասամբ
զիտակցեցինք մեր պարտականութիւնը, մասամբ հասկացանք աշ-
խարհի իրական պայմանները, փորձեցինք ոտքի կանգնիլ, բայց ոչ
ամբողջովին եւ ոչ մեր ներքին ուժերի դրդումով :

Պարտուեցինք, որովհետեւ մեր ցեղի ոգու բովանդակ ուժերն
օգտագործելու փոխարէն հովանաւորներ փնտռեցինք :

Վաղը կը կորչենք ի սպառ — եթէ մնացինք այս մտայնութեամբ: Կը փրկուենք, եթէ ազատուեցինք նախապաշարումներից, եթէ փորձեցինք ոտքի կանգնել, սակայն, ոչ արտաքին դրդումով, օտարներ զանկուլութեամբ այլ մեր ներքին, բնական, անզուսպ մղումով:

Այսպիսով միայն կ'ազատադրուի եւ կ'ազատուի ոեւէ ժողովուրդ:

Այդ ճանապարհին, եթէ եղան օժանդակիչ ուժեր պիտի օգտագործենք որպէս զինակից, բարեկամ:

Օգտագործել, եւ ոչ ադերսել — ըմբռնե՞ց հայն այս տարբերութիւնը — կանգնած է փրկութեան ուղիղ ցամաքին:

Մինչեւ հիմա բարեգործներ եւ հովանաւորներ ենք փնտռում — հիւանդ ենք, թոյլ եւ տհաս մտահոգեպէս:

Սրանից յետոյ զինակիցների մասին պիտի խօսենք, որովհետեւ հոգով առողջանալ, արիանալ ենք ուզում:

Զինակիցներ եւ ոչ բարերարներ — այդ նշանակում է, թէ հայն արի է եւ ինքնապաշտպանուելու, պատերազմելու ընկեր է փնտռում: Քաջի իրաւունքն է դա, նրա՛, որ վճռել է մենակ յաղթել եւ զինակցում է միայն աւելի հեշտ յաղթելու համար:

Արի՛ ժողովուրդ — սրա՛ն են միայն զինակցում, ձեռք մեկնում պետութիւնները: Հասկանանք եւ այս ճշմարտութիւնը:

Փրկուելու համար պէտք է նաեւ արիանալ, այսինքն՝ յաղթահարել սեփական սարսափը:

Սարսափից ազատագրուած հոգին միայն ընդունակ է աշխարհն առարկայօրէն տեսնել, պատկերացնել:

Երկիւղը միշտ էլ նիւաղներ է ստեղծում՝ մտացածին հրէշներ: Ժողովուրդները յաճախ մեռնում են հեկց այս նիւաղներից:

Քաղաքական գիտակցութեան քերիկ, անինքնավստահութիւն, սարսափի հոգեբանութիւն — ահա մեր եռագլխեան թշնամին:

Եւ մինչեւ որ չկարողանանք այս ներքին թշնամին սպանել, անկարելի է, որ արտաքին թշնամուց ազատուել կարողանանք:

Ասուած է. «Մարդս մի բան է որ պիտ՝ յաղթահարուի»:

Այսպէս, մինչեւ որ հայ մարդը չկարողանայ ինքզինք յաղթահարել — սպանել սարսափի անասունն իր մէջ, ներշնչուել նոր մտայնութեամբ, հոգեփոխուել, կարն՝ մինչեւ որ չդառնայ արի եւ արիանուն ժողովուրդ՝ անհնար է, որ նա կարողանայ ո՛չ միայն քաղաքականապէս ազատուել, այլ եւ ազգովին ոչնչանալու վտանգից խուսափել:

Արեւելքում մեզ համար ստեղծուած պայմանների մէջ կարող է ապրել արի եւ արիապաշտ հայութիւնը, բայց ոչ այսօրուանը:

Պատերազմների մէջ յաղթանակում է արին — այս նշանակում է՝ յաղթում է նա, ով սանձահարել է իր սեփական սարսափը, ով

Թշնամու հետ շափուելուց առաջ կառուցել է յաղթանակի շէնքն իր հոգում :

Մեքենական կոպիտ ուժերի բախումը չէ պատերազմը, այլ ժողովուրդների հոգեկան կարողութեանց :

Դեռ աւելին՝ պատերազմը ժողովուրդների աստուածների դօտեմարտն է : Տեխնիքան՝ դէնքն է, միջոցը հոգին, պատերազմի դարբինը :

Զէնքն անհրաժեշտ է — սակայն արի բազուկների մէջ :

Պայքարի պատրաստուող ժողովուրդները նախ սպառազինւում են հոգեբանօրէն :

Անտեսուած է այս պայմանը — անխուսափելի է պարտութիւնը եւ տեխնիք միջոցների յանձնումը թշնամուն :

Յաղթելու համար պէտք է սեփական պարտութիւնը յաղթահարել :

Յաղթահարել սեփական պարտութիւնը — նշանակում է ընդունակ լինել ինքնապաշտպանութեան, որ ուրիշ բան չէ քան թշնամու պարտութիւնը :

Ինքնապաշտպանութիւն՝ ահա՛ թէ ի՞նչ են թելադրում ժամանակն ու պրօգրեսը :

Ինքնապաշտպանութիւն — ահա՛ մեր նոր կրօնը :

Ինքնապաշտպանութիւն — միակ միջոցը որ թէ ժողովուրդների եւ թէ սրանց աստուածների գոյութիւնն է ապահովում :

Եսականութիւն չէ՛ բնաւ, երբ մի ժողովուրդ իր ինքնապաշտպանութիւնը իր կրօնն է յայտարարում : Ընդհակառակն, մի արիւնտ ողբերգութիւն է մղում ժողովուրդներին այս համոզման եւ ամենէն արդար ժողովուրդները իրաւունք ունին այսպէս վարուելու :

Ինքնապաշտպանութիւնը ոչ թէ բնական իրաւունք է իւրաքանչիւր ժողովուրդի, այլ եւ պարտականութիւն դէպի մարդկութիւնը :

Ժողովուրդները ապրում են իրենց՝ ստեղծագործում մարդկութեան համար :

Ապրելու արժանի չէ միայն իրե՛ն համար ապրողը :

Ժողովուրդներն ստեղծագործելու պարտականութիւն ունեն — հետեւարար եւ ապրելու իրաւունք :

Մի ժողովուրդ, որ անընդունակ է ինքնապաշտպանութեան, նշանակում է զուրկ է այդ տարրական առաքինութիւններից, — առաքինութիւններ, որոնց շափանիչը ինքնապաշտպանութեան համար ցուցահանուած ընդունակութիւնն է միայն : Զո՞ւրկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանութեան ընդունակութիւնից — նշանակում է նա զուրկ է ամէն առաքինութիւնից, զուրկ գոյութեան բարոյական իրաւունքից :

Երկար ժամանակ աղերսում էինք կեանքի, գոյքի, պատուի՝

ապահովութեան — այնժամ ոչ միայն տկար էինք, այլ եւ զուրկ առաքինութիւնից :

Ժողովուրդներէ կեանքը բռնաւորներէ շնորհը չէ, նրանք չեն կարող ողորմութեամբ ապրել եւ պէտք չէ ապրին :

Մակարոյժ է մի ժողովուրդ, եթէ իր ինքնապաշտպանութեան համար յենուած է միայն օտար ոյժի շնորհին : Կեանքում մակարոյժն անբարոյական է, իսկ նմանը տեղ չունի պատմութեան մէջ :

Առանց զայրանալու ընդունինք եւ այս ճշմարտութիւնը :

Ինքնապաշտպանութիւնը մի պարզեւ չէ ուրիշից իրեն, այլ մի բան իրենից — իրեն, մի ազդեցութիւն ենթակայից — ենթակային :

Ինքնապաշտպանութիւնը մի ժողովուրդի գոյութեան ներքին ճիգն է : Մինչեւ հիմա այդ ճիգն արտայայտուեց որպէս աղօթք, աղերսանք, մուրացկանութիւն — հետեւանք՝ հազար եւ հազար կըրուորական զոհեր : Հիմա ճիգը մեր ներքին ոյժի արտայայտութիւնը պիտի լինի :

Փտած են մեր հին զէնքերը, եղծանուած է հին մագաղաթը : Նոր աւետարանի խօսքը պիտի լսենք հիմա, — աւետարանը արիութեան :

Վահագնի հետ պիտի խօսենք հիմա, — Աստուածը հին արիական հայութեան : Մի նոր սուրբ գիրք պիտի դրուի մեր ժողովուրդի ձեռքը — աւետարանը արիների :

Արիութիւն — ա՛ս պիտի լինի մեր սերունդների կոչումը, քանզի այդ բարձր յատկութիւնն է փրկում ժողովուրդները Փիզիքական եւ բարոյական անկումներից, քանզի աստուածային միակ արժէքն է արիութիւնը, որով ժողովուրդները կը գնեն իրենց անկախութիւնը եւ կ'ապահովեն զայն :

Արդ թէ ինչո՞ւ արիութեան պատգամախօսները պիտի դառնան հայ մտաւոր եւ հոգեւոր կեանքի բոլոր զեկավարները :

Ե՛ւ, դպրոց, ե՛ւ եկեղեցի, ե՛ւ քաղաքական կուսակցութիւններ, ե՛ւ մամուլ, ե՛ւ ապակուսակցական կազմակերպութիւններ — բոլո՛ւրը, բոլո՛ւրը պիտի համակուին նոր մտայնութեամբ, պիտի կրկնեն նոր ճշմարտութիւններ, կրկնեն անվերջ, անդադրում, մինչեւ որ արիական ինքնապաշտպանութեան գաղափարը կը դառնայ ժողովրդական մտայնութիւն, ազնիւ կիրք, հոգեբանութիւն, մինչեւ որ հայութիւնը դառնայ ինքնապաշտպանունակ :

Ե .

Եկեղեցին :

Դա վերադնահատումի պիտի ենթարկէ քրիստոնէական սիրոյ իր սխալ ըմբռնումը, որպէսզի դադարի թուլութիւնը առաքինութիւն համարել եւ սպանել մեր ժողովուրդի կամքը :

Մխալ է ըմբռնել դա քրիստոնէական սիրոյ խորհուրդը եւ դրա հետեւանքով ամբողջ դարեր պատճառ դարձել մեր ժողովուրդի անօրինակ ողբերգութեան :

Միրում է նա , ով ուժեղ է . ով հոգու առատութիւն ունի , ում ուժի բաժակը լցուած է յորդելու , թափուելու աստիճան :

Արդասաւոր չէ՛ թոյլի սէրը :

Քճնանքն է թոյլի ներումը :

Քրիստոսը սիրում էր , որովհետեւ ուժեղ էր . նա սիրում էր , որովհետեւ սիրելու եւ ներելու շափ հօր էր :

Նրա անձնական կեանքը պիտի դառնայ եկեղեցուն ուղեցոյց :

Նրա մահուան խորհուրդը — հերոսական զոհաբերութիւն :

Նա զոհաբերեց , որովհետեւ զազափարի հերոս էր :

Միայն արին , քաջը , միայն հերոսը կարող է զոհաբերել :

Անընդունակ է բոյլը ինչպէս սիրոյ , նոյնպէս եւ գոհաբերութեան :

Մի ժողովուրդ , որ ընդունակ չէ այս երկու առաքինութեանց — դիպուածների կը պարտի իր գոյութիւնը :

Քրիստոնէան նա՛ չէ , ով քրիստոնէական վարդապետութեան տարերքը սխալ է հասկացել , ընկել նախապաշարումների ցանցի մէջ եւ տկարացել կորչելու աստիճան , այլ նա , ում մէջ մի քիչ քրիստոսութիւն կայ — մի կայծ ամենահօր աստուածամարդու հոգուց :

Նա ամենակարողն էր , ամենահօր — մենք առնուազն կարող եւ հօր պիտի լինինք , որպէսզի կարողանանք սիրել եւ զոհաբերել :

Մխալուե՛լ , չարաչար սխալուել է մեր եկեղեցին՝ «տնանկ»-ների եւ «սնանկ»-ների բարոյականութիւն քարոզելով :

Սրանից յետոյ սիրոյ եւ զոհաբերութեան ընդունակ արի ժողովրդի մասին պիտի խօսի , եթէ ուզում է որ քրիստոնէութեան հետքերը մնան Փոքր Ասիայում եւ Հայաստանում :

Ուժե՛ղ եւ արիակա՛ն ժողովուրդ , այնպիսին , որ ընդունակ լինի արհամարհել մահը յանուն իր սեփական գոյութեան :

Այսպիսով կ՛ապրի ոչ միայն հայութիւնը այլ եւ հայոց եկեղեցին :

Ինքնապաշտպանութիւնը հայ ժողովուրդի — ահա հայ եկեղեցւոյ նոր հաւատամքը :

Չընդունե՞ց այս ճշմարտութիւնը , չքարոզե՞ց , չտարածե՞ց ամէն օր այս փրկարար զազափարը , իր բոլոր միջոցներով չնպաստե՞ց մեր ինքնապաշտպանութեան գործին — կործանուած է դա :

Մամուլը :

Նրա պարտականութիւնն է — խտացած ճշմարտութիւններ տալ ժողովուրդին :

Նպատակը — այս ճշմարտութիւններով լուսաւորել ժողովուրդի ուղին դէպի ապագան:

Չունի՞ մամուլն այս կոչումը՝ աւելորդ մակարոյծ է դա եւ զուր տեղը ժողովուրդները կերակրում են զայն իրենց հաշուին:

Դժբախտաբար որոշ բացառութեամբ այսպիսին է՝ մերը, հայկականը:

Լրագրութիւն եւ ո՛չ մամուլ — այս նշանակում է, թէ մենք դեռեւս տեսա ենք, թէ չենք կարողանում մեր կեանքի ներքին կրննիւնները գտնել, լուսաբանել գանոնք եւ մեր միտքն զբաղեցնում ենք արտաքին եղելութիւններով, լուրերով:

Մեզ համար դեռ այն է հետաքրքիրը, ինչ մեզնից դուրս է կատարւում կամ միայն արտաքուստ առնչութիւն ունի մեզ հետ:

Այս մտայնութիւնը իշխել է մեր լրագրութեան մէջ համարեալ իր սկզբնաւորութեան օրից:

Փրկութիւնը դրսից է — այս բաւական է, որ լրագրութիւնը խանդավառութիւն արտաքին բարենպաստ նշաններով, մի դիւանագէտի կարեկից ժպիտով, մի անուանի եւրոպացու հայասէր արտայայտութիւնով, մի միսիոնարական ընկերութեան հայանուէր ջանքերով, մի խաղաղասիրական կօնգրէի(*) հայանպաստ բանաձեւով, մի պարլամենտական դործիչի զղացուած ճառով որեւէ հայկական կոտորածից յետոյ եւ վերջապէս այնպիսի բաներով, որոնք ժողովուրդներին ինքնապաշտպանութեան կամ փրկութեան համար ոչ մէկ իրական նշանակութիւն ունին:

Եւ այսպէս ամբողջ տասնամեակներ... եւ ոչ ոք է զգացել, թէ այդպիսով մեղսակից է դառնում հայկական ողբերգութեան՝ վերիպեցնելով ժողովրդի ուշադրութիւնը իր փրկութեան միակ զէնքից — ինքնապաշտպանութիւնից:

Եղել են լրագրային արտայայտութիւններ, յաճախ նոյնիսկ ինքնապաշտպանութեան ազիտացիա(**), սակայն այդ բոլորը թերի, ո՛չ դերձ արտաքին ուժերի հանդէպ ունեցած նախապաշարումներից, հետեւաբար ոչ ամբողջովին ճշգրիտ, ոչ օգտակար:

Լրագրութիւնը, որ տասնեակ տարիների ընթացքում չէ կարողացել իր ժողովուրդի դժբախտութեան իսկական պատճառները մատնանշել հազար եւ հազար զոհերից յետոյ մի ընդհանուր ճշմարտութիւն գտնել եւ ջանալ այդ ճշմարտութիւնը դանդուածների հոգեբանութիւնը դարձնել:

Լրագրութիւն, որի որոշ օրգանները արտաքին ուժերի հանդէպ ներող են, քծնող, խնկարկող, իսկ ներքուստ՝ պառակտիչ, անհանդուրժող եւ ամբարտաւան:

(*) Համագումար:

(**) Շարժում:

Լրագրութիւն, որի որոշ օրդանները ղեկավարուած են փողոցի առաքինութիւններով կամ տարփողելով մեծ ժողովուրդների ուժն ու հմայքը, վատարար արհամարհում են սեփականը:

Լրագրութիւն՝ որ բորբոքում է թայֆայական կրքերը եւ ընդունակ չէ մի տարրական ճշմարտութիւն ըմբռնելու այն է, թէ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը մի դործ է, որի մէջ ամէն հոսանքի եւ սղղութեան մարդիկ միակամ պիտի լինեն:

Լրագրութիւն, որ տարիների խանդավառութիւնից՝ դէպի օտար յոյսերը, այսօր հիասթափուած հայհոյում է աջ ու ձախ բոլոր ազգերն ու լեզուները եւ անընդունակ է ըմբռնելու, թէ մեղաւորը օտարները չէին, որ հայ ժողովուրդը չմղուեց, չզխմեց ինքնապաշտպանութեան եւ ջարդուեց:

Լրագրութիւն որ, ամէն օր աղաղակում է, թէ հայութիւնը զոհ գնաց աշխարհակալ ժողովրդների քաղաքականութեան եւ անդիտակցարար մխրճուել է գլուհնադիտական կնճիռների մէջ, խօսում է օրիէնտացիաների մասին եւ դիպլոմատիական ծրիծաղելի դիլետանտիզմէն:

Այսպիսի լրագրութիւնը աւելորդ է հայ ժողովրդին:

Ինչպէս հայ եկեղեցին, նոյնպէս եւ մեր մամուլը պիտի հոգեփոխուի:

Լրագիր մենք չատ ունենք, նոյնիսկ աւելորդ. հիմա պէտք է վերադաստիարակիչ հրապարակախօսութիւն:

Լրագրութիւն, որ անսխալ կերպով ախտանշէ մեր ցեղին հոգերը եւ արմատական միջոցներ առաջարկի, որ վերագնահատումի ենթարկէ մեր անցեալը եւ նոր նշմարտութիւններ որոնէ, որ լուսարանի մեր ժողովուրդի կնիռները, ի յայտ բերէ նրա քաֆուն առաքինութիւնները, որ կռահի իր ժողովրդին սպառնացող վտանգը եւ դառնայ նրան հոգեւոր սպառազինումի ահագանգը:

Մամուլ, վերջապէս, որ ազատուի օտարահակ մտայնութիւնից եւ արիութիւն քարոզի, որ խլեակների փոխարէն հերոսական ժողովրդի մասին խօսի եւ այդ այդպէս, մինչեւ որ հայութիւնը՝ խրոխտարար կանգնած իր բարձրաւանդակի վրայ կ'ապացուցանէ աշխարհին, թէ ինք արի է — տէր իր հայրենիքին եւ ճակատադրին:

2.

Հրամայողարար պիտի հոգեփոխուեն նաեւ մեր կուսակցութիւնները — սրանք՝ մասնաւորապէս: Մեր ներքին հակամարտութիւնները զինակցում են արտաքին թշնամուն՝ ընդդէմ մեր ժողովուրդի եւ երկրին:

Դժուար է հաւատալ, թէ կուսակցամիջեան այլանդակ պայքարի կատաղութիւնը բխում է միայն դէպի հարազատ ժողովուրդն ու-

նեցած սիրուց, — ժողովուրդ, որի փրկութեան մասին տարբեր ըմբռնում ունեն պայքարող կողմերը:

Մեր կուսակցութեանց պայքարի միակ «մարտական միջոցը» պիտի լինէր բարոյական կշտամբումը եւ ո՛չ աւելին, ո՛չ՝ ե՛ւ սուտը, ե՛ւ զրպարտութիւնը, ե՛ւ իրողութեանց խեղաթիւրումը, ե՛ւ նման բարոյագուրկ ու դատապարտելի դէմքերը:

Մանկօրէն միամիտ են այն կուսակցութիւնները, որոնք ժըխտելով մորալը(*) քաղաքական պայքարի մէջ՝ կարծում են թէ կարող կը լինեն բարոյական մաքրութիւն պահել իրենց շարքերում:

Բարոյականի աղքատութիւն — ասել է բարոյական ուժերի աղքատութիւն:

Ժողովուրդի մի մասի անունից հայհոյել միւսին՝ հակառակորդին եւ տղայարար ժխտել նրա գոյութեան իրաւունքը — դեռ չէ նշանակում դաստիարակել իր շարքերը:

Անիմաստ եւ զզուելի է քննադատութիւնը, եթէ ստեղծագործութիւն չէ դա:

Ով օրն ի բուն գրադում է իր հակառակորդի թերութեանց քննադատութեամբ — նա առնուազն կումպրոմիսներ է կատարում իր սեփական յոռութիւնների հետ:

Այդպիսին կարող է շահել, բայց շահած կը լինի ի հաշիւ իր բարոյական առողջութեան:

Այդպիսին կարող է մնասել իր հակառակորդին բայց ինքը ունի կը շահի:

Ստորնութիւնը մնում է ստորնութիւն անգամ այն դէպքում, երբ նա կատարում է յանուն ամենանուիրական շահերի. դա նախ բարոյագրկում է եւ տկարացնում իրենից օգտուողին:

Անվերջ բարի խօսել իր կուսակցութեան եւ շար այլոց մասին — ե՛ւ ծիծաղելի է, ե՛ւ անարդար:

Հոգեպէս անառողջ է նմանը:

Խուժանավարել՝ չարաշահել զանդուածների մութ զգացումները եւ կոյր ատելութիւն ստեղծել հակառակորդների հանդէպ — չէ՛, չէ՛ նշանակում իտէալական(**) պայքար վարել:

Այդպիսին ընկածութեան է մղում իր շարքերը. այդպիսին չարիք է ե՛ւ իրեն, ե՛ւ իր հակառակորդի, ե՛ւ իր ժողովուրդի համար:

Կոյր ատելութեամբ հիւանդ՝ մեր կուսակցութիւններից ոմանք մոռացել են հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան սրբազան գործը, յանուն որի — իբրեւ թէ — կեանքի են կոչուած:

Նրանք շարունակում են նեղսիրտ եւ իրերամերժ կռիւլ՝ տկարանալով եւ տկարացնելով մեր ժողովուրդը, խաթարում նրա հաւա-

(*) Բարոյական:

(**) Գաղափարական:

քական հոգին՝ կատարում այն, ինչ որ պէտք է արտաքին թշնամուն :

Եւ այդ ամէնը միամտօրէն կոչում են ժողովրդասիրութիւն, երբ էապէս ժողովրդասպանութիւն է տեղի ունեցողը :

Այո՛ ժողովրդասպանութիւն :

*
**

Մտաւոր կարճատեսութիւն է չհասկնալ, թէ անվերջ ու անդադրում վերանորոգութիւն է կեանքը :

Հոգեւոր անշարժութիւն — ասել է բարոյական մահ, մահացում :

Անտարբերութիւն, յուետեսութիւն, բարոյական մահացում — ժողովուրդների անձնասպանութեան դանդաղ ձեւերն են սրանք :

Վերանորոգուելու անընդունակ ժողովուրդները մեռնում են ամէն ժամ, ամէն վայրկեան :

Այո՛, հոգեվարում են այն ժողովուրդները, որոնք հոգեպէս ծոյլ են ապրում, որոնք ղեկավարում են պատահականութեամբ, խճճուած քաղաքական մոլորութիւնների եւ հոգեբանական սխալանքների մէջ :

Մեր կուսակցութիւնները կամ չեն հասկանում այդ, կամ ժամանակ չունեն հասկանալու :

Նրանց պակասում են ճշմարտութիւններ, որ փրկել զիտնան : Չկայ, չէ նկատում մտքի ու ոգու լարում, իսկ ճշմարտութիւնները կարելի է հասկանալ միայն այդ լարումով :

Չկայ ստեղծագործութիւն, չկայ բարոյական ուժերի մթերում : Կա՛յ ընդհակառակն, հասկացողութիւնների քառս եւ անարխիա (*), կայ բարոյական լճացում, կայ բարոյական մահաբուծութիւն, — հոգեբանական մի աղիտալի մթնոլորտ, որի մէջ չեն աճում, չեն փթթում բարոյական ուժեր :

Իսկ նման մթնոլորտում կը դաստիարակուեն անարի, փոքրօղի եւ պարտուողական սերունդներ միայն — անարի ժողովուրդ, որի ուժերի մեծագոյն մասը սպառւում է վախի եւ անհանդստութեան մէջ :

Կայ օտարահակ օրիէնտացիաների դերազնահատումն եւ սրբանց խելազար հակամարտութիւնը՝ ծնունդ թոյլերի հոգեբանութեան :

Կայ անվճռականութիւն — ասել է թուլութիւն ցոյց տուող ազգը մեծապէս արագացնում է եւ ուժեղացնում թշնամու հարուածը :

Կայ այն ամէնը, ինչ որ անյոյս եւ վտանգուած է դարձնում մեր ժողովուրդի ապագան :

(*) Անիշխանութիւն :

Մեզմ ասած՝ ստեղծուել է մի դրութիւն, որ մահուամբ է սպառնում մեր ժողովրդին:

է.

Նա — անհատ թէ հաւաքականութիւն — որը բարոյապէս կատարելագործւում է՝ ուղղակի թէ անուղղակի կերպով նպաստում է իր շրջապատի բարոյական զարգացման:

Մեր կուսակցութիւնները՝ թողած բիւզանդական վէճերը եւ ամէն զնով իրար դետին զարկելու անմիտ ցանկութիւնը, թողած հակառակորդի թերութեանց ամէնօրեայ ցուցադրութեամբ իր սեփական այլանդակութիւնները քողարկելու սին ճիգերը, — թողած ամէնը հրամայողարար պիտի գրադուեն ինքնագաստիարակութեամբ:

Անհատ թէ ժողովուրդ — սրանք միշտ էլ աւելի ուժեղ են քան կարիքը, քան վտանգը, քան քշնամին, — սրանք միշտ էլ կարող են գերազանցել իրենց, բարձրանալ իրենցից, եթէ սրանց չէ պակասում սեփական ուժերով ոտքի կանգնելու կամքը:

Բարձրանալով՝ հոգեպէս բարձրացնել մեր ժողովուրդը, ինքնուղղումով սրբազրել ժողովրդի հոգին:

Գիտակցելով, թէ ժողովուրդները չեն պարտում եթէ չեն ուզում պարտուել, — գիտակցելով այդ ճշմարտութիւնը, — զայն մեր կուսակցութիւնները իրենց շարքերի միջոցաւ պիտի ներշնչեն մեր ժողովուրդին՝ նրան հոգեպէս զօտեպնդելու համար: Մեր կուսակցութիւնները, սրանց միջոցաւ ե՛ւ ժողովուրդը խորապէս պիտի գիտակցեն.

— Քանի դեռ տրանջում է, աղերսում, լալիս մի ժողովուրդ՝ պէտք չէ՛ օգնել նրան քանդի այդպիսին կամովին հրաժարում է իր գոյութեան իրաւունքից:

— Չարժէ եւ չէ՛ կարելի օգնել ընկածին, եթէ նրան պակասում է ինքնօգնութեամբ ոտքի կանգնելու կամքը:

— Ով չէ աշխատում իր բովանդակ ուժերով՝ իրաւունք չունի ուրիշներից օգնութիւն սպասելու:

— Սեփական ուժերով ինքնապաշտպանուելու անընդունակ ժողովուրդները պատժւում են մահուամբ:

— Իրաւունքը ուժի հասկացողութիւն է եւ ո՛չ տրամաբանական, ինչպէս եւ պայքարը յանուն իրաւունքի — բարոյական հիմքը ժողովուրդների գոյութեան — անէծք չէ, այլ օրհնութիւն:

Դատապարտուած է մի ժողովուրդ, եթէ նա իրաւունքը զոհարեում է իր յանցաւոր հանգստի եւ ոչ ընդհակառակը:

— Թոյլը մեղաւոր է, որ թոյլ է: Անբարոյականութիւն է թուլութիւնը՝ ստեղծուած սնուցանելու ուժը: Ժողովուրդները իրենց

թուլութեանց մեղքերը կը քաւեն որպէս պարտութիւն, սարկութիւն, որպէս անփառունակ գոյութիւն:

— Անպարտելի է այն ժողովուրդը, որ ղեկավարում է ոգու ձեռքով:

Այնտեղ, ուր կայ ոգու, ասել է՝ բարոյական ուժերի ապացոյցը — այնտեղ թուական գերազանցութիւնը, քարը, մետաղը գրեթէ կորցնում են իրենց նշանակութիւնը: Ոգու հետ զինակցողը բարոյական ուժերի հետ է զինակցում, որի միջոցներն աճում են անհաւատալիութեան աստիճան, դառնում անսպառելի:

— Գլխաւոր դերը ժողովուրդների պատմութեան մէջ խաղում են ո՛չ արտաքին պայմանները, ո՛չ քաղաքական օրիէնտացիան, ո՛չ էլ զիպուածները, այլ իրենց հոգեբանական նկարագիրը:

— Մի ժողովուրդի գոյութեան արտաքին պայմանները հարազատօրէն կապուած են նրա ներքին հոգեկան դրութեան հետ: Ասել է՝ ամէն ժողովուրդ այնտեղ է, ուր նա հասել է իր բարոյական ուժերի մղումով:

Գիտակցելով այդ ամէնը՝ մեր կուսակցութիւնները, մեր եկեղեցին, մեր զպրօցը, մամուլը պիտի հոգեփոխեն մեր ժողովուրդը:

Գիտակցելով, հարազատելով եւ զործադրելով այդ փրկարար ճշմարտութիւնները՝ մեր մտաւորականութիւնը պիտի յաջողի վերագաստիարակութեամբ հոգեբանօրէն բարձրացնել հայութիւնը, նրան պիտի յաջողի մեր ժողովուրդի ոգու անպարտելիութեամբ ապահովել նրա անպարտելիութիւնը — նրա Ֆիզիքական եւ բարոյական գոյութիւնը:

* *

Պէտք է վերագաստիարակութիւն — իմաստուն գաստիարակութիւն է պէտք՝ վերջին խաղաթուղթը ապագան վտանգուած ժողովուրդների:

Դաստիարակութիւն, որ յեղաշրջէր մինչայժմեան թոյլի մեր հասկացողութիւնը իրաւունքի եւ քաղաքական բարոյականի, քրիստոնէութեան, ուժի եւ թուլութեան, պատերազմի եւ խաղաղութեան մասին:

Դաստիարակութիւն, որ ազգային հօր զգացումով եւ արթուն զիտակցութեամբ զինէր հայութիւնը, որ արիացնէր եւ դառնար մայրը բարձր ժողովրդասիրութեան՝ եւ զազափարապաշտութեան, մղէր ընդհանուրի շահը միշտ էլ գերադասել անձնականից, թելադրէր անհատին ընդհանուրի երջանկութեան մէջ փնտուել իր անձնական երջանկութիւնը, մտատրամադրէր բոլորին, բոլորին՝ աւելի պարտականութեանց տէր զգալ իրենց, քան իրաւունքների, որ մղէր հայ մարդուն մեռնել ապրելու եւ ապրեցնելու եւ ոչ թէ ապրիլ մեռնելու համար, որ իրականացնէր սոցիալական հնարաւոր արդա-

րութիւնը մեր ժողովուրդի մէջ — միակ պատճառը անարիւնների, ընչազուրկների եւ վատերի շքոյութեան, ասել է եւ հայրենիքների անպարտելիութեան:

Փրկարար դաստիարակութիւն, որ տար մեզ անհրաժեշտ առաքինութիւններն այն ժողովուրդներին, որոնք արի են եւ վստահութեամբ կը նային իրենց ապագային որ բարձրացնէր մեզ մինչեւ գերագոյն ըմբռնումն ու զգայնութիւնը, — յատկութիւններ, որոնք կը հարիւրապատկեն ժողովուրդների բարոյական կորույր:

Դաստիարակութիւն, որ հոգեփոխէր եւ փրկէր մեր ժողովուրդը:

Ահա՛ այս նոր դաստիարակութեան ստեղծագործ եւ փրկարար գործին է որ անվերապահօրէն եւ վճռաբար պիտի լծուեն մեր կեանքի եւ պատմութեան ընթացքը շարժող բոլոր հաւաքականութիւնները՝ ազգային մի բարձր մարմինի հսկողութեան տակ, ընտրուած բոլոր հոսանքներից:

Հրապարակ հանելով մեր ժողովրդի հոգեւոր վերանորոգման անհրաժեշտութեան խնդիրը՝ — կ'ուզէի հաւատալ, թէ մեր մտաւորականութիւնը հոգեպէս անհանգիստ է մեր ժողովրդի ապագայի նկատմամբ, թէ նա, — մեր ունեցած ահաւոր կորուստներից յետոյ, — ժողովրդասպանութեան համազօր կը համարի հինի շարունակութիւնը եւ երկաթէ անհրաժեշտութիւնից մղուած՝ առաքինութիւն կ'ունենայ անկուսակցականանալ զոնէ մեր ժողովրդի ինքնապաշտպանութեան խնդրում:

— Մեր պատմութիւնը յետ այսու ազիտալի սխալների կրկնութիւնը պէտք չէ լինի, այլ սրբազրութիւնը:

Էլ ոչի՛նչ այն ամէնից, ինչ որ արուել է եւ արւում է արտաքին թշնամու գործը հեշտացնելու համար — սա պիտի լինի ինքնազգաստացումի եւ փրկութեան հրաւիրող մեր օրուան ազազակը:

Սրուե՞ց այդ, վարուե՞ց այսպէս մեր մտաւորականութիւնը — վաղն ազգովին պիտի լինենք այն, ինչ որ ուզում ենք լինել:


Մարդկային աչքը գեռ չէ տեսել այն մեծութիւնը, որին կարող են հասնել անհատներն ու ազգերը՝ իրենց հոգեկան ուժերի զարգացմամբ:

Վաղն այն ժողովուրդներին է, որոնք գիտակցում եւ գործադրում են այս ճշմարտութիւնը:

Վաղը յաղթելու է նա, որը մինչ այդ վաղը իր հոգու մէջ կը տանէ յաղթանակը:

Հասկանա՛նք, հարազատենք այս ճշմարտութիւնը եւ աշխատենք վաղուան համար, — եթէ չենք ուզում կորչել որպէս ազգ:

60 էջ, տպ. Սոփիա 1932ին: «Մի փոքրիկ մեկնաբանութիւն» խորագրով յառաջարան մը՝ փիլիսոփայութեան տոքթօր Հ. Ասատրեանի կողմէ (*): Գիրքը ունի հետեւեալ գլուխները.— Ա. Ահարոնեան — Խորհրդածութիւններ Հ. Յ. Գ. Բառասնամեակի առթիւ — Իմ Դաւանանքը — Մեր Անկախութեան Մայիսը — Եռագոյնը կարմիր լաթի դէմ — Հայ գէնֆի փառքն ու ողբերգութիւնը — Աներեւոյթ դատաւորը — Մեր դուռն են բախում — ցեղի ոգու շարժը — Նոր հայը՝ վաղուայ Առաջնորդը: Բոլոր նիւթերն ալ շօշափուած ու մըշակուած են խոր ու գիտակից ազգայնականութեամբ. ցեղակրօնօրէն, պիտի ըսէր Նժդեհ:



ԻՄ ԴԱՒԱՆԱՆՔԸ

Կը խօսիմ մեր նորագիր ընկերներուն եւ կը զգամ, որ անոնք կը խորհրդածեն.

— Գաղափարօրէն կը հաղորդուիմ այսօր: Հաղորդութիւն, սակայն, ի՞նչ է ասոր խորհուրդը:

Հոգեփոխուիլ եւ հոգեխառնուիլ Դաշնակցութեան ու անոր միջոցաւ՝ մեր ցեղին հետ:

Այո՛, ցեղահաղորդութիւն է այդ: Երբ դա կայ, կը նշանակէ թէ մեր հոգին զարձած է ընդունակ ցեղապրումի:

— Նախ կը խոստովանիմ ճշմարտութիւնը, վասնզի որքան մեծ է ճշմարտութեան անհաղորդներու թիւը ժողովրդի մը մէջ, այնքան յաճախակի եւ սուր են պառակտումի դէպքերն անոր ծոցին մէջ:

(*) Տես այս գրքի Գ. բաժնին մէջ:

Կ'ընդունիմ, թէ մեր նախորդները եթէ սարուկ չզառնային իրենց եղբայրամերժ եսականութեան, ապա մենք դարերով օտարի սարուկը պիտի չըլլայինք: Կ'ընդունիմ, որ հայուքեան ծերացած մեղքերը աւելի նպաստած են Հայաստանի կործանումին քան պարբերաբար մեր երկիրը ներխուժող օտարներու սուրը: Սեղմ ասած՝ հայութիւնը այսօր ալ իր անհամերաշխ անցեալի մեղքերն է որ կը քաւէ:

— Կը գտնուիմ Դաշնակցութեան սեմէն ներս եւ ահա ինքզինքս կը զգամ Յեղիս հետ սրբազան դաշինքի մէջ, եւ կ'ընդունիմ, թէ ամէն մէկ ԵՍ յանցաւոր ապստամբ մը, ամէն մէկ Եսականութիւն՝ բարոյական մահափորձ մըն է այն Մեծ Ամբողջին դէմ, գոր ազգ կը կոչենք:

Կը զիտակցեմ, թէ բաժանուելով ցեղէն, անհատը կը մեռնի հոգեպէս եւ ապա կը հաշտուի իր ցեղի մահուան հետ:

— Դաշնակցական եմ եւ ահա կ'ընդունիմ, թէ անհատէն ու ընտանիքէն, կուսակցութենէն ու դասակարգէն բարձր կայ եւ պիտի մնայ ցեղը, միակ ճշմարտութիւնը, որու ձայնին չհնազանդուող ազգը կը պատժուի առնուազն քաղաքական մահուամբ: Այդ սրբազան ձայնը, զոր միայն հողեւոր խուլերը չեն լսեր, կը պատգամէ մեզ՝ թող ազգը կենտրոնացնէ իր բովանդակ ուժերը եւ տրամադրէ զանոնք իր ինքնապաշտպանութեան գործին:

Իսկ առ այդ՝ եւ ոչ մէկ օր առանց նոր զէնք մը նարտարելու թրփութեան դէմ:

— Դաշնակցական եմ եւ ահա հայրենի երկիրս ու Հայութիւնը իմ շունչէս աւելի մօտ են ինձ:

Եւ արդէն կը զգամ, թէ սովորական զգացումներէ դատ ունիմ նաեւ Հայաստանի զգացումը, որ ինձ հետ ծնուած չէր եւ զոր, սակայն, Դաշնակցութիւնը տուաւ ինձ:

Հողեխառնուեցի Դաշնակցութեան հետ եւ ահա՝ ինձ կը զգամ հպարտ ժառանգորդը այն Մեծ Ժառանգութեան, զոր ՄԱՅԻՍ 28 կ'անուանենք: Եւ ալ չեմ նախանձիր ինձմէ նիւթապէս աւելի հարուստին ու բարեկեցիկին, բայց խորապէս կը ցաւիմ այն բոլորի համար, որոնք ինձ հետ, իմ կողքին, Դաշնակցութեան դրօշին տակ չեն այսօր:

— Դաշնակցակա՛ն եմ: Այդ ըսել է, թէ այլեւս եսաթափ եղած՝ կ'առաջնորդուիմ ներցեղային բարոյականով, որ պիտի սրբէ իմ էութիւնը սարկականութեան կեղտէն եւ եսականութեան հին թթիւմորէն. այդ ըսել է, թէ կ'ընդունիմ գաղափարական համամայրութեան օրէնքը, ըստ որի իմ հետագայ կեանքը պիտի ըլլայ ազգախոհ նուիրում եւ անձանձիր ծառայութիւն իմ ցեղիս, կուսակցութեանս միջոցաւ:

— Կ'ընդունիմ թէ Դաշնակցութիւնը յայտնութիւնն է հայու-

թեան հաւաքական հողին, այն ինքնազիտակից գործիքը, որուն միջոցաւ ցեղիս հողին առաջ կը վարէ իր պատմական առաքելութիւնը :

— Անհատի աշխարհայեացքը պիտի համապատասխանէ իր ազգի եւ պետութեան նպատակներուն . անոր երջանկութիւնը մէկ հատիկ արդարացում ունի՝ դայն ծառայեցնել իր ցեղի երջանկութեան :

Խորապէս կը զգամ, թէ իմ երջանկութիւնը ճիշդ հոն է, որ ես կ'աշխատակցիմ Դաշնակցութեան, եւ որպէսզի իմ զործակցութիւնը



Զօր. Գ. Նժդեհ, Տիկ. Վերգինէ Յովակիմեան եւ Տիգրան Տէր Աւետիսեան (նկարուած՝ Շիֆակօ) :

արդասաւոր ըլլայ, պարտք կը զգամ ինքնակատարելազորութեամբ դերազանցել Հայութեան արտաքին թշնամիներին, իբրեւ մարտական, բարոյական եւ իմացական ոյժ :

— Դաշնակցական եմ եւ ահա՛ կ'աշխատիմ օր, ժամ, վայրկեան առաջ խօսքիս ջերմութեամբ հալեցնել սառույցէ այն լեռը, որ իրարմէ կը բաժանէ հայ կուսակցութիւնները :

Կ'ընդունիմ, թէ քաղաքական եւ դաւանական ամէն մէկ խըտութիւն վերջ պիտի դոնէ այնտեղ, ուրկէ կը սկսի հասարակաց միաբանութեան անհրաժեշտութեան դադարարը: Կ'ընդունիմ նաեւ, թէ մերագնեայ ներքին ամէն մի հակառակորդ անձանօք ընկեր եւ եղբայր մըն է, գոր հոգեփոխելու պարտականութիւնն ունիմ: Նմանները պէտք է միայն հոգեբանօրէն զինաթափել եւ ոչ թէ զգետնել, ոչնչացնել:

— Հայրենիքի շէնքը պէտք չէ բարձրացնել օտարատեցութեան ժայռին վրայ, այս' ըստ իր բայց եւ այնպէս հայութիւնը մինչեւ կատարածն աշխարհի պէտք չէ ներէ բրբուքեան: Եթէ այդ արնապարտ ցեղէն, որ կողոպտիչն ու սպանիչը հանդիսացաւ անգէն հայութեան կէսին, եթէ օր մը անկէ բուռ մը անսուրբ մոխիր մնայ, այդ մերժելի մոխիրն իսկ դատի պիտի կանչել, անոր հետ նոյնիսկ դատաստանի պիտի նստիլ:

— Կ'ընդունիմ ազգային զոհարեցութեան օրէնքը, որուն համաձայն զոհասեղանին վրայ կրակը բնաւ պիտի չմարի:

— Վերջապէս, կը դաւանիմ Միացեալ եւ Անկախ Հայաստանը:

Եօթնիցս կը սիրեմ Հայ ժողովուրդը, որն ինձ համար կը մնայ իր ուժերի մեծութեան դեռ անձանօթ Հերակլէսը:

Կը հաւատամ մեր ազգային: Կը զգամ ու մտովին կ'ողջունեմ Հայաստան Երկիրը, որ կար, որ երջանիկ էր ու մեծ եւ որ այդպիսին պիտի լինի վաղը...

ՀԱՅ ԶԷՆՔԻ ՓԱՌՔՆ ՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Բարոյապէս սնանկ է անհատը, երբ նրան պակասում է ազգային հպարտանքի զգացումը — ծնունդ՝ ազգային ինքնաճանաչութեան, որ իր սնունդը առնում է մեր պաշտամունքից դէպի այն ամէնը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ եւ հերոսական Հայրենի Պատմութեան մէջ: Առանց այդ բարձր առաքինութեան, բարոյապէս պակասաւոր է անհատը, որպէս մարդ եւ որպէս անդամ հաւաքականութեան: Այդ նուիրական զգացումը ինձ համար շարունակում է մնալ լուսաւոր հայրենասիրութեան, ցեղային բարոյականի եւ երջանկութեան անսպառ աղբիւր: Դա՛ էր լեռնաշխարհում իմ ժողովրդական զնդերին թեւ ու թափ տուողը: Դա՛ է եւ այսօր՝ իմ վտարանդի կեանքի դառնութեանց միակ մեղմիչը:

Իմ օրն իր որոշ ժամն ունի, երբ մտածումս սիրաշատ մօր պէս կը դիեցնէ ազգային հպարտութեան իմ զգացումը:

Իր սրբազան պահն ունի իմ ամէն մի օրը, երբ մտովին անհուն կարօտով կը սկսեմ իմ պրպտումները Հայոց Պատմութիւնը կերտող

դարերի մէջ, քաղցրութեամբ կ'ողեկոչեմ հայ զինուորին ու զօրավարին, որոնք հողեկան գեղեցկութեան անգիմադրաւելի արիութեան ու մեծագոյն վեհութեան համբուրելի հետքեր են թողել Հայոց աշխարհում: Եւ կ'ողեխառնուիմ նրանց հետ, կը վերապրիմ նրանց դոռ յաղթանակները եւ կարօտով կը բաժնուիմ նրանցից, մի օր անց՝ նրանց ազնուացուցիչ ընկերութիւնը վերստին վայելելուցանկութեամբ: Այսպէս կը սնուցանեմ ազգային հպարտանքի իմ զգացումը: Չտկարանալու համար կը կատարեմ իմ ամէնօրեայ խորհրդաւոր զօրահաւաքը մեր պատմութիւնը զարդարող հոգիների եւ կը խօսեցնեմ ու կը լսեմ նրանց:

Աստուած իմ, որքան մեծ է արիների համաստեղութիւնը մեր պատմութեան երկնակամարի վրայ: Եւ որքա՛ն շլացուցիչ է նրանց փայլը: Պսակաւոր են, եօթնվէրք են բոլորը, փառքի սպիներ ունին բոլորը: Պարթեւ են, խայտակն, քաջազանդուր: Բիրերի մէջ շանթ ունին, ցասում, դառնութիւն:

Եւ ասում են նրանք՝

— Չմնաց, աշխարհում գրեթէ չմնաց ցեղ, որ մեր բազկի ոյժը չզգար:

Պոռոտ Բաբելացին, Հոռմէացիները կաշառող, աղուէսաբարոյ Սասանները, Բիւզանդացիք նենդ, Սկիւթացին ընչաքաղց, Ալանները, Քուչանները, Կովկասեան լեռնականները աւարառու — այդ բոլորի եւ շատ ուրիշների հետ, անհամար անգամ հարուածներ ու վէրքեր փոխանակեցինք: Եւ յաճախ յաղթեց մեր բազուկը:

Սակայն, քիչ անգամ մեր արիութիւնից լիուլի օգտուել կարողացաւ մեր ցեղը, քանզի կար ընտանի թշնամին, որի վատութեանց կը պարտի Հայոց աշխարհը իր դարերի քաղաքական խեղճութիւնը: Զինուորի եւ ռազմավարի մեր բազուկից աւելի օտարն օգտուեց, քան հարազատ երկիրը: Եւ դրա համար էլ մեր քաջութեան հռչակը տարածուեց շատ հեռուները՝ մինչեւ Ասորեստան, Հոռմ, Հրէաստան եւ լեռները Կովկասի: Տե՛ս, որքան շատ են մեր վէրքերը՝ ստացուած օտար հայրենիքների համար: Անպարտելի էր օտար բանակը, երբ նրա կողքին օտար գէնքի յաջողութեան համար կը կռուէր ե՛ւ Հայը, մանաւանդ երբ դա կ'առաջնորդուէր հայ զօրավարի կողմից: Մասնաւորապէս Պարսիկն ու Բիւզանդացին չարաչար շահագործեցին հայ արիութիւնը: Այդ ազգերի անկայուն դահերի համար հայ արիութիւնը յաճախ հանդիսացաւ որպէս ուժեղ սիւն:

Մեզ գրադեցնելով իրենց արտաքին թշնամիների դէմ, նրանք մեր արիութիւնը ծառայեցրին որպէս անխորտակելի պատուար իրարու դէմ: Պարսիկն իր փառքի կէսից աւելին մեզ, մեր արիութեանը կը պարտի: Խոչոր բաժին ունենք եւ յունական փառքի մէջ...

Այսպէս, որքան հպարտ, այնքան տխուր է շեշտը գէնքի իմ եղբայրների, զորս կ'ողեկոչեմ եւ կը լսեմ ամէն օր:

*
**

Դատապարտելիօրէն տկար է ժողովուրդը առանց ցեղազիտակցումի :

Առանց ցեղակրօնութեան այլ բան չէ դա, եթէ ոչ կենդանի զգեստը ցեղի : Սակայն ժողովրդի մէջ արթնցած ցեղը՝ մարդկային հոգին սրբւում է բոլոր տեսակի արատներից ու տկարութիւններից . դա դառնում է համակ սէր ու նուիրում դէպի մերձաւորը՝ միշտ պատրաստ մեռնելու այդ վերջինի համար : Այդ դէպքում անհատը իր մերձաւորի մէջ տեսնում է իր անձը՝ այլ պատկերի եւ անուան տակ :

Արթնցած ցեղը՝ ժողովուրդը կարելիութիւն է ստանում կուրծք տալու ամենամեծ վտանգներին, եւ յաղթահարում ամենածանր փորձութիւնները, որովհետեւ այդ վիճակում նա իրենից ներկայացնում է մի հաւաքական հոգի՝ ինքն իր մէջ ազատազրուած, ամբողջացած ու յաղթական :

Երբ ցեղօրէն կ'ապրի ժողովուրդը՝ թշնամուց ստացած ամէն մի վէրքի ու անարդանքի մրմուռը խորապէս կը զղայ նրա իւրաքանչիւր անդամը :

Այսպէ՛ս է ստեղծւում այն հաւաքական Սիրտը, որից ծնունդ են առնում սրտով զօրաւոր Վարդանները, Գայլ Վահանները, Մուշեղները :

Իսկ յատնուեցի՞ն նմանները՝ այլեւս ժողովուրդը դառնում է ցեղի բարկութեան զործիքը, այլեւս ժողովուրդ — բանակի մէջ իրար են հանդիպում եւ համբուրւում Ղեւոնդ Երէցներն ու Մամիկոնեանները, — հայ լուսակիրը, սուրբն ու հերոսը, — որոնց զեկաւարութեամբ վտանգի բռնուած ժողովուրդը իր ամէն մի հակահարուածի մէջ դնում է իր ցեղի մխացող կատաղութեան ամբողջ թափը :

Եւ յաղթանակում է :

Ասածիս Հայոց Պատմութիւնը վկայ :


ՄԵՐ ԴՈՒՌՆ ԵՆ ԲԱԽՈՒՄ

Փախչում է մեր նորահաս սերունդը զաղութահայ կեանքի հոգեւոր անապատէն, եւ ծարաւի՝ նա ովասիս է փնտռում Գաշնակցութեան ծոցի մէջ :

Սրբազան զայրոյթով նա փախչում է հայ կեանքի բոլոր տեսակի դպիրներէն ու փարիսեցիներէն, — այն բոլորէն, որոնք իրենց յաւէտ մեղկ բնաւորութեան բերումով օտար ափերի վրայ շարունակում են տկարութիւն ցուցադրել եւ արհամարհանք շահել, որոնք պատուած սրբազան Եռագոյնը, հոգով հեռացած են Հայութեան մեծ ընտանիքէն . որոնց սրտի եւ տան մէջ տեղ չունին հայրենիքն ու հայրենասիրութիւնը . որոնք երջանիկ տղիտութեամբ, իրրեւ թէ կ'ու-

զեն տարադիր հայր հա՛յ պահել, բայց վատորէն կ'ուրանան ցեղի Գողգոթան եւ նրա դատը արդարագոյն. նա փախչում է այն բոլորէն, որոնց անունն ու սեւ արարքները Հայոց Պատմութեան կողմից վաղը պիտի մատնանշուին որպէս ամօթը մեր օրերի:

— Ամէնուրեք մեր դուռն է բախում երիտասարդութիւնը, որ օրովհետեւ Դաշնակցութեան մէջ երիտասարդացուցիչ մի բան կայ — Յեղի հզօր շունչը. որովհետեւ իր հոգեբանութեամբ ամէն մի երիտասարդ մի անանուն դաշնակցական է՝ բողբոջի մէջ. որովհետեւ Դաշնակցական ասել է՝ խանդավառ իտէալիզմի մարդ. իսկ այդպիսին մշտաջահել է հոգւով: Այո՛, ամէն դաշնակցական՝ իբրեւ իտէալի մարդ, երիտասարդ է, ինչպէս ամէն երիտասարդ՝ դաշնակցական:



Յասա՛ց նահատակ ցեղի անձանքը,
 վեց դարու ամենու վրէժի գրաններ,
 հատարն հայրենի լեռանց երեսողոյն,
 Սրբանէ կոյրոցի գրոշակն ետագոյն:
 Հրակայ նուիրման,
 Տարմի՛ց կրթորէս,
 կամաւո՛ր բանակ,
 Յասա՛ց անսասան,
 մտա՛ց անկեղեւ,
 Գէպի յաղթանակ:

— Մե՛զ է փնտռում երիտասարդութիւնը, որովհետեւ դաշնակցութիւնը, ասել է լրումը հայ կեանքի. որովհետեւ մեր շարքերում կեանքն աւելի՛ կեանք է. որովհետեւ մենք ապրել եւ ապրեցնել գիտենք բարձր կուսակցութեան բովանդակ խորհրդաւորութիւնն ու բերկրանքը:

Մեր շարքերէն դուրս մեռեալ թիւ է կուսակցականը: Մեզ մօտ, ընդհակառակն, կուսակցականութիւնը ընդգրկում է անհատի ո՛ղջ կեանքը, բաւարարելով նրա սիրտն ու իմացականութիւնը: Եւ հէնց այդ է պատճառը, որ մեր շարքերում անհատն զգալով յեղափոխական գործի սրբութիւնը, զոդում է իր կոչման վեհութեան առջեւ:

Մեզնից դուրս կուսակցականը դաստիարակում է ասիական թայֆայականութեան նեղ պատերի մէջ. նա չի մտածում իր սեփա-

կան գլխով. նրա համար չէ խղճմտանքի անկախութիւնը. պարզ երամականութիւն է նրա կեանքը: Դաշնակցութիւնը, ընդհակառակն, պահանջում է կիրթ վերաբերմունք եւ բարոյական ստեղծագործ հաւատք: Մեզ մօտ կառուցում է ներքին մարդը՝ նո՛ր էութեամբ:

Մեզ մօտ ղեկավարել ասել է՝ ուսուցանել եւ ապա վարել խղճմտանքները: Սքոլաստիկներ չե՛նք, նաեւ նեղմիտ հատուածամուկ չենք. մեր ընկերը միայն նա չէ, որ մտածում է մեզ պէս. այլեւ նա, որ գործում է յօգուտ մեր ժողովրդի. նա՛, որ մտածում է, զգում եւ գործում հայարար:

— Յեղաշին բարոյականով օծուն մեր շարքերում հայ բեռնակիրն ու մտաւորականը եղբայրներ են համացեղ:

Յեղակիցներիդ մէջ — ասում ենք մենք — տե՛ս քեզ եւ արձագանգիր նրանց ցաւերին. դա ասել է վերապրիր ցեղիդ ողբերգութիւնը. աւելին՝ թող քո հաղորդութիւնը դառնայ ցեղիդ ճակատագիրը, նաեւ՝ քո մկրտութի՛ւնը: Դա ասել է՝ քո սիրտը պէտք է պատասխանի ժողովրդիդ ամէն մի սրտագարկին.

— Երես դարձրած Բահադէն՝ դէպի մեզ է գալիս մեր ոգելից երիտասարդութիւնը, քանզի ցեղի խօսքն է մեր շրթունքներին, որ կը զրնդայ թուրի պէս. քանի մեր գործը զոհողութեան շունչ ունի, մեր համոզմունքը՝ հրամայական մի զօրութիւն, մեր անունը՝ մի սաստող հեղինակութիւն:

Երիտասարդին յատուկ է երջանկութեան ձգտումը, եւ ահա՛ Դաշնակցութեան միջոցաւ նա հաղորդակցութեան է գալիս ցեղի հոգու հետ՝ ընդարձակելով իր հոգեկան հորիզոնը, իր մտածողութեան եւ զգացողութեան շրջանը: Իսկ դա ասել է ճշմարիտ երջանկութիւն:

Երիտասարդ հասակին յատուկ է լաւագոյնի ձգտումը, եւ ահա նա նետում է Դաշնակցութեան զիրկը, որովհետեւ այդ վերջինը լաւագոյնն է, իմաստը մեր նորագոյն սլառմութեան:

Երիտասարդին յատուկ է ինքնագօրութեան ծարաւը. իսկ ինքնագօրանալ կարելի է միայն մեր շարքերում: Որովհետեւ Դաշնակցութիւն ասել է անձնաւորեալ լուսակրութիւն, նահատակութիւն եւ հերոսականութիւն:

Այդ տարիքին յատուկ է սէրը պայքարի, եւ դիտէ նա, որ ազգերն ապրում են քանի դեռ նրանց մէջ ապրում է երկու բան՝ պայքարի իմաստուն բնագղը եւ զոհաբերելու ներքին յօթարութիւնը, առաքինութիւններ, որոնց վերակշռօրէն տէր է Դաշնակցութիւնը:

— Մեր դուռն են բախում այն բոլորը, որոնք հայ հայրենիք են փնտռում «Մեր հայրենիք»ը շրթունքներին եւ որոնց գոյութիւնը մի հատիկ խորհուրդ ունի — հայրենի՛ք, միակն ու անփոխարինելին, որի համար անհատն ու դասակարգը միջոցներ են միայն:

Մեր դուռն է բախում երիտասարդ Հայութիւնը, որովհետեւ նրա համար երկու անհանգստացուցիչ հարցեր կան, որոնց պատաս-

խանը միայն մեր շարքերէն կարելի է լսել՝

— «Ի՛նչ, անպատի՞ժ պիտի մնայ թուրքը»:

— «Արդեօ՞ք, ի գո՞ւր պիտի անցնի մեր Գողգոթան»:

Չէ՛, չէ՛, մենք դեռ չենք մոռացել Թալէաթի շնական խօսքը՝ «Ախորավայրն է՝ ոչնչութիւն»: Եւ այդ օրէն սկսած աւելի քան արդար է մեր թշնամանքը թրքութեան դէմ. այդ օրէն դա մեր մէջ դառել է այն, ինչ որ էր ժորդանոյ Բրունոյի ատելութիւնը հրէութեան հանդէպ: Թո՛ւրքը, թո՛ւրքն է «արժանի ոչնչացուելու իր աշխարհ գալէն առաջ»:

— Մե՛զ է փնտռում երիտասարդութիւնը՝ քանզի նա դիտէ թէ փոխընթացը բնախօսա-հոգեբանական մի սուր պահանջ է վերապրելու ձգտող ժողովուրդներին մօտ. նա դիտէ, որ առանց յետադարձութիւն կոչուող աստուածային ակտին, ազգերի հասցրած սերունդները լինում են հոգեպէս տխուր, ցաւազար, — ներքին մեծագոյն վտանգը ցեղերի դոյութեան համար:

Մեր շարքերն են թափուած հայկական իրրիդենտիզմի կուսակիցները, որովհետեւ մենք սպասում ենք վրէժի դատաստանին եւ հաւատում որ մեր տառապանքէն հայկական նոր փոքորիկը պիտի պայքի. եւ որ այդ վերջինէն պիտի ծնին հսկաները հայ կամփի, վըրէժխնդիրները՝ տիտա՛ն, գորաւորները՝ մահացան գիտութիւններով սպառազէն:

Մենք սպասում ենք՝ պիտի յայտնուի Հայ Գերմարդը և մոխրացնի հայասպան սուրն ու սուինը թրքութեան ձեռքի մէջ, ապրեցնելով նրան սարսափը հայ վրիժակէն: Սարսափը գիտական — դա՛ պէտք է դառնայ հանապազօրեայ պատիժը Թալէաթածին ցեղի. դա՛, թուրքին դա պէտք է դարձնի իր սևփական դահիճը ու զոհը միաժամանակ:

— Մե՛զ եւ Եռագոյնն է փնտռում երիտասարդութիւնը, որովհետեւ նա ուզում է որ յանձին Դաշնակցութեան Հայ արիութիւնը ջահել առիւծով խորհրդանշուի, երբ թրքականն այսօր այլաբանօրէն գայլով կը ներկայացուի: Երկիւղածօրէն նա Դաշնակցութեան հայրենաստեղծ ձեռքը ու Եռագոյնն է համբուրում, քանզի վաղուց է ինչ մենք մեր նշանարանն ենք դարձրել ծովակալ Մահուի խօսքը՝ «Օգուտ չունի թշնամին կրունկէն գարնել, գայն սրտէն հարուածելու է»:

— Այսպէ՛ս, ամէնուրեք մեր դուռն են բախում, քանզի հերկելով ջահել հողինները՝ մենք սերմանում ենք ապագայի համար, եւ բազմայոյս ենք, թէ վաղը մեր նորահաս սերունդը պիտի կարողանայ կրկնել հին թրակիացիներին խօսքը իր ցեղի դոյութեան թշնամիներին՝

— Ազատ ապրելու եւ պատուով մեռնելու համար՝ մե՛նք երիտասարդութիւն, սիրտ եւ երկաթ ունինք:

ՅԵՂԻ ՈՓՈՒ ՇԱՐԺԸ

Մեր ազատագրական շարժման ուժականութիւնը հետեւանք է առաւելապէս խորօրէն ապրուած վիրաւորանքի՝ ծնունդ առած մեր ժողովրդի նուաստ եւ ողբալի վիճակէն:

«Մենք տուն մեզ համար չե՛նք շիներ.

Մենք հաց մեզ համար չե՛նք ցաներ, քաղեր.

Մենք մեզի համար չե՛նք ապրեր»:

Այսպէս կ'ողբերդէր մշեցի հայը, իր երգի մէջ դնելով իր վիճակի թշուառութեան ու նուաստութեան բովանդակ գիտակցութիւնը:

Իսկ վասպուրականցին կը բողոքէր.

«Էնկատար եմք խոնարհեր, որ զըմէն մարդ մեզ բեռ կը դնէ. էս մա՞րդ է թէ անասուն, իսկի հարցափորձ արող չկայ»...

Եւ որպէս տխուր արձագանգ հայ աշխարհէն բարձրացող այդ հեծեծանքին, մեր վերածնունդի շրջանի գրողներէն Սրուանձտեանց կ'ողբերդէր.

«Ի՛նչ կեանք է այս. երանի՛ մրջիւնին եւ արօս քոչունին. նա իր կուտը կուշտ կ'ուտէ. սա իր սիրական ամուսինը իր հետ կը պահէ: Երանի սարեկին, որ իր ձագերը կը ծնի, եւ փետրիկներով գանոն կը ծուարէ, իր բնութիւնը եւ լեզուն անոնց կ'ուսուցանէ եւ ազատ կը քուցանէ»...

Այսպէս, իր անօրինակ ցաւերէն եւ ամօթանքէն լեզու ելած, Հայաստանցին իր հարցումը կ'ուղղէր ճակատագրին — ինչո՞ւ այսպէս, եւ մինչեւ ե՞րբ: Դա նշան էր, որ Հայն սկսել է գիտակցել, թէ ինքը կը հալածուի իր անցեալ մեծութեան համար, որ մեր ժողովրդի հոգում տեղի է ունեցել մի մեծ շարժ, որ հայութեան մէջ արթնցել է Յե՛ղը՝ հին, ազնուական ու արի. եւ որ այդ վերջինի արդասաւորիչ շնչի տակ տեղի է ունեցել մեր ժողովրդի հերոսական ինքնայղացումը: Դա նշան էր, որ կայ երկունքը, եւ որ շուտով հայ ժողովուրդը իր անպատում ցաւէն եւ ամօթալի վիճակի սպանիչ գիտակցութենէն կեանքի պիտի կոչի իր ցեղաշունչ հսկաները՝ իր ազատագրական պայքարը վարել կարողանալու համար: Դա նշան էր, թէ ցեղն օգնութեան կը փութայ տառապանքի եւ նուաստութեան մէջ գալարուող ժողովուրդին՝ օժելով եւ աշխարհ ուղարկելով մարդարէաշունչ Քրիստափորներ, Ռոստոմներ եւ Զաւարեաններ — դարաշրջանային գործերի համար...

Վերածնութեան կը կարօտէր մեր ժողովուրդը. ասել է նա իր ամբողջութեան մէջ դեռ կառուցման լաւ նիւթ չէր՝ անկախութեան շէնքի համար:

Ո՞վ, ուրեմն, պիտի հոգեփոխէր ժողովուրդը, զայն իր ճակատադրին գիտակից եւ անկախութեան արժանի դարձնելու համար. ո՞վ պիտի առաջնորդէր զանգուածները եւ վարէր անհաւասար պայքարը: — Հէնց ինքը ժողովրդի սրբազան ծոցէն ծնունդ առած յեղափոխական յառաջապահը: Ի՞նչպէս:

— «Կանգնած այստեղ — կը բարձրանար կովկասեան ժայռին զարնուած Պրոմէթէի ձայնը — ես ստեղծում եմ մարդը ըստ իմ պատկերի եւ նմանութեան»:



Չախէն աջ՝ ոսփի՝ Տիկ. Նուարդ Սահակեան, Տիկ. Արաֆսի Գրիգորեան, Տիկ. Վարդանոյշ Մելիքեան, Տիկ. Մէյրի Խնկեան:

Նստած՝ ձախէն աջ՝ Տիկ. Լուսին Պարոնեան, Զօր. Գ. Նժդեհ եւ Տիկ. Մաքրուհի Խաչիկեան:

Տարիներ է, աւելի քան չորս տասնամեակներ, ինչ Դաշնակցութիւնը հանգոյն Պրոմէթէի կը շարունակէ կերտել նոր Հայք՝ ըստ իր պատկերի եւ նմանութեան: Տարիներ է, ինչ Դաշնակցութիւնը, որպէս Յայտնութեան Աստուածը, իր ձեռքի մէջ առած հայ ժողովրդի հոգին, նոր կազապարի մէջ թափել կը փորձէ դա: Այսպէ՛ս է:

Անազատ ամէն մի ազգ իր վերածնունդը ապրելու համար աշխարհ
կը բերէ նոր Մարդը եւ իր հերթին կը վերամարմնանայ նրա մէջ.
նա կը ծնի ցեղաշունչ մարդը եւ նրա անձի եւ կեանքի մէջ կը փնտռէ
իր հոգեւոր սրբագրութիւնը: Եւ այդ հոգեւոր վերամարմնացումից
յե՛տոյ է, որ ժողովուրդը կ'օժտուի պայքարի իմաստուն բնազդով
եւ քաղցրօրէն զոհարելու տրամադրութեամբ:

Այդ հոգեփոխութիւնից յետոյ անհատն զգում է հոգեկան մի
անճառելի բաւականութիւն, — եւ այդ այն վայրկեանից, երբ նրա
մէջ դարձնում է նոր գիտակցութիւնը՝ թէ իր անձը պատկանում է
ո՛չ իրեն, ո՛չ էլ իր կուսակցութեան, այլ այդ վերջինի միջոցաւ՝ իր
ցեղին: Ամէն մի ճշմարիտ զաշնակցական ունի այդ քաղցրութիւնը,
զոր զգալու համար հայ մարդը ոչ միայն պիտի մօտենայ, այլեւ
պիտի հոգեխառնուի մեզի: Նրա մէջ տեղի պիտի տայ իր առանձնու-
թեան գիտակցութիւնը. նրա գիտակցութիւնը պիտի խառնուի մերի-
նին, փլցնելով պատը որ մինչեւ այդ կը բաժանէր եղբայրը եղբօրից:
Հոգեխառնուելով մեզ՝ նա կը սովորի ուրախանալ իր համացեղ մեր-
ձաւորի ուրախութիւններով եւ ցաւել նրա ցաւերով: Հրաժարուելով
իր մեկուսի կեանքից՝ նրա մէջ աստիճանաբար կը խորանայ ջերմ
կարեկցանքը դէպի հայ մարդն ու հայ ժողովուրդը: Հոգեխառնուե՞ց
մեզ — նա այլեւս ինքն իրեն չի զգայ մենակ եւ օտար համամայր
զանդուածների մէջ: Նաե՛ւ ոչինչ չի տենչար եսականօրէն, միայն
իրեն համար, ինչպէս կը վարուէր մինչեւ իր հոգեփոխութիւնը՝ մին-
չեւ իր զաշնակցականանայր: Դարձա՞ւ այդպիսին, ասել է նա այլ-
եւս կորցրել է իր անձի առանձնականութիւնը եւ ընդունել՝ թէ կայ
համամայրութեան օրէնքը, որի դէմ չմեղանչելու համար պէտք է
ապրել մեծ եւ անմեռ ամբողջի — ցեղի կեանքով...

*
**

Հայ ժողովրդի որոշ խաւերի մէջ ցեղի ոգու շարժն էր սկսուել:
Հայութիւնը ոտքի կը կանգնէր ո՛չ օտարի սադրանքներով, ո՛չ այլ
ցեղի դրդումով: Յեղը, յանձին Դաշնակցութեան, ժողովրդի ձեռքը
կը դնէր մի պողպատեայ մուրճ՝ իր ճակատագիրը կռել-կոփելու
համար:

Կեանքի կոչելով Դաշնակցութիւնը, ցեղը հոգեւոր թելեր կը
հագցնէր ժողովրդի էութեան, որով նա իր ազատագրական թափն ու
թռիչքը պիտի առնէր:

Ցեղի ոգու շարժէն կը ծնէր Դաշնակցութիւնը՝ մեր ժողովրդի
զոյամարտը վարելու համար: Հայ ճակատէն ստրկութեան արատը
սրբող ճակատամարտնե՛ր էին պէտք, ասել է՝ պիտի կրկնուէր Աւա-
րայրը, եւ ահա՛, յանձին Դաշնակցութեան, հայ ժողովրդի մէջ կը
վերերեւար Վարդանանց Ոգին — Երաշխիքը մեր ցեղի մշտնջենաւոր-

ման : Եւ կ'արձագանգէր Հայոց աշխարհում ցեղաշունչ հսկաների ձայնը . «Ես եմ քամբանի» — քո նո՛ր բարոյականը :

Այլեւս սկսուել էր հայ հոգու գարունը :

Ժողովրդին տրուած էր ցեղի տապանակ ուխտին : Կար այլեւս Դաշնակցութիւնը , որ պիտի արժէքաւորէր հայ տառապանքը՝ նրա հաւաքականացման ճամբով . նա պիտի սրբազործէր դերեզմանը՝ հայ մարդու մահուան գիտակցականացմամբ : Կար այլեւս Մեծ Նպատակը , եւ սրովհետեւ ժողովուրդները իրենց նպատակի հետ փոխում են ե՛ւ իրենց էութիւնը՝ Հայը պիտի դառնար այն , ինչ որ է այսօր — աէ՛ր ինքնանուաճ Հայրենիքի . . .

* *

Մարդկային ցեղերի պատմութիւնը արձանագրած չէ մի հատիկ իրողութիւն , որ իր անարդութեամբ զուգահեռուիլ կարողանար հայութեան դէմ ուղղուած թրքո-բուլղերիկ զինակցութեան փաստի հետ : Առաջին անգամ լինելով , իրար ձեռք կ'երկարէին իրենց զաղափարաբանութեամբ հակոտնեայ երկու ուժեր՝ իսլամը եւ բուլղերիզմը :

Եւ այդ զինակցութիւնը պիտի ճակատ յարդարէր մարդկային ցեղերէն ամենէն անիրաւուածի՝ հայ ժողովուրդի դէմ :

Համաշխարհային յեղափոխութեան կոտոր իր անապառ սյժը եւ քաղաքական ազդեցութիւնը նեցուկ պիտի տար թուրք դահիճին՝ հայ զոհը վերջնականօրէն զգեանելու համար :

Եւ այդ բոլորէն յետոյ հսկաներեան յեղափոխութեան հերոսները մեծագոյն շնականութիւնը պիտի ունենային , պատմութիւնը խարդախելու գնով պնդելու , թէ կարմիր բանակը Հայաստան մըտաւ թրքական արշաւանքի առաջին առնելու համար : Ո՛չ , ո՛չ , կը բողոքէ պատմութիւնը , թուրք բանակը Հայաստան քաշեց Երրորդ Միջազգայնականը , եւ ոչ ընդհակառակը : Աւելին կայ , թուրքն ու բուլղերիկը Հայաստան մտան միաժամանակ , զինակցօրէն եւ աշխարհակալելու նպատակով :

Իր զգուելիութեան մէջ այնքա՛ն կատարեալ այդ սեւ զինակցութեան երեսէն այսօր իրար դարնուող երկու աշխարհների — հինի եւ նորի — միջեւ իր գլուխը դնելու տեղ չունի հայ ժողովուրդի կէսը :

Եւ հէնց այստեղից ծնունդ առաւ մեր անօրինակ ողբերգութիւնը . . .

* *

Սակայն , միայն արտաքին թշնամին չէ որ սեւ թելերով հիւսել կը փորձէ մեր ցեղի ճակատագիրը : Կայ եւ ներքինը , որ այսօր էլ ոչինչ կը խնայէ զաւելտի վերածելու մեր ողբերգութիւնը : Ամէն ան-

զամ երբ կը խորհրդածեմ այդ հայանուն շարագործի մասին, — կը մղուիմ պատկերացնելու Տրապիզոնը, ուր կոտորածի առաջին օրը, հայ արիւնով զինովցած թուրք խուժանը ձեռք կ'անցընէ մի հայ մարդ, եւ կտրելով նրա մի ձեռքը՝ նրանով կը դարնէ անդէն դոհի երեսին: Յետոյ կտրելով միւս ձեռքը, կը հրամայէ խաչ հանել, մինչդեռ ուրիշները հեղնօրէն կը յորդորեն ուժով աղաղակել, որ պէսզի Հայոց Աստուածը իր պաղատանքները լսէ:

Ճիշդ այսպէս, թրքօրէն կը վարուի մեզ հետ ե՛ւ ներքին թըշնամին: Հակադաշնակցականը — դա կտրուած ձեռքն է հայութեան, որով քշնամին կ'ապտակէ մեզ: Այսօր դուրս ենք եւ հեռու թրքական եւթաղանի հասողութենէն, բայց եւ այնպէս օտար հորիզոնների տակ ծուարած հայութեան մի մասը կը շարունակէ ապրել թուրքէն մեզի փոխանցուած արատների լծի տակ: Երիցս երջանիկ թուրքը կը շարունակէ մեր ժողովուրդի մի մասին հողով սարուկ պահել ե՛ւ թուրքիայէն դուրս: Հայ ժողովրդի կտրուած ձեռքով — իմա՛ հակադաշնակցական ձեռքով — թուրքը կը շարունակէ ապտակել ցեղաշունչ հայութիւնը: Ա՛հ, այդ մտակոյր արարածը, որին մեր օրերը հակադաշնակցական անունով է խորանած, նա չի հասկանում թէ Դաշնակցութիւնը յայտնութիւնն է Անիներ ու Արտաշատներ ստեղծած եւ այնքա՛ն հերոսներ, յուսակիրներ ու սուրբեր ծնած մեր ցեղի, որն օրուան հայութեան միջոցաւ արեւի տակ հրեղէն կարօտով եւ կամֆով իր հին փառքերը կը փնտռէ: Յեղի կողմից ձգուած կամո՛ւրջն է Դաշնակցութիւնը, որով հայութիւնը կը փորձէ անցնել դէպի իր մեծ ու երջանիկ ապագան:

Դաշնակցութիւնը — դա քաղցր ու նուիրական դաշնակցութի՛ւնն է ցեղի եւ ժողովուրդի միջեւ:

Դա ցեղի դրո՛շմն է՝ դրուած ժամանակակից հայութեան էութեան վրայ:

Դա հաղորդակցութեան կա՛պն է, գոր ցեղը վերահաստատեց իր եւ մեր հոգիների միջեւ:

Յեղի ուղղութի՛ւնն է Դաշնակցութիւնը, որի միջոցաւ ցեղն իր պատասխանատուութեան ենթարկելով ժողովուրդը, այդ վերջինը իր գիտակցութեան, ուժի եւ արժէքի լրումին կը մղէ:

Ահա ա՛յդ չի հասկանում հակադաշնակցականը, եւ պիտի չըհասկանայ, թէ հրաժարուելով մեր ազգային դատէն, մենք կամովին դահընկէց յայտարարած կը լինենք հայ ժողովուրդը, աւելին՝ մենք հաստատած կը լինենք, թէ հայ ազգը թաղի եւ ազատութեան արժանի չի եղել ե՛ւ անցեալի մէջ:

— Հին Պուլկարները, ասում է պատմութիւնը, կը սպանէին իրենց իմաստուններին, պատճառարանելով թէ նրանք աստուածներին են պէտք: Ճիշդ այս ձեւով, պուլկարարար է վարում հակադաշնակցականը հայ ժողովրդի այն տարրերի հանդէպ, որոնք մեր

ցեղի խմաստութիւնն ու արիութիւնը կը մարմնացնեն, սակայն, առանց պատճառարանելու, թէ Դաշնակցութեան մահը թրքութեան պէտք է:

Հերիք չէ, որ այդ անարին երէկ մնաց պաղ դիտողի դերում, երբ մենք անհաւասար պայքարի մէջ էինք թուրքի եւ մահուան հետ, այսօր էլ դեռ անասելիօրէն սրբաօղծիչ է նրա վերաբերմունքը: Այսօր էլ նա հաղորդ չէ ցեղի հողուն: Այսօր էլ նրան գրգռում է մեր արդար թրքատեցութիւնը, ճիշդ այնպէս, ինչպէս կարմիր լաթը՝ եզան...

Պուլկար յեղափոխութեան առաքեալներէն Տրանդաֆիլովը յայտնուելով Բատակում, յորդորում է ժողովրդին զէնք վերցնել Սուլթանի դէմ: Առ այդ՝ նա սեղանի վրայ է նետում իր դաշոյնը եւ ատրճանակը, եւ սկսում երգման արարողութիւնը: Ո՛չ, ո՛չ, ընդդիմախօսում է ներկաներէն Կաւալակը — պուլկարը մենակ չի կարող զլուխ ելլել Սուլթանի հետ: Եւ հրաժարւում է երգուել: Բայց քիչ յետոյ, երբ առաքեալն սկսում է երգուեցնել ցանկացողներին, մէկի անդուշտութիւնից վայր է զլորւում դաշոյնը եւ թաղւում առաքեալի ոտքի մէջ:

Տեսնելով արիւնը, Կաւալակը բացազանչում է՝ «Այժմ պարզ է, որ արիւն պիտի թափուի», եւ բերելով իր երգումը՝ նա միանում է առաքեալին: Ահա՛ ցեղային փրկարար բարոյականը: Հակառակ իր համոզումին, թէ իր ժողովուրդը մեն-մենակ պիտի չկարողանայ չափուել հօր Սուլթանի հետ, պուլկարը համբուրում է դաշոյնը եւ ուխտադիր լինում՝ զէնք բարձրացնել բռնութեան դէմ, քանզի «արիւն պիտի թափի»: Դա տակ է՝ թքելի՛ է անձնական համոզումը, որքան էլ որ դա անկեղծ լինի, երբ անհաւասար կռուի բռնուած ժողովուրդը մեր օգնութեան կը կարօտի: Երէկ Բատակցի պուլկարի բարոյականը չունեցաւ հակադաշնակցական Հայը, եւ այսօր իր յանցաւոր չէզոքութիւնը արդարացնել կը փորձէ իր խղճալի համոզումով...:

Հայ կեանքը, սակայն, ունի եւ մի այլ կողմ, ուր տեղի է ունենում ցեղի ոգու նոր շարժը, ուր հողիների մէջ սկսել է հոսել թրքատեցութիւնը որպէս հրեղէն հեղեղ, նոյնքա՛ն զօրաւոր, որքան ցեղապաշտութիւնը մեր: Մեր կեանքի այդ բաժինում հայ տառապանքն ու ամօքանքը միացած, նախապատրաստում են ծնունդը նոր Հայու: Մեր տխրանական ցաւէն ծնունդ է առնում մի նոր կրօն —

հարաբերական կրօնը: Իր սեփական տառապանքի մէջ մկրտուած Հա՛յն է աշխարհ գալիս: Նա իջնում է ցեղի ոգու բարձունքներէն՝ ցեղի խօսքը շրթունքներին: Նա սէր է աւետարանում, սէ՛ր դէպի ինքնակառուցում, ինքնաշաղթահարումի ճամբով: Եւ մահ է քարոզում, մա՛հ հայ տկարութիւնը սնուցանող բոլոր շաստուածներին՝ հին ու նոր: Նա գալիս է վերականգնելու մեծութիւնը հայ անունի, որ այնքան հայհոյուած է այսօր:

Ձէ՛, այլեւս չի կարելի այսպէս ապրել, քանզի աննախընթացօրէն սպանիչ է մեր նուաստութիւնը — ահա՛ այս ցնցող գիտակցութենէն ծնունդ առա՛ծ, աշխարհ է գալիս ցեղային բարոյականով միւնոնուած Հա՛յը. նա՛, որ ներոյժ կերպով ապրած է մեր ժողովրդին վիճակուած ողբերգութիւնն ու ամօթանքը. նո՛ր Հայը, որի դրօշակէն վաղը պիտի կախուի մեր ցեղի յաղթանակը: Այդ օրուան համար է ապրում եւ գործում դաշնակցականը:

Դեռ իր լինելիութեան մէջ է Դաշնակցութիւնը:

Նա դեռ չի՛ ասել իր վերջին խօսքը:

Ահա՛ թէ ինչու եմ ասում՝ օրհնի՛ր ճակատագիրդ, որ Հայ ես ծնած, բայց որպէսզի օտար ամբարի վրայ Հայ մնաս, եղի՛ր Դաշնակցական:

ՆՈՐ ՀԱՅԸ — ՎԱՂՈՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Տուէ՛ք ինձ ներցեղային բարոյականով առաջնորդուող մի հատիկ սերունդ, եւ ես ապահովեմ հայ ժողովուրդի տեղն արեւի տակ:

Առաջնորդը — որն իր ինչ եւ ինչպիսին լինելը մատնում է մասնաւորապէս մեծ վտանգների ժամանակ — ամէն ինչ է ժողովուրդների կեանքում՝ այրն ու Ֆէն:

Նրա աջն է գծում ճակատագիրն ազգերի:

Նրա՛ն կը պարտեն ցեղերն իրենց հրթիռային վերելքը, ինչպէս եւ անկումը շոնդալի: Նա՛ է փառաց ի փառս եւ պարտութենէ պարտութիւն առաջնորդում մարդկային այս կամ այն հաւաքականութիւնը:

Նա՛ է անկեալ վիճակից բարձրացնում իր Հայրենիքը, ինչպէս եւ վերջինի բանալիները վատօրէն օտար դռնապաններին յանձնում:

Այո՛, ամէն ինչ է նա՛ ճակատագիրը, կենդանի ճակատագիրն իր ժողովուրդի: Նրա հետ է սկսում ժողովուրդի փառքի կամ տկարութեան շրջանը: Եւ եթէ յաճախ ժողովուրդների մեծութիւնը վերջ է գտնում կատարեալ առաջնորդի մահուամբ, աւա՛ղ, նրանց զրգրախտութիւնը չէ վերջանում ճախաւեր առաջնորդի հետ: Դժբախտ է սխալ եւ անդորապէս առաջնորդուող ժողովուրդը, որպիսին է մե-

րը: Վա՛յ այն ժողովուրդին, որի առաջնորդը կատարեալ չէ՝ ապա-
 դան բազում խաչեր ունի պահած նրա համար: Խե՛ղճ է ժողովուրդը,
 երբ նրա առաջնորդն աւելի փառասէր է, քան հանճարեղ, երբ նրա
 առաջնորդին պակասում է մշակոյթը՝ սրտի եւ մտքի, երբ բռնուած
 նախանձի շար դեւով՝ նա տառապում է բարոյական դեղնութեամբ.
 երբ նա դաւանում է անձնական երջանկութիւն խոստացող այս կամ
 այն դահավիժող վարդապետութիւնը, երբ տկարութիւն ունի մեծ
 թուալու փանաքի գործերի մէջ, եւ փոքրիկ հանդիսանալու մեծ գոր-
 ծերում: Երիցս խղճալի է ժողովուրդը, եթէ նրա ռազմիկները խոր
 համոզմամբ չեն կրկնում թէ «ամենէն անառիկ համարուած բերդերն
 իսկ կառուցուած են գրաւուելու համար»:

Անէծք է առաջնորդի տգիտութիւնը, եսականութիւնը, նա-
 խանձը: Չի՛ եղել աւելի դարհուրելի թոյն, քան վատ օրինակը առաջ-
 նորդի, որ միշտ էլ վարակիչ է: Ազդում է նրա ամէն մի խօսքը, շար-
 ժուձեւը, ակնարկը: Երբ վատ է՝ վատթարագոյն են դառնում այն
 բոլորը, որոնք դժբախտութիւն են ունեցել նրա առաջնորդութեան
 յանձնուելու:

Եսակա՞ն է՝ անասնանում են նրա հետ առնչողները:

Ծո՞յլ է մտաւորապէս՝ հոգեւոր հնավաճառներ են դառնում
 նրան շրջապատողները:

Անհայրենապա՞շտ է՝ հակահայրենիք հրէջներ են վխտում նրա
 շուրջը:

Իսկ երբ անարի է՝ զղուելիօրէն երկչոտ են դառնում նրա իշ-
 խանութիւնը վայելողները:

Այսքան, ահա՛, ճակատագրական է առաջնորդի դերը ժողո-
 վուրդների կեանքում:

*
 **

Կայ, սակայն, եւ կատարեալ առաջնորդը, այլապէս անհաս-
 կանալի պիտի մնար ազգերի պատմութեան մէջ այն ամէնը, ինչ որ
 վսեմ է, դեղեցիկ, հերոսական: Այո՛, եղել է եւ կայ դա, այլապէս
 անբացատրելի պիտի մնար որոշ ժողովուրդների նախանձելի վի-
 ճակը:

Նախ — ահա՛ նրա հոգեւոր դիմաստուերը մի քանի խոշոր գը-
 ծերով — նա՛խ կռողը եւ ուսուցիչն է նա ցեղային բարոյականի:
 Գործել՝ նրա համար նշանակում է փարատել իր շրջապատի մտաւոր
 խաւարը, թմրութիւնը, տկարութիւնները. դա նշանակում է՝ ոչինչ
 չթողնել իր շուրջը անթուրժ եւ խոտան, ծոյլ եւ մեռեալ վիճակի մէջ:

Ուժեղ իմացականութիւն, մեծ սիրտ եւ բոլորանուէր ծառա-
 յութիւն — ահա՛ նա: Նրա մէջ եթէ դեռ չի մեռել, ապա հոգեվա-
 րում է ետը: Պարզատես է, նա հոգեբանօրէն փոխում է այդ վերջինը:

Նրա ներկայութիւնը ապնուացնում է հողիները, թեւաւորում, գօտեպընգում :

Նրա շնորհիւ անկարելի համարուածը դառնում է դժուարին միայն, դժուարինը՝ կարելի : Երեզ երազները դառնում են նպատակ եւ երջանիկ իրականութիւն : Նրան յաջողում է փոխել իր ժողովրդի հողերանութիւնը, ճակատադիրը, պատմութիւնը : Սահման չէ դրուած նրա սիրելու եւ զոհաբերելու կարողութեան : Նա ծիծաղել զիտէ մարդկային մեռեալ օրէնքների վրայ : Սիրում է ամբոխը, բայց զիտէ յետ մղել նրա օրէնսդրութիւնը : Իմաստուն է, եւ զիտէ որ «կան պատմական մոմենտներ, երբ ժողովրդին ծառայելու լաւագոյն ձեւը հանդիսանում է նրա հայեացքներին վճռապէս հակադրելու մէջ» :

Կատարելութեան ճամբին դանուելով հանդերձ, նա իր անկատարելութեան գիտակցութիւնն ունի, եւ այդ իսկ պատճառով կը տառապէ խորապէս :

Լիկուրդոսն է դա, որի օրէնքների համաձայն անհատը կը դատարարակուէր հասարակական նուիրումի եւ հաւաքական երջանկութեան համար : Դա Սնելմանն է, որի բարձր գաղափարների շնչով սրբուած եւ ուժաւորուած երբեմնի աղքատ եւ արբեցող ժողովուրդը Սուլմի ճահճուաները պիտի վերածէր ճերմակ շուշանների հայրենիքի, — Ֆինլանտան :

Դա Կանտին է, աշխարհիկ սուրբը վերածնուող Հնդկաստանի, որը կրանիտէ համողում ունի՝ թէ առաջնորդի գերագոյն կամքը կարող է բարոյապէս կերպարանափոխել անգամ կաստայական փակուածութեամբ հիւանդ ժողովուրդը :

Դա նա՛ է, որ պիտի ծնի հայութիւնը, եթէ չի ուզում մեռնել : Նա հրամայողարար պիտի յաանուի մեր կեանքում, կատարելով փրկկարար դերը Լիկուրդոսի, Սնելմանի, Կանտինի եւ նմանների :

*
**

Առաքեալի սիրտ, իմաստասէրի գլուխ, աղամա՛նդ ճակատ — ահա՛ կատարեալ առաջնորդը :

Անձնական երջանկութեան վարդապետութիւնը — ահա՛ թըշնամին մեր ցեղի հաւաքական երջանկութեան :

Յեղօրէ՛ն, ցեղի յաւիտենականի, եւ նրա երջանկութեան համար — այդ նշանաբանով նա ձեռնոց կը նետէ մեր ցեղը մաշող հին բարոյագուրկ հասկացողութիւններին :

Էվգեմոնիզմը — բարիկենդանապաշտութի՛ւն — ահա՛ անհատական երջանկութեան հրէշային դաւանանքը՝ հողեւոր մայրը բոլոր տեսակի հակադրային եւ քանդիչ ուժերի :

Կանգնեցրէ՛ք զինուորին — ո՞վ է դա, որ լքած վահանը, վա-

տօրէն փախչում է կռուադաշտէն. դօրաւարին՝ որ նահանջի հրամանն է արձակել. հասարակական դործիչին՝ որ միայն հաց կը հօտի. կենսապաշտին՝ որի համար երջանկութիւնը լրումն է անհատական ցանկութիւնների եւ ոչ թէ կատարումը ներցեղային պարտականութիւնների :

Կանգնեցրէ՛ք այն բոլորին, որոնք ապրել գիտեն առանց մտածումի ազնուութեան, որոնք իրենց անդօրութիւնը ատելու քաջութիւն իսկ չունին, որոնք քաղցր խարկանքի մէջ կը պահեն իրենց ժողովուրդը, եւ հակադարձ ալիքի հարուածէն սարսափած՝ ոչինչ չեն ձեռնարկեր իրենց ցեղի ապագայի համար. նրա՛նց՝ որոնք գիտեն,



1.— Հայկ Կիլիկեան : 2.— Երեմ Աջեան : 3.— Գ. Նժդեհ :

4.— Սրբուհի Աջեան : 5.— Ճէյմս Մանտալեան :

Թէ իրենց ժողովրդի մէջ խորապէս անարդուած է մարդն ու հայը, բայց եւ այնպէս գիշերները քնանալ գիտեն : Կանգնեցրէ՛ք այդ բոլորին, բացէք սրանց դանկն ու կուրծքը, եւ դուք սարսափով պիտի տեսնէք աւերածութիւնը եվդեմոնիզմ կոչուած մոլար վարդապետութեան թոյնի : Բարոյապէս անբանացնելով անհատը՝ այդ թունաւոր ուսմունքը նրան թեքում է դէպի կեղծ աշխարհաքաղաքացիութիւն եւ ապա՝ դէպի ազգային դիմադրութիւն : Դա կսապաշտ թշուառականներ է ստեղծում եւ ոչ առաքինի եւ անձնադիր քաղաքացիներ, ո՛չ հրաշունչ մարտիկներ :

Ա՛հ, այդ անարգ հասկացողութիւնը երջանկութեան մասին — դա՛ եղաւ մեր երբեմնի արխասիրտ եւ հզօր ցեղը սրտաթափողը :

Խողարարոյ երջանկութիւն — հողեւոր խաթարիչը մեր սերունդների: Սրան կը պարտի հայութիւնը անցեալի իր պարտութիւնները եւ օրուան իր պարտուողական ոգին:

Կամ այդ անկումի վարդապետութիւնը, կամ հայութիւնը: Պիտի մեռնի մէկն ու մէկը սրանցից: Շարունակեց ապրել դա՛ մեր հաւաքական հողու մէջ՝ պիտի կորչի հայութիւնը: Մեռաւ դա — պիտի վերապրի մեր ցեղը:

*
**

Վաղուան առաջնորդն իր հողեւոր սնունդը կ'առնէ նա՛խ իր ցեղի, ապա Արեւելքի հողու աղբիւրներէն:

Արեւմուտքում էլ են սիրում Հայրենիքը, բայց այնպէս, ինչպէս շունը իր թաղն է սիրում:

Յեղաշունչ Հայու, — ինչպէս եւ ճափոնացու համար, — ընդհակառակն, Հայրենիքը միայն սեփական երկրամաս չէ, ուր «ոսկի են արդիւնաբերում եւ հունձք հաւաքում», այլ սրբազան երկիր, «ուր գտնուում է աճիւնը նախահայրերի»:

Շատ է մեծ հակահայրենիքների թիւը Արեւմուտքում, նո՛յնը եւ նոր աշխարհում:

Ճափոնացին, ընդհակառակն, ուր որ էլ լինի, ինչով էլ որ դրաղուի, միշտ էլ ենթարկուում է իր Հայրենիքի օրէնքներին:

Այնտեղ, Արեւմուտքում, ուժեղ է մեքենան, այստեղ՝ մարդը:

Եւրոպացին սարսափում է մահէն եւ յաճախ դառնում հեղինակը անարգ գործերի:

Ճափոնացին ապրում է, «երբ որ դա պէտք է, մեռնում՝ երբ որ դա արդար է»: Ազգերի մէջ միայն ճափոնացին է ասել՝ «եթէ խորապէս դիտակցենք, որ սէրը դէպի հայրենի երկիրն ու ժողովուրդը աւելի մօտ է կանգնած մեծ ու զեղեցիկ արեւին քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները — այն ժամանակ մահը մեզ համար թռչունի փետուրից էլ թեթեւ կը թուայ»:

Արեւմուտքում ակնրախ իրողութիւն է հասարակական դարձիմնականութիւնը՝ քողարկուած իրերակերութիւնը: Այստեղ գոյութեան կռիւը իսպառ չի անասնացրել մարդը:

Ճափոնիան ունի իր Բուշիդոն, մենք՝ մեր Վահագներ:

Նա արիապաշտ է, մենք՝ էինք: Նա ցեղապաշտ է, մենք պիտի դառնանք՝ չկորչելու համար:

Ահա՛ թէ ինչու հայ առաջնորդը մի ձեռքն Արեւմուտքում՝ այնտեղի ճարտարարուեստի նորոյթները իւրացնելու, իր միւս ձեռքում պիտի ունենայ ցեղի բարոյական օրինապիւրքը:

Այսպիսին պիտի լինի վաղուան առաջնորդը, որպէսզի նրա օրով արմատօրէն հողեփոխուի հայ մտաւորականութիւնը, որպէսզի

հայ գործիչը մերկանայ իր Ես-էն՝ անանձնականանալու աստիճան-որպէսզի հասարակական ծառայութիւնը ընդգրկի գործչի բովանդակ կեանքը :

Ո՛չ մարդկային նախիրը բազմացնող կոտորակային անհատը, որ սեփական այո՛ եւ ո՛չ չունի, հոգի չունի, այլ հայն ու մարդը՝ ամբողջական, ինքնուրոյն ու զօրեղ :

Ո՛չ կրաւորարար խորհրդածողն ու սոփեստը, այլ մեծագործութեանց ծարաւի մշակը մշտաջան :

Ո՛չ աշխարհի իրերի և անցքերի վրայ նիւթապաշտ փիլիսոփայութեան աչքով նայող բիւրիցս զգուելի էպիկուրեանը, որն իր բաւականութեանց զոհէ բերել կեանքի ողջ սրբութիւնը, ո՛չ, ո՛չ նմանը, այլ կեանքի լի՛ բաժակը արհամարհել զիտցող իտէալիստը՝ վսեմախոհ : Ո՛չ հոգով գոհելիք, որ եսականօրէն ըմբոստանում է սրբացուցիչ տառապանքի դէմ — ոսկեղենիկ շղթան, որ մեր հայեացքը կապուած կը պահէ՝ երկնքին, այլ հոգու պայազատութեամբ շեշտուածը, որ մտովի կը համբուրէ այն խորհրդաւոր ձեռքը, որն իր հաճոյքների յորդող բաժակը կը փշրէ :

Ո՛չ ելեւմտական խելքի տէր քաղաքական գործիչը, որ զգուշեղարար պարագաները կը կշռէ ու կը վերակշռէ, ամէն բան թողնելով անորոշ ժամանակին, այլ արի՛ն յառաջահայեաց որ խիզախել գիտէ :

Ո՛չ հոգեւոր թղուկը, որ յաջողում է բարձրանալ հսկաների ուսերի վրայ՝ մի քիչ հեռուն տեսնելու համար, այլ նա, որ գիտէ նախատեսել անցքերը եւ ցանկալի ուղղութիւն տալ նրանց . նա՛, որ փարոսօրէն լուսաւորել գիտէ իր ժամանակաշրջանը՝ նոր ուղիներ բանալով իր ժողովրդի մտքի բանուկ ճամբաներէն դուրս :

Ո՛չ այս կամ այն դասակարգի ջատագովը — հիմնափո՛րը Հայրենիքի, ոչ էլ ներկայով կլանուած կարճայուշ ժողովրդասէրը, այլ ցեղամերձը, որն իր թուր խորհուրդները ցեղէ՛ն կ՛առնէ :

Ո՛չ անկապաշտը՝ նուաստախոհ, վայնասողը՝ հոգեհաշմ, խուժանավարը՝ շողմոզ, հերձուածողը՝ որոմնացան, ոչ էլ նեղահաւատ ու բաժանասէր կուսակցական ցանցարկուն, որը վատօրէն աստ եւ անդ կազ ու կռիւ կը սերմանէ՝ իր հացն ու հանգիստն ապահովելու համար : Ո՛չ նմանները, ո՛չ էլ խորհրդարարոյ վարդապետութեամբ զանգուածները թունաւորող լենինադաւան հայրենասպանը, այլ հայր ցեղազգեցիկ ու խորարթուն, — նա՛, որ ունայն է հռչակել այն ամէնը — արուեստ, գրականութիւն, իմաստասիրութիւն — որոնք անցնելով մեր աշխարհածանօթութիւնը, մեզ չեն դարձներ աւելի՛ հայ, եւ աւելի՛ զօրեղ :

Ո՛չ պարտուողականը — համակ վախ եւ եսականութիւն, որ իր ժողովրդի փրկութիւնը փոքրողի մոռացումի մէջ կը փնտռէ, այլ նա՛, որ չի տենչար աւելի դերագոյն ճակատագիր քան ստեղծագոր-

ծօրէն հասունանալ յաղթական մահուան համար. նա՛ որի ուղեղի մէջ ամէն արեւածագի հետ զրնգում է մի սրբազան մտածում — պիտի՛ պատժուի թուրքը: Նա՛ որ ծանօթ մեր ցեղի հոգիի լեզուին, կարող լինէր օրուան հայ էութեան վերադարձնել մեր հրաշունչ ցեղայնութիւնը, որ ժողովրդին հակադրէր ցեղը, որ կարողանար ժողովրդի տկարութեան դէմ հանել հոգեւոր զօրոյթը մեր ցեղի, որ, մեծ էր, եւ է՛ հանապազ:

Այսպիսի՛ն պիտի լինի առաջնորդը տառասլոյղ եւ իր վերջնական ազատագրութեան սպասող հայութեան:

Նմանը պիտի լինի դա, որ դալիս է՝ ցեղահաղորդ, ինքնաճանաչ եւ ինքնագօր:

Եւ նրա օրով կը բորբոքուի պայքարը Հիւնի, որ չէ ուզում մեռնել եւ ՆՈՐԻ միջեւ, որ ուզում է աշխարհ դալ: Սրբազան պայքարը Եսի եւ Մենքի միջեւ:

Եւ այդ պայքարէն կը ծնի ՆՈՐ ՀԱՅՐ: Հոգիներում էլ չե՛ն մնար հին թթիւմորի հետքերն իսկ:

Կը չքանայ ապաշնորհ, հասարակ վարձկանը՝ իր տեղը տալով վաստականուէր, յորդեռանդ եւ ցեղապահ մշակին:

Հայ մականը, սուրը եւ զրիչը կը դտնուին կարող եւ սրբամաքուր ձեռքերի մէջ:


Կը դարթնի ցեղը հայու մէջ եւ կը սկսուի Հայ հոգու արդիւնագորութեան եւ վերելքի փառաշատ շրջանը:

Եւ, որպէս արդար հետեւանք, առաջին անգամ լինելով մարդկութիւնը խորապէս կ'ամաչի մեր հանդէպ ունեցած իր անիրաւութիւններէն:

Ա՛հ, Յեղայայտնութեան երանելի օր, պիտի ուշանա՞ս, արդեօ՛ք, հեռո՞ւ ես:

ԱՄԵՐԻԿԱ, ՀԱՅՈՒԹԻՒՆԸ գիրքը ունի «Յեղը եւ տականքը» ենթախորագիրը: Տպագրուած է Սոփիա, 1935ին: Կը բաղկանայ 116 էջերէ: Ունի հետեւեալ գլուխները. — Երկու խօսք — I Միջավայրը — II Հակադաշնակցականութիւն — III Ռամկավարը — IV Հայ Բոլշեւիկը — V Յեղուրաց Հայուհին — VI Գուրեանը Գուրեանի դէմ — VII Անդրօշակ Զինուորը — VIII Ախտաբանականը — IX Գաշնակցականութիւն — X Յեղակրօն Ուխտեր — XI Յեղակրօնութեան Հաւատամքը — XII Հայ Կարմիր Խաչ, Արժուիկներ — XIII Ուսանողութիւն — XIV Մի Բաղդատական — XV Խաչի ստուերը:

Այս գրքին մէջ Նժդեհ կը ծանրանայ ամերիկահայ կեանքի եւ ընդհանրապէս հայ կեանքի ապագային երեւոյթներուն վրայ: Քննադատութեանց շարքին սակայն, շինիչ եւ բանաստեղծական քնիչքով էջեր չեն պակսիր:



Մ Ի Զ Ա Վ Ա Յ Ր Ը

«Պէտք է իրականութիւնը անիծել, այլ՝ հասկանալ»:
ԿԱՅԶԵՐԼԻՆԳ

Հափող, կլանող է ամերիկեան միջավայրը:

Հսկայ այդ խառնարանում հայութիւնը աշխարհագրօրէն այնքան է ցրուած եւ թուով այնքան կոտորակային է, որ նա իր միջավայրում կենտրոնանալու, որով քաղաքականապէս զգալի ոյժ ներկայացնելու կարելիութիւն չունի:

Աւելի ողբալի է, սակայն, հոգեբանական ցրուածութիւնը: Թուենք մի քանիսն այն դործօններից, որոնք առանձնապէս նպաստում են դրան՝

ա) Ամերիկեան միսիոնարական քարոզչութիւնը եւ դրա հետե-

ւանքով ազդու դարձած յարանուանական պաղութիւնը՝ երբեմն պըսակուած նեղհաւատ անհանդուրժողութեամբ .

բ) Հայաստանի նկատմամբ հեռաւոր թիկունք լինելու պարադան , որ ընկերայնօրէն բարեկեցիկ եւ հայօրէն ուժանալու հակամէտ տարրերի մէջ արտահայաստանեան տրամադրութիւններ է ստեղծել .

գ) Կրօնակրթական հաստատութեանց նուազութիւն , որի հետեւանքով անհատները ազգային կուլտուրական արժէքների եւ հիմնարկութեանց շուրջը հաւաքուելու նուազ պատճառներ ունին , որով մեծ մասամբ դուրկ են մնում ընդհանրական շահերի գիտակցութիւնից .

դ) Յատկապէս հայ միջնակարգ դպրոցների չզոյութիւնը , որ նոր սերունդը մղում է անդլիախօսութեան եւ ամերիկեան մշակութային արժէքներով ապրելու .

ե) Հակազգայնական քարոզչութիւնը , որ յատկապէս վերջերս ոչինչ չի խնայում հոգեբանօրէն աւելի՛ եւս կոտորակելու հայութիւնը :

Աշխարհագրական եւ հոգեբանական այս ցրուածութեան միանում են նաեւ նիւթական աննօրատ պայմանները , որպիսիք են՝

— Տնտեսական տկարութիւն հայ միջակորեար դասի , որի հետեւանքով ազդի մեծագոյն մասը մնում է ճնշուած օրուան հացի պայքարի մղձաւանջի տակ եւ համակում՝ աւելի դործ փնտուելու , քան թէ դործ ստեղծելու տրամադրութեամբ , որով՝ էապէս զրկում է նախաձեռնական ոգուց , ինչպէս նաեւ անանձնական բարձր նպատակներով տեւարար ապրելու հնարաւորութիւնից .

— Հայկական առեւտրի ոչ-համագործակցական՝ անհատական նկարագիրը , որ դարգացնում է հոգեւոր մենասիրութիւն եւ եսական շահապաշտութիւն .

— Հայկական դրամագլխի մեծակշիռ շլինելը եւ նրա ոչ-արդիւնարեբական հակումը , որ դժուարացնելով դործարանային դրութեան ստեղծումը՝ անկարելի է դարձնում հայ մտաւորականի , արհեստագէտի , դրամատիրոջ եւ բանուորի ճիգերի համախմբումը — մի բան , որ կարող էր այնքա՛ն նպաստել ազգային կեանքի օրգանական կազմակերպման :

Այսպէս , ամերիկահայութիւնը ցրուած է մարդա-աշխարհագրօրէն , ցրուած՝ հոգեբանօրէն , ցրուած՝ տնտեսականօրէն :

Նա օրգանիզմը չէ՛ , այլ մասնատուած օրգաններ . նա ամբող-

Չափանութիւն չէ, այլ տարանջատութիւն:

Այս ծանր պայմաններում սակայն, կա՛յ հայութիւնը հոգեբանօրէն կենտրոնացնելու, նրան իբր հասարակութիւն կերպաւորելու մի դործօն — ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ: Կա՛յ նաև, ինչպէս տեսանք, ազգօրէն կենտրոնախոյս տարրերի ինքնակազմալուծման ձգտումը — ՀԱԿԱԴԱՇՆԱԿՅԱՆՈՒԹԻՒՆԸ:

Ամերիկահայութիւնը, ուրեմն, բաժանում է երկու մասի — հայ հասարակութիւն դառնալու խռատով առաջնորդուող ազգայնական հոսանք, եւ ցեղօրէն դիմադուրի, ապազգայնացած ու տարրալուծուելու հակամէտ ցրուածութիւն: Եւ ուրիշ բան չէ ամերիկահայութեան այսօրուան պայքարը, եթէ ոչ՝ այս երկու մտայնութեանց սուր բախումը:

Հակասեակ այս տրամադրութիւնները պատմահոգեբանօրէն պայմանաւորում են նշանակալից այն փաստով, որ հայութեան մի մասը՝ Ամերիկայում արմատ ձգելու, այնտեղ գաղութ կազմելու նըպատակով չի հեռացել երկրից, այլ եղել է պանդխտութիւն: Զոհ տաճկական հալածանքի՝ ամերիկահայ պանդուխտը անմիջական նըպատակ ունէր դրամ շահել եւ երկրում մնացած տան օգնութեան հասնել, իբր աւելի հեռաւոր նպատակ՝ սրտում փայփայելով երկիր վերադառնալու յոյսը: Ստովքոտ այդ տարրի հոգում հայրենի հողի զգացումը դեռ այսօր էլ կենդանի է, որքան էլ «Իէպի Երկի՛ր» կանչը այժմ չի լսում:

Դրա հանդէպ, միւս մասը՝ հայրենիքը թողել է ընդմիշտ, դընտցել է դրամ շահելու եւ նոր կեանք վայելելու նպատակով, որով հոգեբանօրէն դարձել է անհայրենիք — ապահայրենական տարր: Այժմ էլ նա շարունակում է ոչ միայն հայրենակարօտ պանդուխտի հոգեխոտվքից զուրկ մնալ, այլև ի սպառ մոռացութեան տալով հայոց աշխարհը, ճգնում է մոռանալ նաև իր գաղութային հանգամանքը, ծպտուել իբր տեղացի, որքան էլ «ներգաղթ» նշանախօսքի համար ընդունակ է ահագին խանդավառութիւն կեղծել:

Հոգեբանութիւնների այս բեւեռացումով պայմանաւորուած ամերիկայութեան սուր պայքարը՝ իր խորքով մի մասերեւոյթն է այն ահարկու գուպարի, որ ամբողջ մի անցեալում կնքեց հայութեան ազգայնական եւ հակազգային տարրերի փոխյարաբերութիւնը, որքան էլ ամերիկացի մակերեսային զխտողին այդ թւում է արեւելեան կրքերի ըմբշամարտութեան սովորական մի տեսարան:

Ասե՛նք, որ ամերիկացու բարոյականը դիմորոշւում է նրանով, որ նա ամէն պայքար համարում է կենսաբանօրէն անհրաժեշտ եւ նրա իմաստը գտնում է նրանում, որ կողմերից մէկն ու մէկը անպայմանօրէն յաղթանակի: Ըստ նրա հայեցողութեան՝ մարդս կռւում է յաղթելու համար եւ նրա բնազդական համակրանքը մի՛շտ էլ յաղթականի հետ է: Նա չի սիրում ողբերգութիւնը, սպորտամէնի հոգե-

բանութիւն ունի եւ դիտող է միայն : Կրկիսապաշտական այս ըմբռնումին հակադրւում է ցեղօրէն հայ մարդու տառապաշտ հոգեբանութիւնը , որի շնորհիւ հայը ամէն երեւոյթի մէջ բարոյական տարրն է փնտռում , ատում է անիրաւ ոյժը , խոցւում է , երբ անարդարութիւնն է յաղթանակում եւ արցունքի հետ՝ իր սրտի արիւնն է քամում , երբ արդարութիւնն է պարտւում :

Դրա հանդէպ , ցեղուրաց հայը՝ իբր հայկական հոգու բացասական կողմի արտայայտիչ՝ իր երջանկութիւնը պայմանաւորում է իր հոգեւոր մեկուսիութեամբ : Նա ո՛չ ամերիկացու կենսաբանօրէն ուժապաշտ բարոյականն ունի , ո՛չ էլ տառապաշտ հայու արդարասիրութիւնը : Չարութեան շտեմարան է նրա հոգին . նա սիրում է մեր կեանքում արդարութիւնը խաշուած տեսնել եւ ցնծում է , երբ ստորնութիւնն է յաղթանակում : Անստեղծագործ է . զուրկ ներքին կրակից , անընդունակ ինքնարորբոքումի : Կարծէք Արարչութիւնը նրան պարզեւատրած է միայն գործիք դառնալու կարողութեամբ : Իբր ներքին չարութիւն՝ նա սիրում է հրահրուիլ արտաքին թշնամուց : Այս է պատճառը , որ նա միշտ էլ զինակցում է մեր ցեղի դահիճներին :

Պայքա՛ր կայ հայկական Ամերիկայում , եւ մեր ցեղի այս ներքին չարութիւնը , — ցեղի այս չարարուեստ տականքը — վերստին գործիք է արտաքին թշնամու՝ այս անգամ թրքօրոյշեւիզմի ձեռքին :

Հակադաշնակցական հայը հպարտ է , որ օտար , այլ ազատ միջավայրում բոլշեւիկեան աստղի շնորհիւ ցեղօրէն աղօտ իր կերպարանքը որոշ փայլ է ստացել : Ազգայնական հայութիւնը , սակայն , ապրում է հայ ճակատագրի ծանր ողբերգութիւնը եւ ազգային ամօթանքի դառնութեամբ չափւում է օտարից դօտեպնդուած իր ցեղի տականքի հետ :

Մե՛ծ , յաւիտենօրէն մեծ արժէքներ են դրուած այս բորբոքուող պայքարի մէջ — մեր ազգային ոգին , որ բոլշեւիզմը մարել է ճգնում , եւ մեր դատը , որ քեմալական թուրքը սպանել է ուզում :

Եւ պայքարը տարւում է այդ մեծ արժէքները խորհրդանշող Եռագոյնի շուրջը :

Պայքա՛ր , որի մէջ պարզուեց որ մեր ժողովրդի մէջ դեռ կան օտարահակ տարրեր , որոնք մեզ հետ չէին երէկ , երբ ազգայնական հայութիւնը աստուածային խոյանքով ոչինչէն Հայաստան ստեղծեց . մեզ հետ չեն այսօր , մեզ հետ չեն լինի ե՛ւ վաղը : Եւ որ վաղը , երբ արտաքին վտանգը Հայաստանի դռները դարկեց , այդ անդրօշակ տարրերը մեծապէս պիտի վտանգեն մեր քաղաքա-հոգեբանական թիկունքը :

Մե՛ղ , ապա ուրեմն , մեզ կը մնայ կրկնապատկել մեր արթնութիւնը ամենամիճոական դիրքաւորմամբ :

Ինչո՞վ կը վերջանայ այդ պայքարը , որն այլեւս վերածուած է

կատարեալ դրօշամարտի : Ո՞վ կը զարնուի այս սլաքարի մէջ եւ ո՞վ կը յաղթանակի : Անտեղի՛ հարց . հակադաշնակցական դիրտից դատ ո՞վ չզիտէ , որ երբ կռիւը դրօշակի շուրջն է , յաջողութեան աստուածուհին միշտ էլ պսակադրում է դրօշակակիրի ճակատը :

Դրօշամարտում մի՛շտ էլ դրօշակիրն է յաղթում :

Ա Խ Տ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ը

«Անհատների պէս — ասում է Ֆուլէն — ազգերն էլ մի հոգի , մի «ես» ունեն , եւ այդ հոգին ու «ես»ը կազմւում են ցեղի հաւաքականութիւնից : Այնտեղ , ուր այդ հաւաքականութիւնը ընկնում է իր պատմական արժէքների բարձրութիւնից , ազգը դառնում է անկումի շրջանում եւ նրա հոգին խանգարւում բարոյական հիւանդութեամբ» :

Ահա՛ մի դատաւճիռ օրուան հակադաշնակցականութեան մասին :

Հակադաշնակցականութիւնը — իբր ուրոյն հոգեվիճակ — կարող էր ախտաբանօրէն շեշտուել , եւ շեշտուեց բուլշեւիկների կողմից մեր գաղութներում ստեղծուած հոգեբանական մթնոլորտի շնորհիւ :

Մեր դարը դանդուածների եւ ամբոխների դար է : Ամբոխից կարելի է օգտուել երկու ձեւով — դրական եւ բացասական : Բուլշեւիզմը այդ վերջինից օգտուեց եւ շարունակում է օգտուել բացասական ուղղութեամբ : Դա ձգտում է տեւականացնել ընկերային պսիխոզին նպաստող հոգեբանական մթնոլորտը , գիտնալով որ հոգեբանօրէն բնականօն մարդ էակից կարող է միայն մի՛ վերաբերմունքի արժանանալ — մերժումի : Հայութեան այն մասը , որ իր ճակատագրով եւ հասարակական դրութեամբ — կոտորածների խելացնորոզ յիշողութիւն , տեղահանութիւն , տնտեսական անկայուն վիճակ , նոր միջավայրին յարմարուելու յաճախ ապարդիւն ճիգ — դարձրել է ջրհայնապէս անկայուն եւ հոգեպէս խախտուած տարր՝ մեծապէս օգտագործուեց բուլշեւիզմից ո՛չ դրական ուղղութեամբ : Ուր չկայ պսիխոզի վիճակ՝ բուլշեւիզմը ճգնում է ստեղծել . ուր կայ՝ նա շտապում է ձեռք առնել պսիխոզի ենթակայ տարրերի դեկավարութիւնը :

.
.
.

Այդ հոգեխանգարման ախտանշանները անհատի մէջ արտայայտութիւն են ստանում , երբ որոշ հաւաքականութեան մէջ ախտաբանական այդ երեւոյթը աստիճանաբար դարդանալով յանդում է ընկերային պսիխոզի , որում , ըստ մի շարք հոգեախտաբանների , — Լըբօն , Սիգէլ , Տարդ , Կինկէլ — ենթական մատնում է հետեւեալ գծերը .

1.— Գիտակցութեան տկարացում, որի դէպքում բանականութիւնը չէ՛ վարում ախտաբանական ենթակային, այլ դիպուածային գրգռուածութիւնը:

2.— Զգացումների եւ գաղափարների միակողմանի ուղղութիւն: Այս դէպքում՝ ենթական կորցնում է շրջահայեցողութեան ընդունակութիւնը, պատասխանատուութեան զգացումը եւ, իբր խրտացուած կիրք, կուրորէն, մղւում իր մտասեւեուման առարկային՝ թէկուզ մարդկութեան անգարմանելի չարիք հասցնելու եւ աշխարհի ամբողջ բարոյակարգը ոտնահարելու գնով:

3.— Բարձր գգացումների անկում, որի շնորհիւ նա դառնում է ընկերայնօրէն անպիտան, բարոյապէս անընտրող, գրկւում է սրբութեան զգացումից, ինչպէս նաեւ գեղագիտական ճաշակից. կորցնում է հոգեւոր վայելքի ընդունակութիւնը եւ դառնում է — եթէ այսպէս կարելի է ասել — հոգեւոր գիշակեր:

4.— Գերագրգռութիւն: Կորցնելով բարձր գաղափարներով ապրելու ընդունակութիւնը, ենթական դառնում է անտարբեր հանդէպ բարձրի, հեռուորի, եւ յափշտակւում ներկայով միայն: Իբր այդպիսին՝ նա կորցնում է բարոյական չափի գիտակցութիւնը եւ դեկամարւում է այն բանով, ինչ նրան մասնաւոր գրգիռ է տալիս՝ տուեալ վայրկեանում: Յաւիտենականութեան մասին զգացում չունի, իսկ պատմութիւնից խրտչում է: Նրա հոգեւոր տեսողութեան շրջագիծը այսօրուանից դէնը չի անցնում, որով անընդունակ է ապրելու իր ցեղի անցեալով, համակուելու նրա ապագայով:

5.— Յուզականութիւն: Սիրում է վայրկենական ապրումների տեղատարափը. յոյզից յոյզ է անցնում, եւ յաջորդաբար մոռանում դէպքերը. տեւական ապրումի ընդունակութիւն չունի, ո՛չ էլ հասկացողութիւն ողբերգականի մասին. լալիս է եւ ծիծաղում՝ առանց լուրջ պատճառի. արագաչարժ է, բայց միշտ էլ ձախաւեր. գործում է եռանդով, բայց առանց կարեւոր նպատակի. ազմկարար է՝ շփոթի եւ քայքայումի ազդակ:

6.— Կրքերի յորդահոսութիւն: Անժուժ է, զուրկ է բարոյական ոյժից, որով եւ տոկալու, համբերելու առաքինութիւնից: Ներմղական է. ձգտում է արագօրէն իրականացնել իր մէջ բոյն դրած ամէն կիրք, ցանկութիւն:

7.— Դատելու անկարողութիւն: Զի հասկանում պատմական դէպքերի իմաստը. հակում չունի տրամաբանելու, ո՛չ էլ ճշմարտու-

թեան ընկոյգի վրայ ատամ կտտրելու, անկարող է իրականը անիրականից դատորոշելու. դիւրահաւան է եւ յատկապէս հաւատում է այն բանին, որ իր հաշուին դալիս է: Այդ բոլոր պատճառներով՝ բնական յարմարութիւն ունի գործիք դառնալու:

8.— Անյարկի վայրագութիւն եւ շնականութիւն:

9.— Թեթեւամտութիւն, որ բացատրւում է ենթակայի հոգեկան տկարութեամբ: Չունենալով ինքնավար բարոյական եւ ինքնամութիւն, ենթական դառնում է եռանդի մուրացկան: Թեթեւամտութիւնն էլ նրա մէջ ծայրայեղութեան է հասցնում հրահրուելու բաղձանքը, որպիսի պատճառով նա դառնում է՝ ամէն շարիքի գործիք:

Ահա՛, մօտաւորապէս, այն հոգեախտանշանները, որոնք վերլուծելու կարող դիտողը կը նկատի ամերիկահայութեան անդրօշակ տականքների մէջ:

Հակադաշնակցականը իրր ակտարանական տիպ՝ եսական է եւ հաճոյապաշտիկ. հոգեպէս խո՛ւլ է, անկարեկի՛ր է, չի զգածւում մերձաւորի տառապանքից. անհամբեր է, անհանդուրժող. վայրագօրէն անարդար, ատող, չար. նրա մէջ գլուխ է բարձրացրել նախրայինը. նա իրեն թելադրուած գաղափարները, կարծիքները, հաւատալիքները կա՛մ ընդունում է ամբողջութեամբ, անքննադատարար, կա՛մ ամբողջութեամբ մերժում:

Ախտարանական այդ հոգեվիճակի շնորհիւ, նա հեշտութեամբ յանձնւում է զանազան պատրանքների, երբ այդ պահանջում է իր զեկավարը: Օրինակ, նա հաւատում է որ կարելի է Գաշնակցութիւնը գլխատել, Ամերիկայէն դուրս հանել, ծովը թափել. այդ նպատակով ստորագրութիւններ է հաւաքում, հանրագրութիւններ կազմում, չընայած որ տասնեակ տարիներով Ամերիկայում ապրող այդ եղկելին գիտէ, որ նման անհեթեթութիւնը դէմ է երկրի օրէնքին. գիտէ, բայց հաւատում է: Նրա հոգեւոր աշխարհն հարուստ է ցնորական բազմազան գաղափարներով, բանդազուշանքներով. նա հաւատում է ամէն բանի, ինչ որ յարմար է իր հոգեբանութեան. ինչպէս շեշտեցինք մի տեղ, նա գուրկ է չափի եւ իրաւախոհութեան զգացումից, որովհետեւ ներքին հրամայականով, այսինքն իր խղճմտանքի ճայնով շարժուելու եւ գործելու փոխարէն, նա զեկավարւում է արտաքին դրդումներով: Այդ տարրը զգալիօրէն ներգործօնացաւ եւ փողոց իջաւ Նիւ Եորքի դէպքից յետոյ: Արդեօք, դժբախտ մի հոգեւորականի մա՞հը յատկապէս հոգեցնցումի ենթարկեց նրան, թէ այն ամէնը որ այդ առիթով դրսեւորուեց՝ անթեղուած կար նրա մէջ: Արդեօք պայմաններ կը պակսէին նրան՝ իր հոգու ողջ շարութիւնը արտավիժելու համար: Գիտէինք որ նա մեզ հետ չէր ազատագրա-

կան կռիւներում . գիտէինք որ նա այժմ էլ մեզ հետ չէ՝ մեր ազգային մաքառումի, մեր ողբերգութեան, մեր վերափրկչական ոգորումների, մեր ինքնապաշտպանողական ճիգերի մէջ : Արդեօ՞ք, Նիւ Եորքի դէպքից յե՞տոյ միայն փլաւ այդ տարրերի հողին, թէ նա փլած էր վաղուց : Արդեօք, հիմա՞ միայն նա միացաւ մեր ցեղի թշնամիներին, հիմա՞, երէկ էլ նրա հետ չէ՞ր . ապա ի՞նչ էին հայ մատնիչները — ցեղի երեսից ընկած հրէշների այն լեզուներ, որ մութի մէջ գործեց հայոց յեղափոխութեան դէմ, մինչեւ որ իսլամ մուսուլմանութեան քարի վրայ կը սրուէր այն ահաւոր դանակը, որով թուրքը ո՛չ միայն հայ յեղափոխականները պիտի մորթոտէր, այլեւ մի օր ամբողջ արեւմտահայութիւնը պիտի քաշէր պատմութեան մէջ իր զարհուրանքով եզակիի սպանդանոցը :

Չէ՛, չէ՛, նրա էութիւնը վաղուց էր դատարկուել բարոյական այն յենակներից, առանց որոնց անհատի եւ ամբոխի մէջ գլուխ է բարձրացնում անասնականը :

Հակադաշնակցականութիւնը — հասկանա՛նք, հասկանա՛նք այդ — որպէս ցեղալուծի արտայայտութիւն, նշանակում է՝ հրաժարում ցեղի արժէքներից եւ սրբութիւններից, նրա վախճանաբանութիւնից — ա՛յն ամէնից որ ազգերի յաւիտեականութիւնն է ապահովում :

Դ Ա Շ Ն Ա Կ Յ Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Դաշնակցութեան շուրջն է դառնում հայոց նակատագիրը :

Մեր ըմբռնումը՝ ապագայի մասին, որով պայմանաւորւում է մեր տքնութիւնը ապագայի համար — ահա՛ թէ ի՞նչն է կառուցանում մեր ճակատագիրը :

Այդ ըմբռնումն է մեզ — որպէս անհատ եւ հաւաքականութիւն — քչել տալիս պատմութեան առջեւից կամ նրա յետեւէն : Դա՛ է մեզ դարձնում ստեղծագործ կամ անպտուղ, մարտիկ կամ դասալիք, մուրացկան կամ արքայ, ի մի բան՝ յաղթական կամ սլարտեալ :

Ապագայի պրոբլեմը(*) — հայ հայրենիքի, հայ ճակատագրի պրոբլեմն է մեզ համար . աւելի պարզ՝ դա հայ եւ թուրք յարաբերութեան պրոբլեմն է, — երկու ժողովուրդների, որոնք այլեւս չեն թաքցնում, որ իրենցից մէկի հետագայ գոյութիւնը պայմանաւորուելու է միւսի մահով : Այդ իսկ պատճառով՝ մեծապէս խռովուած

(*) Հարցը, խնդիրը :

է ազգայնական հայը, ամէն բանից առաջ, է՛լ աւելի՛ դաշնակցական հայը: Դաշնակցականը — դա հա՛յն է, որ ընթանում է սրատմութեան առջեւից, որպէս զինուոր՝ իր ցեղի ձայնին հնազանդ: Իր ցեղի դոյութեան եւ ազգայի հետ կապուած խնդիրներով ապրող հա՛յն է դա: Ազգայի դրան արթուն հսկող, խռովքոտ հա՛յր — հարազատ զուակն իր քաղաքական նախահայրերի — նախադաշնակցութեա՛ն: Հայրենարազձ հա՛յն է դա՝ սեփական երկրի ճակատագիրը ազատօրէն տնօրինելու տենչանքով: Հայ մա՛րդը, որ իր ցեղի ճակատագիրը դարձրել է ի՛ր սեփական ճակատագիրը, որ կապուած է մնում իր ժողովրդին՝ նրա դժբախտութեան եւ սպաքարի օրերին, անձնուիրաբար ծառայում, զոհարելում եւ մեռնում նրա համար, երբ հարկն է պահանջում:

Հա՛յր, որ խորապէս ապրում է ողբերգութիւնը երկրի հայութեան՝ հերոսաբար կառչած Արարատի փէշերին, եւ՝ տարագիր հայութեան, որ Նազովրեցու պէս դեռ շարունակում է նախանձել բոյն ունեցող երկնքի թռչուններին: Հա՛յր, որ հայրենիք ասելով, միշտ էլ պատկերում է եօթնիցս սրբազան մի երկիր, որը սիրաշատ մօր նման կանչում է իր զուակներին — «Եկէ՛ք, եկէ՛ք, ես ձեր մայրն եմ, իմ մշտարուխ ստինքները կաթ ունեն բոլորի՛դ համար»:

Դաշնակցութեան ոյժն ու հմայքը Ամերիկայում ամէն բանից առաջ այն բարձր ըմբռնումի մէջ է, որ իր մասին արդարօրէն կազմած է ազգայնական հայութիւնը: — Չէ՛ կարելի հակադաշնակցական դառնալ, առանց ուրացող դառնալու: Այսպէ՛ս է մտածում ամերիկահայը եւ, որպէս քաղաքական աղօթք, ամէն օր կրկնում՝ «Աստուած երկու բան չտայ հայութեան — Արաքսին՝ կամուրջ, Դաշնակցութեան՝ պարտութի՛ւն»: Այո՛, թող ժամանակները այդ երկու բանը չտան մեզ, սրովհետեւ Հայաստանը Պարսկաստանին միացնող մի կամուրջի դոյութեան դէպքում՝ այլեւս դժուար թէ մարդ մնայ մեր շեկայավար հայրենիքում. իսկ առանց Դաշնակցութեան՝ այլեւս ազգ չենք լինի, այլ՝ մարդկային փոշի:

Ազգայնական ամերիկահայը դիտակցում է, որ Դաշնակցութեան պարտութիւնը պիտի դառնայ հայ ոգու եւ դատի վերջնական պարտութիւնը — նա խորապէս դիտակցում է այդ, եւ այդ իսկ պատճառով կանգնած է Դաշնակցութեան կողքին:

Ի՞նչ է սակայն, Դաշնակցականութիւնը:

— Հայ ցեղի մշտնջենաւորման նախամտահոգութիւնը, նրա յարիտեական տփնութիւնը, նրա ինքնահօրացման, ինքնաազատագրման եւ լիարժէքաւորուելու նի՛զն է դաշնակցականութիւնը:

Յեզերի ստեղծագործ ոգին անցումներ ունի՝ դէպի գոյութեան բարձր ձեւերը: Դաշնակցականութիւնը հէնց այդ անցումն է մեր նորագոյն պատմութեան մէջ:

Դա ցեղի յաւիտենական անբաւականութիւնն է սեփական ճակատադրից, որ յատուկ է կենսաբանական բարոյականի տէր բոլոր ժողովուրդներին:

Դա ցեղի ազնուութեան — նրա տքնաջանութեան, մարտունակութեան եւ ազատականութեան բարձրագոյն աստիճանն է՝ ժողովրդի մէջ: Դա մեր ցեղի յիշողութիւնն է, որով ժողովուրդը չի՛ մոռանում անցեալի իր մեծութիւնը, չի՛ հաշտւում իրեն պարտադրուած անփառունակ վիճակի հետ: Ամերիկահայ ցեղակրօնի համար՝ հէնց այդ անհաշտուողականութիւնն է դաշնակցականութիւնը:

Մարդկութեան հանդէպ ազգն իր պարտականութիւնը չի՛ կատարի, եթէ իր ձեռքից հանէ սեփական ճակատադրի զեկը՝ եթէ դա յանձնէ օտարին: Իր ցեղի պատմութեան ընթացքը վարելու արիութիւնն է դաշնակցականութիւնը:

Ո՞վ չգիտէ, որ դեռ սուրն է դժուր ազգերի յաւիտենականութեան ճամբան: Իր ճամբի վրայ ցցուող վտանգներին եւ անիրաւութեանց կուրծք տալու քաջութիւնն է դաշնակցականութիւնը: Դա տուրքն է մտքի, սրտի եւ արեան, որ պահանջում է ցեղերի ինքնապաշտպանութիւնը: Դա այն հողերանական վահանն է, որով մեր ցեղը պաշտպանուեց դարերով:

Մեր ցեղի ինֆնայաւիտենականացման ծարաւն է դաշնակցականութիւնը: Դա հայ մարդու անհանգիստ, մշտախռով մտածումն է Հայաստանի մասին:

Դա ցաւն է, որ ապրող հայ մարդն զգում է ի տես վիրաւոր Հայաստանի: Եւ վի՛շտը մեռնողի, թէ իրեն քիչ բան յաջողուեց կատարել հայրենիքի համար: Դա ճիշն է սրտաճաք Անդրանիկի, թէ «Գործս կիսատ մնաց»:

Եւ առաւելագոյն գոհաբերութիւնը, որ ցեղահոգ հայը ժրպտաղէմ կատարում է Հայաստանի համար:

Դա՛ պատմութեան հայացիք եւ Հայաստանակործան ընթացքը յաղթահարելու մեր նիզն է: Մեր մղո՛ւմն է ցեղի ինֆնակենսարոնացման եւ ինֆնափրկութեան:

Դա՛ ցեղի ինքնանուաճումի ճի՛ղն է, նրա արթնութիւնը, որ չի զազարում ամենակենսարտնախոյս տարրերին ուղղելու իր զգաստացուցիչ կանչը՝ «Եկէ՛ք առ իս»:

Դա զաղութահայութեան հողեւոր ուղեհարթումն է՝ դէպի Հայաստան: Մեր ցեղի հայրենաստեղծումի խա՛նդը. օրուան հայութեան ազատագրուելու աննուաճ կա՛մքն է դաշնակցականութիւնը:

Այսպէ՛ս է հասկացւում դաշնակցականութիւնը Ամերիկայում:

Այս ըմբռնումը՝ դաշնակցականութեան մասին, հայ մարդուն մղել է դաւանելու թէ՛ ամէն մեղանչում Գաշնակցութեան դէմ՝ մեղանչում է ցեղի դէմ:

*
**

Ամերիկահայ դաշնակցականը սիրում է աշխատել իր անձի վրայ եւ իր վրայ կատարած աշխատանքով էլ նա չափում է դաշնակցականի իր պիտանիութիւնը: Նրա համար իր անձի վրայ աշխատելը — դաշնակցական աշխարհայեցողութեան եւ առաքինութեանց մշակումը — դարձել է հրամայական պահանջ, մասնաւորապէս այժմ, երբ հայ կեանքի ներքին չարիքը՝ հակադաշնակցականութիւնը — դարձել է ահաբեկ եւ անցել յարձակողականի:

Ամերիկայում եւ չտեսայ ինքնաշխատութիւնը թերադնահատող ընկեր: Ամէնքը պիտակցում են, որ պատմական վայրկեանի՝ մեր առջեւ դրած ծանր խնդիրները պահանջում են կուսակցական աւելի՛ մեծ կուլտուրականութիւն: Ինքնաշխատութիւնը չէ՛ թելագրւում, ինչպէս տեղի է ունենում բոլշևիկների մօտ: Դաշնակցականը դրադւում է ինքնաշխատութեամբ, ոչ թէ օտար դադափարախօսութեանց ազդեցութեան տակ ընկնելու երկիւղից, այլ իր տեսարանական հորիզոնը ընդլայնելու ներքին ցանկութիւնից, ջանալու ներքին ուրախութեան զգացումից:

Այնտեղ, ամէն ընկեր ինքիրեն զգում է որպէս արժէքաւոր միաւոր այն մեծ սեխախմբի մէջ, որ կոչւում է Դաշնակցութիւն: Բարձրօրէն ընկերական է նա: Զերմ ընկերականութիւն, հաւատաւորութիւն եւ խանդավառութիւն — ահա՛ նրա կուսակցական բարոյականի երբեակ սիւները: Նրա դոհարերութեան չափը մնում է անձանօթ մեր շատ գաղութների համար: Դաշնակցականը, Ամերիկայում, իր գործն ու գոհաբերութիւնը չափում է ոչ թէ իր կարողութիւններով, այլ իր պարտականութեան չափով, որ միշտ էլ աւելի՛ մեծ է և աւելի՛ն է պահանջում:

Այսպիսով, դաշնակցականութիւնը Ամերիկայում դարձել է մի տեսակ միւրիդիզմ — աննահանջ պայքարի եւ աննուազ դոհարերութեան խա՛նդ:

Քաղաքական խորհողութեան ընդունակ՝ նա անսխալ կերպով սահմանել է թրքօրբոլշևիզմի կողմից մեզ պարտադրուած պայքարը, նրա արժէքը եւ իմաստը: Նրա համար իրերի վիճակը լիովին պարզ է: Նա սիրում է եւ գիտէ խորհել, եւ ոչ թէ դատել պատրաստի բանաձեւերով: Պայքարի մէջ է դրած առողջ միտք, տաք սիրտ եւ Վարդանանց մարտական բարոյականը՝ «խիզախ քաջութեան վատութիւն չխառնել»: Մշտարթուն է, գիտէ որ պայքարը «տօն օրեր» չունի: Ներկայացնելով ազդն ու ազգայնականութիւնը՝ նա միշտ էլ

տիրապետող դիրքերի վրայ է, այսինքն՝ վայր չի իջնում իր կոչումի եւ պատմական արժեքների բարձունքից: Նա խստորէն կարգապահ է: Նա նմանում է աւելի Ֆրանսական զինուորին, քան՝ գերմանականին: Առաջինը՝ իր հրամանատարը կորցնելուն պէս՝ անցնում է նրա տեղը: Նման դէպքերում — իր պետերի վերաւորուելու, սպանուելու դէպքում — գերման զինուորն իրեն զգում է անտէր, անզուխ, ամբոխանում եւ դադարում է կազմակերպուած ոյժ լինելուց: Ֆրանսականը, ինչպէս ասացի, փոխարինում է իր ամենաբարձր պետերին: Վերտէօնի շուրջը բորբոքուող ճակատամարտերում եղան դէպքեր, երբ շարքային պարզ զինուորը փոխարինեց իր գընդապետին եւ զօրամասի վերաբերմունքը մնաց նո՛յնը դէպի նոր հրամանատարը: Ա՛յս է ճշմարիտ կարգապահութիւնը: Դաշնակցականի կարգապահութիւնը մեքենական չէ, արտաքին չէ, դա՛ արտայայտութիւնն է մի բանաւոր անհրաժեշտութեան. դա արտայայտութիւնն է գիտակցօրէն ու կամաւորապէս ընդունուած պարտականութեան: Կարգապահութիւն ասելով՝ մեր ամերիկարնակ ընկերը հասկանում է շարքերի բացարձակ վստահութիւնը դէպի իրենց ղեկավարները: Ռէժիմարկեան զինուորը չէ նա, եւ պատահական անյաջողութիւնները միշտ վերից վար չի փնտռում: Նա չի ասում՝ «սպանե՛րն առաջ», որովհետեւ դիտէ, որ իր մարմինները առաջնորդում են, եւ ոչ թէ ղեկավարում՝ հետուից: Նա նպատակագիտակ է եւ դրական է իր նպատակադրութիւնը: Տանելով իրեն պարտադրուած անօրինակ պայքարը՝ նա, ինչպէս ամէն դաշնակցական, հետապնդում է ո՛չ թէ ապախորհրդայնացումը, այլ իրականացումը միացեալ եւ անկախ Հայաստանի գաղափարի: Նա համակուած է ուժեղ հայրենաբաղձութեամբ: Նրա համար հակադաշնակցականութիւնը՝ այն ներքին պատմական շարիքն է, որ տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր անուան եւ ձեւի տակ, մեծապէս դժուարացրել է մեր ցեղի չուն՝ իր յաւիտենականի ճամբի վրայ: Ահա՛ թէ ինչո՞ւ նա ներքին շարիքին մօտենում է ոչ թէ մակերեսայնօրէն, այլ ապրելով մեր ողբերգութեան խորութիւնը, գիտակցում է որ հայ կեանքի հազար գլխանի շարիքը կը վերանայ մեր ճակատագրի բոլոր հանդոյցների քակումով — Միացեալ եւ Անկախ Հայրենիքի ըստեղծումով միայն:

Ամերիկահայ դաշնակցականը գաղափարական կեանք ունի, ինչպէս եւ զգացումների մեծ հարստութիւն, բայց չի սիրում լաց լինել անցեալի վրայ եւ ամէն բանում անցեալն օրինակել: Նրա մէջ նկատուում է հոգեկան մեծ լարուածութիւն: Դրա հետ՝ նա անասելիօրէն ընկերահաղորդ է: Ծանօթ դատավարութեան օրերին մեր շարքերը — պատի՛ւ իրենց — հսկումի ամխաներ բոլորեցին:

Նա չի հաւատում թուղթէ բանաձեւերի «փրկչական» զօրութեան, ինչպէս՝ նպատատւոր սլայմանների «կախարդական» ոյժին



Յեղակոցի Ռւխի հիմնադիր Զօր. Գարեգին Նժդեհ (նստած) ետեւը՝ Տիգրան Մուրաճեան:
Նրկու կողմերը՝ Յեղակոցի Ռւխի ընկերներ, հայկական եւ ամերիկեան դրօշակներով:

— նա աշխատում է, աշխատում, եւ աշխատում :

Իրեն պարտադրուած պայքարում նա ցուցահանեց հողերանական խորին հասունութիւն: Նա մի հատիկ չափանիշ ունի — դաշնակցակա՛ն բարոյականը: «Դու պէտք չէ՛ անես այն, ինչ կարող է վնասել Դաշնակցութեան» — նրա համար ասել է՝ «դու պէտք չէ՛ անես այն, ինչ կարող է վնասել ազգիդ»:

Նրա կեանքի ամենախուովիչ հարցն է — Հայաստանից դուրս, ես ապրո՞ւմ եմ այնպէս, ինչպէս որ պէ՛տք է ապրել յաւիտենական հայ մարդուն: Եւ նա դիտէ, որ այս հարցի լուծումը պէտք չէ փրճուել շրջապատի աննպաստ պայմանների, այլ՝ իր ցեղային դիտակցութեան մէջ: Նա դիտէ նաեւ, որ այդ հարցի լուծումից է կախուած իր վարած դոյամարտի ելքը՝ յաջող թէ անյաջող:


Նա անասելիօրէն հպարտ է իր երեք «Հայրենիք»ներով(*) — երեք ազգային օրհնութիւններ ամերիկահայութեան համար — որոնցով յաջողել է օտար հեռաւոր ասիերի վրայ իր աննիւթեղէն հայրենիքն ստեղծել:

Հողերանական յարմարումն անձանօթ է նրան — ցեղակրօնութի՛ւնը վկայ: Յարանուանականութիւն եւ հատուածականութիւն չգիտէ: Նա համահայ է: Հայնէի հայրենապաշտ զօրականն է, որ հայրենիքից դուրս՝ տոչորում է իր հողի կարօտով եւ դժուարանում է մեռնել: Մինչ հակադաշնակցականը վատարար երզում է կոմունիստական գրականութիւնից առնուած հետեւեալ տողերը — «Միեւնո՛յն է — հանդիստ կը պառկեմ ե՛ւ օտարութեան մէջ, հողն այստեղ թէ այնտեղ — միեւնո՛յն է»: Հայրենի կարօտը ոչ միայն ամերիկահայ դաշնակցականին սրահում է պանդխտի հողեմիճակում, այլեւ մղում է նրան տառապել նաե՛ւ մեռած հարազատի գերեզմանի պանդխտութիւնից:

Դաշնակցական Բարկէն Տէր Մանուէլեանի ցեղակրօն զաւակնե՛րն էին, որ իրենց հօր գերեզմանից ինձ «ափ մը հող» տալով, ասացին — «Եթէ հնարաւոր չէ Հայաստանի հողին՝ դէթ խառնէք Քլըրիստափորի գերեզմանի հողին»:

Հէնց ա՛յդ է դաշնակցականութիւնը:

(*) «Հայրենիք» օրաթերթ, ամսագիր, շաբաթաթերթ:



«ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ» գիրքը տպագրուած է Սոփիա, 1937ին: Կը բաղկանայ 104 էջերէ: Գրքին վերջաւորութեան կայ 11րդ կարմիր բանակէն գրուուած քարտէսը, որ ցոյց կու տայ թէ կանուխէն որոշուած էր գրուել Հայաստանը: Հոսմէական թուանշաններով բաժնուած է ութ բաժիններու:

Գիրքը առաւելաբար պատասխան մըն է Գեղէոն Տէր Մինասեանի, որ Զանգեզուրի կռիւներու ժամանակ Նրժդեհի գործակիցը ըլլալէ ետք, Հայաստանի խորհրդայնացումով դիմափոխուելով, ամբաստանած էր Նժդեհը: Կը բացատրուին թուրք - բուլղարիկեան դաւերը, ինչպէս նաեւ թէ ինչո՞ւ մղուեցան զանգեզուրեան կռիւները:

ԹՐԹՕ-ԲՈՂՇԵԻԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Սորհրդային իշխանութեան — նրա թերթերի, բաղմապիսի փողահարների եւ ջատաղուների կողմից, թերեւս, ազգայնական ոչ մի դործիչ այնքան կրքոտ յարձակումների եւ դրախօսութեանց չէ ենթարկուել, որքան տողերս գրողը:

Մէկ ու կէս տասնեակ տարի է անցել այն ողբերգական օրից, ինչ մենք թողեցինք Հայաստան երկիրը, բայց եւ այնպէս, կարմիր իշխանութիւնը չէ՛ մոռացել, չէ մոռանում, եւ դժուար թէ մի օր ի սպառ մոռանայ ինձ:

Եւ հասկանալի է դա, աւելի քան հասկանալի: Առաջին զնդակը՝ կարմիր բանակի դէմ, արձակեց իմ գինուորը. եւ բովանդակ Ռուսաստանում եւ Անդրկովկասում վերջինը լինելով, նա թողեց կուուադաշտը:

Իմ ժողովրդական վաշտերն էին, որ ջարդեցին, զինաթափեցին եւ դերեցին XI կարմիր բանակի գրեթէ բոլոր զօրամասերը, եւ, հակառակ հանրապետական Հայաստանի կառավարութեան ու Մոսկուայի ներկայացուցիչ Լեզրանի միջեւ կնքուած պայմանագրին — որով Չանդեգուրը թողնուած էր թաթար Ատրպէյճանին — իմ ժողովրդական բանակը, զէնքի ուժով, խորհրդային իշխանութեան պարտադրեց իր կամքը — Սիւնիքի կցումը Հայաստանին:

Հայաստանի առաջին խորհրդայնացումից յետոյ, գրաւելով եւ ամբողջացնելով հայկական լեռնաշխարհը՝ ես ստեղծեցի ինքնավար Սիւնիքը, որը պիտի հանդիսանար որպէս հողերանական հրահրիչը Հայաստանի Փետրուարեան համաժողովրդական ընդվզումին: Իսկ



Ն Ժ Դ Ե Հ

Երեւանի երկրորդ անկումից յետոյ՝ դա ծառայեց որպէս փրկութեան կամուրջ թրքո-բուլղերի դադանից մազապուրծ եղած հայ մտաւորականութեան համար:

Հայոց պատմութեան ամենապատասխանատու մէկ վայրկեանին, երբ թուրքն ու բուլղերի դադանը կը դաւէին մեր ցեղի գոյութեան դէմ, դա — հերոսական Սիւնիքը — որպէս հեքեաթային տիտան, իր մի բազուկը պահեց իր լեռների վրայ՝ թշնամու դէմ, իսկ միւսը նախախնամարար երկարեց Արաքսի վրայ, որ Արարատեան դաշտէն պոկուած բազմահազար մտաւորական եւ մարտական ընտրանին անվնաս ու անաղէտ անցնի Պարսկաստան:

Այսպէս, այն կորովի զիմադրութիւնը, որին կարմիր բանակը չէր հանդիպած Ռուսաստանում, տեսաւ մեր լեռնաշխարհում, ուր նա տասնեակ հազարներով սպանուածներ, զերիններ, ու մեծաքանակ ուղմական աւար թողեց:

Մի ամբողջ տարի, մեր ժամանակներին գրեթէ անձանօթ դիւցազնութեամբ, Սիւնիքը հեղնեց Մոսկուայի Անդրկովկասեան ուժերը, նրան պատճառելով ծանրածանր կորուստներ, ջղայնութիւն եւ ամօթանք:

Ահա՛ թէ ի՞նչն է պատճառը, որ մինչեւ օրս էլ խորհրդային վարչաձեւի եւ հացի ամէն կարգի եւ երանգի բարեկամները ու գովիչները բանաւոր ու զրաւոր խօսքի թոյն են փսխում իմ հասցէին:

Մենք — ես եւ խորհրդային իշխանութիւնը — հին, կէս մոռացուած թշնամիներ չենք:

Ես էի՛ եւ շարունակում եմ մնալ լենինեան դադափարարանութեան անհաշտ թշնամին:

Մենք միայն զէնքի թշնամիներ չէինք, չէ՛նք: Նմանները շատ շուտ են մոռանում թշնամանքը, եւ երբեմն էլ զինակցում:

Մենք թշնամիներ ենք նա՛եւ քաղաքական դաւանանքով, աշխարհայեցողութեամբ:

Եթէ այսօր դադար են առել զէնքերը, զարնւում են, չափւում դադափարները:

Եւ, որովհետեւ բոլշեւիկները պայքարում մարդկայնութիւն եւ բարոյական չեն ձանաչում — նրան համար չկան իտէալական հակառակորդներ, այլ՝ դասակարգային թշնամիներ միայն — նրանց թուղթէ զրոհները դեռ շարունակւում են եւ պիտի շարունակուեն:

Մեր փոխադարձ թշնամանքը ունի իր երրորդ սնուցիչը — թո՛ւրքը, որի հետ զինակցած կարմիր բանակը երեւաց մեր դէմ, ռազմաճակատներում, Հայաստանում:

Մեր ողբերգութիւնը պայմանաւորուեց Լենինի «Թրքացեղութեամբ» — իմա՛ Բոլշեւիզմի թրքաշնչութեամբ, որ ասել է՝ նրա հայատեցութեամբ:

«Խորհրդ. Ռուսաստանը — ժամանակին կը շեփորէր «Ձանդեղուրի կոմունիստ» հայատառ թերթը — պէտք է պաշտպանի եւ պաշտպանելու է Տանկաստանի ազատագրական շարժումը: Դրա համար էլ Խորհրդ. Ռուսաստանը պէտք է ունենայ մշտական եւ անմիջական կապ Տանկաստանի հետ, որի ֆանապարիք Ձանգեղուրն է, Նախիջեւանի վրայով» (*):

Խորհրդ. իշխանութիւնը, ի մասնաւորի հայ մեծամասնականը զիտէ, զգում է, որ Թրքո-Բոլշեւիկեան զինակցութեամբ հայութեան եւ հայ հայրենիքին հասցրուած չարիքը հեշտութեամբ չի՛ ներուի, չի՛ մոռացուի:

Մոսկուան եւ իր հայանուն գործակալները զիտեն, որ կենսաբանական բարոյականի տէր հայութիւնը չէ կարող ներել նրանց, որոնք օգնութեան ձեռք երկարեցին Թուրքին՝ իր պատմութեան ա-

(*) Թիւ 2, 1920, 20 նոյեմբեր:

մենադժուարին մէկ վայրկեանին, եւ հայոց նորագոյն ողբերգութեան գնով իրականութիւն դարձրին Թրքո-Բոլշեւիզմի հայադատեղբայրակցութիւնը:

Բաբուս, Երրորդ Ինտերնացիոնալի նախաձեռնութեամբ, 1920, Սեպտ. 1—8 գումարուած արեւելեան ժողովուրդների համագումարը եկաւ հաստատելու երեք բան՝

Ա.— Որ Մոսկուայի մէջ կնքուած Թրքո-Սովետ դադանի զինակցութիւնը ստորագրուած էր վերոյիշեալ համագումարից առաջ.

Բ.— Որ Մոսկուան վճռած էր Հայաստանը նուաճել Թուրքիոյ զինակցութեամբ, եւ

Գ.— Որ Մոսկուա՛ն Թուրքերին քաշեց, բերեց Հայաստան:

Մի քանի մէջբերումներ, առնուած այդ համագումարի սղագրուած արձանագրութիւններից, կը հաստատեն խօսքերիս բացարձակ ճշմարտութիւնը.

Զինովիել.— «Դուք զիտէք, ընկերներ՛ր, որ սովետական կառավարութիւնը օգնում է Քեմալին»:

Էնվէր փաշա.— «Ընկերներ՛ր, ես սեղմում եմ այն բոլորի ձեռքը, որոնք մեզ հետ կ'աշխատեն մինչեւ սկսուած կռուի վախճանը...»

Մենք ընդունում ենք, թէ Ատրայէյճանը պատկանում է ատրայէյճանցիներին»:(*)

Իպրահիմ Թալի.— Անդարայի ներկայացուցիչը՝ որը համագումարը Հայաստանի դէմ զրդուելու եւ նախապաշարելու բացայայտ հաշուով ասում է — «Համաշխարհային իմպերիալիզմը իր ձեռքը երկարեց Թուրքիոյ կենսական շնչերակին եւ միանգամայն ուժասպառեց նրան:

Արեւմտեան կապիտալիստները վճռեցին Թուրք զիւղացիութեան դէմ դարձնել իրենց օժանդակողներին — արեւմուտքէն՝ վենիզելիստներին, իսկ արեւելքէն՝ հայ դաշնակներին:

Անատոլիան վճռած է պաշտպանել իր ճակատագիրն ու անկախութիւնը մինչեւ իր դաւակի մահը, որով սովետ Ռուսիոյ կողմից իրեն երկարած բարեկամական ձեռքը նա ընդունում է կատարեալ անկեղծութեամբ»:

Զինովիել.— Համագումարի վերջին նիստում. «Այստեղ յաճախ է լսում Հայաստանի մասին: Գոյութիւն չունի մի եւ անկախ Հայաստան:

Մի կողմից կայ բանուորա-զիւղացիական Հայաստանը, որին մենք եզրայրական ձեռք ենք երկարում, միւս կողմից՝ անիծեալ, դահճական, դաշնակցական, բուրժուական Հայաստանը» (փոթորկային ծափահարութիւններ):

(*) Էնվէրի խօսքը վերաբերում է Զանգեզուրին, որի մեծ մասն այդ ժամանակ գրաւուած էր կարմիր բանակի կողմից:

Իւսուժ Քեմալ, — Թրքո-բոլշեւիկ զինակցութեան ստորագրողը, — այդ միեւնոյն օրերին, Բաքուէն կը հեռագրէր իր կառավարութեան, թէ այլեւս վճռուած է Հայաստանը նուաճել պատերազմով, որի դէպքում նախայարձակ պիտի լինի Թուրքիան, կարմիր բանակին թողնելով՝ Հայաստանը նեղել հիւսիսէն:

Այդ մասին Մոսկուայէն տրուած հրահանգի մանրամասնութիւնները Քեմալը կը հաղորդէ Քեաղիմ Գարապէքիւր փաշային:

Թրքո-սովետ զինակցութիւնը արագ կերպով իր բախտին թողնուած Հայաստանի դէմ դարձնելու նպատակով, այդ օրերին Մոսկուայէն-Բաքու, եւ Բաքուէն-Ղարաբաղ ու Նախիջեւան կ'երթեւեկէին մի շարք դաւադիր զինուորա-քաղաքական թուրք զործակալներ — նախկին ջարդարարներ:

Վերջինները կապ կը պահէին Ատրպէյճանում կենտրոնացած կարմիր բանակի, Ատրպէյճանի յեղկոմի նախագահ՝ Նարիմանովի եւ Հայաստանի ճակատի վրայ զործող թրքական ուժերի զօրահրամանատարութեան հետ:

Մոսկուան այդ ջարդարարների ձեռքով պիտի գրէր մեր հայրենիքի նոր ճակատագիրը՝ եղերական:

Լսենք սրանցից մի քանիսին.

Տոքթ. Նազրւմ. — «Մոսկուայի կառավարութեան ղիմելով՝ օգնութիւն եւ զէնք ուղեցինք»:

Քիւչիւք Թալէաթ. — «Ես յանձնարարեցի Քեաղիմ Գարապէքիւր փաշային, որ բոլշեւիկների հետ շփման մէջ մտնէ: Այդպէս էլ եղաւ»:

Նայիմ Ջեւաթ պէյ. — «1920, Յուլիսին, Գարապէքիւր փաշային ղիմելով, նրա հաւանութիւնը ստացայ:

Երբ Ղարաբաղ հասայ՝ նամակ մը ստացայ: Այդ նամակը ուղղուած էր Ջաւիթ պէյին, որ այդ ատեն Պայազիտ կը գտնուէր: Նամակը կը յանձնարարէր շփման մէջ մտնել նահանջող բոլշեւիկեան ուժերու հետ: Կացութիւնը Պայազիտ հաղորդեցի:

Ասոր վրայ Գարապէքիւր փաշայէն հեռագիր մը ստացայ, որով կը հրամայէր՝ «Նայիմ Ջեւաթ պէյ ինչ կ'ուզէ թող ընէ բոլշեւիկեան նահանջող բանակը(*) Նախիջեւան թող բերէ»:

Գարապէքիւրի այս հրամանին վրայ՝ Նուրի փաշան, թուրք եւ թաթարներից բաղկացած իր ուժերը կը քաշէ Նախիջեւան եւ այսպէսով կը կապուի թրքական Պայազիտի հետ:

Կարմիր բանակը վերստին կը շարժուի Չանգեզուրի դէմ, եւ այսպիսով Հայաստանը կը դրուի երկու կրակների միջեւ:

Օրեր յետոյ՝ միեւնոյն Նայիմ պէյը կը հեռագրէ Գարապէքիւր փաշային — «Ձէնիք եւ ռազմամքերիք առնելով, յառաջացէ՛ք»:

(*) Զանգեզուրէն:

Ջեւարք պէյ.— «Յետոյ շիման մէջ մտայ բոլշեւիկեան հրամանատարութեան հետ :

Գարապէքիբ փաշան՝ Սալիլ փաշային, Նարիման Նարիմանովին եւ բոլշեւիկեան բանակի հրամանատարութեան ուղղեալ երեք նամակներ գրած էր :

Այդ նամակներով բոլշեւիկներուն հետ դործակցութեան անհրաժեշտութիւնը կը ջատագովէր, եւ Սալիլ փաշայի կողմէ կատարուած ծառայութիւններէ համար անոր շնորհակալութիւն կը յայտնէր :

Ասկէ դատ, թնդանօթի, զէնքի եւ սաղմամթերքի փոխադրութեան ատեն, օգտագործելու նպատակաւ, Ատրպէյճանի մէջէն ճամբայ բանալու անհրաժեշտութիւնը պարզող երեք նամակներ ստացայ :

Ապահովեցի, որ Յոստոսին, թրքական եւ բոլշեւիկեան բանակները իրարու միանան :

Յետոյ իմ ստացած հրահանգներու համաձայն, Սալիլ փաշայի հետ աշխատեցայ, որ երկաթուղիով ալ ապահովուի երկու բանակներու միացումը եւ Հայաստանը չկարեւայ ասոր ընդդիմանալ :

Այս նպատակով Մոսկուա գացինք : Էնովէր փաշան արդէն հոն կը գտնուէր» : (*)

Ահա՛ եւ XI կարմիր Բանակի զինուորայեղափոխական խորհրդի անդամ՝ Հեկկերի վկայութիւնը Լենին-Քեմալ զինակցութեան մասին .

«... Չանդեղուրում յիրաւի տեղի է ունեցել մի ամօթալի զէպք, որի համար մենք մեզ չենք դովում : Սօսքս տաճկական զնդի մասին է, որ մենք ուղարկել ենք Չանդեղուրով Քեմալի մօտ :

Այդ ժամանակ ուրիշ ճանապարհ չկար : Գնդին կարգադրուած է եղել անցնել Նախիջևան :

Ո՞վ կարող էր ենթադրել, որ տեղի կ'ունենան զժրախտ զէպքերը կամ թիւրիմացութիւններ, որ թէ ազգաբնակչութիւնը եւ այդ գունդը միմիանց զէմ զէնք կը բարձրացնեն այն էլ կարմիր բանակի անուան տակ : 1921, 15 Փետրուար» :

Թրքո-Սովետ հակահայ դաւի մասին, վերջապէս, վկայելու կանչենք նա՛եւ հայ քաղաքական հոսանքներից մէկին .

«Քողը — Չանդեղուրի եւ Ղարաբաղի ժողովրդին ուղղած իր կոչի մէջ ասում է հայ սոցեալ-դեմոկրատ բանուորական կուսակցութեան կենտրոնական կոմիտէն — քողը պատուուել է եւ մերկանդամ իրողութիւնը հրապարակ է նետուել :

Կեղծիքը բացուել է եւ ցինիկ խարերայութիւնը թաքցնել անկարելի է :

(*) Այս յայտարարութիւնները տրուած են Էնկիւրիի անկախութեան դատարանի առջեւ դատուող հակաֆեմալականների կողմից, 1926ին :

Մայիսեան խառնակութիւնների օրերին հայ բոլշեւիկները չէին հաւատում եւ պրովոկացիա էին համարում այն ուլտիմատում հեռագիրը, որ նոյն խորհրդային դարձած Ատրպէյճանն ուղղել էր Հայաստանի կառավարութեան՝ Ղարաբաղն ու Չանդեզուրը մաքրելու համար հայկական ուժերից. այժմ ոչ միայն Ատրպէյճանն է քրքական եւ ռուսական մեծ ուժեր կենտրոնացնել Ղարաբաղի եւ Չանդեզուրի ուղղութեամբ այլեւ հայ բոլշեւիկ կոչուած տականքները իրանց եռանդուն ծառայութիւնն են մատուցանում օտար ոյժերին:

Առաջ հայ բոլշեւիկները չէին ընդունում եւ աշխատում էին հերքել այդ փաստը, որ ռուսական բոլշեւիզմը զինակցել է դաշնակցել է տաճիկ-թաթարական սլանիսլամիզմի հետ — արեւելքում միացած գործելու համար:

Այժմ ոչ միայն չեն հերքում կամ ուրանում այդ փաստը, այլեւ Բաքուում բուն դրած հայ տականքները, իրանց «Կոմունիստ»ի մէջ, օրն ի բուն ազիտացիա են մղում եւ ուժեր կազմակերպում Հայաստանի դէմ, որպէս պետական անկախ միաւորի, եւ ջերմ փափաք յայտնում Հայաստանի վրայով ֆանապարի հարթել դէպի Անատոլիա եւ կամուրջ ձգել Ատրպէյճանի եւ Տանկաստանի միջեւ:

Հայ դեմոկրատիայի բոլոր թշնամիները խմբուեցին մէկտեղ հայ պետականութեան մահացու հարուած տալու համար:

Ռուսական բոլշեւիզմի եւ քուրճ-քաթարական պանիսլամիզմի մերձարեւելեան նպատակները գուգադիպում եւ համերաշխում են իրար:

Այդ դիւային ծրագիրների իրականացման գոհ է բերում հայ երկիրը:

Այդ իմաստով, հայկական դատին ու ազատագրութեան հաւասար թշնամիներն են ե՛ւ բոլշեւիզմը, ե՛ւ սլանիսլամիզմը:

Բոլշեւիզմը, եւրոպական դեմոկրատիայից կատարելապէս նախատուած ու արհամարհուած, յուսախար՝ փարել է արիւնոռչտ սլանիսլամիզմին եւ նրանից է օգնութիւն աղերսում:

Ապստամբ սլանիսլամիզմը՝ մահուան դատապարտուած միջազգային յաղթանակով հզօրների կողմից, դաւարուելով իր հոգեվարքի ժամերին, յոյսը դրել է ռուսական բոլշեւիզմի վրայ:

Երկուսն էլ պատմութեան չար անէծքի դատավճռին են ենթարկուած:

Ահա՛ սեւ դաւը, ահա՛ դիւային զինակցութիւնը, որի գործակալների կողմից Անդրկովկասում թափուած հակահայ աշխատանքների շնորհիւ, Բաքուում կենտրոնացած XI կարմիր բանակը, մի օր, պիտի շարժուէր Չանդեզուրի դէմ, թրքական ուժերի հետ՝ հարուէն ու հիւսիսէն ռազմազիտական աքցանի մէջ առնելու Հայաստանը:

Ահա՛ հայադաւ զինակցութիւնը՝ թրքօ-բոլշեւիկ վկայութեանց

լոյսի տակ :

Այլ վաւերագրերի եւ վկայութիւնների կարիք կա՞յ : — Չեմ կարծում :

Մեր դաւադրուած հայրենիքի համար ստեղծուած այդ ծանրա-
ծանր պայմանների մէջ թոյլատրելի՞ է հարցնել, թէ Սիւնիքը պիտի
ճառանա՞ր կարմիր բանակի դէմ, թէ ոչ :

— Այո՛, դա վճարար պիտի կարէր քեմալական ուժերի օդ-
նութեան փութացող կարմիր զօրքերի ճամբան, եթէ հաշուի առնելով
ուժերի փոխյարարութիւնը, անգամ համոզուէր, թէ գերազանցա-



պէս անհաւասար այդ կռոււմ իր լեռնոտ բոյնը ամբողջապէս կը վե-
րածուի Լէոնիդասեան մի կիրճի, եւ որպէս նուիրական կտակ ու յի-
շատակ, նա դարերին իր աճիւնը կը թողնի :

Նա պիտի կռուէր եւ կռուեց զիւցաղնարար, որովհետեւ չէր
կարող տկարանալ, երբ իր հայրենիքն էր դաւադրուած :

Նա կռուեց, որովհետեւ թուրքը, երբորդ միջազգայնականի
սաղրանքներով, մահուամբ կը սպառնար Հայաստանին եւ իր անկա-
խութեան :

Եւ, ի՛նչ խօսք, որ նման պայմաններում մի սիւնեցի, մի նոր
Մելիք Ֆրանգիւլի կարող էր տկարանալ, վաճառուել, դաւաճանել :
Սիւնիքը՝ երբե՛ք :

Նա միշտ էլ եղած է հաւատարիմ իր ցեղին — հայոց պատմու-
թի՛ւնը վկայ :

Մի վսեմ փառասիրութեամբ՝ նա պատնէջի վրայ մնաց եւ ա՛յն
օրերին, երբ իր ճակատադրի ղեկավարութիւնը յանձնած էր ինձ :
Փա՛ռք իրեն :

ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԻՒՆՆ

Ի Բ Ր

ՅԱՂԹԱՆԱԿԻ

ԶՕՐՈՅԹ (*)

Եթէ ցայսօր մեր ժողովուրդը հարուածներ է միայն ստանում եւ ողբերգօրէն՝ անկարող է հակահարուածել — դրա պատճառն այն է, որ նա չի ապրում ցեղօրէն:

Անասելիօրէն ճակատագրական եւ անկշռելի է ցեղային ազդակի նշանակութիւնը մի ժողովրդի վերածնունդի, ազգամբողջացման եւ պետականացման դործում:

Գիտե՛նք, հասարակագիտական այդ պարզ ճշմարտութիւնը, սակայն անկարելիութեան աստիճան դժուար է, բառերով — ի՞նչ է ցեղը — հարցի սիրտը շօշափել:

(*) Գ. Նժդեհի մէկ բանախօսութեան սղագրումն է ասիկա, որ լոյս տեսած է գաղափարներու յաջորդականութեամբ միայն, առանց զարգացումի, «ԽՈՒՈՎՔ» իմաստասիրական — գիտական ամսագրին մէջ (Ա. տարի, քիւ 1, 1932, Սոփիա):

Մարդարանութեան ցարդ տուած սահմանումներից եւ ո՛չ մէկն է ընդունելի՝ ինձ համար :

«Յեզ» հասկացողութիւնը սահմանելու համար, բաւական չեն հին եզրերը (տերմին) :

Նրանցով չի կարելի սպառել ցեղի ողջ տարողութիւնը :

Յեզը՝ դիմագծօրէն ազդայինն է, ա՛յն տիպարականը, որով ժողովուրդները տարբերուած են իրարից :

Այո՛, ցեղային դործօնն աւելի՛ բարդ իրողութիւն է, քան ենթադրուած է :

Դժուար է դա սահմանել գիտական լեզուով :

Այստեղ՝ միա՛յն յարաբերական գիտականութեան մասին խօսք կարող է լինել :

Ըստ մեզ — ասենք առանց տեսական խորացումների — ցեղն աւելի՛ հողի է, քան՝ կաւ :

Մեր դարում, մասնաւորապէս, մեր օրերում, ոչինչ այնքան չի՛ տկարացնում ժողովուրդների պայքարունակութեան ոգին, որքան ա՛յն ազիտալի մոլորանքը, թէ իրենց ճակատագիրը բարւոքողը սեփական ճիգերը չեն, այլ ինչ որ՝ արտաքին ուժեր :

Աւելի՛ պարզ :

Մի ժողովուրդ, որն իրեն պէտք եղած ուժն իրենից դուրս է փնտռում — կուրօրէն իր պարտութիւնն ու անկումն է նախապատրաստում :

Հասկանա՛նք, որ ցեղի ուժակշիռն աւելի մեծ է, նրա ներքին տարողութիւնը բիւրարիւր անդամ աւելի՛ հարուստ, քան՝ ժողովրդի :

Ա՛յն ժողովուրդը, որ գիտէ այդ — գիտէ ճշմարտութիւնը. փրկուած է նա :

Հայաստանում ես աւելի բաներ եմ տեսնում, քան հայ ժողովուրդն ու իր օրուան արժէքները :

Հայաստան չի նշանակում երկրամաս եւ ժողովուրդ միայն, ո՛չ, ո՛չ, այնտեղ կայ մի «երրորդը», մի այլ ուժ — ցե՛ղը — առանց որի, փառքի ու մեծութեան աստղերի տակ չի ապրում ու զարգանում ժողովուրդը :

Հայ ցեղը — դա հայ հողն է՝ համակ բոց ու զօրոյթ, որ ասում է անխօս — ես սնում եմ նրանցով, որոնց՝ սնուցանում եմ :

Ե. դարում, կրակի բախար փորձող պարսկականութեան խոփը քարին զարկողը հայոց թարմաշունչ ցեղայնութիւնն էր, որը այսօր կռուի պիտի կանչել Հայաստան թրքութեան եւ ցեղամերժ լենինականութեան դէմ :

Յեզն է, որ մեր մէջ կ'ապրեցնէ կը զօրացնէ Հայաստանը, անդամ, Հայաստանից դուրս :

Յե՛ղն է մեր ապաւէնը :

*
**

Յեզը չի ծերանում, թիկնադարձութիւն չգիտէ եւ չի պարտւում :

Նա ժամանակների վկան է, յաւիտենական հայր, Աստուծոյ գործակիցը :

Յեզն արարիչ է, ժողովուրդը՝ արարած :

Ժողովրդի ուժածին մեքենան է ցեղը եւ նրա ուժակիրը, որն իր մէջ կրում է մի ինչ որ տիեզերական եւ յարուցիչ ուժ :

Դա՛ այն հոգեւոր շաղախն է, առանց որի, ժամանակը հեշտութեամբ է հիւլէացնում ժողովուրդներին :

Ժողովուրդը կարող է եւ շինարար լինել, ցեղի աղդեցութիւնը, սակայն, մի՛շտ էլ ստեղծագործ է :

Այդ իսկ պատճառով, աւելի մշակութունակ է ցեղը :

Երբ չկայ ցեղը՝ ժողովուրդների հոգեւոր անդաստանը աւելի խճուճ է արտադրում, քան ցորեն :

Նուաստախոհ եւ նուաստախօս է ժողովուրդը, ցեղը մի՛շտ էլ թագաւոր է եւ դահլնկէցութիւն չգիտէ :

Հակառակայորդոր է ժողովուրդը — եւ աննուէր ու անփառ. երբ նրա մէջ տկարացած է ցեղի ձայնը :

Յարանուանական է ժողովուրդը — կաթուղիկէ, բողոքական եւայլն — ցեղը մի՛շտ էլ՝ մի՛ է եւ ամբողջական :

Ժողովուրդը ասել է դասակարգ եւ դասակարգային եսականութիւն, ցեղն ընկերային արդարութիւն է եւ հնարաւոր հաւասարութիւն :

Առաջինը կ'առաջանայ դայթ ի դայթ, ցեղը՝ եռադարձ ալիքի սաստկութեամբ :

Մէկը կայականութիւն է, միւսը՝ ուժականութիւն — ցե՛ղը :

Ժողովուրդը՝ դա «Կարսն» է — ցեղը՝ Ղարաքիլիսը : Մինչեւ այս ուղմադաշտը՝ մեր ժողովրդի ճակտին ես աստղեր չտեսայ :

Ժողովուրդը հաշուետես ուղեղ է, ցեղը՝ աւելի սիրտ, որ անհաշիւ կերպով զոհարերել գիտէ :

Միայն ցեղին է տրուած «հարիւրեզեան» զոհարերութիւնը — ամենամեծը :

Ապրել օրը օրին, թե՛ն ու ասեղը ձեռին՝ իր դրութիւնը կարկատելու գործի վրայ — ահա՛ ժողովրդի գորշ առօրեան :

Յեզը, կարկատանումի «ֆաղաֆականութիւն» չգիտէ :

Մի՛շտ էլ ամբոխանալու հակամէտ է ժողովուրդը. ցեղն է, որ միարան եւ լարուած կը պահէ ժողովրդի կամքը :

Յեզը կարող է ժամանակաւորապէս ե՛ւ պարտուել, բայց պարտւողականութիւն չգիտէ :

Նրա մէջ ամէն ինչ նոր է, իսկ նորը հին է՝ խմաստութեամբ չաղախուած :

Նա դիտէ նախատեսել, նախազգալ վտանգը եւ արհամարհել՝ միաժամանակ :

Ժողովուրդը, յաճախ, տարակոյսի եւ վարանումի կը մատնուի, ցեղը բնազդօրէն դիտէ իր կտրելիք ճամբան :

Մինչ ժողովուրդն արդարութիւն կը խնդրէ — ցեղը կը դործադրէ դա :

Ժողովուրդ՝ դա ասել է կշիռ առա՛նց սրի — իրաւունքի անգորութի՛ւն : Յեղը՝ դա սուրն է, յաճախ սուրը, առա՛նց կշռի :

Ժողովուրդը կը խոստանայ, բայց քիչ բան կը տայ, երբ ցեղունակ չէ :

Յեղին, միայն ցեղին է տրուած ժողովրդի ստրկութեան ծանր շղթաները արծիւի թեւերի վերածելու արուեստը : Նա՛ ստրկութեան մէջ իսկ, չի կորցնում իր սրտամական ճամբան : Անցեղաշունչ ժողովրդին տրուած չէ այդ բնազդական կարողութիւնը :

Ժողովուրդը՝ դա հայ հոգու մարտիրոս կողմն է, ցեղը՝ հերոսական :

Ժողովուրդը մեռեալներ կը տայ, ցեղը՝ դիւցազուններ :

Մէկը սիրում է քարշ գալ ծանօթ ճամբաներում, միւսը — ցեղը՝ դժուարակոխ ուղիներ է փնտռում :

Հելլենական քերամալիլը եւ հայկական վարդանակերտը, Մարաթոնը եւ Աւարայրը, սուլկարական Շիպկան եւ մեր Սիւնիքը — ցեղի շունչն է օծել այդ բոլոր ռազմավայրերը :

Ժողովուրդը՝ դա ա՛յն վախկոտն է, որին ուղեցին դործի ուղարկել եւ նա առարկեց — «դուրսն առիւծ կայ» : Յեղն իրենից դուրս առիւծ չի ճանաչում :

Յեղի արեւը կարող է ե՛ւ թեքուել, բայց մայր չի մտնում :

Յե՛ղն է մեր ապաւէնը :



Անասելիօրէն կարեւոր է ցեղի տեսակարար կշիռը :

Ժողովրդի մշտախռով տարերքն է ցեղը :

Ժողովուրդները միայն ցեղի միջոցաւ զլուխ կը հանեն իրենց հոգեւոր ինքնակառուցումը :

Յեղը կազապարիչ ոյժ է :

Ժողովուրդը, մի՛շտ էլ, ցեղի թեւերով — անցեալի եւ ապագայի ուժով է առնում իր թռիչքը :

Երբ ժողովրդի մէջ ցեղը չի շնչում, նա ծալում է արծուի իր թեւերը : Երբ ժողովրդի մէջ արթուն չէ ցեղը — նա տառապում է հոգեւոր ամլութեամբ եւ քաղաքական համլետականութեամբ :

Ո՛չ թէ միայն ներկան, այլև ապագան իր սնունդն ստանում է անցեալից — ցեղից :

Ժողովուրդը ներկան է, ցեղը երէկը, այսօրը եւ վաղը :

Առաջինը յաճախ կլանւում է ներկայով, երկրորդը հանում է մեզ ներկայից եւ ցոյց տալիս անցեալն ու ապագան՝ իտէալ լոյսի տակ :

Արթուն է ցեղը — ասել է՝ ժողովուրդն իր լսողութիւնը տուել է անցեալին, աչքը՝ ապագային : Դա ասել է՝ նրա անցեալը մշտակայ է, իսկ ապագան՝ նախօրօք ապրուած :

Սակայն տկարացա՞ւ ցեղը — ազգն այլևս «մի որդակեր շէնք է, որ ո՛չ մի նեցուկ ունի եւ առաջին իսկ փոթորիկին պիտի կործանուի» :

Յե՛ղն է մեր ապաւէնը :

Յեղն աւելի՛ նրանք են ներկայացնում, որոնք այլևս մեկնած են մեր աշխարհից եւ նրանք, որոնք պիտի դան :

Երբ ժողովուրդը ցեղօրէն կ'ապրի — նրա կեանքում փրկարար դեր կը կատարեն առաւելապէս նրա մեծ մեռելները, որոնց իշխանութիւնը ե՛ւ արդար է, ե՛ւ իմաստուն, ե՛ւ զօրաւոր :

Իսկ ցեղօրէն ապրել — ասել է պատմական յիշողութեամբ վերապրել անցեալ սերունդների կեանքը՝ նրանց ճակատագրին կապելով մերը :

Յեղ ասել է իմաստութիւն, խստարարոյութիւն եւ զօրոյթ :

Դա՛ Հայ Ատլասն է, որ իր ուսերի վրայ հայկականութեան երկինքն է կրում :

Յեղը զօրութեանական հայկականութեան ուկէանն է, մի mare tenebrarum որից սնունդ են առնում Հայ էութեան ծովը, լճակն ու վտակը :

Յեղայնութիւնը — դա արեան միութիւն է, միութիւնը ճակատագրի, դա կրօնն է, լեզուն — դա ուժն է այդ բոլորի, առանց որի կայ եսակենտրոն անհատների ամբոխ, բայց ոչ՝ ազգ :

Ա՛յն, ինչ որ ունինք, որպէս մշակոյթ եւ ազգեցութիւն, ոչինչ է, բազդատմամբ ա՛յն բանի, որ ունի եւ պիտի տայ մեզ ցեղի անըստառ ոգին :

Չկայ ցեղը — կայ ժողովրդի ստորարժէքութեան դիտակցութիւնը, կայ այդ դիտակցութեան դառնութիւնը :

Յեղից են դալիս հայ ղէնքի, բազուկի եւ դրչի բոլոր մեծութիւնները :

Երբ ցեղօրէն կ'ապրենք՝ մենք կ'օգտուենք մեր ցեղին յատուկ հերոսականութիւնից եւ զերազոյն պատուասիրութիւնից, նրա կրօ-

նական բոցալառութիւնից եւ մշակութային խանդից — նրա ո՛ղջ զօրութենականութիւնից :

Մինչ ժողովուրդը միջակութիւններ կը ծնի, ցեղի ինքնայայտութիւնը տեղի կ'ունենայ հերոսների, սուրբերի ու լուսակիրների միջոցաւ :

Երբ ցեղօրէն ենք ապրում — ասել է ներքին, հզօրացուցիչ հազորդակցութեան մէջ ենք անցեալի մեծ առաջնորդների հետ :

Անցեղաշունչ ժողովուրդը կորովի եւ իմաստուն առաջնորդներ չի ունենայ :

Յոյց տուէ՛ք ժողովրդին իր ցեղի արեւ-դէմքը, որ նա ինքնատեսութեամբ բարձրացնէ իր խոնարհ ճակատը : Հէ՛նց սրանում է մըտաւորականութեան, գրականութեան, եթէ կ'ուզէք, նաե՛ւ, յեղափոխական շարժումների դերը :

Անարժէք է գրականութիւնը, եթէ դա ցեղի ողու ինքնայայտութիւնը չէ, եթէ նրա մէջ ցեղի ողին չի ճառագայթում :

Երբ ժողովուրդը մեծ թեւաբախումներ ունի, ասել է՝ ցեղաշունչ է նրա գրականութիւնը — դա նշան է, որ նրա մէջ ցեղն է գործում :

«Ձարթի՛ք փա՛ռք իմ» Ծնորհալիարար պիտի երգէ հայ գրողը, եթէ ուզում է արագացնել փրկարար ցեղացնցումը՝ հայ էութեան մէջ :

Ո՛չ թէ եւրոպականացում, այլ ցեղայնացում, միա՛յն ցեղը կարող է ազգային արժէքները համամարդկայնացնել :

Եւրոպականը պիտի ծառայեցնել որպէս միջոց միայն, մեր սեփականը դրսեւորելու եւ փարթամացնելու համար :

Ժողովուրդն ընդունում է օտար մշակոյթն ազազգայնանալով, ցեղը՝ ազգայնացնում է իր ընդունածը :

Անօգուտ է նմանողութիւնը : Աւելի՛ն՝ դա ազարտում է մեր ցեղայնութիւնը : Ամէն նմանողութիւն ժողովուրդները կը դնեն իրենց անհատականութեան կորուստի զնով :

Երբ արթուն է ցեղը՝ ժողովուրդը տեսնում է իր հոգու անբաւ հարստութիւնները եւ իր գրականութեան միջոցով զանոնք փռում՝ աշխարհի առջեւ :

Յեղօրէն շապրող ժողովրդի համար՝ համբ է, անգամ, իր հայրենի աշխարհը : Նմա՛նը կարող է խորթանալ, անգամ, իր հարազատ միջավայրում :

Յե՛ղն է մեր ապաւէնը :

Յեղակրօնութի՛ւն — ահա՛ համազարմանը, առանց որի հայութիւնը կը մնայ մարդկութեան քաղաքականապէս ամենատնանկ մասը :

Յեղակրօնութի՛ւն, դա անցելապաշտութիւն չէ, ո՛չ էլ հոգե-
ւոր պորտաբուծութիւն, ինչպէս եւ՝ ո՛չ ծոյլ յուսադրութիւն, ոչ էլ՝
մեղկ ապագայապաշտութիւն:

Անցեալի պաշտամունքի եւ ապագայի մեծ յոյսի ստեղծագործ
կենակցութիւնն է դա, որ ժողովրդի հոգուն ամենաչքեղ յղացումներ
է տալիս:

Յեղակրօնն է նա, ո՛վ ապրում է ցեղօրէն՝ ցեղի կեանքով եւ
ցեղի համար:

Յեղակրօնութեամբ պիտի փարատել մեր ժողովրդի ներքին
տկարութիւնները:

Յեղապաշտութեան կրակով պիտի մոխրացնել հնօտինն ու սը-
նօտինը՝ մեր մտաւորականութեան կեանքում:

Յեղայնութի՛ւն — դա՛ է այն շողախը, որ սերունդներին այն-
պէս է իրար կապում, ինչպէս կիրը հոյակապ շէնքի քարերը:

Երբ ցեղակրօն է ժողովուրդը — նրա սակաւաթուութիւնը դառ-
նում է երկրորդական:

Ժողովրդի համար իր խաւերի միջեւ եղած ցեղային յողակա-
պութեան սերտութի՛ւնն է էականը:

Յեղն է ներգործօնացնում ժողովուրդը, նա է տալիս ներգոր-
ծօն մարդը — նախակարապետը ցեղային դերմարդու:

Ահա՛, թէ ինչո՛ւ եմ ասում — ցեղակրօնութեան ճամբով՝ դէ-
պի քաղաքական փրկարար միակրօնութիւն:

Մեր մտաւորականութեան է մնում աշխատել, որ ցեղակրօնու-
թիւնը դառնայ արդի հայ հոգու երբեակ ձեւերը՝ — նրա մտածու-
մը, զգացումը եւ կամքը, մասնաւորապէ՛ս կամքը:

Յեղի գերադօր կամքը — ահա՛ ժողովրդի փրկութեան լծակը:

Յե՛ղն է մեր ապաւէնը:

Մինչ հայը իր ցեղի մէջ մարդկայնութիւն, թուրքն իր հո-
գում՝ դայլութիւն է մշակում:

Այդ իսկ պատճառով թուրքի մօտ ատելութիւնն աւելի՛ հա-
րուստ զինարան ունի, հայու մօտ՝ սէրը:

Թուրքը՝ դա ի՞ժն է, որ դեռ իր մօր արգանդում զինուած է
թոյնով:

Նրան՝ մի յանցանք ներել, ասել է՝ երկու նորերը արտօնել:

Մեր ժողովրդի համար թուրքն անպարտելի է, ցեղի՛ համար
արհամարհելի:

Թուրքը դեռ ծանօթ չէ մեր ցեղի բազուկի ուժին մինչեւ հի-



Զօր. Անդրանիկի յուշարձանը Ռւնան գիւղին մէջ, Հայաստան

մա նա գործ ունեցաւ մեր ժողովրդի, բայց, գրեթէ երբե՛ք՝ ցե-
ցի հետ :

Նրա գէնքի յաջողութիւնը սեփական ուժի լիութիւնից չէր,
այլ՝ մեր դիմադրութեան պակասից :

Ժողովուրդը կարող է ե՛ւ մոռանալ թրքութեան մեզ հասցը-
րած չարիքները, ցեղը՝ չի ների :

Յեղօրէ՛ն, ցեղօրէ՛ն ապրենք, որպէսզի սրտով մեծ եւ զօրա-
ւոր Վարդաններն ու Վահանները անպակաս լինեն Հայոց Աշխար-
հում :

Յեղն է ժողովրդի հոգեւոր զինարանը. նախ այնտեղից առ-
նենք մեր սպառազինութիւնը՝ թրքութեան դէմ :

Երբ ցեղն է գործում՝ Գարահիսարցի մի հիւսն դառնում է
Անդրանիկ, եւ Սեբաստացի մի շինական՝ Մուրաա :

Երբ ցեղօրէն կ'ապրենք՝ ամէն մի հայ զոհի փոխարէն աշխարհ
կը դան երկու նոր վրիժակներ : Յեղն է որ ժողովրդի կրօնքին տակ
վրէժխնդրութեան հիգրան կ'ապրեցնէ :

Յեղն է, որ ժողովրդի սուրը սրել կը տայ իր նահատակների
գերեզմանաքարի վրայ՝ դայն աւելի՛ եւս հատու, դարհուրելի եւ յաղ-
թական դարձնելու համար :

Յեղը՝ դա ժողովրդի սրտին նստած շանթակիր ամսն է :

Յե՛ղն է մեր ապուէնը :

*
**

Որքան տիրական է ցեղի ազդեցութիւնը ժողովրդի կեանքում,
այնքան հեշտ է ինքնապաշտպանում վերջինս :

Ժողովուրդը անճղնութիւն է, ցեղը՝ մտրակող կամք :

Ժողովուրդը դպիրներ է ծնում, ցեղը՝ մարգարէներ :

Ժողովուրդը նահանջելու տրամադիր զինուորն է, ցեղը՝ միշտ
էլ Վահագն :

Յեղն արիութիւն է, նաե՛ւ արիապաշտութիւն. հասկնալի է,
թէ ինչո՞ւ հեթանոս հայութեան իմաստութիւնը Վահագնին նուիրած
էր բոլոր ամիսների 27րդ օրը :

Խաղաղութեան ժամանակ, դուցէ եւ կարելի է ապրել առանց
ցեղի, վտանգի ժամանակ՝ երբե՛ք :

Յեղը՝ դա ճակատամարտերում ճերմկած հազարավէրք զօրա-
վարն է, որ միշտ էլ կ'երիտասարդանայ վտանգների ժամանակ :

Ժողովրդի ուղեցոյցն է ցեղը. նա իր մեծ մեռելների գերեզ-
մաններով է նշանադրում ժողովրդի վրկութեան ճամբան :

Յեղը՝ դա աստուածանման Հայկն է, որն իր եռացող դայ-
րոյթը եռաթեւեան աղեղի մէջ դրած՝ թշնամուն կ'ուղղէ :

Դա ա՛յն խորախորհուրդ ուժն է, որ Նպատ Լերան վրայ լարուած պահեց Մեծ Պարթևի երկնարարձ բազուկները, մինչև որ հայերը յաղթեցին:

Դա հայ սպարապետի հպարտանքն է, որ սաստեց թշնամուն՝ «եթէ հարուածը իմն է՝ չի փրկուի»:

Յեզն է մեր ապաւէնը:

Զախէն աջ

- 1) Գ. Նժդեհ
- 2) Դաւթեան
- 3) Գ. Բալայեան
- 4) Մ. Սայրահեան



Այս կամ այն ցեղը մօտաւոր ճշդութեամբ գիմագծելու համար՝ նրան պիտի գիտել իր հոգու հայելիի՝ իր կրօնի մէջ, որովհետև ցեղի մօտաւոր ինքնայայտութիւնը հնարաւոր է միայն իր աստուածների միջոցով:

Իր մտարարոյական զարգացման չափով, ցեղն իր կրօնի մէջ դնում է իր հոգերանական դժերը, իր աշխարհազգացութիւնը, իր բնազանցական էութիւնը:

Հայը լինելիական է, — հաստատում է հայոց հեթանոս կրօնը: Լինելիական է հայը — ահա՛, ակն ու ազրիւրը մեր մեծ Յոյսի եւ Զօրոյթի: Այս է, որ յուրախութիւն թուրքի դեռ չի գիտակցում հայ մտաւորականութիւնը իր մեծամասնութեան մէջ:

— Պիտի՛ մեռնի անհատը, որ ապրի դասակարգը, պատգամում է մեծամասնականութիւնը:

— Մեռի՛ր դասակարգ, որ ապրի ազգը, ասում է Փաշականու-
թիւնը:

— Թո՛ղ մեռնեն երկուսն էլ՝ անհատ քէ դասակարգ, որ ապրի
ցեղը, ասում է հիթլերականութիւնը:

Տեսնում էք, որ Հեգէլի, Ֆիխտէի, Նիցչէի յաւիտենականի
փիլիսոփայութեամբ թրծուած Գերմանիան է, որ ճգնում է ոտքի հա-
նել ցեղը:

Իսկ հա՞յը — աւա՛ղ, հայ մտաւորականութիւնը ցեղահաղորդ
չէ ե՛ւ այսօր: Նա ծանօթ չէ իր ցեղի հոգու կարելիութիւններին եւ
այդ իսկ պատճառով, շարունակում է կառչած մնալ իր վախ ժողո-
վրդասիրութեան՝ առանց օգտուել կարողանալու իր ցեղի դորոյթից:
Նա շարունակում է մնալ քաղաքականապէս սնանկացած մի ժողովրդի
անզօր մտաւորականութիւնը, երբ պատմական վայրկեանը նրանից
պահանջում է լինել ցեղի ընտրանին:

Յեղերի դօտեմարտ կայ այսօր, — ոչի՛նչ են ժողովուրդները —
աննախընթաց դօտեմա՛րտ, որին չմասնակցել սեփական արիւնով —
նշան է պատմական փոքրոգութեան: Դա նշան է, որ հայ մտաւորա-
կանութիւնը դեռեւս տէր չէ եղերաբար ապրուած մի նոր իմաստասի-
րութեան, որ նա օտար է իմաստասիրական հերոսութեան, ինչպէս եւ
անծանօթ՝ հայ ճակատագրի ճշմարիտ իմաստասիրութեան:

Այսօրը՝ նո՛ր օր է — հասկանա՛նք այդ, եւ այն՝ որ հայ մտա-
ւորականութիւնը երբե՛ք չի ունեցել աւելի մեծ եւ պատասխանատու
դեր:

Վայրկեանը, որ աւելի՛ քան ճակատագրական է, պահանջում է
նախ՝ հերոսական բարոյականութեան եւ մտծումի. ապա՝ մեծազոր-
ծութեան եւ ինքնողջակիզումի ընդունակ մի մտաւորականութիւն:

— Գերազանցի՛ր եւ պիտի յաղթե՛ս, ասում է աշխարհն ազգե-
րին: Եւ հայը միայն ցեղակրօնութեամբ կարող է գերազանց հանդի-
սանալ, որովհետեւ, զիտենք՝ հրաշունչ ցեղայնութիւնն է նրա էութեան
հիմնական կշռոյթը:

Յե՛ղն է մեր ապաւէնը:

*
**

Ժողովուրդը գործում է, ցե՛ղն է, սակայն, իրականացնողը:
Բաւական չէ գործե՛լը, իրականացնել է պէտք, հասկանա՛նք այդ:
Հասկանա՛նք նաեւ, որ բոլոր տեսակի յաղթանակներ տարւում են
նախ՝ ցեղի ոգու քիմիարանում:

Ժողովուրդը կարող է եւ յարմարուել իր նուաստ վիճակին, ցե-
ղի համար, սակայն, անդարձ չեն աշխարհի վճիռները:

Նրա համար անսրբագրելի չէ Լոզանը, հաւատացէ՛ք:

Երբե՛ք, ա՛հ, երբե՛ք հայ անուան շուրջն ա՛յնքան ամօթանք չէր կուտակուել որքան վերջին տասնամեակի ընթացքում :

Եւ հէնց սրանումն է մեր դրութեան փշեպսակը, ինչպէս եւ մեր փրկութեան գրաւականը՝ միաժամանակ :

Չէ՞ որ դերման ցեղի քաղաքական միութեան գիտակցութիւնը ծնունդ առաւ եւ դարգացաւ տառապանքի եւ նուաստութեան դպրոցում :

Յե՛ղն է ժողովրդի հողեւոր սակեփօխը :

Այսօրը՝ նո՛ր օր է — ո՛վ գիտէ այդ՝ գիտէ փրկարար ճշմարտութիւնը :

Այսօր, երբ մեր հայրենիքում կարմիր դերեզմանափորները հայոց ցեղն ու աստուածն են թաղում, եւ նրանց բրիչների ձայնն արձագանգում է խորհրդային դժից դուրս, մեր այս վշտաշունչ օրերին, երբ թուրքը՝ Լոզանից ձեռք բերած անպատժութեան արտօնագիրը ծոցը՝ բաց ճակատ չրջում է արևի տակ եւ իր եաթաղանից մազապուրծ հայութեան ոչնչացումը սրտճում — այս մեղ համար անփառունակ օրերին, երբ շարագուշակ բուերն են հսկում մեր հաւաքական ճակատագրին — թո՛ղ ցեղակրօնութեան խօսքը հնչէ որպէս կազմուրիչ կանչ :

Չէ՛, չէ՛, Մասիսը — հայոց ցեղայնութեան հրարուխը — դեռ չէ շիջած . նո՛ր, մենք նո՛ր ցեղաշարժերի կը սպասենք՝ մեր արեան մէջ զգալով ներկայութիւնը անցեալի եւ վաղուան յաղթական հայութեան : Մենք ասում ենք — մի՛շտ էլ արդար է, որ մեր կեանքում օրէնսդրէ եւ առաջնորդէ ցեղը եւ ո՛չ թէ ժողովուրդը :

— Արթնցա՞ւ ցեղը՝ մենք վերստին կը բռնենք յաւիտենականութեան ձեռքը եւ կռուի կը կանչենք անարդար ժամանակը :

Եւ կը յաղթանակենք, քանզի ցեղի աստուածները — Հայկն ու Վահագն — սխտի բարձրացնեն շանթընկէց մեր բազուկը եւ վարեն նրա հարուածները :

Յե՛ղն է մեր ապաւէնը :

Ստորեւ կ'արտասուենք հատուած մը՝ մեծանուն ԳԱՐԵԳԻՆ ՆՃԴԵՀԻ կողմէ հայ երիտասարդութեան ուղղուած և այլեւս կտակի մը համազօր մէկ պատգամէն.

«Հոգեպէս ծոյլերն են ստեղծած դժուարին ու անկարելի խօսքերը: Քոյր ու եղբայր են չկարենալն ու չկարողանալը: Հագարամդոն նամբորդութիւնն ըսկսում է մի հատիկ ֆայլով: Զկայ անկարելին, երբ կայ գօրեղ ու վնասկան կամֆր: Գիտցի՛ր, եղել են կամֆի հսկաներ, որոնք առաջարկել են Ադեֆսանդր Մակեդոնացուն՝ իր արձանը կերտել Աթոս լեռը տաշելով:

«Թագաւորը նա՛ է, ով կարող է:

«Ես ուզում եմ, որ դու լինես Թագաւոր սերունդ:

«Քանի դեռ գետափին ես — տկար ես: Անցա՞ր — կեսար ես:

«Անցի՛ր հայ երիտասարդութիւն, անցի՛ր Ռուբիկոնը, որի հանդիպակաց ափին քեզ յաղթութեան դափնին է սպասում:

«Յաղթութեան ու պարտութեան միջեւ ամբողջ պետութիւններ կան», ասել է Բռնապետը:

«Քո վաղուան յաղթանակի և պարտութեան միջեւ հայ ժողովրդի լինել — չլինելու հարցը կայ, հա՛յ երիտասարդութիւն:

«Ահա՛ քէ ինչու քեզ պէտք է յաղթել, քեզ պէտք է յաղթանակի լուսապսակ ստեղծել քո ժողովրդի անուան ու նակատի շուրջը:

«Իսկ դրա համար քեզ պէտք է լինել աւելի քան հայ և Մարդ»:



Երբորդ մաս

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻՍՈՆ ԱՐԾՈՆՆԵՐ

Միսոնը հայտնի է իր հարուստ պատմությամբ և հարուստ մշակույթով։ Այս օրերին միսոնը արժանանում է նոր հարգանքների և հարգանքների։ Միսոնը հայտնի է իր հարուստ պատմությամբ և հարուստ մշակույթով։ Այս օրերին միսոնը արժանանում է նոր հարգանքների և հարգանքների։



ԶԱՆԳԵԶՈՒՐ

Մարտի 1-ին, 2024 թվականի հարգելի օրը։

Յետագայ էջերուն մեջ կու տանք Նժդեհի մասին գրութիւններ:

Այդ գրութիւնները ստորագրողները եղած են իրեն գործակիցներ, Զանգեզուրի քե Արտահայաստանի մեջ:

Նժդեհը կը ներկայացուի որպէս զինուորական, հոետոր եւ գաղափարախօս: Այս բացատրողական - վերլուծական էջերով լաւագոյնս կը ներկայացուի Նժդեհը:

Ս Ի Մ Ո Ն Վ Ի Ր Ա Ց Ե Ա Ն

Սիմոն Վրացեան՝ բուն անունով Սիմոն Գրուզինեան՝ ծնած է Նախիջեանի մօտ Մեծ Սալան գիւղը: Աւարտած է Գէորգեան հեմարանը ապա իր ուսումը շարունակած է Պետերբուրգի մէջ: Պատանի՝ արձանագրուած է Հ. Յ. Դաշնակցութեան Նախիջեանի առաջին խումբին: Աշակերտական շրջանին խմբագրած է «Աշակերտական Սիրտ» պարբերաբերքը: Մոսկուայի մէջ հրատարակած է՝ «Պսակ» անուն ժողովածուն: Մասնակցած է 1914ին գումարուած՝ Հ. Յ. Դաշնակցութեան է. Ընդհանուր ժողովին: Եղած է կամաւորական շարժման մէջ: Հանրապետութեան օրով՝ եղած է վարչապետ իսկ Փետրուարեան Ապստամբութեան շրջանին՝ Փրկութեան կոմիտէի նախագահ: Խմբագրած է «Վէմ» պարբերագիրքը եւ «Հայրենիք» տարեգիրքը: Աշխատակցած է «Գրօշակ»ի, «Հայրենիք»ի եւ հրատարակած է շարք մը գիրքեր, որոնց կարգին «Հայաստանի Հանրապետութիւնը» եւ «Կեանքի Ուղիներով» (6 հատոր):

Վարած է բազմաթիւ պատասխանատու պաշտօններ: Կարելի չէ քանի մը սողով ամփոփել իր բեղուն կեանքը:



Զ Ա Ն Գ Ե Զ Ո Ւ Ր

Ատրպէյճանի եւ տաճիկների ոտնձգութիւնների դէմ մղուած կռոււմ՝ Զանգեզուրի հայ գիւղացիութիւնը իր դէմ է ունենում նաեւ իր կողքին ապրող թուրք տարրը: Վերջինս բնազդական ձգտում է ունեցել դէպի իր կրօնակից ատրպէյճանցիները եւ կռիւների ժամանակ Ատրպէյճանը աշխատել է օգտագործել նրանց՝ թիկունքում առաջացնելով խռովութիւններ եւ դաւադրութիւններ: Զանգեզուրցի հայը իր վարած ինքնապաշտպանողական կռիւներում միշտ զգացել է իր թիկունքն անապահով: Այս հանգամանքը ստիպել է նրան ծայրայեղ միջոցների դիմել: Զանգեզուրի թուրք ժողովուրդը լոյսալ ու խաղաղ պահէլու մի շարք անյաջող փորձերից յետոյ, նա դիմել է զէնդազի ձորի թրքական գիւղերը, որոնց բնակչութիւնը հեռանում է Նախիջեանի շրջանը: Դեկտ. 1ին ընդհարում է տեղի ունենում հայերի եւ Գեղուայ ձորի թուրքերի միջեւ, թուրք գիւղացիութիւնը

դադարում է Նախիջևան: 1920 թ. Յունուար 19ին, դափանցիները յարձակում եւ գրաւում են Բարդուշատի շրջանի մօտ 27 գիւղերը, իսկ զանգեղուրցիները մաքրում են նաեւ սահմանակից Հաքեարիի շրջանը: Թուրք գիւղացիները քաշւում են դէպի Զիրբայէլի կողմերը: Ի պատասխան այս գործողութիւնների, Նախիջևանի եւ Օրդուբատի թուրքերը յարձակում են Գողթնի հայ գիւղերի վրայ եւ Դեկտեմբեր 25ին աւերի ու թալանի են մատնում շէն ու հարուստ վերին եւ Ներքին Ազուլիսները եւ ամբողջ հայ բնակչութիւնը սրի քաշում: Գողթնի աւերը առաջ է բերում զանգեղուրցիների կողմից հակայարձակում. 1920 թ. Մարտի 20ին դափանցիք անցնում են աւելի քան 12.500 ոտնաչափ բարձր Ղափուջուղը եւ յարձակում Օրդուբատի շրջանի վրայ: Օգնութեան են հասնում Նախիջևանի թուրքերը, չորս թնդանօթով: Տեղի է ունենում կատաղի կռիւ: Թուրքերը պարտութիւն են կրում: Ղափանցիք գրաւում են եւ հողին հաւասարեցնում 14 գիւղեր: Այդ միջոցին, հակառակ կողմից, ատրպէյճանցի զօրամասերը Պրինց Ղաջարի հրամանատարութեան տակ յարձակւում են Ղափանի վրայ եւ պաշարում Զէյվա գիւղը: Օրդուբատից վերադարձած զափանցիք, զանգեղուրցիների օգնութեամբ, Մարտի 23ին ջարդում են Պրինց Ղաջարի ուժերը եւ շարունակելով արշաւանքը՝ մաքրում են Բարդուշատի շրջանը 80ից աւելի գիւղերից: Այսպիսով, Չանգեղուրի համարեա ամբողջ թուրք ազգաբնակչութիւնը բռնի միջոցներով հեռացւում է իր բնակավայրերից եւ մեծ մասամբ տեղաւորւում է Նախիջևանի եւ Ատրպէյճանի զանազան շրջանների նախկին հայ գիւղերում:

Այս գործողութիւնների մեծ մասը կատարւում էին զնդ. Գ. Նժդեհի ղեկավարութեամբ: Նա կարողացել էր ձեռք բերել լայն ժողովրդականութիւն. կապել իր հետ ժողովրդի համակրանքը եւ կազմակերպել շրջանի մարտական ուժերը: Նա անընդհատ պտրտում էր գիւղից գիւղ եւ, շնորհիւ իր աչքի ընկնող եռանդի, կազմակերպչական շնորհքի եւ խօսքի ազդեցութեան կարողանում է ոգեւորել բրնակչութիւնը եւ բարձր պահել նրա դիմադրական ոգին: Չանգեղուրի գիւղերը զինուած ուժերի քանակի համեմատ բաժանուած էին զօրաշրջանների, որոնց գլխին վաչտասպետներ՝ տեղական հմուտ կրօնականներից: Մի քանի վաչտեր, կռուի ժամանակ, գործում էին ճակատապետի հրամանատարութեամբ: Բոլոր վաչտերը կապուած էին իրար հետ յանձին Նժդեհի, որ 1920 թ. Օգոստոս 25ին Ղափանի կաւարտ գիւղի եկեղեցում օժւում է սպարապետ, մէջքը կապում է կարմիր գօտին եւ յայտարարւում Չանգեղուրի զինուած ուժերի ընդհանուր հրամանատար:

ՌՈՒԲԷՆ ԴԱՐԲԻՆԵԱՆ

Ռուբէն Դարբինեան, բուն անունով Արտաշէս Զիլինկարեան, ծնած է 23 Յունուար 1883ին, Ջաւախքի Ախլալաք գիւղաքաղաքին մէջ:

Նախնական եւ միջնակարգ ուսումը ստացած է ուսական դպրոցներու մէջ, իսկ բարձրագոյն ուսումը՝ Մոսկուայի, Հայտելպերկի եւ Պերլինի համալսարաններուն մէջ, հետեւելով իրաւագիտութեան, գրականութեան, տընտեսագիտութեան եւ իմաստասիրութեան:

Քսան տարեկանէն սկսեալ կը նուիրուի գործօն աշխատանքի՝ հայ կեանքէն ներս: Կ'աշխատակցի Թիֆլիսի «Մշակ»ին (1902) եւ «Մուրճ»ին (1903):

1905ական բուսականներուն, հեռանալով ուսական յեղափոխական շրջանակներէ, կը մտնէ Հ. Յ. Գաշնակցութեան շարքերը:

Իբրեւ խմբագիր վարած է Պաֆուի «Արեւ» (1915), «Գործ» ամսագիրը (1917), Երեւանի «Յատաջ» (1919-20) բերրբերը: Աշխատակցած է Պոլսոյ «Ազատամարտ»ին:


Հայաստանի Հանրապետութեան շրջանին, վարչապետ Ա. Խատիսեանի օրով կը նշանակուի դատական նախարար:

Հայաստանի խորհրդայնացումով, բազմաճակատներու կարգին ինքն ալ կը ձեռքակալուի, Փետրուարեան ապստամբութեան շնորհիւ կ'ազատի եւ Երեւանի բուշուիկներու կողմէ գրաւոււմէն ետք կ'անցնի արտասահման:

1922ին կը կանչուի Մ. Նահանգներու «Հայրենիք» օրաթերթի խմբագրութեան: Ինք կ'ըլլայ նախաձեռնողը «Հայրենիք Ամսագրի», ինչպէս նաեւ «Հայրենիք Ուիլիսի»ի եւ «Արմինիըն Ռըւիու»ի հրատարակութեան:

2 Յուլիս 1959ին Տիբրոյիքի մէջ կատարուեցաւ յորելեանական հանդէս մը, իր հանրային ու հրապարակագրական գործունէութեան 50ամեակին առթիւ:

Մ. Նահանգներու հայկական գաղութէն ներս իր գործունէութեամբ պատմական դեր մը կատարած է Ռ. Դարբինեան:



Ն Ժ Դ Ե Լ

Զինուորական բացառիկ կարողութիւններով օժտուած մեր նը-
շանաւոր յեղափոխական առաջնորդներէն Նժդեհն էր միայն, որ հոն-
տորական տաղանդ ունէր: Տաղանդ մը, որով ան ընդունակ էր խան-
դավառել, նոյնիսկ հիփնոսացնել բազմութիւնները:

Իր զինուորական փայլուն կարողութիւնները Նժդեհ անվիճելի
կերպով երեւան բերաւ Զանգեզուրի մէջ, ուր իր փառաթիւ ժողովրդ-
դական զօրախումբերով յաջողեցաւ հերոսական դիմադրութիւն ցոյց
տալ ներխուժող սովետական կանոնաւոր բանակին: Ու եթէ այսօր
Զանգեզուրը Հայաստանի եւ ոչ թէ Ատրպէյճանի մաս կը կազմէ, ա-
տիկա շատ կարեւոր չափով մը մենք պարտական ենք Նժդեհի զին-
ուորական տաղանդին, ինչպէս ե՛լ անոր քաղաքական սուր իրատե-
սութեան:

Իսկ իր հռետորական բացառիկ տաղանդին անվիճելի ապացոյցը
Նժդեհ տուաւ Ամերիկայի մէջ, ուր իր գեղեցիկ ու խանդավառող ե-
լոյթներով հմայեց ոչ միայն մեր հին սերունդը, որ իր լեզուն շատ
լաւ կը հասկնար, այլե՛ւ այս երկրի մէջ ծնած-մեծցած օտարախօս
մեր նոր սերունդը: Ո՞վ չի գիտեր, որ մեր այս հեռաւոր գաղութին
մէջ իր կատարած ամենամեծ դործը եղաւ ստեղծումը Յեղակրօն Ուխ-
տերու երիտասարդաց կազմակերպութեան, որուն անունը վերջէն վե-
րածուեցաւ Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան՝ աւելորդ թիւրի-
մացութիւններու եւ չարախօսութիւններու տեղի չտալու համար:

Ատիկա իրապէս հրաշքի պէս բան մըն էր, եթէ նկատի ունե-
նանք, որ զօր. Գարեգին Նժդեհը անգլերէն չէր գիտեր եւ այսու-
հանդերձ կարողացաւ իր հիփնոսացնող խօսքերով ու հմայիչ անձնա-
ւորութեամբ խանդավառել մեր անգլիախօս պատանիներն ու երի-
տասարդները եւ զանոնք ի մի բերել Հայկական Եռագոյն դրօշակին
տակ:

Ճիշդ է, թէ մեր անգլերէն շաբաթաթերթը^(*) որոշ չափով նա-
խապատրաստական դործ կատարած էր արդէն եւ լայնօրէն կ'օժան-

(*) «Հայրենիք Ուիլի»:

դակէր Նժդեհին՝ յիտմին հասկնալի դարձնելով անոր քարոզած դա-
դափարները, ինչպէս ե՛ւ մեր կուսակցութեան նախատակները: Սա-
կայն, առանց Նժդեհի ներշնչած ոգեւորութեան, առանց անոր մղիչ
ուժին, առանց անոր առինքնող անձին հմայիչ ազդեցութեան, դժուար
թէ ամերիկահայ մեր նոր սերունդը կարողանար կազմակերպուիլ
այնքա՛ն կարճ ժամանակի մէջ:

*
*
*

Նժդեհ գեղապաշտ էր, բայց ոչ Մուսոլինիի կամ Հիթլերի յար-
ձակողական ու ծաւալողական իմաստով: Նժդեհին գեղապաշտութիւ-
նը ուրիշ բան չէր, բայց եթէ պարզապէս հայ ազգի, հայ հայրենիքի
մոլեգին պաշտամունքը, որ պաշտպանողական բնոյթ ունէր: Ուրիշ
կերպ չէր ալ կրնար ըլլալ պաշտամունքը՝ հայու նման փոքր եւ ամէն
կողմէ անիրաւուած ազգի մը դաւկին պաշտամունքը իր գեղին հան-
դէպ: Ու եթէ երբեմն Նժդեհ խօսեով Փաշական ծայրայեղութիւննե-
րու մէջ կը մտնէր, այդ ալ պէտք է վերագրել իր կատաղի հակա-
բողեւեղութեան, որուն դէմ կը կարծէր թէ պայքարի լաւագոյն կեր-
պը Փաշականութիւնն է:

Սակայն, Նժդեհ իր այդ ծայրայեղութիւններու մէջ ալ ինքնա-
տիպ էր: Իր Սեւ Շապիկաւորներու շարժումը Չանդեղուրի մէջ ան
սկսած էր Մուսոլինիէն բաւական առաջ եւ անկէ կատարելապէս ան-
կախ:

Նժդեհ պարզապէս մեծ հայրենասէր մըն էր, ինչ որ ե՛ւ դոր-
ծով ե՛ւ խօսքով ցոյց տուաւ իր ամբողջ կեանքի ընթացքին ու մաս-
նաւորապէս Չանդեղուրի եւ Ամերիկայի մէջ: Ու իբրեւ այդպիսիին է,
որ ամերիկահայ երիտասարդութիւնը իր խորին յարգանքի տուրքը
կու տայ այսօր՝ Հայաստան քէմփին մէջ կանգնեցնելով իր կիսան-
դրին:

Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ

Հ Ա Մ Ա Ս Ե Ղ



Համաստեղ, բուն անունով Համբարձում կելենեան, ծնած է 1895ին, հարբերդի Փերչենն գիւղը: Գիւղական նախակրթութենէն ետք, կը յաճախէ Մեգիրէի կեդրոնական վարժարանը, որուն ընթացքը կ'աւարտէ 1911ին: Տակաւին ուսանող՝ կը կատարէ գրական իր առաջին փորձերը, գրելով ոտանաւորներ: Տարի մը ուսուցչութիւն ընելէ ետք, 1913ին կը մեկնի Ամերիկա:

Առաջին անգամ իրմէ բանաստեղծութիւն մը կը հրատարակուի 1917ին, «Հայրենիք» օրաթերթին մէջ: Ապա կանոնաւորաբար կ'աշխատակցի նախ «Փիւնիկ» ամսագրին եւ «Հայրենիք» օրաթերթին, ապա՝ ե՛ւ «Հայրենիք» ամսագրին:

Հակառակ այն իրողութեան, որ իր կեանքին մեծագոյն մասը Ամերիկա ապրեցաւ, Համաստեղ երբեք ամերիկացի չդարձաւ, օտար կուտօքու չերկրպագեց եւ այլասերիչ որեւէ ազդեցու-

թեան չենթարկուեցաւ, այլ տարիներուն հետ իր բեղուն գրչով արտադրեց գրական գործեր, միշտ հայկականութեամբ օժուր, հայութեամբ բարախուն:

Համաստեղ 27 Նոյեմբեր 1966ին Քալիֆորնիոյ մէջ, իր յոբելեանական հանդէսին, բեմին վրայ շանթահար կը տապալի, սրտի կաթուածէ, խօսքը բերնին մէջ կէս մնացած:

Նժդեհի Ամերիկա գտնուած շրջանին Համաստեղ մօտէն ֆանչցած է զինք եւ գործակցած: Եղած է նաեւ Յեղակոսն Ուխտերու առաջին վարչականներէն:

Հ Ա Ի Ա Տ Ա Ի Ո Ր Ը

Հաւատքը առաւելապէս զգացական է եւ կը զատէ վերացականը իրականէն. մարդ պէտք է հաւատայ առանց տրամաբանելու, այլապէս կեանքը կը դառնայ բաւիղ: Մարդիկ պէտք է հաւատան չկորսուելու համար այդ բաւիղին մէջ եւ հաւատքը մարդկային ստեղծագործութիւնն է, ոգեկան աշխարհը, ուր կայ Աստուածն ու յաւիտենականութիւնը: Գարեգին Նժդեհ դառն իրականութենէն վեր՝ ոգեկան այդ սաւառնումն ունէր որպէս զինուորական, որպէս կուսակցական գործիչ եւ որպէս մտածող: Այդ բոլորին մէջ դրաւ բանաստեղծական թռիչք, առանց բանաստեղծութիւն գրած ըլլալու: Բայց որ ռիթմ կար իր կեանքին ու ապրումներուն մէջ, ռիթմ-դաշնակութիւն կար Զանգեզուրի լեռներու սլացքով իր խուստուպեան կանչե-

բուն մէջ եւ նոյն ձեւի դաշնակութիւնը դրաւ կուսակցական ազգային աշխատանքներուն մէջ, միշտ թեւաւոր եւ վերացական: Եթէ Ե. դարուն մէջ ապրած ըլլար, կրնար Մաշտոցի աշակերտներէն մէկը ըլլալ՝ իր աւետարանի քարոզչութեամբ զեւերը դէպի Մարերու սահմանները հալածելու: Արդէն ընդունուած բանաձեւերու մարդը չէր Նժդէհ: Իր ինքնուրոյն մտածողութիւնը կը դնէր, եթէ նոյնիսկ բանաստեղծ Սանասորի մասին: Կը խօսէր աֆորիզմներով, խորհուրդ դնելով իր բառերուն մէջ: Անոր մտածողութեան մէջ կար անկեղծ ըլլալու ազնուականութիւն մը:

Հայաստանն ու հայ ժողովուրդն էին անոր հաւատքը, որ մինչեւ բնագանցութիւն տարած էր, իր ուժով եւ նոր դժերով: Հայրենասիրութեան մէջ իր ուժն ունէր, տեսակ մը պառնասական: Այնպէս կը խօսէր, որ կարծես գտած էր հայ ժողովուրդի դոյութեան նախնական կաւը — այդ կաւը ցեղն է եւ ցեղի փիլիսոփայութիւնը: Ծիշդ այնպէս ինչպէս կայ շարժումի փիլիսոփայութիւնը: Մուկեղնօրէն կը հաւատար, որ հայ ժողովուրդը սրահողը այդ էութիւնն է: Եւ այդ շատ կարեւոր շարժումը կու դայ ժառանգարար եւ կը զբաւէ մեր ենթագիտակցական աշխարհը՝ որ դրեթէ պեղուած չէ: Կու դայ մեր աւանդութիւններէն, մեր լեզուէն եւ նոյնիսկ մեր նախապաշարումներէն:

Անտարակոյս ցեղի յղացումը նոր չէր: Առաւելապէս պարտւած ժողովուրդներուն մէջ է, որ կը սկսի այդ կանչը: Այդ կանչը այդ շրջանին գերմանացիներուն համար դարձած էր որոտ, որովհետեւ պարտուած էին համաշխարհային առաջին պատերազմին: Նժդէհի ըմբռնումը գերմանական այդ որոտը չէր, որ յետոյ պատուհաւ դարձաւ: Կար իսկապէս ցեղ մը, որ այդ ուժը դարձուցած էր մշակոյթ եւ բնագանցութիւն: Այդ բնագանցական ուժով ստեղծած էր Եհովան եւ ինք դարձած էր անոր ընտրեալ ժողովուրդը:

*
*

Այդ հաւատքին համար Նժդէհ ինք մինակը աշխատեցաւ եւ այդ աշխատանքին մէջ կրօնական հաւատքի մը նախնականութիւնը կար, երբ հզօր, քաղաքակրթուած ազգեր ցեղային այդ ըմբռնումէն դուրս ելած էին, իսկ կրօնքը վաղուց դադրած էր իր դերը կատարելէ:

Նժդէհին համար ցեղը ընկերարանական կազմութիւն չունէր, դասակարգեր չկային հոն, այլ կար կախարդական ուժ մը թէ՛ հայ ազգատին եւ թէ՛ հայ հարուստին մէջ: Այդ ուժն էր, որ պէտք էր արթնցնել: «Ցեղ» բառը որպէս արմատ բազմազան բառակերտումներու ենթարկած էր, աւելի հիմնաւորելու համար իր հաւատքը — ցեղ, ցեղային, ցեղական, ցեղադրոշմ, ցեղական, ցեղայնօրէն: Եւ օր մըն ալ ձեռքը ուսիս դրաւ եւ խօսեցաւ նոր բառով մը երբ «Հայաստան» քէմփին մէջ հաւատքուած էր մօտ չորս հազար հայութիւն:

— Այս ժողովուրդը պէտք է «ցեղեմ» :

Տկար երկաթն էր որ շիկացնելով, ջրդեղելով, մրճահարելով կ'ուզէր ամրացնել՝ «ցեղելով» : Հաճելի էր անոր մտածումներուն անկեղծութիւնը, որ կու դար իր բառերէն եւ որ կը ցոլար իր շատ բարի աչքերէն, որոնց մէջ դաւանանքի մը ջերմ արտայայտութիւնը կար : Եւ այդ մտածումը իր մէջ պատարագի մը ծիսականութիւնն ունէր : Անոր հաւատքը ունէր այդ ծիսականութիւնը միատիկ ըլլալու աստիճան, ինչպէս կրօնքները եղած են : Այդ հաւատքով ալ դործի մտաւ Ամերիկայի մէջ որպէս ազգային դործիչ եւ կազմակերպեց Ամերիկահայ սերունդը, որ շատ արագ լուծուելու վտանդին ներքեւ էր :

Առհասարակ բարձրորակ էին անոր բանախօսութիւնները : Բանաստեղծական թռիչքներով եւ մանաւանդ ափորիզմներով լեցուն : Ճարտար հոգեւոր էր եւ այդ բոլորը ծիսակատարութեան մը տպաւորութիւնը կը ձգէին, գրեթէ հայերէն չհասկցող ամերիկահայ նոր սերունդին վրայ : Նոյն ծիսական տպաւորութիւնը նաեւ Հայ ժողովուրդին վրայ, որ նոյնպէս չէր կրնար հետեւիլ անոր բարձր հոգեորականութեան եւ սակայն հաւատացին անոր անկեղծութեան, ինչպէս հաւատացին Հայրիկին : Նժդէ՛՛՛ իր բառերը դարձուցած էր խորհուրդ եւ այդ խորհուրդին հետ դրած էր, նոր կազմած կարգերուն մէջ, տեսակ մը ծիսականութիւն մեր հին պատմութենէն բերուած բառերով :

Ինչպէս ըսինք, Նժդէ՛՛՛ին համար շատ հեշտ էր «ցեղ» արմատով նոր բառեր կերտել : Նոր կազմուած նոր սերունդի միութեան անունը մկրտեց Յեղակրօն : Եւ արդէն իրարու քով եկած էին ցեղ եւ կրօնք :

Այդ օրերու կ' կոմիտէն շատ ալ համաձայն չէր այդ նորակերտ բառին եւ սակայն չուզեց իր առարկութիւնը պաշտօնականացնել եւ այդ ձեւով կոտրել թափը Նժդէ՛՛՛ի աշխատանքներուն : Կարեւորը այդ սերունդը կազմակերպելն էր և արդէն շատ չանցած՝ փոխուեցաւ այդ անունը :

Ամերիկահայութիւնը յաճախ ունեցած է կուսակցական, ազգային դործիչներ, որոնք կարեւոր դործեր ըրին, ցրուած ժողովուրդ մը նպատակի մը եւ կամ հայկականութեան շուրջ հաւաքելու : Այդ բոլորին մէջ Նժդէ՛՛՛ իր ինքնուրոյն գիծը ձգեց, մանաւանդ այն շրջանին, երբ շատ խիստ էին կուսակցական պայքարները :

Քարեզին Նժդէ՛՛՛ Ամերիկայէն յետոյ, միացա՞ւ, թէ ստեղծեց Տարօնակախութիւնը, որ սահմանափակ գծերու մէջ մնաց : Նոյն գիծն էր, ցեղային նոյն ոգին, որ Տարօնինն էր :

Հայաստանը Նժդէ՛՛՛ին մէջ հողեկան քարտէս մըն էր, միշտ միաթիկ եւ վերացական :

Ան հաւատաւոր հայրենասէր մըն էր :

ԱՆՏՐԷ ԱՄՈՒՐԵԱՆ

Ա. Ամուրեան, բուն անունով Անտրէ Տէր Օհանեան, ծնած է Թաւրիզ:

Նախակրթութիւնը կը ստանայ Թաւրիզի Արամեան վարժարանը, 1912ին կը սկսի յաճախել Էջմիածնի Գէորգեան ճեմարանը, որուն ընթացքը կ'աւարտէ 1917ին եւ ուսանողներու ներկայացուցիչի հանգամանքով կ'երթայ Պաֆու եւ կը մասնակցի կովկասահայ «Աշակերտական Համագումար»ին:

Թիֆլիսի մէջ, 1918ին, կամաւոր կ'արձանագրուի Տոբո. Զաւրիւի ուսանողական խումբին մէջ: Կը մեկնի Էրզրումի նահատը, ապա կ'անցնի Քէօփրիւ Քէօյ, Գր. Սիւնիի եւ այլ քանի մը ուսանողներու հետ:

1919ին կը վերադառնայ Թաւրիզ, ուր ուսուցչական պաշտօն կը ստանձնէ եւ կը վարէ խմբագրական աշխատանքներ (տես իր գրութիւնը):

1923ին, դաշնակցական 45 ուսանողներու հետ ինքն ալ կ'ուղարկուի Փրակա (Զեխոսլովաքիա), համալսարանական ուսում ստանալու համար: Ապա կ'անցնի Փարիզ, Սորպոնի համալսարանին մէջ կը հետեւի քաղաքատնտեսութեան:


1926ին, Հ. Յ. Դ. Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէին կողմէ կ'այցելէ շրջանները, վարելով կազմակերպչական աշխատանքներ:

1928ին կ'անցնի Խ. Միութիւն, ապա Հայաստան, ուր կը ձեռքարկուի եւ կը բանտարկուի: Կը նաշակէ սովետական բանտերու բոլոր դառնութիւնները, Երեւանէն փոխադրուելով Թիֆլիս, Մոսկուա, Եարոսլաւ: Պարսիկ դեսպանի հետեւողական պահանջներուն շնորհիւ, կ'ափսորուի իր ծննդավայրը՝ Պարսկաստան:

Կը ստանձնէ կուսակցական գանազան պաշտօններ: 1936ին իրեն կը վստահուի «Ալիք» երկօրեայի խմբագրութիւնը:

1953ին որպէս կուսակցական գործիչ կը հրաւիրուի Քալիֆորնիա, ուր յետագային իրեն կը վստահուի «Ասպարէզ»ի խմբագրութիւնը:

Հրատարակած է գանազան աշխատասիրութիւններ:



ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՆՓԴԵՀԻ ՀԵՏ

Առաջին Աշխարհամարտը երբ սկսուեց (1914 թ.), էջմիածնի Գէորգեան ձեմարանի աշակերտ էի :

Հայ կամաւորական շարժումը թունդ հանեց մեր պատանի հոգիները, հեւիհեւ հետեւում էինք դէպքերին եւ երազում կամաւոր զնալ, տառապած թրքահայաստանը ազատելու համար :

Հսեցինք, որ Երեւանում մեծ շարժում կար այդ ուղղութեամբ եւ կամաւորներին մի մասը կենտրոնացած է Երեւանի մօտ, բարձունքի վրայ գտնուող Կոնդում :

Ձեմարանից արդէն իսկ մի քանի ուսանողներ փախել, կամաւոր էին արձանագրուել :

Մի քանի մտերիմ ընկերներով խորհրդակցեցինք եւ որոշեցինք երթալ Երեւան, Կոնդ, տեսնել կամաւորներին : Բայց ձեմարանի հսկողութիւնը շատ խիստ էր, գիշերօթիկ էինք, եւ մեր բացահայտութիւնը պիտի շխուտափէր աւագ վերակացու Պրն. Յովսէփի Գրիգորեանի սուր աչքերից. որոշեցինք իրեն ահնարելով հասկացնել : Մանաւանդ իմ վիճակս բացառիկ էր, որովհետեւ «գասապետ» էի, այսինքն՝ դասարանի պետը, որ միշտ պիտի հսկէր գրեւական պիտոյքների վրայ, թուղթ ու տետրակ, գրիչ ու մատիտ, դասադրքեր պիտի բաշխէի, եւ միշտ դործ ունէի Պրն. Յովսէփի հետ :

Վերջապէս, մի կիրակի օր, մի քանի ընկերներով դուրս ցատկեցինք ձեմարանի պարիսպից եւ ոտքով մեկնեցինք Երեւան, որ էջմիածնից 12 քիլոմետրի վրայ է : Քայլում էինք արագ, հեւիհեւ, որպէսզի կարողանայինք երեկոյեան վերադարձած լինել, ընթրիքին հասնել :

Հասանք Երեւան եւ քայլեցինք դէպի վեր, դէպի Կոնդ, ուր կամաւորները լազեր ունէին :

Կոնդ գիւղի նեղ փողոցի մէջ, մեր դէմ ելաւ մի երիտասարդ կամաւոր, ջրի թոյլը ձեռին. նոյն պահուն անկիւնից դէպի նեղ փողոցը յայտնուեց, մեր դիմաց, մի գինուորական, սպայի հագուստով, սեւ, կրակոտ աչքերով ու դանդուրներով, եւ, դառնալով կամաւոր երիտասարդին, հարցրեց .

— Ո՛ւր ես գնում, երիտասա՛րդ :

— Գնում եմ ջուր բերելու, — ասաց կամաւորը :

— Գնա՛, այսօր կը գնաս ջուր բերելու, վաղը քեզ ֆակա՛տ կը տանիմ եւ այնտե՛ղ շիկացած գնդակները քո թիկո՛ւնքի կը տաքացրնեն... , ասաց դերասանի պափոսով սպան :

Մենք իրար նայեցինք հարցական հայեացքով, թէ ո՞վ է այս սպան...

Ընկերներին ցուցաբերելու շնորհիվ՝ «Նժդեհին է» :

Մենք խիստ տաքաւորուեցինք, եւ այնուհետեւ մէկս միւսին նոյն հարցն ու պատասխանն էր տալիս, ե՛ւ զուարճանում էինք, ե՛ւ ողբւորում որ մի օր էլ մենք կ'երթանք ռազմաճակատ եւ շիկացած գընդակները մեր թիկունքը կը տաքացնեն . . .

Կոնգի գորանոցում հայ կամաւորները գրազուած էին իրենց զէնքերը մաքրելով եւ խղելով : Նրանցից ամէն մէկը մեզ մի «դիւցազն» էր թւում, նայում էինք եւ ափսոսում, որ մենք չենք կարող նրանց միանալ :

Նոյն երեկոյեան վերադարձանք Էջմիածին, ձեմարան եւ պրն. Յովսէփը մեզ դիտողութեան արձանագրեց. բայց մեր փոյթը չէր, որովհետեւ հասել էինք մեր նպատակին, մանաւանդ որ տեսել էինք Նժդեհին :

ՆԺԴԵՀԻ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ ԹԱԻՐԻԶՈՒՄ

Հայաստանի Հանրապետութեան եւ Լեռնահայաստանի հերոսական կռիւների օրերին էր, (1920 թ.), որ Թաւրիզ եկաւ, դադանօրէն, Գեղէօն Տէր Մինասեանը Նժդեհի կողմից՝ յատուկ առաքելութեամբ :

Գեղէօնը դասընկերն էր եղել Ատրպատականի Առաջնորդ Ներսէս Արքեպոս. Մելիք Թանդեանի, ուստի եւ առաջնորդարան էր իջել : Մելիք Թանդեանը Սիւնեցի էր, եւ արտակարգօրէն սիրում էր իր հայրենիքը եւ ամէն կերպ պիտի աշխատէր օգտակար լինել Լեռնահայաստանի պաշտպան, հերոսական Նժդեհին :

Ես ուսուցիչ էի Թաւրիզի Հայկազեան դպրոցում, նաեւ ներկայացուցիչ Հ. Յ. Դ. Վրէժի կոմիտէի, վարիչ՝ «Ներխոսասարդական-Ուսանողական Միութեան» : Ատրպատականի Հ. Յ. Դ. Վրէժի կենտրոնական կոմիտէն շատ նեղ շրջանակի մէջ խորհրդակցական ժողով հրաւիրեց Կ. Կ. ի անդամ՝ Բաղդասար Մելիք Բաղդասարեանի տան մէջ, ուր զեկուցում տուեց Գեղէօն Տէր Մինասեանը. իր զեկոյցի համառօտ բովանդակութիւնը հետեւեալն էր. —

Ա. Աշխարհամարտը վերջանալուց յետոյ, ահա երեք տարի է որ շարունակում են մեր կռիւները արտաքին եւ ներքին թշնամիների դէմ, հայ ժողովրդի Ֆիդիքական գոյութիւնը պաշտպանելու համար : Այդ ժամանակամիջոցում, խախտուեց հայ զիւղացու տնտեսութիւնը, ընդհատուեցին հաղորդակցութեան ճամբաները եւ նա մինակ մնաց հանդէպ մի նոր թշնամու, որ բոլշևիզմի անուան տակ դալիս էր իրր թէ բարիք ընծայելու աշխատաւոր զիւղացիութեան : Վերջինս, խարուած բոլշևիկներին եւ դորձակալներին սուտ խոստումներից, մտածեց որ վերջապէս նախկին ուսն է դալիս եւ որ խաղաղութիւն ու բարեկեցութիւն կարող է հաստատուել : Բայց չարաչար խաբուեց. երբ

բուլղեւիզմը եկաւ, որտեղով որ անցաւ, թողեց աւերակներ, դիակներ, բռնութիւն, սով, աւերածութիւն եւ քմահաճոյք:

Ահա՛ հայ գիւղացիութեան այդ սխալ ըմբռնման շնորհիւ էր, որ բուլղեւիկները համարեա՛ առանց կռուի մտան նաեւ Սիւնեաց երկիրը: Սկզբում նրանք փքուն ճառերով ու խոստումներով կերակրեցին ժողովրդին, իսկ յետոյ սկսեցին կատարեալ կողոպուտ, աւազակութիւն, սպանութիւն, տաճիկ ասկեարները^(*) արշաւանք դէպի հայկական գիւղերը, անթիւ սպանութիւններ կատարեցին, հայ կոյսերից եւ հարսերից կողոպտած թանկագին դարձերով ասկեարներն իրենց ձիերի կուրծքն էին դարձարում... Տաճկական այս գունդը, 1200 զինուորներից բաղկացած, բուլղեւիկների միջոցով դնաց միանալու Մուսթաֆա Քեմալի բանակին: Բուլղեւիկները ոսկի, գէնք եւ զինուորական հագուստներ եւս ուղարկեցին Քեմալին:

Այլեւս, այս բոլորը տեսնելով, հայ ժողովրդի մէջ չմնաց մի դասակարգ (մինչեւ իսկ ամէնից աղքատները) որ դո՛ւ լինէր բուլղեւիկների դործելակերպից: Հայրենասէր հայեր, սպաներ, քաղաքական դործիչներ գնդակահարեցին բուլղեւիկները: Ժողովուրդը չէր կարող մոռանալ այս, ու նաեւ կողոպտեցին ժողովրդին մինչեւ վերջին թելը:

Բուլղեւիկ թափթփուքները եկել իւր վզին էին նստել եւ իւր հաշուով ապրում էին, կողոպտում ու սպանում. ուստի հայ գիւղացիութիւնը, խորը ատելութեամբ լցուած, սկսեց փրկութեան ճամբաներ որոնել:

«Ազատութեան արշալոյսը հեռու չէ, — ասաց Գեղէոն Տէր Մինասեանը, — նա պիտի ծագի Գենուազից, որ չի ընկճուել, յամառութեամբ մաքառում է. Սուստուպ լերան կատարին է դանւում Նժդեհը իւր հաւատարիմ ընկերների հետ եւ արթուն ու շրջահայեաց դիտում է իր սիրած երկրի, իւր ժողովուրդի անհուն վիշտն ու տառապանքները: Նա անընդհատ կոչեր է ուղղում ժողովուրդին՝ օտքի կանգնելու, պաշտպանելու իր երկիրը, հողն ու ստացուածքը: «Եկէ՛ք, եկէ՛ք, եկէ՛ք, հասէ՛ք, հասէ՛ք, հասէ՛ք, հնչեցնում է Նժդեհը իր խուսուպեան կանչերը», — այս բացազանչութեամբ վերաջցրեց իր խօսքը Գեղէոնը:

Գեղէոնը մեզ հաղորդեց նաեւ Նժդեհի մտահոգութիւնը. — Բուլղեւիկներն ու թուրքերը (Ատրպէյճանի եւ օսմանեան թուրքեր) նպատակ ունին Չանդեղուրը եւ Նախիջևանը դրաւելով, կապ հաստատել, կամուրջ ստեղծել Քեմալի թուրքիոյ հետ, օգնել Քեմալին, անգլիական իմպերիալիզմի դէմ իր պայքարի մէջ:

(*) Այս ասկեարները Ռուսիոյ մէջ Ա. Աշխարհամարտի գերիներն էին, որոնց հաւաքեցին Բաբու եւ Նուրի փաշայի ղեկավարութեամբ գունդ կազմեցին բուլղեւիկները, իբր իհատական էնվեր եւ ձեմալ փաշաների հետ ձեռք-ձեռքի: Ա. Ա.

*
*
*

Գեղէոնի այս զեկոյցը լսեցինք Լօթ հողիով՝ ընկերներ՝ Գասար Յակօբեան, Հայրապետ Պանիրեան, Ալեքսան Յովհաննիսեան, Բաղդասար Մ. Բաղդասարեան, Միքայէլ Ստեփանեան, Վարդան Յովհաննիսեան (Նեյլի) (*) եւ ես :

Թաւրիզի եւ առհասարակ Ատրպատականի տնտեսական եւ քաղաքական վիճակը ծանր էր այդ տարիներին. աշխարհից կտրուած՝ «տոսպրակի մէջ» էինք, ինչպէս որ սովոր էինք միշտ կրկնելու. նախորդ տարիների սովը, տնտեսական քայքայումը, առեւտուրի խանդարումը այնպիսի դրութիւն էին ստեղծել, որ Լեոնահայաստանին լայնօրէն օգնել՝ հնարաւոր չէր : Կտրուած էինք Հանրապետական Հայաստանից, թրքական դանդաղումների պատնէշով : Զանգեզուրի հետ եւս կապը շատ դժուար էր՝ Ղարաղաղի շրջանում իշխող մեծ աւատապետ Արշաղի պատճառով. պարսից իշխանութիւնները նոյն իսկ չէին կարողանում դասել Արշաղին :

Հարց տրուեց մեր ժողովին, թէ ի՞նչպէս եւ ի՞նչ միջոցով կարող ենք օգնել Նժդեհին : Կուսակցութեան գանձարկղում դրամ չկար. հայ հասարակութիւնն էլ՝ աղքատացել էր :

Ես դրի հետեւեալ առաջարկները.

1) Կապ ստեղծել Հայաստանի Հանրապետութեան հետ. 2) Կապ պահել Նժդեհի հետ. 3) Երիտասարդ ընկերներ հաւաքադրել եւ գնալ Նժդեհին օգնութեան :

Սկզբունքով ոչ ոք դէմ եղաւ այս առաջարկներին, սակայն միջոցները, հնարաւորութիւնը պակասում էին :

Գեղէոնը խոստացաւ Նժդեհին հաղորդել երիտասարդների հաւաքադրման, Զանգեզուր գնալու եւ աշխատանքների մէջ օգտակար լինելու առաջարկի մասին :

Հնարաւոր եղաւ միայն, Սրբազան Մելիք Թանգեանի միջոցով, Նժդեհին ուղարկել մի նժոյգ, տաք վերարկու, ժամացոյց եւ գինուորական կօշիկներ (սապոյ), Գեղէոնի միջոցով : Հագուստ տրուեց նաեւ Գեղէոնին, որ մեկնեց :

*
*
*

Այդ օրերին Թաւրիզի մեր կուսակցական կեանքում երկու թեւեր գոյութիւն ունէին՝ աջ եւ ձախ : Աջերը վերապահ էին սոցիալիզմի նկատմամբ, նկատի առնելով բոլշեւիկեան բռնութիւնները եւ այլանդակած սոցիալիզմը : Չախերը հետեւորդ էին ընկ. Վահան Խորէնի, Կորիւն Ղազաղեանի, Տիգրան Աւետիսեանի (Թիֆլիսի խումբ-

(*) Վերոյիշեալ բոլոր ընկերները, նաեւ՝ Գեղէոն Տէր Մինասեանը, մեռած են. միակ կենդանի վկան ես եմ մնացել... : Ա. Ա.

բակցութիւն, որ կոչուած էր «Աշխատաւորական» թել), բուն կերպով համակիր էին սոցիալիզմին :

Աջերը՝ տարեցներ էին, ձախերը՝ երիտասարդներ : Տողերիս գրողը եւ մտերիմ ընկերս՝ Վարդան Յովհաննիսեան (Նեւի), ողեշնչուած էինք Թիֆլիսի «Աշխատաւորական» թելով, մանաւանդ որ նոր էինք եկել Թիֆլիսից, ուր միշտ ներկայ էինք Վահան Խորէնի եւ միւսների դասախօսութիւններին եւ ժողովներին :

Աշխատաւորական լինելով հանդերձ, մենք կանգնած էինք ազգային տեսակէտի վրայ. այսպէս, 1920-ի Մայիս 28-ի անկախութեան մեծ հանգէսին, Թաւրիզում, իմ ճառի մէջ ես յայտարարեցի. «Եթէ բոլշեւիզմը Հայաստանի դիակի վրայով կամուրջ պիտի ձգի Ատրպէյճանի եւ Թուրքիոյ միջեւ, ՄԵՆՔ ԿԸ ԿՈՒՒԵՆՔ ԱՅԴՊԻՍԻ ԲՈՂՇԵՒԻԶՄԻ ԴԷՄ» :

Ինչպէս երեւում է՝ Գեղէոն Տէր Մինասեանը պատմել էր Նժդէհին մեր «Աշխատաւորական», այսինքն ձախ լինելու մասին, ուստի Նժդէհը, հետագային, Չանդեզուր մեկնած ընկ. Լեւոն Քալանթարեանին ասել էր. «Լաւ կ'անեն՝ չգան» . . . :

*
**

Մենք, այդ օրերին, ունէինք երեք թերթ, Թաւրիզում : «Այգ» շաբաթաթերթը որ պաշտօնական օրդանն էր Հ. Յ. Դաշնակցութեան «Վրէժ»-ի կենտրոնական կոմիտէի. խմբագիրն էր՝ ընկ. Գասպար Յակոբեան, խմբագրութեան անդամները՝ ընկ. Վարդան Յովհաննիսեան (Նեւի) եւ ես : «Ուսանողական - Երիտասարդական Միութիւնը» ունէր մի շաբաթաթերթ՝ «Արշալոյս» անունով, որի խմբագրութիւնը ինձ էր յանձնուած : «Միևարէք» շաբաթաթերթը, որ հիմնուեց աւելի ուշ, Առաքել Յարութիւնեանի միջոցով, նոյնպէս խմբագրում էինք Վարդան Յովհաննիսեանն ու ես :

1920 թուի Օգոստոսի վերջերին էր, որ լուր առինք թէ բոլշեւիկները, Գորիսում, դազանաբար սպանել են Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանի անդամներ՝ Վահան Խորէնիին եւ Արշակ Շիրինեանին : Այս սեւ լուրը մեր տեսակէտների նկատմամբ դարձակէտ եղաւ. Վահան Խորէնիին («Աշխատաւորական» թելի ղեկավար) սպանե՞լ . . . բոլշեւիկները, ուրեմն, դահիճներ էին, որ նոյնիսկ սոցիալիստներին սպանում էին եւ դործակցում թուրքերին :

Դէպքերը դահավիժօրէն իրար յաջորդեցին 1920-ին եւ ահա 1921-ի գարնանը ծայր առաւ Հայաստանի Հանրապետութեան տարազիրների կարաւանը Չանդեզուրի վրայով դէպի Պարսկաստան, դէպի Թաւրիզ :

«Բիւրոց նահանջ»ն էր դէպի Պարսկաստան, Հայաստանի Հանրապետութեան անկումից յետոյ :

Տխուր էր տեսարանը. տարազիրները, մեծ մասամբ հետիոտն,

գալիս էին Արաքսի ափերից հարաւ, Ղարաղաղի վրայով, հայկական Մուժուժբար դիւղը, որ Թաւրիզից 40 քիլոմէթր հիւսիս է գտնուում, ապա այնտեղից՝ Թաւրիզ: Անօթի, հիւժուած, մաղ ու մօրուք աճած, ցնցոտիներէ մէջ, երբ նրանք Թաւրիզի Առաջնորդարան հասան, մենք ցնցուեցինք նրանց տեսքից. դժբախտ Հայաստանն էր՝ տարագիր:

Ասես այսօր է: Առաջնորդարանում, ընկեր Ալեքսան Յովհաննիսեանը (Կ.Կ.ի անդամ եւ ուսուցիչ), ցոյց տալով Դոկա. Արշակ Ղազարեանին՝ որ բեխ ու մօրուքով, կատարեալ ցնցոտիներէ մէջ էր, ասաց արցունքն աչքերին. «Անարէ, նայիր, թշուառ Հայաստանն է»...:

Սրբազան Մելիք Թանգեանը, որ ժողովրդանուէր եւ արտակարգօրէն հայրենասէր մէկն էր, փորձառութիւն ունէր դադթականներ ու տարագիրներ ընդունելու, օր ու դիշեր աշխատեց, մտաւորականներին մասնաւոր աներում տեղաւորեց, Թաւրիզի հայ ընտանիքներում, իսկ տարագիրներէ մեծ զանգուած՝ Լիլաւա թաղի «Հայկազեան – Թամարեան» դպրոցի հսկայական շէնքի եւ բակի մէջ:

Սկսեցինք մեր այցելութիւնները ղեկավար ընկերներին եւ քաղաքական գործիչներին՝ Յ. Քաջազնունի, Սիմոն Վրացեան, Ռուբէն Տէր Մինասեան, Ռուբէն Դարբինեան, Նիկոլ Աղբալեան, Լ. Շանթ եւ բազմաթիւ ուրիշներ:

Ամենէն վերջը, առանձին եւ խիստ գաղտնի պայմաններում, Թաւրիզ եկաւ Նժդեհը:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆԺԴԵՀԻ ՀԵՏ՝ ԹԱԻՐԻԶՈՒՄ

Նժդեհի համար բնակավայր սրոչեց Հ. Յ. Դ. Կենար. Կոմիտէն իմ մօտ ազգականիս՝ Ա. Ս.ի տունը: Ա. Ս. հետադրատան վարիչ էր, մեր վստահելի ընկերը: Իր տան երկրորդ յարկի սենեակը եւ առաջին յարկի ընդարձակ, շքեղ ընդունարանը յատկացուեցին Նժդեհին:

Ես դարձայ Նժդեհի ամէնօրեայ այցելուն: Շատ քիչ ընկերներ գիտէին իր տեղը, Նժդեհն ընդունում էր իր ամենէն վստահելիներին. բոլշևիկներ կային Թաւրիզում: Սովետական հիւպատոսարանը գրտնըւում էր Նժդեհի բնակած տան ետեւի կողմը, զուգահեռ փողոցի վրայ: Սովետ հիւպատոսարանում էր նստում նաե՛ւ իրենց Չեկայի Ատրպատականի «պրեզիդինտ»ը (վարիչ): Բոլշևիկները խիստ հետապնդում էին դաշնակցականներին, օղտուկով պարսից իշխանութիւնների թուլութիւնից, թէեւ պարսից իշխանութիւնները ամենէն բարեացակամ վերաբերումն ունէին դէպի Հ. Յ. Դաշնակցութիւնը, որովհետեւ իրենք եւս չէին ախորժում բոլշևիկներից, որոնք նպատակ ունէին Պարսկաստանը, բայց մասնաւորապէս Ատրպատականը սովետականացնել:

Նժդեհը ատրճանակը պահում էր միշտ գրպանում, իսկ գիշերները՝ իր բարձի տակ:

*
**

Նժդեհի հետ մտերմացանք այնքան, որ երբ մի օր թէկուզ չէի այցելում, լուր էր ուղարկում որ հանդիպեմ իրեն:

Այդ օրերին մեր ներքին պայքարը վերջ էր գտել. աջ ու ձախի խնդիր չունէինք այլևս, մանաւանդ Վահան Խորէնիի սպանութիւնից յետոյ. Հայաստանի Հանրապետութեան տապալումն էլ եկաւ միանգամայն վերջ տալու մեր ներքին խնդիրներին եւ սէրն ու գործակցութիւնը իջխեցին մեր շարքերում: Դժբախտութիւնը բոլորիս միացրեց:

Նժդեհը ինձ մանրամասն պատմում էր բոլշեւիկների անմարդկային արարքների, կողոպուտի, թալանի, սպանութիւնների, լրտեսութեան, մատնութեան եւ թուրքերի հետ սերտ գործակցութեան մասին՝ ընդդէմ հայ ժողովուրդի եւ Հայաստանի:

Պատմում էր Սիսիանի, Ղափանի, Գենուազի, Գողթանի, Չանգեզուրի հերոսական խոյանքների մասին, թէ ինչպէս սկզբում բոլշեւիկներից խարուած եւ նրանց ընդունող հայութիւնը, տեսնելով ահաւոր անիրաւութիւնները եւ կողոպուտը, ըմբոստացաւ, ապստամբեց եւ մաքրեց այդ շրջանները, մինչեւ Բայազիտ եւ Դարալագեազ, հռչակեց Լեռնահայաստանի անկախութիւնը:

Նժդեհն ինձ կարդում ու ցոյց էր տալիս բազմաթիւ փաստաթղթեր բոլշեւիկների անարդ ու հայ ժողովրդի դէմ դաւաճանական արարքներից, ձեռք-ձեռքի թաթարների, օսմանեան թուրքերի (1200 ասկեարներից բաղկացած զօրամաս, Նուրի փաշայի գլխաւորութեամբ, Չանգեզուրի վրայով գնաց միացաւ Քեմալի ուժերին), հայ բոլշեւիկ թափթփութների եւ XI-րդ կարմիր բանակի զօրամասերի:

Յիշողութեանս մէջ, այս առթիւ, տպաւորուել է մի նամակ: Չանգեզուրցի մի հայ բոլշեւիկ, տեսնելով այդ բոլորը, հիասթափուել էր եւ ինքնասպանութիւն գործել, թողնելով հետեւեալ նամակը, ուղղուած իր բոլշեւիկ ընկերներին:

Տիգրան Մելիք-Շահնազարեանն էր դա, որ գրում էր.

«Ընկերներ, անձնասպանութիւնից առաջ, գրում եմ ձեզ, խաբուած եմք, խաբուած: Ատրպէյնանում, սկսած Նարիմանովից (*), չի եղել եւ չկայ մի հատիկ բոլշեւիկ:

«Մուսաւաթը, հին Մուսաւաթն է, գոյնը փոխել եւ մեզ խաբել (**): Դարձի՛ եկէք, ընկերներ, դարձի՛, քանի դեռ ուշ չէ: Ես գի-

(*) Ատրպէյնանցի յայտնի բոլշեւիկ ղեկավար: Ա. Ա.

(**) Այդ օրերին, 1920 Յունիս, Ատրպէյնանը արդէն սովետականացած էր:

տակցօրէն չեմ դաւանանել հայ աշխատաւորութեանը, բայց անգիտակցօրէն ծառայել եմ ռէակցիոն Ատրպէյճանին: Ես խոստովանում եմ իմ մեղքը, քող Աստուած ու պատմութիւնը ներքն ինձ: Մեռնում եմ»...

Նժդեհը կարգաց ինձ նաեւ սովեա կարմիր XI-րդ զօրարանակի պետի հետ փոխանակած իր նամակները: Նժդեհը այդ նամակներում, փաստերով եւ տուեալներով խարանում էր բուլղերիկեան խժոժութիւնները եւ համադործակցութիւնը օսմանեան ուժերի հետ, Հայաստանն ու Լեռնահայաստանը խորտակելու, Ատրպէյճանի եւ Քեմալական թուրքիոյ միջեւ կամուրջ հաստատելու նպատակով:

XI-րդ կարմիր բանակի հրամանատարը, իր մի նամակում, հետեւեալ խոստովանութիւնն էր անում.

«Զանգեզուրում, յիրաւի, ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՄԻ ԱՄՕԹԱԼԻ ԴԷՊԲ, ՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՆՔ ՄԵԶ ԶԵՆՔ ԳՈՎՈՒՄ: ԽՕՍՔՍ ՏԱՃԿԱԿԱՆ ԳՆԴԻ ՄԱՍԻՆ Է, ՈՐ ՄԵՆՔ ՈՒՂԱՐԿԵԼ ԵՆՔ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՎ ՔԵՄԱԼԻ ՄՕՏ»:

Այս խոստովանութիւնը շատ պերճախօս ու յատկանշական էր, թրքօ-բուլղերիկ անարդ դործակցութեան տեսակէտից:

Այլեւ Նժդեհը ինձ թուեր կարգաց բուլղերիկների կատարած բռնադրաւումների եւ կողոպուտի մասին. այսպէս, Զանգեզուրի 15 հայկական դիւղերից, 1920 թուի Յուլիս 5-ից մինչեւ նոյն թուի Նոյեմբեր 19ը (այս թուին էր որ ժողովուրդը, Նժդեհի ղեկավարութեամբ, ապստամբել էր եւ բուլղերիկներին քշել Սիսիանից, Ղափանից, Գեղուածորից, Դարալագեազից մինչեւ Սեւանայ լճի հարաւ-արեւելեան ափերը եւ հռչակել Լեռնահայաստանի ինքնավարութիւնը), այդ դիւղերից բռնադրաւել էին 30.000 փութ(*) ցորեն, 10.000 փութ գարի, 18.000 փութ գեանախնձոր, 10.000 փութ կորեկ, 100.000 փութից աւելի խոտ, 30.000 փութ դարման եւ այլն, այլեւ դիւղացիների անասունները՝ կով, եղ, ջորի, էջ, ժողովրդի սակեղէնը, ուտելու պարէնը, մէկ խօսքով՝ կատարեալ թալան ու կողոպուտ, որ բարձած սայլերի վրայ, դիշերով տանում էին դէպի Ատրպէյճան, Բաքու...

Այս հայկական դիւղերի ներկայացրած վնասների ցուցակներն ու փաստաթղթերը Նժդեհը հրատարակել էր տուել «Արիւնոտ Գիրք»ին մէջ, լոյս տեսած Գորիս քաղաքի Սասուն տպարանում, 1921-ի գարնան:

Պիտի արձանագրել նաեւ հետեւեալ պատմական փաստը: Եթէ չլինէր Լեռնահայաստանի ապստամբութիւնը, բուլղերիկ ուժերից եւ քրքական գիւղերից եթէ չմաքրուէր մեր հայրենիքի այդ կարեւոր մասը, 1920 թուի Նոյեմբերին, ընդհանուր ապստամբութեամբ, որ ղեկավարեց Նժդեհը, ապա Հայաստանի Հանրապետութեան անկումից

(*) Մէկ փութը 40 փաունդ է կամ՝ 16 ֆիւդրամ: Ա. Ա.

յետոյ Հայաստանի տարագիրները՝ քաղաքական – յեղափոխական, մտաւորական և գիւտարական գործիչներ, քամբայ պիտի չունենային նահանջելու մինչեւ Զանգեզուր եւ այնտեղից, Արաքսը անցնելով, դէպի Պարսկաստան :

Լեռնահայաստանը կամուրջի դեր կատարեց, նահանջի եւ վերակուլթեան կամուրջի դեր, որով տեղի ունեցաւ մեր «բիւրոց նահանջ»ը դէպի վերակուլթեան ափը՝ Պարսկաստան :

Այդ կամուրջը թշնամի տարրերից մաքրելու պատիւը պատկանում է Նժդեհին, Լեռնահայաստանի մեր խիզախ ժողովուրդին :

*
**

Բոլշեւիկները Զարուզի վրայով Զանգեզուր մտնելով, ընդամէնը հազիւ 8—10·000 բնակիչ ունեցող Գորիս քաղաքում բանտարկում են 763 հայերի... Ապա սկսում են նորանոր ձերբակալութիւններ : Օգոստոս 2ին, բանախ բախում սրերով կոտորում են Յուլիս 30ին ձերբակալած ընկ. Վահան Խորէնիին եւ Արշակ Շիրինեանին, որոնց կանչերը լուում են ամբողջ Գորիս քաղաքում եւ սարսափի մատնում բնակչութեան :

Վրիժառութեան գոհ են դառնում, նոյն Օգոստոս 3-ին 17 դաշնակցական մտաւորական եւ գիւտարական բանտարկեալներ, որոնց շղթայած քշում են դէպի Շուշի, սակայն ճանապարհին, Տակեր կոչուած վայրում գնդացիների առաջ են կանգնեցնում եւ կոտորում են բոլորին, առանց դատ ու դատաստանի. աղատում եւ լուր է բերում միայն Գրիգոր քահանան որ 11 վէրք ստանալուց յետոյ, բոլշեւիկները մեռած էին կարծել...

Բոլշեւիկները ձերբակալում եւ գնդակահարում են նաեւ ցարական բանտերում եւ աքսորաւայրերում տասնեակ տարիներ տառապած մեր յեղափոխական ընկերներին, առանց մեղադրանքի, առանց դատի, ինչպէս օրինակ՝ Մարտիկ Սաղոյին (Համբարձում Սարգրսեան) :

Երկար կը լինէր մէջբերումները մեր ունեցած գրոյցների, որ տեղի ունեցան մօտ երեք ամիսներ, համարեա ամէն օր, մտերմական մթնոլորտում :

*
**

Տարագիրները Լեռնահայաստան գտնուած միջոցում որոշ անախորժութիւններ, թիւրիմացութիւններ, բախումներ էին տեղի ունեցել, որոնք Թաւրիզ եղած միջոցին քննութեան առարկայ դարձան Հ. Յ. Դ. Գերազոյն Գատական Ատեանի կողմից, որ ընտրուած էր Դաշնակցութեան Ծ-րդ Ընդհանուր ժողովում (1919 թ. Երեւանում), քննելու եւ դատելու բոլոր դատական բնօյթ ունեցող խնդիրները :

Նժդեհէր եւս պատասխանատուութեան էր կանչուած, Գատական Ատեանի մօտ, Հ. Յ. Դ. Բիւրոյի կողմից:

Նժդեհէր, գիշերով, երբեմն դնում էր Գատական Ատեան, հարցաքննութեան եւ բացատրութիւնների համար:

Այդ առնչութեամբ, երբեմն ինձ դանդաւում էր երկու զեկամար ընկերների մասին, սակայն միշտ իր խօսքը վերջացնում էր՝ «Քրիստոսի պէս մարդիկ են», արտայայտութեամբ:

Նժդեհէր պերճախօս էր, սակայն հեղախօսեցիս, չէր նայում աչքերիդ մէջ, այլ միշտ՝ ձախ ուսիդ: Սկիզբները կարծում էի, թէ ինչ-որ բան կայ ուսիս, որ իր հայեացքը զրաւում է, սակայն յետոյ հասկացայ, որ իր սովորութիւնն էր:

Մ Ե Կ Ն Ո Ւ Մ

Մօտ չորս ամիս Թաւրիզում գաղանի ապրելուց յետոյ, Նժդեհէր արտասահման մեկնեց, մեր երիտասարդ տարազիր ընկեր՝ Հայկ Ասատուրեանի հետ:

Հետագային, 1924-ին, Գաշնակցութիւնը ուսանողներ ուղարկեց Չեխոսլովաքիա, Փրակայի «Կառլուվ» համալսարանը:

Այնտեղ հանդիպեցի նաեւ Հայկ Ասատուրեանին: Նժդեհէր դանում էր Պուլկարիայում, Հայկը նամակներ էր գրում նրան, եւ էլ բարեւներ էի ուղարկում երբեմն:

Իր մի նամակում, Հայկը Նժդեհին նկարագրել էր ուսանողական նիւթական նեղ պայմանները, երեւի այն մաքով որ Նժդեհէր նիւթական օժանդակութիւն ցոյց տար Հայկին: Նժդեհէր իր պատասխան-նամակում գրել էր.


«Ղազարոսի պէս աղքատ եմ, դո՛ւրբան»...

Այս արտայայտութիւնը մեզ շատ զուարճացրեց, ուստի այն-նուհետեւ յաճախ կրկնում էինք, երբ նիւթականը մեզ նեղում էր:

Նժդեհէր ուղ ու ծուծով ուժ էր, ջերմ հայրենասէր, խիզախ յեղափոխական, համոզուած ընկերավարական, իր այս յատկութիւնների ապացոյցները տուել էր Մակեդոնիայից մինչեւ Պարսկաստան (ուր եղել էր մի քանի անգամ) եւ Սիրիից մինչեւ Թրքահայաստան: Աւարտել էր Հ. Յ. Դ. ի Պուլկարիայի սպայական դպրոցը, զինուորական հմտութիւն ունէր եւ իր այդ հմտութեան ապացոյցները տրեւեց Լեւոնահայաստանում, մասնաւորապէս, երկիրը մաքրելով թաթար, թուրք, ուսւ բոլշևիկներից եւ հայ ժողովուրդի դահիճներից:

Սիրիի սառնարաններում իր մահը աւելի՛ մեծացրեց իրեն, դառնալով հայ ժողովուրդի արդար դատի Նժդեհ—նահատակը:

Ա Շ Ո Տ - Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի



Ծնած է 1902ին, Քանաֆեռ գիւղին մէջ: Նախնական եւ երկրորդական ուսումը կը ստանայ ռուսական դպրոցներու մէջ եւ գիմնազիան կ'աւարտէ 1920ին: Կը հետեւի Հայաստանի անդրանիկ համալսարանի պատմութեան եւ գրականութեան ուղի դասընթացներուն:

Դաշնակցական Աշակերտական Միութեան անդամ կ'արձանագրուի 1917ին: Երկու տարի յետոյ կ'ընտրուի Դաշնակցական Աշակերտական Անդրկովկասեան Բիւրոյի անդամ: Միաժամանակ կը վարէ Հայաստանի Աշակերտական Միութիւններու Միութեան նախագահի պաշտօնը:

1918ին, որպէս կամաւոր զինուոր, կը մասնակցի Բաշ Ապարանի հերոսամարտին: 1920ին, հայ-տանկական պա-

տերազմի ամբողջ տելոզութեան, դարձեալ որպէս կամաւոր զինուոր, կը գտնուի ռազմաճակատը: 1921ին, Փետրուարեան ապստամբութեան ատեն կ'ընտրուի Կոտայքի Փրկութեան Կոմիտէի անդամ եւ կը մեկնի ռազմաճակատ, ուրկէ ուղղակի կը նահանջէ Լեռնահայաստան: Հոն կը մնայ երեք ամիս եւ Արաֆսը անցնող վերջիններէն մէկը կ'ըլլայ:

Պարսկաստան կը մնայ չորս ամիս և հակառակ բնկերներու արգելիքին, գաղտնի կը վերադառնայ Հայաստան: Իր ծննդավայրը հասած յաջորդ օրը կը ձերբակալուի: Քառասուն օր ետքը կ'ազատուի շնորհալից դատաւարութենէ մը ետք:

Կ'ընտրուի Դաշնակցական Ռուսանդական Կոմիտէի անդամ եւ ապա Հայաստանի Կեդրոնական Կոմիտէի անդամ: 1924ին, որպէս Հայաստանի պատգամաւոր, գաղտնի կը մեկնի արտասահման եւ կը մասնակցի Ժ. Ընդհանուր Ժողովին, որմէ յետոյ գաղտնի կը վերադառնայ Հայաստան՝ հոն մնալով ութ ամիս: Կը յաջողի կազմակերպել Սովետական Միութեան սահմաններէն ներս գործող չորս Կեդր. Կոմիտէութեանց գաղտնի խորհրդաժողով: 1926ի աշնան նորէն գաղտնի կը մտնէ Հայաստան:

1927ին կը մեկնի Եւրոպա եւ կը հաստատուի Փարիզ, ուր կը մնայ տասը տարի: Որպէս Հայաստանի եւ Ատրպատականի պատգամաւոր, կը մասնակցի Ժ.Ա. Ընդհանուր Ժողովին:

Փարիզ հաստատուած օրէն իսկ կը սկսի գրադիլ լրագրութեամբ, աշխատակցելով «Դրօշակ»ին եւ «Յառաջ»ին:

1937ին որպէս գործիչ, երկու տարուան համար կ'ուղարկուի Հարաւ. Ամերիկա: Երկրորդ Աշխարհամարտը արգելի կ'ըլլայ Եւրոպա վերադառնալուն: Կը հաստատուի Պուէնոս Այրէս եւ կ'աշխատակցի «Արմենիա» թերթին:

1965ին լոյս տեսաւ իր «Հայ Ժողովրդի Պատմութիւն» աշխատութիւնը, սպաններէն լեզուով: Տեղական մամուլը գովեստով արտայայտուեցաւ այդ գրքի մասին:

ԵՐԵՔ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ա.

1915-ի սկիզբներն էր: Դրոյի կամաւորական Բ. գունդը կը գտնուէր մեր դիւղը, Քանաքեռ: Ռազմաճակատ մեկնելէ առաջ գունդը պէտք է հանդատանար ու վերակազմակերպուէր:

Երրորդ դասարանի աշակերտ էի: Մենք, պատանիներս, խանդավառուած էինք կամաւորներով, որոնք մեզի համար առասպելական դիւցազներ էին: Շատեր նախկին Փետայի եղած էին եւ անոնց պատմութիւնները թեւ կու տային մեր երեւակայութեան: Եթէ ընդունէին, պիտի ձգէինք դպրոցը ու միանայինք կամաւորներուն: Հրպարտանք կը զգայինք, երբ առիթը ունենայինք մօտէն տեսնելու Անդրանիկը, Քեռին, Իշխանը, Վարդանը, Համազասպը, Դրօն, Դաշնակցական Խեչօն եւ այլ խմբապետներ: Երիտասարդութիւնը առանձին մէկ համակրանք ունէր հանդէպ Նժդեհի, որ իր արտաքինով կը տարբերէր միւս հրամանատարներէն: Մինչ միւսները կամաւորական համազգեստ կը կրէին եւ իրենց գլուխը մորթէ փափախ կը դնէին, Նժդեհ հազած ունէր սպայական հազուստ եւ գլխարկ: Թուխ մորթով, բոցավառ աչքերով եւ զեղատիպ՝ Նժդեհի խրոխտ քայլուածքը ու բեմական կեցուածքը խոր տպաւորութիւն կը գործէին մեր վրայ: Փետայի մը չէր եղած, բայց որպէս սուլկարական սպայ անուն հանած էր Պալքանեան պատերազմներուն: Այդ կը բաւէր, որ իր անուան շուրջ դարմանահրաչ պատմութիւններ հիւսէինք:

Օր մը կամաւորական Բ. խումբը շարք կազմեց Քանաքեռի եւ Երեւանի միջեւ ինկած տարածութեան վրայ: Շուտով Երեւանէն եկան Դրօն իր շքախումբով եւ Գարեգին Նժդեհը, որ նշանակուած էր Բ. գունդի փոխ-հրամանատար: Դրօ քանի մը խօսքով կամաւորներուն ներկայացուց իր նոր օգնականը: Միահամուռ կեցցէներուն յաջորդեց երգը՝ «Արագ ափին ծնուած ընկեր»...

Նժդեհ քանի մը քայլ յառաջ քշեց իր ձին եւ որպէս պատասխան Դրոյի խօսքին, ճառ մը արտասանեց, որուն ձգած տպաւորութիւնը դեռ չէ ջնջուած յիշողութենէս: Իր խօսքերը հրարուխի նման կը ժայթքէին: Իւրաքանչիւր նախադասութիւն իմաստ մը ունէր: Պատկերաւոր էր ոճը եւ խօսելու ձեւը թատերական: Սեւ աչքերը սեւեռած հեռուները, միանգամայն անէացած էր: Ինչպէս ջերմեռանդ կրօնաւոր մը կ'աղօթէ, նոյն մոլեռանդութեամբ Նժդեհ կառչած էր իր զաղափար-

ներուն : Մազնիսական ներքին ուժով մը իր ապրումները , զգացումները միաբերը կը փոխանցէր ունկնդիրներուն , որոնք հմայուած ու կախարդուած կախուած կը մնային անոր շուրթերէն : Ամբոխները դերելու եւ անոնց հողիններուն տիրապետելու արտակարգ ու բացառիկ շնորհ ունէր : Նժոյզին վրայ կէս բարձրացած , երկտասարդ հռետորը հայրենասիրութեան , բողոքի եւ վրիժառութեան մարմնացումն էր : Իր շուրջը շարուած կամաւորներուն հաւատք կը ներշնչէր ու վաղուան արշալոյսը կ'աւետէր : Միաժամանակ կ'ընդվզէր անարդար աշխարհի եւ Հայուն անողոք ճակատագրին դէմ :

Բ.

1921 : Փետրուարեան ապստամբութիւն : Ռուսական գերազանց ուժերու ճնշման տակ , Սպրիլ 2-ին կը սկսի նահանջը Երեւանէն դէպի Լեռնահայաստան : Գառնիի մէջ կը միանամ ուսանողական գւարդիային : Քանի մը օր ետք կը հասնինք Բասարչայ , Լեռնահայաստանի սահմանին վրայ դռնուող ուս մալահաններու մեծ գիւղ մը : Լուր կը տարածուի , թէ շուտով պիտի ժամանէ Լեռնահայաստանի սպարապետը : Ռուսանողական գւարդիան փողոց կ'ելլէ եւ շարք կազմելով կը սպասէ :

Մըրնթաց գիւղ կը մտնեն խումբ մը ձիաւորներ : Նժդեհն է իր թիկնապահներով : Այլեւս սպայական համապղեստ չի կրեր : Հագած է գաւթթիկեան տարազ , գլուխը ծածկած է կաշիէ սաղաւարտով , իսկ մէջքը փաթթած է կերպասէ կարմիր դօտի մը : Թէեւ նայուածքը աւելի տիրական էր , սակայն աչքերուն մէջ ինչ-որ տխրութիւն կը նշմարուէր : Գւարդիայի բարեւը ընդունելէ ետք , սրահ մը դիտեց իր առջեւ շարուած ուսանողները եւ ապա յուզուած ձայնով խօսեցաւ .

— Տնաւեր դաւաիներս , բնաւեր թռչուններ , դուք ինչո՞ւ էք եկել եւ ո՞ւր էք գնում . . .

Հեղեղի նման կը պոռթկային իր խօսքերը , որոնք ուսանողութեան հանդէպ դորովանք , մտահոգութիւն եւ ափսոսանք կ'արտայայտէին : Հուր ու շանթ կը տեղար բուլշեւիկներու հասցէին , որոնք թուրքին միացած կը դաւէին հայութեան դէմ : Երկտասարդութեան կը յորդորէր , որ երբեք չյուսահատին եւ բարձր բռնեն ազատութեան դրօշը , խոստանալով անոնց ամէն աջակցութիւն :

Եւ իրօք , ոչինչ խնայեց ուսանողութեան համար : Գւարդիայի մէկ մասը շարունակեց իր ճամբան եւ անցաւ Պարսկաստան , իսկ մէկ մասն ալ մնաց Նժդեհի արամադրութեան տակ : Մնացողները քանի մը խումբերու բաժնուելով , ուղարկուեցան դանազան շրջաններ՝ տեղւոյն վրայ սրաշատոններ ստանձնելով : Այդ դժնդակ օրերուն , անօթի չմնալը արդէն կեանքի լաւագոյն պայմաններէն մէկն էր :

Որպէս Աշակերտական եւ Ուսանողական Միացեալ Բիւրոյի անդամ, կ'այցելէի այս ու այն կողմը ցրուած խումբերը, որով առիթը ունեցայ զանուելու Չանդեղուրի, Ղափանի եւ Մեղրիի շրջանները: Եւ ուր ալ որ եղայ, նշմարեցի ընդհանուր մէկ երեւոյթ՝ ժողովուրդը կը սպառտէր իր Սպարապետը: Որ գիւղն ալ որ մտնէի, խօսակցութեան զլխաւոր նիւթը Սպարապետն էր: Գիւղացիները իրարու կը հաղորդէին՝ «Սպարապետը մեկնեցաւ այս ինչ տեղը», «Սպարապետը վերադարձաւ այն ինչ տեղէն», «Սպարապետը այս րասաւ, ա'յն րասա»: Ու այսպէս՝ անվերջ: Չեմ կարծեր, թէ որեւէ զեկավար նման ժողովրդականութիւն վայելած ըլլայ: Նժդեհը ոչ միայն բացարձակ հեղինակութիւն մըն էր ժողովրդեան խաւերուն համար, այլ եւ սիրուած էր բոլորին կողմէ անխտիր: Այն տպաւորութիւնը կը ստանայիր, թէ Լեոնահայաստանի ժողովուրդի միակ յոյսն ու ապաւէնը իր Սպարապետն էր, Խուստուպի արծիւը:

Եւ իրականին մէջ Նժդեհ ամէն ինչ էր եւ ամէն տեղ: Ան օր ու գիշեր կը չափչփէր հարթ ճանապարհներէ դուրկ այդ երկրամասը, որ վայրէջքի եւ վերելքի աշխարհ մըն է: Յաճախ ձիուն վրայ նըստած կը քնանար: Տեղ մը սահմանային գիւղերը կը քննէր, ուրիշ տեղ մը մարտական վաշտերը կը ստուգէր, պահեստները աչքէ կ'անցընէր, վէճեր կը լուծէր եւ նորանոր կարգադրութիւններ կ'ընէր: Անոր խօսքը օրէնք էր եւ վճիռը անրեկանելի: Ոչ թէ տիկտատորի մը բռնի պարտազրանք, այլ որպէս հետեւանք այն վստահութեան, որ ժողովուրդը ունէր իր Սպարապետին նկատմամբ:

Երբեմն Ղափանի պղնձահանքերը կու գար հանգստանալու, մէկ ալ կը տեսնէի իր բնակած տան առջեւէն կ'անցնէին խումբ մը զինուորներ կամ հրամանատարներ, բարձրաձայն դռնելով. «Կեցցէ՛ մեր Սպարապետը», «Մահ կամ ազատութիւն», «Պատրաստ ենք մեր կեանքը զոհելու Նժդեհի համար» եւ նման անձնուէր բացազանչութիւններ: Ոչ մէկ կասկած, որ Նժդեհի մէկ ակնարկով անոնք կը նետուէին կրակ ու բոցերու մէջ:

Այդ կոյր հաւատքն էր, որ հրաշքներ գործեց եւ Լեոնահայաստանը մաքրագործուեցաւ թուրք եւ բոլշեւիկ հորդաներէ:

Շնորհիւ այդ հրաշքին էր, որ այսօր Լեոնահայաստանը մաս կը կազմէ մայր հայրենիքին:

Գ.

1933-ի առաջին ամիսներուն Նժդեհ կը զանուէր Փարիզ: Եկած էր Պուլկարիայէն, մասնակցելու Հ. Յ. Դաշնակցութեան ԺԲ. Ընդհանուր Ժողովին: Իր ազատ ժամերուն յաճախ միասին կ'ըլլայինք:

Այս անգամ Նժդեհը սովորական պարզ քաղաքացի մըն էր: Այլեւս չէր կրեր ոչ սպայական համազգեստ եւ ոչ ալ դաւիթ-բէզեան

տարազ : Փոխուած էր արտաքինը , բայց անփոփոխ մնացած էր ներքին աշխարհը : Փարիզի մէջ էր , որ աւելի մօտէն ճանչցայ Նժդեհը :

Փարիզը կը կոչուի Լոյս Քաղաք , ուր կեանքը յարատեւօրէն եռուզեռի մէջ է եւ այնքա՛ն հետաքրքրական : Սակայն Նժդեհ անմասնակից էր դուրսի կեանքին : Ան ամբողջովին կ'ապրէր իր ներաշխարհով , որ եռացող կաթսայի կը նմանէր : Երբեք առօրեայ նիւթերով չէր յոգնեցներ միտքը : Անոր խօսակցութեան գլխաւոր նիւթը գաղափարն էր եւ պայքարը : Անվերջ նոր ծրագիրներ կ'որոճար եւ պայքարի նոր միջոցներ կը յղանար : Գաղափարի մտասեւեռում ունէր , դառնալով անոր գերին : Կ'ատէր անշարժութիւնը , լճացումը եւ անտարբերութիւնը : Պայքարող եւ ըմբոստ ոգի ունէր ու թշնամի էր ժամանակին հետ չքալողներուն . — Փոխուած են պայմանները , հետեւաբար պիտի փոխուին նաեւ մեր մտածելակերպը եւ պայքարի միջոցները : Ուրեմն պէտք է փնտռել նոր բան մը , նոր մղիչ ուժ մը , նոր գործելակերպ մը եւ նոր նշանաբաններ :

Սակայն Նժդեհ կը պատկանէր կուսակցութեան մը , որ արդէն ունէր մշակուած քաղաքական ուղեգիծ եւ բիւրեղացած գաղափարներ : Հայրենի հողին վրայ Նժդեհ հասած էր Ողիմպոսի գաղաթնակէտին եւ միակն էր իր միջավայրին մէջ : Հոն կը գործէր ինքնուրոյն եւ ազատօրէն : Հոս , արատասահմանի մէջ , Նժդեհ միակը չէր , այլ՝ շատերէն մէկը : Այլեւս չէր կրնար գործել ինքնազուիս եւ իր ծրագիրները նախ պիտի արժանանային կուսակցութեան հաւանութեան եւ ապա գործադրուէին կազմակերպութեան խողովակով : Սահմանափակ էր իր գործելու ազատութիւնը , ինչպէս նաեւ արտայայտուելու : Իր ըմբոստ նկարագիրը եւ ընդվզող ոգին պիտի հանդուրժէի՞ն այս կացութեան : Ահա թէ ուր էր Նժդեհի ողբերգութիւնը : Ահա թէ ինչո՛ւ ան միշտ վէճի մէջ էր իր շրջապատին հետ :

Իրաւունք ունէ՞ր Նժդեհը : Գժուար է դատաւորի պատմուճան հաղնիլ : Սակայն երբ ան իրեն պահ մը ազատ զգաց , նոր Աշխարհին մէջ ստեղծեց նոր շարժում մը , որ պատմութեան անցաւ Յեղակրօն անունով : Այսօր , ցեղակրօն սերունդները իր անունը կը յիշեն երախտագիտական խոր զգացումով եւ գորովանքով : Նորարողը՞ այդ ծառը հաստատուն արմատ նետեց եւ մշտադալար ճիւղեր արձակեց : Ոչ ոք կրնայ ժխտել այս իրողութիւնը :


Գաղափարներու մոլեռանդ մը եւ պայքարի աստուծոյ երկըրպազու մըն էր Նժդեհ , որուն երեւակայութիւնը հուժկու թեւեր ունէր եւ թռիչքներուն համար լայն հորիզոններ կը փնտռէր :

Այսպէս ճանչցայ Նժդեհը երրորդ հանդիպումին , Փարիզի մէջ :

ՎԱՐԴԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ

Վարդան Գեորգեան ծնած է Տրապիզոն, 1893ին: Ուսման գուգրերաց գրական փորձեր կատարած է 1909ին: 1911-1914 եղած է ուսանող Սորպոնի համալսարանի: 1914-1918ին ուսուցչական պաշտօն վարած է Գահիրէի Գալուստեան վարժարանին մէջ: Ապա, Պոլիս անցնելով, վարած է Պոլսոյ Ազգ. Որբանոցին տեսչութիւնը (1920-21): Շրջան մը Պուֆրէշ (Ռումանիա) մնալէ ետք, 1924ին կ'անցնի Պէյրութ, Լիբանան, ուր մինչեւ 1928 կը վարէ Ազգ. Ս. Նշան վարժարանի տնօրէնութիւնը, միաժամանակ տպարան բանեցնելով: Հրատարակած է դասագիրքեր:

Այժմ կը գտնուի Պուէնոս Այրէս (Արժանքին) ուր խմբագիրն է «Արժանիւն» օրաթերթին:



ԳԼՈՒԽ ԳԼԽԻ Գ. ՆԺԴԵՂԻ ՂԵՏ

Լեռնահայաստանի հերոս, զօրավար Գարեգին Նժդեհը ճանչցալ Պուքրէշի մէջ, 1922ին, ուր զացած էի Քեմալականներու Պոլիս մտնելէն քիչ ժամանակ առաջ:

Պարոյր Լեւոնեանի հրատարակած «Նոր Արշալոյս» թերթի խմբագրատան մէջ Յ. Ճ. Սիրունի կը ներկայացնէր զեղազէմ, կազմեղ ու բարձրահասակ համակրելի քաջը, որուն մասին մեծ դուրսասանքով կ'արտայայտուէր ան, իբրեւ կախարդող հոգեւոր:

Հետագային ուրիշներէ ալ լսեցի, որ հմայիչ բեմախօս մըն էր Զանգեզուրի հերոսը, բայց որովհետեւ Պուքրէշ իր երթուղարձի օրերուն Նժդեհ հունեցաւ հրապարակային ոչ մէկ ելոյթ, ինծի չտրուեցաւ առիթը լսելու զինքը:

Մեր ծանօթութենէն մէկ քանի օր ետք Նժդեհ խնդրեց ինծմէ տեսակցութիւն մը: Ժամադրուեցանք, եւ այս առիթիւ էր որ ան առաջարկեց ինծի, իր հայթայթելիք նոթերուն վրայ գրել «Լեռնահայաստանի հերոսամարտը»:

Լսելէ ետք իր բացատրութիւնները եւ բաղձանքը, տուի համաձայնութիւնս:

Նժդեհ տրամադրեց ինծի կարգ մը ձեռագիրներ, խոստացաւ շուտով ուղարկել նաեւ ԱԶԱՏ ՍԻՒՆԻՔ անունով գրքոյկը եւ փաթաթի համար դորձածուած դեղին թուղթերու վրայ տպագրուած կարգ մը թուցիկներ, որոնք Լեռնահայաստանի կռիւներու ընթացքին կը ցրուէին շրջանի Ժողովուրդին, առ ի չգոյէ թերթի:

Գիրքը պիտի շարէր եղբայրս. տառերը պիտի հայթայթուէին տեղւոյն մէջ գտնուող գերմանական ձուլարանէ մը: Բոլոր ծախսերը պիտի հոգար Նժդեհ ու դորձէն պիտի տպագրուէր հազար օրինակ:

Նժդեհ զիւրացնելու համար պատմութեան կապը, տուաւ իր կողմէ ծանօթութիւններ շրջանի աշխարհագրական դիրքին, իր մղած կռիւներուն ու ստեղծուած ռազմական միջոցառումներին մասին: Ան առանձին զմայլանքով կը խօսէր պատմական այդ վայրերու հայ քաջերու եւ իրեն դորձակից ընկերներու նուիրումին մասին:

Հատորին առաջին գլուխը պատրաստելէ ետք, փափաքեցայ որ ան աչքէ անցընէր գրութիւնը, թիւրիմացութիւններ և սխալներ կանխելու համար. վասնզի ինք ձեռագիր ծանօթութիւնները յանձնելէ ետք, մեկնած էր Սոֆիա, ուր կը բնակէր իր կնոջ եւ անոր ծնողքին հետ:

Եկաւ, կարդաց, դո՛հ մնաց ու մեկնեցաւ:

Գրքին առաջին մէկ քանի պրակները հազիւ շարուած ու տպագրուած էին, երբ ես դժբախտութիւնը ունեցայ դո՛հ տալու եղբայրս:

Հոգեպէս խորտակուած, ոչ իսկ գրիչ շարժելու տրամադիր, ահամայ շարունակեցի սկսուած գործը:

«Նոր Արշալոյս»ի մէկ գրաշարը յանձն առաւ լծուիլ շարելու աշխատանքին, եւ այսպէս, տխուր պայմաններու մէջ, ատենին լոյս տեսաւ ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ, 1923ին, Պուքրէշի մէջ:

Նժդեհ բաւարարուած էր հատորով: Ինծի համար, որ անձամբ գտնուած չէի կռիւներով հարուստ ու համբաւուած Զանգեզուրի շրջանը, կը մնային անծանօթ որոշ ակնարկութիւններ, քննադատութիւններ եւ մեղադրանքներ, այս կամ այն դէմքերու հասցէին: Ատոր համար ալ, իրաւունք նկատեցի, յառաջարանիս մէջ շեշտել, թէ հատորը պատրաստած էի Նժդեհի ինծի տրամադրած նիւթերու վրայ:

* *

1924ին եւ մեկնեցայ Պէյրութ : Ատեն մը ետք ստացայ նամակ մը իրմէ : Կը խնդրէր որ իմ տպարանիս մէջ հրատարակէի իր ԲԱՅ ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ՄՏԱԽՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ գործը : Չմերժեցի ու դարձայ հրատարակիչը իր այս վտիտ բայց մտքերով հարուստ գրքոյկին : Այս եւ այլ առիթներով Նժդէհ քանի մը անգամներ գրեց ինձի եւ ես ունեցայ կորովի եւ հայրենասէր զինուորականը յիշեցնող ձեռագիր իր նամակները :

Գաշնակցութեան կապուած Նժդէհն էր, որ օգտագործուելով հետագային Կուսակցութեան Վերին Մարմնի կողմէ՝ դրկուեցաւ Ամերիկա, ուր ան իր խօսքին ջերմութեամբ ու հմայքով հիմը դրաւ ՀԱՅ ՅԵՂԱԿՐԾՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ : Խանդավառեց նոր սերունդը ու ստեղծեց հայութեան եւ Հ. Յ. Գաշնակցութեան հանդէպ հաւատքով տոգորուն զանդուածները :

Այդ օրերու Գաշնակցական մամուլը լեցուած է հերոսին առաջ բերած մեծ շարժումին արձագանգներով :

Բանասիր իր խօսքին ջերմութեան զուգընթաց դրաւոր անոր խօսքը հասաւ նաեւ բազմութիւններուն :

Իր շքեղ ոճին եւ կուս. միտքերուն ճառագայթումներով ողորուած էջեր կը մնան իր էջեր իմ օրագրէն (1924), Բաց նամակներ հայ մտաւորականութեան (1929), Յեղի Ոգու շարժը (1932) եւ Ամերիկահայութիւն գործերը :

Հայրենի հողին վրայ զինուորականի իր տաղանդով համբաւի տիրացած քաջը, Միացեալ Նահանգներու մէջ ցեղակերտ նուաճումներ արձանագրելէ ետք, կրեց իր կուսակցութեան կողմէ սահմանուած պատիժը : Բայց իրրեւ կարգապահ զինուոր եւ ուղղամիտ շարքային, մնաց հեռու սխալներէ, որոնք դարձան իր պայմաններուն մէջ դանուող ուրիշներու համար նոր սայթաքումներու պատճառ : Իր այդ կեցուածքով ան վերատիրացաւ այն համակրանքին, որ իր եղերական մահէն ետք, մանաւանդ, ծաւալեցաւ ու դարձուց զինք համազգային յարգանքի եւ պաշտամունքի առարկայ լուսաւոր դէմք մը :

* *

Մեր ազատագրական պայքարին մէջ զօրավար Նժդէհին վիճակուեցաւ բացառիկ դեր մը : Իր խիղախութեան կը պարտինք հայկական լեռնաշխարհի այն մասը, որ ներկայիս կը կոչուի Զանգեզուր (նախկին Սիւնեաց աշխարհի մէկ մասը), ուր ան ճակատեցաւ համայնավարներու դէմ : Հաւաքած իր շուրջը շրջանի քաջարի լեռնականները, Նժդէհ գիտցաւ պայքարող այդ հողերուն տէր մնալու վճռակամութիւնը ներշնչել անոնց :

Երբ Երեւանը ինկած էր, երբ կարմիր սուխաւորներ տէր էին դարձած Հայաստանի, Նժդէհ կառչած կը մնար դեռ Լեոնահայաստանի բարձունքներուն ու կ'ապահովէր երեք հազար հայորդիներու նահանջի ուղին:

Շնորհիւ իրեն կը փրկուէր մեր մտաւորական ընտրանին, որ պիտի կոտորուէր, եթէ ինկած ըլլար Սիւնիքը:

Փետրուարեան ապստամբութեան հետեւանքով բուլշեւիկեան բանտերէն կ'ազատէին դաշնակցական մտաւորականներ եւ բոլոր անոնք, որոնք զործակցած էին հանրապետական օրինաւոր իշխանութեանց: Փետրուարեան ապստամբութենէն ետք, այդ մտաւորականութիւնը առանձնապէս, չէր կրնար մնալ այլեւս Հայաստանի մէջ: Նժդէհի ուժերուն կը պարտին անոնք իրենց կեանքը, իսկ ներկայ Հայաստանի ղեկավարութիւնն ու բովանդակ հայ ժողովուրդը՝ Զանգեզուրի մեր երկրին անբաժան մաս կազմելու իրողութիւնը կը պարտին նոյնպէս զօրավարին:

Պատմութեան մէջ դէպքեր կան, որոնք փառքի լուսապսակ կը հիւսեն հերոսներու ճակատին:

Նժդէհի մղած Դաւիթ-բէգեան կռիւները ատոնցմէ են:

Նժդէհի դէմ կռուող համայնավարները զինու զօրութեամբ չկրցան պարտութեան մատնել զինք:

Սիւնեաց աշխարհի բարձրաբերձ լեռներն ու անդնդախոր ձորերը՝ կռուող ուժերուն համար հրաշալի առաւելութիւնները կ'ընծայէին:

Անմատչելի այդ բարձունքներէն ատենօք կրցեր էին օգտուիլ Դաւիթ Բէգ եւ իր անդուդական սպարապետը՝ Մխիթար: Նժդէհ եղաւ անոնց արժանի յաջորդը:

Իր յաղթութիւններով ան դարձաւ կռուքը զինք շրջապատող կտրիճներուն, զորս մազնիսացուց իր խօսքին ու զործին հմայքով:

Պատմութիւնը մէկ բան պիտի դրէ անոր անունին առջեւ:

Ափ մը քաջերով ան ճակատեցաւ իր վրայ արշաւող կարմիր բանակայիններու դէմ: Պահեց Զանգեզուրը իր իշխանութեան ներքեւ: Փրկեց կեանքը հայրենիքի մտաւորականութեան, որ հետագային պիտի աշխուժացնէր հայկական Սփիւռքը: Հուսկ՝ իր շնորհիւ Սիւնիքը անբաժան մասը դարձաւ ներկայ Հայաստանի:

Այս մեծագործութիւններէն որեւէ մէկը պիտի բաւէր անմահացնելու մահկանացուն: Անոնց ամբողջութիւնը փառապսակ պիտի հիւսէր հերոսի մը ճակատին:

Վասնզի հերոսները հերոսականին համար հասունցած են:

Իրենց ժողովուրդին ազատութեան եւ արդարութեան ի խնդիր կեանքը արհամարհող քաջեր եղած են անոնք: Իրենց հողին պայքարներու մէջ բիւրեղացած է:

Հոն ուր սովորական մահկանացուն կ'ընկրկի, հերոսը վտանգէ

վտանգ ստանելով՝ մահը կը դիմակալէ ու իր յաղթութիւններով կը դառնայ կուռքը զանգուածներու :

Ազատագրական պայքարները պիտի մնային ամուլ, եթէ հերոսի մը ստուերը չնչմարուէր վերիվայրումներու, խառնակ կացութեան մէջ :

Նժդէհ պայքարի համար ծնած զինուորականը եղաւ : Հերոս մը՝ որ զխոցաւ կռուիլ իր ժողովուրդին համար, ու ասիկա՝ սկսած 1912ի Պալքանեան Պատերազմի օրերէն :

Սաղազութեան օրերուն ան իր պայքարը շարունակեց բանաւոր եւ գրաւոր քարոզչութեամբ :

Իր խօսքին մաղնիսը երբ կը ծորէր, կամաւորներու փառանդներ հազարեակներու կը վերածուէին :

Հերոսը, սակայն, որ պայքարի համար ծնած էր, ճակատագրի դժխեմ մէկ կարգադրութեամբ, պիտի իյնար կարմիր դահճապետներու ձեռքը : Նժդէհ տասը տարի Չեկայի բանտերուն մէջ տառապելէ ետք, մեռաւ հեռաւոր Սիպերիոյ սառնամանիքներուն մէջ :

Սթալինէ ասպետական կեցուածք կարելի չէր սպասել :

Ասպետական չեղան նաեւ ստորին բնազդներու խառնուրդ այդ վատին յաջորդները, որոնք թոյլ տուին որ ուրացուած եւ լքուած մահանայ իր հայրենիքի ազատութեան համար զէնք վերցուցած ու իրենց դէմ կռուած հերոս մը :

Պիտի դայ ժամանակը, որ ամբողջական հայութիւնը փառքի կոթողներ պիտի բարձրացնէ իր մեծութեան եւ ազատութեան համար ինկած բոլոր հերոսներուն համար :

Զօրավար Գարեգին Նժդէհ այդ պատուին արժանացող մեծութեանց մէջ առաջին դժի վրայ կանգնողներէն պիտի ըլլայ եւ իրաւա՛մբ :

ԵՐՈՒԱՆԴ ՖՆՏՔԵԱՆ



Երուանդ ֆնտքեան ծնած է 1894ին, Տրապիզոնի կրոպի գիւղը: Նախակրթութենէն ետք կ'երթայ էջմիածնի Գէորգեան ճեմարանը, որուն ընթացքը կ'աւարտէ 1914ին: Յետագային յաճախած է Փրակայի համալսարանը, ուրկէ ֆիմիագէտ վկայուած է:

1915ին, քրքական ջարդերէն խուսափելու համար, խուճը մը ընկերներով բարձրացած է լեռները: Մաս կազմած է Զեմլեակի խումբին: Մասնակցած է Ալեքսանդրապոլի կռիւներուն: Թիֆլիսի մէջ տեղորի ենթարկած է Սափարովը, ինչպէս նաեւ մասնակցած է Ճիւանշիրի ահաբեկման, Պոլսոյ մէջ, Միսաֆ Թորլաֆեանի կողմէն:

Մաս կազմած է Հ. Յ. Դաշնակցութեան զանազան մարմիններու եւ ժողովներու: Վարած է զանազան պաշտօններ:

Փ Ո Ք Ր Ի Կ Մ Է Կ Յ Ո Ւ Շ

ԵՐԿՈՒ ՀՍԿԱՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ա. — «Յ Ե Ղ - Ս - Կ Ր Օ Ն»

— « Երկու գոյական միացրել ես եւ մի նոր գոյական ես կազմել. ի՞նչ իրաւունքով. երկու գոյական կարող են միանալ... »:

— « Այո՛, կարող են միանալ: Դու քերականութիւնից ի՞նչ ես հասկանում... »:

Եւ վիճում էին, դադարի պահին, երկու սքանչելի մարդիկ, երկու իրական մեծեր ու մէկը միւսին քաշքշում՝ մի փոքրիկ զուարճանալու համար:

— Հը՛, ճեմարանցի, քո կարծիքն ի՞նչ է... »:

Ես ի հարկէ չէի միջամտում:

Հաճելի էր լսել Դրոյին, իր քերականութեան մասին չունեցած ծանօթութիւններով, ու Նժդեհին, որ զբաղէտ մարդ էր եւ յաճախ նեղն էր դնում Դրոյին քերականական կամ շարահիւսական խնդիրներ յարուցուած ժամանակ:

« Դրո՛, սի՛րելիս, դու ինքդ էլ դիտես, որ այս խնդիրներէից դու

չատ բան չես հասկանում : Քերականութիւնը քո բանը չէ . . . Ե՛ր-
ուանդ սի՛րելիս , ախ՛ր . . . » : Սօսելու յատուկ ձեւ ունէր աննման
Նժդեհը ու նաեւ յատուկ շեշտադրութիւն :

Իրենց խօսակցութեան բուն նիւթը սակայն , Պուլկարիոյ Հ . Յ .
Դաշնակցական կողմին մէջ առաջ եկած տարակարծութիւններն էին ,
որոնց խառնուած էր նաեւ Նժդեհը իր մի քանի կողմնակիցներով . —
Նժդեհ , Հայկ Ասատրեան եւ ուրիշներ մէկ կողմից , Յննիկ Մխի-
թարեան , Կարէն Յակոբեան եւ ուրիշներ միւս կողմից : Կողմերը ան-
հաշտ վերաբերում ունէին միմիանց հանդէպ , որից կուսակցական
կեանքն ու աշխատանքները տուժում էին : Եւ որովհետեւ Պուլկարիան
կուսակցութեան կարեւոր շրջաններից մէկն էր , Բիւրոն յատուկ ու-
շադրութեան առարկայ էր դարձրել ծագած վէճի հաշուեյարդարը :

Այդ օրերին Դրօն Պալքանների Բիւրոյի ներկայացուցիչն էր եւ
Նժդեհի յաճախակի այցելութիւնները Փլոյեշտի , այդ վէճերի կա-
պակցութեամբ էին :

Ես Փրակայի Համալսարանի քիմիական բաժինը աւարտել էի
արդէն եւ Դրոյի հրաւերով եկել էի իր մօտ՝ Փլոյեշտի , Ղուկասով-
ների քարիւղի դտարանում պաշտօնավարելու համար :

Ապրում էինք Դրոյի հետ , մի ընդարձակ բնակարանում :

Երբ տանն էի , ես էլ մասնակից էի դառնում Դրոյի ու Նժդեհի
խորհրդակցութիւններին :

Նկատել էի , որ երկուսն էլ «յարձակողական» ընթացք չունէին
միմեանց հանդէպ եւ իւրաքանչիւր անգամին , որ բաժանւում էին եւ
Նժդեհը մեկնում էր Պուլկարիա , «հաշտութիւնը» գոյացածի տպա-
ւորութիւն էր ստացւում :

Եւ սակայն Նժդեհը հաղիւ Պուլկարիա վերադարձած , նախկին
վիճակը շարունակւում էր . . .

Նժդեհի գլխաւոր՝ դուցէ եւ միա՛կ խորհրդատուն Հայկ Ասա-
տրեանն էր : Ես Հայկին ճանաչում էի Փրակայից : Աչքի ընկնող
ուսանող էր եւ շատերի համակրանքն էր վայելում : Կողմակերպելու ,
քարոզչութեան արտակարգ շնորհք ունէր : Վերաբերուն միշտ ուսե-
րին , դերվիշի խորհրդաւորութիւն ունէր , երբ մէկի հետ խօսում էր .
համոզիչ լեզու ունէր : Աւարտել էր Փրակայի համալսարանը եւ փի-
լիսոփայութեան գոքտորի ատղոս ունէր :

Ըմբոստ էր եւ կատարուած աշխատանքի ձեւերից դժգոհ . . .
Նժդեհը լսում էր նրան :

Պուլկարիոյ մէջ ծագած ընկերական խնդիրների կապակցու-
թեամբ էր դարձեալ , որ Համօ Օհանջանեանը եւ Գարրիէլ Լազեանը
եկան նախ Պուլկարիա եւ ապա Փլոյեշտի :

Օհանջանեանը շուրջ երեք շաբաթներ մեր տան հիւրը եղաւ :
Բազմաթիւ առիթներ ունեցայ լսելու իր առաքելատիպ խօսքը հայ
ժողովուրդի դրական ու բացասական կողմերի մասին . տոկուն , դի-

մացկուն , ապրելու եւ որպէս ազգ յարատեւելու իր զարմանալի յատկութիւնների մասին : Վէճի կապակցութեամբ , գտնում էր որ կողմերը երկուստեք սլառասխանատու են : Եւ սակայն «խիստ» միջոցառումների այնքան էլ կողմնակից չէր երեւում : Այնքա՛ն հարազատ էր Համօն , այնքա՛ն բարի :

Պուլկարիայում հանդիպել էր ղեկավար ընկերներին , խրատել էր , զգաստութեան հրաւիրել :

Ամէն օր Դրոյի հետ խորհրդակցում ու հանդոյցը լուծելու մասին մի ձեւ էին մտածում :

Յհանջանեանի մեկնելուց բաւական ժամանակ յետոյ , նոյն խնդրով Փլոյեշտ եկաւ նաեւ Գ . Լազեանը :

Շուրջ երեք ամիսներ Պուլկարիա մնալուց , մանրագնին քրննութիւններ կատարելուց յետոյ , նա էլ եկել էր Փլոյեշտ , Դրոյի հետ խորհրդակցելու համար :

Լազեանը Գրիգոր Ամիրեանի եւ Մկրտիչ Մկրեանի հետ Պոլսոյ զինուորական վարժարան էր աւարտել եւ սպայի աստիճան ստացել : Հայաստանի Հանրապետութեան օրերին , հայկական բանակի մէջ էին եղել միասին : Գրիգոր եւ Մկրտիչ այդ օրերին նոյնպէս Փլոյեշտի էին ապրում : Լազեանը փոխն ի փոխ նրանց երկուսի եւ մեր հիւրը եղաւ Փլոյեշտի մնացած օրերին :

Բ. — «ԱՐՇԱԿ ԹԱԳԱԻՈՐ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԸ»

Նժդեհի յաջորդական այցելութիւններից մէկում , երբ խօսք էր լինում նախորդ հանդիպման ժամանակ կայացած որոշման եւ համաձայնութեան մասին ու Դրօն հարց էր տալիս , թէ ինչո՞ւ իրենց տուած որոշումը չի՛ դորձադրուել եւ Նժդեհը զանազան բացատրութիւններ էր տալիս , Դրօն յանկարծ , նիւթին հետ բոլորովին կապ չունեցող մի հարց է տալիս .

— «Լսի՛ր Նժդեհ , դու հայոց պատմութեան մէջ Դրաստամատ անունով մէկին յիշո՞ւմ ես» :

— Չէ՛ , չեմ յիշում :

— Լսիր ուրեմն . — Դրաստամատը հայոց Արշակ Երկրորդ թագաւորի հաւատարիմ զինուորականներից մէկն էր , որ թագաւորի հետ Տիգրօն էր գնացել սլարսից թագաւորի հրաւերով , որտեղ դաւադրարար Արշակ Երկրորդ Անյուշ բերդում բանտարկուել էր : Իմացա՞ր հիմա :

«Բայց կարեւորը դուն ես եւ Արշակը թագաւորը , որովհետեւ դուն էլ , Արշակն էլ , երբ ձեր հարազատ հողի վրայ էք կանգնած լինում , խոստումներն ու դաշինքները մոռանում էք . . . Ճուրճովայի կամուրջը անցնելուդ պէս , ամէն խորհրդակցութիւն , ամէն որոշում մոռանում ես . . . : Ասում ես թէ ես քերականութիւնից բան չեմ հաս-

կանում, բայց դու էլ ազգային մեր պատմութեան ամենակարեւոր դէպքերն ու նաեւ դէմքերը չես ճանաչում: Հիմա իմացա՞ր թէ Դրաստամատը ո՞վ է... (Դրո Դրաստամատի կրճատ ձեւն էր եւ Դրօն դիտմամբ շեշտը դնում էր Դրաստամատի վրայ...):

Ախո՞ս այն օրերի մեծերը — իրա՛ւ մեծեր, պիտի ասէին մեր դրազէտներից ոմանք — որոնք վիճում էին, երբեմն կուռում ու միմեանց վիրաւորում, եւ սակայն երբ «ժողովը» վերջացած էր եւ երբ սեղանի շուրջն էին հաւաքւում մի բաժակ թէյ խմելու կամ գինի, ամէն ինչ մոռացած էին լինում:

— Դրօ ջա՛ն, կենացդ. ամա՛ լաւ հայոց պատմութիւն գիտես, հա՛...:



Միմոն վրացեան եւ Դրօ

— Այո՛, Նժդեհ ջա՛ն, ախոսս որ հնարաւոր չէ, որ Մանուկ Աբեղեանին մի նամակ գրէի ու հրաւիրէի որ դար ու քեզանից քերականութեան կամ շարահիւսութեան դաս ասնէր. կենա՛ցդ:

Դրօ, Նժդեհ, Օհանջանեան, Խողեղան, ինչպէս Խաչիկ Դաշտենցն է ասում իր համանուն վէպի մէջ անցնող այդ սերունդի մասին, անկրկնելի են: Հարիւր տարին մէկ անգամ նման զմայլելի հրականեր հազիւ թէ պիտի երեւան մէկ ազգի պատմութեան երկնակամարին վրայ:

Երանելի՛ ժամանակներ, երանելի ու անկրկնելի մեծութիւններ:

ԵՐՈՒԱՆԴ ՖՆՏՔԵԱՆ

Հոկտ. 1, 1966

Լոս Անճելըս, Քալիֆորնիա

Գ. ՄԵԼԻՏԻՆԵՑԻ



Գ. Մելիտինեցի, բուն անունով Գեորգ Թոփալեան, ծնած է Մալաթիա, 1899ին: Հազիւ պատանի, ենթարկուած է Մեծ Եղեռնի արհաւիրքներուն: Մագապուրծ ազատելով, 1918ին կը յաջողի հասնիլ Ատանա, ուր կամաւոր կ'արձանագրուի Գրիգոր Հայկունիի ոստիկանական յիսնեակին եւ այդ նամբով ֆրանսական բանակին հետ կ'երթայ մինչեւ Մարաշ: 1920ին երբ կը լուծուի Գ. Հայկունիի ոստիկանական յիսնեակը, անոր մեծ մասին նահատակման հետեւանքով, ինք կը յաջողի Ամերիկա երթալ, 1920 Յուլիսին:

Հոն կը մտնէ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը, մասնակցելով զանազան տեսակի աշխատանքներու:

Եղած է անդամ Մալաթիոյ կրթարասիրաց Ընկերութեան կեդրոնական

վարչութեան, ինչպէս նաեւ վարած է նոյն Ընկերութեան «Պապ Ուխտի» պարբերաբերքի խմբագրական եւ վարչական աշխատանքները:

Իր նուիրատուութեամբ հաստատուեցաւ Գ. Մելիտինեցիի գրական մրցանակը, որ պիտի տրուի ամէն տարի:

ԻՆՋՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՍԻՐԵՑ

ԶՕՐԱՎԱՐ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՂԸ

Որքան զոհառատ, արիւնոտ ու անհաւասար եղաւ հայ ժողովուրդի պատմութիւնը՝ անցնող աւելի քան վեց դարերու ընթացքին թրջական անարդ ու դժոխային լուծին տակ, նոյնքան զոհառատ, արիւնոտ ու անհաւասար եղաւ հայ ազգային ազատագրական պայքարը՝ վերջին երեք քառորդ դարու ընթացքին:

Խօսք չի կրնար ըլլալ այն մասին, որ աշխարհի բոլոր ժողովուրդներն ալ ազգային յեղափոխութեան, յարատեւ ու անվհատ

պայքարի ճամբով է որ տիրացած են իրենց ազատութեան ու անկախութեան : Բայց , բառին ամբողջական նշանակութեամբ անօրինակ ու անհաւատար եղաւ հայ ազգային ազատագրական սրբազան պայքարը , նախ անոր համար , որ ուղղուած էր աշխարհի մեծագոյն ջարդարար ու ցեղասպան թուրքին դէմ , ապա՝ մեզի վիճակուածը հանգիստ կեանքի մը մէջէն քաղաքական ազատութեան ձգտող պայքար մը չէր , այլ « լինել թէ չլինել » ու , կենաց եւ մահու համար մղուած որքան արիւնոտ , նոյնքան դիւցազնական մարտնչում մըն էր :

Անարդ թշնամիին մահացու հարուածը դարեր շարունակ ուղղուած էր հայ ժողովուրդի գոյութեան դէմ , եւ ոչ թէ անոր ազատութեան ձգտումին , որ այնքան բնական է եւ մարդկային :

Ազատութեան ձգտող ուրիշ հայ մարդ արդարօրէն հպարտ կըրնայ զգալ , որ նոյնիսկ այդ դժոխային պայմաններուն մէջ հայ ազգային յեղափոխութիւնը ծնունդ տուաւ բազմաթիւ հերոսներու , որոնք անարդ թշնամիին դէմ կատարած իրենց խոյանքներով լուսաւոր էջեր արձանագրեցին հայ ազգային պատմութեան մէջ :

Ահա այդ հերոսներէն մէկն էր զօրավար Գարեգին Նժդեհ , որ զեռ իր վաղ երիտասարդական տարիքին՝ իբրեւ զինուոր , ապա իբրեւ բռնակալութեան դէմ ծառայող անվեհեր յեղափոխական , իբրեւ զօրավար , զազափարական պայքարի դրօշակակիր եւ կուսակցական գործիչ իր արժանաւոր տեղը գրաւեց հայ ազգային ազատագրութեան պատմութեան մէջ :

Խորապէս ցաւալի էր որ երկար տարիներու այսքան հաւատաւոր ու անվհատ պայքար մղելէ ետք , զօրավար Գարեգին Նժդեհ նահատակուեցաւ Սիպերիոյ սառնամանիքներուն մէջ , ուր աքսորուած էր հայանուն համայնավարներու անարդ մատնութեամբ , եւ ուր շիրմաքար մը անգամ չունեցաւ , կրելու համար իր անմահ անունը :

Բայց , երախտադէտ հայ ժողովուրդը չմոռցաւ , եւ երբեք պիտի չմոռնայ իր հերոս զաւակը :

Վասն հայրենեաց Սիպերիոյ մէջ նահատակուող զօրավար Գարեգին Նժդեհ անտարակոյս լիուլի արժանի է այդ պատիւին :



Նժդեհի մասին այս գրքի հրատարակութեան զեղեցիկ առիթով մեր մտքին մէջ կը ծաղի այն հարցումը , թէ ի՞նչ բան մղիչ ուժ հանդիսացաւ , որ հայ ժողովուրդը սիրէ զօրավար Գարեգին Նժդեհը : Ի՞նչ բանի մէջ խտացուած էր անոր արժէքն ու արժանիքը : Ինչո՞ւ համար հայ զինուորը ամբողջական նուիրումով կուուեցաւ անոր կողքին , եւ հերոսական խոյանքներով քանի-քանի անգամներ պարտութեան մատնեց անարդ թշնամին : Եւ վերջապէս , ինչո՞ւ համար է , որ հայ ժողովուրդը իր նահատակութենէն երկար տարիներ ետքն

ալ սրտի խորունկ դառնութեամբ, կսկիծով ու ափսոսանքով կը սզայ իր հերոս գաւակին մահը:

Առանց մանրամասնութեանց մէջ մխրճուելու, առանց նոյնիսկ իր մղած գիւցազնական կռիւներու, կատարած դործերու յիշատակութիւնը ընելու, ճշմարտութեան մը արձագանգը եղած կ'ըլլանք, եթէ ըսենք, որ այդ հարցումներուն ճշգրիտ պատասխանը զինուոր, զօրավար եւ գաղափարական պայքարի դրօշակիր Գարեգին Նժդեհի անխարդախ հայրենասիրութեան, անասան հաւատքին եւ ամբողջական նուիրումին մէջ է:

Հայ ժողովուրդը հայրենասէր գաւակներ շատ ունեցած է, եւ ունի': Առանց անոնց յիշատակը դոյզն կերպով աղարտելու, ի խորոց սրտի յարգելով ու խոնարհելով անոնց բոլորին ալ յիշատակին առջեւ, կնանք վկայել, որ հայրենասիրութիւնը զօրավար Գարեգին Նժդեհին մէջ հասած էր իր գերաստիճանին — հայրենասրաշտութեան: Ան, խորապէս ճանչնալով աշխարհի շատ մը ժողովուրդները, ի խորոց սրտի կը հաւատար, թէ Արտաշէսներ, Տիգրաններ, Վարդաններ, մանաւանդ Ս. Մեսրոպ Մաշտոցներ, Գրիգոր Նարեկացիներ, Եղիշէներ ու փաղանգ մը Շնորհալիներ տուող հայ ժողովուրդը լի ու լի արժանի է դասուելու աշխարհի լաւագոյն ժողովուրդներու շարքին: Խորապէս կը հաւատար, թէ հայ ժողովուրդը շա՛տ աւելի տուած է քաղաքակիրթ մարդկութեան, քան ստացած է: Իր ըսածը հաստատելու համար վկայութեան կը կանչէր հայ ժողովուրդի հանճարի ծնունդ հրաշափառ դրերու գիւտը, դժոխային պայմաններու մէջ արարչագործուած բազմադարեան հայ մշակոյթը, քրիստոնէական կըրօնքին ու վարդապետութեան պաշտպանութեան համար հայ ժողովուրդին մղած անհաւասար մարտնչումները, անթիւ ու անհամար զոհերը, եւ դարաւոր պայքարը, անխախտ ու անասան:

Իր դրաւոր թէ բանաւոր խօսքերը հայաշունչ էին եւ հայադրուշմ: Մեր դարաւոր պատմութեան մէջէն ինք հարազատօրէն կը լսէր հայ ժողովուրդի սրտի տրոփիւնը, կը տեսնէր ազատութեան ձգտումն ու հուրը, որ պատմական մորենիին պէս կը վառէր, բայց երբեք, երբեք չէր հատներ: Կը տեսնէր հայ ժողովուրդին ունեցած պաշտամունքը բարեին, գեղեցիկին ու վսեմին հանդէպ. կը տեսնէր անհնարին տանապանքի, ծով արցունքի եւ արիւնի մէջ կռանուած հայ ժողովուրդի կրանիթեայ կամքը՝ ապրելու, տեւելու, արարչագործելու համար: Եւ շա՛տ հարազատ գտնելով այդ բոլորը իր սրտին ու հոգոյսին, նախ կ'ապրէր ինք, ապա ցեղաշունչ իր ապրումները կը փոխանցէր ունկնդիրներուն, ներգրաւելով անոնց սէրը, սիրան ու հոգին:

Հայ ազատագրական պայքարի հերոսներուն մէջ քիչ է թիւը անոնց, որոնք իրենց սուր ու զէնք գործածելու քաջութեան համար

հաւասար, գրեւոր եւ խօսելու, հոեաորութեան կարողութիւն ունեցան :

Զօր. Գարեգին Նժդեհ այդ քիչերէն մէկն եղաւ : Որքան իր սուրով ու զէնքով, նոյնքան իր գրչով ու խօսքով հմայեց ժողովրդական բազմութիւնները, մանաւանդ երիտասարդութիւնը, որ իր տարիքի բերումով, վառ արիւնի մղումով գիւցազնական խոյանքները կը սիրէ, եւ արհամարհելով մահը, յանդգնութեամբ կը նետուի գիւցազնական խոյանքներու մէջ :



Նժդեհի նկարուած 1935ին, Սոփիա, խումբ մը ընկերներով

Զօրավար Գարեգին Նժդեհ կը հրամայէր իր ունկնդիրները մասնաւորապէս անոր համար, որ իր խօսքերը միշտ եւ ամէն տեղ, ամէն ժամանակ հայաշունչ ու հայադրոշմ էին, լեցուած իր սնուցած անսահման յոյսերով եւ հայաշխարհի խորհրդանիշ Արարատին պէս անխախտ հաւատքով :

Նկատի ունենալով հայ ժողովուրդին վիճակուած անօրինակ ճակատագիրն ու տարադիր կեանքը, ճշմարտութենէ հեռացած չենք ըլլար, եթէ ըսենք, որ զինուոր ու զօրավար Նժդեհին չափ օգտակարութիւն ունեցաւ ազգային ու մանաւանդ կուսակցական գործիչ Նժդեհը հայ ժողովուրդին, եւ մասնաւորապէս Ամերիկահայ մեծ գաղութին :

Յայտնի իրողութիւն է, որ բովանդակ սփիւռքի մէկ միլիոն հայութեան կեանքին մէջ իւրայատուկ ու մեծ տեղ մը կը գրաւէ Ամերիկահայ մեծ գաղութը, որ ի միջի այլոց բախտաւորութիւնը ու-

նեցած է իր մէջ ունենալու ազգային ու կուսակցական բազմաթիւ գործիչներ, մտաւորականներ, եւ բարձրաստիճան եկեղեցականներ: Այդ հատընտիր ու շրջուն գործիչները այցելելով Ատլանտեանէն մինչեւ Պաղատական ովկիանոս, այլ խօսքով Նիւ Եորքէն մինչեւ Քալիֆորնիա տարտղնուած հայ գաղութները, խասլրիկներ բերած են հայրենիքէն, այս հայրենապաշտ գաղութին, բոցավառ խօսքերով արծարծած են ճշմարիտ հայրենասիրութեան հուրը տարագիր դանդուածներուն մէջ, եւ շուայլօրէն թափած են իրենց սրտի, մտքի ու հոգիի իմացական դանձերը, խանդավառելու, քաջալերելու համար զիրենք ունկնդրող հայրենակարօտ բազմութիւնները:

Այդ գործիչներէն մէկը եղաւ նաեւ զօրավար Գարեգին Նժդեհը, որ իր անձին ու խօսքին հմայքով մակընթացութեան նոր շրջան մը բացաւ Ամերիկահայ գաղութին մէջ: Ո՛ւր որ գնաց, իր անունը ձգողականութեան անդիմադրելի ուժով մը իրեն քաշեց ժողովրդական բազմութիւնները՝ բոլոր խաւերէն:

Անշուշտ կարելի է ըսել, որ ատիկա կը բացատրուէր այն բանով, որ ինք նոր դէմք էր, որ իր հետ բերած էր Հայաստանի մէջ Փետրուարեան ժողովրդական ապստամբութենէն ետք, Զանգեզուրի լեռներուն ու ձորերուն մէջ Մամիկոնեան քաջութեամբ համայնավար բռնակալութեան դէմ դիւցազնօրէն մարտնչող զօրավարի անունը:

Բայց, մեծ տարբերութիւն մը կար իր եւ այցելող միւս գործիչներուն միջեւ: Այդ հիմնական տարբերութիւնը այն էր, որ զօրավար Գարեգին Նժդեհ իր հայրենաշունչ խօսքի ուժով հմայեց ո՛չ միայն հին սերունդը, այլ նաեւ ուժգնօրէն ցնցեց Ամերիկահայ նոր սերունդը, անոր մէջ արծարծեց հայասիրութեան անթեղուած կրակը, խանդավառեց զանոնք իրենց ծնունդ տուող ժողովուրդին ծառայելու գաղափարով, ապա կազմակերպեց Հ. Յ. Դ. «Յեղակրօն Ուխտեր»ը, որոնք յետոյ ընդունեցին Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն անունը:

Ամերիկահայ գաղութին այցելող բոլոր գործիչներն ալ անտարակոյս որ աւելի կամ պակաս չափով աստարեցին հայապահպանման գործին: Այդ գործիչներու սքանչելի փաղանդին մաս կազմեցին Սիմոն Վրացեան, Արշակ Զամալեան, Գասպար Իփէկեան, Վահագն Տաթեւեան, Արշակ Վռամեան, Ակնունի, Վ. Արծրունի, Մարգիս Ռշտունի, Մնար, Սահակ Զթճեան, Արսէն Միքայէլեան, Մերուժան Օղանեան, Կարօ Սասունի, Ռուբէն Դարբինեան, Արտաշէս Վանարեան, Զօրավար Սեպուհ, հրամանատար Սմբատ, Կոպեռնիկ Թանտրըճեան, Վարդգէս Ահարոնեան, Գուրգէն Մխիթարեան, Յակոբ Պաշմանեան, Յովհաննէս Արշակունի, Զօր. Դրօ եւ դեռ ուրիշներ: Ոչ մէկ կասկած, որ անոնք բոլորն ալ ամէն նեղութիւն ու դրկանք յանձն առնելով շրջեցան քաղաքէ քաղաք, գաղութէ գաղութ, եւ նուիրումով կատարեցին իրենց հայրենասիրական, կուսակցական

սպարտականութիւնը: Բայց, արդարութեան ու սպասմութեան համար պէտք է արձանագրել, որ զօրավար Գարեգին Նժդեհն էր որ ամենէն շատ եւ ամենէն աւելի մօտէն շփում ունեցաւ ժողովուրդին հետ, մասնաւոր ջանք ու ճիգ թափեց կազմակերպելու համար ամերիկահայ նոր սերունդը: Ան էր, որ իր ցեղաշունչ խօսքով կրցաւ Ամերիկայի մէջ ծնած ու մեծցած նոր սերունդը կազմակերպել Հ. Յ. Դ. դրօշին տակ:

Իրեն տրուած ժամանակը կարճ էր: Հազիւ քանի մը տարի մնաց Ամերիկայի մէջ: Բայց այդ կարճ ժամանակուան մէջ իսկ կըրցաւ խօսիլ նոր սերունդին հետ այնպէս, ինչպէս իրմէ առաջ ոչ ոք կըրցած էր խօսիլ:

Զօրավար Գարեգին Նժդեհ այնքան խանդավառուած էր ամերիկահայ նոր սերունդով, որ առասպելական համարուելու չափ առաքելութիւններ կը կապէր անոնց, եւ երբ հիներէն ոմանք չափազանցութիւն կը տեսնէին իր ակնկալութեանց ու վերադրումներուն մէջ, շեշտակիօրէն կը վիրաւորէր զանոնք: Հասկնալի է, որ Ամերիկա նոր եկողի մը համար դժուար էր տեսնել ամերիկեան մշակոյթի այն համայնակուլ ծովը, որուն մէջ կ'ընկղմէին բոլոր ազգերու դաւակները: Ծայրայեղութիւններ անտարակոյս որ կային իր ակնկալութեանց, եւ այդ առնչութեամբ ալ կատարած վիրաւորանքներուն մէջ: Բայց, էականը այն էր, որ ինք հաւատքով կը խօսէր, եւ այդ հաւատքի անտեսանելի կապերով ալ իրեն կը կապէր նոր սերունդի արժանաւոր անդամները:

Եթէ ամէն մէկ գործիչ ու խմբադիր, մանաւանդ անոնք որ աւելի երկար մնալու առաւելութիւնը ունեցան այս երկրին մէջ, զօրավար Գարեգին Նժդեհին չափ հետաքրքրուէր ամերիկահայ նոր սերունդով, եւ անոր ցեղաշունչ ոգիով խօսէր անոնց հետ, անտարակոյս որ շատ աւելի երկարաձգուած կ'ըլլար Ամերիկահայ դաշնութի գոյութիւնը:

Զօրավար Գարեգին Նժդեհ իր սրտի ու հոգիի ամբողջական սիրով սիրեց հայ ժողովուրդը, իր կեանքի ընթացքին ամբողջական սիրով ծառայեց հայ ժողովուրդին, եւ ի վերջոյ համայնավար բռնակալ իշխանութեան ձեռամբ շարժարալի խոշտանգումով նահատակուեցաւ հայ ժողովուրդին համար:

Բայց, իմացեալ մահը անմահութիւն է: Սիպերիոյ սառնամանիքներուն մէջ հողեղէն մարմինն է որ խոշտանդեցին: Հայրենապաշտ զօրավար Գարեգին Նժդեհը պիտի ապրի հայ ազգային յեղափոխութեան, հայ ազատագրական սրբազան պայքարի սպասմութեան մէջ:

Յաւերթական յարգանք, յաւերթական խունկ եւ օրհնութիւն իր անմոռանալի հայրենապաշտ մարդու յիշատակին:

ՀԱՅԿ ԱՍԱՏՐԵԱՆ



Հայկ Ասատրեան ալաշկերտցի է: Նախնական եւ երկրորդական ուսումէ ետք, Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ կ'ուղարկուի Փրակա, համալսարանական ուսում ստանալու համար: Փրակայի եւ Գերմանիոյ մէջ կը հետեւի իմաստասիրութեան, ստանալով «տոքթօր փիլիսոփայութեան» տիտղոսը: Եղած է միշտ Նժդեհի հետ, գրեթէ գործակից:

Համաշխարհային Բ. պատերազմին, երբ Պուլկարիոյ մէջ համայնավար վարչակարգ կը հաստատուի, ուրիշներու կարգին կը ձերբակալուի նաեւ Հայկ Ասատրեան, որ շուրջ տաս տարի բանտարկուած կը մնայ, քանի մը վայրեր տեղափոխուելով:

Երբ Սոփիա կը վերադառնայ, արդէն իսկ առողջութիւնը բոլորովին քայքայուած է: Աւելին, չի դիմանար այն իրողութեան, որ իր կիներ վերամուսնացած էր, նկատի ունենալով որ պուլկար իշխանութիւնները յայտնած էին, թէ ինք մեռած է (ուրիշ երկու աղջիկ գաւակ): Սոփիա վերադարձէն քանի մը շաբաթ ետք, ուրեմն, Հայկ Ասատրեան յանկարծամահ կ'ըլլայ:

ՄԻ ՓՈՔՐԻԿ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ (*)

Քչեր, շա'տ քչեր մեր կեանքում խօսում, դրում կամ գործում են «արիւնով ու ջղերով»:

*Բարձր տեմպերամենտի(**) և հզօր անհատականութեան հոգեբանական տիպարներ են դրանք, որոնք աչքի են ընկնում իրենց հարադատած գաղափարներն ու ճշմարտութիւնները կրօնական խանդավառութեամբ ապրելու յատկութեամբ եւ իրենց ինքնատիպ ոճով — ընդհանրապէս ֆրագմենտար(***) բնոյթի:*

(*) Այս գրութիւնը որպէս յառաջարան դրուած է Նժդեհի «Յեղի Ոգու Շարժը» գրքին:

(**) Խառնուածք, նկարագիր:

(***) Կտրատուած:

Անկասկածօրէն դրանցից մէկն այս գրքոյկի հեղինակն է — մի մարդ, որ իր խառնուածքը խորհրդանշող փրագմենտաբ մտածումով ու ոճով, յաճախ երեւում է հայ խօսքի ամբիոնի կամ հայ մամուլի եւ գրքի էջերում:

Սոյն հրատարակութեան առիթով, — որ ի դէպ միայն բեկորներ է բովանդակում Նժդեհի հետտրական ստեղծագործութիւնից, — չենք ուզում լայնօրէն դրադուել հեղինակի անձնաւորութիւնը կերպաւորող հոգեւոր տարրերով, չենք ուզում անդամ նրա աշխարհայեցողութեան ամբողջական պատկերը տալու փորձն անել: Դրա հանդէպ սուրք տալով ա՛յն վարկածին, թէ երկը հասկնալու համար անհրաժեշտ է երկասիրողը ճանաչել, մի քանի ընդհանուր դժերով պիտի դիմորոշենք հեղինակը, այսինքն պարզենք հոգեւոր կարգի ա՛յն տուեալները, որոնք պայմանաւորում են նրա ցեղաշունչ խօսքը եւ գրուածքը:

Որո՞նք են դրանք:

Ա) Բարձր խառնուածք. — Ո՛չ միայն Նժդեհի խօսքը, այլև նրա գրական ոճը թողնում են ա՛յն անայլայլ տպաւորութիւնը, որ նա բարձր խառնուածքի մի ստեղծագործ է: Հոգեբանական այս տիպարի առանձնայատկութիւններից մէկն ա՛յն է, որ նա հազիւ թէ գրադուում է արտասեան իրականութեանց վերլուծմամբ եւ ընդհակառակն անդադար դեղերում է սեփական «ես»ի անդունդներում: Ինքնապրպտումով է կառուցում նա իր ճշմարտութիւնները: Նշանակապաշտ է նա եւ խորհրդապաշտ. մտածելիս՝ ընդվզում է բանապաշտական դատելակերպի դէմ, ճշնում է խուսափել հոգեւոր մեքենականութիւնից եւ յաճախ կառչում է տարերայինին եւ յուզականին: Նա ապաւինում է ներդերձականին, սակայն սեփական «ես»ի փլուզման վտանգից սարսափած՝ ներեսում է մի բնական պատուանդան, աստուածացնում մի համեստ եւ համակուելով կրօնական վերացման զգացումով թափանցում է ենթագիտակցականի մարդում: Համեստը, որ դարձած է Նժդեհի հոգեւոր պատուանդանը՝ ցեղն է: Սա է շեշտում եւ երանգաւորում նրա խառնուածքը: Յեղակրօնութիւնն է լեցնում նրա անձնաւորութիւնը: Ենթագիտակցականը, յորում անհատական «ես»ը հանդիպում է ցեղային «համեստ»ի տարերքին, ամէն դէպքում չի՛ հանդիսանում հոգեւոր ներշնչարան: Այդ կախուած է նրանից, թէ տուեալ խառնուածքը ո՞րպիսի դիրքորոշման է մղում իր անօթին — անհատին, բախողակա՞ն, թէ՞ ներդաշնակելի: Առաջին դէպքում՝ ցեղային եւ անձնական «ես»երի միջեւ ստեղծւում է անկամբջելի մի վիճ, որի հետեւանքով անհատը մատնւում է ներքին ողբերգութեան. նրա խառնուածքը սկսում է աղօտանալ եւ ի վերջոյ նա դառնում է սովորական մի եսապաշտ, անձնական փառասիրութեան մի դերի: Երկրորդ դէպքում՝ երկու «ես»երի ներդաշնակ ձուլումով կազապարւում է ցեղատիպ մարդու հուժ-

կու անձնաւորութիւնը: Ներհոգեւորի այս բարեբախտ ձուլումով, ահա՛, կերպաւորուած է Նժդեհի էութեան երկրորդ զիծը — նրա անհատականութիւնը:

Բ) Հօր անհատականութիւն.— Մէկի հոգեւոր ֆիւնիոնումին բնութագրելիս՝ մարդս միշտ էլ որոշ երկմտութիւն է ապրում: Մենք գործ ունենք փոթորկալից անցեալի տէր մի անհատի, հայկական չափանիշով վերցրած պատմական մի անձնաւորութեան հետ:

Նժդեհի անձնաւորութեան մասին խորհրդածելիս՝ մեր դէմ ծառանում են մեկնաբանութեան կարօտ մի քանի բարդ կնճիռներ: Որո՞նք են այս մարդու անհատականութիւնը ձեւակերպող գործօնները. ո՞րն է նրա հոգեւոր գանձերի շտեմարանը. ի՞նչն է նրա կորովն անսպառ դարձնում եւ նրա խօսքի թափը՝ ահռելի: Կարիք չկայ հոգեբանական նոր պրպտումների դիմել: Անհատը միշտ էլ մնում է հոգեւոր թզուկ, եթէ նա չի ներծուլում մի հաւաքական «ես»ի, եթէ ընդունակ չէ դառնալ նրա մոլութիւնների եւ առաքինութիւնների կրողը, նրա ներկայացուցիչը, միկրոկոսմոսը բոլոր դէպքերում, իսկ վտանգի պատմական վայրկեաններին՝ նաեւ նրա մարդարէն, գուշակը եւ առաջնորդը:

Մեր եղերաբախտ ընկեր Յ. Զարիֆեանը յաճախ էր պատմում Դիլիջանի եկեղեցու բակում Նժդեհի խօսած ճառի, — Ղարաքիլիսէի պատմական ճակատամարտը հոգեբանօրէն կարելի դարձնող խօսքի, — մասին: Նա պատմում էր եւ դարմանում մարդկային խօսքի հոգիները յեղաշրջող եւ ցնցող ուժի վրայ: Իսկ հիմա՞. 14 տարի յետոյ հա՛րկ է ճշմարտագրել, թէ առանց ցեղի հոգեւոր շտեմարանից օգտուելու բարոյական համարձակութեան, առա՛նց սեփական «ես»ի մակոյկը ցեղի ոգու խռոված ովկիանին յանձնելու բնազդական սիրոյ՝ անկարելի կը լինէր ներքին քառսի մատնուած, խուճապահար բազմութիւններին նման խօսք ասել եւ պարտուողական ոգիներում ցեղի հզօրանքի յոյսն ու կրակը բորբոքել: Յեղի ոգու տարերքն էր, որ Նժդեհին Զանգեզուրում դարձրեց հօր անհատականութիւն, նրա՛ ձայնով է, որ նա ցայսօր էլ մնում է պերճախօս:

Նժդեհի անհատականութիւնը, համոզումները, կրօնը պայմանաւորուած են ցեղով:

Նա պաշտամունք ունի Ահարոնեանի հանդէպ, որովհետեւ սա «անցաւորից յաւիտենականը տանող ճամբի վրայ հանդիպել է իր ցեղի ոգուն» եւ առաջնորդւում է նրա շնչով:

Նա մոլեկրօն դաշնակցական է, որովհետեւ այս կուսակցութիւնը ծնած է մեր «ցեղի ոգու շարժից», որովհետեւ նրա մէջ «ցեղի ձայնը կայ», որովհետեւ նրա խոստացած բարոյական երջանկութիւնը՝ հայ անհատ մարդու հոգեխառնումն է՝ «ցեղի ոգու հետ»:

Նա փառաբանում է հայրենիքը, որովհետեւ նա ցեղի հոգեւոր բոյնն է: Օտար երկիրը հայրենիքի «ստուերն է» ասում է նա: Նրա

համար բոլոր առաքինութիւնների շախանչը հայրենապաշտութիւնն է: «Անհայրենասէրը — անառաքինի է»: «Մշակոյթը հայրենիքի հողերը դէմքն է», որով «հայրենապաշտումից զուրկ մշակոյթը մշակոյթ չէ»:

Նա երկիրը զանազան սպասում է «Հայ Գերմարդ»ի, «նոր-հայ» մարդու յայտնուելուն, որովհետեւ նրանից է ակնկալում ցեղի վրէժը լուծելու, ցեղի տունը վերահասուցելու նուիրական գործը:

Նա երկրորդում է հայութեան տխրանական ցաւին, որովհետեւ նա ցեղի ցաւն է — ցաւը, որ նրան տալիս է ա՛յն յոյսը, թէ «առապանքից ու ամօթանքից» ծնունդ պիտի առնի մեր «նոր կրօնը — հպարտանքի կրօնը»:



1) Կուռօ Թարխանեան, 2) Պուլկարացի Յարութիւն, 3) Ալեքսան Ծարափեան, 4) Զօր. Գարեգին Նժդեհ, 5) Լեւոն Բէնշիեան, 6) Նիկոլ Օտապաշեան (նստած):

Մենք կ'ասենք նաեւ վրկութեան եւ հզօրանքի կրօնը — «Մա՛հ ներքին տկարութեան»:

«Արիւնով ու ջղերով» ասուած եւ ապա դրի առնուած այս խօսքերը լուծում են Նժդեհի հզօր անհատականութեան գաղտնիքը: Նա պայմանաւորուած է ցեղային մեծ «եռ»ին ներդաշնակօրէն հողեխառնուելու, համաձուլուելու կարողութեամբ, ասել է ա՛յն ուժով, որ Նժդեհին մղում է դառնալ հայրենապրումի եւ ցեղապաշտումի մոլեռանդ քարոզիչը:

Գ.) Ֆրագմենտարիզմ. — Արդէն նկատուեց, որ բարձր տեմպերամենտի ու հզօր անհատականութեան հողերանական տիպարին իւրաքանչեւ է ֆրագմենտար մտածում, որով եւ ոճ: Մեր դրականութեան մէջ այսօրինակ ոճն իր կատարելութեան է հասնում Նարեկացու մօտ, իսկ համամարդկային հողերու ստեղծագործութեան մարդում՝ նրա տխրանք նիցչէն է:

Նժդեհի ոճն ու մտածումն էլ կրում են Փրագմենտարիզմի ուրուզ դրուզմ : Նրա մտածումն արդէն զուրկ է սխտեմների շրջանակում սեղմուելու ընդունակութիւնից : Բոլոր Փրագմենտարիստների պէս նա էլ ստեղծագործում է ո՛չ թէ թելերով, որոնք ի վերջոյ հիւսուածքի, այսինքն, սխտեմի պիտի վերածուեն, այլ հանգոյցներով : Ո՛չ թէ խաղաղ դարգացում, այլ խոյանք. ո՛չ թէ երկարապատում եւ զգուշաւոր շարայարումներ, այլ կարճ խորհրդածութեանց յանկարծօրէն յաջորդող վճռաշունչ բանաձեւումներ — ահա՛ Նժդեհի մտածման եղանակը :

Փրագմենտար ոճն ըստ ինքեան ապացոյց է ենթակայի հոգեւոր աշխարհի հարստութեան եւ խորութեան :

Փրանգմենտարիստը խուսափում է ձեւերին եւ սովորութեանց կոմպրոմիսներ անել : Չօրեղ է նրա մտքի կաղապարիչ աղղակը : Բնադանցումի արուեստագէտ է նա : Նրա արտայայտութիւնները պատկերաւոր ընդհանրացումներ են — համադրութիւն եւ այլարանութիւն միասին : Նրա երեւակայութիւնն անիշխանական մի ուժ ունի, մի ուժ, սակայն, որ միշտ նոր կերպեր է ծնում. Փրագմենտարիստը նորաստեղծ է : Նրա երջանկութիւնն է դառնալ իր ներկայացրած հաւաքական «ես»ի պատգամախօսը : Այդ է պատճառը, որ մարդկային յարաբերութեանց աշխարհում, հոգեհաղորդ տարրերի համար նա դառնում է անդերազանցելի կաղմակերպիչ եւ հրահրիչ, թշնամու հանդէպ, սակայն, մի՛շտ մնում՝ ատելալատ բացասիչ : Սլաքներ ունի փրագմենտարիստի խօսքը. նրա մտքերը պայթուցիկներ են, որոնք ձգտում են սրտերը հրդեհել՝ երկարաշունչ չեն նրանք, որովհետեւ շրթունքի խօսք լինելուց առաջ, սրտի պոսթիւմներ են :

Փրագմենտար ոճաբանի հոգեբանութեան այս գիծերը մենք ընդնշմարում ենք արդէն «Էջեր իմ օրագրէն» ու «Բաց Նամակներ Հայ Մտաւորականութեան» գրքոյկներէն, «Որդիների պայքարը հայրերի դէմ» գրքի, եւ «Յիշիր պատերազմը» յօդուածաշարքի մէջ : Մենք հանդիպում ենք նրանց նաեւ այս գրքոյկում, ինչպէս նաեւ բոլոր դէպքերում, երբ կարդում եւ մանաւանդ երբ լսում ենք Նժդեհն :

Հապճեպով եւ հարեւանցիօրէն վերլուծելով երկասիրողի մի քանի գծերը՝ մենք գրեթէ սպառեցինք մեր խօսքը նաեւ երկի մասին : Նժդեհը նրանցից է արդէն, որոնք նոյնանում են իրենց երկին :

Ի՛նչ յատկապէս սոյն գրքոյկի հրատարակութեան առիթով ընթերցողների ուշադրութեան պիտի յանձնուէր արդէն ուրուագծուեց այս խորհրդածութեանց ա՛յն մասում, ուր խօսք եղաւ հեղինակի անհատականութեան շուրջ : Կրօնականութեան հասնող ցեղապրումի քարոզն է այդ — մի քարոզ, որ իր էութեամբ նոր չէ, սակայն իր թա-

փով՝ նորատիպ : Ժողովուրդները ինքնավերկուծիւնն ու յաղթական վերելքը պայմանաւորուած են նրանով, թէ նրանց պատկանող անհատները որպիսի ընդունակութիւն ունեն իրենց անձնական կորովը նուիրարեքել ցեղազրօշ մի զաղափարի իրականացման գործին : Այս նուիրարեքուածը, սակայն, ո՛չ այլ ինչ է, քան գործնական իմաստութիւն՝ անհատական անցաւորը ցեղի մէջ յաւիտենական արժէքի, ասել է մշակութադործ ուժի վերածել : Բայց առանց զխտակցական եւ ընտանեկան խոր ցեղապրումի՝ անհատը միշտ էլ իր փոքրիկ ուժով մնում է՝ կենտրոնախոյս :

Իսկ այդ գէպքում ո՞ւր կը մնայ մեր վրէժի գործը, ո՞ւր՝ հայրենիքը վերաշինելու մեր երազը :

Բայց ահա՛ Նժդէհը մասնանշում է ձյոզական մի կենտրոն — ցեղի տառապանքը : Սա է աշխարհից մեզ ընծայուած ընդհանրական պարզեւր. ծանր յիշատակի պէս նա չօքել է բոլորիս սրտին : Նա է մեր ցեղի հոգեւոր պիտակը. նրանով է ճանաչում մեզ աշխարհը եւ նրա անունով է, որ պիտի գործենք բոլորս : Տառապա՛նքը, որ իր լծակից սպանիչ ամօթանքով պիտի խեղդէ բոլորիս, քանի դեռ թուրքը մնում է անպատիժ :

Եւ տառապա՛նքը, սակայն, որով կենագործ ազգերն իրենց ցեղի նժոյզն են մտրակում գէպի Յաղթանակ :

Պիտի կարողանա՞նք այս տառապանքը ստեղծագործ ուժականութեան վերածել — սա է մեր կեանքի մեծագոյն պլոքիւմը, մեր գալոց պատմութեան միակ խորհուրդը :

Այս գորքոյին ասում է՝ այո՛ : Նա աւետում է մեզ Հայ-Գերմարդու երկունքը :

Մեր օրերում, երբ վերջապէս որոշ յուսատու խոովք է նկատուում ոգիներում, երբ անակնկալներով հարուստ մի յղութեան նախանշաններն են ընդնշմարում հայ կեանքում՝ պէտք է այս ցեղաշունչ գրքոյի կրկին եւ կրկին կարդալ : Բայց եւ խորհրդածել նաեւ միջոցների, մեր ինքնավերկուծեան տեխնիկի մասին : Նրա քարոզած խօսքերը հաճելի են, բայց եւ ծանր պարտականութիւն են դնում մեր ուսերին : Որովհետեւ «մա՛հ ներքին տկարութեան» պատգամը հողերանական մեծ նախապատրաստութիւնն է պատմական ա՛յն գործնական եղբակացութեան, որ վաղը չի՛ կարող այլ խօսքով բանաձեւուել, քան՝ մահ արտաքին քշնամուն : Իսկ այդ հնարաւոր կը դառնայ ցեղի հոգեւոր տիտանականութեան համապատասխանող մի տեխնիկով :

Հ. ԱՍԱՏՐԵԱՆ

(Դոկտ. Փիլիսոփայութեան)

Ռ Ո Ւ Բ Է Ն Ն Ա Ր Ի Ն Ե Ա Ն



Վ Ե Ր Յ Ի Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

Լ Ե Ռ Ն Ա Ղ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Օ Տ Ի Կ Ա Ն Ց Ե Ա Լ Ի Ց

Երբ անդրադառնում ենք հայ նորագոյն պատմութեան ազատագրական եւ հայապահպանման վեհ ու փառաշուք դրուագներին, մեր աչքերի առջեւ բարձրանում է շքեղ հոյլը այն հայրենանուէր անձնուրացներին ու անմահներին, որոնք զարգարեցին հայ ազգի ազատագրական ու յեղափոխական պատմութեան էջերը՝ իրենց անձնուէր խոյանքներով, ու դարձան ներշնչարան հետագայ սերունդների համար :

Այդ ընտրեալներից էր նաեւ Գ. Նժդեհը, որ 1956 թուին առյաւէտ փակեց աչքերը հեռաւոր Սիպիւրի սառնամանիքներում, հայրենիքի ու հարազատների անմար կարօտը իր սրտում :

Նժդեհի եւ նման անմահների կեանքը վերապրողներին համար երազ է թւում, իսկ կատարածը՝ հէքեաթ...

Նժդեհը հայ կեանքում նոր մարդ չէ. նրա անունը լսած ենք Ատրպատականի սահմանադրական շարժումների օրերին, Պալքաններից, երբ ուսանող էր պուլիարական գինուորական դպրոցում, իսկ յետոյ երբ մասնակցած էր Պալքանեան պատերազմին, տաճիկների դէմ, որպէս սղայ եւ պարզեւատրում էր շքանշաններով: Եղել է բանտերում Հ. Յ. Դաշնակցութեան աչքառու գործիչների հալածանքների օրերին:

Նժդեհը ունեցել է իր գնահատելի մասնակցութիւնը Հայաստանի Հանրապետութեան ստեղծման համար մղուած հերոսական կռուիւններին:

Իսկ 1918 Մայիս ամսուան Ղարաքիլիսայի հերոսական կռուիւնների նախօրեակին, երբ հայկական բանակի բարձր հրամանատարութիւնը մասնուէլ էր անորոշ վիճակի, իսկ զօրամասերը խուճապի, եւ շատերը, անուններ չյիշենք, արդէն բռնել էին Դիլիջան — Թիֆլիս ճանապարհը, երեւում է Նժդեհը եւ իր կրակոտ ճառերով լքուած զօրամասերը սղեւորում, «Մահ կամ Ազատութիւն» գոչելով վերականգնում ընդձուած հողիները: Այդ բոպէներին աննման Վահան Նաւասարդեանը, ի տես այդ բոլորի, արտասուում էր ու մազերը փետում, «Ամէն ինչ կորցրինք» ասելով:

Հրամանատարութիւնը նկատելով զօրամասերի անսպասելի սղեւորութիւնը եւ պայքարը շարունակելու պատրաստակամութիւնը, առաջարկում է զօրամասերի ղեկավարներին եւ սպայութեան ժողովների ունենալ եւ շուտափոյթ յայտնել իրենց վճիռը՝ կռուե՞լ թէ նահանջել:

Բոլոր գնդերն ու առանձին զօրամասերը որոշում են հանում՝ կռուել մինչեւ վերջին կաթիլ արիւնը, հայ ժողովրդի փրկութեան համար:

Մինչ այդ, Նժդեհը հեծելազօր հարիւրեակի գլուխն անցած հետախուզութիւն էր կատարել եւ ղեկուցել գլխաւոր հրամանատարութեան, որ թշնամին Դիլիջան չէ մտած եւ տարածուած լուրերը ստոր անձանց գործն են եղած:

Ստեղծուած սղեւորութեան շափ ու սահման չկար: Անմիջապէս հրահանգւում է գրաւել նախօրօք որոշած դիրքերը եւ ամրացնել պաշտպանութեան գիծը:

Բանակը երգ ու նուագով շարժւում է առաջ և գրաւում Մամեխլերան շղթան:

Կացութիւնը փրկուած էր:

Երկարեցի, ընդգծելու համար, որ Ղարաքիլիսայի հերոսական կռուիւններին եւս Նժդեհը ունեցել է խոշոր դեր:

*
**

Ա. Համաշխարհային Պատերազմի ընթացքին տեղի ունեցած ուսական յեղափոխութիւնը հիմնիվեր շրջեց աշխարհի կեանքը եւ փոթորկեց դարերով կողք-կողքի ապրող հարեւան ժողովուրդների հաշտ ու խաղաղ, զիրար հանդուրժող դրացիութիւնը, վարակելով բոլորին՝ վրէժի մտուցքով :

Այս ձեւի փոփոխութիւնները ճակատագրական նշանակութիւն ունեցան նաեւ Անդրկովկասեան ժողովուրդների կեանքում :

Բոլորը սկսեցին մտածել, որ արդէն հասել է պատեհ ժամանակը ձեռք բերելու իրենց անկախութիւնն ու ազատութիւնը եւ ընդարձակելու իրենց սահմանները՝ կոտորելով ու թալանելով զիրար :

Այս ընթացքը ինչպէս Լեռնահայաստանի, նոյնպէս եւ Ղարաբաղի երկու հարեւան՝ հայ եւ տեղական թաթար բնակչութեան միջեւ ստեղծեց անհաշտ թշնամութիւն, որ զնալով աւելի ու աւելի էր ընդարձակում եւ մթնոլորտը անտանելի դարձնում :

1918 թուի Փետրուար ամսից Լեռնահայաստանի թաթարները աւելի սանձարձակ են դառնում ու մասնակի սպանութիւնները, դաշտերից ոչխարի հօտ քշելը, գողութիւնները սովորական երեւոյթներ են դառնում :

Այդ անիշխանութեան շրջանում շատ ծանր օրեր էր ապրում Լեռնահայաստանը, կտրուած աշխարհից, օղակուած վայրենաբարոյ թշնամիներով եւ կանոնաւոր կապ չունենալով իր ներքին շրջանների հետ :

«Իէպի տուն» նշանաբանը վարակել էր նաեւ հայ զինուորութիւնը, արձակուրդով իրենց ծննդավայր գիւղեր հասնող զինուորները այլեւս չէին վերադառնում զօրամասերը : Գալիս են նաեւ սպաներ :

Եկողները ծանօթանալով ստեղծուած ծանր վիճակին՝ գործի են անցնում, սկսում են ստեղծել գիւղական վաշտեր եւ պաշտպանուել զիրքապահութեամբ :

Յիշենք այդ սպաներից մի քանիսին, որոնք իրօք գնահատելի աշխատանք են կատարում այդ ծանր օրերին, նախ քան Անդրանիկի, Շահմազեանի եւ Նժդէհի գալը :

Այս սպաներէն էին Հազարակցի փոխ գնդապետ Սմբատ Թորոսեան, Խոտանան գիւղացի՝ տեղակալ Յովհաննէս Տէր Պետրոսեան, Մեղրեցի փոխ գնդապետ Միքայէլ Մելիք Օհանջանեան եւ ուրիշներ :

1918-ի ամրան սկիզբներին Զանգեզուր է հասնում հայ ժողովրդական հերոս Անդրանիկը իր հարուածող զօրամասով :

Զանգեզուրցի գիւղացին, որ Անդրանիկի անունը աշուղների բերանից էր լսած, տեսնելով նրան իր մէջ, ինքզինք պաշտպանուած զգաց եւ դարձաւ աւելի անվախ ու խրոխտ :

Անդրանիկը տարածեց իր դուրգուրտ թևերը անպաշտպան ժողովրդի վրայ եւ ստիպուած եղաւ հետեւելու «Ակն ընդ ական» սկզբունքին :

Անդրանիկը մաքրեց Աղուղի-Վաղուղի աւազակաբարոյ դիւղերը, որոնք մեծ վնասներ էին հասցնում Զանգեզուրի ժողովրդին եւ հաղորդակցութեան կապը կտրում բուն Զանգեզուրի եւ Սիսիանի միջեւ :



Ն Ք Դ Ե Ն

Անդրանիկի ներկայութիւնը Զանգեզուրում զսպեց Ատրպէյճանի եւ տաճիկների վաղեմի ախորժակներն ու ձգտումները՝ տէր դառնալ Ղարաբաղ — Զանգեզուրին :

1918 թուի վերջերին, երբ Անդրանիկի եւ Զանգեզուրի յաղթական զօրամասերը Զարուղի բարձունքների թշնամու դիրքերն էին ուժրակոծում եւ Շուշի քաղաքի գրաւումը ժամերի խնդիր էր ու թաթար—տաճիկ ժողովրդի հարուստ վաճառականութիւնը գլխակորոյս փախչում էր դէպի Աղղամ եւ Պաքու, Զարուղ են հասնում անգլիական հրամանատարութեան ներկայացուցիչները եւ նենդաբար խարելով Անդրանիկին, կանգնեցնում արշաւանքը :

Խարեցին Անդրանիկին ասելով, որ հայկական դատը միջազգային սեղանի վրայ է եւ լաւ արդիւնքով պիտի լուծուի, եւ եթէ շարունակէ կռիւը՝ դրութիւնը կը փոխուի:

Անսպասելի էր Անդրանիկի համաձայնութիւնը, բայց տեղի տուաւ ասելով — իմ ամբողջ կեանքը զոհարեալ եմ հայ ժողովրդի համար, ես նրան վնասել չեմ կարող:

Կռիւը դադարեց, զոհուել էր անմոռանալի հայրենանուէր եւ խիզախ սպայ գլխապետ Ստեփան Սարգսեանը, որ արշաւանքի ժամանակ Անդրանիկի օգնականն էր:

Ատրպէյճանի կառավարութիւնը հանգստացաւ, իսկ դաշնակից հրամանատարութիւնը՝ Տումսոնի եւ Շարելուրդի ղեկավարութեամբ արժանացաւ մեծարանքների ու, ինչու չէ, նաեւ խոշոր նուէրների: Իսկ «գողալ» Շուշին հրկիզուեց եւ 8—10 հազար անմեղ հայեր զոհուեցին՝ սրի քաշուելով: Ղարաբաղի թեմի ժամանակի ծերունազարդ առաջնորդի կտրած գլուխը ձողի հազցրած պտտեցրին քաղաքի փողոցներում:

Ամօթ դաշնակից հրամանատարութեան, որ հայկական դատի լուծումը այս ձեւով սկսեց իրականացնել:

*
**

Չանգեզուրի ազգային մարմինները շատ անգամ դիմած էին Երեւան, խնդրելով օգնութիւն եւ ռազմամթերք, բայց այդ դիմումները մնում են ասպարդիւն, շնորհիւ Հայաստանի կառավարութեան ապրած ծանր եւ դժուարին վիճակին:

Վերջապէս, 1918-ի աշնան կ'որոշուի խումբ մը սպաներ ուղարկել Լեռնահայաստան, զարկ տալու համար ժողովրդի ինքնապաշտպանութեան գործին:

Նշանակուած են 7—8 սպաներ, մէկ բժիշկ, երկու հոգի քաղաքական աշխատանքների համար եւ մի խումբ զինուորներ:

Խմբի ղեկավար նշանակուած է գնդ. Արսէն Շահմազեանը, որ միաժամանակ լինելու է Չանգեզուրի զինուած ուժերի հրամանատարը եւ Չանգեզուրի նահանգապետը:

Շահմազեանը Երեւանում անյետաձգելի պարտականութիւններ ունենալով խմբի հետ չի մեկնում:

Խմբի մէջ լինում են՝ գլխապետ Ստեփան Սարգիսեան, տեղակալ Մուսայելեան, Վառատ Բազրատ Բազդասարեան, փոխ տեղակալ Յովհաննիսեան, զինուորական աստիճանաւոր Միքայէլեան, գլխապետ Ռ. Նարինեան, բժ. Հայկ Շահնազարեան, կ. Աթայեան եւ Մի. Աբրահամեան:

Խումբը հասնում է Գորիս մի անձրեւոտ օր, երեկոյեան:

Որոշուած է միւս օրը ներկայանալ Անդրանիկին: Հազիւ մէկ

Ժամ անցած Անդրանիկի վաշտապետներից երկու հոգի գալիս են եւ յայտնում, որ փաշան սպասում է ձեզ: Մի քիչ անյարմար դրութեան մէջ ենք դգում մեզ:

Կապիտան Սարգսեանը երկու հոգու հետ ներկայանալով Անդրանիկին՝ Երեւանից բարեւներ են հաղորդում, ինքը որոշ հարցումներ է անում Հայաստանի մասին, յետոյ առաջարկում է զնալ հանդրատանալ եւ առաւօտեան ներկայանալ ամբողջ խմբով:

Առաւօտեան ծանօթանալով բոլորի հետ, գլխ. Սարգսեանին եւ Ռ. Նարինեանին կարգադրում է մնալ Գորիսում, իսկ միւսներին նշանակելով գիւղական ճակատների հրամանատարներ, առաջարկում է մեկնել պաշտօնատեղիները: Այս խմբի մաս կը կազմէր նաեւ Սիմոն Յարութիւնեանը:

Սպաների խմբի հասնելուց հազիւ 10-15 օր անցած, Լեոնահայաստան է հասնում Գ. Նժդեհը մի քանի սպաներով եւ մի խումբ զինուորներով: Նժդեհը նշանակուած էր կառավարութեան կողմից Կապար-Գողթի շրջանի գինեալ ուժերի ընդհանուր հրամանատար:

Զմոռանամ յիշատակելու, որ նախքան Շահմաղեանի եւ Նժդեհի Չանդեղուր գալը, Անդրանիկից յետոյ գալիս են նաեւ Շուշուայ, եւ Գանձակի զնդերը, մի քանի հարիւր հոգի: Շուշուայ զնդի հրամանատարն էր զնդապետ Միք. Մ. Շահնաղարեանը (չուշեցի), իսկ Գանձակի զնդի հրամանատարը զանձակեցի Դոց. Մելքոնեանը:

Այս զնդերը կազմուած լինելով գլխաւորապէս զարարազցի, զանձակեցի եւ զանդեղուրցի զինուորներից, տեղ հասնելով եւ իրենց շրջաններից աննպաստ լուրեր լսելով, իւրաքանչիւրը ձգտում էր օր առաջ հասնել իր ծննդավայրը՝ հարազատներին փրկելու համար վերահաս վտանգից:

Այս զնդերը չարդարացուցին իրենց վրայ դրուած յոյսերը: Միայն սէտք է ասել, որ Չանդեղուր հասցրին բաւական ռազմամթերք, հազուատ եւ սպրէն, որոնց կարիքը մեծ էր այդ ժամանակ:

Անդրանիկը հեռանում է Չանդեղուրից, երբ արդէն Գորիս էր Չանդեղուրի գինեալ ուժերի հրամանատար եւ նահանգապետ զնդ. Ա. Շահմաղեանը:

Շահմաղեանի օրով, Ատրպէյճանի կառավարութիւնը օգտուելով դաշնակիցների նպաստաւոր տրամադրութիւնից, ուժեղացնում է իր ստնձղութիւնները:

Դաշնակիցները միացած Սուլթանովին, յայտարարում են Ղարաբաղ — Չանդեղուրը Ատրպէյճանի անբաժան մասը:

Թէ՛ Ղարաբաղը իր համագումարներով ու Ազգ. Խորհրդի որոշումներով եւ թէ՛ Չանդեղուրի անվախ հրամանատար զնդ. Շահմաղեանը, յենուած Չանդեղուրի կառավարութեան ու ժողովրդի անդիժող տրամադրութիւններին, որոշում են երբեք տեղի չտալ:

Դաշնակից հրամանատարութիւնը շատ միջոցների դիմեց Չան-

գեղուրը ենթարկելու համար Ատէրպէյճանին, անդամ սպառնաց որմբակոծել Գորիսը, և ժողովուրդը սարսափի մատնելու համար դրահապատ ինքնաշարժներ շարժեց դէպի Գորիս, բայց Չանգեղուրի անվախ զիւղացին մնաց անսասան, և էլ պատիւ իրեն, պահեց իր անկախութիւնը:

Ատրպէյճանի վերջին փորձը, — հերոս ժողովրդին զէնքի միջոցով ծունկի բերել, — փորձանք եղաւ կառավարութեան և զաշնակից հրամանատարութեան կողմէ նշանակուած Ղարաբաղ — Չանգեղուրի նահանգապետ տաքթ. Սուլթանովի համար:

Չանգեղուրը ընկճելու համար դօր. Շրխլենսկու առաջնորդութեամբ 15 հազարնոց բանակը ջարդուած և ցիր ու ցան եղած շունչ քաշեց Շուշում, ճանապարհին երգելով Չանգեղուրա գիտմայամ, Թուրշու սույր քեչմայամ (Չանգեղուր չեմ գնայ, Թուրշու ջուրը չեմ անցնի: — Թուրշու ջուրը Ղարաբաղի և Չանգեղուրի սահմանադրուխն է):

Այս յաղթական կռիւներում թշնամին տուէլ էր մեծ թուով սպանուածներ ու թողել խոշոր քանակութեամբ ռազմամթերք: Թողել էր տասնեակներով ձեռքի զնդացիրներ, որոնք տուփերից դեռ հանուած չէին:

Երբ գնդ. Շահմաղեան հեռանում է Չանգեղուրից (1919-ին), Լեռնահայաստանի բոլոր շրջանների հրամանատարութիւնը (բուն Չանգեղուրի, Սիսիան, Ղափան և Արեւիք) ստանձնում է Նժդեհը:

Այս ժամանակաշրջանը Լեռնահայաստանի անկախութեան պաշտպանութեան ամենաճակատագրական ու բախտորոշ շրջանն է լինում:

Այն որ չէին յաջողել զաշնակիցներն ու Ատրպէյճանը, փորձեցին իրականացնել մեծամասնականները, միացած տաճիկ դորձակալներին:

Մեծ անուն շահած հեծելազօրի հրամանատար Կուրոչկինի դօրամասը չգիմանալով Լեռնահայաստանի ազատատենչ դօրամասերի գրոհներին, կոտորակուած ու նուաստացած յետ նահանջեց:

Նժդեհը չընկճուեց անդամ այն օրերին, երբ Հ. Հանրապետութեան կառավարութիւնը հարկադրաբար երկրի իշխանութիւնը զիջել էր բոլշեւիկ իշխանութեան և Հայաստանի ղեկավարութիւնը տազնապի մէջ տուայտում էր:

Նժդեհը ժամանակին ապահովել էր նաեւ նահանջի ճանապարհը: Մտերմական կապ էր ստեղծել Լեռնահայաստանի և Իրանի սահմանադիւի տէր ու անօրէն Ամիր Արշադի հետ, որ մեծ յարգանք ունէր հանդէպ Նժդեհի: Ամիր Արշադի բարձրաստիճան սպաները քանիցս հանդիպել էին սպարապետ Նժդեհին Մեղրիում, հիւրասիրուել ու մեծ նուէրներով հեռացել էին:

Հանդիստ ու դադար չունէր Նժդեհը, ցերեկ թէ գիշեր նրա հա-

մար տարբերութիւն չունէր: Շրջաններէն ու դիրքերէն՝ գիշերները աւելի շատ այցելութիւններ կը տար քան թէ ցերեկը: Շրջանների զինուած ուժերը, գիւղացիութիւնը դժուարացուցանալով անքուն ժամեր կը սպառէր իրենց սիրելի սպարապետին դիմաւորելու: Նա պատրաստ էր ամէն տեսակ զոհողութեան, իր առաջադրած նպատակներին հասնելու համար:

Աննման ճարտասան, իր կրակոտ խօսքերով այնպէս կ'ողբերէր բազմութիւնները, որ վախն ու վտանգը կը չքանային բոլորի սրտերից: Հնարագէտ էր եւ ձեռներէց: Անասիկ Գեղուայ ձորը իր մաքի արդիւնք՝ ուժանակով լիքը տակառներով սարերից գլորուելով, սարսափի մատնեց տասնեակներով բազմամարդ գիւղեր ու գաղթեցրեց դէպի թաթարական հեռու շրջաններ:

Հ. Հանրապետութեան փետրուարեան ապստամբութեան ինքն էլ Սուստուպի գաղաթից հնչեցուց ապստամբութեան փողը՝ դեռ լոյսը չբացուած: Սարսափի մատնուած մեծամասնական զօրքերը առանց հազուստի ու դէնքի սկսեցին փախչիլ, գոչելով «Այս ինչ հրաշք է, Աստուած իմ»:

Սարերից, բլուրներից, կտուրներից կարկուտի արագութեամբ զնդացիրի ու հրացանի զնդակ էր թափուում:

Այսպէս պահեց սպարապետ Նժդեհը Լեռնահայաստանի անկախութիւնն ու ազատութիւնը, որ դարձաւ փրկութեան կամուրջ Հայաստանից տարադրուած 14—15 հազար ժողովրդի համար:

Շուրջ երեք տարուան իր անձնազոհ եւ փառաւոր գործունէութեամբ, Նժդեհ Լեռնահայաստանում արժանանում է մեծ ժողովրդականութեան: Հոն հիւսուում է իր մարտական ու հայրենանուէր մաքառումների փառապսակը:

Իսկ հետագայում Չանդեղուրը դարձաւ Սովետական Հայաստանի անբաժան մասը:

Հաւատում ենք, որ վաղ թէ ուշ Լեռնահայաստանի գաղաթներից մէկի վրայ իր հպարտ կեցուածքով պիտի բարձրանայ սպարապետ Գ. Նժդեհի գեղեցիկ արձանը, միշտ յիշելու եւ յաւէտ հպարտանալու հայրենանուէր գործով:

Ռ. ՆԱՐԻՆԵԱՆ

ԱՐՏԵՄ ԽԱՆԶԱՏԵԱՆ (ԶԱՆԳԵԶՈՒՐՑԻ)



Ծնած է Զանգեզուրի Գորիս ֆաղաֆը, ունեւոր ընտանիքի մէջ: Հայերէնի կողմին, սորված է նաեւ ռուսերէն:

Ա. աշխարհամարտի շրջանին եւ անկէ ետք, երբ Հայաստան քատերաքեմն էր կոխունքու, ինք ալ զինուորագրուած եւ մասնակցած է ազատագրական նակատամարտներու: Ինչպէս կ'երեւի իր գրութենէն, գործօն մասնակցութիւն ունեցած է Զանգեզուրի կռիւներուն մէջ, պատասխանատու պաշտօնով եւ իրեն վստահուած մարտիկները միշտ դէպի յաղթանակ առաջնորդած է:

Երբ Հայաստան խորհրդայնացաւ, Արտէմ Խանզատեան մնաց Զանգեզուր: Սակայն, որպէս համայնավար կարգերու «քշնամի», կը ձեռքաւարտուի եւ

երիտասարդ կեանքի տարիները կ'անցնին բանտերու մէջ: Գորիսի բանտէն կը փոխադրուի Երեւանի Զեկայի գնտանը, ապա Թիֆլիս, Մոսկուա: Ի վերջոյ կ'աւտորուի Սիպերիա, Հիւսիսային ծովուն մէջ Սալովկի կղզին:

1933ին կը յաջողի փախուստ տալ, ֆաղաֆէ ֆաղաֆ կը բափառի, կը հասնի իրանեան սահմանը, ուրկէ ազատութիւն կ'ընտրէ: Այս մասին կը գրէ. «Բարձրացել եմ սահմանին վրայ ցցուած բարձր լեռան մը գագաթը եւ զգալով, որ արդէն տարագիր եմ, մէկ բռպէ երեսս շուռ տուեցի դէպի Հայաստան երկիրը, մնաս բարով ասի ու սիրտս արիւնեւէն սարերն ի վար իջնելով ոտք դրի հիւրընկալ իրանի հողին վրայ»: Այժմ կ'ապրի Թեհրան:

ՄԷԿ ԴՐՈՒԱԳ ԴՐՈՅԻ ԵՒ ՆԺԴԵՂԻ ՎԱՐԱԾ ԿՈՒՒՆԵՐԻՑ՝ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

1919 թուի աշնան վերջին ամսի առաջին օրերումը Դրօն, մօտ վեց հարիւր հոգուց բաղկացած զօրամասով, ոտք դրեց Զանգեզուրի սահմաններին եւ ժամանեց Գորիս քաղաքը:

Դրոյի ժամանումիցը քանի մը օր անց, Զանգեզուրի ազգային խորհուրդը ժողով գումարեց, որին ներկայ եղաւ Դրօն:

Այդ ժողովին որոշում կայացուեց, որ Դրոյի հրամանատարութեամբ Յունուար ամսի 6-ին կռիւ սկսի Բարդիւշատի ձորերի թրջութեան դէմ, մինչեւ Հաքարու գետի սահմանը, որտեղ միանում

էր Որոտնա դետը, ապահով երթեւեկ հաստատելու համար մեր եւ Ղափանի հայութեան շրջանի միջեւ: Այդ ճանապարհը անցնում էր անդնդախոր ձորերի, սարերի, կիրճերի եւ խիտ անտառների (Ուղուն Մեշա անուամբ) միջովը, դէպի Ղափանի շրջանը:

Հրահանգուեց տեղական խմբերը կարգի բերել: Եապոն(*) եւ տաթեւացի խմբապետ Վարդանը հրահանգ ստացան ճանապարհուել Տաթեւ վանքը, խմբերը կարգի բերել եւ Յունուար ամսի 6-ին կոխ սկսել, Տանձաւեր բէկերի գիւղերը քարուքանդ անելէ ետք Շուռնուխ գիւղի վրայովը անցնել եւ արշաւանք կատարել Նաւու մեծ գիւղի վրայ, ուր թուրքերը կանոնաւոր ուժեր էին կեդրոնացրել:

Նժդեհին կարգադրուած էր Ղափանցիների խմբերին գլուխը անցած, Եղաւարտի շրջանիցը սկսած, օղակել թուրքերի գիւղերը մինչեւ Զէյվա գիւղի շրջանի անտառներով ծածկուած սարերը:

Գնդապետ Ամիրխանեանին հրահանգուած էր Խնձորեսկ գիւղիցը սկսած դէպի գետերը ընկած բոլոր բարձրութիւնները պատնիշել, որպէսզի Մաղաւուզի եւ Մաղմաղակի թուրքերն ու քիւրտերը ճանապարհ չունենան Բարդիւշատի ձորերի թրքութեան օգնութեան հասնելու:

Արտեմ Խանգաւեանին եւ Եապոնացուն հրահանգուած էր, իրենց խմբերովը կէօրուա հանդի բարձրութիւններիցը Մաղանջուղ գիւղի վրայովը իջնել, կտրել Բարդիւշատի ձորերի բերանին կառուցուած Լալաղարենց մեծ կամուրջը, այնտեղիցը անցնել եւ յարձակումն սկսել, վարդ ու ծաղիկներով լեցուն, սոխակների հայրենիքը համարուող Դոնդարլու Դամիրչիլար գիւղաքաղաքի վրայ:

Դրօն իր ուժերով բռնում է կեդրոնական մասը, քաղաքիցը դէպի Քարաունջ տանող ճանապարհի վրայովը եւ մօտենում է Բարդիւշատի թրքարնակ ձորերին:

Յունուար ամսի 5-ին սոսկալի ցուրտ օր էր. քալելիս, ձիւնը ոտքերիս տակին ճոճում էր, բարեբախտաբար քամի չկար: Ես եւ Եապոնացին մեր խմբերովը կազմ ու պատրաստ գիշերով ճամբայ ընկանք եւ լուսարացին (Յունուար ամսի 6-ին) Մաղանջուղի շրջանիցը սարերէն իջնելով, մօտեցանք ձորի բերանին ընկած Լալաղարենց կամուրջին. մէկ խումբ թողինք կամուրջի շրջանումը, թուրքերի առաջը կտրելու համար: Մնացած ուժովը շտապեցինք դէպի յարձակման անցնելու վարդ ու ծաղիկներով լեցուն, սոխակների հայրենիքը համարուող Դոնդարլու Դամիրչիլար գիւղաքաղաքի վրայ:

Դրօն իր ուժերովը Բարդիւշատի ձորերին հասնելուց էյվազլուի

(*) Եապոնը պէտք չէ շփոթել Եապոնացու հետ: Երկուսն էլ գորիսեցիներ էին, Եապոնը (Յովհաննէս Մելիք Օհանեանը) քաղաքիցն էր, իսկ Եապոնացին (Համբարձում Սարգիսեանեանը) Գորիս գիւղիցն էր:

կեղրոնական գիւղին նայող ժայռերի միջովը անցնող ճանապարհի վրայ թնդանօթները սարքում է եւ սկսում կրակ թափել թուրք գիւղերի վրայ: Թնդանօթի հապճեպ կրակների ներքոյ, զօրամասերը՝ դանազան շրջաններից, իջնում են դէպի ձորերը:

Տեղատարափ կրակոցներէն, թուրք ժողովուրդը անակնկալի է դալիս: Այնքան անակնկալ է լինում յարձակումը, որ թուրքերը ժամանակ չունենալով որեւէ ապրանք վերցնելու, թողնում են տուն տեղը եւ փախչում են պատսպարուելու, գիւղերի շրջաններումը ընկած Ուզուն Մեշա (Երկար Անտառ) անտառները:

Տաթեւացի Վարդանը եւ Եսայոնը իրենց խմբերովը, վանքին մերձակայ Տանձատափ գիւղի (Չանգեղուրի ամենալաւ մեղրը Տանձատափ գիւղն է տալիս) մօտովը անցնում եւ յարձակելով Տանձաւեր Բէկերի գիւղը, մոխրի են վերածում: Տանձաւերը քարուքանդ անելուց յետոյ, անցնում են անտառի մէջ գտնուող Շուռնուխի վրայ, մէկ օր տեւող կռուից յետոյ գրաւում են գիւղը եւ թուրք ժողովուրդին քշում դէպի Ղուբատտուի շրջանները:

Շուռնուխէն ամբողջ խմբերով առաջանում են, պաշարելու, կաղմակերպուած ուժերով լեցուն Նաւլու մեծ գիւղը:

Իրիկնադէմին կտրում են գիւղի բարձրութիւնները, առաւօտուն լուսաբացին կռիւր սկսում է: Թուրքերը զիմադրում են ամբողջ օրը: Յաջորդ օրը մթնշաղին, տաթեւացիներից մէկ խումբ, գիւղի գլխիցը յարձակման անցնելով պատռում է թուրքերի շղթան, մտնում գիւղը եւ կրակ ձգում փայտեայ տները. թուրք ուժերը կրռուելով նահանջում են անտառներն ի վար, դէպի Ղուբատտուի ձորերը: Մերոնք աէր ու տիրական են դառնում Նաւլուի շրջանին:

Եսայոնացու եւ իմ խմբերով, կէսօրը անց մօտեցանք Դոնդարլու Դամիրչիլար գիւղաքաղաքին:

Յաջորդ օր լուսաբացին յարձակումը սկսեցինք: Թուրքերը այդ օրը գիւղը մտնելու ճանապարհ չտուին. ուժեղ զիմադրեցին: Միւս օրը առաւօտեան Եսայոնացին՝ խմբի առաջ ընկած, արեւելեան կողմի ալիքների միջովը մօտենալով, պատռում է թուրքերի շղթան եւ մտնում քաղաք: Թուրք ուժերի զիմադրութիւնը թուլացաւ եւ երկկոյեան նահանջի ճանապարհը բռնեցին:

Սոխակների հայրենիք համարուող այդ գիւղը կրակի շտուինք:

Դոնդորլու գիւղաքաղաքը գրաւելուց յետոյ, շարժուեցինք դէպի անտառների ծերպերին թառած Նաւլու մեծ գիւղը, ուր մենք էլ միացանք Եսայոնի եւ Վարդանի խմբերին: Նաւլուի հրդեհին կրակով տաքանում էինք եւ մեզնից ներքեւ ընկած բնութեան հրաշալիքները դիտում:

Նժդեհը, Ղափանի թրքական շրջանները օղակելէն դալիս է Ձէյվա հայկական գիւղը, որմէ անցնում եւ մօտենում է Սուսան բարձր սարին: Այս լեռան դադաթը դարերից ի վեր մնացած էր դա-

լար, իսկ շուրջը ծածկուած էր խիտ ծառերով, անտառներով :

Նժդէհը մութ գիշերին բարձրանում է սարի գլուխը և բարձր ձայնով կանչ անում . «Հայո՛ց քաջեր, այրեցէ՛ք, աւերեցէ՛ք, որ օճն էլ բուն չդնի» : Քանի մը վայրկեան անցնելէ ետք, նորից էր կանչում . «Հայո՛ց քաջեր, Զանգեզուրցի ասպետներ, այրեցէ՛ք, աւերեցէ՛ք և քանդեցէ՛ք թուրք գիւղերը, որ օճն ու կարիքն անգամ բուն չդնեն . . . » : Մենք կրակներէ շուրջը տաքանալու պահին, գիշերուան խոր լուսթեան մէջ լսում ենք հեռուից եկող Նժդէհի ձայնը :

Նժդէհ գափանցի կտրիճների գլուխը անցած առաւօտեան եկաւ կրակի բաժին դարձած Նաւլու գիւղը :



1) Արտեմ Խանգատեան, 2) Նիկայայ Ղազարեան, 3) Գարեգին Ամիրխանեան, 4) Գարեգին Ամիրնանեան :

Մի փոքր հանգստանալուց յետոյ, Նժդէհ խմբաստանական ժողով դումարեց : Այդ ժողովին որոշեցինք թուրք ուժերին հետապնդել մինչև Մուղանի գաշտը : Խմբերի բաժանուած, ընդհանուր ուժերով, Նժդէհի հրամանատարութեամբը մեր ետևը թողինք այրուող Նաւլու գիւղը և շարժուեցինք անտառներն ի վար, գէտի Քիւրտխատանի մայրաքաղաք Ղուբատուն, քիւրտ ազդարնակութեան սիրտը :

Պէտք է խոստովանիլ, որ կռիւների ժամանակ, զինուորը շատ անգամ մոռանում է իր պարտականութիւնը և առանց հրամանատարի նա դնում է առաջ : Մենք մի կողմը թողած հրամանատար Դրոյին, թուրքերի գիւղերը դրաւելէն դնում էինք և շղիտէինք սրտեղ պիտի կանգ առնէինք :

Զորերը իջնելով, Որտանա գետը անցանք և Ղուբատուն

պաշարեցինք հիւսիսային կողմի բարձրութիւնները :

Կռիւր սկսուեց, թուրքերը դիմադրում էին, դիրքերը յետ չէին քաշում : Երրորդ օրը Ղուբաատուն ընկնում է : Եսպոնացին եւ ես, մեր խմբերովը շտապեցինք դէպի Սարու - Եաթաղի բարձրութիւնները, կտրելու Իլդրիմ բէկի առաջը . այդ մոնղոլի ժառանգ բէկը, առանց կանգ առնելու, Սարու - Եաթաղի ձորերն ի վեր անցել գնացել էր :

Ղաբաատուի թուրք ուժերը կռուելով նահանջելով անցնում են Հաքարու մեծ գետը եւ ամրանում, բռնելով գետի ձախ կողմերին, Մուղանի գաշտի բերանին ընկած բոլոր բլուրները : Եսպոնացու հետը մեր խմբերովը, Սարու - Եաթաղի բարձրութիւնները իջնելուց, տեսայ խմբապետները Նժդեհի առաջնորդութեամբը, դանազան շրջանները առաջանալով բարձր ձայնով կանչում են . «տղերք ջան, առա՛ջ - առա՛ջ» . քանի բոպէ անց նորից կանչում են . «Չանգեզուրցի քաջեր, ձեզ մատաղ, կրակելէն, կտորելէն, առա՛ջ, առա՛ջ» :

Թուրքերը մեր խմբերի «առա՛ջ, առա՛ջ» կանչերը լսելուց, գետի միւս կողմի բլուրների վրայիցը դուռացին . «ա՛ քեօփ օղի, ախր նարաթէին հառաչ, երբմըզը կորսաղըն, օրտա դուրախդա», (ամիսդուրի տղերք, ախր մինչեւ որտեղ առաջ, տեղներս ցոյց տուէք, էնտեղ կանգնինք, էլի) :

Մինչեւ Հաքարու գետի ափերը թրքութիւնը մաքրուեց :

Այդ շրջանները թողինք եւ վերադարձանք Վիժանիս հայկական գիւղը, ուր պիտի ժամանէր Դրօն : Կէսօրը անց էր . տեսնենք՝ հեռուիցը երեւաց Դրօն՝ ձին նստած : Նժդեհ պատուի պատրաստուած՝ առաջ անցաւ գեկուցում տալու : Նժդեհ՝ առաջ անցաւ, Դրոյին մօտեցաւ, կանգ առաւ եւ պատուի նշան բռնած գեկուցել սկսեց :

Դրօն Նժդեհին լսում՝ բայց ջղային վիճակ էր ապրում . «Ես քեզ չեմ ների» խօսքերով : Ապա Դրօն Նժդեհին դրկեց եւ պինդ համբուրուեցան : Մենք ուռուաներով եւ ծափահարութիւններով, դղրդացրինք շրջապատը ու «Մեր հայրենիք»ը երգելով տօնեցինք այդ պատմական օրն ու դէպքը . . . :

Դրօն դարձաւ Նժդեհին եւ ասաց . «Այսուհետեւ, վառիր, աւերիր, քանդիր, դու ամէն տեսակի իրաւունք ունիս» :

Այն օրուանից մեր ժողովուրդը Նժդեհին մկրտեց «Մեծն Նրժդեհ» անունով :

Բարդիւշատի քառասուն քիլոմետր երկարութեամբ ձորերի կրօններից ետք, ընդհանուր ուժերով, ծփացող յաղթական դրօշակներով վերադարձանք Գորիս, մեր ետեւումն թողնելով ամայի դարձած թրքարնակ գիւղերը . . . :

★
★

տեղական մի քանի խմբապետների մասնակցութեամբ ճանապարհուեցին դէպի Ղարաբաղի շրջանը :

Ղարաբաղի հայութիւնը, ճաշակած չլինելով նոր բուն դրած բոլշևիկեան սպանիչ ծաղիկի հոտն ու համբ, սառը վերաբերմունք են ցոյց տալիս եւ աւելորդ համարում Գրոյի օգնութիւնը : Գրօն եւ Նժդեհը, Ղարաբաղի հայութեան սառը վերաբերմունքիցը, երկար չեն մնում եւ ամբողջ ուժերովը վերադառնում են Չանդեղուր : Գրոյի եւ Նժդեհի վերադառնալու լուրը, Չանդեղուրի ժողովուրդին հասնելով, Խնձորեսկ գիւղում գանուող հայ անունը կրող բոլշևիկները խմբեր են գինում, կտրելու Գրոյի եւ Նժդեհի առաջը եւ գինաթափ անելու :

Խնձորեսկը Չանդեղուրի ամենամեծ գիւղն է, մօտ ութը հազար, գուցէ եւ աւել բնակչութեամբ օժտուած էր : Գիւղումը կային քիչ տոկոսով գաշնակցականներ, մնացածները ծայրայեղ հնչակեաններ էին :

Գրօն եւ Նժդեհը Ղարաբաղէն վերադարձի ճամբուն վրայ Տեղ գիւղը անցնում են, եւ Քարաչէնի այգիների միջովը բարձրանալէ ետք, դէպի Խնձորեսկ գիւղի բլուրները երթալու ատեն, հանդիպում են բլուրներէն թափուող կրակներին :

Չօրամասերը շտապ խմբերի են բաժանում եւ կռուի են բռնելում, ապստամբ խնձորեսկցիներին փախուստ պարտադրելով : Բոլշևիկացած հայ խմբերը Մկրտիչ Ղարաղոյեանի գլխաւորութեամբ, չգիմանալով մերոնց կրակին, փախչում են դէպի գիւղը :

Գրօն եւ Նժդեհը իրենց ուժերով պաշարում են Խնձորեսկ գիւղը եւ պահանջում ապստամբների զեկալարներին, սպառնալով գիւղը աւերակի վերածել :

Միւս օր առաւօտեան, խնձորեսկցիները բերում յանձնում են Մկրտիչ Ղարաղոյեանին եւ երկու ուրիշներին, որոնք զնդակահարուեցան :

Գրօն եւ Նժդեհը Խնձորեսկը թողնում եւ գալիս են Գորիս քաղաքը :

Տեղ գիւղիցը բոլշևիկեան զօրքերի մասին հեռախօսով յայտնեցին Գորիս, Աղղային Խորհրդին : Լուրը աննելով, Աղղային Խորհուրդը այդ օրը երեկոյեան ժողով դումարեց Բժ. Պարոնեանի տանը : Ժողովին ներկայ էին Գրօն, Նժդեհը եւ մի քանի խմբապետներ :

Երկար խորհրդակցութիւն կատարուեցաւ : Ի վերջոյ, թեր ու դէմ կարծիքներէ ետք, Գրօն առաջարկեց ամբողջ կազմով հեռանալ Չանդեղուրից եւ թողնել, որ ժողովուրդը ճաշակէ բոլշևիկների համն ու հոտը՝ թէկուզ ժամանակաւոր : Որքան յիշում են, 1920 թուի Յունիս ամսի վերջին օրերումն էր :

Նոյն գիշերը, ժողովը վերջանալէ ետք, երբ որոշում տրուեց թողնել քաղաքը, Գրօն իրա ուժերի գլուխը անցած, զնայ Գարա-

լազեազի շրջանները :

Դրոյի ետեւիցը դէպի Երեւան գնացին Չաքար Եօլեանը եւ Նիկալայ Յովսէփեանը :

Առաւօտեան լոյսը բացուելուն, Նժդեհը ղափանցի կոռուղների գլուխը անցած, ճանապարհուեց Ծնհեր գիւղի վրայովը դէպի Ղափանի Խուստուպ լեռան շրջանը :

Ծնհեր գիւղումը տեսակցում է Եիրինեանի եւ Խորէնու հետ . աշխատում է իրա հետ տանելու Ղափանի շրջանները : Երբ ստիպում է, Եիրինեանը դառնում է Նժդեհին եւ ասում . «Ես պիտի մնամ ծնընդավայրումս, իմ սիրած ժողովուրդի հետը : Ձեզ հետ միայն կապ կ'ունենամ, բայց այս ժողովուրդին անգլուխ չեմ թողնի» : Նժդեհը ստիպուած թողնում գնում է : Նժդեհի Գորիսիցը ճանապարհուեց յետոյ, ես իմ լաւ գինակիցներով, փոքրիկ խմբով, բարձրացանք քաղաքից մօտ տասը քիլոմետր հեռու ընկած հիւսիսային կողմերի բարձր լեռները : Չաքար Տէր Գաւիթեանը իրա գինակիցներովը գնում է Բոուն գիւղիցը վերեւ ընկած Մնաջարի ժայռերի շրջանը :

Բուլշեւիկ զօրքերը, հաւատափոխ Արմենակ Ղարազողեանի գլխավորութեամբ, առանց որեւէ դիմադրութեան, Տեղ գիւղի վրայով գալիս մտնում են Գորիս քաղաքը :

Ծնհեր գիւղացի, տեղի քահանայի տղան՝ Գարեգին Պալեանը, մի քանի հոգիներով, Սիսիանի վրայով շտապում է Դարալազեազի շրջանը եւ Դրոյին յայտնում Եիրինեանի եւ Խորէնու ձերբակալման մասին : Դրօն իրա ուժերը կարգի բերելով, հրաման է տալիս զօրամասերին շարժուել դէպի Չանգեղուր, միաժամանակ էլ գլխավոր տեղեկութիւն է տալիս Ղափան՝ Նժդեհին, որ իրա ուժերով շարժուի դէպի Չանգեղուր :

Դրօն զօրամասերովը, Դարալազեազի Գնդեվազ գիւղի վրայով անցնում եւ մտնում է Չանգեղուրի սահմանին ընկած Բազարչայ Մալահանների գիւղը : Բազարչայից Անգեղակոթ գիւղի վրայով անցնելու ատեն, Սիսիանի գիւղերի իր կողմնակիցները միանում են Դրոյի բանակին եւ ընդհանուր ուժերով շարժւում դէպի Գորիս քաղաքը : Ուշթափալարը անցնելուց, Արխաշան բարձրաւանդակի վրայ ես իմ գինակիցներով միացայ Դրոյի ուժերին :

Հայ անուն կրող լրտեսների միջոցաւ, Դարալազեազի շրջանից Դրոյի շարժման լուրը Գորիս հասնելուց, քաղաքում եղած բուլշեւիկ պարագլուխներն ու զօրքերը խուճապի են մատնւում :

Բոչայի ծագում ունեցող Արմենակ Ղարազողեանի հրահանգի համաձայն, ուս զօրքերը քաղաքը թողնելուց, հեռները տանում են բանտում եղած 17 հոգի Չանգեղուրի պատկառելի եւ անուանի մարդկանցը :

Ռուս զօրքը եւ բուլշեւիկացած հայերը քաղաքը կը պարպեն : Ինքը՝ Արմենակ Ղարազողեան, մէկ վաշտ գինուորներով ու մի քանի

հայ անուն կրող դահիճների հետ մնում է քաղաքումը, կատարելու սարսափազգուս սճիրներ... ձեռքերը շաղախելու արեան մէջը այն մարդկանց, որոնք մեր ժողովուրդի ծոցում ծնունդ առած, վահանձն եւ դիմացկուն զեկաւարներից էին:

Գիշերուան ժամը 10-ը անց, երբ քաղաքը նիրհում է խոր քնի մէջ, Ղարաղոզեան հրամայում է վերջ տալ Շիրինեանի եւ Սորէնու կեանքին, ինչպէս նաեւ շինար երիտասարդներին: Երբ զինք չարչարելէ եւ վերաւորելէ ետք ձախ թեւն էլ կտրում են, Շիրինեանը ցաւիցը բղաւում է. «Սրիկանե՛ր, ինձ սպաննեցիք, բայց սպամութիւնը ձեր վրայ սեւ խաչ կը դնի յաւիտեան»:

Ուշթափալարի շրջանի Արխաշանի բարձրաւանդակի վրայ, ես իմ ուժերովս միացած Դրոյի ուժերին, առաջ անցանք եւ ցուրտ աղբիւրների մօտի Չրրչրի ձորը կարեցինք ու Գորիսին իշխող սարին չհասած, միացանք Ղափանից նոր ժամանած Նժդէհի խմբերին:

Դրօն եւ Նժդէհը դօրքերը բաժանեցին մի քանի մասերի. էօխուշ սարիցը բռնած մինչեւ կապինքօլի շրջանը, սարերն ի վար իջանք եւ առանց դիմադրութեան հասանք Գորիս քաղաքի դռներին: Բոլշևիկների հետքը չկար. առանց հանդստանալու ամբողջ ուժերով շարժուեցինք բոլշևիկների հետնիցը, ու Տեղ գիւղի վրայով հասանք Չարուզի անդնդաձոր ձորերին իշխող սարի գլուխը:

Նժդէհ զափանցի ուժերովը մնաց՝ հսկելու Չարուզի շրջանի բարձրութիւններին, որոնք հանդիսանում էին Ղարաբաղից բոլշևիկեան դօրքերի գլխաւոր անցքը:

Դրոյի հետը մնացած ուժերով վերադարձանք Գորիս քաղաքը: Միւս օրը, բժ. Պարոնեանի, բժ. Մինասեանի, Դրոյի, Նիկալայ Յովսէփեանի, Յակոբ Մաշուրեանի հետ, ու բաւական մարտիկ հաւաքուած, գնացինք այցելելու Շիրինեանի եւ Սորէնու գերեզմանին: Հողերը մաքրել տուինք եւ ի՞նչ տեսնենք, չորս հողիները իրար վրայ թափուած. Շիրինեանի մէկ թեւը չկար, չորերը շաղախուած էին արեամբ, մարմինը ծակծկած: Նկարներ վերցուեցին, որոնք ո՛ւմ մօտը մնացին, ի՞նչ եղան՝ էլ չգիտեմ...:

Բոլշևիկացած որոշ ազդուրաց հայեր, որոնք կռիւների օրերին, երբ Չանդեղուրի սահմանները բռնած, տաճիկ հորդաները ուղում էին լափել մեր ժողովուրդին, այդ թշուառականները մութ անկիւններում թաքնուած խամփացնում էին: Մեծամասնականները 1920 թուականներին մեր երկրին ոտք դնելուց ետք, միացան նրանց եւ ձերբակալեցին, կուտորեցին Չանդեղուրի անուանի սպատկառելի մարդկանց, շատերին էլ քչեցին Ուրալեան լեռնաշղթայի սառուցեալ շրջանները...:

ՎԱԶԳԷՆ ՄԻՐԶԱԲԷԿԵԱՆ (ՎԱՆԲԷԿ)



Զ Օ Ր Ա Վ Ա Ր Ն Ժ Դ Ե Հ Ը

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ Ո Ւ Մ

Գորիս էին համախմբուել Մեղրիի, Ղափանի, Սիսիանի եւ Բուն Ջանգեղուրի շրջանների կուսակցական ներկայացուցիչները եւ պատասխանատու բոլոր դործիչները. կային նաեւ Ղարաբաղից Գորիսում գտնուողներ :

Այդ պատմական ժողովին ներկայ էին Զօր. Դրօն, Զօր. Նժդեհը, համազանգեղուրեան ղեկավար Արշակ Շիրինեանը, Հ. Հ. խորհրդարանի անդամներ՝ Վահան Խորէնին եւ Զախար Եօլեանը, գեներալ կոմիսար Սերգէյ Մելիք Եօլչեանը, Գերասիմ Բալայեանը, երկու Եապոնները, երկու կոմիսար Զախարները, Օսիփով Նիկոլայը, Կրճենանցը, Յովհաննէս Վարժապետը, Արտեմ Խանզատեանը, Յակոբ

Տէրունին, Վաղարշակ Ղաղարեանը (չուշեցի), Գեղէոն Տէր Մինասեանը, Խուրդիգեան Դաւիթը եւ տողերիս գրողը, որ ամենէն երիտասարդն էի եւ ներկայացնում էի Հալի Չորը: Ձանդեզուրում մինչ այդ նման կուսակցական ժողով տեղի չէր ունեցել:

Ժողովը տեղի էր ունենում գեներալ կոմիսարեատի դահլիճում:
Օրակարգն էր՝

- 1) Ձանդեզուրի ինքնապաշտպանութիւնը.
- 2) Սովետների միջոցառումները Ղարարազում.
- 3) Սովետ 11-րդ դորարանակի ներխուժման վտանգը.
- 4) Ներքին թշնամիների դէմ բռնելիք մեր դիրքը:

Ժողովը բացուած յայտարարեց Ձանդեզուրի շրջանների գեներալ-կոմիսար Սերգէյ Մելիք Եօլչեանը, գեկուցելով տիրող արտաքին ու ներքին քաղաքական կացութեան մասին, առաջարկեց ընտրել նախագահ, որովհետեւ ինքը պիտի վերադառնար Երեւան:

Ժողովը ժամանակաւորապէս գեներալ կոմիսարութեան պաշտօնը յանձնեց Չախար Եօլեանին, որի իշխանութիւնը կարճ տեւեց...

Ժողովին հերթականօրէն նախագահում էին ընկերներ՝ Գերասիմ Բալայեանը եւ Չախար Եօլեանը:

Բոլշեւիկեան 11-րդ դորարանակի դէմ ինքնապաշտպանութեան դիմելու հարցում, համարեա բոլորը խուսափողական տրամադրութիւն ունէին, չցանկանալով բախուել սովետ ուժերի հետ:

Ներքին թշնամիների դէմ եւս, վճռական ոչ մի որոշում չարբուեց, գտնելով, որ սովետների կողմից ուղարկուած տեղացի հայ քարոզիչները հետազայում կարող են «պէտքական» լինել:

Չոր. Նժդէհը կանգնած էր վերջին շարքերում, մէջքը յենած պատի անկիւնին, ձեռքերը դրած թեւերի տակ խաչածեւ եւ լուռ լսում էր ժողովականների կարծիքները:

Սաքօ Եապոնն ասում էր. «Ռուսաստանի յեղափոխականներն են գալիս, որոնց միջոցով, շնորհիւ մեր կապերի մենք ամէն ինչ կարող ենք անել, նոյնիսկ կարող է պատահել, որ մեր առաջարկով տաճիկներին պարտադրեն նահանջել մինչեւ 1914 թուի սահմանները» (*):

Այս տեսակէտին համակարծիք եղողներ գտնուեցան, «ճիշդ է» ասելով:

Խեղճ ու ազնիւ, բանտերում տառապած հին յեղափոխական Եապոնը չզիտէր, որ առաջին զնդակահարուողներից մէկը հէնց ինքը պիտի լինէր:

Նկատելի էր, որ մեր ընկերները հայ ներքին թշնամիների նրկատմամբ հոգեբանօրէն դեռ պատրաստ չէին պայքարի եւ չէին ճանաչում բոլշեւիկներին:

(*) Այդ ժամանակ գեռեւս բոլշեւիկեան եւ տանկական գաղտնի դաշինքի մասին Զանդեզուրում տեղեակ չէին:

Պօսքը պատկանում է ընկ. Նժդեհին, — յայտարարեց նախագահը:

Բոլորս դարձանք դէպի ետ, նայելու արձանացած Ձօր. Նժդեհին: Նրա հայեացքը այդ վայրկեանին համակ տխրութիւն էր արտայայտում:

Նա ասաց. «Պօսքս ուղղում եմ Հայաստանի Գարիբալդի Դրօշին եւ հարց տալիս, թէ ո՞ր օրուան համար է պահել իր կարծիքը, քանի որ այս ժողովից է կախուած Չանդեղուրի բախտը: Նկատի պէտք է ունենալ, որ մեր բռնելիք ընթացքը ազդելու է նաեւ Հայաստանի կառավարութեան ու Հայաստանի ժողովրդի հոգեկանի վրայ»:

Ձօր. Դրօն ընդհատելով պատասխանեց. «Ինչ որ ժողովը որոշի, ես իմ բանակով կը միանամ Չանդեղուրցիներին. ես չեմ ուզում ազդել ժողովականների վրայ»:

«Ո՛չ», — ասաց ընկ. Նժդեհը — «Դուք պէտք է ղեկավարողի դերում լինէք այս պատմական ժողովում. եւ ոչ թէ լուռ մնաք կամ ընթանաք ժողովականների բռնած ընթացքով»:

Նա խօսելով կամաց-կամաց առաջացաւ եւ կանգնեց ժողովասրահի մէջտեղում: Հազին ունէր Դաւիթբէկեան պատմական տարազը եւ կարծես Դաւիթ բէկը վերակենդանացել էր: Կրակ էր ժայթքում իր բերնից եւ համակ վճռականութիւն:

«Հայրենիքը ո՛չ ոք իրաւունք չունի առանց կռուի զիջելու սովեաներին, որոնց միացած է Ատրպէյճանը: Սո՛ւտ են նրանց շռայլած բոլոր խոստումները. սո՛ւտ են նրանց ուժի մասին չափազանցեցրած լուրերը. նրանք մեզ կը պարտադրեն ընդունել Ատրպէյճանի դերիշխանութիւնը. նրանք Չանդեղուրը կը մատնեն սովի ու տեղորի, մասսայական կոտորածի: Հայակեր մուսաւաթական ղեկավարները մէկ օրում ղեկավար բաշեւիկներ դարձած եկել են ռուսական զօրքերի հետ, նրանց են միացել եւ հա՛յ ազգուրացները»:

Ժողովականները հմայուած շարունակում էին լսել:

«Չանդեղուրը, որ կռուի դաշտում, ամենէն աննպաստ պայմաններում անդամ միշտ յաղթանակեց, այսօր երկընտրանքի մէջ է եւ յուսալքուած, շնորհիւ ղեկավարների երերուն ընթացքի, բայց կանգուն է Ղափանի շրջանը (իւր մարտական շրջանը): Երէկ մեր թշնամին թուրքն էր. մենք միակամ ու վճռակամ էինք: Այսօր մեր թշնամին մեր «եղբայրներն» են, հայ հայրենադաւնները, որոնց նըկատմամբ աւելի վճռական պիտի լինել»:

«Եթէ քաղաքացիական պատերազմ են սերմանում, յանուն հայրենիքի, մենք որ դերազանց ուժ ունենք կը չէզոքացնենք նրանց, եթէ տատանուենք նրանք օտարների միջոցով մեզ ու հայ ժողովրդի լաւազոյն դաւակներին կը կոտորեն եւ մեր արիւն ու արցունքով ձեռք բերուած հայրենիքը կ'ընկնի ազգուրացների ձեռքը. այն ժամանակ վա՛յ մեր ժողովուրդին»:

«Ես վերագառնում եմ իմ հրամանատարական շքանք եւ պատ-
րաստ սպասելու եմ նոր եկող, ջարդարար թուրքին միացած կարմիր
թշնամուն» :

«Չանդեղուրը կը սթափուի, բայց այդ այլևս ուշ կը լինի» :

Եւ Չանդեղուրը սթափուեց, բայց արդէն ուշ էր... Ժողովուր-
դը կողոպտուած էր, սովի մատնուած, ջարդուած էր ղեկավարութիւ-



ՎԱԶԳԻՆ ՄԻՐԶԱԲԷԿԵԱՆ

(ՎԱՆԲԷԿ)

նը, քաղաքում ու գիւղերում հաւաքել եւ խումբ-խումբ զնդակահա-
րել էին մարտական բոլոր ուժերին, ղեկավար գործիչներին, բաղմա-
թիւ երիտասարդներ եւ սպաներ : Գնդակահարուած էին եւ մեր նշած
պատմական ժողովին մասնակցողներից շատերը : Երիտասարդութեան
մի ստուար մասը տիրող սարսափներից խոյս տալով թաքնուել էին
լեռներում, անտառներում, ձորերում :

Զօր. Նժդեհը իբր զօրական ու քաղաքական ղեկավար միանգամայն ճիշդ ըմբռնեց իրողութիւնները նոր եկող «յեղափոխական» թշնամիներին :

Ժողովականներից ոչ ոք ունեցաւ այն դրական կեցուածքը, վճռականութիւնը եւ յստակ պատկերացումը, ինչ որ ունեցաւ Նժդեհը :

Սովետական, վատ զինուած, սոված ուժերը առանց զիմադրութեան մուտք գործեցին Զանգեզուրի կենտրոն Գորիսը, եւ առանց ժամանակ կորցնելու յառաջանալով մտան Նախիջևեան այն պահին, երբ հայկական յաղթական բանակը պիտի մտնէր Նախիջևեան :

Թուրքերը ուրախութեամբ ընդառաջեցին սովետներին եւ այդ օրուանից Նախիջևեանի շրջանն Հայաստանից անջատելով, Ատրպէյճանին միացրին :

Այնուհետ դէպքերն ընթացան ըստ նժդեհեան ըմբռնումների եւ Նժդեհի ղեկավարութեամբ :

Զանգեզուրը նորէն զգաց ազատութեան քաղցրութիւնը, ճաշակելուց յետոյ հայութեան նոր թշնամիների արիւնոտ ուժիմը : Վերաւոր դադանի պէս ոտքի կանգնեց նա Նժդեհի ղեկավարութեամբ եւ ժողովրդական նոր արժիւններով ու նոր զոհերով, ձեռք բերաւ իւր ազատութիւնը՝ առասպելային կռիւներով :

Զօր. Նժդեհը լայնացրեց սահմանները եւ դարձաւ հայութեան նոր դարու Դաւիթ բէկը :

Հպարտ Լեոնահայաստանն ազատ հռչակուեց զօր. Նժդեհի սպարապետութեամբ :

Շնորհիւ զօր. Նժդեհի, այսօր Զանգեզուրը (Լեոնահայաստանը) Հայաստանի անբաժան մասն է կազմում :

Փա՛ռք նրա անմեռ յիշատակին . . .

Փա՛ռք նրա գործակից բոլոր հերոսներին, կենդանի կամ յաւէտ մեզնից բաժանուած, որոնք հայոց պատմութեան էջերը հպարտանքի փառահեղ զրուագներով լցրին :

Զանգեզուրն Դաւիթբէկեան իր նոր սպարապետին երբեք չի մոռանայ :

ՎԱՆԲԷԿ

ՏԻԳՐԱՆ ՏԷՐ ԱԷՏԻՍԵԱՆ

Տիգրան Տէր Աւետիսեան ծնած է 25 Ապրիլ 1888ին, Վանի Հայկավանք քաղամասը: Յանախած է տեղւոյն Արարուց վարժարանը, ապա Պոլսոյ Միջազիւղի (Օրբաֆէօյի) վարժարանը աւարտելէ ետք, յանախած է Ղալաթիոյ կեդրոնական վարժարանը:

Երբ արձակուրդը անցընելու համար իզմիր ծնողքին բով կ'երթայ, կը ձերբակալուի ամբաստանուելով Գէորգ Մանիկեանի (լրտես) ահաբեկման կապակցութեամբ (ահաբեկումը կատարուած էր Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ): Եօթ շաբաթ ետք, իզմիրի առաջնորդ Մելիսեդեկ Արք. Մուրատեանի միջնորդութեամբ ազատ կ'արձակուի, սակայն անձագիրին մէջ կը գրուի.— «Տիգրան, որդի քեզի Դաւիթի, ազատ կ'արձակուի այն հասկացողութեամբ, որ ան կը մեկնի Պուրտուր եւ իրեն կ'արգիլուի վերադառնալ իզմիր կամ Պոլիս»:

Տարի մը ետք Փափագեան ծածկանունով կը վերադառնայ իզմիր, սակայն նոյն ոստիկանապետին՝ էրէֆ փաշայի կողմէ ճանչցուելով կրկին կը ձերբակալուի: Այս անգամին կ'ազատի միջնորդութեամբը Վահան Պէյ Սվազլիի, որուն քելադրանքով աւելի վերջ կը փախի Կրետէ եւ յետոյ Աթէնք:

Յունաստանէն կը մեկնի Մ. Նահանգներ, ուր շրջան մը կ'ըլլայ «Հայրենիք»ի գործավար: Ապա կը տանի բազմապիսի աշխատանքներ, անդամ ըլլալով կուսակցական քէ ազգային մարմիններու: Կը գործակցի կուսակցական գրեթէ բոլոր գործիչներուն, տեղական պայմաններուն լուստեղեակ ըլլալուն, դիրացնելով անոնց գործը:

Աշխատակցած է «Հայրենիք»ի եւ «Ասպարէզ»ին, որպէս քղթակից եւ յօդուածագիր: Զանազան առիթներով որպէս բանախօս, գտնուած է Մ. Նահանգներու գանազան շրջաններուն մէջ:



ԳԱՐԵԳԻՆ ՆՓԴԵՂ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

1922էն ետք, երբ համայնավարական վարչակարգը վերջնականապէս տիրապետեց Ռուսաստանի եւ թուրքերու շէրքերի կեանքն ու ժերու գործակցութեամբ մեր տարարախա հայրենիքն ալ ինկաւ խորհրդային լուծին տակ, եւ կորսնցուց իր անկախութիւնը, երբ այլեւս մեր հայրենիքի դռները պինդ կերպով փակուեցան Հայաստանէն դուրս գտնուող հայութեան՝ մանաւանդ անոր ազատատենչ ու հայրենասէր հատուածին առջեւ, Մ. Նահանգներու մէջ շատցան ամուսնութիւններ, բազմացան ծնունդներ, եւ տասնեակ մը տարիներ յետոյ, Ամերիկահայութիւնը ինքզինքը դուրս գալու իր կայսրութեան մը առջեւ:

Հայ մանուկներ հասած էին իրենց 10-12 տարիքին, կը յաճախէին ամերիկեան դպրոցներ՝ որոնք ունէին արդիական բոլոր յարմարութիւնները: Միջավայրի եւ շրջապատի ազդեցութեան տակ, անոնք կը մոռնային կցկտուր այն հայերէնը, զոր սորված էին իրենց ծնողներէն: Ամերիկայի համայնակուլ ձուլարանը հետզհետէ կը կլանէր այդ դիւրաբեկ ծիլերը եւ ապագայ հայութեան դոյութիւնը այս երկրին մէջ կը դառնար խնդրական:

Ահաւոր այս իրականութեան առջեւ չչմած ու անճրկած էինք ամէնքս, ու չէինք դիտեր, թէ ի՞նչ միջոցով կրնայինք հակադդել արագօրէն մեզի սպառնացող վտանգին:

Եւ ահա յուսահատութեան վայրկեանի մը ազդեցութեան տակ, հրապարակ նետուեցաւ հայ դպրոցներ ունենալու պահանջը: Պահանջը հրամայական էր, բայց նախաձեռնութիւնը եղաւ բոլորովին հապճեպ, — չմտածուեցաւ դանազան յարմարութեանց, մանուկներու հոգեբանութեան եւ ամերիկեան հոյակապ դպրոցներու ազդեցութեան մասին: Կը պահսէր նաեւ ամենակարեւոր ազդակը — ՀԱՅ ՌԻՍՌԻՅԻՉԸ: Եւ հետեւաբար, հակառակ ի դործ դրուած բոլոր ջանքերուն, հայեցի դաստիարակութեան դործը ձախողեցաւ, կամ լաւ է ըսել, չտուաւ ակնկալուած արդիւնքը:

Վերջին յոյսը եւ առաջադրութիւնը կու դար նոր սերունդէն, որ օրէ օր կ'աճէր, կը բազմանար, կ'ամուսնանար ու կը դառնար գաւակներու տէր, ու աւելի ցցուն կերպով մատնանիչ կ'ընէր հայապահպանումի մասին մտածելու ստիպողականութիւնը: Ան կ'առաջադրէր իրեն համար միջոցներ ստեղծել, իր գիտցած լեզուով (անգլերէն) ծանօթանալու հայ լեզուին, հայ դրականութեան, հայոց պատմութեան — ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻՆ:

Նոր սերունդի ցանկութեան կամ պահանջին ամենալայն չափով ընդառաջեց Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, որ որեւէ դահողութեան առջեւ առանց կանգ առնելու, սկսաւ հրատարակել

անդէրէն լեզուով շարաթաթերթ («Ուիֆլի»), ապա՝ «Արմինիքն Ռը-ւիու» պարբերաթերթը, որ իր բովանդակութեամբ կրնայ համեմատուիլ ամերիկեան որեւէ պարբերաթերթի հետ :

Վերոյիշեալ թերթերու հրատարակութիւնը ունեցաւ իր բարեբար արդիւնքը : Կարճ ժամանակի ընթացքին հրատարակ եկան Երիտասարդական Միութիւններ, — «ՀԱՅՈՐԴԻՔ», «ՈՐԴԻՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ», «ՀԱՅ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ», «ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ» եւ այլն, որոնք ունէին իրենց յատուկ կանոնադրերը եւ կը դործէին ըստ իրենց հասկացողութեան : Բաժան-բաժան այդ միութիւնները իրարու քով՝ եւ մէկ յայտարարի բերելու համար ուժեղ ձեռքը կամ ազգակը կը սրահսէր :

Ազգերու դարաւոր դոյութեան ընթացքին, երբեմն երեւան կու գան անհասաներ՝ ընդունակ կատարելու այնպիսի գործեր, որոնք յատուկ են միայն անդուզական հերոսներու, սատուած ընտիր մարդարէներու եւ փրկիչներու :

Եւ ահա, 1933ին Ամերիկա հասաւ Հ. Յ. Գաշնակցութեան Ընդհ. Ժողովի պատգամաբեր Գարեգին Նժդեհ, որ երկնառաք առաքեալի մը նման Գաշնակցութեան խօսքը ստրացուց Ատլանտեանէն մինչեւ Սաղազական, եւ իր ցեղապաշտ շունչով կըրցաւ ի մի ձուլել զոյութիւն ունեցող վերոյիշեալ ազգապահպանման կազմակերպութիւնները, հիմնելով հոյակապ Կազմակերպութիւն մը, վեհ նպատակով, հայրենաբաղձ նուիրումով, — որ նախ կոչուեցաւ Հ. Յ. Գ. ՅԵՂԱԿՐԾՆԵՐՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, ապա՝ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ : Այս կազմակերպութեան հիմնական նպատակն էր հայութիւնը եւ հայապահպանումը :

Ի տես հայրենապաշտ հայորդուն յաջողութեան, կը խլրտէր թրքատիպ ճահիճը, եւ մեր սիրելի զաւակները կ'որակուէին Հայորդիք — շան-որդիք, Յեղակրօն—ցեխակրօն եւ այլ լրբենի ածականներով :

Սակայն այս ազգաշէն շարժումը ձախողեցնելու բոլոր ջանքերը անցան ապարդիւն : Յեղակրօնութեան ալիքը աւելի եւս բարձրացաւ, եւ այսօր Հայ Երիտասարդաց Գաշնակցութիւնը իր մէջ կը հաշուէ հազարաւոր անդամներ եւ տասնեակ հազար համակիրներ, որոնք հասունցած՝ կու գան ստուարացնելու Գաշնակցութեան շարքերը :

* *

1934 Յունիս 14 : Այդ օրերուն կ'ապրէի Միլուոքի, Ուիսքանսըն : Գրասեղանիս վրայ կան երկու նամակներ : Առաջինը՝ Գարեգին Նժդեհէն, որուն գործակցեցայ Մ. Նահանգներու Միջին Արեւմուտքի շրջանին մէջ, իբրեւ ընկեր եւ եղբայր :

Կը գրէ. «Յառաջիկայ Պատգամաւորական Ժողովին քու գալիք

անհրաժեշտ է : Գիտեմ օրուան պայմանները , գիտեմ եւ քու պայմանները , բայց՝ ճարը չունես , պիտի դաս , յիշիր «տղերք»ը : Աւելին՝ քեզ համար պատրաստել եմ լաւ «անակնկալ» . ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ» :

Երկորդ նամակը ընկեր Զատիկ Մաթիկեանէն է , միակ Ամերիկահայը՝ որ այցելութեան եկաւ մեզի , երբ ես իմ 13 ընկերներով կը դանուէի Աթէնքի Փալիա Սթրանթայի բանտը : Կը գրէ . «Սիրելի Տիգրան , շատ ուրախ պիտի ըլլայինք որ դայիր , եթէ չկրնաս դալ , ես ժողովէն վերջն ալ կը գրեմ քեզի» :

Կ'ապրէինք դաժան ժամանակաշրջանի մը մէջ : Ամերիկայի մէկ ծայրէն միւսը կը տիրէր աննախընթաց անդործութիւն : Դրամատուները կը փակէին իրենց դռները , հարիւրաւոր դրամատէրեր կը սնանկանային եւ միլիոնատէրեր անձնասպան կ'ըլլային : Բախտաւորութիւն էր օրական 50 սէնթի աշխատանք ճարել՝ օրուան ճաշադինը հայթայթելու համար . միլիոնաւորներ կ'ապրէին պետական նպաստով :

Ունէի համեստ բայց շահաբեր քաղցրեղէնի կրպակ մը , շահաբեր՝ այն իմաստով , որ այդ օրերուն կրնայի եօթը անդամներէ բաղկացեալ (5 անչափահաս զաւակներ) ընտանիքս ապրեցնել :

Պէ՞տք էր երթալ թէ ոչ . կը նստինք խորհրդակցութեան կնոջս հետ , որ ծնեալ էր Դաշնակցական (այժմ հանդուցեալ) : «Ձեռ կրնար մերժել այդ երկու շատ յարգելի ընկերներու խօսքը , կ'երթաս ժողովին եւ 15 օրէն կը վերադանաս , փառք Աստուծոյ , մեր վիճակը շատերէն աւելի լաւ է , ես զործը կը տանիմ կերպով մը : Եթէ վնասենք ալ , Աստուած ողորմած է» , ըսաւ կինս :

*
**

Կը հասնիմ Պոսթըն , եւ ուղղակի կ'երթամ Կ . Կոմիտէի սենեակը : Հոն է Ասատուր Խրտրեան , Կ . Կոմիտէի քարտուղարը , որուն ծանօթ եմ իր ՀԱՅ ՍՔՈՒԼի օրերէն : Հոն է ընկեր Մ . Վերածին , «Մեղու Շնորհայի» , որուն հետ մտերիմ ընկերներ ենք «Հայրենիք»ի դործավարութեան օրերէն : Կը հասնի Նժդեհ , կը գրկուինք , կը համբուրուինք , անչափս ուրախ է որ եկեր եմ :

*
**

Վերջացաւ մեր Պատգամաւորական ժողովը , ինչպէս միշտ՝ արձանագրելով լուրջ եւ ազդօգուտ որոշումներ : Մեր անպատկառ հակաակորդները անդամ մը եւս յուսախար եղան իրենց զաւաղրութեան մէջ : Անոնք հաղորդիչ դործիքներ զետեղեր էին մեր ժողովարահին յարակից շէնքին մէջ՝ մեր Պատգամաւորական ժողովի որոշումներուն տեղեկանալու համար . բայց ժողովը օրակարգի քննու-

Թեան չսկսած դաւը երեւան ելաւ, շնորհիւ ընկեր Գալուստ Էյնաթեանի արթնամտութեան (այժմ հանդուցեալ) :

Պատգմ. Ժողովէն ետք, ըստ ընկալեալ սովորութեան, տեղի ունեցաւ դաշտահանդէս : Դաշտավայրը կը ծփար ծովածաւալ բազմութեամբ. եկած էին Ամերիկայի բոլոր կողմերէն, լսելու Դաշնակցութեան խօսքը՝ Նժդեհի շրթներէն : Հոն էին ամերիկացիները երկսեռ երիտասարդներ, պատանիներ եւ մանուկներ, որոնք հայերէն խօսիլ չէին գիտեր կամ քչիկ մը միայն կը հասկնային : Հոն էին ՅԵՂԱԿՐԹՆՆԵՐ եւ ԱՐԾՈՒԻԿՆԵՐ, որոնք նոր սկսեր էին թոթովել իրենց մայրենի լեզուն, բայց բոլորը լարուած ուշադրութեամբ կախուած էին Նժդեհի շրթներէն, որովհետեւ Նժդեհ կը խօսէր իրենց ՀԱՅՈՒ հոգիին :

Կը պատրաստուէի մեկնելու, կարգ մը այցելութիւններէ վերջ : «Հայրենիք»ի աղումըը նստած կը գրէի՝ երբ եկան ընկերներ Նժդեհ եւ Կոպեռնիկ Թանտրճեան :

— Ընկեր Տէր Աւետիսեան, Յ-Ա ամիս պիտի տրամադրես «տըղոց» հանդանակութեան աշխատանքին, քեզնից յարմարը չկայ Միջին Արեւմուտքի մէջ :

— Խնդրեմ, Նժդեհ, դու լաւ ծանօթ ես իմ պարագաներուն, դաւակներս բոլորն ալ անչափահաս են, եւ կնոջս համար դժուար կը լինի դորձը վարել այդքան երկար ժամանակ :

— Ընկեր Տիգրան, եթէ չես կրնար, ես կը ստանձնեմ, կ'ըսէ ընկեր Թանտրճեան :

Նժդեհ, թեւերը լարած, կ'ընդմիջէ .

— Ընկեր Տիգրան, ճարը չունես, պիտի դորձի սկսես, հեռախօսիւր աիկին Ալինիւին, վաղը քեզ կը տեսնեմ այստեղ :

Ու կը մեկնի : Անոր կը հետեւի ընկ. Թանտրճեան :

Կը հեռախօսեմ կնոջս, որ կը պատասխանէ .

— Տիգրան, չես կրնար մերժել Նժդեհի խօսքը. պէտք է յաջողցընել հանդանակութեան դորձը : Ես կ'առնեմ իմ հինգ դաւակներս ու կ'երթամ խանութ, հակառակ պարագային՝ մէկը կը վարձենք : Եթէ կորսնցնենք ալ, Աստուած կը հողայ մեզ :

Վիճակը ձգուած էր. գիտէի որ դորձը պիտի քայքայուէր (ինչպէս որ եղաւ արդէն), բայց ուրիշ կերպ կարելի չէր Դաշնակցական մարդու համար :

Յաջորդ օրը, նոյն ժամին, եկան Նժդեհ եւ Ասատուր :

— «Հա՛, արդէն ժպտում ես, ես լաւ կը ճանաչէի աիկին Ալինիւին : Դէ՛հ, ուրեմն այս երեկոյ կը դնանք «Անակնկալ»ին, վաղը կը դնանք Փրաւիտէնս՝ ընկերուհի Քարենցին, եւ յետոյ՝ ազատ ես մեկնելու :

Ասատուրը կը միջամտէ .

— Ոչ, ազատ չէ. յառաջիկայ Կիրակի պիտի խօսի Հուայթինս-

վիլի դաշտահանդէսին, յաջորդող Կիրակի՝ Լորէնսի դաշտահանդէսին, անկէ ետք ազատ է: Կը պատրաստուի՞մ պատասխանելու, բայց Նժդեհ կը կռահէ միտքս եւ կ'ընդմիջէ:

— Միայն Հուայթինսվիլ խօսէ, ուրիշ մէկին թող ուղարկեն Լորէնս:

«Ա Ն Ա Կ Ն Կ Ա Լ Ը»

Երեկոյեան ժամը Յին կ'երթանք Ուոթըրթուան: Հ. Յ. Դաշնակցութեան ակումբի մեծ սրահին պատերուն տակ շարուած են նստարաններ: Մէջտեղը կը թուի վերապահուած ըլլալ... «Ա.Ն.Ա.Կ.Ը.Ն.Կ.Ա.Լ.»-ին: Կը խօսակցինք տեղւոյն ընկերներուն հետ, բայց Նժդեհ անհանդիստ է եւ կը կրկնէ. «Ինչո՞ւ կ'ուշանան»:

Բայց տհա, սրահի խորքէն կը լսուի ինծի ծանօթ զինուորականի մը մարզանքի հրամանը. «Աջէն չորսական՝ աջ թելը առաջ, քա՛յլ մա՛րջ»:

Եւ աւելի քան 40 կայտառ հայտարարներ, հրացան ուսերուն, կը յառաջանան սրահին մէջ: Ոտքերու դոփիւններէն եւ ներկաներու որոտընդոտ ու անվերջ ծափերէն սրահը կը թնդայ, եւ ուրախութեան ու սքանչացումի կայլակներ կը հոսին ներկաներու աչքերէն: Մարզանքէն յետոյ խումբը կը վերադառնայ:

— Ընկեր Տիգրան, սիրեցի՞ր անակնկալը, կը հարցնէ Նժդեհ՝ պայծառ ժպտով մը:

— Անակնկալը սքանչելի էր, եւ հողեկան մեծ հաճոյք ունեցայ անգամ մը եւս վայելելու հայախօս մարզանք, բայց ոչ նորութիւն, կ'ըսեմ:


Նժդեհ, զարմացած, կը հարցնէ թէ ի՞նչպէս:

— Բացատրեմ. երբ Փրաւիտէնս կը բնակէի, ունէինք զինուորական խումբ մը, «Հ. Յ. Դ. ՀՐԱՅՐ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ» անունով, որուն մարզիչն էր ընկեր Պօղոս Այվաղեան (այսօրուան մարզիչը), իսկ ես իբրեւ Վերահսկիչ Մարմնի ատենապետ՝ ներկայ կ'ըլլայի մարզանքներուն:

Նժդեհ, յափշտակուած, գրկեց զիս, եւ ճակատս համբուրելով՝ ըսաւ. «Տիգրան, քեզ համար անակնկալ չկայ: Դէհ, դնա՛ եւ զարգացրու Միջին Արեւմուտքի Յեղակրօն բալիկներին»:

Առիթը օգտադործելով հարցուցի, թէ ի՞նչ է ցեղակրօնութիւնը եւ ինչի՞ կը միտի:

— «Զինուոր մարդ եմ եւ իմ ողջ կեանքում հայ երկրի ինքնապաշտպանութեան դործը ինձ համար եղած է կրօն, միակ կրօնը: Տարիներով իմ միտքը չարչրկել է մի հատիկ հարց. — Հայաստանի ինքնապաշտպանութեան դործի իրականացումը: Յեղակրօնութիւնը չժընաւ դադութներում, դա բերուած է երկրէն, մեր Հայրենիքէն: Դա



Հ. Յ. Դ. Ամերիկայի շրջանի 41րդ պատգամաւորական ժողովը, 1934 Օգոստոս 5ին, Պոսթըն Մէտեշուսէց :

1. Զօր. Գ. Նժդեհ, 2. Զօր. Սեպուհ, 3. Զատիկ Մաք-իկեան, 4. Կոպեռնիկ Քանտրեան,

5. Ասատուր Խորբեան, 6. Ասատուր Կիրակոսեան, 7. Մ. Օգանեան, 8. Գալուստ Այնէքեան :

կեանքի կոչուեց 1919—21 թուականներին, երբ վտանգներէն ամենէն ահաւորն էր կախուած Հայոց Լեռնաշխարհի գլխին: Ո՛չ Փաշիզմ, ո՛չ էլ հիթլերականութիւն կար աշխարհում այդ ժամանակ: Յեղի յաւիտենականութեամբ ապրելու եւ նրա համար մեռնելու ուխտն էր.— Գաւիթ—բէկեան Ուխտը, որ թուրքեւթաթար վտանգից ազատեց Լեռնահայութիւնը դէնքի ուժով. եւ մայր երկրին կցեց Ատրպէյճանին թողուած Սիւնեաց աշխարհը:

«Յեղի գաղափարը այտիա ֆորս է, եւ հէնց դրա համար նա յաղթանակեց Հայոց Լեռնաշխարհում եւ Ամերիկահայ գաղութում: Յեղի գաղափարը հողերանական հարադատութիւն եւ գրաւչութիւն ունի եւ հէնց այդ էր պատճառը, որ մեծ եղաւ նրա յաջողութիւնը թէ՛ մեր երկրում եւ թէ՛ երկրից դուրս: Ես աւելին եմ սպասում Յեղակրօնութիւնից: Որպէս ծո՛ւլ, դա պիտի միացնի իր մէջ նորահաս սերունդին պատկանող բոլոր «գարնանային ջուրերը», բոլոր Ազգային Միութիւնները: Մարտական ուժի ազդիւրը եղած է ու կը մնայ երիտասարդ սերունդը:

«Գոյութիւն ունի դժբախտարար ազգային հողեւոր խլութեան փաստը, որի դէմ ուղղուած է Յեղակրօն Շարժումը:

«Հայոց ցեղը ապրեց իր ցնցումները, կոտորածները, իր անօրինակ ողբերգութիւնը, եւ մեր ժողովուրդի մի մասը մնաց ազգօրէն, հողեպէս խուլ:

«Մենք ուզում ենք, որ նոր սերունդը սովորի լսել, լսել ոչ թէ այն ամէնը, անիմաստ աղմուկը ու ժխտը, այլ այդ բոլորի մէջէն լսի ցեղի ձայնը, ցեղի մասին, որ կ'ըսէ. եղիք Հայ, նախ Հայ, որովհետեւ, Հայը, իր պատմութեան մէջ աւելի մարդ եղաւ քան Հայ Մարդ, եւ, այդ իսկ պատճառով, անոր ողբերգութիւնը եղաւ անօրինակ ու կը շարունակէ մնալ այդպիսին:

«Յեղակրօնութիւնը, հայ կեանքի բարձրացող նոր ալիքն է, ուղղուած չորս գլխաւոր շարիքներու դէմ:

«Ա.— Պատուար կանգնիլ օտար միջավայրի այլասերիչ ազդեցութիւններու դէմ ու չհղոքացնել դանոնք:

«Բ.— Հաշուեյարգարի ենթարկել ներքին աղիտարեր ճակատը, որմէ մեծապէս կ'օգտուին թուրքն ու բուլղեիկը ու փրկարար քաղաքական միաւորութեան մղել սփիւռքի հայութիւնը:

«Գ.— Հայ հողին պահել անառիկ, ազգասպան լենինականութեան յարձակումներու դէմ:

«Դ.— Յեղայնացումով ու նոր սերունդի Յեղակրօնացումով դինաթափել՝ մեզ սպառնացող դոյ եւ գալիք թրքական վտանգը:

«Յեղակրօնութիւնը՝ քաղաքական միադաւանութիւն է, որ ունի իր սուրբ գիրքը.— Հայոց Պատմութիւնը — Յեղի կեանքի գիրքը: Ան՝ ինքնաճանաչութեան գլխաւոր ազդակն է: Ժողովուրդների անդօրութեան եւ դժբախտութեան ամենագործօն պատճառը՝ իրենց սե-

փական էութեան մասին ունեցած տղիտանքն է, անինքնաճանաչութիւնը. — իմա անցեղաճանաչութիւնը»:

Աւելին գրել կը համարիմ աւելորդ. իր խօսքերուն մէջէն կը փայլի իր լուսաճաճանչ գէճքը: Այսօր, այլեւս չկայ Մարգարէն, կայ սակայն իր շունչը, իր պատգամը եւ հմայքը:

ԵՐԿՐՈՐԴ «ԱՆԱԿՆԿԱԼԸ»

Նժդէճ ունէր նաեւ իւրայատուկ հիւմքը: Կը պատրաստուիմ հրաժեշտ առնել, բայց Նժդէճ կ'ընդմիջէ.

— Ոչ, ընկեր Տիգրան, կայ տակաւին երկրորդ անակնկալը: Վազը կ'երթանք ընկերուհի Քարենցին այցելութեան, եւ յետոյ ազատ ես մեկնելու: Վազը, ժամը 10ին կու գամ «Հայրենիք»ի աղուճը:

Յաջորդ առաւօտ, որոշեալ ժամուն հոն է Նժդէճ:

— Նախ երթանք նախաճաշի կ'ըսեմ:

— Ես արդէն ճաշեր եմ կ'ըսէ, իսկ դու կրնաս մի երկու ժամ դիմանալ. ընկերուհի Քարենցի գիտէ հայկական լաւ ուտելիքներ պատրաստել. եւ լաւ է որ անօթի փորանց երթաս: (Մենք տարեկից էինք, միայն չորս ամիսներու տարբերութեամբ, ինքը բլլալով աւազը. որով շատ մտերմիկ էինք:)

Ուրիշ միջոց չկար, կը համաձայնիմ, ու կը մեկնիմ Փրաւիտէնա, ուր բնակած էի 11 տարի, Միջին Արեւմուտքի շրջան մեկնելէ առաջ: Կը հասնինք ընկեր Քարենցի տունը, եւ ահա յուսախարութիւնը: Նժդէճ մոտցեր էր նախօրօք լուր տալու մեր այցելութեան մասին, եւ ընկերուհի Քարենց տունը չէր:

Մեզ ներս կը հրաւիրէ անձանօթ տիկին մը, վստահեցնելով, որ տիկին Քարենց շուտով կը վերադառնայ: Կ'անցնի կէս ժամ եւ միւս անգամ տիկինը կու գայ եւ կը հարցնէ՝ «Անօթի՞ էք»: Ես կը տատամսիմ պատասխանելու, իսկ Նժդէճ առանց վերապահութեան՝ «անօթի ենք» կ'ըսէ: Տիկինը կ'երթայ: Կ'անցնի կէս ժամ. կու գայ մի ուրիշ մեզի անձանօթ տիկին. բարի գալուստ մաղթելէ ետք, «անօթի՞ էք», կը հարցնէ: Նժդէճ կը կրկնէ. «Անօթի ենք, անօթի ենք»: Տիկինը կը մեկնի:

Նժդէճ ցաւ կը յատնէ նախաճաշս արդիլելուն համար եւ երկուստեք կը խնդանք: Կ'անցնի ժամ մը, տիկինը չ'երեւար: Ընկեր Նժդէճ, եկուր երթանք ճաշենք, և եթէ կ'ուզես անպայման ընկերուհին տեսնել, կը վերադառնանք կ'ըսեմ: Կը համաձայնի եւ կ'երթայ վերադառնալու: Եւ ահա սանդխամատները կը ճարճատին եւ փոթորկայոյզ ներս կը խուժէ տիկին Քարենց: Անիրաւ տեղ ինքզինքը մեզազրելէ ետք, ինք ալ հարց կու տայ.

— Անօթի՞ էք:

— Այո, անօթի ենք, անօթի ենք, անօթի ենք, կ'ըսէ Նժդեհ :
 Ես կը սկսիմ խնդալ, բայց արագաթիւ տիկին Քարենց արդէն
 մեկներ է : Հազիւ կէս ժամ անց, պատրաստ է սեղանը, եւ մենք ու-
 նեցանք փառաւոր ճաշ մը եւ սիրալիր խօսակցութիւններէ ետք, մեկ-
 նեցանք Պոսթըն : Այս եղաւ իմ վերջին համբոյրալիր ողջերթը անմո-
 ռանալի Նժդեհին :

Սիրելի Նժդեհ, հայ ազգը չի կրնար մոռնալ քեզ եւ քու գործը .
 իսկ քու անչափս սիրելի Յեղակրօնները, որ այսօր կը կոչուին Հայ
 Երիտասարդաց Դաշնակցութիւն, եւ որոնք խմբովին կու գան ստուա-
 րացնելու քու պաշտամունքին առարկայ Հայ Յեղափոխական Դաշ-
 նակցութեան շարքերը, վստահ եղիր, որ երբ սրբազան Հայրենիքը
 գտնէ իր ազատութիւնը, անոնք երամներով պիտի գան համբուրելու
 քո լուսատու շիրիմը : Իսկ մինչ այդ, անոնք հոգեւին պիտի երգեն
 քեզի նուիրուած հետեւեալ տողերը՝ «Դաշնակցական խումբ զնանք
 մենք Սասուն»ի եղանակով .—

Յեղակրօն խումբեր երթանի Հայաստան

Մեր Յեղին Ոգին է մեզ ապաստան,

Առաջնորդ ունինի մենի Նժդեհը քաջ

Անվեհեր սրտով քալենի մենի առաջ :

Մենի կ'ուզենի տեսնել Հայաստան ազատ

Մեր Յեղին օրրանն է ան հարազատ,

Մեր արիւն տալու մենի միշտ պատրաստ ենի

Բաւական է որ հայ հողն ազատենի :

Ուխտապետները հոգւով են երդուած

Յեղակրօն դրօշ իր ծալքերը պարգած,

Մենի հանգիստ չենի տայ նամարդ թշնամոյն

Պատրաստ ենի տալու բոսոր մեր արիւն

Մինչեւ Հայաստան պարզէ Եռագոյն :

Եղբայրական համբոյր՝ անթառամ յիշատակիդ, սիրելի Նժդեհ :

ՏԻԳՐԱՆ ՏԷՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՃԷՅՄՍ ՄԱՆՏԱԼԵԱՆ



Ա Ն Ն Մ Ա Ն Ն Ժ Դ Ե Ղ

Հ. Յ. Գաշնակցութեան զինուորադրեալ, հայ ազատագրական պայքարի բազմաթիւ ճակատամարտներու քաջ մարտիկ, հայ ժողովուրդի թշնամիներուն՝ թուրքին կամ բոլշեւիկին անողոր ստիւր, սաղմիկ, հռետոր, քաղաքային եւ զինուորական առաջնորդ, Գարեգին Նժդէհ ծանօթ է իր ժողովուրդին եւ անոր դատին հանդէպ իր անսահման ու անչահախնդիր նուիրումով ու զոհարելութեամբ: Իր քաղաքական թշնամիները յարդանք ու պատկառանք ունէին իրեն հանդէպ, իսկ բարեկամներու հիացումը պաշտամունքի կը հասնէր: Ան տեւական պայքարի մէջ էր, ի խնդիր իր ժողովուրդի ազատագրութեան եւ անկախութեան, նախ թուրքին, ապա բոլշեւիկիմին դէմ:

Հայրենիքի մէջ իր քաջագործութիւններն էին, որ զինք անմահացուցին հին սերունդին աչքին, իսկ հոս՝ Մ. Նահանգներու մէջ ան ճանչցուեցաւ հաւասարապէս հին եւ նոր սերունդներուն կողմէ՝ իր պատմական դերին համար, որպէս հիմնադիր Հայ Երիտասարդաց Գաշնակցութեան:

Ամերիկայի Հ. Յ. Գաշնակցութեան կեդրոնական կոմիտէի կողմէ որպէս գործիչ հրաւիրուելով, խօսեցաւ զանդուածներուն,

ներշնչեց երիտասարդութիւնը, եւ համախմբեց անջատարար դործող բազմաթիւ հայրենասիրական երիտասարդական ընկերակցութիւնները, անոնց տալով միակ անուն մը՝ Յեղակրօն Ուխտեր, որոնք ապաստացան Ամերիկայի Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն անունը, դործելով միակ դրօշի մը հովանիին տակ:

Աքանչելի հոետոր եւ կազմակերպիչ, ինչպէս էր ղինուորական առաջնորդ, Նժդեհ սքանչացուց ամերիկահայութիւնը, երբ կազմակերպեց երիտասարդութիւնը, ինչ որ իր կեանքի հիմնական երկրորդ վաստակը եղաւ, Չանդեզուրի քաջադործութենէն ետք: Եւ ասիկա այնպիսի շրջանի մը, երբ ամերիկահայ կեանքը պառակտուած էր, յառաջացած էին երկու հակամարտ բանակներ:

Դժուարին պայմաններու մէջ Նժդեհ իրադործեց իր կեանքի երկրորդ առաքելութիւնը, վերականգնելով յոգնած հոգիները, որոնք ճարահատորէն կը ճզնէին պահպանել հայկական աւանդութիւնները եւ իրենց հաւատարմութիւնը՝ ազատ աշխարհին:

Նոյնիսկ, ի վնաս իր Ֆիզիքական առողջութեան, անխոնջ ու աննկուն շրջեցաւ բոլոր հայաշատ քաղաքները իր պատգամը հասցնելով բոլորին՝ ծերէն մինչեւ երիտասարդն ու պատանին: Իր պատգամները կը հնչէին հին մարդարէներուն թափովն ու շեշտովը եւ կը յայտնաբերէին իր անողոք թշնամութիւնը՝ Չարին գէմ:

Ուր որ գնաց, բազմութիւններ խուռներամ հաւաքուեցան իր շուրջ, իր մազնիսական խօսքը լսելու համար: Կը յափշտակուէին իր մազնիսականութեամբ: Երիտասարդները կ'ունկնդրէին այն օտարականը, որ հին աշխարհէն եկած էր եւ բառ մը իսկ չէր գիտեր իրենց խօսած լեզուէն, սակայն կը խօսէր իրենց հոգիներուն: Հայերէն չէին հասկնար, այսուհանդերձ կ'ըմբռնէին իր միտքը: Չինք կը հասկնային իր անկեղծութեան սաստկութենէն, հոգիին մաքրութենէն: Սիրեցին եւ յարգեցին զինք: Այդ երիտասարդները իրենց ուսերուն վրայ կրեցին զինք, ինչպէս պատերազմէն յաղթական վերադարձող հերոս մը:

Այս բոլորին ականատես եղած եմ ես, որովհետեւ Նժդեհի իսկ փափաքով առաջին քարտուղարը եղայ իր կազմած Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան, միաժամանակ ըլլալով առաջին խմբադիրը անոր պաշտօնական օրկանին՝ «Հայրենիք» շաբաթաթերթին:

Այս հանգամանքներովս, Նժդեհի հետ էի իր բազմաթիւ ճամբորդութիւններու ընթացքին: Կը ներշնչուէի իր հոգիէն բուրող հայրենասիրութեամբ, իր բարութեամբ եւ իր անբիծ նկարագրով: Անկարելի էր ըլլալ Նժդեհի հետ, եւ չվարակուիլ անոր անսահման հայրենասիրութենէն:

Եւ վերջապէս, չեմ կարող եզրափակել այս դրութիւնը, առանց յիշատակելու Նժդեհի նկարագրէն գիծ մը, որ իմ ուշադրութիւնս գրաւեց տարիներ առաջ:

Գրելով «Հայրենիք» օրաթերթին մէջ, (Օգոստոս 15, 1957)

Կարօ Գէորգեան կը յիշատակէ Նժդեհի դրածներէն հատուած մը, որ նկարագիր մը բացատրելու տեսակէտէն, ամբողջ գիրք մը կ'արժէ : Որքան յիշողութիւնս կը թոյլատրէ, Նժդեհի ըսածը վերլուարոյ հետեւեալն է .

«Անկարելի է, միանգամայն, զէշ նկարագիր մը եւ լաւ հայ մը ըլլալ : Ան՝ որ իրրեւ մարդ, կը սլաշտէ նիւթապաշտութիւնը ու անկէ բխող հաճոյքները, ան որ անցողական հեշտանքները կեանքի գերագոյն նպատակը կը համարէ, որպէս հայ, ան չի կրնար ըլլալ նուիրուած, արի եւ հայրենասէր : Գերին եւ ազատ մարդը չեն կարող ապրել միեւնոյն անձին մէջ միեւնոյն ժամանակ : Ան կամ մին է, կամ միւրը : Մէկը չի կրնար ըլլալ անկատար մարդ մը եւ կատարեալ հայ մը : Միայն ան՝ որ արժանի է մարդ կոչուելու, կրնայ հայ կոչուիլ : Աշխարհի մէջ ամենէն գեղեցիկ բանը նկարագիրն է, վսեմ եւ ազնիւ : Գաղափարականութիւնը միակ միջոցն է, որ կը վերացնէ, կ'ազնուացնէ եւ կը հարստացնէ տկար հոգիները, տղեղ նկարագիրները :

Իր այս դաւանանքը մարդուս ազնուութեան եւ հայկական նկարագրին գերազանցութեան մասին՝ Նժդեհը հաստատեց իր իսկ օրինակով՝ իր ամբողջ կեանքի ընթացքին : Իր կեանքը նուիրում մը եղաւ իր հայրենիքին եւ իր ժողովուրդին, որուն ծառայեց ամենայն հաւատարմութեամբ եւ եռանդով : Ան միշտ ներկայ էր հոն՝ ուր պարտականութիւնը կանչեց զինք : Կորովի, երեւակայութեան թուրքով, արի եւ անվախ նկարագիր մը եղաւ Նժդեհ : Ան անսահման արհամարհանք ունեցաւ տկարներուն, վախկոտներուն եւ հայրենադաւններուն հանդէպ :

Ան իր մէջ մարմնացուց բոլոր այն բարեմասնութիւնները, որոնք անհրաժեշտ են հանրային գործիչի կամ ազգային առաջնորդի մը համար : Օժտուած էր հարուստ մտածելակերպով եւ առողջ գատաութեամբ : Անպարտելի հաւատք ունէր իր ժողովուրդին ցեղային առաքինութեանց հանդէպ, անխախտելի էր իր համոզումներուն մէջ այն հիմնական հարցերուն մասին, որոնք մեր ժողովուրդը երկու հալամարտ բանակներու վերածած էին : Եւ այս պատճառաւ, ան անդրդուելի մնաց իր հակարոյշելի կեցուածքին մէջ, բան մը, որ ի վերջոյ իր կեանքը խլեց :

Հայ Յեղափոխական Գաշնակցութեան անմահ Փետայիններու սերունդին վերջիններէն մին եղաւ Նժդեհ, որ հոյակապ էջ մը գրեց հայոց ազատագրական պատմութեան մէջ : Իր յիշատակը յաւէտ պիտի մնայ հայ սիրտերու մէջ, եւ պիտի ներշնչէ ապագայ սերունդները իր նշանարանով, զոր իր նկարագրին անբաժան մասը դարձուց :

«Լաւ հայ ըլլալու համար, նախ պէտք է լաւ մարդ ըլլալ» :

ՅՈՎԱԿԻՄ ԽՈՒՇՊՈՒԼԵԱՆ



Ծնած է 1899ին, Տրապիզոնի Մալա գիւղը, ուր կը ստանայ նախակրթութիւնը:

1915ին, հողոպրելով քրքական ջարդերէն, կ'ապաստանի Սոչի, ուր կը մտնէ կամաւորական խումբի մէջ: Ապա կ'անցնի Երեւան և մաս կը կազմէ Դրոյի կամաւորական գունդին, Նորքի մէջ մարզուելով Նժդեհի կողմէ: Յետագային, Քաչալ Ղազարի խումբին հետ կը գտնուի Խնուս, Ղզըլաղան:

1918ին կը վերադառնայ Տրապիզոն, ուր մինչեւ 1921 կը մասնակցի տեղւոյն բոլոր կռիւներուն:

1922ին կ'անցնի Պոլիս, ուրկէ կը մեկնի Մ. Նահանգներ: Պոսթընի Հայաստան Քէմփին մէջ Նժդեհի կիսանդրիի կանգնեցնելու ծրագրին եւ աշխատանքին մէջ մեծ քաժին ունի:


Գ. ՆՅԴԵԼԻ ԼԵՏ

Երբ 1933ին, Հ. Յ. Դաշնակցութեան դործիչի պաշտօնով Նժդեհէ Մ. Նահանգներ եկաւ, առաջին անգամ իջաւ Պոսթըն, ուր կը գտնուի Հ. Յ. Դ. կեդրոնական կոմիտէի կեդրոնը: Այդ շրջանին կ'ապրէի Պոսթըն: Որովհետեւ հինէն ծանօթ էի Գ. Նժդեհի, առաջարկեցի, որ բնակարանս ապրի, որքան առեն որ Պոսթըն մնայ: Ընդունեց առաջարկս եւ ապրեցանք հաճելի, երջանիկ օրեր, զորս կարելի չէ վերարտադրել թուղթի վրայ:

Նժդեհ անհանդիստ էր եւ ենթարկուեցաւ բժշկական դանազան քննութիւններու, ինչպէս նաեւ շուրջ մէկ շաբաթ տունը հանգստացաւ: Այդ շրջանին չկրցաւ մասնակցիլ դասախօսութեան մը: Թերթով յայտարարուած էր իր հիւանդութիւնը, հետեւաբար բացակայութեան

պատճառը բացատրուած : Այս առթիւ «Պայքար»-ի մէջ գրուած էր յօդուած մը, որ դանազան վերագրումներ կը կատարէր Նժդէհին, յերբւրածոյ սուտերով :

Ես գիշերը կ'աշխատէի ևւ ցերեկը կը քնանայի : Այդ առաւօտ երբ տուն մտայ, Նժդէհ թոյլ շտուաւ որ քնանամ ևւ ինծի ցոյց տըւաւ պատասխան գրութիւն մը : Առաջին էջերը կարդալէ ևւ հաստատելէ ետք, թէ իր դէմ ըսուած բոլոր սուտերն ու մեղադրանքները լուազոյնս կը հերքէր, շեմ գիտեր ինչպէս եղաւ, գրութիւնը մէկ կողմ նետեցի, անպէտ առարկայի մը նման : Նժդէհ բարկացաւ, գոյնը փոխուեցաւ, ճիշդն ըսելով, ևւ վախցայ, որ կրնայ զիս ծեծել ևւ փախայ ու պահուեցայ : Եւրջ կէս ժամ ետք վերագտնալով առաջարկեցի, որ ճաշի երթանք : Համաձայնեցաւ : Ծաշէն ետք երբ տուն վերագարձանք, տեսնելով թէ բարկութիւնը բուականին մեղմացած է, նախ ներսգրութիւն խնդրեցի ըրածիս համար, ապա յայտնեցի, որ



Հայ կամաւորները ձիւնէ խրամներու մէջ :

«Հայրենիք»-ի մէջ իր պատասխան-գրութեան հրատարակութիւնը պիտի չծառայէ իր նպատակին, քանի որ պիտի չկարգացուի այն մարդոց կողմէ, որոնք ծանօթ են իր դէմ գրուածին : Նաեւ ըսի, թէ ընդհակառակն պիտի ուրախացնէ հակառակորդները, քանի որ անոնց զըրածին կարեւորութիւն տուած պիտի ըլլայ :

Նժդէհ չպատասխանեց :

Նժդէհի Մ. Նահանգներ եկած շրջանին երիտասարդութիւնը կ'ամ չնար իր հայութիւնը յայտարարելու, իր մայրենի լեզուն չէր գիտեր կամ չէր գործածեր :

Սկզբնական շրջանին, երբ Նժդէհ կը խօսէր Նոր Սերունդի մասին, ծիծաղ ևւ վերապահութիւն կը պատճառէր : Սակայն Նժդէհ եր-

բեք չաղղուեցաւ, չվարանեցաւ, չհրաժարեցաւ իր ծրագրէն: Երիտասարդութիւնը կը սիրէր անկեղծ սիրով, ամենայն սրտով:

Առանց կարեւորութիւն տալու զանազան յուսահատեցուցիչ խօսքերու, Նժդէհ լծուեցաւ իր ծրագրի իրադործման աշխատանքներուն: Շրջեցաւ քաղաքէ քաղաք, խօսեցաւ երիտասարդութեան եւ ամէն կողմ ունեցաւ հետեւորդներ, որոնք զործակցեցան իրեն:

Նժդէհ մէկ տարուան մէջ իրարու մօտ բերաւ, հողեկան կապով իրարու շաղկապեց աւելի քան երկու հազար երիտասարդներ, առանց հասկնալու անոնց լեզուն եւ առանց հասկնալի դառնալու անոցմէ: Խոր հաւատքն ու անկեղծութիւնը եղան հիմնական ազդակները այդ կազմակերպութեան:

Յեղակրօնութիւնը խանդավառեց երիտասարդութիւնը, որ ծանօթացաւ ազգային մեր արժանիքներուն: Այդ երիտասարդները, որոնք իրենց հայ ըլլալը կը պահէին, սկսան իրենք զիրենք հօլարտ ըզզալ հայութեամբ: Եղաւ համահայկական կազմակերպութիւն մը, նոյնիսկ ոչ-գաղչնակցականներու զուակներ կ'ուզէին անդամակցիլ Յեղակրօն Ուխտերուն: Այն որ կը մերժուէր, ինքզինք վիրաւորուած կը զգար:

Իր խօսքերով ունկնդիրներուն վրայ ազդելու բացառիկ կարողութիւն ունէր Նժդէհ: Եւ դժխաւորաբար շնորհիւ այդ կարողութեան յաջողեցաւ ի մի հաւաքել երիտասարդութիւնը, որուն ներկայացուցիչները այսօր դեկավարներն են Մ. Նահանգներու Հ. Յ. Գաղչնակցութեան: Այդպիսով լիուլի կատարած եղաւ զործիչի իր պարտականութիւնը:

Անչահախնդիր նուիրեալ մըն էր Նժդէհ: Օր մը չեմ տեսած, որ խօսի նիւթականի մասին: Այլ իր զբոսանի վերջին լուծման իսկ կու տար կարիք ունեցող իր ընկերներուն եւ ինքզինք հանգիստ կը զգար:

*
**

Վերջին շրջանին կը գտնուէր Նիւ Եորք, ուրկէ պիտի անցնէր Պուլկարիա: Գրեց, որ իր առարկաները տանիմ Նիւ Եորք: Իրեն փառաւոր բարի ճանապարհ մաղթելու նպատակով հաւաքուեցանք իր բարեկամները, — Օր. Սուզան Էլմասեան (Արտաշէս Ղուկասեանի տիկինը), Երեմ Աջեան, Հայկ Կիլիկեան եւ ես, — ինքնաշարժովս ճամբայ ելանք, սակայն արկած մը ունեցանք եւ Նիւ Եորքի փոխարէն հիւանդանոց գացինք: Այս պատճառով Նժդէհ վեց ամիսով յետաձգեց իր մեկնումը:

Յամենայնդէպս իր մեկնումի ատեն կրկին գացի Նիւ Եորք եւ վերջին անգամ համբուրուեցայ սիրելի Նժդէհին հետ:

ԶՕՐԱՎԱՐ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՂԻՆ՝

ՍԻՆԵԱՅ ՍՊԱՐԱՊԵՏԻՆ

Աղօթեցի՛ր հայ ազատագրութեան խորանին՝ քախժալի շարահանով ու վառեցի՛ր լոյսը՝ հայ հերոսութեանց փառքին ու պսակի՛ն...

Խորհրդաւոր ու վեհաշուք էր քու անգուգական նուիրումը, երբ լսեցիր ողբն ու արցունքը՝ հայ տառապակոծ սրտին...

Հայ արցունքոտ ոգին ալիք-ալիք բարձրացուց իր հրեղէն բողոքը, ու դուն, քու նառագայթող սրտէդ հուր ու կրակ տեղացիր քու գէնքով, Սինեայ Սպարապետ...

Քու հերակլեան հերոսութեամբ կարիլ-կարիլ կաթեցուցիր ցօղը՝ հայ ազատագրութեան, յաղթութեանց լոյսի բոցափայլումներով պայծա՛ն...

Վրէժխնդիր սիրտդ՝ անշէջ ու մշտավառ՝ հայ վրէժխնդիր հոգիի փառքով լուսաւոր՝ վերջնական յաղթութեան հաւատքով ողորդուն՝ տարա՛ւ յաղթանակը՝ հրաշակերտ, յաղթանակը՝ փառքի ու պատիւի...

Հայ սրտէն՝ աստուածային շունչով օծուած՝ լսուեցաւ հա՛յ գէնքի յաղթանակի երգը, արցունքներու մարգարիտներով օծուն...

Շրթունքներուդ վրայ ե՛րգ կար՝ երբ այցելեցիր Եանփիններու աշխարհը: Կազմակերպեցիր ամերիկածին մատղաշ երիտասարդութիւնը, որոնց հոգիներուն, մէջ ասպետական երգ կը փրփրէր, որպէս յոյգ, որպէս կարօտ՝ դէպի հայ ազատագրութեան փառապանծ ուխտը...

Հայ ազատագրութեան արշալոյսի կաթնափրփուր լոյսը՝ լաւագոյն վկան է քու սրտի կարօտին, անո՛ր բոցին, անո՛ր ջերմին եւ անո՛ր փառապանծ յաղթանակին...:

Յիշատակիդ լոյսի շողերը մարգարիտ՝ յաւէ՛տ պիտի շողան հայ ժողովուրդի սրտին մէջ:

ՀՄԱՅԵԱԿ ՍԸՌԵԱՆ

ՆԻՆ ԵՐՐԷ

Ն Ժ Դ Ե Լ

Վերջին աշխարհամարտին Պերլինը կը բնակէի: Երեկոյ մը ունեցայ անակնկալ բայց շատ սիրելի հիւրեր՝ Նժդեհը եւ Հայկ Ասատրեանը:

Շատ հաճելի եւ դեղեցիկ երեկոյ մը անցուցինք երեքս միասին: Մտերմօրէն հարցուցի Նժդեհին, թէ այս պատերազմի շրջանին ինչո՞ւ եկած է Պերլին, աւելցնելով, թէ այս պատերազմը մեր դիտցածներուն չի նմանիր, հոս ուժերը կարկուտի նման կը տեղացնեն: Երբ այսպէս խօսեցայ, Նժդեհ շուղեց իրականութիւնը ինձմէ պահել, հակառակ որ բացարձակապէս արզիլուած էր մէկու մը խօսիլ իր Պերլինը դալու նպատակին համար:

Նժդեհ եկած էր Պուլկարիայէն, իր հետ բերելով երիտասարդներ, որոնք անտառի մէջ կը մնային եւ զինավարժութիւն կը կատարէին:

Յաջորդ օրը անտառ դացինք, աչքէ անցուցի տղաքը, որոնք լաւ մարզուած էին:

Նժդեհ կը փափաքէր տեսնել Զօր. Սմբատը, որ այդ շրջանին Ֆրանսա կը գտնուէր: Նժդեհի եւ Հայկ Ասատրեանի թելադրութեամբ Զօր. Սմբատը բերի Պերլին:

Պերլին գտնուած շրջանին Նժդեհ դասախօսութիւն մը տուաւ. սրահը լեցուած էր հոծ բազմութեամբ. դասախօսութեան նիւթն էր «Հայաստանի անկումը». ան երկու ժամ անդադար խօսեցաւ, ժողովուրդը ուշի ուշով եւ մէկ շունչի վրայ մտիկ կ'ընէր օրուան բանախօսին, մինչ դուրսէն կը լսուէին ուժերու ձայներ:

Սմբատ Նժդեհի հետ դործը աւարտելէ ետք պիտի մեկնէր Ֆրանսա. Սմբատը Ֆրանսա տանելու պարտականութիւնը ինձի կ'ընար: Ուստի դացինք Նժդեհը տեսնելու, սակայն ան անհանդիստ էր եւ անկողին պառկած դաշնակցական Սաթոյի հոգածութեան տակ կը գտնուէր: Հրաժեշտ տուինք Նժդեհին եւ բաժնուեցանք: Այս եղաւ մեր վերջին հանդիպումը, սակայն Նժդեհ միշտ ու միշտ իր դեղեցիկ զիմազիծով եւ սքանչելի ճառերով մնաց իմ հետս, ինչպէս կը մնայ իւրաքանչիւր հայի սրտի մէջ...:

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՇԵՐՈՍ ՆԺԴԵՂԸ

Նժդեհն բացառիկ հասարակական գործիչ մըն էր : Ունէր բազմակողմանի հմտութիւն եւ գինուորական դաստիարակութիւն : Իր յօղուածներուն մէջ կը սլարզարանէր ցեղակրօնութեան սկզբունքները :

Հրապարակային ժողովներու մէջ, իր բանախօսութիւնը կը համեմէր հայ եւ օտար հոգեբանական, հերոսական գրուածքներով եւ ասացուածքներով : Որոշ վայրկեաններ, իր շունչով ու ոգիով կը մագնիսացնէր իր ունկնդիրները :

Նժդեհնի ատենախօսութեան լեզուն արեւելահայերէն էր : Երբ կը բանախօսէր՝ առհասարակ իր աջ ձեռքը սրտին վրայ կը դնէր : Ունկնդիրներէն շատեր կը փախային, թէ ձեռքը դէնքին վրայ դրած է : Բայց, իրականութիւնը այն է՝ որ ձեռքը սրտին վրայ կը դնէր, որովհետեւ սրտի ցաւ ունէր :

Բազմակողմանի դաստիարակութեան տէր էր : Իւրաքանչիւր անգամին իր բանախօսութիւնը կը սկսէր տարբեր նախարանով, եւ կը վերջացնէր իր քարոզած վարդապետութեամբ : Կրկնութիւններէ կը խուսափէր :

Հ. Յ. Դ. Պատգամաւորական ժողովին մէջ, 1933-ին, ընկեր մը հարցում ուղղեց իրեն, ըսելու համար, թէ իր քարոզածը «Փաշի՞զմ» է թէ «Տիթլերիզմ» : Ան պատասխանեց. «Իմ քարոզածը այդ վարդապետութիւններէն ո՛չ մէկն է : Ես կը փափաքեմ ի յայտ բերել մեր պատմական հին հերոսութիւնները եւ հայ մշակոյթի ծալքերը, որոնք փոշիներու տակ մնացած են» :

Նժդեհն, Շիքահօ այցելութեան օրերուն, իր կեանքէն քանի մը գրուածքներ պատմած է ընկերական շրջանակի մէջ : Որպէս հետաքրքրական նիւթ, հոս կը վերարտադրեմ անոնցմէ մի քանին :

Հայաստանի Հանրապետութեան տասլալումէն վերջ՝ կը հաստատուի Պուլկարիա : Բնակարանը պուլկարացի հացադործի մը խանութին քով կը դանուի : Իր դրած հակահամայնավարական յօղուածներուն համար՝ իրեն ծանօթ պուլկար յեղափոխական մը կը մտածէ, որ չըլլայ թէ Նժդեհնի կեանքին վտանգ մը պատահի :

Պուլկար յեղափոխականը կ'այցելէ պուլկար հացադործին, եւ անոր կը պատուիրէ հետեւեալը .

«Որեւէ Հայ որ կ'անցնի այս փողոցէն, կանչէ՛ ներս եւ իրեն հարցուր՝ թէ Դաշնակցակա՞ն է : Եթէ ԱՅՈ՛՛ ըսէ, թոյլ տուր որ երթայ իր ճանապարհը : Իսկ եթէ Դաշնակցական չէ, թոյլ մի տար որ անցնի . . . » :

*
**

Նժդեհ կը պատմէր, թէ վախկոտ յիսնապետ մը ունեցած է :

Օր մը, կը կանչէ զայն անկիւն մը եւ կը պատուիրէ, որ խրախուսական եւ հերոսական դրուագներ պատմէ զինուորներուն, փոխանակ զանոնք յուսահատեցնելու :

Յիսնապետը կը հաւաքէ կամաւորները իր շուրջ, եւ կը պատմէ հետեւեալ շինծու դրուագը .

— «Տղա՛ք, օր մը՝ ուսու-ճափոնական պատերազմի մէջ էի : Այդ օրը այնքան զինուորներ մեռան, որ երկու զինուորներու զիակները ինծի բարձ ըրի» . . .

Կամաւորները, լաւատեղեակ՝ որ ան վախկոտ է, եւ ըրած պատմութիւնն ալ՝ շինծու, իրեն կ'ըսեն . «Ինչո՞ւ չես ըսեր, որ մէկ երկու զինուորներու զիակներ ալ իբր անկողին գործածեցիր» . . .

*
**

Օր մը հարցուցի Նժդեհին, թէ կը ճանչնա՞յ Անդրանիկը : Պատասխանեց .

— «Տարի ու կէս միասին եղած եմ անոր հետ :

«Միշտ կը յիշեմ իր մասին հետեւեալ պատմութիւնը .

«Օր մը, Անդրանիկ ժողով կը սարքէ Մշոյ դաշտի զիւղացիներուն հետ՝ զիւղի մը մէջ : Ներկայ եղող Սէյդոյին կը հրահանդէ որ երթայ կուսակցութեան կնիքը բերէ : Սէյդոն կը մեկնի եւ չի վերադառնար :

Անդրանիկ այս անգամ Մկրոյին կը յանձնարարէ՝ որ երթայ եւ տեսնէ Սէյդոյին, հասկնալու համար, թէ ինչո՞ւ կուսակցութեան կնիքը չբերաւ :

Մկրոն անմիջապէս կը մեկնի եւ կը տեսակցի Սէյդոյին հետ : Եւ կը հարցնէ անոր, թէ ինչո՞ւ Անդրանիկի հրամանը չէ կատարած : Սէյդոն անմիջապէս կը պատասխանէ . «Օ՛, աղբէ՛ր, Անդրանիկ կնիկ կ'ուզէ, ես ո՞րտեղէն կնիկ տանեմ իրեն» . . .

Մկրոն կը յայտնէ Սէյդոյին՝ որ Անդրանիկը կնիկ չ'ուզեր, այլ կուսակցութեան կնիքը . . .

*
**

Սիրելի՛ Նժդեհ, անվեհեր քաջութեամբ կուուեցար Ղարաքիլիսէի եւ Սիւնիքի բարձունքներուն վրայ : Գրչով եւ խօսքով պայքարեցար համայնավարութեան դէմ : Նոյնիսկ բանտին մէջ չընկրկեցար՝ կեանքդ վրկելու համար : Մինչեւ վերջ քու դաւանած դադափարի բարձրութեան վրայ մնացիր : Յեղապաշտութեան համար նահատակուեցար :

Այս քանի մը տողերը թող ծաղկեփունջ մը ըլլան քու անյայտ հողակոյտիդ վրայ :

ԱՆՄՈՌԱՑ ՆԵՐՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

«Մութ բանտերում տանջուած բնկեր,
Քո տանջանքին մեք մատաղ»:

Կրկնենք Ս. Աբովեանի խօսքերը. «Հող ունինք խլուած, կեանք ունինք մեռած»... 1944 թուին, կարմիր բանակալուծեան յատուկ մանդատը հնձեց ազատատենչ մեր ժողովուրդին Արեւելեան Եւրոպա ապրող մտաւորական եւ մարտական ընտրանին:

Պուշկարիայէն բազմաթիւ ականաւոր անձնաւորութիւններ եւ դաշնակցական ղեկավարներ տարուեցան Սիպերիոյ աքսորավայրերը. անոնց մէջ էր Գարեգին Նժդէհ: Շատեր, 12 երկար տարիներ մաշեցան հողիով եւ մարմնով, մարդկային բարոյականութիւնը չճանչցող բուշեւիկներէն:

Անմահացան անոնք, չուեցան պտղունց մը խուճկ, խաչ բռնող ու դլուխ մը Աւետարան կարդացող քահանայ մը, ոչ ալ դադաղակիր սգաւորներ:

Ուրիշներու կարգին, մեռցուցին նաեւ մեր հերոս Նժդէհը, իր 75 տարեկանին: Մնաց սուղ մը սիրողներուն սրտերուն մէջ, սուղ մը ընկեր-բարեկամներուն մէջ, ու սուղ մը դադափարական մեծ ընկերներուն մէջ: Անմար սուղ մըն ալ անոր սրտահատոր Սուքիաս գաւկին ու այրի Եւփիմէին, որոնք աքսորուեցան Սոֆիայէն, գիւղի մը հեռաւոր ծայրը: Օրերով ի զուր սպասեց իր ամուսնոյն վերադարձին. տառապեցաւ սրտի հիւանդութեամբ եւ մեռաւ հիւանդանոցի մը մէջ, անտէր:

Զինուորական եւ դադափարախօս Նժդէհ պատմական Սիւնիքի լեռներուն վրայ մղեց կռիւր անկախութեան՝ Հայաստանի անուճով, եւ եղաւ յաղթական: Հայոց մեծ սպարապետին մասին կը գրէ պատմիչը. «Երբ Թուրք ու Կարմիր բանակայինները միացած կը դաւէին Հայ ցեղի գոյութեան դէմ, հերոսական Սիւնիքը իր տիտանի զէնքերով ուժեղ մնաց լեռներուն վրայ թշնամիին դէմ, որպէսզի Արարատեան դաշտէն սրկած բազմահազար մտաւորական եւ մարտական ընտրանիները անվնաս անցնին Պարսկաստան»:

Հայաստանի խորհրդարանին կողմէ գնդապետի աստիճան եւ Լեռնահայաստանի խորհրդարանէն ալ զօրավարի աստիճան ստացող

Նժդեհի մասին կը գրէ պատմաբանը. «Տաթևի Սուրբ վանքի հնամեայ կամարներուն տակ, մէկ սիրտ մէկ հողի, ուխտեցին Ապրիլ 27ին, եւ տարին վերջին յաղթանակը: Դաւիթ Բէկերու ողին արթնցած էր: 1921 Փետրուար 21ին, Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր մաղթանքներով, ժողովուրդի հոծ բազմութեան եւ զինուորական վաշտերու ներկայութեան օժեցին Սիւնիքի կառավարութեան կողմէ սպարապետին տրուելիք գօտին եւ Եռագոյն Դրօշակը: Նախագահը գօտին կապէց սպարապետին մէջքին եւ յանձնեց Դրօշակը»:

Զօրավար Նժդեհ թափառեցաւ երկրէ երկիր, քաղաքէ քաղաք, իր հետ տանելով Հայաստանի ազատութեան եւ անկախութեան տենչը: Կամքի մեծ տոկունութեամբ եւ սուրբ հաւատքով մնաց վսեմ դադափարարանութեան մէջ եւ միշտ ալ ցանկաց կրկին տեսնել եւ ողջունել ազատութեան կարմիր ցուլքերուն հետ վեր բարձրացող Հայոց սուրբ Եռագոյն Դրօշակը:

Գաղափարապաշտ եւ մեծ հայրենասէր զօրավար, չէնք կրնար մոռնալ քեզ, որ ապրեցար այս հիւրընկալ ամերուն վրայ աւելի քան մէկ տարի, եւ կազմակերպեցիր 60 Յեղակրօն Ուխտեր, 2500 անդամանդամուհիներով, եւ խորացուցիր Վարդանանց հաւատքը մեր մատաղ սերունդին մէջ: Բարձրացուցիր ցեղիդ արժէքները եւ հանդէսցուցիր ամէն մէկու հողին մէջ Յեղապաշտութեան, Հայրենասիրութեան սուրբ դադափարը, — Յեղակրօնութիւնը:

Նոր արշալոյս մը ծագեցուցիր 1933 թուականին, 35 տարի առաջ, տաքցնելով Ապրիլեան Սան, Հայ Որդիք, Որդիք Հայաստանեայց եւ Շաւասպեաններ կազմակերպութեանց անդամ երիտասարդներու հողիները: Շնորհիւ Հ. Յ. Դաշնակցութեան եւ անոր «Հայրենիք»ներուն, լսելի դարձուցիր քո պատգամը տասնեակ հազարաւոր ժողովականներու, բացօթեայ հաւաքոյթներու մէջ, եւ հանդիսացար ցեղակրօն շարժման տաղանդաւոր քարոզիչը եւ հիմնադիրը:

Սիրելի հերոս, դուն հայրենի հողին կառչեցար, անոր լեռներէն զլլլացող վճիռ ջուրը խմեցիր եւ քու շունչով կենդանացուցիր մեր դադութիւնները:

Դուն դեռ կ'ապրիս մեր բոլորին հողիներուն մէջ, նստած եւ սպիտակ ձիուդ վրայ իրրեւ «Սուրբ Սարգիս»: Անուշ եւ անթառամ յիշատակդ պիտի մնայ մեր հողիներուն մէջ: Զունեցար ափ մը հող իսկ, որ ծածկէր յօշոտուած ոսկորներդ:

Փա՛ռք քեզի եւ յարդա՛նք վսեմ դադափարարանութեանդ:

Ս. Յ. ՔԱՐԵՆՅ

«ԱՊՐԻԼԵԱՆ ՍԱՆԵՐ»

Այս էր անունը այն բուռ մը տղաներուն՝ որոնք Ապրիլեան Եղեռնէն ազատած՝ եկած էին Ամերիկա, եւ իրարու քով դալով կազմած էին «Ապրիլեան Սաներ» անունով միութիւն մը, որուն նպատակն էր.—

Ա.— Չմոռնալ Եղեռնը, եւ թուրքին դորձած համատարած աւերը հայ ժողովուրդին.

Բ.— Ճանչնալ հայու մշակութային արժէքները — դիրն ու գրականութիւնը մանաւանդ, եւ ծանօթացնել ու տարածել դայն իրմէ աւելի տարարախա բեկորներուն, որոնք այբուբէնը սորվեցան անապատի աւազներուն վրայ — ու դեռ կը մնան ու կը շնչեն պարզապէս թափառող որբեր:

Ամերիկեան ազատ միջավայրը եւ անոր ընծայած հեշտ ու զեխ կեանքի փորձութիւնները, չճշտեցին մեր տղայոց միտքերն ու մարմինը, այլ՝ անոնք նուիրուեցան օգտաշատ աշխատանքի:

1932 թուականին էր, Փրուիտէնսի հայաշատ դաղութին մէջ ծիլարձակող անապատի այդ տղաքը՝ առաջին անգամ ըլլալով սարքեցին հրատարակային-մշակութային հանդէս մը, նուիրուած «Հայրենիք Ամսագրի» տասնամեակին: Հրուիրուած էր «Հայրենիք»ներու խմբագրապետ՝ ընկեր Ռ. Դարբինեան եւ այս տողերը ստորագրողը՝ որ կարդաց իր դրաւոր մէկ ուսումնասիրութիւնը Հայրենիք Ամսագրի մասին:

Շատ չանցած՝ Ամերիկա եկաւ Հ. Յ. Դաշնակցութեան անդուգական մարտիկներէն ու Չանդեգուրի հերոս Նժդեհը, որ իր հրաշունչ խօսքերով մագնիսացուց անապատի տղաքը. արթնցուց անոնց մէջ իրենց պատկանած Յեղի մեծագոյն արժանիքները, հայուն անըրկուն կամքը ու հաւատքը, ազատութեան համար զոհուելու պատրաստակամութիւնը:

Իմ յիշողութեան մէջ շատ թարմ է այն օրուան պահը, երբ Ապրիլեան Սաները միատեղ հաւաքուած՝ աչք ու ակունք սեւեռած, լուռ ու անձայն մտիկ կ'ընէին Նժդեհին՝ երբ ան կարծես կաթի՛լ առ կաթի՛լ անոնց հոգիներէն ներս կը սրսկէր նո՛ր արիւն: Նոր աւետարան մըն էր որ ան բացած կը կարդար Հաւատացեալ Նոր Սերունդին: Յեղին ձայնն էր, որ անապատներու աւազներէն դուրս բերելով, Չանդեղուրի հերոսը կը հնչեցնէր իւրաքանչիւրի ականջին՝ տարփողելու համար նոր աւետարանը՝ որու ընդհանրացման համար ան ճամբայ ելած էր, — քաղաքական նոր առաքեալը՝ իր քարոզչութիւններով նոր բանակ կազմեց՝ որուն զինուորները շատ կարճ ժամանակի մէջ թրծուեցան, ձեռք առին ազգային հասարակական կեանքը ու մկրտուեցան՝ Հ. Յ. Դաշնակցութեան անդամագրութեան իրենց սրբազան երգումը կատարելով:

Անոնցմէ շատերը հրապարակի վրայ են այժմ, եւ յոյս ու հաւատք կը ներշնչեն անոնց, որոնք անյուսութեան մէջ կը դեզերին, ու կը տատամսին նոր քայլեր առնելու:

Նժդեհի դաստիարակած սերունդը միշտ պիտի ապրի, որովհետեւ Յեղակրօնութեան Աւետարանը եւ սկզբունքն է պահել ու պաշտպանել հայ ցեղի արժէքները, եւ ի հարկին դոհարել մարդ անհատի կեանքը հայրենիքի ազատութեան համար:

Սրբազան պարտականութիւն մը, որմէ կը խուսափին միայն երկչոտները:

ԱՐՏ . ՀԱՅԵԱՆ

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Ն Ժ Դ Ե Ն Է Ն

Փետրուարեան Յեղափոխութենէն առաջ, Երևանի Թարխանեան փողոցին վրայ գտնուող Ամերիկեան Առաջին որբանոցին մէջ, հինգերորդ դասարանի աշակերտ էի:

Մեր թուարանութեան ուսուցիչը Պրն. Մուրաա, որ վանի Շատախ գիւղէն էր եւ բերնին վերեւ անխնամ պեխեր ունէր, օր մը, Սիւնեաց սարերու արծիւ Նժդեհի քաջագործութիւններէն դրուազներ պատմեց մեզի: Այդ օրէն, միակ փափաքս էր Զօրավարը տեսնել եւ անոր ձեռքը համբուրել:

Յեղափոխութենէն ետք, երբ դէպի Զանգեզուր կը մեկնէինք, այդ փափաքս իրականացաւ: Ղափանի մէջ առաջին անգամ ըլլալով տեսայ Նժդեհը եւ ուրախութեամբ վազեցի եւ համբուրեցի աջ ձեռքը:

Զօրավարը՝ կարճ հասակիս ու երկար փողով հրացանիս նայելով, քաջալերական խօսքեր րբաւ:

*
* *

Զօրավարին հետ երկրորդ հանդիպումս տեղի ունեցաւ դեռ Մեզրի շահաւած, նեղ ձորի մը մէջ: Վանի Մաշտակ գիւղացի մեր Յիւնապետ Արմենակ Պետրոսեանի հետ կեցած էինք:

Յանկարծ տեսանք, որ Սիւնեաց Սպարապետը կուգայ ձիով, մտրակը ձեռքը եւ աջ ու ձախ հանդիպողին հրամայելով ետ, դէպի հակատ դառնալ: Երբ մեզի մօտեցաւ, խիստ խօսքերով յանդիմանեց Յիւնապետը:

Ես՝ որ հաղիւ մէկ շարաթ առաջ իր ձեռքը համբուրած էի, համարձակեցայ ըսել.

— Բայց, պարոն Սպարապետ, չէ՞ք տեսներ կուտակուած լքեալ գէնքերը:

Երանի թէ ըսած չըլլայի: Յանկարծ, մէկ քանի օր առաջ անհուն երջանկութեամբ համբուրած ձեռքը վեր ելաւ եւ ձախ երեսիս այնպիսի շառաշուն ապտակ մը իջեցուց՝ որ շմեցայ: Եւ մոռցայ ակոսյի այն ցաւը՝ որմէ կը տառապէի քանի մը օրէ ի վեր: Բայց, ապտակին ցաւը կը մնայ մինչեւ այսօր ու պիտի մնայ մինչեւ մահ, իբրեւ անգին յիշատակը աննման Նժդեհին:

Թող օրհնեալ ըլլայ յիշատակը Սիւնեաց Սպարապետին եւ իր զինակիցներուն ու նաեւ անմոռանալի այն բոլոր հերոսներուն՝ որոնք հայրենիքի ազատագրութեան համար պայքարեցան ու ստեղծեցին այսօրուան հայրենիքը, որուն հիմը դրուեցաւ 1918 ՄԱՅԻՍ 28-ին:

ԽԵՉՕ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ԱՆՄԱՀ ՆԺԴԵՀԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նժդեհին հանդիպեցայ Երեւան, 1915ի վերջերը, որքան կը յիշեմ: Կը կրէր սուլիարական սպայի համազգեստ եւ կը վարէր հայ կամաւորներու մարզանքները, Նորքի մէջ:

Բարեկազմ կառոյցքը կը մարմնաւորէր զինուորականի յատուկ ակնյայտի վայելչութիւն մը: Տեսքը տպաւորիչ էր, բարձրահասակ, հուժկու, առնական: Քալուածքը արագ, ինքնավստահ: Նայուածքը շեշտակի, խորաթափանց, խօսքը հատուկ, վճռական:

Թէեւ առիթը չունեցայ անձամբ ծանօթանալու, սակայն տպաւորութիւնս իր հանդէպ եղաւ դրական: Սխալած չէի:

Երկրորդ հանդիպումս տեղի ունեցաւ Շիրակոյի մէջ, անոր դաշնակցական զործիչի հանդամանքով եւ Յեղակրօն Ուխտերու Կազմակերպումի աշխատանքներու առընչութեամբ: Շուտով դարձանք մտերիմներ:

Մեր համեստ յարկը ոչ միայն դարձաւ իր բնակավայրը, այլեւ կեդրոնավայրը Միջին Արեւմուտքի Յեղակրօն Խումբերու Գործադիր Մարմնին եւ փոխակերպուեցաւ տեսակ մը ուխտավայրի, ուր մուտք կը դործէին խումբ-խումբ, սրտառուչ երկիւղածութեամբ մը, հայոց «նոր մեսիան» տեսնելու, անոր շունչով հաղորդուելու համար:

Նժդեհի երեւումով, կարճ ժամանակի ընթացքին, խանդավառութեան ալիք մը ծայր տուաւ մեր արիերուն վրայ:

Դաշնակցութեան վարկը անսովոր մակընթացութեան մը ենթարկուեցաւ: Կոմիտէական կազմերը սկսան ողողուիլ նոր ուժերով: Իսկ նորակազմ Յեղակրօն Ուխտերը սկսան ուռճանալ հայածին մեր նոր սերունդով: Մոզական գաւազանի մը պատրանքը ապրեցանք, հրաշքի համազօր:

Հրապարակային ժողովները տեղի կ'ունենային անսովոր բազմութեամբ եւ աննախընթաց խանդավառութեամբ: Հակառակ «Միացեալ Ճակատ»ի կաղկանձումներուն եւ վայրահաչութիւններուն:

Բացի հայրենապաշտ զօրական մը ըլլալու փաստէն, Նժդեհ հռետոր էր, զանգուածները գերելու ընդունակ: Խորիմաստ էին իւրապատուկ ոճով իր կուռ ճառերը, ոգեւորիչ, տպաւորիչ:

Անյագ գոհունակութեամբ կարելի էր լսել զինք երկա՛ր, արդար հիացմունքով ու հպարտանքով:

Իր հոգեկան խռովքին ու ապրումներուն հաղորդակից կը դարձնէր ունկնդիրները եւ, հաւատքով եւ ցեղապաշտական շիճուկով կը պատուաստէր զանոնք :

Մշակուած եւ խոհուն միտք ունէր, ուսումնասիրած անհատնում նիւթերու պաշար եւ զանոնք զիւրըմբռնելիօրէն ներկայացնելու կարողութիւն :

Գրեթէ, առանց բացառութեան, ընկերակցեցայ իրեն մեր շրջանի բոլոր կոմիտէութիւններու կազմակերպած բանախօսութիւններուն եւ մնացի ապշած :

Ամէն ժողովի, ամէն տեղ, տարբեր էր իր նիւթը, հետաքրքրական, դատախարակիչ, հոյակապ : Ո՛չ մէկ կրկնութիւն՝ ո՛չ մէկ տեղ : Կարծես նիւթերու թաքուն յորդառատ հանք մը ունէր :

Մատչելի էր բոլորին, համեստ, ընկերական : Կ'ատէր կեղծիքը եւ անհանդուրժող էր պարտազանցներու հանդէպ : Բժախնդիր եւ խոտապահանջ էր իր փոխյարարելութիւններուն մէջ, բոլորանուէր սիրով կապուած իր զինակիցներուն, զործակիցներուն :

Անխոնջ, ինքնամոռաց նուիրեալի տիպարն է ան : Հայրենապաշտ գորականը հայոց աշխարհի :

Տիրական էր այդ կարծիքը իր վերաբերմամբ, եւ շատ արդարացիօրէն : Խօսքը կեանքի մէջ զործնականացնելու ճիշդ ու աշխատանքն էր, որ զինք դարձուց պաշտամունքի արժանի կուռք մը՝ ամէնուրեք : «Արագի ափին ծնած ընկեր» երգը(*) իրեն ձօնուած պերճախօս ասպայսյց է իր վայելած ժողովրդականութեան ու վարկին :

Տխուր յիշողութիւններու կարգին, մեր ակնարկները կ'ուղղուին յաճախ խաւրակերտ զոյգ մը ծաղկամաններու — մեզ նուիրուած ընկ. Նժդեհէն — որպէս հայ սղիով առլցուն յիշատակարաններու եւ որպէս անուշարոյր կոթողներ իր անյայտ դերեղմանին :

Խունկ ու օրհնութիւն իր անմահ յիշատակին :

Յ. Գ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

(*) Տես էջ 35 :

Կ Ա Ր Օ Ս Ա Ս Ո Ւ Ն Ի



Կ. Սասունի ծնած է 1889ին, Սասնոյ Ահարոն գիւղը, ուր կը ստանայ նախակրթութիւնը: 1900ին կը յաճախէ Մշոյ Մխիթարեան միջնակարգ վարժարանը, որուն ընթացքը կ'աւարտէ 1906ին եւ ուսուցչական պաշտօնով կ'երթայ Տիգրանակերտ:

Ուսանողական շրջանին (1904) կ'անդամագրուի Հ. Յ. Գաշնակցութեան Մշոյ աշակերտական գաղտնի խումբին:

1909ին կ'երթայ Պոլիս, ուր կը յաճախէ իրաւաբանական համալսարանը: 1912ին Հ. Յ. Գ. Բիւրոյին կողմէ գործիչ կ'ուղարկուի Մուշ եւ Սասուն, ուր կէ Պոլիս վերադառնալով կը ստանայ իրաւաբանական վկայականը:

1914ի Հոկտեմբերին կ'անցնի Կովկաս, ուր կը լծուի կամաւորական շարժման աշխատանքներու եւ գործիչ կ'ու-

ղարկուի Բասէնի շրջանը: 1916ին կ'անցնի Մուշ ու Սասուն, որպէս շրջանի ընդհանուր վարիչ եւ զինուորական խորհրդական: Կ'ըլլայ կուսակցական վերին մարմիններու անդամ:

1919ի Յունուարին կազմակերպչական գործերով կ'երթայ Պոլիս եւ Իզմիր. Պոլսոյ մէջ կը գործէ Տոքթ. Թորգոմեանի հետ, իսկ Իզմիրի մէջ՝ Սուրէն Պարթեւեանի հետ: Նոյն տարուան Յունիսին կը վերադառնայ հայրենիք:

Հայաստանի Հանրապետութեան շրջանին եղած է հորհրդարանի անդամ, Ալեքսանդրապոլի նահանգապետ, ինչպէս նաեւ Փրկութեան կոմիտէին մէջ՝ ներքին գործոց նախարար:

Հրատարակած է շարք մը գրքեր (բաղաբանական - պատմական եւ գրական):

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ն Ժ Դ Ե Հ Ը

Ո Ր Պ Է Ս Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Դ Է Մ Ք

Գարեգին Նժդէհը անուն դարձաւ Պալքանեան պատերազմի ընթացքին (1912—1913), գործակցելով Անդրանիկին՝ որպէս կամաւորներ պուլկարական բանակին մէջ:

1914ի ուսուցիչական պատերազմին, հայ կամաւորական զուեզերուն մէջն էր՝ պատասխանատու պաշտօնով:

Գարեգին Նժդեհ մարտական այդ տարիներուն ի յայտ բերաւ ամբոխները շարժման մէջ դնելու ընդունակութիւն մը: Մարտական գործունէութիւններու մէջ նետուելու քաջութեամբ, եթէ չէր կրնար մրցիլ մեր հին եւ խիզախ խմբապետներուն հետ, սակայն մարտիկները կռուի մղելու կարողութեամբ, գրեթէ բոլորը կը գերազանցէր:

Գ. Նժդեհ 1917—1921 թուականներուն իր մասնակցութիւնը բերաւ մարտական եւ հասարակական կեանքին: Փոթորկալի եղաւ անոր կեանքը: Թէ՛ դովեստի եւ թէ՛ դատապարտութեան ենթակայ եղաւ Նժդեհ:

Կուսակցական կեանքը նոյն փոթորկալի վերիվայրումներուն ենթակայ եղաւ:

Երբ այս ընդհանուր ակնարկին տակ կ'առնենք Գ. Նժդեհի մարտական եւ կուսակցական կեանքը, երկու պատմական իրողութիւններ կ'արձանագրուին ի պատիւ անհետացող այս դէմքին: Առաջինը՝ Լեոնաճալաստանի կորովի մարտական յաղթանակներն են 1920 թուին, որոնց շնորհիւ Լեոնաճալաստանը դարձաւ Հայաստանի անբաժանելի մասը:

Երկրորդը՝ Նժդեհի կուսակցական գործիչի արտակարգ յաջողութիւնն է, որուն շնորհիւ ստեղծուեցաւ Ամերիկայի Հ. Յ. Գաշնակցութեան Յեղակրօններու Միութիւնը, որ այսօր յայտնի է Հայ Երիտասարդաց Գաշնակցութիւն անունով:

Գ. Նժդեհ պատմական դէմք մը կը մնայ հայ ազատագրական շարժման տարեգրութիւններուն մէջ:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՑԱՆԿ

Ա.	Ե.
Աբրահամեան Մարտիրոս (խմբ.) 30, 150	Եսայո 168, 169, 186, 215, 218 Եղիազարեան Սմբատ 178, 192, 210, 211
Աքարբեզեան Ասիս 154, 200, 270	Երեմիա Բակունց 109, 142
Աղայեան Յ. 166, 192	Եփիմէ 266, 268
Արզուբեան Յովսէփ՝ տե՛ս Իշխան	Եօլեան Զաթար 101, 102, 217
Ամիրեան Գրիգոր 53, 54	Եօլջեան Մելիք 102, 129, 192, 210, 216
Ամիրխանեան 72, 219	
Ամիրնանեան Գարեգին 198, 217	
Անդրանիկ (Զօր.) 36, 37, 38, 39, 40, 42, 43, 45, 47, 50, 51, 53, 54, 55, 77, 78, 418	Զ.
Աշոտ՝ տե՛ս Մելիք Մուսեան	Զատարեան Սիմոն 25, 329, 376 Զուլումար 29, 30
Բ.	Է.
Բաղիրեան Բագրատ 217, 220	Էդիֆ 288, 311, 313, 325
Բալայեան Գեորգի 96, 211, 215	Էմին Պէյ 131, 132 Էնվեր 140, 405
Գ.	Թ.
Գասպարեան Գասպար 35, 78	Թադէոսեան Սամսոն 19, 25, 29, 30
Գիւլնազարեան Մովսէս 220, 312	Թարխանեան՝ տե՛ս Կուրո
Գրիգորեան 215, 220	
Դ.	Ի.
Դանիէլեան Խաչատուր 165, 166	Իշխան 22, 55, 56
Դաւիթեան Ասատուր 85, 87, 88	Իւանով 105, 304
Դարբեան Դաւիթ 165, 166	
Դրօ 55, 57, 59, 125, 144, 149, 150, 154, 301, 308, 309	Լ.
Դօնդարով (զնդ.) 215, 217	Լենին 66, 124, 198 Լըզրան 149, 154

Խ.

Խալիլ 109, 140, 183, 225, 288, 289,
311, 407
Խեչօ 55, 57, 82, 83
Խորէնի վահան 112, 133, 162, 216, 301
Խուշպուլեան Յ. 267, 275, 276, 278

Կ.

Կարինեան 196, 198, 204, 207
Կասեան Սարգիս 149, 172
Կեն (մայր) 39, 49
Կիրակոսեան Ասատուր 250, 252, 274,
278
Կուրչկին 216, 224
Կուրօ 210, 215

Հ.

Համազասպ 55, 59, 61, 149
Համաստեղ 250, 272, 278
Համօ (սպայ) 150, 260

Ղ.

Ղազար (տե՛ս Քաչալ Ղազար)
Ղարաբէկեան 204, 207
Ղարազէօզեան Արմենակ 110, 112, 141
Ղեւոնդ Արք. 237, 238

Մ.

Մանտալեան 250, 273, 274, 276
Մաշուրեան Սամուէլ 159, 164
Մալինցեան Գ. 112, 223
Մելիք Թանգեան 190, 207, 219
Միասնիկեան (Ալ.) 200, 204, 207
Մինասեան Ղուկաս 37, 43
Մինասեան Մ. (քժ.) 192, 211
Մուշեղեան Լեւոն 35, 55
Մուրատ 25, 59, 61, 418
Մուրատեան Տիգրան 250, 252

Մուսեան Աշոտ (Մելիք) 76, 80, 90, 91,
92, 96, 127, 128, 129, 196, 215,
220, 301, 312, 324

Յ.

Յարութիւնեան Եգոր 159, 164
Յարութիւնեան Շ. 166, 178
Յիւսէյիմեան Մելիք 159, 164, 219

Ն.

Նազարբէկով (Զօր.) 61, 117, 172, 309
Նարինեան Ռուբէն 99, 198, 211, 215,
217
Նարիմանով 288, 289, 406
Նեստերովսկի 129, 135
Նուրի փաշա 100, 288, 311

Շ.

Շահմազեան Արսէն 77, 78, 79, 80, 85,
87, 215
Շիրինեան Արշակ 133, 216
Շիրինեան Շիրին 162, 164, 301
Շոգովնիկեան (Զօր.) 172, 173

Պ.

Պարոնեան Արմենակ 85, 88, 217
Պարոնեան Եսայօ (տե՛ս Եսայօ)
Պանդուխտ 55

Զ.

Զանփոլատեան 55, 56

Ռ.

Ռոստոմ 21, 22, 25, 27, 76, 83, 376
Ռուբէն 97, 149, 150, 151, 168, 179,
195, 226

Ս.

- Սագանդարեան Տիգրան 164, 223
 Սամսոն բէկ 85, 215, 221, 219
 Սարգիսեան Համբարձում 78, 113, 219
 Սաֆո (Եսպոն) տե՛ս Սարգիսեան Համբարձում
 Սեպուհ 27, 28, 59, 61
 Սիլիկեան (Զօր.) 171
 Սմբատ (Զօր.) 29, 59, 61, 193
 Սրուանձտեան Համազասպ 31
 Ստալին 124, 268
 Ստեփանեան Յ. 26
 Ստեփանեան Ռուբէն (բժ.) 191
 Ստեփանեան Սմբատ 89, 106, 116, 199, 221

Վ.

- Վարդան 55, 56, 220
 Վառամեան Ս. 25, 26
 Վրացեան 55, 178, 179, 186, 193, 195, 207

Տ.

- Տարվինճով Մայր 39, 49
 Տէվենեան Յ. 229, 192, 145
 Տէր Աւետիքեան Եգոր 55
 Տէր Գրիգորեան Ս. 217
 Տէր Դաւիթեան Զ. 112, 217
 Տէր Դաւիթեան Պօղոս 78
 Տէր Ղազարեան Զ. 112, 217

Տէր Մինասեան Գեղէն 116, 192, 197, 217, 402

Տէր Յակոբեան Յակոբ 178, 192, 195

Տէր Յովհաննէսեան Յակոբ 250, 252, 272, 278

Փ.

- Փարսադանեան Մելիք Իսրայէլ 164, 221
 Փարսադանեան Մելիք Ստեփան 220
 Փարսադանեան Մելիք Փ. 113, 164, 223
 Փարսեան Պ. 112, 223
 Փիբումեան Բէկ (Զօր.) 67

Ք.

- Քալանթարեան Լեւոն 149
 Քաչալ Ղազար 30, 72, 74, 75, 97, 98, 100, 215, 220
 Քարամեան Մելիք Գարեգին 217, 220
 Քեազիմ Քարապետի 148, 311, 406
 Քեմալ 104, 140, 143, 163, 181, 185, 290, 406
 Քեռի 55, 82
 Քոչարեան Ղազար՝ տե՛ս Քաչալ Ղազար
 Քրիստափոր 41, 76, 83, 94, 97, 229, 230, 234, 376

Օ.

- Օհանջանեան Համօ 25, 31, 33, 192
 Օհանջանեան Մելիք 198, 215
 Օրջոնիկիցէ Գ. Կ. 124

HAGOPIAN J.
7 Bd GUIZEL - LA VISTE
13015 MARSEILLE
Tél. 62.07.61

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

Յառաջարան

Ա. ՄԱՍ.— ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ

Պատանեկութիւն	19
Զինուորական ուսանող	21
Սպլմաստ	25
Չերբակալութիւն	31
Պալֆանեան պատերազմ	37
Կամաւորական շարժում	51
Ղարաֆիլիսէի նակատամարտը	67
Նախիջեւանի մէջ	73
Զանգեզուրի հերոսամարտը	77
Բոլշեւիկները Զանգեզուրի մէջ	103
Կոիւները՝ բոլշեւիկներու դէմ	116
Հայաստանի խորհրդայնացումը	146
Ինֆնավար Սիւնիֆ	159
Փետրուարեան Ապստամբութիւնը	171
Լեռնահայաստան	191
Պուլկարիոյ մէջ	229
Մ. Նահանգներու մէջ	235
Կրկին Պուլկարիա	259
Երկրորդ ձերբակալութիւն եւ մահ	265
Արձանը	275

Բ. ՄԱՍ.— ՆՇԽԱՐՆԵՐ ՆԺԴԵՀԷՆ

Ինչո՞ւ պայքարեցաւ Լեռնահայաստանը	287
Ազատ Սիւնիք՝ Հայաստանի անկումը	295
Հայ — բուլղարական կոնիւերը	300
Ինքնապաշտպանութեան կրաւորական շրջանը	311
Խաչակրաց արշաւանք Գեղուաձորի դէմ	316

ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՆԹԷՈՆԸ

Գերեզմանատանը Զաւէնին	326
Աշուղը	327
Արծիւ — Լաքօն	328
Հայ խաչակիրը	329
Իմ մարգարէն՝ Զաւարեանը	329

ԷՋԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԷՆ

Հայ երիտասարդութեան երկու խօսք	331
Հակամարտութեան օրէնքը	332
Հայրենապաշտութիւն	335
Պաշտամունքը մեծ մեռելներին	336
Գեկավարութիւն	337

ՈՐԳԻՆԵՐԻ ՊԱՅԳԱՐԸ ՀԱՅՐԵՐԻ ԴԷՄ

Պայքար	343
Անիւժածին մայրեր	345

ԲԱՅ ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ 348

ՅԵՂԻ ՈԳՈՒ ՇԱՐԺԸ

Իմ դաւանանքը	367
Մեր դուռն եւ բախում	372
Յեղի սգու շարժը	376
Նոր հայր — վաղուան առաջնորդը	382

ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ — ՅԵՂԸ ԵՒ ՏԱԿԱՆՔԸ

Միջավայրը	389
Ախտաբանականը	393
Դաշնակցականութիւն	396

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Թրքօ — բելղերիզմը Հայաստանի դէմ	402
ՅեղԱԿՐՕՆՈՒԹԻՒՆԸ՝ ԻՐ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԶՕՐՈՅԹ	410

Գ. ՄԱՍ. — ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Զանգեզուր	Ս. ՎՐԱՅԵԱՆ	427
Նժդեհ	Ռ. ԴԱՐԲԻՆԵԱՆ	430
Հաւատաւորը	ՀԱՄԱՍՏԵՂ	432
Հանդիպումներ Նժդեհի հետ	Ա. ԱՄՈՒՐԵԱՆ	436
Երեք հանդիպումներ	ԱՇՈՏ – ԱՐԾՐՈՒՆԻ	446
Գլուխ գլխի Գ. Նժդեհի հետ	ՎԱՐԴԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ	451
Փոքրիկ մէկ յուշ երկու հսկա- ներու մասին	ԵՐՈՒԱՆԴ ՖՆՏՔԵԱՆ	456
Ինչո՞ւ ժողովուրդը սիրեց Զօ- րավար Գարեգին Նժդեհը	Գ. ՄԵԼԻՏԻՆԵՅԻ	460
Մի փոքրիկ մեկնաբանութիւն	ՀԱՅԿ ԱՍԱՏՐԵԱՆ	466
Վերյիշումներ Լեռնահայաս- տանի մօտիկ անցեալից	Ռ. ՆԱՐԻՆԵԱՆ	472
Մէկ դրուագ Դրոյի եւ Նժդեհի վարած կռիւներից՝ Զան- գեզուրում	ԶԱՆԳԵԶՈՒՐՅԻ	480
Զօրավար Նժդեհը պատմական ժողովում	ՎԱԶԳԷՆ ՄԻՐԶԱԲԷԿԵԱՆ	488
Գարեգին Նժդեհ Ամերիկայի մէջ	ՏԻԳՐԱՆ ՏԷՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ	493
Անմահ Նժդեհը	ՃԷՅՄՍ ՄԱՆՏԱԼԵԱՆ	503
Գ. Նժդեհի հետ	ՅՈՎԱԿԻՄ ԽՈՒՇՊՈՒԼԵԱՆ	506
Զօրավար Գարեգին Նժդեհին՝ Սիւնեաց Սպարապետին	ՀՄԱՅԵԱԿ ՍԸՌԵԱՆ	509
Նժդեհ	ԼՈՐԻՍ ՊՈԼՈՅԵԱՆ	510
Անմահաւալի հերոս Նժդեհը	Ղ. ԶԱՏԻԿԵԱՆ	511
Անմահաց հերոսի յիշատակին	Ս. Յ. ՔԱՐԵՆՅ	513
Ապրիլեան Սաներ	ԱՐՏ. ՀԱՅԵԱՆ	516
Յիշատակներ Նժդեհէն	ԽԵԶՕ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ	518
Անմահ Նժդեհի յիշատակին	Յ. Գ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ	519
Գ. Նժդեհը որպէս պատմական դէմք	Կ. ՍԱՍՈՒՆԻ	521
ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՆԿ		523

Յեղափոխական Ալպոմ

» »

» »

» »

» »

» »

Ա. հատոր (սպառած)

Բ. » (սակաւաթիւ)

Գ. » »

Դ. »

Ե. »

Զ. »

ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻ

Գէորգ Զաւուշ

Ինչո՞ւ կազմակերպուեցան Մոսուսի եւ Զարու արշաւանքները

ՀԱՍՑԷ՝

Peintre AVO

Rue Saifi — Imm. Dr. Gaspard

Beyrouth, LIBAN


Տպարան ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Պատուէր 275

Տպաքանակ 2500

Պրակ 33

Աւարտում 28 Մայիս 1968







PEINTRE AVO

Rue Saifi